«ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ»
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ԲԱՆԲԵՐ
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

9

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ
1969

Խմբագրական մարմին՝

ՆԱՀԱՊԵՏՅԱՆ Լ. *(պետական խմբագիր)*,
ԱՐԵՎՇԱՏՅԱՆ Ս., ԳՐԻԳՈՐՅԱՆ Վ.,
ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ Ա., ՉՈՒԳԱՍԶՅԱՆ Բ. *(պատասխանատու)*, ՓԱՓԱԶՅԱՆ Հ.



ՀՈԴՎԱԾՆԵՐ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ ԱԲԵԼՅԱՆԻ
ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ—«ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ»

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

ԵՐԵՎԱՆ № 9 1969

ՍԵՆ ԱՐԵՎՇԱՏՅԱՆ

ԴԱՎԻԹ ԱՆՀԱՂԹԻ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ՆՈՐ ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹՅԱՄԲ

5—6-րդ դարերի ականավոր հայ փիլիսոփա, նոր-պլատոնականության Ալեքսանդրյան դպրոցի ան Դավիթ Անհաղթն իր գործերով աննախընթաց կերպով բարձրացրեց հայ փիլիսոփայության մասնագիտական մակարդակը և մեծապես նպաստեց հունական դասական փիլիսոփաների հայացքների տարածմանը հին Հայաստանում: Ալեքսանդրյան դպրոցը, ինչպես հայտնի է, գերակշռում էր ճեմականության (պերիպատետիզմի), հին աշխարհի հանճարեղ մտածող Արիստոտելի փիլիսոփայության ուժեղ ազդեցության տակ: Որդեգրելով Արիստոտելի իմացաբանական և տրամաբանական ուսմունքները, Ալեքսանդրյան նոր-պլատոնականները, այդ թվում նաև Դավիթ Անհաղթը, քրիստոնեական աստվածաբանության հարաճուն գերիշխանության պայմաններում պահպանեցին Արիստոտելի իմացաբանության նյութապաշտական գծերը: Եվ պատահական չէ, որ Ալեքսանդրյան դպրոցի գլխավոր ներկայացուցիչներ Ամմոնիուսի, Օլիմպիոդորոս Կրտսերի և Դավիթ Անհաղթի (կամ Ներգինացու) գործերի մեծագույն մասը նվիրված է Արիստոտելի «Օրգանոն» կոչված աշխատությունների մեկնաբանությանը, մի աշխատություն, որն իր մեջ գրքերով պարունակում է Արիստոտելի գուտ տրամաբանական և իմացաբանական գործերը: Բարեբախտաբար, պահպանվել են Դավթի գործերի և՛ հայերեն, և՛ հունարեն տարբերակները: Նրանք վաղուց հրատարակված են[1], ընդ որում հայերեն բնագրով մի քանի անգամ:

Այդ տեսակետից Դավիթ Անհաղթի փիլիսոփայության ուսումնասիրման գործը կարևոր նշանակություն ունի միջնադարյան հայ փիլիսոփայական մտքի զարգացման ուղիների հետազոտման համար, քանի որ այն կապված է աշխարհիկ ուղղության, մասնավորապես տրամաբանական ուսմունքների ու բնափիլիսոփայության հարատևման հետ: Այդ ուղղությունն իր առկայությամբ իսկ նպաստել է փիլիսոփայական գիտության ինքնուրույն զարգացմանը:

Սակայն Դավթի փիլիսոփայության համակողմանի ուսումնասիրությունն անմիջականորեն կապված է նրա գրական ժառանգության ճշգրտման հետ: Ըն-

---

1 Դաւիթ Անյաղթ, Գիրք Սահմանաց, Կ. Պոլիս, 1731: Վերլուծութիւն նեռածութեանն Պորփիւրի, Մադրաս, 1793: Գիրք Սահմանաց արբոյն Դաւթի Անյաղթ փիլիսոփայի՝ Հայոց իմաստասիրի, Մադրաս, 1797: Սահմանք իմաստասիրութեան (Գիրք Սահմանաց), Վերլուծութիւն նեռածութեանն Պորփիւրի, Մեկնութիւն ի Վերլուծականն Արիստոտէլի, Վենետիկ, 1833: Սահմանք իմաստասիրութեան, Երևան, 1960: Մեկնութիւն ի վերլուծականն Արիստոտէլի, Երևան, 1967 (վերջին երկու հրատարակություններում բնական բնագրերին զուգահեռ գետեղել ենք նրանց ռուսերեն թարգմանությունները—Ս. Ա.):

Հունարեն բնագրերը հրատարակել է Ա. Բուսսեն՝ Davidis Prolegomena et in Porphyrii Isagogen commentarium, ed. A. Busse, Berolini, CAG, 1904.

նայած որ վերջին ուշադրություն տարվա ընթացքում այդ հարցին անդրադարձել են մի շարք հայ և եվրոպացի հայագիտներ, այնուամենայնիվ Դավիթ ժառանգության շրջանակները մինչև հիմա էլ չեն որոշված։ Այդ հարցում դեռևս կան մութ և խճողված կետեր, որոնց լուսաբանումից է կախված Դավիթ Անհաղթի ժառանգության վերջնական ճշգրտումը։

Մինչև Ֆ. Կոնիբերի[2] և Հ. Մանանդյանի[3] հետազոտությունների երևան գալը պատմական գրականության մեջ արմատացել էր մի տեսակետ, որը հետևելով միջնադարյան ավանդությանը, Դավիթի գրչին էր վերագրում Հունաբան դպրոցի 5—7-րդ դարերում ստեղծված գրեթե բոլոր փիլիսոփայական գործերը և թարգմանությունները։ Այդ երկու բանասերները իրենց հմտալից աշխատություններով պարզեցին, որ նախ և առաջ Դավիթ Անհաղթին անհրաժեշտ է սահմանազատել 5—7-րդ դարերի այլ բազմաթիվ Դավիթներից, որ մեր իմաստասերը ուսանել է Ալեքսանդրիայում Օլիմպիոդորոս Կրտսերի մոտ և եղել է նոր-պլատոնական և որ նա ապրել է 5-րդ դարի վերջում — 6-րդ դարի առաջին կեսին։ Ինչ վերաբերում է նրա գործերի ցանկին, ապա և՛ Ֆ. Կոնիբերը, և՛ Հ. Մանանդյանը եկան այն համոզման, որ Դավիթին վերագրված բազմաթիվ գործերից նրա գրչին են պատկանում միայն երեքը՝ «Սահմանք իմաստասիրութեան», «Վերլուծութիւն Ներածութեանն Պորփիւրի» և «Մեկնութիւն ի Վերլուծականն Արիստոտէլի»։ Եվ վերջապես 24 տարի անց ակադ. Հ. Մանանդյանը նորից անդրադարձավ Դավիթ Անհաղթի խնդրին և, բարձրացնելով ողջ Հունաբան դպրոցի ժառանգության ու ժամանակաշրջանի հարցը, վերանայեց իր նախկին տեսակետը ու Թողեց Դավիթի երկացանկում միայն երկուսը՝ «Սահմանք իմաստասիրութեան» և «Վերլուծութիւն Ներածութեանն Պորփիւրի»[4]։ Իր վերջին աշխատությունում Հ. Մանանդյանը Դավիթի «Մեկնութիւն ի Վերլուծականն Արիստոտէլի» երկը հանեց նրա ժառանգությունից և վերագրեց այն Ալեքսանդրյան դպրոցի մի այլ ներկայացուցչի՝ Էլիաս իմաստասերի գրչին։

Ո՞րն է Հ. Մանանդյանի տեսակետի փոփոխության պատճառը և ինչքանո՞վ է այն համապատասխանում ճշմարտությանը։ Եվ չկա՞ն արդյոք այլ աշխատություններ, որոնք պետք է պատկանեն Դավիթի գրչին, բայց թյուրիմացաբար վերագրվել են այլ հեղինակների։ Քննենք այդ հարցերը և աշխատենք նոր փաստերի ու դիտողությունների հիման վրա պարզություն մտցնել Դավիթ Անհաղթի ժառանգության հարցում։

Հ. Մանանդյանի տեսակետի փոփոխությունը բխում է Դավիթի գործերի հունարեն բնագրերի հրատարակիչ Ա. Բուսսեի չհիմնավորված կարծիքից։ Գերմանացի պատմական Ադոլֆ Բուսսեն իր բանասիրական ենթադրություններից ելնելով Էլիասի անունով հրատարակում է Բեռլինում մի հունարեն փիլիսոփայական բնագիր՝ «Մեկնութիւն Ստորոգութեանցն Արիստոտէլի»[5], որի բոլոր գրչագիր օրինակները նշում են որպես հեղինակ Դավիթ Անհաղթին՝ Ἐξήγησις σὺν θεῷ τῶν δέκα κατηγοριῶν τῆς φιλοσοφίας ἀπὸ φωνῆς Δαβὶδ τοῦ θεοφιλεστάτου

---

[2] *F. C. Conybeare*, A collation with the ancient armenian versions of the greek text of Aristotel's Categorias etc., Anecdota Oxoniensia, Oxford, 1892.

[3] Հ. Մանանդյան, *Դավիթ Անհաղթի խնդիրը նոր լուսաբանությամբ*, Վաղարշապատ, 1904։

[4] *Տե՛ս* Հ. Մանանդյան, *Հունաբան դպրոցը և նրա զարգացման շրջանները*, Վիեննա, 1928, էջ 59—67։

[5] Eliae in Porphyrii Isagogen et Aristotelis Categorias commentaria, edidit Adolfus Busse, Berolini, 1900.

φιλοσόφου. Նման վերնագրեր Դավիթի անվան չորրահատուկ բառապի նշումով ἀπὸ φωνῆς Δαβὶδ ունենն նաև նրա այլ երկու աշխատությունների՝ «Վերլուծութիւն Ներածութեանն Պորփիւրի» և «Մահմանք իմաստասիրութեանն» հունարեն բնագրերը: Արիստոտելի «Անալիտիկայի» մեկնությունը («Մեկնութիւն ի Վերլուծականն Արիստոտէլի») հասել է մեզ միայն իր հայերեն տարբերակով:

Սակայն Ա. Բուասեն, հաշվի չառնելով բոլոր հունարեն բնագրերի հաղորդումները Արիստոտելի «Կատեգորիաների» («Սորոգութեանց») մեկնության՝ Դավթին պատկանելու մասին, հրապարակել է այն էլիասի անունով:

Հետագայում նույն աշխատության հայերեն միակ բնագիրը Հ. Մանանդյանը հայտնաբերում է Էջմիածնի մատենադարանում և, ընդունելով Ա. Բուասեի վարկածը, հրապարակում է այն նույնպես էլիասի անունով[6]: Ճիշտ, է հայերեն միակ ձեռագիրը[7] թերի է սկզբից և վերջից, և այնտեղ նշված չէ հեղինակի անունը: Սակայն Հ. Մանանդյանը վերագրում է այն էլիասին, որդեգրելով Ա. Բուասեի ենթադրությունը, որի հիմնավորման համար բերվում է երեք փաստարկ: Դրանցից առաջինն ու գլխավորը հետևյալն է:

Դավիթ Անհաղթը իր «Վերլուծութիւն Ներածութեանն Պորփիւրի» աշխատության մեջ մի այսպիսի խոստում է տալիս ընթերցողներին. «Եւ գիտելի է, թէ բանական մասն իմաստասիրութեան վերաբերի առաջիկայ շարադրութիւնս (իմա՝ «Պորփիւրի Ներածութեան» մեկնությունը — Ս. Ա.): Իսկ բանականն՝ երէ մասն է իմաստասիրութեան և երէ գործի՝ ի Սորոգութիւնսն Արիստոտէլի ուսցուք»[8]: Ա. Բուասեն, իսկ նրան հետևելով նաև Հ. Մանանդյանը գտնում են, որ Դավիթը չի կատարում իր այդ խոստումը «Սորոգութեանց» մեկնության մեջ, և քանի որ Ա. Բուասեի կողմից նույն էլիասին վերագրված Պորփիւրի «Ներածութեան» մեկնության հեղինակը նույնպես դնում է այդ հարցը և խոստանում է կատարել այն «Անալիտիկայի» («Վերլուծականքի») մեկնության մեջ, (իսկ դրված հարցը իսկապես շոշափվում է վերջին աշխատության մեջ), ապա ուրեմն երկու բանասերների կարծիքով, Դավիթը չի կարող լինել «Սորոգութեանց» մեկնության հեղինակ: Այն պետք է «ընծայել» էլիասի գրչին: Իսկ Հ. Մանանդյանը, շարունակելով Ա. Բուասեի գիծը, վերանայում է իր նախկին տեսակետը և դնում, որ նույն էլիասին պետք է վերագրել ուրեմն նաև Դավթի անունով մեզ հասած «Անալիտիկայի» մեկնությունը («Մեկնութիւն ի Վերլուծականն Արիստոտէլի»)[9]:

Ա. Բուասեի և Հ. Մանանդյանի այս եզրակացությունը, կարելի է ասել, անուշադրության արդյունք է և չի հաստատվում փաստերով: Նախ և առաջ, նրանց կողմից հիշատակված Դավթի խոսքերը՝ «ի Սորոգութիւնսն Արիստոտէլի ուսցուք», վկայում են այն մասին, որ նա գրել է տվյալ երկի մեկնությունը Պորփյուրի Ներածության իր մեկնության մեջ: Դավիթը բազմիցս և տարբեր հարցերի կապակցությամբ ավելի որոշակի ասում է՝ «կատարեալապէս ի Սորո-

---

6 «Մեկնութիւն Սորոգութեանցն Արիստոտէլի, ընծայեալ էլիասի իմաստասիրի», ի լոյս ետուն Յ. Մանանդեան, Ս. Պետերբուրգ, 1911:

7 Այժմ Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագիր № 1930:

8 Դաւիթ Անյաղթ, Վերլուծութիւն Ներածութեանն Պորփիւրի. Կորիւն. Մամբրէ. Դաւիթ. Մատենագրութիւնք նախնեաց, Վենետիկ, 1833, էջ 263:

9 Տե՛ս Հ. Մանանդյան, Հունաբան դպրոցը և նրա զարդացման շրջանները, էջ 66—67:

զութիւնան Արիստոտէլի ուսանելոց եմք»[10], «*սորուգապէս ի Սորոգութիւնս Արիստոտէլի ուսուք*»[11], «*որպէս հաճդերձեալ եմք ուսանել ի Սորոգութիւնան Արիստոտէլի*»[12]։ *Անտեսել նման վկայութիւններ չի կարելի այն պարզ պատճառով, որ նրանց ուշադիր ստուգումը՝ ի՞նչ առիթով են նրանք ասված և կա՞ն արդյոք նրանց պատասխանները խոստացած աշխատութեան մեջ, կպարզի Դավթի ժառանգության հարցը տարրեր կետերից։*

Եվ ահա բոլոր հունարեն ձեռագրերի վկայությամբ Դավթին պատկանող, բայց հրատարակիչների կողմից էլիասին վերագրված «Սորոգութեանց մեկնութեան» գնումը ցույց է տալիս, որ Դավիթը կատարում է բոլոր այն խոսումները, որ նա ավել էր Պորփյուրի ներածության մեկնության մեջ, այդ թվում նաև Ա. Բուսանի և Հ. Մանանդյանի կողմից նշվածը։

Առաջին խոսում. «Իսկ բանականն՝ ևթէ մասն է իմաստասիրութեան և եթէ գործի՝ ի Սորոգութիւնան Արիստոտէլի ուսուք» (Դավիթ Անյաղթ. Վերլուծութիւն Ներածութեանն Պորփիւրի, էջ 263)։

Պատասխան (1). «Բաժանումն ինքնադիմացն ըստ բաժանման իմաստասիրութեան լինի։ Քանզի որպէս իմաստասիրութիւն չերիս բաժանի՝ ի տեսականն, ի գործականն, ի բանականն, նոյնպէս և ինքնադէմքն. քանզի ինքնադիմացն ոմանք տեսականք, ոմանք գործականք, ոմանք բանականք։ Եւ իւրաքանչիւր ոք ի սոցանէ չերիս բաժանի. քանզի տեսականն չերիս բաժանի՝ ի բնաբանականն, յուսումնականն, յաստուածաբանականն. իսկ գործականն՝ ի բարոյականն, ի տնօրինականն, ի քաղաքականն. իսկ բանականն՝ յառաջ քան զհնարս, ի նոյն ինքն ի հնարս և յայնս՝ որք ընդ հնարիւք մտանեն» (Մեկնութիւն Սորոգութեանցն Արիստոտէլի, ընծայեալ էլիասի իմաստասիրի, էջ 14—15։ Նույնը տե՛ս Eliae in Aristotelis Categorias commentarium. p. *115)։*

Պատասխան (2). «Իսկ բանականն նորա բաժանի չերիս՝ ի յառաջ քան զպատճառացոյցն՝ այսինքն զհնարս, ի նոյն ինքն յատճառացոյցն և ի ներքս մտանալն յատճառացոյցն... Եւ պարտ է գիտել, թէ բանականն գործի է իմաստասիրութեան, քանզի զոր ինչ պէտս կատարէ հիւանն լարն հիւանն՝ որոշելով զդորդն և զդելն, և շինողին ըստ ակն՝ որոշելով զթևերն և զուղղորդն, այսպէս և բանականն՝ գործի գոլով իմաստասիրութեան՝ որոշէ ի միմեանց զսուտն և զճշմարիտն, զչարն և զբարին, զի մի սուտ ինչ կարծեսցուք և մի չար ինչ գործեսցուք» (Մեկնութիւն Սորոգութեանցն Արիստոտէլի, ընծայեալ էլիասի իմաստասիրի, էջ 17—18։ Տե՛ս նաև Eliae in Aristotelis Categorias commentarium, pp. *116—117)*[13]։

Պատասխան (3). **Գործի է բանականն իմաստասիրութեան, և արժան է նախ գիտել զգործին և այնպէս պիտանալ նմա։** *Քանզի այսպէս առնեն և ի ձեռնարհեստականն, վասն զի երթեալն ի հիւանականն նախ և առաջին ուսանի զդործին՝ զդուրն, զշաղափն, եթէ չինչ պէտս են, և ապա պիտանանայ նոցա ըստ իւրաքանչիւր գործոյ» (Անդ, էջ 20։ Նույնը տե՛ս* Eliae in Categorias, p. *118)։*

---

10 Դավիթ Անյաղթ, *Մեկնութիւն Ներածութեանն Պորփիւրի, էջ 269։*

11 *Անդ, էջ 290։*

12 *Անդ, էջ 325—326։*

13 *Տե՛ս նաև Դավթի Անյաղթ փիլիսոփայի Մեկնութիւն չորեքտասան գլխոց Արիստոտէլի ի Վերլուծականն, էջ 558, 559, 566։ Տե՛ս նաև Դավթի Վերլուծութիւն Ներածութեան Պորփիւրի, էջ 263։*

Պատասխան (4). «այսինքն ապացոյցն՝ գործի գոլով իմաստասիրութեան ընտրութիւն և բացընտրութիւն, որպէս զի ի տեսականին ընտրեսցէ զճշմարիտն և բացընտրեսցէ զսուտն, նոյնպէս և ի գործականին ընտրեսցէ զբարին և բացընտրեսցէ զչարն» (Անդ. էջ 21։ Նույնը Eliae in Categorias pp. *118—119)։*

Պատասխան (5). «Բանականն զաւրէն մաղի գոլով, որպէս յառաջագոյն ասացաք, ընտրէ ի տեսականէն զճշմարիտն և գործականէն զբարին, և բացառոշէ ի տեսականէն զսուտն և ի գործականէն զչարն, զի մի սուտ կարծիս ընկալցուք վասն գոյիցն և մի չար ինչ գործեսցուք, ունելով զբանականն որոշիչ՝ այսինքն զապացոյցն» (Անդ, էջ 22։ Նույնը Eliae, p. *119)։*

Ինչպես դժվար չէ համոզվել, Դավիթը ճշտորեն կատարում է իր խոստումը և ապահիչ պատասխան տալիս Պորփյուրի Ներածության մեկնությունում իր իսկ կողմից հարուցած հարցին։ Կարելի է միայն զարմանալ, ինչպես Ա. Բուանն և Հ. Մանանդյանը չեն նկատել այն և Դավթի համար բախտորոշ եզրակացության հանգել, դրա հիման վրա նրա գործը վերագրելով Էլիասին։ Անտեսելով այդ փաստը, նրանք շրջանցել են Դավթի և մնացած երեք ցուցումները, որոնք ոչ պակաս կարևորություն ունեն։

Երկրորդ խոսում—«Եւ զի՞ զայսոսիկ այլուստ ձեռնարկեմք ցուցանել և ոչ ի մերոց առաջնորդապետաց և վերակացուաց իմաստասիրութեան ի Պղատոնէ ասեմ և յԱրիստոտէլէ... Բայց եթէ զի՝ ախորժեսցեն աճռել զանհաւատասուրիւն՝ կատարելապէս ի Սորոգութիւնսն Արիստոտէլի ուսանելոց եմք» (Դաւիթ Անյաղթ, Վերլուծութիւն Ներածութեանն Պորփիւրի, էջ 269)։

Այս հարցին Դավիթը նույնպես տալիս է շատ հանգամանալից պատասխան, որը հրատարակության մեջ բռնում է 8 էջ (28—35)։ Մենք կբերենք միայն մի քանի դիպուկ նախադասություններ։

Պատասխան. «Զի՞ զանհաւատասուրիւն ախորժեաց Արիստոտէլ. վասն զի ոչ էր բնութեամբ անհաւատասի՝ արդեաւք վասն պատմական տկարութեան դայր ախորժեաց... և բնութեամբ գոլով հաւատասի՝ զանհաւատասուրիւն ախորժեաց։ Բայց ախորժեաց զանհաւատասուրիւն վասն երից պատճառաց՝ կամ բացուցանելոյ սակս, կամ փորձելոյ, կամ կրթելութեան» (Մեկնութիւն Սորոգութեանցն Արիստոտէլի, ընդ. էլիասի, էջ 32. նույնը տե՛ս Eliae in Categorias, p. *124). «Եւ զոր ասեն Պղատոն վասն աճեհաւատասուրեաճ... արդ այսպէս բացուցանելոյ սակս։ Եւ կամ սակս փորձելոյ զպատկանաւորս և զանպատկանաւորս իմաստասիրութեան, որպէս զի անպատկանաւորքն առ իմաստասիրութիւն թիկունս դարձուցանեն» (Անդ, էջ 33.* Eliae, p. *125)։*

Երրորդ խոսում—«Իսկ եթէ զի՞նչ ճոմանուցն է և զի՞նչ փաղանուցն՝ առուգապէս ի Սորոգութիւնս Արիստոտէլի ուսցուք» (Դաւիթ Անյաղթ, Վերլուծութիւն Ներածութեանն Պորփիւրի, էջ 290)։

Պատասխան. «Արիստոտէլ նախադասէ զվարդապետութիւն ճոմանուցց և փաղանուցց, և յայսոսիկ նախադասէ զճոմանունսն յառաջագոյն քան զփաղանունսն, վասն զի մին քան զերկուսն յառաջագոյն է։ ...Բայց վասն զի Արիստոտէլ եթէ զի՞նչ է ճոմանուցն միայն և զի՞նչ փաղանուցն ասէ, թողեալ զեթէէն՝ մեք նախ քան զասելն զի՞նչ է, զեթէէն ասացուք» (Մեկնութիւն Սորոգութեանցն Արիստոտէլի, ընդ. էլիասի, էջ 41. նույնը տե՛ս Eliae in Categorias, p. *135)։*

Այնուհետև գալիս է 12 էջանոց շարադրանք, նվիրված Հարցի բազմակողմանի և սպառիչ մեկնաբանությանը։

Չորրորդ խոստումը— «Իսկ գոյացութիւնք ոչ ունին ընդդիմակս, վասն զի ոչ են յենթակայում, այլ ենթակայք, որպէս հաղորձեալ եմք ուսանել ի Տաղրոգութիւնն Արիստոտէլի» (Դավիթ Անյաղթ, Վերլուծութիւն Ներածութեան Պորփիւրի, էջ 326—327)։

Այս հարցի պատասխանը շատ ավելի հանգամանալից է ու գրավում է 17 էջ (Մեկն. Տաղրոգ., էջ 91—107)։ Բերում ենք մի քանի դիպուկ նախադասություններ.

Պատասխան. «Արդ՝ եթէ այսպէս է՝ ապա և ոչ մի գոյացութիւն ենթակայում. ոչ մի վասն առաջին առածին, քանզի կամ առաջին է կամ երկրորդ. իսկ ոչ է ենթակայում վասն ենթադրութեանց. և այդ այսպէս՝ եթէ և ոչ մի գոյացութիւն ենթակայում։ Բայց ցուցանէ և առանձինն, եթէ և ոչ երկրորդ գոյացութիւնքն են ենթակայում, ասելով այսպէս...» (93). «Ցուցեալ Արիստոտէլի, եթէ ամենայնում գոյացութեան գոյ ոչ ենթակայոջացն գոլ՝ այժմ ցուցանէ, թէ ոչ միայնում գոյացութեան գոյ, այլ և տարբերութեան» (94), «յատուկ գոյացութեան է ոչ ինչ ունիլն ներհակ» (էջ 103). «գոյացութիւն ոչ ենթակայում է, ապա արեմն գոյացութեան ոչինչ է ներհական, որ պատերազմին» (էջ 105) և այլն։

Ինչպես տեսնում ենք, Դավիթը կատարում է իր բոլոր չորս խոստումները ամենայն բարեխղճությամբ։ Նրա «Վերլուծութիւն Ներածութեանն Պորփիւրի» և էլիասին վերագրված «Մեկնութիւն Տաղրոգութեանցն Արիստոտէլի» երկերը սերտորեն կապված են իրար և՛ հարցադրումներով, և՛ խնդիրների լուծման ընդհանուր դաղափարական հիմքով, և՛ ուղղակի ցուցումներով։ Եվ եթե Ա. Բուասնն և Հ. Մանանդյանը միայն մեկ խոսքման հիման վրա, որի պատասխանը նրանք չեն կարողացել գտնել Տաղրոգության մեկնության մեջ, հնարավոր են համարել այդ երկը օտարել նրա ժառանգությունից, ապա բերված օրինակները, չորս խոստումների պատասխանները, անտարակույս, վկայում են այն մասին, որ էլիասին թյուրիմացաբար վերագրված Տաղրոգության մեկնության հեղինակը ոչ այլ ոք է, քան ինքը Դավիթը։ Իսկ նրա «ասուգապէս», «կատարեալապէս ի Տաղրոգութիւնն Արիստոտէլի ուսցուք» խոսքերն իրենց ուղղակի և հանգամանալից պատասխաններն են ստանում մեր խնդրո առարկա Տաղրոգությունների մեկնության մեջ։

Ա. Բուասնն և Հ. Մանանդյանը բերում են նաև այսպիսի մի փաստարկ. «2. Դավիթ Փիլիսոփան Պորփիւրի Ներածության մեկնության մեջ Ճեմականների մասին ասում է՝ «իսկ Ճեմական կոչեցաւ Արիստոտէլ վասն զի Պղատոնի տակաւին ևս կենդանի գոլով՝ ոչ իշխէր նստել և ուսուցանել, այլ Ճեմէր. այլքն ասեն ոչ, այլ հակառակէր Պղատոնի, զի նա նստեալ գոլով՝ ինքն յոտն կացցէ։ Որ զայդ ասեն, սուտ ասեն. այլ և պատուէր զնա և պաշտէր...» (Վեներիկ, 1833, էջ 281)։ Իսկ էլիասին ընծայված Տաղրոգութեանց մեկնությունը Ճեմականների անվան ծագման մասին տալիս է բոլորովին տարբեր ու հակառակ բացատրություն. «Ճեմականք կոչեցան, ոչ եթէ ի Ճեմել ինչ ուսուցանէին և ուսանէին, այլ վասն զի յաջորդեցին պալատապարանն Պղատոնի միջնորդութեամբ Սպեւսիպոսի» (Մեկն. Տաղրոգ., էջ 10)[14]*։*

Այս փաստարկը ևս չի դիմանում քննադատության, որովհետև այդ երկու բացատրությունների միջև հակասություն չկա։ Առաջին դեպքում Դավիթը չի

14 Հ. Մանանդյան, *Հունաբան դպրոցը և նրա զարգացման շրջանները*, էջ 28—29։

հաստատում, թե ճեմականների անունը առաջ է եկել Արիստոտելի՝ Պլատոնի նկատմամբ հանդուգն և արհամարհական վերաբերմունքից, նրա կենդանության օրոք պարապմունքների ժամանակ ճեմելու սովորությունից: Նա մերժում է այդ և հատկապես նշում, «որ զայդ ասեն, սուտ ասեն»: Իսկ Ստորոգության մեկնության մեջ նա արդեն հանդամանորեն բացատրում է, որ ճեմարանի անունը ծագում է Պլատոնի սովորությունից, որ ճեմականների անվանումը պատահականորեն է առաջ եկել և հետագայում ժառանգվել է Արիստոտելի կողմից. «Ընթերցող յեղանակ համանունութեան ըստ իմաստասիրութեան հերձուածոցն յումեմնէ պատահմանէ, որպէս ճեմականք: Ընդ այսմ պատճառի Պղատոն ճեմելով առնելով զմերձաւորութիւն որ ըստ ոմանց վասն դի այն ինչ հանդերձ հոգւով և զմարմինն կրթել: Եւ ի մարդկայինց ի բաց գնացելոյ յաջորդէ զպարապարանն նորա Սպեւսիպոս՝ որդի Պոտոնեայ՝ քոյր Պղատոնի. քանզի այն ինչ ոչ հանդիպիւր անդ Արիստոտէլիս, այլ կոչեցեալ էր ի Փիլիպպեայ ի Մակեդոնիայ առ վարժել զորդի նորա զԱղեքսանդրոս»[15]: Եվ այնուհետև բուն բացատրությունը. «Անտի դարձեալ Արիստոտէլ՝ յաջորդէ զպարապարանն Սպեւսիպոսի Քսենոկրատաւ, և կոչին երկոքեան ճեմականք տեղաւքն զանազանեալ, քանզի Արիստոտէլականքն կոչին Լիւկիէացիք ճեմականք, իսկ Քսենոկրատեանքն՝ Ակադիմականք ճեմականք: Իսկ ժամանակաւ, որպէս պատահէ, պակասեալ ոմանց անուն տեղւոյն և կոչէին ճեմականք միայն, այլ ոչ Լիւկիէացիք՝ Արիստոտէլականքն, իսկ Քսենոկրատեայցն ներգործութեան անունն պակասեաց և կոչէին Ակադիմականք: Արդ ճեմական կոչեցան ոչ միայ ի ճեմել ինչ ուսուցանէին և ուսանէին, այլ վասն դի յաջորդեցին զպարապարանն Պղատոնի միջնորդութեամբ Սպեւսիպոսի»[16]:

Այս է Դավթի լրիվ բացատրությունը: Իսկ Ա. Բուասնն և Հ. Մանանդյանը, բերելով ամբողջ հատվածի միայն վերջին նախադասությունը, հակադրել են այն Պորփյուրի Ներածության մեկնությունում ասվածին, բայց աչքաթող են արել Դավթի հատուկ նշումը՝ «որ զայդ ասեն, սուտ ասեն»: Այնպես որ երկու դրծերում՝ ճեմականների անվան ծագումը բացատրվում է առանց որևէ հակասության: Ներածության մեկնությունում Դավիթը բերում է ուրիշների կարծիքները և մերժում դրանք, իսկ Ստորոգության մեկնությունում շարադրում է իր սեփական կարծիքը ի շարունակություն նախորդ գործում շոշափած բացատրության և ոչ թե «տալիս է բոլորովին տարբեր և հակառակ բացատրություն»:

Քննադատության չի դիմանում Ա. Բուասնի և Հ. Մանանդյանի նաև վերջին, երրորդ պատճառաբանությունը: Ահա թե ինչ են ասում նրանք. «3. Որ էլիասին ընծայված Ստորոգության մեկնության հեղինակը Դավիթ փիլիսոփան չէ, այդ ակնհայտնի երևում է Դավթի և նորագյուտ մեկնության նաև այն հատվածներից, որոնք նվիրված են խորթ շարադրածության խնդրի լուսաբանությանը (տե՛ս «Դաւթի Անյաղթի վերլուծութիւն Ներածութեան Պորփիւրի», էջ 252—253 և «Մեկնութիւն Ստորոգութեանցն», էջ 37—38): Այս ընդարձակ հատվածների համեմատությունը, Բուասնի կարծիքով, պարզ ցույց է տալիս, որ դրանք չեն կարող համարվել միևնույն հեղինակի բացատրություններ»[17]:

---

15 Մեկնութիւն Ստորոգութեանց Արիստոտէլի, ընծ. էլիասի, էջ 9:

16 Անդ, էջ 10:

17 Հ. Մանանդյան, Հունարան դպրոցը..., էջ 29:

Սակայն նշված հատվածների համեմատությունը հակառակն է ցույց տալիս և համոզիչ կերպով ապացուցում, որ այդ բացատրությունները չեն կարող տարբեր մարդկանց գործ լինել: Համեմատենք այդ հատվածները:

Մեկնութիւն Ստորոգութեանցն	Մեկնութիւն Ներածութեան
Քանզի խորհանան գիրք... կամ յաղագս բարեմտութեան աշակերտաց *որք վիրեանց շարագրածութիւնս* իւրեանց վարդապետացն ձաւնէին, *որպէս պատճառաց բարեաց,* որպէս Պիւթագորի և Սոկրատայ՝ Պիւթագորականաց և Սոկրատականաց (էջ 37):	*Իսկ... լինին խորհ շարագրածք* վասն բարեմտութեան աշակերտաց առ իւրեանց վարդապետսն. *գրեն շարագրածքս ոմանս և մակագրեն զանուն վարդապետին,* որպէս Պղատոն զՍոկրատայն *ի վերայ իւրոց շարագրածաց մակագրեաց և* Պիւթագորականքն զՊիւթագորին *ի վերայ ոսկի ասացելոց առակացն (էջ 253):*

Դավիթը պարզապես կրկնել է իր միտքը առանց որևէ էական փոփոխության (ընդգծումներն իմն են — Ս. Ա.):

Եւ կամ վասն թագաւորականի պարգեւի. *քանզի Իովբատայ Լիբէացւոց թագաւորի հաւաքեցելոյ զայնս, որք Պիւթագորին գոյին, իսկ Պտղոմիոսի (թագաւորի)՝ զայնս, որք Արիստոտէլի, ոմանք* վասն շահի *վայրապար շարագրածուքիւնս առնելով խայտաղանէին... որպէս զի ընկալցին խոստովանաբար (էջ 37):*	*...լինին խորհ շարագրվածք* վասն ժլատութեան, *որպէս եղև առ Պիսիստրատոսիւ բռնաւորին Սիկիլացւոց, վասն զի առ նովաւ ցնդաբար բերելոց Հոմերականաց հագներդութեանցն, կամ եղև նմա ժողովել զամենայն տպաս Հոմերականս և վարձս տանողացն բազում խոստանայր տալ: Վասն որոյ բազումք* տպաս ըստեղծանելով *մատուցանէին բռնաւորին՝ որպէս թէ Հոմերոսի իցէ՝* վասն իւրեանց շահիցն *(էջ 252—263):*

Միտքը նույնն է, փոխված են միայն օրինակները: Իովբատոս Լիբեացու և Պտղոմեոս Թագավորի փոխարեն որպես օրինակ վերցված է Պիսիստրատոս Սիկիլացին: Առաջինները հավաքել են Պիթագորասի և Արիստոտելի գործերը, իսկ վերջինը՝ Հոմերոսի տաղերը, իսկ շահախնդիր մարդիկ կեղծելով գործերը, ըրբամ են շորթել և խառնաշփոթության պատճառ դարձել:

Կամ վասն հոմանուանութեան շարագրողաց և շարագրածութեանց *և առորայիշատակմանց. և շարագրողաց՝ ոչ եթէ միայն Արիստոտէլ Ստագիրացին այսպէս կոչէր, այլ և այլք Արիստոտէլք եղեն առ Ստագիրացիսն... Արդ՝ սոցա ամենեցուն շարադրութիւնս արարիչոց՝* կարծէին այն շարագրութիւնք Ստագիրացւոյն գոյ վասն անուան ի երեսսն ունելոյ:	Կամ վասն հոմանուանութեան, *և այս երկակի. կամ* վասն հոմանուանութեան շարագրողաց, *և կամ* վասն հոմանուանութեան շարագրածաց: *Եւ վասն հոմանուանութեան շարագրողաց, որպէս յորժամ գտանին երկուք ոմանք հոմանուն, և գրէ իւրաքանչիւր որ շարագրածս, ոմն վասն Հոգւոյ, և ոմն վասն երկնից. յորժամ վասն հոմանուանութեան շարագրողաց* ոչ ոք կարօղ գոյ որոշել, այլ զերկոսեան շարագրածսն միոյ առն կարծէ գոլ:

Այլ և վասն հոմանունութեան շարագրածութեանց լինին պատրանք. քանզի և շարագրածութիւնս հոմանուանս ըողին հոմանունք Արիստոտէլք. և կարծի ամենայն Սոագիրացւոյն գոլ վասն անուանին գոլոյ (էջ 37—38)։

Եւ կամ վասն ամպարհաւաճութեան առացաւղին տարավայելուչ գիրս։ Քանզի ոմանք անանուանիք գոլով շարագրաւղք... վասն կարծելոյ և տարավայելուչս ունել գիրս՝ մակագրէին զանուն նշանավոր շարագրաւղին (էջ 38)։

Եւ կամ վասն հոմանունութեան շարագրածութեանցն, յորժամ գտանին երկուք ոմանք զանազան անուանս ունելով՝ և առնեն շարագրածութիւնս վասն միոյ իրի՝ կամ վասն հոգւոյ կամ վասն երկնից. և յայնժամ ոչ ոք կարող գոյ որոշել՝ կամ զնորայն սուրա կարծելով, կամ զսուրայս նորա (էջ 252)։

...Ասեն խորիք շարագրածութիւնք, որ լինին ի ձեռն պատուասիրութեան, այսինքն սնափառութեան։ Քանզի ոմանք անփառք և աներեւելիք գոլով՝ անուամբ վարդապետութեան կամելով յարգել զիւրեանց շարագրածսն, մակագրեն իւրեանց շարագրածսն զերեվելի ուրուք զանուն վարդապետի (էջ 252)։

Նույնությունն ակնթախ է. որոշ տարբերություններ կան միայն օրինակների մեջ, որոնք միանգամայն հասկանալի են նույն բանը անկաշկանդ կրկնելու, բայց նախկինում ասածի միտքն ու ընդհանուր ձևը պահպանելու դեպքում։ «Խորիք» կամ անվավեր ստեղծագործությունների առաջացման պատճառը երկու բնագրերում էլ, ինչպես տեսնում ենք, բացատրվում է ոչ միայն նույն ձևով ու իմաստով, այլև շատ հաճախ նույն բառերով։ Արդյո՞ք Ա. Բուասեն և Հ. Մանանդյանը նշված հատվածները համադրելուց հետո են եզրակացրել, որ «դրանք չեն կարող համարվել միևնույն հեղինակի բացատրություններ», ինչպես ըստ նրանց կարծիքի «այդ ակնհայտնի երևում է Դավթի և նորագյուտ մեկնության նաև այն հատվածներից, որոնք նվիրված են խորիք շարագրածության խնդրի լուսաբանությանը»։ Մի փոքր ավելի ուշադիր լինելու դեպքում հնարավոր չէր գալ նման եզրակացության։

Այսպիսով, փլվում է նաև նրանց երրորդ պատճառաբանությունը։

Հ. Մանանդյանը գտնում է, որ Ա. Բուասեի այս պատճառաբանությունները «միանգամայն հիմնավոր են և ապացուցում են, անառարկույս(!), որ էլիսեին ընծայված Մեկնությանց մեկնությունը Դավթի աշխատությունը չէ։ Թեև հունարեն ձեռագիրների վերնագրերը վերագրում են այդ մեկնությունը Դավիթ փիլիսոփային, սակայն այդ հանգամանքը այնքան էլ կարևոր չէ» (ընդգծումը մերն է— Ս. Ա.)[18]։ Մեր կարծիքով հենց այդ վիրջին հանգամանքը շատ կարևոր է դառնում, երբ քննական լույսի տակ ենք դնում Ա. Բուասեի և նրան լիովին համամիտ Հ. Մանանդյանի բոլոր երեք պատճառաբանությունները, որոնք ոչ հիմնավոր են, ոչ էլ ընդունելի։

Մենք տեսանք, որ Պորփյուրի Ներածության մեկնությունում Դավթի բոլոր խոստումները և հղումները իրենց ուղղակի և սպառիչ պատասխաններն են ստանում իր հաջորդ աշխատության մեջ՝ Արիստոտելի Մեկնությունում։ Տեսանք նաև, որ ոչ մի հակասություն չկա նրա այդ երկու գործերում

18 Հ. Մանանդյան, *Հունարան դպրոցը...*, էջ 29։

նույն հարցերի բացատրության միջև, այլ ընդհակառակը, կա այդ բացատրությունների զարմանալի նմանություն, որը, անտարակույս, գալիս է դրանց հեղինակների նույնությունից: Այս լույսի տակ բոլոր հունարեն ձեռագրերի վկայություններն այն մասին, որ Ստորոգության մեկնության հեղինակը Դավիթն է, ստիպում է վերանայել Ա. Բուասեի և Հ. Մանանդյանի չափազուրկված, բայց տարածված պնդումը և վերադարձնել Դավիթին նրա արժեքավոր գործերից մեկը՝ «Արիստոտելի Ստորոգության մեկնությունը»:

Սակայն Հ. Մանանդյանը խորացնում է Ա. Բուասեի սխալը և հենվելով «Արիստոտելի Ստորոգության մեկնության» նկատմամբ արտահայտված անապացույց պնդումների վրա, իր կասկածը տարածում է նաև Դավիթին պատկանող «Արիստոտելի Անալիտիկայի մեկնության» վրա, վերագրելով այն նույն Էլիասին: 1904 թվականին «Դավիթ Անհաղթի խնդիրը նոր լուսաբանությամբ» աշխատության մեջ բանասիրական դիպուկ ապացույցների և համեմատությունների հիման վրա նա եկել էր ճիշտ եզրակացության և հաստատել, որ «անպայման Դավթինն է նաև Արիստոտելի Վերլուծականքի («Անալիտիկայի») մեկնության 14 գլուխ հատվածը»[19]: Սակայն հետո, հրատարակելով իր հայտնաբերած «Ստորոգության մեկնությունը», նա անբննադատորեն ընդունում է Ա. Բուասեի վարկածը Էլիասի մասին, իսկ 1928 թ. իր «Հունարան դպրոցում» վերանայում է իր եզրակացությունը նաև «Անալիտիկայի մեկնության» նկատմամբ, կրկնելով Ա. Բուասեի միակ պատճառաբանությունը: Նա նորից բերում է Դավթի «Ներածության մեկնությունում» տրված խոստումը՝ «Իսկ բանականն, ևթէ մասն է իմաստասիրութեան, և ևթէ գործի, ի Ստորոգութիւնն Արիստոտէլի ուսցուք», և պնդում, որ Դավիթը չի կատարում իր խոստումը: Բայց, շարունակում է նա, քանի որ նման խոստում է տալիս նաև Էլիասը իր Ներածության մեկնությունում և ասում, որ այդ հարցը քննարկելու է Անալիտիկայի մեկնության մեջ, ապա և (ըստ Հ. Մանանդյանի) այդ վերջին գործը պատկանում է Էլիասին և ոչ թե Դավթին, որովհետև նշված հարցը այդտեղ քննության է առնվում[20]:

Այսպիսով, ըստ Հ. Մանանդյանի, Էլիասին են պատկանում Դավթի անունով մեզ հասած և՛ Ստորոգության, և՛ Վերլուծականքի (Անալիտիկայի) մեկնությունները: Բայց Մանանդյանը, զգալով իր իսկ պատճառաբանության թուլությունը, ավելացնում է. «Սակայն միակ այդ փաստը, թեև որոշ կռվան է Վերլուծականքի մեկնությունը Էլիասին վերագրելու, բայց այս ենթադրությունը հաստատելու համար հարկավոր են և ուրիշ վկայություններ, որ թերևս գտնվեն իմաստասիրական մեկնությունների հունական ձեռագրերում»[21]:

Արդ, Վերլուծականքի մեկնությունը հասել է մեզ միայն իր հայերեն տարբերակով, հունարենը չի պահպանվել: Հայերեն ձեռագրերն իրենց վերնագրերում նշում են, որ այդ գործը պատկանում է Դավթին: Բացի այդ, Ստորոգության մեկնության միջոցով հնարավոր չէ հաստատել այդ նոր ենթադրությունը, քանի որ, ինչպես տեսանք, Ստորոգության մեկնությունը պատկանում է Դավթին և ոչ Էլիասին: Դավիթը կատարում է իր խոստումը Ստորոգության մեկնությունում և կրկին անդրադառնում այդ հարցին Վերլուծականքի մեկնության մեջ, այն էլ նույն դարձվածքներով ու օրինակներով.

19 Հ. Մանանդյան, Դավիթ Անհաղթի խնդիրը նոր լուսաբանությամբ, Վաղարշապատ, 1904 էջ 10 (ընդգծումը մերն է— Ս. Ա.):

20 Հ. Մանանդյան, Հունարան դպրոցը..., էջ 67:

21 Նույն տեղում:

Մեկնութիւն ի վերլուծականն

Իսկ եթէ որպէս գործի *յարդարեն* (բանականն) *արիստոտելականքն, այսպիսում պիտանացեալք բանում. եթէ մասն է ասեն հաւաքականն իմաստասիրութեան, վասն զի և այլ արհեստ պիտանանան բանական ներգործում,. բաժանելով զինքեանս, և սահմանելով և ապացուցանելով. նաև ձեռնայիւնք հաւաքաբանեն. որդոն՝ շինողականն հաւաքաբանէ, եթէ յորժամ հանդերձեալ է ուղղորդ յարուցանել զորմէ պարտ է հիմունս արկանել (էջ 566)։*

Արդ հաւաքականն միայն պիտանանայ իմաստասիրութեան, ի տեսականումն՝ առ ի յորոշումն ճշմարտութեան և սուտեան, իսկ ի գործականումն՝ առ ի յորոշումն բարւոյ և չարի, և այլոյ արհեստի (էջ 565)։

Իսկ ապացուցական հաւաքումն պիտանացու գոյ յամենայն իմաստասիրութեան, ի տեսականն և ի գործականն. *որպէս զի զցուցեալսն ի տեսականումն ճշմարտապէս՝ ճշմարիտ կարծեսցուք.* որպես զի մի զսուտ գիտութիւն ընկալցուք, և մի չար ինչ գործեսցուք *(էջ 559)։*

Մեկնութիւն Սոորոգութեանց

Ասեն եթէ գործի է բանականն *իմաստասիրութեան, և արժան է նախ պիտել զգործին և այնպէս պիտանանալ նմա։ Քանզի այսպէս առնեն և ի ձեռնարհեստականսն, վասն զի նրբեալն ի հիւանականն նախ և առաջին ուսանի զգործին՝ զդուրն, զշաղափն, եթէ ինչ պէտս են և ապա պիտանանայ նոցա ըստ իւրաքանչիւր գործոյ (էջ 20)։*

...զոր ինչ պէտս կատարէ հիւանդն՝ հիւանդ՝ որոշելով զդործն և ըստգիտելն, և շինողին ըստ ական՝ որոշելով գիւերն և գուղղորդն՝ այսպէս և բանականն՝ գործի գոլով իմաստասիրութեան՝ որոշէ ի միմեանց զսուտն և զճշմարիտն, զչարն և զբարին, զի մի սուտ ինչ կարծեսցուք և մի չար ինչ գործեսցուք (էջ 18)։

Ապացոյցն՝ գործի գոլով իմաստասիրութեան՝ *ընտրութիւն և բացընտրութիւն, որպէս զի ի տեսականին ընտրեսցէ զճշմարիտն և բացընտրեսցէ զսուտն, նոյնպէս և ի գործականին ընտրեսցէ զբարին և բացընտրեսցէ զչարն.* որպէս զի մի սուտ ինչ կարծեսցուք *և սոյն հաւատացուք* և մի չար ինչ գործեսցուք *(էջ 21)։*

Կարելի է բերել և այլ բազմաթիվ օրինակներ, որոնք ակնբախ ցույց են տալիս, որ Դավիթը կատարելով իր խոստումը Սոորոգության մեկնության մեջ, գրեթե բառացի կրկնում է այն Վերլուծականքի մեկնությունում։ Բայց բավականանանք այսքանով, որովհետև բերվածն էլ բավարար է համոզվելու համար նրանում, որ Վերլուծականքի մեկնությունում արամաբանության (բանականի) էությունը բնորոշողը ինքը Դավիթն է և ոչ թե Էլիասը։ Այնպես որ բոլոր հունարեն ձեռագրերի վկայությունն այն մասին, որ Սոորոգության մեկնության հեղինակը, և հայերեն ձեռագրերի վկայությունն, որ Վերլուծականքի հեղինակը «անհաղթ և աստվածազգյաց փիլիսոփա Դավիթն է», պետք է ընդունել որպես հավաստի և ճշգրիտ տեղեկություն և այդ երկու գործերը երկարատև օտարումից հետո վերադարձնել Դավիթ Անհաղթին։

Նշենք մի ուշագրավ հանգամանք ևս ու դրանով վերջացնենք հարցի քննարկումը։

Հ. Մանանդյանը մի քանի հետաքրքիր փաստեր է բերում և դրանց հիման վրա պնդում, որ Էլիասը և Օլիմպիոդորոսը մի անձ են, որ Էլիասը Օլիմպիոդորոսի քրիստոնեական անունն է[22]:

Բայց այդ ենթադրությունն էլ չի խախտում Դավիթի հեղինակությունը: Ընդհակառակը, նա ամրապնդում է մեր թեզը: Դավիթ ուսուցիչ Օլիմպիոդորոսը, իսկապես, գրել է Սորոգության մեկնություն, սակայն, դա բոլորովին մի ուրիշ աշխատություն է. այն հայտնի է բանասիրությանը և նրա տեքստը առանձին հրատարակել է նույն Ա. Բուսսեն[23]: Անհավանական է, որ Օլիմպիոդորոսը երկու աշխատություն նվիրած լիներ Սորոգությունների մեկնությանը, մանավանդ եթե հաշվի առնենք Դավիթի ցուցումները նույն գործին նվիրած իր խոկ մեկնության մասին և մեր կողմից բերված դրանց փաստական ապացույցները:

Առավել ևս սխալվում է Հ. Մանանդյանը, երբ աշխատում է Էլիաս-Օլիմպիոդորոսին վերագրել Վերլուծականքի («Անալիտիկայի») մեկնությունը: Մենք չենք խոսում բազմաթիվ բնագրային համընկնումների մասին, որոնք կան այդ գործի և Դավիթի մյուս երեք աշխատությունների միջև: Այստեղ պետք է հաշվի առնել մի ուրիշ կարևոր հանգամանք: Առաջ քաշելով իր նոր թեզը և աշխատելով նաև Վերլուծականքի մեկնությունը օտարել Դավիթից, Հ. Մանանդյանը աչքաթող է արել, որ նույնացնելով Էլիասին Օլիմպիոդորոսի հետ, օդից կախված են մնում այս մեկնության մեջ հիշատակված Եվտոկիոս և Ալեքսանդրոս փիլիսոփաների անունները:

Բանն այն է, որ Դավիթը այստեղ հիշատակում է Պորփյուրի ներածության նվիրված մի այլ մեկնության հեղինակ՝ ալեքսանդրացի փիլիսոփա Եվտոկիոս Ասկալոնացուն, որը Օլիմպիոդորոսի հետ միասին ուսանել է Ամմոնիուսի մոտ: Բացի այդ, Դավիթը նշում է Ալեքսանդրոս մեկնիչի անունը, որն իր հերթին օգտվել է Եվտոկիոսի աշխատություններից: Իր առաջին ուսումնասիրության մեջ Հ. Մանանդյանը եկել էր ճիշտ եզրակացության, որ այդ Ալեքսանդրոսը պետք է լինի ալեքսանդրյան փիլիսոփաների երկրորդ սերնդի ներկայացուցիչ և Դավիթ Անհաղթի ժամանակակից[24]: Եվ եթե այդ այդպես է, ապա ոչ մի կերպ հնարավոր չէ Վերլուծականքի՝ մեզ հետաքրքրող մեկնությունը վերագրել Էլիաս-Օլիմպիոդորոսին[25], որովհետև նա չէր կարող օգտագործել իր աշակերտ Ալեքսանդրոսի, ինչպես նաև Դավիթի աշխատությունները, այլ ընդհակառակը, վերջիններս օրինաչափորեն կարող էին և պետք է օգտվեին իրենց ուսուցչի ժառանգությունից:

Դավիթ Անհաղթը իր «Վերլուծականքի մեկնության» շարադրման համար օգտագործում է ալեքսանդրյան դպրոցի նախորդ՝ ավագագույն, ավագ և միջին սերունդների, ինչպես և իր սեփական երկերը, որոնք գրվել են Վերլուծականքից առաջ: Այդ հանգամանքը նկատել է դեռևս Հ. Մանանդյանը, որը գտել և Վերլուծականքի մեկնության կողքին դրել է նրա աղբյուրների՝ Ամմոնիուսի «Վերլու-

22 Հ. Մանանդյան. Հունաբան դպրոցը..., էջ 47—48:

23 Olympiodori Prolegomena et in Categorias commentarium, ed. A. Busse, Berolini, 1902.

24 Հ. Մանանդյան. Դավիթ Անհաղթի խնդիրը..., էջ 28:

25 Հ. Մանանդյան. Հունաբան դպրոցը..., էջ 65 և 67:

ծականքի»[26], Օլիմպիոդորոս-Էլիասի «Ստորոգութեանց»[27] մեկնությունների, ինչպես և Դավթի մյուս երեք աշխատությունների[28] համապատասխան տեղերը: Այդ համընկնումների մեծ մասը վերաբերվում է իր իսկ Դավթի գործերին: Ավելացնենք սրանց նաև Դավթի կողմից հիշատակվող, բայց մեզ չհասած Եվտոկիոս Ասկալոնացու և Ալեքսանդրոսի մեկնությունները:

Այս ամենը վկայում է այն մասին, որ Դավիթը ժամանակագրական առումով գալիս է վերոհիշյալ փիլիսոփաներից հետո, որ նա Ալեքսանդրյան դպրոցի կրտսեր սերնդի և վերջին ներկայացուցիչներից է և այդ պատճառով էլ հնարավորություն ուներ օգտագործելու իր նախորդների աշխատությունները:

Եթե մի պահ ընդունելու լինենք Հ. Մանանդյանի ենթադրությունը, «որ այդ մեկնությունն ավելի շուտ Էլիասին կարելի է վերագրել, քան Դավթին»[29], ապա կառեղծվի մի շատ տարօրինակ վիճակ. կստացվի, որ Էլիաս-Օլիմպիոդորոսը օգտվում է ոչ միայն իր ընկերակից Եվտոկիոսի, այլև իր աշակերտներ Ալեքսանդրոսի և Դավթի աշխատություններից, մի բան, որ ոչ թե հավանական չէ, այլ լիովին բացառվում է:

Այսպիսով, վերը նշված բոլոր փաստերը և պատմա-բանասիրական դիտողությունները հիմք են տալիս մեզ վերանայելու Ա. Բուսսեի և Հ. Մանանդյանի եզրակացությունները Դավթի ժառանգության մասին և, բացի կասկած չհարուցող «Սահմանք իմաստասիրութեան» և «Վերլուծութիւն ներածութեանն Պորփիւրի» երկերից, երկարատև օտարումից հետո վերադարձնել իսկապես Դավիթ Անհաղթին պատկանող ևս երկու իմաստասիրական աշխատություն՝ «Մեկնութիւն Ստորոգութեանցն Արիստոտէլի» և «Մեկնութիւն ի Վերլուծականն Արիստոտէլի»:

Սրանով, կարծում ենք, չպետք է սպառված համարել խոշորագույն հայ իմաստասերի ժառանգության խնդիրը: 5—6-րդ դարերի ոչ մի փիլիսոփա չէր կարող որևէ մասնակցություն չունենալ այն բուռն դավանաբանական վեճերին, որ տեղի էին ունենում հայ, հույն և ասորի եկեղեցականների ու աստվածաբանների միջև: Տարօրինակ և անտրամաբանական կլիներ, եթե այնպիսի մի մտածող, ինչպիսին էր Դավիթ Անհաղթը, սահմանափակվեր զուտ փիլիսոփայական-իմացաբանական հարցերով և չարձագանքեր նույնիսկ միաբնակների ու երկաբնակների կատաղի այն վեճերին, որոնք արոհել էին իր հայրենի երկրի թեմերն ու երկրամասերը: Հ. Մանանդյանը ժամանակին ուշադրություն էր դարձրել Դավթին վերագրվող «Առածք հինգ» փոքր, բայց արժեքավոր բնագրի վրա, որը, ըստ Հ. Մանանդյանի գրվել է երկաբնակ հայերի միջավայրում[30]: Մենք սակայն ի նկատի ունենք իրենց նշանակությամբ և ծավալով ավելի մեծ աստվածաբանական-իմաստասիրական երկեր, որտեղ զգացվում է Դավթի գրիչն ու մտածելակերպը: Բայց դա արդեն մի առանձին աշխատության

[26] Ammonii in Aristotelis Analyticorum priorum librum I commentarium, ed. M. Wallies, Berolini, 1899, CAG, vol. IV, pars VI, pp. 2, 6, 31.

[27] Olympiodori Prolegomena et in Categorias commentarium, ed. A. Busse, Berolini, 1902, CAG, vol. XII, pars I, pp. 14, 18, 24.

[28] *Սահմանք իմաստասիրութեան, էջ 132—133, 185—186, 191—202, 214, Վերլուծութիւն Ներածութեան Պորփիւրի, էջ 259—260, 263, 271, 304 եև. Մեկնութիւն Ստորոգ. Արիստոտէլի, ընդ. Էլիասի, էջ 17, 16, 21, 40 եև:*

[29] Հ. Մանանդյան, *Հունաբան դպրոցը..., էջ 67:*

[30] *Անդ, էջ 202—209:*

նյութ է, որը դուրս է գալիս նեղկա հոդվածի շրջանակներից: Մի բան միայն կարող ենք առայժմ ասել. Դավթի ժառանգությունը շատ ավելի հարուստ է, քան մենք պատկերացնում ենք: Հայ և այլազգի բանասերները մեծ գործ կատարեցին, հշտելով նրա ժառանգության շրջանակները, բայց նրանք, ի տարբերություն միջնադարյան մեր գրիչների, ընկան մյուս ծայրահեղության մեջ և Դավթի երկացանկից հանեցին նույնիսկ նրա գրչին պատկանող գործերը: Մեր նպատակն է, հաշվի առնելով երկու կողմերի սխալները, վերականգնել պատմական ճշմարտությունը:

С. С. АРЕВШАТЯН

НАСЛЕДИЕ ДАВИДА НЕПОБЕДИМОГО В НОВОМ ОСВЕЩЕНИИ

(Р е з ю м е)

Автор статьи, на основе историко-филологического анализа сохранившихся философских текстов, доказывает, что перу выдающегося армянского философа V—VI вв. Давида Непобедимого принадлежат не только «Определения философии» и «Анализ Введения Порфирия», но и «Толкование Категорий Аристотеля» и «Толкование Аналитики Аристотеля».

Исходя из прямых указаний, содержащихся в трудах Давида, а также идейно-философской и литературной общности четырех вышеуказанных трудов, автор опровергает аргументацию издателей текстов Давида — немецкого ученого Адольфа Буссе и акад. Я. Манандяна, необоснованно приписывавших «Толкование Категорий Аристотеля» перу Элиаса, и доводы Я. Манандяна, усугубившего эту ошибку, приписав тому же Элиасу также «Толкование Аналитики Аристотеля». К тому же Я. Манандян отождествил Элиаса с Олимпиодором Младшим, который был учителем Давида.

Олимпиодор и Давид, каждый в отдельности, имеют свои толкования к «Категориям» Аристотеля. Это было известно древним переписчикам, которые во всех сохранившихся греческих рукописях интересующего нас «Толкования Категорий Аристотеля» четко указывают, что оно принадлежит Давиду. Издатель этого текста А. Буссе произвольно изменил заглавие труда, приписав его Элиасу.

Что же касается «Толкования Аналитики Аристотеля», то оно также бесспорно принадлежит перу Давида, ибо в нем Давид использовал труды как своего учителя — самого Олимпиодора, его сотоварища Евтокия, затем одного из старших своих современников Александра— ученика Олимпиодора, а более всего свои собственные труды, что, разумеется, говорит против авторства Элиаса-Олимпиодора и в то же время, помимо всего прочего, лишний раз свидетельствует о том, что данное толкование должно принадлежать Давиду, как представителю младшего поколения Александрийской школы.

Автор статьи считает, что наследие Давида, по-видимому, не ограничивается четырьмя вышеуказанными сочинениями. Было бы странным, если такой крупный мыслитель, как Давид Непобедимый, замыкался бы в рамки сугубо философско-гносеологических вопросов и в какой-то мере не откликнулся на те ожесточенные споры диофизитов и монофизитов, которые происходили в греческой, армянской и сирийской церковной среде, а в его родной стране — Армении являлись причиной раскола общества и натянутых отношений между отдельными епархиями и целыми провинциями. В связи с этим автор считает, что Давиду должны принадлежать также труды богословского, церковно-догматического содержания, поиски которых могут оказаться небезуспешными.

S. S. AREVCHATIAN

L'HERITAGE DE DAVID L'INVINCIBLE SOUS UNE LUMIERE NOUVELLE

Analysant d'un point de vue historico-philologique les textes philosophiques parvenus jusqu'à nous, l'auteur de l'article attribue à la plume de David l'Invincible, célèbre philosophe arménien du V^e^—VI^e^ siècle, les „Commentaires des Catégories d'Aristote", ainsi que les „Commentaires des Analytiques d'Aristote", qui viennent s'ajouter à la „Définition de la Philosophie" et à „l'Analyse de l'Introduction de Porphyre", ouvrages que nous lui connaissions.

Ainsi se trouve réfutée, à l'appui des indications directes émanant des ouvrages de David et des particularités idéo-philosophiques et littéraires générales propres aux quatre ouvrages précités, l'argumentation erronée du savant allemand Adolph Busse et de l'académicien Hakob Manandian, tous deux éditeurs des textes de David, selon laquelle Elias était considéré comme l'auteur des „Commentaires des Catégories d'Aristote", Hakob Manandian lui attribuant encore les „Commentaires des „Analytiques d'Aristote", cette dernière erreur aggravant la première. En outre, H. Manandian identifie Elias avec Olympiodore Cadet, qui était le maître de David.

Olympiodore et David possèdent chacun séparément leurs „Commentaires des Catégories d'Aristote", ce qui n'avait point échappé aux copistes anciens mentionnant clairement le nom du philosophe David dans tous les manuscrits grecs contenant l'ouvrage nous intéressant. Lors de la publication, A. Busse en changea le titre en y faisant figurer arbitrairement le nom d'Elias.

Quant aux „Commentaires des Analytiques d'Aristote", son auteur est incontestablement David utilisant ici les ouvrages du même Olympiodore, son maître, ceux d'Eutokios, camarade d'Olympiodore, ceux d'un de ses contemporains aînés, Alexandre, élève d'Olympiodore, et surtout ses

propres ouvrages, ce qui naturellement ne saurait témoigner en faveur de l'auteur Elias-Olympiodore et qui prouve bien, une fois de plus, que ces „Commentaires" ne peuvent appartenir qu'à la plume de David, représentant de la jeune génération de l'Ecole d'Alexandrie.

L'auteur de l'article présume que l'héritage de David ne se limite pas essentiellement aux quatre ouvrages indiqués, qu'un philosophe de sa capacité ne pouvait se confiner dans les limites des seules questions d'ordre purement philosopho-gnoséologique sans se faire l'écho, dans telle ou telle mesure, des discussions particulièrement aiguës des diophysites et des monophysites, accaparant les milieux ecclésiastiques grec, arménien, syrien et ayant provoqué dans son pays même, en Arménie, la scission de la société et une tension des rapports entre certains diocèses de même qu'entre des provinces entières.

Aussi l'auteur n'exclut-il pas l'existence d'ouvrages de caractère théologique ou dogmatique ayant appartenu à la plume de David l'Invincible, les recherches en ce sens pouvant s'avérer fructueuses.

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ ԱՐՎԵՍՏԻ ԱՐՁԱՆԹԵՐ
ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ—«ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ»
ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ
ԵՐԵՎԱՆ № 9 1969

ԱՐՏԱՇԵՍ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

ԽԻԿԱՐԻ ԶՐՈՒՅՑԻ ՍԼԱՎՈՆԱԿԱՆ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐԸ

Զրույցի սլավոնական խմբագրության մասին առաջին անգամ հայտնիկ հիշատակվում է 1800 թվականին «Ироческая песнь о походе на половцев» գրքում: Ասքը պարունակող ձեռագրի նկարագրության մեջ թվարկվում է նաև խիկարի բնագիրը, ասքից անմիջապես առաջ[1]:

Կարամզինը 1816 թվականին, նկատի ունենալով նույն ձեռագիրը, գրում է, որ այնտեղ կան ևս երկու պատմվածք, որոնցից մեկը խիկարի զրույցն է:

«Դրանք անկասկած ռուսական ստեղծագործություններ չեն,— ավելացնում է նա,— բայց իրենց հնությամբ արժանի են ուշադրության»[2]:

Նա բերում է զրույցի մուտքից մի փոքր հատված:

1825 թվականին Ն. Պոլևոյը «Արաբական հնթիաթի հին ռուսական թարգմանություններ» խորագրի տակ ներկայացնում է ռուսական խմբագրության մի այլ օրինակ: Նա այն համեմատում է Կարամզինի բերած հատվածի և Շավիկոզոտի բնագրի ռուսերեն թարգմանության հետ: Պոլևոյն իր փոքրիկ հոդվածի մեջ յուրովի բնորոշելով ռուս հին գրականությունը, աշխատում է ցույց տալ խիկարի արժեքը ռուսական կյանքի և հարաբերությունների ուսումնասիրության գործում.

«Մեր հին մատենագրության գրեթե ամբողջ արտադրանքը,— գրում է նա,— բաղկացած է հոգևոր և պատմական ստեղծագործություններից և թարգմանություններից, որանից բացի, ինչպես թվում է, մեր նախնիների մատենադարաններում չափազանց քիչ են եղել այնպիսի երկեր, որոնք պատկանեին ստեղծագործության բնագավառին»[3]:

«Պատմությունը,— շարունակում է Պոլևոյը,— ցույց է տալիս մեզ նրանց գործը, բայց միայն գրական ստեղծագործություններն են, որ կարող են ցույց տալ նրանց կարծիքները, մտածողության եղանակը, նախապաշարումները և այն ամենը, ինչ կա նրանց պատկերացումներում»[4]:

---

[1] Ироческая песнь о походе на половцев удельного князя Новогорода — Северского Игоря Святославича, писанная старинным русским языком в исходе XII столетия, Москва, 1800, էջ VII.

[2] *Н. М. Карамзин*, История государства Российского СПб, 1842, V издание, Примечания к III тому Истории государства Российского, *տյուն 106, ձան. № 272:*

[3] Московский телеграф, № 11, 1825, *էջ 227:*

[4] *Անդ, էջ 228:*

Ահա այս տեսակետից հատկապես օրինակ է Խիկարի զրույցը: «Նման հուշարձանների հայտնագործումը հետաքրքիր կլիներ պատմաբանի, լուրջ ընթերցողի և բանասերի համար»,—եզրափակում է նա[5]:

Այսպես ծայր առավ հետաքրքրությունը զրույցի մասին ռուս իրականության մեջ:

Փորձենք քննել այն ուղիները, որոնցով ընթացել է ռուսական բանասիրությունը Խիկարի սլավոնական խմբագրության շուրջը: Դա ընդգրկում է զրույցի թարգմանական ուղիների և ժամանակի, ռուսական և սերբական կամ հարավսլավոնական զրական փոխհարաբերությունների, սլավոնական զրականության վրա Արևելքի ազդեցության խնդիրները:

Ա. Պիպինը լիովին մերժում է Արևելքի ազդեցությունը ռուս ժողովրդական բանահյուսության և զրավոր զրականության վրա. «Մինչ այժմ նրա ուսումնասիրությունը (ժողովրդական բանահյուսության—Ա. Մ.) արևելյան ազդեցության հարցի վերաբերյալ ոչ մի հետևության չբերեց, այդպես և նրա լուծման համար քիչ, կամ, նույնիսկ, ոչինչ չի քաղվել հին զրավոր զրականությունից»:

Սակայն նա բացառում է Խիկարի զրույցը:

«Միակ ստեղծագործությունը,— գրում է Պիպինը,— որը կարող է մի թեթև ակնարկել նրա կապը Արևելքի զրականության հետ, մնում է Հաղար ու մեկ գիշերների հեքիաթը հին ռուսական թարգմանությամբ: Դա, իրոք միակը իր տեսակի մեջ, շատ հետաքրքիր հուշարձան է»[6]:

Պիպինը նշում է, որ զրույցը մուտք է գործել Բյուզանդիայից՝ հարավ-սլավոնական ինչ-որ թարգմանության միջնորդությամբ:

Ա. Վեսելովսկին 1871 թվականին Խիկարի անցման ուղիների մասին միևնույն տեսակետն է հայտնում, բայց նրա համար Խիկարի զրույցը ո՛չ թե բացառություն է, այլ Արևելքի ազդեցությունը հաստատող օրինակ:

Նշելով, որ բացի եզովպոսից անմիջապես արաբական Հաղար ու մեկ գիշերներից եղել է հունական այլ թարգմանություն, որը չի պահպանվել, բայց որի գոյությունը մեզ թույլ է տալիս ենթադրելու Ակիր (Խիկար) իմաստունի մասին հարավսլավոնական բնագիրը, Վեսելովսկին գրում է.

«Դա որոշում է հեքիաթների բնագավառում Բյուզանդիայի դերը Արևմուտքի վրա Արևելքի ազդեցության պատմության մեջ: Եթե մոնղոլները կարողանում էին գործել բացառապես բանավոր փոխանցումներով, ապա Բյուզանդիայի ազդեցությունն ավելի զրական բնույթ ուներ»[7]:

---

5 Անդ, էջ 235: Պոլևոյն իր բնագիրն հրատարակում է 1842 թվականին «Древнерусские повести» ընդհանուր խորագրի տակ, անշուշտ ցույց տալու համար բնագրի հարազատությունը ռուս հին զրականության: Այստեղ նա նորից նշում է բնագրի արևելյան ծագումը և, նույնիսկ, կապը եզովպոսի հետ (տե՛ս «Русский вестник», V том, СПб, 1842, էջ 54—65):

6 А. Пыпин, Очерки из старинной русской литературы, „Отечественные записки", том XCVIII, вторая книжка, СПб, 1855, էջ 116:

Խիկարի բնագիրը ռուս իրականությանն առաջին անգամ ծանոթացվեց 1793 թվականին Ադուբի ֆրանսերեն հրատարակության թարգմանությամբ իրրև «Հաղար ու մեկ գիշերների» շարունակություն: Բնագրի ծանոթությունն ավելի վաղ էր, քան նրա շուրջ եղած բանասիրական հետազոտությունները: Այդ պատճառով զրույցն անվերապահ ընդունվեց իրրև «Հազար ու մեկ գիշերների» արաբական հեքիաթ:

7 А. Н. Веселовский, Новые отношения Муромской легенды о Петре и Февронии и сага о Рагнаре Лодброне, „Журнал Министерства народного просвещения", часть CLIV, 1871, էջ 120:

Նույն դիրքերից Խալանսկին առարկում է Միլլերին Արևելքի ազդեցության անանելով նաև բիլինաների վրա[8]:

Այդպես, Խիկարը թարգմանվել է սլավոններեն՝ հույն որևէ բնագրից: Այդ կարծիքը բաժանում են և մյուս բանասերները՝ Իրիշնկը, Վլադիմիրովը, Լոպարևը[9] և ուրիշներ:

1822 թվականին Յագիչը հրատարակում է երկու ձեռագրերից կազմված սերբական բնագիրը դերմաներեն թարգմանությամբ[10], որի առաջաբանում հայտնում է նույն միտքը: Այդպես էլ ընդունվում է եվրոպական բանասիրության կողմից: 1898 թվականին Հարրիսի, Կոնիբերի և Սմիթի նշանավոր գրքում Յագիչի բնագիրը հրատարակվում է անգլերեն[11]: Այդ հրատարակությամբ սլավոնական խմբագրությունը հայտնի է դառնում իբրև հույն կորած բնագրի փոխօրինակ:

1890 թվականին Ա. Վեսելովսկին, դարձյալ դանելով, որ բնագիրը թարգմանվել է հունարենից, հայտնիկ դիտում է. «Սլավոնական պատմվածքը, հիշատ է, տարբեր ձևերով ազատազված, հատուկ անունների մեջ արևելյան ծագման հետքեր է պահպանել»[12]:

1898 թվականին Ֆ. Ե. Կորշը նայում է գրույցի մեջ եղած հատուկ անունների կազմը և նկատում, որ նրանց մեջ զգացվում է հայկական տարր[13]:

Ա. Դ. Գրիգորևը Կորշի խորհրդով դիմում է Լազարյան Ճեմարանի պրոֆեսոր Գ. Խալաթյանցին և միասին արված հետևություններն հրատարակում Մոսկվայի Արխեոլոգիական ընկերության տեղեկագրում, 1898 թվականին[14]:

Որոշ անուններ բնագրում տառադարձված են այնպես, որ հունարենից արված թարգմանության դեպքում չեն համապատասխանում սլավոնական տառադարձության օրենքներին. Адоров (Адорски), Анадан, Анабугил (Набугил), Абекам (Обека), Арапар.

«Առաջին երկու անունները,— գրում է Գրիգորևը,— որոնց մեջ d-ի առկայության պատճառով կասկած են հարուցում: Եթե առնը Анадан-ը համապատասխանում է սորա-արաբական Nadan-ին, ապա Адоров չի կարելի ար-

---

[8] *М. Халанский*, Южно-славянское сказание о Кралевиче Марке, в связи с произведениями русского былевого эпоса, сравнительные наблюдения в области героического эпоса южных славян и русского народа, III (оттиск из „Русского филологического Вестника"), Варшава, 1895, էջ 320:

[9] *К. И. Иречек*, История болгар, Одесса, 1878, 563, *П. В. Владимиров*, Древняя русская литература Киевского периода XI—XIII веков, Киев, 1901, 97—98, *Х. Лопарев*, Слово о святом „Патриархе Феостирикте", к вопросу о 29-ом февраля в древней литературе — Памятники древней письменности, XCIV, 1893, էջ 3—14, 17—31:

[10] „Byzantinische Zeitschrift", I Band, Heft, Leipzig, 1892.

[11] The story of Ahikar, from the Syriac, Arabic, Armenian, Ethiopic, Greek and Slavonic Versions by F. C. Conybeare, J. Rendel Harris and Agnes Smith Levis, London, 1898, էջ 1—23:

[12] *А. Н. Веселовский*, Сказки Тысячи одной ночи в переводе Галлана (предисловие). — Тысяча одна ночь, арабские сказки, новый полный перевод Ю. В. Доппельмайер, т. II, Москва, 1890, էջ XVII:

[13] *А. Д. Григорьев*, Происхождение славянских текстов повести об Акире Премудром, — Археологические известия и заметки, издаваемые Имп. Моск. Арх. обществом, под редакцией Д. Н. Анучука и А. И. Кирпичникова, год VI, №№ 11—12, Москва, 1898, էջ 357:

[14] Անդ, էջ 357—359:

տածել ուղղակի ասորա-արաբականից: Հունարենի փոխանցման ժամանակ Ath*ur, Ath*or *ապառավում է ֊ և ոչ թե ն: Հետևյալ երկու անուններըդարձնում են իրենց մեջ ն-ի ակաղտնիքյամբ:* Анабугил *անունը համապատասխանում է ասորա-արաբական* Nabusmik, *իսկ* Абекам-*ը* Abikam-*ին: Փոխանցման ժամանակ հույները* b *կատարադարձնին* β-*ով, իսկ այդ վերջին հնչյունը սլավոնները կարտահայտին* в-*ի միջոցով: Համեմատիր* Навуходоносор, Вавилон *և այլն: Եթե սլավոնները թարգմաններին ուղղակի հունարենից, ապա վերևում բերված երկու անունները կհնչեին* Анавугил, Авекам: *Բայց, ինչ-որ շատ ավելի կարևոր է,* О *ձևագում գտնվող Առապար անունը (*Ч *և* Соф-*ի հետ համեմատած ավելի հին) դուրս է գալիս, որ հայկական բառ է:*

Հայկական առապար = τραχύς, asper, ἀχρότοφος, praeruptes, rupes: *Հայերի մոտ կա նաև* b, *որով նրանք փոխանցում են և հունական* β (Babylon, Nabuhodonosor), *իսկ* Adopov *բառը, այն է* t-*ի անցումը* d-*ին ցույց է տալիս, որ մենք գործ ունենք Արևմտյան Հայաստանի բարբառի հետ, որտեղ գոյություն ունի այդպիսի փոխարինում»*[15]:

Այսպես: Գրիգորևը գտնում է, որ գրույցի սլավոնական թարգմանության մեջ կա հայկական միջամտություն. «Դա հնարավոր է, որովհետև սլավոնները մեկ անգամ չէ, որ շփվել են հայերի հետ», բայց «հատկապես ինչո՞ւմ է արտահայտվել այդ միջնորդների դերը, արդյո՞ք հունարենից ուղղակի սլավոններենի թարգմանության մեջ, թե՞ այն բանում, որ հունարենից հայկական թարգմանությունը սկզբնաղբյուր է ծառայել սլավոնական բնագրի համար»[16]:

Գրիգորևը հավանական է համարում երկրորդ ենթադրությունը. եկեղեցասլավոնական թարգմանությունը կատարվել է հունարենից ոչ ուղղակի, այլ հայ բնագրի միջնորդությամբ:

Այդ վարկածով Ա. Դ. Գրիգորևը 1898 թվականին հանդես է գալիս Մոսկվայի Արխեոլոգիական ընկերության սլավոնական հանձնաժողովի առաջ[17]:

Ս. Ե. Եվսևևը կարծիք է հայտնում, որ սլավոնական բնագրում հատուկ անունների, ինչպես նաև Арапар-*ի առկայությունն այդպիսի ձևով հնարավոր է նաև առանց հայկական բնագրի, որովհետև սեմական բնագրում արդեն կարող էր լինել իրանական ազդեցություն:*

1899 թվականին նույն հանձնաժողովի հաջորդ նիստում Ն. Ն. Դուրնովոն նույնպես գտնում է, որ անունները կարելի է բացատրել առանց հայերենի միջնորդության: Абекам *աղավաղված է, նախնականը եղել է* Амбекам, *որը համապատասխանում է հունական* Ἀμβεχαμ, Ἀββεχαμ *ձևին: Հունական գրականության մեջ սեմական* b *փոխանցվել է ձայնավորների մեջ μβ կամ ββ-ի միջոցով:* Анабугил *բառի մեջ կարելի է վրիպակ տեսնել, ճ-ի փոխ* в, *իսկ* Арапар-*ը հունական* Ἀραπαρ *կամ* Ἀραφαρ-*ի միջնորդությամբ կարող է ծագել ասորական* Arafar-*ից*[18]:

---

15 *Անդ, էջ 358:*

16 *Անդ, էջ 359:*

17 Древности. Труды Славянской Коммиссии Императорского Московского Археологического Общества, том III, Москва, 1902, *էջ* 8—11 (Протокол 36-го заседания Славянской Комиссии Императорского Московского Археологического общества — 28 ноября, 1898 г.).

18 *Անդ, էջ 11—12* (протокол 37-го заседания, 25 января, 1899 г.).

Այս հարցի շուրջն այնուհետև գրականության մեջ որևէ խոսք չենք գտնում։

Տասը տարի անց, 1909 թվականին, դարձյալ Սլավոնական Հանձնաժողովի նիստում Ա. Դ. Գրիգորևը վարկածն ուղղակի շրջանցում է[19]։

Բայց արևելյան շերտը, ինչպիսին էլ այն լինի, ակնառու է և անտեսվել չէր կարող։ Նույն նիստում Կորշը գտնում է, որ բնագրերի անհամապատասխանությունները մղում է մեզ շհասած ասորական խմբագրության։ Իմիջիայլոց, նա Ակիր բառը փորձում է արտածել հին սեմական Хаккар անունից։

Ֆրանսուա Նոն, դարձյալ 1909 թվականին, քննելով Յագիշի բնագիրը, գտնում է, որ սլավոնական խմբագրությունը կարող է թերևս ասորականից գալ[20]։

1913 թվականին հրատարակվում է Ա. Դ. Գրիգորևի ծավալուն ուսումնասիրությունը[21]։ Այստեղ նա անսպասելիորեն մերժում է հայերենով միջնորդված հունական սկզբնաղբյուրի գաղափարը և հետևում Նոյին։

Այդ վարկածի համար նա դարձյալ հիմք է ընդունում անունների տառադարձությունը.

«Հունական բնագրի դեպքում հպիվ թե Абекам (Абикам), Набугил (Анабугил), Набугинал անունները սպասվեին б-ով։ Սովորաբար հույները սեմական б-ն արտահայտել են β-ի միջոցով, իսկ սլավոններն այդ β-ն արտահայտել են в-ով, համեմատիր Навузардан-Ναβουζαρδάν, Навуходоносор-Ναβουχοδονόσορ, Навубей-Ναβουδαΐ։ Ճիշտ այդպես էլ հունական միջնորդության դեպքում հպիվ թե d սպասվեր Адоров (և Анадан) անունների մեջ, քանի որ արևելյան Ath or, Athur-ի անցման ժամանակ հունարենում սպասվում է τ կամ σσ. համեմատիր հունարեն Ἀσσυρία, Ἀτοσσία, Ἀτυρία։

Միաժամանակ ուշադրություն է գրավում գրույցի մի քանի հատուկ անունների սլավոնական ձևերի մոտիկությունը այդ անունների սեմական և ոչ թե հունական կամ հայկական ձևերին,— շարունակում է Գրիգորևը,— Адоров-ի (Адор գոյականից) համար համեմատիր սորական Athor և արտբական Athur (Athor հատկապես սորական ձև է, համաձայն ակադ. Ծ. Ն. Կորշի)։ Իր անեզայնացմամբ գրույցի սլավոնական խմբագրության Синагрип-ը ավելի նման է, նույնիսկ, քան սորհատանյան թագավորի անվանը՝ Sin-ahe-irib, քան սորական Сеннахериб և արտբական Санхериб բնագրերից մեզ հայտնի ձևերին»[22]։

Մի երկու պարբերություն հետո Գրիգորևը եզրակացնում է. «Այսպես, Ակիր իմաստունի մասին գրույցը սլավոններեն է թարգմանվել, ամենից ավելի հավանական է, ուղղակի սորական բնագրից»[23]։

---

[19] Անդ՝ հա. 5, 1911, էջ 41 (протокол 106 заседания, 20 мая, 1909 г.).

[20] *François Nau*. Histoire et sagesse d'Ahikar l'Assyrien. Paris, 1909 էջ 98—99.

[21] *А. Д. Григорьев*. Повесть об Акире Премудром, Москва, 1913.

[22] Անդ՝ էջ 532։

[23] Անդ՝ էջ 535։ Գրիգորևը սակայն այնքան էլ վստահ չէ այս նոր կարծիքի մեջ։ Այն գլուխը, որտեղ նա փորձում է ապացուցել, որ սլավոնական բնագիրն անմիջապես գալիս է սորերենից, վերջացնում է այսպես. «Սորական խմբագրության պահպանված ձեռագրերի հետագա ուսումնասիրությունը կօգնի պարզելու սլավոնական խմբագրության Адор-ի (Адоров) մեջ д-ի ծագումը գալիս է արդյոք նույն սորական ձեռագրից, որտեղ եղել է Ador, փոխանակ Athor, երևան

Այս հետևությունը չէր կարող լուրջ ընդունվել։ Վ. Իստրինը գտնում է, որ Գրիգորևը գեռևս չի ապացուցել, իսկ Ն. Դուրնովոն իր դրախտության մեջ նորից մերժում է նրա փաստարկները[24]։

1915 թվականին Դուրնովոն անդրադառնում է հարցին ավելի հանգամանորեն[25], զարգացնելով անունների տատադարձության վրա։

«Ինչպես Գրիգորևը,— գրում է նա,— ևս նույնպես հնարավոր եմ համարում ալավոնական թարգմանության լեզվի մասին դատելու միայն հատուկ անունների հիման վրա»[26]։

Այնուհետև բերելով անունների բազմաթիվ հնարավոր փոխանցումներ, նա մերժում է ասորական նախօրինակը. «Ակիրի մասին պրույցի ալավոնական թարգմանության համար ուղղակի անմատչելի բնագրի ենթադրությանը,— շարունակում է Դուրնովոն,— հանդիպում է և այլ խոչընդոտ։ Քիչ է հավանական, որ 11—12-րդ դարերում ալավոնների մեջ լիներին ասորական և արաբական լեզուներին բավականաչափ լավ ծանոթ մարդիկ, որպեսզի այդ լեզուներից գրական հուշարձանների թարգմանության անեին... Մնում է թարգմանության հունական կամ այլ (պարսկական, հայկական և այլն) միջնորդության հնարավորությունը»[27]։

Պարսկական կամ հայկական նախօրինակին նա չի անդրադառնում և քննում է հունականը։ Դուրնովոն միաժամանակ նկատում է, որ մի քանի անունների տատադարձությունն ավելի մոտ է արաբականին։ Առհասարակ գրեթե բոլոր փաստարկների մեջ նա տեղ է տալիս երկրորդ հնարավորության։ Վերջապես իր միտքն ավարտում է բավական զգուշավոր.

«Ես կարծում եմ, որ Ակիրի մասին պրույցի հատուկ անունների տատադարձության առանձնահատկությունները չեն բացառում այն բանի հնարավորությունը, որ ալավոնական թարգմանությունն արվել է հունարենից, չնայած և քսո երևույթին չի վկայում ընդդեմ ալավոնների ուղղակի թարգմանության որևէ սեմական լեզվից։

Ինչ վերաբերում է ալավոնական կամ ենթադրվող հունական բնագրի սեմական օրիգինալին, ապա մի քանի առանձնահատկությունների հիման վրա (Акир, Амбекам կամ Абекам, Анабугил) հնարավոր է մտածել, որ այդ օրիգինալը եղել է ոչ թե ասորական, այլ արաբական։ Եթե դա իսկապես այդպես է, ապա հարկ կլիներ ընդունել, որ եղել է Ախիկարի գրքի մի քանի արաբական

է եկել արդյոք այն անկախ ալավոնական խմբագրության նախօրինակից, թե այստեղ ինչ-որ կերպ արտահայտվել է արևմտահայ բարբառի ազդեցությունը, որ ու-ն խառնում է դ-ի հետ։

Այստեղ հայկական ազդեցության անհրաժեշտություն թերլս տալու դեպքում, թերևս հնարավոր կլինի դրա արդյունք համարել և ալավոնական խմբագրության մեջ Арапар անվան հանդես գալը» (էջ 539)։

Կարծես նա իր նոր վարկածը արդեն է ակամա։

[24] *В. М. Истрин. Ал. Дм. Григорьев.* Повесть об Акире Премудром, исследование и тексты, 1913—Журнал Министерства народного просвещения, новая серия, часть LI, СПб, 1914. էջ 333—365, *Н. Н. Дурново, Ал. Дм. Григорьев.* Повесть об Акире премудром (Отдельный оттиск из Известий Отделения русского языка и словесности Императорской Академии Наук. т. XX. кн. 4, 1915).

[25] *Н. Н. Дурново,* К истории Повести об Акире. Москва, 1915 (Отдельный оттиск из 2 выпуска IV тома Трудов Славянской Комиссии Имп. Московского Археологического Обществса):

[26] Անդ՝ էջ 100։

[27] Անդ՝ էջ 101։

թարգմանություն և որ սլավոնականը վերաբերում է արաբական հատուկ թարգմանության, որը տարբերվում է մեզ հայտնի արաբական խմբագրությունների նախօրինակներից»[28]:

Դա միևնույն շրջապտույտն է: Այսպես հավասար հաջողությամբ կարելի է ընդունել արաբական, ասորական, հայկական, հունական, պարսկական, թերևս հնդկական բնագիր:

Այդ կարծիքները մնացին անհետ, և շարունակեց հարատևել հունական սկզբնաղբյուրի ենթադրությունը: 1953 թվականին Գուդզիի «Ռուս հին գրականության պատմության» հինգերորդ հրատարակության մեջ կարդում ենք. «Այս պատմվածքը, որ մեզ է հասել 15, 16-րդ դարի սկզբի ռուսական ձեռագրերից, ակներևաբար մեզ մոտ թարգմանվել է ուղղակի հունարենից»[29]:

Այսպես, սլավոնական խմբագրության սկզբնաղբյուրի հարցում բանասերները որոշակի արդյունքի չհասան, որովհետև հենվում էին միայն հատուկ անունների տառադարձության վրա:

Իհարկե, հատուկ անունները բնագրի աղբյուրը որոշելու գործում կարող են դեր խաղալ, բայց ոչ միշտ:

Եթե լիովին պարզ չեն մի լեզվից մյուսին փոխանցման օրենքները, անունների տառադարձությունից չի կարելի որևէ խնդիր ճշգրիտ սահմանել: Հենց ինքը՝ Դուրնովոն նշում է, որ համեմատության համար չունենալով հին շրջանում (11—13-րդ դար) արաբական կամ ասորական լեզուներից ոչ մի սլավոնական թարգմանություն, չենք կարող ասել սեմական անունների այդպիսի փոխանցումը, ինչպիսին մենք ունենք Խիկարի մասին զրույցում, հնարավո՞ր է արդյոք ասորական կամ արաբական լեզվից ուղղակի թարգմանության դնպքում:

Ընդունված է, որ զրույցը թարգմանվել է սլավոններեն 11—13-րդ դարերում, բայց ձեռագրական ամենահին ընդօրինակությունները գալիս են 16-րդ դարից: Թարգմանական օրինակից մեզ բաժանում է երեքից հինգ դար: Այդ ընթացքում հատուկ անունները կարող էին բավական հեռանալ նախասկզբնական ձևերից: Հետագա խմբագրություններում, նույնիսկ, մուտք են գործել անուններ, որոնք առհասարակ խորթ են բնագրին (Ելեազի, Թեոդուլիա, Սուտիր), բացի այդ, բուն իսկ սլավոնական բնագրի սահմաններում պետք է որոշակի լինեն անունների նախասկզբնական ընթերցումները (Абекам вѣ Амбекам և այլն), որպեսզի համեմատվեն ճիշտ ձևեր:

Փոխանցման ուղիների հարցը դրանով չի սպառվում: Այդյոք թարգմանությունը եղել է ուղղակի ռուսների կողմից, թե հարավսլավոնական որևէ ժողովրդի (բուլղարներ, սերբեր, հարավային սլավոններ):

Իրենկը նշելով, որ բազմաթիվ հունա-արևելյան պատմվածքներ սերբերին և ռուսներին է անցել բուլղարների միջոցով, գրում է. «Ճիշտ այդպես Ռուսաստանում շատ սիրելի Սինոգրիպ թագավորի, կամ նրա մինիատյար Ակիրի մասին զրույցը, որը վերածևված է Հազար ու մեկ գիշերներից, սլավոններին հայտնի դարձավ բուլղարական թարգմանիչների միջոցով»[30]:

---

28 Անդ, էջ 103:

29 *Н. К. Гудзий*, История древней русской литературы, издание пятое, Москва, 1953, էջ 159.

30 *К. И. Иречек*, История болгар, էջ 563: Տողատակում Իրենկն ավելացնում է. «Փափայի ենթադրությունը ռուսական Սինոգրիպի բուլղարական ծագման մասին հաստատվում է Բե-

Պիպինը գրույցն համարում է սերբական թարգմանություն[31]։

Ն. Բարսովը նույնպես ընդունելով, որ գրույցը գալիս է հունարենից, գրում է, որ նրա առաջին փոխանցողը սերբերն են[32]։

1897 թվականին Ա. Ի. Սոբոլևսկին սահմանում է այն օրինաչափությունները, որոնցով հնարավոր է տարորոշել հարավսլավոնական և ռուսական թարգմանությունները։

Ե՛վ հարավային սլավոնների, և՛ ռուսների մատենագրության լեզուն եկեղեցական-սլավոններեն է։ Բայց որքան էլ ռուս թարգմանիչը հիանալի տիրապետեր եկեղեցա-սլավոնական լեզվին, որոշ անծանոթ արտահայտությունների դեպքում չէր կարող չդիմել ռուսերենի օգնությանն։

Ելնելով դրանից Սոբոլևսկին խիկարի գրույցը դասում է ուղղակի ռուսական թարգմանությունների շարքը[33]։

Այս տեսակետը իր համար հող գտավ։ 1901 թվականին Պ. Վ. Վլադիմիրովը որդեգրում է այն, հենվելով միևնույն բառային կազմի վրա[34]։ Հետագայում դա ընդունում են Գրիգորևը[35], Իսարինը[36], Դուրնովոն[37] և ուրիշներ։

Բայց հարցը դրանով չի փակվում։ Մինչ այդ խիկարի գրույցը ծանոթ էր միայն սերբական և ռուսական ընդօրինակություններով։ Մ. Ն. Սպերանսկին պաշտպանելով նույն կարծիքը, գրում է. «Վատահ ասել, որ թարգմանությունը նախ եղել է բուլղարերեն, ապա անցել սերբերին, դժվար է, որովհետև կա մեզ

կովեցկյան ժողովածուով»։ Պիպինի մոտ սակայն այդ ենթադրությունը շատ հապճեպ է։ 1857 թվականին նա գրում է. «Ակիրի մասին գրույցը իր ծագմամբ պարտական է բյուզանդական գրականությանը, որից մեզ է անցել մի որևէ հարավսլավոնական թարգմանության միջոցով» («Отечественные записки», том XCVIII, вторая книжка. Спб. 1855, էջ 149—150), իսկ 1898 թվականին, 41 տարի անց, արտահայտում է ավելի որոշակի. «Որովհետև գոնված է բավական հին սերբական ձեռագիր, որը համընկնում է գրույցի հին ռուսական խմբագրությանը, ապա մյուս հուշարձանների օրինակը ստիպում է ենթադրելու, որ և այստեղ թարգմանությունը եղել է ոչ թե ռուսերեն, այլ հարավսլավոներեն» (История русской литературы, том II, Спб. 1893, էջ 40)։

31 Տե՛ս № 29 ծանոթագրությունը։

32 *Е. В. Барсов*, Слово о полку Игореве как художественный памятник Киевской дружиной Руси, том I, Москва, 1887, էջ 66։

33 *А. И. Соболевский*, О древних русских переводах в домонгольский период, Москва, 1897, էջ 7։

34 *П. В. Владимиров*, Древняя русская литература Киевского периода XI—XIII веков. Киев, 1901, էջ 101։

35 *Ал. Дм. Григорьев*, Повесть об Акире Премудром, Москва, 1913, էջ 498—526։ Ինչպես գիտենք, Գրիգորևը թարգմանության հայրենիքը մինչ այդ ընդունում էր Բուլղարիան. Այստեղ նա նա փոխում է իր կարծիքը։

36 *В. М. Истрин*, Очерк истории древнерусской литературы домосковского периода, Петроград, 1922, էջ 95—98։ Իսարինը նշելով, որ հին սլավոնական գրականության մեջ շատ քիչ էր հետաքրքրությունը աշխարհիկ թեմաների նկատմամբ, այդ փաստի հիման վրա ռուս գրականության համար վերապահություն է անում. «Բայց, այնուամենայնիվ, ռուս գրականությունը սլավոնական գրականությունների մեջ ունի առանձնահատուկ դրություն։ Այնքան որքան և այս հնագույն պատմվածքները երևան են եկել ոչ թե հարավային սլավոնների մոտ, որոնք վիպական գրականության նկատմամբ ոչ մի հետաքրքրություն չեն ցուցաբերել, այլ ռուսների մոտ։ Խիկարի գրույցը, հիշատ է, հայտնի է սերբական ընդօրինակություններով, բայց դրանք իրենց ծագմամբ գալիս են ռուս ձեռագրերից» (25)։

37 *И. М. Дурново*, К истории Повести об Акире, Москва, 1915.

մասնի միայն սերբական ձեռագիր»[38]:

Սակայն այդ պայմաններում դժվար է նաև ասել, որ թարգմանությունը նախ եղել է ռուսերեն:

Բրիչկի նշած Բելկովեցկյան ձեռագիրը մնում է անծանոթ, գոնե ռուսական բանասիրությանը, բայց 1935 թվականին Իորդան Իվանովը թաղվածարար հրատարակում է բուլղարական մի այլ օրինակ Լովչանական ժողովածուից[39]: Այդպիսով գոյություն ունի նաև բուլղարական բնագիր:

Ինչպես տեսնում ենք, չնայած բանասիրության մեծագույն ջանքերին, դեռ շատ խնդիրներ մնում են առկախ:

«Իմիջիայլոց,— գրում է Մինդալևը 1914 թվականին,— հենց խրատների կազմը, մինչև նրանց անցումը սլավոնա-ռուսական հողի վրա, դեռևս ոչ բավարար է որոշված, բոլոր մեզ հասած բնագրերի, ինչպես սլավոնական-ռուսական և սերբական, այնպես էլ արևելյան-ասորական, արաբական, հայկական խմբագրությունների մանրամասն հետազոտության բացակայության պատճառով: Դեռևս հունական բնագիրը մինչև այսօր չի հաջողված, չի հաջողված, նույնպես, որոշել սլավոնական խմբագրության նախօրինակի ծագումը, ո՞ր լեզվից է կատարվել թարգմանությունը և ո՞ր լեզվով, ուղղակի ռուսերե՞ն, թե որևէ հարավ-սլավոններեն, եղել է մե՞կ, թե՞ երկու թարգմանություն, առայժմ դեռևս չլուծված հարցեր են»[40]:

Դրանք չլուծված հարցեր են և այսօր:

* * *

Ինչպես է հայտնվել պրոլոգը ռուս հին գրականության մեջ,— մենք կփորձենք վերադառնալ այդ խնդրին: Դա հնարավոր է, որովհետև մեզ այժմ հայտնի են ավելի շատ աղբյուրներ:

Հուշն նախօրինակի հարցը ծագել է ինքնաբերաբար: Քանի որ գրական փոխառությունները հիմնականում Բյուզանդիայից են գալիս, ապա այդպես ընդունվեց նաև պրոլոգը: Բայց դրա համար հավաստող հիմքեր չկան:

Հունական բնագիրը մեզ ծանոթ է միայն Եղովպոսի անունով, որտեղ վերապատմվում են միևնույն դեպքերը: Պրոլոգը ներկայացնում է խիստ օտարացած խմբագրություն:

Սլավոնականը նրա հետ ոչ մի առնչություն չունի: Դա պարզ է հենց առաջին հայացքից, ուստի բանասիրության մեջ առաջ է քաշվել մի այլ, կորած խմբագրության վարկածը:

Այդ ենթադրության համար Պիպինին հիմք է ծառայում Թեոսթրիկտի լեգենդը, որտեղ հիշատակված են Սենեքերիմի և Խիկարի անունները. «Լեգենդը անկասկած հունական է,— գրում է Պիպինը,— որը պարզ է նրա լեզվից և բնույթից և հետևաբար ենթադրում է Սենեքերիմի հունարեն թարգմանություն,

---

[38] *М. Н. Сперанский*, К истории взаимоотношений русской и юго-славянских литератур, — Известия отделения русского языка и словесности Российской Академии Наук, том XXVI, 1921, էջ 195—196:

[39] *И. Иванов*, Старобългарски разкази, София, 1935, էջ 237—245 (*բնագիրը*), *95—102 (նոր բուլղարերեն թարգմանությունը)*:

[40] *П. Миндалев*, Моления Даниила Заточника и связанные с ним памятники, — Ученые записки Императорского Казанского Университета, год XXXI, четвертая книга, апрель, Казань, 1914, էջ 303.

որովհետև միայն այս հնդիանի հայտնի լինելու դեպքում հնարավոր էր առիթ տալ նման պարականոնի»[41]:

Ծանոթանանք ասկյան պարականոնի բնագրի հետ:

Սննեքերիմը նավով պատերազմ է գնում (поеде царь Синагрипъ на брань), նրան ուղեկցում է խիկարը (во то время бысть у него рядеца, именем Акиръ): Փոքորիկը ապտնում է նրանց: Խիկարի խորհրդով Սննեքերիմը դիմում է աստր Նիկոլային: Փոքորիկը դադարում է: Սննեքերիմն ուզում է սրբին տեսնել: Խիկարն ասում է, որ դա կարող է անել միայն մետրոպոլիտ Թեոսեբիկոսը: Մետրոպոլիտն համաձայնվում է: Նրանք պատրաստվում են սրբին ընդունելու, բայց նա ուշանում է, որովհետև փրկում էր ծովում խեղդվողներին, որոնք նվիրաբերում են մի հավ: Հետո երբ աստրը դա պատմում է Թեոսեբիկոսին, նա ասում է, որ այդ դատարկ բանի համար ինքը երեք բալլ անգամ չէր անի: Իրեն պատիժ աստր հայրերը որոշում են նրա հիշատակը տոնել միայն չորս տարին մեկ:

Տիմոնրավովը և նրա հետքերով Գրիգորևը ցույց են տալիս, որ լեգենդը սլավոնական ծագում ունի և ամենևին էլ քարդմանական չէ: Նախ՝ նրա բնագիրը չկա հույն մատենագրության մեջ և, ապա՝ հույները չունեն աստր Թեոսեբիկոսի տոնը:

Բայց եթե ընդունենք, որ քարդմանական է, դարձյալ մեզ հիմք չի տալիս ասելու, որ եղել է խիկարի հունական բնագիր:

Սննեքերիմի և խիկարի անունները լեգենդի մեջ պատահական են[42]: Բնագիրը ծագումնաբանական ավանդություն է: Նրա նպատակն է բացատրել, թե ինչու չորս տարին մեկ է տոնվում Թեոսեբիկոսը: Աստր Նիկոլայը խեղդվողներին փրկելու մասին կարող էր պատմել և այլ առիթով: Բովանդակության մեջ ոչինչ չէր փոխվի:

Որ դա այդպես է, ցույց է տալիս սրբի տոնը ուշ կատարելու աստղաբանական մի այլ, ժողովրդական տարբերակ, որ գրի է առել Աֆանասևը:

«Մի անգամ աշնանը գյուղացին ճանապարհով բեռ էր տանում, գալիս է Կասյան աստծո ծառան (угодник) և հրաժարվում նրան օգնելու, որ իր դրախտի դռնառները չփչանան: Օգնում է Նիկոլան: Երբ նրանք դրախտ են գալիս և աերն իմանում է, թե գործն ինչպես է եղել, նա ասում է Կասյանին: «Դու չօգնեցիր գյուղացուն, որա համար քեզ երեք տարին մեկ անգամ կտոնեն, իսկ քեզ, Նիկոլա աստծո ծառա, նրա համար, որ դու օգնեցիր գյուղացուն բեռը տանելու, տարին երկու անգամ տոն կլինի»[43]:

Այստեղ Կասյանը Թեոսեբիկոսն է, իսկ Սննեքերիմին և խիկարին փոխարինել է բեռ տանող գյուղացին:

Բնագրում այդ անունները կարող էին մտնել հետո, ռուսական հողի վրա: Դա խոսում է միայն ռուս իրականության մեջ ղրույցի շատ տարածված լինելու մասին:

---

41 *А. Пыпин*, Очерк..., էջ 84:

42 Ա. Վեսելովսկին գրում է. «Հին Թուխայում հանդիպում Մինոգրաֆի (Սինագրիպի-Սննհարիբի) և Ակիրի (Հեյկարի) անունները վերցված են հին արաբական հնդիանից, բայց առնչվել են լեգենդին բոլորովին պատահական» Малорусские народные предания и поверья. Свод Михаила Драгоманова. Изд. Юго-западного отдела И. Р. Г. О. Киев, 1876 (տե՛ս Древняя и новая Россия, год третий, т. I, 1877, էջ 208):

43 *А. Афанасьев*. Нар. русские легенды, № 11:

Այդպիսով լեգենդը չի կարող վկայել զրույցի առկայությունը հույն մատենագրության մեջ և այն չի եղել։

13-րդ դարում Մաքսիմոս Պլանուդեսը կազմում է Եզովպոսի կենսագրությունը, որը մեծ տարածում է ստանում բյուզանդական աշխարհում։ Եզովպոսը դիտվում է իբրև հույն իմաստուն, ձեռք բերելով ամենամեծ ժողովրդականություն։ Պլանուդեսի կազմած կենսագրության մեջ պատմվում են միևնույն բաները, ինչ Խիկարի մասին։ Թե որն է փոխառված, սոսկ բանասիրական հարց է, բայց զրույցը ճանաչվել է Եզովպոսի անունով։ Դա լիովին բավարարում է և հարկ չկար անհայտ իմաստունի մի նոր թարգմանություն։

Տիրական է դառնում միայն հեղինակություններից մեկը։ Եզովպոսի անունով կան երկու տարբերակներ, բայց նրանից հետո Խիկարը չի հիշվում հույների մոտ։

Իսկ հայ գրականության մեջ տեղի է ունեցել հակառակը. Խիկարն է կանխում Եզովպոսին։ Խիկարը հայերեն է թարգմանվել 5-րդ դարում, ասորերենից, բայց չնայած հայ և հույն մատենագրության ամենամեծ առնչություններին, Եզովպոսի թարգմանության փորձ չի եղել, թարգմանվել է, բայց ոչ կենսագրությունը, որ կարող էր հիշեցնել հայ իմաստունին, այլ միայն առակները («Առակք Ողիմպիանու»)։ Այդպես և Լոկմանը, որ արաբական աշխարհի խորհրդատուն է, հայ բանահյուսության մեջ ստանձնել է բժշկի դեր՝ Լոխման հեքիմ, իսկ արաբների մոտ նա կանգնած է Խիկարի և Եզովպոսի կողքին։

Արաբական գրականության մեջ պահպանվել է նաև Խիկարի զրույցը, բայց որպես Հազար ու մեկ գիշերների հեքիաթ։ Որոշ տարբերակներում գլխավոր հերոսը ոչ թե Խիկարն է՝ Հայկարը, այլ նրա կինը՝ Զեֆազնան։

Հին սլավոնների մոտ նույնպես մեծ ժողովրդականություն է վայելում Խիկարը, իբրև ազգային իմաստուն՝ Акир премудрый. Նա դարձել է «Հայտնիներից Հայտնի Հին Ուսաստանում» (Կարամզին)։ Զրույցի ազդեցությունը նկատվում է բազմաթիվ ժողովրդական և գրավոր ստեղծագործությունների վրա[44]։ «Ինչպես երևում է, Ակիրը ընդհանրացվել է մինչև քրիստոնեական խորհրդատուի աստիճան»,— նկատում է Վեսելովսկին[45]։

Այստեղ ևս Խիկարը կանխում է Եզովպոսին, և ռուս գրականության մեջ չենք գտնում Եզովպոսի հնագույն օրինակ։

Այդպես ուրեմն, երկու իմաստունների համատեղ գոյությունը միևնույն դերով, անհարիր է, ուստի և հույն մատենագրության մեջ ապարդյուն է Եզովպոսից դուրս որոնել զրույցի մի այլ խմբագրություն։

Սլավոնական բնագրի համար հունական սկզբնաղբյուրի որևէ վկայություն չկա։ Յագիչի գերմաներեն թարգմանության մեջ Ակիրոս անունը ինքնահնար է, որովհետև այդպիսի ձև չունեն նրա օգտագործած բնագրերը, իսկ պատահող որոշ հունաբանություններ ընդհանուր տեղի են, որ կարող էին Աստվածաշնչից

---

[44] Զրույցի ազդեցությունը բացահայտ նկատելի է „Чудо св. Николая", „Моления Даниила Заточника" — „Поучение от святых книг о чядех" հնագույն բնագրի վրա, ինչպես նաև հետագա շրջանի շատ ստեղծագործություններում։ Զրույցը ներթափանցել է նաև ռուս ժողովրդական բանահյուսության և խոսքի մեջ։ Բազմաթիվ առածներ, արտահայություններ և հանելուկներ ծագում են նրանից։

[45] *А. Веселовский*, M. Gaster, Ilchester lectures on greco-slavonic literature and its relation to the folk-lore of Europe during the Middle Ages, London, 1887. — Журнал Министерства Народного Просвещения, Шестое десятилетие, часть CCLVI, март, 1888, էջ 227։

գալ: Նույնիսկ հայ բնագրի մեջ, որ անառարկելիորեն ասորական թարգմանություն է, Հարրիսը և Տաշյանը հունարանություններ են նկատում:

Բայց որտեղ պետք է փնտրել սլավոնական բնագրի ակունքը: Եղիպտոսի և արաբական խմբագրությունները բացառվում են, որովհետև հետու են նրանից: Մնում է հայկականը և ասորականը:

Տեսնենք, թե ինչ հարաբերություն կա նրանց մեջ:

Մենք արդեն ցույց ենք տվել, որ հայ բնագիրը գալիս է անմիջապես ասորականից, սակայն մի բնագրից որ այժմ չկա, բայց մայրն է եղել Քեմբրիջի № 2020 ձեռագրի[46] (ըստ Հարրիսի՝ S_2, ըստ Նոի՝ C) բնական է, որ S_2-ով, ներկայացող ասորական խմբագրությունը պետք է նմանության և զուգահեռության երեք ուներ հայկական խմբագրության հետ:

Սլավոնական բնագիրն հիշեցնում է այս երկու խմբագրությունները:

Չրույցի բավական ուժեղ տեղայնացումը մթագնել է ուղղակի կապը, սակայն փորձենք քննել մի քանի բնորոշ ընթերցումներ:

Ասորական S_2 բնագիրն սկսվում է այսպես. «Ասորեստանի և Նինվեի թագավոր Սարհադոնի որդի Սենեքերիմի 20-րդ տարում»: Չնայած սխալ, բայց հիշատակում է Սարհադոնի անունը որպես Սենեքերիմի հայր (իրականում Սենեքերիմն է Սարհադոնի հայրը): Այդպես նաև մյուս տարբերակները, Բոնիոնի ձեռագրի հետագա գրչությամբ օրինակը և այլն:

Բեռլինի Չախաուի № 336 ձեռագիրը (ըստ Հարրիսի՝ S_3, ըստ Նոի՝ B) ունի էլիշա ընթերցում: Խիկարը որդեգրում է Նադանին Սենեքերիմի թագավորության օրերին, բայց երբ Նադանը գալիս է մորեղբորը, Եգիպտոսի փարավոնին նամակ է գրում Սարհադոնի անունից: Գրաֆենի օրինակի մեջ շատ ավելի որոշակի է. «Ասուրի և Նինվեի թագավորներ Սենեքերիմի և Սարհեդոմի օրոք կար Ախիկար անունով մի մարդ, մի իմաստուն հրեա, որը գրագիրն ու մորեղբայրն էր վերոհիշյալ թագավորների: Նա շարունակ անթերի ծառայում էր նրանց, երբ Ասուրի թագավոր Սենեքերիմը մահացավ 679 թվականին, նախքան Քրիստոսը»: Այս տողերն անշուշտ պատկանում են գրչին կամ խմբագրին, որը բավական լավատեղյակ է պատմությանը, բայց բնագիրն սկսվում է այսպես. «Ես՝ Ախիկարս, շատ եմ աշխատել, ծառայել եմ նաև Սենեքերիմ թագավորի որդուն՝ Սարհեդոմին: Այն ժամանակ դուշակները բոլոր աստղագետների հետ միասին ասացին ինձ. Դու մի արու զավակ ես ունենալու»: Բոնիոնի ձեռագրի հին գրչությամբ հատվածը համապատասխանում է Գրաֆենի օրինակին:

Սարհադոնի անունն հիշատակվում է նաև արաբական բնագրերում. «Սարհադոնի որդի Սենեքերիմ թագավորի օրերին կար մի իմաստուն»,— սկսվում է Ագնես Սմիթի հրատարակած բնագիրը: Սալհանիի մոտ երբ Խիկարն իր որդուն ներկայացնում է Սենեքերիմ թագավորին, նա ասում է գոհությամբ. «Աղոթում եմ աստծուն, Խիկար, որպեսզի նա պահպանի քո որդուն, որ կարողանա ծառայել այնպես, ինչպես դու ես ծառայել ինձ և իմ հորը՝ Սարհադոնին»:

Մեզ այստեղ չի հետաքրքրում, թե ինչպես է այդ սխալը տիրական դարձել երկու խմբագրությունների մեջ: Կարծում ենք, նույնիսկ, որ S_3-ը, Գրաֆենի և Բոնիոնի օրինակները տալիս են հետագա ուղղված ընթերցումներ: Նկատենք սակայն, որ ասորական և արաբական խմբագրությունների բոլոր տարբերակները, ճիշտ թե սխալ, պահպանել են Սարհադոնի անունը, այն կա, նույնիսկ,

46 «Բանբեր Մատենադարանի», № 5, Երևան, 1960, էջ 77—92:

զրույցի էլենֆանտինյան պապիրուսներում (մեր Ք.վ. առաջ 5-րդ դար), ուր նրանց տեղերը դեռ չեն շփոթվել և Տովբիտի գրքում:

Չնայած Սարհադոնը զրույցի հետագա խմբագրություններում որևէ դեր չունի, բայց շարունակում է հիշատակվել Սեննեքերիմի անվան հետ: Դա ընդունված ձև է Արևելքում, ապա՝ գրիչները, որոնք մեծ մասամբ լավ ծանոթ էին Սուրբ գրքին, Սարհադոնի անունը չէին սղի հենց միայն որպեսզի զրույցը կապվեր Սուրբ գրքի հետ: Աստվածաշնչի յուրաքանչյուր առնչում կամ հարաստում հավատարի և արժեքավոր էր դարձնում երկը: Հաճախ, նույնիսկ, ինքնահնար կապեր էին ստեղծվում Աստվածաշնչի անունների հետ:

Հայկական խմբագրության մեջ սակայն, որը դալիս է ասորիներից, Սարհադոնի անվան ոչ մի հիշատակություն չկա: «Յամս Սեննեքերիմայ, արքայի Ասորեստանի ևս՝ Խիկար, դպրապետ էի նմա»,— Այսպես է սկսվում բնագիրը: Ինչպես տեսանք այդ անունը աներկբա եղել է նախօրինակի մեջ: Հետագայում գրիչները տեղայնացման միտումով, որպեսզի զրույցը կապվի հայոց թագավոր Սեննեքերիմ Արծրունու հետ, սղել են կամ բաց թողել: Նույն առնմանությամբ բնագրում հիշատակվող Արծվյաց դաշտը դարձել է Արծրունյաց դաշտ[47]:

Սարհադոնի անունը չկա նաև Սլավոնական խմբագրության մեջ[48]: Դա հայ և սլավոնական բնագրերի անընդմիջարկված կապ է արտահայտում: Եթե հայ բնագիրը սղել է տեղայնացման միտումով, ապա սլավոնականը չուներ այդպիսի մտահոգություն: Ընդհակառակը, սլավոնական թարգմանիչն անաղարտ կպահեր զրույցի պատմականության համար: Սարհադոնի անունը ուղղակի չի եղել սլավոններենի նախօրինակում: Դա թույլ է տալիս ենթադրելու, որ այդ նախօրինակը հայ բնագիրն է:

Շարունակենք: Բնագրերի փոխադարձ կապի համար բնորոշ կովաններ կարելի է տեսնել զրույցի խրատականքում, խրատների դասակարգման և բնույթի մեջ, ուր կարող են պահպանված լինել նախնական դծեր, իսկ պատմո-

---

47 Պ. Մուրադյանը լայնորեն օգտագործելով մեր մի հոդվածը, այս կետում մեզ հետ համաձայն չէ, պնդելով, որ Սարհադոն անունը չի եղել հայերենի ասորական օրինակում (տե՛ս «Армяно-грузинские литературные взаимоотношения в XVIII веке». Ереван, 1966, էջ 74):

Հայերեն բնագրում Սարհադոնի բացակայությունը չի պայմանավորված նրա ասորական նախօրինակով: Արամեական պապիրուսները, Տովբիտի գիրքը, ասորական ու արաբական բոլոր բնագրերը հիշատակում են այդ անունը: Հայկական և ասորական s_2 բնագրերը գալիս են մեկ նախօրինակից, իսկ s_2-ը նույնպես պահպանել է անունը: Նշանակում է այն եղել է նրանց նախօրինակում:

Մեր հոդվածում պարզապես ասված է, որ Սարհադոնի անունը կարող էր անտեսվել գրիչների կողմից տեղայնացման միտումով (տե՛ս «Բանբեր Մատենադարանի», № 5, էջ 84): Մուրադյանը այնպես է ներկայացնում, որ իբր մեր կարծիքով թարգմանիչն այդ անունը բաց է թողել որպես մանրուք:

48 Այնտեղ, ուր Խիկարը Նաբուամակին հիշեցնում է, որ ինքը նրան փրկել է, երբ Սեննեքերիմի հայրը մահվան է դատապարտել, Իլուդովյան ձեռագրում հիշվում է նրա անունը՝ Авдан: Գրիգորը այդ առիթով գրում է. «Ըստ երևույթին այն չի կարելի արտածել ասորա-արաբական Սարհադոնից և միայն X (Իլուդովյան) ձեռագրի լրացումն է» (Повесть... էջ 401), իսկ Դուրնովոն գրում է. X ձեռագրում, որտեղ այն պահպանվել է, աղավաղված է, և անհայտ է այդ ձեռագրի Авдан անունը ծագում է Ասորական Սարհադոնից թե այլ անունից» (К истории... էջ 72):

Սանհադոնից չի կարող ծագել, որովհետև նմանության ոչ մի հետք չունի: Авдан, համաձայն կորշի՝ չուվաշներեն նշանակում է աքաղաղ: Եթե նման մի անուն պատահաբար չի բնկել բնագրի մեջ, ապա մեր կարծիքով դա հայկական բնագրում հիշված նաթանի եղբոր անունն է՝ Բաւգան (տե՛ս Bod ձեռագրի բնթերցումը: Բ-ն սղվել է մյուս անունների առնմանությամբ (Աբիկամ, Ամբուգիլ, Ակիր) և տառցվել Աւգան:

զական մասի մեջ հայկական և ասորական բնագրերին փոխադարձ նմանությունները և հեռացումները ծածկում են իրար և ոչինչ չեն կարող հուշել։

Բերենք թվային արտահայտությամբ սլավոնական և հայ խրատականքի դուգահեռ շարքերը։

Ցանկի մեջ արտահայտված են հայկական վեց տարբերակ՝ A, B, C, D, E, G *որոնցից միայն* C *և* E *տարբերակների* (C_4—*բնագիր հրատարակված Կոնիբերի կողմից 1898 թվականին* Fb —*«Պղնձե քաղաքի պատմությանն» ուղեկցող երկրորդ բնագրախումբը) միավորներն են ծանոթ նախորդ բանասերներին, ուստի տալիս ենք նաև նրանց շարքերը։*

A *և* G *տարբերակների մեջ մտնում են 14-րդ դարի ձեռագրեր (* A_1 = *ձեռագիր № 2961, 1321 թ. և* G = *ձեռագիր № 5599, 1347 թ.)։*

O	A	B	C	D	E	G	Fb	C_4
1	1a	1	1a	1		1		1a
2a	1c		1c			2		1c
2b	1b	2	1b	2	2	3	2	1b
3	2	3	2	3	2b	4	24	2
4	3		4	26	111	5		3
5	4	4/5		6/7	51	6		
6a	5	6	3	8	3	7	3	4
6b	7a		5a	16a				5a
6c			5b					5b
7	8	8	7	29	12	43	11	8
8	9	9	8	30	78		58	9
9	10	10	9a	32	58	51		10a
10a		11	9b	19		18		10b
10b	11a		9c	33a				10c
10c	11b		9d	33b				10d
11	12		11	34/139				11
12								
13a	14		12	36				
13b	15			38				
14	16	12		39				
15	17	13	10	40	112		92	12
16a	18	14	13	41				14
16b	18	14	13	41				14
16c	18	15	13	41				14
16d	18	15	13	41				14
17	19	16		42				
18	20	17		43	80		81	
19	21		14b					16
20								
21a	22	18		45				17a

O	A	B	C	D	E	G	Fb	C_4
21b	23	19		46		77		17b
22	24	20	64a	47				18a/78a
23	24	20	64b	47		99		18b/78b
24	25	21	41	48		102		48a
25	26	22	15	50				19
26	27	23	16/17	52				20
27a	28a	24		53				22
27b	28a	24		53				22
27c	28b	25a		54				22
27d	28a	24		53				22
27e	28c		18	55		11		23a
28	28d	25b	18	57		12		23b
29					4		4	
30a					5			
30b					5			
31	86	77	19	148	57	13		24
32	87	78	20			14		25
33a	88a	79a	21c	149a	59a	16		26c
33b	88b	79b	22	149b	59b			27
33c	55	48	23	21a/49	30	19/56	27	28
34	57		25	119	31	21	28	30
35	109	100		186		20		29
36	58	49	26	120		22		31
37	59	50	27	121	33	23	30	32
38	60	51	43	123	34	24/25	31	
39	30	27	29/30	59		26		42
40a	30	27	29/30	59		26		34
40b	30	27	29/30	59		26		35
41	31	28	31	60	7	28	6	36b
42	32	29	32a	62				37a
43	33		32b	63	8	29	7	37b

O	A	B	C	D	E	G	Fb	C_4
44a	34a	30a	33a	61a		30a	43	38a
44b	34b	30b	33b	61b		30b		38c
44c	34c	30c	33c	61c		30c		38c
45	35		34		9	31	8	39
46	36					33		6a
47	37a	31a	21a			17a		26a
48	38	32	36c	168		34		41
49	46			84		39		44
50	47			85/86				
51	50		42	107	11	42	10	47
52	51			108		44		64
53a	52			109		53		65a
53b	52			109		53		65b
54	53	46	55	112	28	54b	26	66
55	54	47	56	114	29	55		67
56	84			145		47		
57	85a	75a	57a	146		48		69a
58	85b	75b	57b	147	56	49		69bc
59								69de
60	62	53	58	126	37	52	34	70
61	63	54/55	59a	110	38	58	35	71
62	65	56b	59b/14a	111	40	54a	37	15
63								
64	42a			65		61		73a
65	42e	36		74		69	14	51
66					16	64	13	
67	41			64	14	36	9	73b
68	42q	38	44	77	10	60	59	73c
69	42F	37	45	68	79	63	12	50
70	67	58		129	13	67	38	
71a	42d			73	42	68		52a
71b	42h	39		69d	15	65b	14	52c
71c	42c	35		72		70		52b
71d								
72a	69	60		131	44	10	41	
72b							73	
73								54
74a	43	41		79		71		
74b	70	61	60	133	45	32	40	74
75a	72	63/64	47	134/5	47		41	55
76	75	67	49	216/13b	49			57
77	76	68	61	139	50	74	43	
78	77	69		140				

O	A	B	C	D	E	G	Fb	C_4
79								
80	79	71	62	143	53	73		76
81	101	91	75	167		96		
82	80	71	63	142		75		77
83								
84	81	72			54	76		
85						78		
86			50				75	58
87	89	80	51	150	60		46	59
88	90	81	65	164	61	79		79
89	44	44	52	81	27b			60
90								
91a	91	82		165	62		47	
91b								61
92a	93	84	66b	157	63	80	48	80b
92b							18	80c
93								
94	94	85	68	159	64	72	49	83
95								
96			66a			81		80a
97					23	103	21	
98					18	83	16	81b
99		159			105		87	
100								
101			67	106	19	84	17	82
102					6	15	5	
103	96	86		166	65	85	50	84
104a								
104b								
105	30	27	29/30	59		26		
106	97	87	70	162		86		85
107								
108	101	91	75	167		96		90
109				188	22	101	20	
110		117			84		62	

Իսկ սլավոնական խմբագրությունը ներկայացված է լավագույն համարվող Մոսկվայի Համալսարանին կից Ռուսաստանի պատմական և հնագիտական ընկերության № 189 ձեռագրով (O), որը հրատարակել է Ա. Դ. Գրիգորևը Մոսկվայի պատմական թանգարանի № 427 (պատկանել է Ի. Ա. Վախրամեևին) և Մոսկվայի Խլուդովյան գրադարանի № 246 ձեռագրերի համեմատությամբ:

Այժմ բերենք սլավոնական և ասորի խրատականքի զուգահեռ շարքերը:

O	S_2	S_3
1	1	1
2a	2	2
2b	3	3
3	4	7
4	6	
5	7	11ad
6a	8	
6b	10	
6c	10	17b
7		
8	12	18
9	13	21
10a	14	22
10b		17a
10c	15	23b
11	17(k)	
12	16	24
13a	17	25a
13b	18	25bc
14	19	27
15	20	28
16a	21a	31a
16b	21b	31b
16c	21c	
16d	21d	
17	22	
18	23b	
19		

O	S_2	S_3
20		
21a		
21b	24	35
22		
23	25	36b
24		
25	26	37
26	27	38
27a	28a	39a
27b	28b	39b
27c	28c	39c
27d	28d	39d
27e	28e	
28	30a	40
29		
30a	30b	41a
30b	31	41b
31		
32		
33a		
33b		
33c		51b
34		
35		
36		
37		
38		
39		

O	S_2	S_3
40a		
40b		
41		
42		
43		
44a	66ab	
44b	66c	
44c		
45	5	
46		
47	74a	
48	32	42
49	36	46
50	37a	47a
51	38	48
52	39	49
53a	40a	50a
53b	40b	50b
54	41	52
55	42	53
56		
57		55
58	44	56
59	45	57
60		60
61		
62	46	58
63		

O	S_2	S_3
64		
65	47	61
66		
67		
68	48a	63a
69	48b	$^{63b}/_{64}$
70	49a	65
71a	50a	67a
71b	50b	67b
71c	50d	67c
71d	50e	68a
72a		
72b		
73		
74a		
74b		
75	52	70
76	54	72ab
77		
78	55	
79		
80		
81		
82	56	
83		
84		
85	57	
86		

O	S_2	S_3
87		
88		
89	58	77
90		
91a	59	78
91b		
92a	60	72
92b		
93		
94	61	79
95		
96	63	81
97		
98		
99	65	83
100		
101		
102		
103		
104a		
104b		
105		
106	34	44
107		
108		
109		
110	73	

Ասորական խմբագրությունը ներկայացվում է S_2 և S_3 բնագրերով: S_2-ը Հարբինի հրատարակած Քեմբրիջի №2020 ձեռագիրն է (ըստ Նոի՝ C), որի հետ հայկական խմբագրությունը գալիս է միևնույն աղբյուրից, իսկ S_3-ը Թեոդինի Զախաուի № 336 ձեռագիրն է (ըստ Նոի՝ B), որը նոն համարում է լավագույնը):

Համեմատության համար այստեղ ևս հիմք ենք վերցրել սլավոնական O բնագիրը:

Տեսնենք թե ինչ են հուշում աղյուսակները.

1. Հայերենում չունեն իրենց զուգահեռները սլավոներենի 13 խրատներ, իսկ ասորերենում S_2 և S_3-ը միասին՝ 61, (S_2-ը՝ 65, S_3-ը՝ 77)։

Հայերենին չհամընկնող խրատներից ինը (63, 79, 83, 90, 93, 95, 104a, 104b, 107) հատուկ են միայն սլավոներենին։ Բացակայում են և՛ ասորերեն և՛ արաբերեն խմբագրություններից, ուրիմն կարող են ոչ թե բնագրային լինել, այլ մուծված սլավոնական հողի վրա։ Հետաքրքիր է, որ բացի № 63 և 90 խրատներից (63—Пр 18_1, 90—Сир $40_{29, 30}$, Мен.) դրանք չեն հանդիպում և այլ աղբյուրներում։ Մյուս չորս խրատները առկա են ասորերենի մեջ, բայց իրենց կրկնօրինակներն ունեն նաև արաբերենում, ուրիմն նախնական են և Հայերենից կարող էին սղվել հետագայում։

Ինչպես տեսնում ենք հայկական խրատաշարը գրեթե լրիվ ծածկում է սլավոներենին։

2. Ասորականում բացակա խրատներից 42-ը (7, 19, 21a, 22, 24, 31, 32, 33a, 33b, 34, 35, 36, 37, 38, 39, 40a, 40b, 41, 42, 43, 44c, 56, 61, 64, 66, 67, 72a, 72b, 73, 74a, 80, 81, 84, 86, 87, 88, 92b, 97, 102, 103, 108, 109) գտնում ենք միայն Հայերենի մեջ։ Չունի նաև արաբերենը։ Դա շատ կարևոր է։ Եթե սլավոնական խրատաշարի բավական մեծ թվով միավորներ ունի միայն հայկական խմբագրությունը, ապա, թերևս, հայերենից է գալիս, այլապես կլիներ նաև մյուս խմբագրություններում։ Ուրիմն, այն ինչով ասորերենից և արաբերենից տարբերակվել է հայերենը, արտացոլված է սլավոներենի մեջ։ Դա բացառում է նաև սլավոնական և հայկական բնագրերի համար մեկ սկզբնաղբյուր ենթադրելու դաղափարը։

Դիտենք, որ խրատների մեծ մասն ունի կանոնավոր հերթաշար՝ 31—44, 72—74, 86—88 և պատահական չեն զուգորդվում հայերենի հետ։

Շարքում չկա և ոչ մի խրատ, որ միտվեր միայն ասորական խմբագրությանը։

Բայց շարունակենք։ Իսկ ինչ է թելադրում խրատների բնույթը։

Ասորական S_1, S_2, Զախաուի № 162 և արաբական Սալհանիի ու Սմիթի տարբերակների առաջին խրատն այսպես է. «Որդեակ, եթե մի խոսք լսես, թող այն մեռնի քո սրտում և մի հայտնիր ոչ ոքի (մարդու)» S_3-ը, Բոնիոնի և Գրաֆենի ձեռագրերը՝ «Որդեակ, եթե դու լսում ես իմ խոսքերը, փակիր նրանք քո սրտում և մի հայտնիր ուրիշի», իսկ եթովպական խմբագրությունը՝ «Որդեակ, եթե դու լսես որևէ խոսակցություն, պահիր այն քո սրտում և մի ասա հարևաններին»։

Հայկական խմբագրությունը սակայն տալիս է բոլորովին այլ ընթերցում. «Որդեակ, եթէ լսես բան ինչ ի դրան արքունի, մեռո զնա և թագո ի սրտի քում, դի մի ումեք ասիցես» (A)։

Այստեղ խիկարը իր քեռորդի Նաթանին խրատում է թագավորի դռանը որևէ բան լսելիս ոչինչ չհայտնել, իսկ ասորական և մյուս խմբագրություններում ոչ թե թագավորի դռանը, այլ առհասարակ։

Հայերենի G տարբերակն ավելի որոշակի է. «Որդեակ, եթէ լսես բան ինչ ի դրան արքայի՝ մեռո և թագո զնա ի սրտի քում և մի մոռասցիս և կամ ի վեր հանիցես։ Գուցէ հանդիպեսցէ ի թագաւորէն քեզ տանջանք և բանտ»։

Բոլոր խմբագրություններից հայերենին համաձայն է միայն սլավոներենը. Սլավոնական առաջին խմբագրության ձեռագրերում կարդում ենք. «Аще что

слышиши от царя или видиши в дому его да сгниет в сердце твоем и не известиши его человеком...“

Պարզ է որ այս ընթերցվածն է հին և ճիշտ, որովհետև խիկարը նաթանին դաստիարակում է իբրև պալատական արքայադպիր։

Բայց դիմենք պատժիչ խրատներին, որոնք ավելի առարկայական են, ուսուի և կարող են պահպանել բիչ խաթարված կամ հեռացած տարրեր։ Դրանք պարզապես առակներ են, իսկ առակի սյուժեն հաստատուն է։ Քանի որ այստեղ գործ ունենք ավելի կայուն ձևերի հետ, հնարավոր է գնահատել փոփոխումը կամ տարբերակումը։ Փոխվում են ընդհանրապես «գործող անձինք», որովհետև ամեն մի ժողովուրդ առակի մեջ դնր է տալիս իր պատկերացումով ավելի հարմար «հերոսի»։

Կազմենք չորս խմբագրություններում առակների «գործող անձանց» համեմատական աղյուսակ.

№ №	Սլավոններեն (O)	Հայերեն (A—G)	Ասորերեն (S_2)	Արաբերեն (Sm)
3	Օձ	կարիճ	կարիճ	կարիճ
4	այծ	այծ	վիթ (գազել)	վիթ (գազել)
5	Նետ	Նետ	քար	քար
7	խոզ-ձի	խոզ-ձի	խոզ-ձի	շուն կամ խոզ-ձի
9	գայլ-էշ	գայլ-էշ	առյուծ-էշ	առյուծ-էշ
10	Որոգայթ-նատյա-ատակ	որոգայթ-ճնճղուկ	որոգայթ-ճնճղուկ	որոգայթ-ճնճղուկ
11	Եղջերու	—	—	—
14	շուն-բրուտ	շուն-բրուտ	շուն-բրուտ	շուն-բրուտ
15	խոզ-նախատրներ	խոզ-նախատրներ	խոզ	խոզ-նախատրներ
16	Ծառ-կացին	ծառ-կացին	ծառ-փայտահատ	ծառ-փայտահատ
17	ձագ ծիծառն-ափիս	ձագ ծիծառն-ափիս	ձագ ծիծառն-կառուս	—
18	ափիս	ափիս	կառուս	կառուս
19	ոչխար	ոչխար	այծ	—
20	բուռակ-մայր ձի	—	բուռակ-մայր ձի	—
26	խլուրդ-ատծիվ	խլուրդ-ատծիվ	խլուրդ-ատծիվ	—
27	Թղկի-առը	արմավենի-առը	արմավենի-առը	անպտուղ ծառ-առը
28	գայլ-գիհ	գայլ-գիհ	գայլ-գիհ	գայլ-գիհ
29	գայլի ճուտ-գառ, ուլ	գայլի ճուտ-այծ բոյծ, գառն	գայլ-ուռուցիչ, այծ, ոչխար	գայլ-գառ ուլ
31	Էշի գլուխ	—	էշի գլուխ	էշի գլուխ

Ինչ է հուշում աղյուսակը։

Երեք առակների մեջ (4, 10, 27) փոփոխությունը կատարվել է հետագայում. օձ-կարիճ, Թղկի-արմավենի, նապաստակ-ճնճղուկ։ Դրանք ունեն տեղայնացման բնույթ։ Օձը և Թղկին շատ ավելի ծանոթ են ռուս մարդուն, քան կարիճը և արմավենին, և հաճախ Թակարդ է դրվում նապաստակ և ոչ Թե ճնճղուկ որսալու համար։ Որ փոփոխությունը կատարվել է հետագայում, տեղական հողի վրա, ցույց է տալիս նրանց անդուգահեռ բնույթը։ Առաջին և երկրորդ դեպքերում համերաշխ են հայկական, ասորական և արաբական խմբագրությունները, իսկ երրորդ դեպքում՝ հայկականը և ասորականը, արաբականը՝ անպտուղ ծառ։ Սլավոնականը մնում է մենակ։ Մի առակ (11) հետամուտ է։ Բնորոշ է, որ այն

ստեղծվել է ռուսական աշխարհին հարազատ կենդանու՝ եղջերվի մասին և չունի զուգահեռ այլ խմբագրություններում: № 20 և № 31 առակները չունի հայերենը, որոնք, անշուշտ, եղել են նախնականի մեջ, բայց հետագայում սղվել: Նկատենք, որ առակներից մեկը բավական ուժեղ տարբերակվում է ասորականից, այսպես.

Սլավոնական	Ասորական
„Ослу голову возложили на злате блюдо, и свалися долеб в попел (Х. свалилася долой в пепел) и рекли еси тако: своеи голове не смыслиши добра, оже из чести валиши в по...“ (Х. попел).	Էշի գլուխը դրին սեղանի մոտ և դունչը մտցրին ափսեի մեջ: Բայց էշը շուռ եկավ և ընկավ գետին: Եվ մարդիկ ասացին. Նա, ինչպես երևում է, վիրավորվում է, որ իրեն անհրաժեշտ հարգանք չեն մատուցում:

Դա ինքնին թելադրում է, որ նախօրինակը ասորերենը չի եղել:

Այդ առակի հետքերը սակայն պահպանվել են հայ առածանիում, իր տարբերակներով. «Խոզի գլուխը սեղանին են դրե, գլորեր աղբն է ընկե», «Կոզնին (ոզնին) դրին խալիչին, գլորեց ընկավ գետին», «Խոզի գլուխը խալիչի վրա չի կենալ»[49]:

Ինչպես տեսնում ենք՝ նույնն է: Կրճատված է միայն երկրորդ՝ բարոյական մասը, հենց որի համար այն հայերենում դարձել է առած:

Մյուս խրատն այսպես է. «Որդեակ, ես տեսել եմ քուռակ, որ սպանել է իր մորը»: Դա ոչ խրատ է ոչ առակ, այլ, պարզապես, արտահայտություն, որ այժմ չունի և հեշտությամբ կարող էր սղվել:

Մյուս առակները եթե շեղվում են, շեղվում են միայն հայերենի հետ: Անջատենք աղյուսակից այդ օրինակները.

սլավոնական	հայկական	ասորական	արաբական
այծ	այծ	վիթ	վիթ
նետ	նետ	քար	քար
գայլ	գայլ	առյուծ	առյուծ
կացին	կացին	վայրահաստ	վայրահաստ
աքիս	աքիս	կատու	—
աքիս	աքիս	կատու	կատու
ոչխար	ոչխար	այծ	—

Հակառակ երևույթը չկա: Ոչ մի դեպքում սլավոնականը չի շեղվում հայերենից:

Երրորդ առակում, որտեղ գործող անձը գայլն է, ռուսական տարբերակի О և Х ձեռագրերը տալիս են лютый зверь ընթերցումը՝ (Подобен еси сыну оному лютому звери (Х. зверю), ինչպես նաև՝ սերբական С-ն, իսկ սերբական Ч և Ф ձեռագրերը՝ вълкъ (Сыне был ми еси яко вълкъ): Գայլ է նաև Յագիչի գերմաներեն թարգմանության մեջ և նրա համեմատած բնագրում (вукъ), եթե դրանք նույնը չեն:

49 Ա. Տ. Դանիելյան, Առածանի, Երևան, 1960, էջ 46:

Այսպես, եթե բնագիրը սերբական դրականությանն է անցել ուսերենից, ապա, անշուշտ, կպահպանվեր օրինակի ձևը՝ лютый зверь, *բայց երբ չի պահպանվել, պետք է թարգմանվեր համանիշով և այդ համանիշը* вълкъ-ն է, *իսկ եթե բնիկ ստակը, ապա ռուսական բնագիրը* вълкъ *թարգմանել է* лютый зверь:

Ամեն դեպքում թարգմանական նախօրինակի մեջ գործող անձը գայլն է:

Այժմ բերենք մի քանի խրատներ չորս խմբագրություններով.

Հայկական	Սլավոնական	Ասորական	Արաբական
Որդեակ, եղեր որպէս գայն, որ ձգեր նետ յերկինս և ոչ կարաց հասուցանել ի վեր, բայց զանօրէնութիւն չահեցաւ: Եւ զրկաւ նետն ի գլուխ իւր:	Был ми еси сыну, аки человек стреливый ко небеси. и стрела такъ небеси не долетела, и от бога собе грех взела.	*Որդեակ, դու եղիր ամենևին այն մարդուն, որ քար է նետում երկինք: Քարը երկինք չհասավ, բայց մարդուն արդիւնք իր ծառայության համաձայն:*	*Որդեակ իմ, դու ինձ համար եղար այն մարդու նման, որ վիրցրեց քարը և նետանց երկինք, որպեսզի խփի իր սիրտը, բայց քարը չկպավ և չհասավ երկինք, բայց միայն հանգստեցի և մեղքի պատճառ եղավ:*
Որդեակ, եղեր ինձ որպէս գայլն, որ պատահեաց իշոյն և ասէ. Ողջոյն քեզ, յոժանակ: Ասէ էշն. Այդ ողջոյնդ տեսանն իմոյ, որ արձակեաց զպարանն յոտից իմոց և ետ տեսանել զդէմս քո չար և արենաթաբս:	Подобен еси, сыну, оному лютому звери (волку), иж устрел осла и рече ему тако: „По здорову ли еси пришел?“ и рече ему осел: „Тому буде мое здравие, иже мою ногу не твердо связал, да бых я тебе не узрел“.	*Որդեակ, դու եղար ինձ համար այն առյուծը, որ առավոտյան հանդիպեց ավանակին և ասաց նրան. Ողջույն քեզ իմ, բայց ամենևին ասաց նրան. Այդ ողջույնը, որ ամեցիր ինձ, քող բաժին լինի նրան, ով կապեց ինձ անցյալ գիշեր և ամուր չարեց իմ կապը, այլապես ես չէի տեսնի քո դեմքը:*	*Օ, որդեակ իմ, դու ինձ համար եղար այն առյուծի նման, որ ընկերացավ էշին: Որոշ ժամանակ էշը քայլեց առյուծի հետ: Բայց մի օր սատկեց առյուծը էշի վրա և կերավ նրան:*
Որդեակ, եղեր ինձ որպես խոյն, որ երթայր ի բաղանիսն: Յաչեմամ եաես գնախաւարան, անկեալ ի տիղմն, քաւելոյ առնոյր ի ձկրդ լուացեալ և ես՝ ի չիմս:	Был ми еси, сыну, яко свиница: пошла с бояронями в баню, и як (егда) доиде коду и леже в нем и рече боярем: „Вы идите в баню мытся, а я хочу зде мытися“.	*Որդեակ, դու նմանվեցիր խոզին, որ բաղնիք էր գնում և տեսավ կեղտաջրով փոս: Իրեն նետեց այնտեղ և լողացավ նրա մեջ և կանչեց իր ընկերներին. եկեք լողանանք:*	*Օ որդեակ իմ, դու ինձ համար եղար այն խոզի նման, որը նախաբաղնիքի հետ բաղնիք գնաց, իսկ հետո, դուրս գալով բաղնիքից, տեսավ կեղտոտ տեղ և սկսեց թավալվել նրա մեջ:*

Պարզ համեմատությունից նկատելի է, որ միայն «գործող անձինք» չէ, որ համանուն են, այլ այժմեի և արտահայտչական մանրամասներով ևս սլավոններինը միտվում է հայերենին:

Մեր օրինակները թույլ չեն տալիս ենթադրելու սլավոնների և հայերենի համար մեկ ընդհանուր աղբյուր, քանի որ նրանք բնորոշ են միայն հայերենին: Հայկական և ասորական S_2-ը գալիս են նույն աղբյուրից: Դրանով պետք է բացատրել նրանց ընդհանրությունները, բայց, ինչպես տեսանք, սլավոններինը բոլոր այն դեպքերում, երբ մոտ է հայերենին, հեռանում է S_2-ից: Ամենից

ավելի բնորոշ են առակների «գործող անձինք»: Եթե հայերենը և սլավոներենը իրարից անկախ ծագեին մեկ նախամորից, ապա սլավոներենում «գործող անձինք» այդպես մաքուր ձևով չէին զուգահեռ գնա հայերենին և տարբերակվի S_2-ից:

Փոփոխությունները նախ կատարվել են հայերենում, ապա անցել սլավոներենին:

Խիկարի բնագիրը սլավոներեն է թարգմանվել 11—13-րդ դարերում: Դա մի շրջան է, երբ արդեն գոյություն ուներ լայն շփում հայերի և սլավոնական կամ սլավոնախոս ժողովուրդների միջև:

Դեռ շատ վաղուց հայերը Բուլղարիայում ունեցել են բնակեցման մեծ շրջաններ[50]:

Խիկարի զրույցը կարող էին իրենց հետ տանել Պավլիկյան հայերը, և այդ փոխանցման օրինակը բացառիկ չէ: Հայտնի է, որ Դիգենիսի մասին Բյուզանդական նշանավոր վեպի մեջ խիստ նկատելի է հայկական տարրը և այն, ինչպես նշում է հայ բյուզանդագիտության հայրը՝ Նիկողայոս Ադոնցը, նույնպես փոխանցվել է սլավոններին բուլղարահայերի կողմից[51]:

Թարգմանությունը հնարավոր էր նաև Կիևյան Ռուսիայում: Կիևյան Ռուսիայի հետ հայերի հարաբերության մասին կան հնագույն վկայություններ:

Դեռ վաղուց Կիևում բավական թվով հայեր էին ապրում: Անհասկանալի է, ինչ ճանապարհով Ս. Սոֆիայում Յարոսլավ իմաստունի սարկոֆագի վրա փորագրված են հայկական տառեր, որոնք հուշում են 11—12-րդ դար: Ագապիտի վարքի մեջ հիշվում է. „Врач некто родом и верою армянин, хитр зело в врачевании якоже прежде того не быти такому“ և այլն[52]:

Այդպիսով լիովին հնարավոր էր գրական փոխանցումը, ինչ ճանապարհով ուղում է լինի. բուլղարների միջոցով, թե, ուղղակի, Կիևյան Ռուսիայում:

Երբ արդեն փորձեցինք ապացուցել, որ սլավոնական խմբագրությունը գալիս է հայկական սկզբնաղբյուրից, երկրորդաբար անցնենք նաև անունների խնդրին:

Սլավոնական խմբագրության մեջ անունները հնչում են բավականաչափ տարբեր և կարծես չեն ենթարկվում սլավոներենին հատուկ թարգմանական տառադարձության օրենքներին: Իրենց հնչմամբ անունները մերթ հուշում են հունական սկզբնաղբյուր, մերթ հետանում և դժվար է հունարենով բացատրել, նույնքան և դժվար է արտածել սեմական սկզբնաղբյուրից:

Եվ այդպես, զրույցի ձևերը մնում են միայնակ: Նրանք չեն կրկնվում, նույնիսկ սլավոնական մատենագրության մեջ: Սինոդրիպ ունի միայն Թեոստիրիկտի լիգենդը և դա ցույց է տալիս, որ անունը անցել է Ակիրի զրույցից:

---

[50] *Йор. Иванов*, Богомилски книги и легенди, София, 1925, էջ 18—19 և այլն: Բուլղարիայի հայ գաղութի մասին հայանցիկ ակնարկ և մատենագիտական տեղեկություններ տե՛ս Ա. Գ. Աբրահամյան. «Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության», դիրք Ա, Երևան, 1964, էջ 305—327:

[51] *Nicolas Adontz*, Etudes Armeno-Buzantines, Lisbonne, 1965, էջ 36: Ադոնցը գրում է. «Հենց նույն տարագիր հայերն էին, որ Դիգենիսի պոեմը փոխանցեցին Կիպրոս և Բալկանյան երկրներ»:

[52] Переводы и статьи Н. О. Эмина по духовной армянской литературе, Москва, 1897, էջ 154: Կիևի հայ գաղութի մասին տե՛ս Л. С. Хачикян: Новые материалы о древней армянской колонии Киева. — Исторические связи и дружба украинского и армянского народов (сборник материалов науч. сессии), Ереван, 1961, էջ 110—119, Киевопечорский патерик по древним рукописем, Киев, 1870, էջ 88—89, 93:

Սլավոնական անունների հենց այս հետացող ձևերը, անտարակույս, մեծ տարակույսի առիթ են տալիս։

Այդ հանգամանքը պարզորոշ ցնցադրում է, որ խնդիրը չի կարելի լուծել տառադարձության որևէ այլ նոր և հակամետ տարբերակով։

Անունները հենց բուն սլավոներենում եզակի են, չնայած նրանցից մի քանիսը նախապես ծանոթ են այլ բնագրերից։ Ջրույցի մեջ անունները կրում են ինչ-որ անհատական թարգմանության կնիք։ Կարելի է ենթադրել, որ թարգմանիչը ծանոթ չէ, կամ հաշվի չի առել սլավոներենում արդեն ընդունված ձևերը։ Թարգմանիչը ներևս սլավոն չէ։

Սլավոներենի սկզբնաղբյուրը հայ բնագիրն է, այն թարգմանվել է հայ գաղթօջախներից մեկում և հավանաբար հայ մարդու կողմից։

Շփվելով մյուս ժողովուրդների հետ, հայերն հաճախ իրենք են եղել իրենց մշակույթի փոխանցողները։ Այնքան սիրված իմաստունի՝ Խիկարի մասին ընբույցը նրանք թարգմանել են նաև թուրքերեն[53] և որ կարևոր է՝ ղփչաղերեն, որի հայատառ բնագիրը պահպանվել է Լվովում ընդօրինակված մի ձեռագրի մեջ[54]։

Հայ թարգմանիչը անուններին տվել է այնպիսի ձևեր, որոնք իր կարծիքով պետք է որ ավելի հարազատ հնչեն սլավոներենի համար։ Այդ նպատակով նա հաճախ դիմել է հունարենի միջնորդության։ Ահա թե ինչու թարգմանական նախօրինակի անունները սլավոներեն բնագրում չեն պահպանել իրենց բուն տեսքը (Սեննեքերիմ, Ասորեստան), բայց և հայ ձեռքը մատնում են հետքությամբ։ Նադան, Ադորով անունների մեջ դ-ի առկայությունը, ինչպես նաև Աբիկամ և Անաբուզիլ անունների մեջ ճ-ի առկայությունը եթե անհնար էր բացատրել հունարենի կամ սեմական որևէ լեզվի փոխանցման դեպքում, ապա հեշտ հասկանալի է հայերենով։ Հայոց լեզվի մեջ (արևմտահայ գրական լեզվում) տ-ն տալիս է դ, իսկ Աբիկամ անունը հայերենում նույնպես գրվում է բ-ով՝ Աբիկամ։

Բայց որ ամենից ավելի ուշագրավ է, բնագրում պահպանվել է հայկական բառ՝ Առապար, իբրև անուն։ Գրիգորևը դա համարում էր հիմնավոր ապացույց, որ բնագիրը թարգմանվել է հայերենի միջնորդությամբ, բայց հետո, երբ հրաժարվեց այդ վարկածից, փորձեց բացատրել յուրովի.

«Ըստ երևույթին Առապարը նույնպես հատուկ անուն է համարվում արևելյան ժողովուրդների մոտ,— գրում է նա։— Մայրահեղ դեպքում միջինասիական սարտերին հայտնի է «Ալապար» իբրև շան անուն։ Այդպես, Տաշքենդից Ե. Արդովի պատմվածքում «Թափառիկ երաժիշտը միջինասիական ակնարկներից» վերնագրով, տրված է թափառիկ երաժիշտ սարտ Միր-Ռահիմի կենսագրությունը, որը առաջ հովիվ է եղել և որը իր գործերի նվագակցությամբ եր-

---

53 Ջմմառի վանքի ձեռագիր № 413, էջ 43ա—66ա (տե՛ս Հուցակ հայերէն ձեռագրաց Ջմմառի վանքի մատենադարանին, կազմեց Մեսրոպ վրդ. Քեշիշեան, Վիեննա, 1964, էջ 742)։ Բնագիրն անտիպ է։

54 Վիեննայի Մխիթարյան միաբանության ձեռագիր № 468, էջ 53բ—62ա (տե՛ս Հուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, կազմեց Յակովբոս Տաշեան, Վիեննա, 1895 էջ 943)։ Բնագիրը տպագրվել է երեք գիտնականների The story of Ahikar... գրքում, երկրորդ հրատարակության մեջ, որը մեր ձեռքի տակ չունենք և ապա՝ Ժան Դնիի և Էդվարդ Տրիյտոնյու կողմից (տե՛ս Rocznik orientalistyczny, tom XXVII, Warszawa, 1964).

ում էր Ալապար անունով իր մեծ հովվական շան գայլերի դեմ անհաջող պայքարի մասին»[55]:

Դա, իհարկե, բավական տարօրինակ է հնչում: Միջինասիական մի պատմվածքի մեջ հիշված հովվի շան անունը ոչ մի կերպ չէր կարող առնչվել սեմական հնադարյան զրույցի հետ, մանավանդ զրույցը ծանոթ չէ միջինասիական ժողովուրդներին: Դա բառերի սոսկ պատահական և ոչ լրիվ զուգահնչունություն է՝ առապար-ալապար: Իսկ ինչպե՞ս է l-ն սլավոներենում փոխվել r-ի[56]:

Դարնոլդոն, ինչպես անսանք, նկատում է, որ Առապարը հունական Ἀραπαρ կամ Ἀραφαρ-ի միջնորդությամբ կարող է ծագած լինել ասորական Arafar-ից: Որտե՞ղ են այդ նախօրինակները: Դարնոլդոն ասում է, որ սեմական լեզուներում այդպիսի անուն կա: Ընդունենք, չնայած նա աղբյուրը չի նշում, իսկ ի՞նչ կերպ է այն առնչվել Խիկարի զրույցի հետ:

Արաբական խմբագրությունը մահապարտ ծառայի անունը չունի, ասորական S_2-ը տալիս է Մանդիֆար, Գրաֆենի օրինակը՝ Մեդիոֆար, հայերեն հընագույն բնագրի օրինակը՝ Սեփար (Սիփար), սլավոներենը՝ Առապար: Առաջին երեք անունները, չնայած բավական աղավաղ, անշուշտ գալիս են մեկ նախօրինակից: Հայերեն Սիփարը Մանդիֆարն է, առաջին վանկի սղումով, Ֆ-ն հայերենում տալիս է փ: Բայց ոչ մի կերպ չի կարելի չորրորդ անունը՝ Առապար, արտածել նույն խմբից: Այն որևէ բանով չի հիշեցնում մյուս անունները: Ընդհանուր է միայն ոչինչ չհուշող վերջին երկու հնչյունը՝ ար: Այդպիսով, Առապարը նախնականի մեջ եղած մահապարտ ասրուկի անվան հետ որևէ կապ չունի:

Իրև անուն Առապարը չէր կարող նաև ասորերենից գալ, թեկուզ հունարենի միջնորդությամբ, եթե, նույնիսկ, ընդունենք, որ գոյություն ունի սեմական նույնահնչուն անուն, որովհետև միևնույն ասորական խմբագրության մեջ դժվար է ենթադրել նույն մարդու երկու իսկատ տարահունչ անուններ:

Տեսնենք անվան բնագրային առնչությունները.

Ասորերեն (s_2)	Ասորերեն (s_3)	Արաբերեն (s_m)
Ահա ես բանտում ասրուկ ունեմ Մարգիֆան անունով (բուռ նոի՝ Մանդիֆար), և նա պետք է մնանի:	*Ահա ես մահապարտ ասրուկ ունեմ: Նա բանտում է և կոչվում է Մեդիոֆար: Նա մահվան է դատապարտված շար գործերի պատճառով:*	*Բանտում ես ունեմ մի ասրուկ, որը մահվան է արժանի:*

Հայերեն (G)	Սլավոներեն (O)
է իմ ծառայ մի, որում անունն է Սեփար և յոյժ նման է ինձ, է ի բանտի, զի մահապարտ է:	„Се бо есть муж у мене в темнице, ему же имя Арапарь, образем слицено (Х. сличень) мне, и повинен есть смерти".

Այստեղ սլավոներենը ուղղակի կախման մեջ է հայերենից: Հայերենում ասված է, որ մահապարտ ծառան նման է իրեն: Այդպես է նաև սլավոներենը, իսկ ասորերենը և արաբերենը այդ մանրամասնությունը չունեն:

---

[55] *А. Григорьев*, Повесть... էջ 532—533:

[56] Գրիգորևն ինքը շատ էլ չի հավատում իր ասածին (տե՛ս մեր ծանոթ. № 23):

Հայերենից անվան փոխանցումը հնարավոր է այսպես. Սիպար (սրպար) պարսկերեն նշանակում է վահան: Հայ թարգմանիչը գտնելով, որ դա այնքան էլ չի արտահայտում մահապարտ ստրուկի բնույթը, փոխարինել է մոտ հնչեղությամբ հայերեն մի այլ բառով,— առապար—բիրտ, չար, վայրագ, դաժան: Կամ, թերևս, հայերեն նման մի նախադասության մեջ. «է իմ ծառայ մի առապար, որում անունն է Սեննեփար (Սեփար) և յոյժ նման է ինձ և է ի բանդի, բանդի մահապարտ է»: Հայ թարգմանիչն առապար բառը չկարողանալով փոխադրել սլավոներենի՝ թողել է նույնը: Հետագայում սլավոն գրիչները սղել են Սեննեփարը (Սեփարը), իսկ առապարը ընդունել իբրև հատուկ անուն[57]: Ամեն դեպքում Առապարը հայերեն բնագրից է անցել սլավոներենին հայ թարգմանչի կողմից և նրա առնչություն ունի որևէ մահապարտ ստրուկի հետ, ապա միայն՝ Սեփարի (Սեննեփարի):

Նման օրինակներ կարելի է բերել և հայերեն բնագրի զիշատչական և թուրքական թարգմանություններից:

Վերջացնենք: Հատուկ անունները երկրորդաբար գալիս են հաստատելու, որ սլավոնական խմբագրության նախօրինակը հայերենն է և թարգմանվել է հայ մարդու կողմից[58]:

Խալանսկին գրում է. «Իրանա-ռուսական էպիկական ճանապարհը տվյալ դեպքում ձգվել է ոչ թե Կովկասի և Պոլովեցյան տափաստանների վրայով, այլ մի ուղղությամբ, որ որոշվում է մշակութա-պատմական միջանցիկ կայաններով. արաբներ, Բյուզանդիա, հարավային սլավոններ»[59]:

Այդտեղ պետք է ավելացնել մի կայան ևս՝ հայեր:

A. A. МАРТИРОСЯН

ПЕРВОИСТОЧНИК СТАРОСЛАВЯНСКОЙ РЕДАКЦИИ ПОВЕСТИ ОБ АКИРЕ ПРЕМУДРОМ

(Р е з ю м е)

Повесть об Акире Премудром была переведена на старославянский язык в XI—XIII вв. и дошла до нас в различных вариантах. Ис-

57 Մոտավորապես այդպես էր ենթադրում Գրիգորևը, երբ ընդունում էր, որ հույն բնագիրը հայերենից է անցել բուլղարերենին: «Կարելի է մտածել,— գրում է նա,— որ սլավոնական „Се бо есть муж у мене в темнице, ему же имя Арапаръ նախադասությանը հիմք է ծառայել նման բնույթի արտահայտություն» Вот у меня есть в темнице „страшный" (или суровый — առապար) муж ընդ որում „страшный" („суровый") սկզբում թողնվել է առանց թարգմանելու, իսկ հետո դարձվել է հատուկ անուն (Sb'a „Археологические известия и заметки", էջ 359):

58 Նկատենք, որ ասորերենում և արաբերենում առկա որոշ հատուկ անուններ բացակայում են հայկական և սլավոնական խմբագրություններում. Սիս կամ Վախտ, Ուրայել և Տափշելիմ (նոր տիր.՝ Նաբուխալ և Տապշալուն), Նիզան ամիսը և այլն:

59 *М. Халанский*, Южно-славянские сказания... էջ 520:

следователи предполагали, что текст повести был переведен с утраченного греческого оригинала.

В девяностые годы прошлого века Ф. Е. Корш, а вслед за ним А. Д. Григорьев, высказали мнение, что повесть об Акире Премудром была переведена с греческого на старославянский через посредство армянского языка. В дальнейшем, в 1913 г., тот же Григорьев, опять-таки вслед за Коршем, допускает, что старославянский оригинал восходит непосредственно к ассирийскому, а Н. Н. Дурново предполагает, что старославянский оригинал был переведен с греческого или, возможно с арабского.

В дальнейшем не было проведено никаких серьезных филологических изысканий по этому вопросу. Проблема оставалась нерешенной, потому что исследователи опирались главным образом на транслитерацию собственных имен.

Имея под рукой неизвестные до сих пор древнейшие армянские подлинники (XIV в.), автор данной статьи проводит параллели (общность в составе наставлений, общность в наставлениях-притчах, общие действующие лица и т. д.) и доказывает, что старославянская редакция повести об Акире Премудром ближе всего к армянской и возможно происходит от нее.

A. MARTIROSSIAN

LA SOURCE DE LA VERSION SLAVE DE L'HISTOIRE D'AKIR (AHIKAR)

L'histoire d'Akir (Ahikar) le Sage fut traduite en vieux slavon aux XI^e—XIII^e siècles. Cestte version nous est parvenue en diverses variantes et les philologues lui attribuèrent une source grecque disparue.

Vers la fin du siècle dernier, dans les années 90, F. E. Korche et A. D. Grigorev, qui le rallia, émirent l'hypothèse selon laquelle les traducteurs, tout en s'inspirant du grec, auraient eu recours à la version arménienne. Plus tard, en 1913, Grigorev, suivant en cela Korche à la trace, vit un lien direct entre les textes slave et assyrien, tandis que N. N. Dournovo s'en tenait à une origine grecque, sans exclure l'arabe.

Les recherches vraiment sérieuses en ce sens marquèrent un temps d'arrêt, le problème attendant toujours une réponse, d'autant plus que les spécialistes n'accordaient jamais leur attention principalement qu'à la transcription des noms propres, seule base, semblait-il, qui pût leur servir de point de départ dans leurs investigations.

L'auteur du présent article disposant des textes arméniens anciens (XIV^e s.) inconnus jusqu'à ce jour montre à l'appui de nombreuses comparaisons (composition des maximes, sentences ou proverbes, personnages, etc.) que la version slave est la plus proche de l'arménien d'où elle tire vraisemblablement son origine.

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌՔՆԵՐ
ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ—«ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ»

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

ԵՐԵՎԱՆ № 9 1969

ՄԱՐՏԻՐՈՍ ՄԻՆԱՍՅԱՆ

ՄԵՅԵՒ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՓԱՐՊԵՑՈՒ ԹՂԹԻ ԵՎ ԵՂԻՇԵԻ ԵՐՐՈՐԴ ԳԼԽԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Երևանի Գրականության և արվեստի թանգարանը ձանաչված բանասեր Հ. Պերպերյանի ջանքերով 1965 թ. Փարիզից ստացավ Մեյեի նյութերի մի ծրար։ Դրանց մեջ գտանք քարտեր, որոնց վրա նա 1903 թվականից առաջ նշել է Ղ. Փարպեցու Թուղթ առ Վահան Մամիկոնեան–ի և Եղիշեի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին երկի Գ գլխի բնագրերի վերաբերյալ դիտողություններ։ Սրանք մնացել են անտիպ. այստեղ ներկայացնում ենք դրանցից ամենահետաքրքրականները, որոնք, ինչպես համոզվեցինք, իրենց արժեքը չեն կորցրել նույնիսկ այդ երկու պատմագրերների համահավաք հրատարակությունների առկայության դեպքում։

* * *

Դասական գրաբարի քերականության իր երկու գրքերով[1] և հայ լեզվաբանության վերաբերող բազմաթիվ հոդվածներով Մեյեն հայագիտության մեջ շատ ավելի հայտնի է որպես հռչակավոր հայագետ լեզվաբան, քան բանասեր կամ բնագրագետ, մինչդեռ նա բանասիրական հոդվածներ ունի Եղիշեի և Ագաթանգեղոսի պատմությունների, Եղնիկի փիլիսոփայական երկի, Աստվածաշնչի հայերեն թարգմանության վերաբերյալ և այլն։ Նա եվրոպացի այն հայագիտներից է, որոնք սիրել են մեր ձեռագիր մատենագրությունը և դրանից քաղել լեզվաբանական ու բանասիրական ուսումնասիրությունների նյութեր[2]։ Մեյեն հայերեն ձեռագրեր ընթերցել է Փարիզի ազգային գրադարանում, Վիեննայի և Վենետիկի Մխիթարյան միաբանությունների մատենադարաններում, էջմիածնի վանքում, ուր նա գիտական նպատակներով այցելել է 1891 և 1903 թթ.։

1891 թ. Մեյեն, առաջին անգամ լինելով, մի քանի ամսով եղավ Թիֆլիսում և էջմիածնում՝ արդի հայերեն խոսել սովորելու (որը նրան մասամբ միայն հաջողվեց այդ կարճ ժամանակամիջոցում), էջմիածնի մատենադարանում հա-

---

[1] Esquisse d'une grammaire comparée de l'arménien classique *(Դասական հայերենի համեմատական քերականության ուրվագիծ)*, Վիեննա, 1902. Altarmenisches Elementarbuch *(Հին հայերենի տարրական դասագիրք)*, Հայդելբերգ, 1913։

[2] Observations sur la graphie de quelques anciens manuscrits de l'évangéliaire arménien *(Դիտողություններ հայերեն ավետարանի մի քանի հին ձեռագրերի գրության վերաբերյալ*, Journal Asiatique, 1903, 10e série, հտ. Բ, էջ 487—507) և De quelques évangéliaires arméniens accentués *(Շեշտադրված հայերեն մի քանի ավետարանադրքերի մասին, 1905 թ.)* ընդարձակ հոդվածները հիմնված են, ինչպես գրում է ինքը հեղինակը, 1903 թ. էջմիածնի մատենադարանում նրա ուսումնասիրած ձեռագրերի վրա։

յերեն ձեռագրեր ընթերցելու և Աշտարակ գյուղի բարբառն ուսումնասիրելու համար: Այն ժամանակ նա կարդացել է Ղազար Փարպեցու հայտնի Թուղթն առ Վահան Մամիկոնյան: Նա հետաքրքրական և ուսանելի շատ բան է գտել հայերեն ձեռագրերում: Սակայն մի քանի օր ընթերցելուց հետո նա գանգատվել է. «Ձեռագրերից չեմ քաղում այն բոլորը, ինչ սպասում էի: Դրանք շատ հին չեն, և դրանց ներկայացրած ուղղագրական առանձնահատկություններն այնքան շատ չեն, որքան ցանկանում եմ»[3]: Մեյեն ընդհանրապես դժգոհ է մնացել այս առաջին գործուղման ժամանակ իր ձեռք բերած գիտական արդյունքներից և առանձին հոդվածում չի ամփոփել դրանք: Այնուհանդերձ մենք հետաքրքրական որոշ բան գտանք այն ժամանակ նրա կատարած գրառումների մեջ, որոնք վերաբերում են Փարպեցու Թղթի բնագրին: Նա թողել է նաև անտիպ դիտողություններ Եղիշեի բնագրի որոշ տողերի վերաբերյալ: Նախ՝ առաջինի մասին:

Մեյեն լրիվ համեմատել է Փարպեցու Թղթի վենետիկյան երկրորդ հրատարակությունը (1873 թ.) էջմիածնի մատենադարանի № 611 (այժմ Մաշտոցյան մատենադարանի № 2639) ձեռագրի հետ, էջ 477ա—486ա: 9 թերթիկների վրա Մեյեն նշել է, տպագրի բաղդատությամբ, ձեռագրի համարյա բոլոր տարբերթերցվածները, քերված կամ այլ գրչով ավելացված տառերն ու բառերը, ձեռագրի և հրատարակության որոշ հատվածների հատատաջությունը:

Մեյեի համեմատության արդյունքների և Թղթի գիտական հրատարակության մեր բաղդատությունից պարզվեց, որ նրա նկատած մի շարք այլընթերցվածներ արտացոլված չեն կամ նույնիսկ սխալ են մեջ բերված Ստ. Մալխասյանցի և Գ. Տեր-Մկրտչյանի կազմած գիտական բնագրի այլընթերցվածների բաժնում: Ստորև ներկայացնում ենք դրանցից մի քանիսը:

Փարպեցու Թղթի 2-րդ հրատ.	Ձեռագիր հմր. 2639 (Մեյեի նշումները)	Գիտակ. հրատ. այլընթերցվածներ
էջ 570 որդի	արտի	էջ 187 տ. 16 որդի
» Հոռոմս	Հռոմս	187 տ. 20 չիք
572 անուշ	անոյշ	188 տ. 12 չիք
573 ի փոքրիկ	ի փոքիկ	188 տ. 30 չիք
576 զընտանիս	զընդանիս	189 տ. 33 չիք

Գիտական բնագրի էջ 190-ում կարդում ենք. «Ղազար ասէ, թե պոռնկութիւն մեզ չեն. զոյն և մարզպանին սադրէ: եւ եթէ ընդէ՞ր այդ այդպէս՝ դու, ասէր, քաջ գիտես քան զսուտ կարծողան»: Ինչպես նկատել է Մեյեն, ձեռագիրն ունի եւ թէ էր մեր այստեղ ընդգծած բառերի փոխարեն: Կարծում ենք, որ կարելի է ձեռագրի ընթերցվածը համարել ճիշտ և իմաստի տեսակետից հարմար, էր-ը հասկանալով ոչ թե ընդէ՞ր=ինչո՞ւ, այլ որպես եմ բայի հարցական ձևը, այսինքն՝ և միթե՞ դա այդպես էր. դո՛ւ, տե՛ր, ավելի լավ գիտես, քան սուտ կարծողները, բամբասողները կամ սխալմամբ այդպես կարծողները: Վահան Մամիկոնյանը չգիտեր անշուշտ, թե ինչո՛ւ է դա այդպես, այսինքն՝ ինչո՞ւ են

3 Անտուան Մեյե, Նամակներ Թիֆլիսից և Հայաստանից, 1891 թ., Հունիսի 15-ի նամակից: Այս հետաքրքրական նամակների բնագրերը և մեքենագրված օրինակը (130 էջ) պահվում են Տիկ. Մեյեի մոտ. նա բարյացակամորեն մեզ հնարավորություն ընձեռեց հանելու դրանց լուսապատճեններ: Դրանց հայերեն թարգմանությունը, անհրաժեշտ լուսաբանումների հետ միասին, պատրաստել ենք հրատարակության:

սուտ մեղքեր բարդում Փարպեցու վրա, որը հենց դրա պատճառն է բացատրում մարզպանին, կամ այդ մասին նրան տեղեկացնում իր նամակում: Ընդհակառակն՝ Փարպեցին ավելի քան համոզված է, որ մարզպանը հավատ չի ընծայում այդ բանին և երբեք չի հավատա, որ այդ այդպես է, այն է՝ իբր Ղազարն ասում է, թե պռոնկությունը մեղք չէ, և թե նույն սուտ խրատն է տալիս մարզպանին: Մեր մեջ բերած տողերին անմիջապես հաջորդող պարբերության մեջ Փարպեցին շարունակում է ապացուցել, թե ոչ էր այդ այդպես. «Արդ՝ ո՞ ոք յանօրինաց, թող թէ ի քրիստոնէից, ի միտս իւր խորհել զայսպիսի ինչ բան, թող թէ առ այլում զայսպիսի շշնչել բանս» և այլն (Գիտական հրատարակություն, էջ 190, տ. 7—14):

էջ 577	դրդուեալ	190 տ. 16 շիք
582	ակարամտութեանս	ակար մտութեանս 192 տ. 11 շիք
585	և բաս անկարգ վարուց	և անկարգս վարուց 193 տ. 9 շիք
588	խուեննն	խըւեննն 194 տ. 8 շիք
595	կաթուղիկոսի	կաթողիկոսի 197 տ. 28 շիք
590	բնտանեաց	բնդանեաց 195 տ. 21 շիք
591	Գարդմանայ	գարդմանեայ 196 տ. 13 »
598	ո՞ւր	որ 199 տ. 2 »
600	աղաղակէ	աղաղակէր 199 տ. 18 »
603	անյօդակապէս	անյաւդկապս 200 տ. 22 շիք

Այսուամենայնիվ Մեյնն դրվատանքով է դրախոսել այս քննական բնագիրը, նշելով հանդերձ դրա, բաս իրեն, թերի կողմերը. «Հրատարակիչները խնամքով նշում են ձեռագրի այլընթերցվածները: Նրանք շատ քիչ են ուղղում բնագիրը և երբեմն նույնիսկ առանց ուղղման են թողնում միանգամայն անհասկանալի հատվածներ: Կարելի է ափսոսալ, որ նրանք սակավ-ինչ շատ են հետևել իրենց ձեռագրի ուղղագրությանը, որն այս նկատմամբ ոչ մի հետևողականություն չունի... Հրատարակությունն առաջին անգամ լինելով, տալիս է ձեռագրի հավաստի բնագիրը»[4]: Ըստ այսմ էլ 1904 թվականից հետո Մեյնն իր հայագիտական հոդվածներում Փարպեցու վկայությունները քաղել է այս բնագրից:

* * *

Շատ ավելի հետաքրքրական և արժեքավոր են Մեյնի դիտողությունները Ղևոնդի վասն Վարդանայ և Հայոց պատերազմին դրքի 3-րդ հատանակի վերաբերյալ:

Մեյնն մեծ ուշադրությամբ և քննադատ բանասերի ոգով լրիվ համեմատել է նաև Ղևոնդի երկի 1838 թվականի վենետիկյան և Խաչատուր Հովհաննիսյանի (Մոսկվա, 1892 թ.) հրատարակությունների 3-րդ գլուխը (դուրս ։ ավելի, սակայն պահպանված բարեներն այս գլխի մասին են): Վենետիկի հրատարակության տողատակում տրված են նաև որոշակի չմատնանշված ձեռագրերի այլըն-

[4] Revue Critique d'histoire et de littérature, 1904, էջ 459—460.

թերցվածները. Մեյեն նկատի է առել նաև դրանք, ձեռագրերը պայմանականորեն անվանելով x, y, z: Իսկ Ս. Հովհաննիսյանի հրատարակությունը կատարված է ըստ Անձևացյաց օրինակի, որ ըստ այսմ Մեյեն նշել է A տառով:

Մենք համոզված ենք, որ Մեյեի համեմատությունը կատարված է 1903 թվականից առաջ, Փարիզում, թեև նա ոչ մի տեղ չի նշել այդ: Այս թվականի մայիսի 10-ին, նույն տարվա ամռանն էջմիածին այցելելուց առաջ, նա Փարիզից գրել է Գալուստ Տեր-Մկրտչյանին. «Անպայման կգամ էջմիածին: Սակայն ուզում եմ լավ օգտագործել այն երեք շաբաթները, որ անց եմ կացնելու այնտեղ: Նախ՝ ծրագրել էի պատրաստել Եղիշեի քննական հրատարակությունը, բայց «Պատմագիրք Հայոց» մատենաշարի ապդն ինձ բնականաբար հրաժարել ավելց դրանից»[5]: Մեյեն իրոք վերջնականապես հրաժարվել է, ասիո՞ս, այդ մտադրությունից. սակայն նրա թողած անտիպ նշումները վկայում են, որ նա լուրջ և համակողմանիորեն էր նախապատրաստում դրա իրագործումը: Այսպես՝ մի թղթի վրա, որ վերնագրված է «Եղիշեի աղբյուրները», կարդում ենք (ֆրանսերեն). «Մոգերի երկար բացատրությունը, էջ 48, տ. 22 և շար., պետք է լինի առնված լինի այն նույն աղբյուրից, ինչ որ Բ եղանակում մագդեական ասմունքի շարադրանքը» և այլն. հետագայում Մեյեն առանձին հոդվածում ընդարձակ շարադրել է այս միտքը[6]: Մի քարտի վրա նշված է. «Եղիշեի ձեռագրի մասին տե՛ս Հանդէս Ամսօրեայ, 1902, հոկտեմբեր». դա Գր. Տեր-Պողոսյանի «Նկատողություններ Եղիշեի պատմության վերաբերյալ» հոդվածն է: Շատ ավելի կարևոր է հետևյալ նշումը. «Գիրք Գ[7], հայերի նամակը Թեոդոս կայսերին կարծեք ինչ-որ հին գրքի ամփոփումն է: Վերջավորությունը շատ կարճ է, որպեսզի նամակը բնագիր մի վավերագիր ներկայացնի: Մյուս կողմից՝ նկատելի է, որ այդ նամակում բացակայում է Գրիգոր Լուսավորչի անունը: Այստեղ մենք ունենք Հայաստանի քրիստոնեություն ընդունելու մասին հուշարեն մի հին գրքի ամփոփումը»: Եվ իրոք, այս նամակում հիշատակված չէ Հայաստանի քրիստոնյա լուսավորչի անունը. Տրդատ Թագավորի համար են ասված նամակի հետևյալ տողերը. «Նախնին մեր Տրդատիոս յիշելով զառաջին սէրն ձեր, որ ի տղայութեան փախուցեալ ի հայրապետական մարդախողխող հօրեղբարցն իւրոց՝ ապրեալ անաւ յերկրիդ Յունաց, և ի ձէնջ Թագաւորեալ տիրէր Հայրենի աշխարհիս, առնպէս և զհաւատսն որ ի Քրիստոս՝ ընկալ ալ ի սուրբ էպիսկոպոսապետէն Հռովմայ, լուսավորեաց զիաւաւորային կողմանս հիւսիսոյ»[8]: Ի դեպ, նամակում ունենք Տրդատիոս ձևը, և Մեյեն իր քարտերից մեկում նշել է. «Նկատե՛լ անվան Հունական ձևը»:

---

5 *Մաշտոցյան մատենադարան, Գ. Տեր-Մկրտչյանի արխիվ:*

6 *Մեյեն իր ուսումնասիրություններից ելնելով՝ երկու համառոտ հոդված է հրատարակել Եղիշեի պատմությունից վերցրած երկու հատվածի վերաբերյալ. 1.* Notice sur un passage de l'historien arménien Elisée *(Ծանոթություն հայ պատմագիր Եղիշեի մի հատվածի մասին,* Journal Asiatique, *հմ. ԺԲ, 1902, էջ 548—549. Նույնի ամփոփումը հայերեն՝ Բանասէր, 1902, էջ 141). 2.* Sur un passage d'Elisée *(Եղիշեի մի հատվածի մասին,* Revue des Etudes Arméniennes, *հմ. 2, 1926, էջ 1—3): Հայ լեզվաբանության վերաբերող իր հոդվածներում Մեյեն բնագրային վկայություններ քաղել է նաև Եղիշեից՝ նրա շարադրությունը համաբերով բուն հայկական:*

7 *Եղիշեի Վասն Վարդանայ և հայոց պատերազմին, Երևան, 1957, էջ 71 տ. 20:*

8 *Անդ, էջ 72 տ. 6—11:*

Բաղդատության միջոցին Մեյեն հաճախ շատ համառոտ գրի է առել իր դիտողությունը երկու տպագրությունների և x, y, z ձեռագրերի այլընթերցվածներից շատերի մասին՝ պատճառաբանելով մեկի կամ մյուսի ճշտությունը կամ անճշտությունը, իրեն ոչ ճիշտ թվացող ընթերցվածի առաջացման հավանական պատճառը կամ ուղին, որևէ ընթերցվածի ընդունելի, անընդունելի, վերաբերելի կամ գոնե ծանոթության մեջ նշելի լինելը:

Պրոֆ. Ե. Տեր-Մինասյանի դիտական հրատարակության հետ մենք համեմատեցինք Մեյեի նշումները (մեր առաջ ունենալով նաև անշուշտ նրա օգտագործած երկու տպագրությունները): Պարզվեց, որ իր ձեռքի տակ ունենալով եղիշեի միայն երկու տպագրություն՝ նա շատ անգամ կարողացել է որոշել, թե երկու այլընթերցվածներից ո՛րը պետք է ճիշտ կամ մատենագրինը համարել: Իսկ հաճախ էլ չընդունելով երկու տպագրությունների բնագիրը՝ նա առաջարկել է այն ուղղել այս կամ այն կերպ: Դիտական հրատարակությունն իր բնագրով և բազմաթիվ ձեռագրերի այլընթերցվածներով այսօր ցույց է տալիս, որ Մեյեն երկու դեպքում էլ ճիշտ է լուծել հարցերը: Բերենք մի քանի օրինակ:

Ընթերցվածի ընտրություն. *ըստ բննական հրատարակության (էջ 66 տող 20)* գրէր և կնիէր գերդումն և կապէր զաւետարանէն նախադասության մեջ *Ե. Հովհաննիսյանի հրատարակությունը (ըստ Անձևացյաց օրինակի)* և x, y, z ձեռագրերն ունեն գրէր, իսկ V *(վենետիկյան նշված հրատարակությունն)* ունի դնէր. *Մեյեն նկատել է. «V-ի ընթերցվածը համարյա անիմաստ է». և սա ճիշտ է: կամ՝ դիտ. հրատ. էջ 67 տող 16,* Ոչ երեէր այնուհետև առաւել աէր քան զծառայ, V աէր, A աէրն, *Մեյեի՝ «Հողը բավականին անսպասելի է այստեղ». և սա նույնպես ճիշտ է:*

Աղավաղված ընթերցվածների ուղղում. VA բնե՞ր ոչ գայդ ամենայն հաւասաեաւ յանդիման շասացեր գրագաւորն *(A բագաւորին) նախադասության մեջ մեր ընդգծած ժխտականների մասին Մեյեն նշել է. «երկու բնագրերն էլ ունեն շասացեր: Ջնջել չ-ն, որը կրկնակի է կիրառվել և հակառակ է լեզվի սովորությանը. Համմ. օրինակ՝ սրան հար և նման հատվածը՝ ընդդէ՞ր ոչ մեծապէս ինգ տարար յանձն էո[9]. չ-ն այստեղ ինչ-որ դրչի ավելացում է»: Մեյեն ճիշտ է նկատել, որ այստեղ ժխտական երկու մասնիկներից մեկն ավելորդ է դասական գրաբարի քերականության համաձայն, և գիտական հրատարակության մեջ կարդում ենք գոնե «ընդէ՞ր գայդ ամենայն... շասացեր» (62.7—8):*

Երբեմն էլ Մեյեն կարողացել է ճիշտ մեկնաբանել իր օգտագործած երկու տպագրությունների տարօրինակ թվացող բնագիրը: Ահա դրա մի օրինակը. AV *49 տ. 10, Գիտ. հրատ. 60 տ. 7—8* Նոքա ևս բան զևս աճեցին և բազմացան, և հասին մինչև յաշխարհն Քուշանաց, և անտի ի հարաւակողմն մինչ ի Հնդիկս տարածեցաւ. *Մեյեի՝* «Տարածեցաւ— *նախորդող և հաջորդող բայերը (աճեցին... համարձակը էին) հոգնակի են և վերաբերում են քրիստոնյաներին, որոնք այստեղ նշված չեն.* տարածեցաւ-ն *անշուշտ վերաբերում է քրիստոնեական ուսմունքին: Գոնե ծանոթության մեջ առաջարկել* տարածեցան *ուղղումը»: Ոչ մի ձեռագիր չունի Մեյեի առաջարկելիք ուղղումը, որը, կարծում ենք, ավելորդ է: Համենայն դեպս նա ճիշտ է ըմբռնել բնագիրը. և իրոք, Ե. Տեր-Մինասյանն այս նախադասությունը թարգմանելիս քառակուսի փակագծերում ավելացրել է «[քրիստոնեությունը] տարածվեց», (Երևան, 1958, էջ 57):*

---

[9] Տե՛ս բննակ. հրատ. էջ 62 տ. 10:

Սակայն այս բոլորից շատ ավելի կարևոր է այն, որ Եղիշեի գիտական հրատարակության առկայության դեպքում ևս Մեյեի շատ դիտողություններ արժեքավոր են մեր մատենագրի հնադարյան բնագրի մի մասը հնարավորին չափ ճիշտ վերականգնելու համար: Ստորև ներկայացնում ենք դրանցից միայն ամենահետաքրքրականները, առաջդրելով պրոֆ. Ե. Տեր-Մինասյանի կազմած բնագիրը (որ նշում ենք ԵՏ տառերով) և ձեռագրային այլընթերցվածները:

1. V 47. 16 կանաց առնականաց — A կանանց առնականանց — *Մեյե՝ «Ճիշտ է երկրորդ ձևը».* — ԵՏ 58.2 կանանց առնականաց, *երեք ձեռագիր և երկու տպագիր՝* առնականանց: *Զալբխյան — Այտընյան Քերականություն (էջ 26), ՆՀՔ և Առձեռն՝* առնականանց:

2. V 48.29, A ԵՏ 59. 16—18 *Ոչ ինչ խնայէին սորա ի նոսա սատակմամբ՝ ոչ միայն* զարտաւիճան, *այլ և յեղբարս և յորդիս և յամենայն մերձաւորս իւրեանց, նաև ոչ յանձինս իւրեանց.—Մեյե՝* «զարտաւիճան-ը *ուղղե՛լ* յարտաւիճան *բառ ի նոսա, յեղբարս և այլն ձևերի: Ակնհայտ ուղղում»: Ինչպես տեսնում ենք, ԵՏ ունի* զարտաւիճան, *իսկ երկու ձեռագիր՝* յոտարս: *Կարծում ենք, որ Մեյեի առաջարկած ուղղումը ճիշտ է.* զարտաւիճան-ը *պետք է դիտել ոչ թե որպես սատակմամբ բայանվան մեջ տակա բայիմաստի ուղիղ խնդիրը, այլ խնայէին ստորոգյալինը, ինչպիսին են Մեյեի մատնանշած մյուս խնդիրները՝* յեղբարս, յորդիս, յամենայն մերձաւորս... յանձինս: *Նկատենք, որ երկու ձեռագրի* յոտարս *ընթերցվածը, փոխ.* յարտաւիճան, *նույնպես ի նախդրով հայցական է, թեպետ այլ բառ:*

3. V 50.20, A ԵՏ 61.17... *այս* nr *ևս ինձէն աշօք տեսի... մեծագոյն ևս լինի քան զառաջինն.— Մեյե՝* «qnr, *և ոչ թե* nr»: *Քերականորեն այստեղ իրոք պետք է* qnr *որպես տեսի ստորոգյալի ուղիղ խնդիր՝ դերանվամբ արտահայտված. հինգ ձեռագիր ունեն* qnr *ուղիղ ընթերցվածը:*

4. V 52.24, A ԵՏ 64.1—3... *յերկարէր զնուագան ուրախութիւնան, մաշելով զերկայնութիւն զիշերացն յերգս արթնցութեանն և ի կաքաւս լկտութեանն, քաղցրացուցանէր ոմանց զկարգս* երաժշտական *և զերգս հեթանոսականս.— Մեյե՝* «կարգա՛ երաժշտականս. *Հմմտ. անդ,* հեթանոսականս»: *Մեյեի դիտողությունը ճիշտ է, թեկուզ համաբանությամբ, թեև ոչ մի ձեռագիր չունի այն: Սակայն ութ ձեռագիր ամբողջովին չունեն «երաժշտական և զերգս», երկու ձեռագիր չունեն «երաժշտական և զերգս հեթանոսականս» ընթերցվածները, որոնք, կամ ավելի ճիշտ՝ «երաժշտականս և զերգս» բառերն ընդմիջարկություններ են, և լավագույնն այստեղ Դ ձեռագրի բնագիրն է՝ «քաղցրացուցանէր ոմանց զկարգս հեթանոսաց» (կամ* հեթանոսականս, *որ նույն իմաստն ունի): Եվ իրոք, ամբողջ պիշերը Հարթեցության երգերով և զվարճանքով անցկացնող քրիստոնյաների համար մարզպանը քաղցրացնում էր ոչ թե «զկարգս երաժշտականս և զերգս հեթանոսականս», այլ՝ «զկարգս հեթանոսականս»:*

5. V 54.12, ԵՏ 66.1—3 *Իսկ մի ոմն նախարարացն, որ անդր դիպեցաւ, էր ի նոցա խորհրդի, և ոչ միաբանեաց ընդ նոսա... քարկոծեցաւ և ահ մեծ անկաւ...— Մեյե՝* «[Ընդգծվածը] *համարյա ակնհայտ ընդմիջարկություն է. լրիվ անհամաձայնության մեջ է կողքի բառերի հետ, ուստի և անօգուտ է (գոնե) իմաստի տեսակետից»: Ուրիշ ձեռագրեր ունեն «էր ի վաստակս խորհրդին — որ էր ի նորա խորհրդի»:*

6. A V 54.32, ԵՏ 66.15 *Իսկ զմարզպանն ձերբակալ առաւել, և միաբանէր ընդ նոսա երդմամբ.— Մեյե՝* «Ձեմ *հասկանում իսկ զմարզպանն... կառուց-*

վածքը: Գուցե կարդանք մարզպանն, ուղղական. բայց սա հայերե՞ն է»: Եվ իրոք, սա բավականին տարօրինակ կառուցվածք է դերբայական դարձվածով: Մեկ ձեռագիր ունի մարզպանն, ուղղական հոլով, որ միանգամայն հասկանալի կլիներ որպես ենթակա ձերբակալ առարեալ դերբայական դարձվածի. վերջինս այս դեպքում կատանար կրավորական իմաստ և անհարիր չէր լինի միաբանէր առորգյային, որի ենթական մարզպանն ձևն է:

7. V 55.29, A bS 67.23—26 Ընկեցեալ կայր այնուհետև ոսկի, և ոչ ոք առնոյր իւր առանձինն արծաթ, և արհամարհեալ առանց ապահովեան, անարգեալ պատուական հանդերձք առ ի զարդս մեծարանաց.— Մեյն՝ «[Ընդգծված] արտահայտությունը ընդհատում է ընդհանուր նախադասության կառուցվածքը. անհնար է շարունակել, եթե առհամարհեալ-ը նույնպես չի վերաբերում կայրին, գոնե անուղղակիորեն: Բացի այդ, թվում է, որ այս նախադասությունն ընդմիջարկություն է. դրա իմաստի կրկնությունն է նա իւրամանչիւր... տ. 3 և շար.», այսինքն՝ նա՝ իւրամանչիւր առացուածծ ոչ ինչ հատարէին յաչս առացողաց իւրեանց: Ինչպես նկատելի է, Մեյնն առաջարկում է կարդալ ընկեցեալ կայր այնուհետև ոսկի... և առհամարհեալ [կայր ոսկի]. Ե. Տեր-Մինասյանի թարգմանության մեջ (էջ 63) առհամարհեալ-ը վերաբերում է, ինչպես անարգեալ-ը, պատուական հանդերձ-ին, այսինքն՝ «...արհամարհված, անարգված էին զարդարանքի ու մեծարանքի համար հատկացված պատվական հագուստները»: Ըստ համահավաք բնագրի՝ չկա ձեռագիր, որ չուններ վերևում ընդգծված հատվածը:

8. V 57.29, A bS 70.2 բերդացն պարիսպին— x, y... բերդիցն— Մեյնն կրկնակի ընդգծելով բերդիցն ձևը՝ ավելացրել է. «Տե՛ս V 65.25 բերդիցն» [bS 68.16 բերդիցն—Մ. Մ.], և այս վերջին ընթերցվածի մասին փակագծում նշել է. «Անտարակույս սա է ճիշտ ընթերցվածը»: Եվ իրոք, մի քանի ձեռագիր ունեն այս ձևը. մատենագիրը երկու ձևերից հավանարար կիրառել է մեկը. Առձեռն և ՆՀԲ բառարաններում բերդ գոյականի թեք ձևերն են՝ -ի կամ -աւ, -իցդ, -իւք:

9. V 59.17, bS 71.20—22 Յովսէփ եպիսկոպոս բազում եպիսկոպոսակցօք իմովք և ամենայն զօրօք Հայոց, վասակ մարզպան և Ներշապուհ Ռմբոսեան հանդերձ սպարապետաւս և ամենայն մեծամեծ նախարարօքս...— Մեյնն զօրօք ընթերցվածի կողքին նշել է. «Ակնհայտ սխալ, որ հետևանք է նախորդող եպիսկոպոսակցօք ձևի. իրականում մատենագիրն առաջրում է աշխարհական և եկեղեցական իշխանություններըե. քան այսմ էլ քանի որ «Յովսէփ եպիսկոպոս»-ը ուղղական հոլով է դրված, նույն հոլով պետք է դրվի նաև «զօրք»-ը, ինչպես ունեն վեց ձեռագիր և երկու տպագիր:

10. V 57.27, bS 72.3 ...ի սահմանացն Սէիրայ (A Սեռայ)—Մեյն՝ «երկրորդ ընթերցվածն է լավը»: Եվ իրոք, Ե. Տեր-Մինասյանը բնագրում ընդունելով հանդերձ «Սէիրայ» ձևը, թարգմանության մեջ դրել է «Սեիրայի սահմաններից...» (էջ 67). բազմաթիվ ձեռագրեր և երկու տպագիր ունեն «Սեիրաց, Սեիրայ, Սեիրեա»:

11. Շատ հետաքրքրական է Մեյնի դիտողությունը հետևյալ հատվածի մասին. «Եւ թագաւորէ փոխանակ նորա Մարկիանոս կայսր, և ի ձեռն վաթթար արանց իրաւատուաց իւրոց ծառայից, Անատոլեայ՝ որ սպարապետն էր, և Եղփարիոս ասորի, երկոքեան անարգք և վատթար արանց, միանգամայն և անաստուածք, ի նոցա բանս հլեալ թագաւորն, ոչ կամէր... (V 60.28 և շար., bS

*73.5—8)... Վասն այսորիկ փութացաւ արձակեաց դեսպանս առ թագաւորն Պարսից զնոյն Եղիսարիոսն» (bS 73.12—13): Մեյնն գտնում է, որ բնագիրն այստեղ աղավաղված է, և նա բերում է ապացույցներ, որոնք ինքնին դարձյալ դիտողություններ են այդ տողերի առանձին բառերի և անճշտությունների վերաբերյալ. «Բնագիրն անպայման խանգարված է և ունի մեկնաբանող ընդմիջարկություններ, որոնք գալիս են անտարակույս Ղ. Փարպեցուց (էջ 126.16, վենետ. 1-ին հրատ. [Քննակ. հրատ. էջ 73.3—9 Մ. Մ.]: Նախադասության կառուցվածքը անկարելի է ընդունել (խառն են ուղղականն ու սեռականը)[10]: Անատողեայ (A Անատոլիայ) հատուկ անունը նույն ձևն ունի, ինչ որ Ղ. Փարպեցու մոտ [10a], հակառակ էջ 5 տ. 19 Անատող-ի[11]. սպարապետ կոչումը, փոխանակ սպարապետ Անտիոքայ (Փարպեցի)[12] կամ սպարապետ արևելից (Եղիշէ, էջ 5. 20)[13], իրոք ցույց է տալիս բնագրի կրճատում:— Եղիսարիոս (V Եփղարիոս) ձևը չի համաձայնում Փարպեցու Փղորեննի-ին[14]. A-ն ունի Փղորեննիոս (այս անունը փնտրել Հույների մոտ):— էջ 61, տ. 4-ում[15] ունենք այս անունը և նույն փոփոխությունը. զնոյն Փղորեննիոսն ձևը մեկնություն-ընդմիջարկություն է, և չեմ հասկանում, թե ինչպե՞ս կարելի է հաշտեցնել եզակի անունը դեսպանս հոգնակիի հետ[16]:— Տող 29 վատթար արանց, համմտ. տ. 27!!: Անտարակույս Անատողեայ... [որ սպարապետն էր, և Եղիսարիոս ասորի, երկոքեան անարգք և վատթար արանց, միանգամայն և] անաստուածք-ը մի երկար ընդմիջարկություն է, որին պետք է ավելացնել նաև զնոյն Եղիսարիոսն, էջ 61.4»[17]:

12. V 62.32 և շար., bS 75.17—19 Անցանէր բաւանդակէր ամենայն զօրօք իւրովք. ռազմ արարեալ զբոլոր մեծութիւն դաշտին ի ներքս փակէր. զինեալք և վառեալք ամենայն պատրաստութեամբ ի մարտ պատերազմի ընդդէմ զնդին Հայոց:— Մեյն՝ «Զինեալք... վերջավորությունն անհնար է նախադասության կառուցվածքի տեսակետից և ակնհայտորեն փոփոխված է»: Մեկ ձեռագիր և մեկ տպագիր ունեն զինեալ և վառեալ, որ տրամաբանական է՝ վերաբերելով անցաւեր *առորոգյալի* ենթակային:

---

10 Մեզ միանգամայն ճիշտ է թվում Մեյնի այս դիտողությունը. բնագրում այդ ուղղական և սեռական հոլովներով ձևերն են՝ «Ի ձեռն վատթար արանց խրատուուաց իւրոց Յառայից, Անատոլեայ... Եղիսարիոս ասորի» (որ անհարիր է նախորդ սեռականներին), «երկոքեան անարգք և վատթար արանց, միանգամայն անաստուածք, ի նոցա բանս...»:

10a Մեզ բերված տողերին նախորդող հատվածի վերաբերյալ Մեյնն իր քարտերից մեկում այն միտքն է արտահայտել, թե շարադրանքի մեջ Ղ. Փարպեցու և Եղիշեի մոտ մեծ նմանություններ կան, որոնք ենթադրել են տալիս մի ընդհանուր աղբյուր: Հայ բանասիրության մեջ վիճարկված հարց է Եղիշեի՝ Փարպեցու պատմությունից օգտվելու հանգամանքը:

11 Եղիշե, քննակ. հրատ., էջ 7.9 Անատոլ:

12 Ղ. Փարպեցի, քննակ. հրատ., 74. 7—8 սպարապետ Անտիոքայ:

13 Եղիշե, քննակ. հրատ., էջ 7.10:

14 Ղ. Փարպեցի, քննակ. հրատ., էջ 74.8: Երկու մատենագիրների ո՞ր մեկի բնագիրն է արդյոք ճիշտ այս հարցում:

15 Եղիշե, ն. տ., էջ 73.13:

16 Եղիշե, ն. տ., էջ 73.13 տե՛ս վերևում Եղիշեից մեջ բերված տողերը: Մեյնի դիտողությունը միանգամայն տրամաբանական է. ինչ ձեռագիր և մեկ տպագիր ունեն դեսպան եզակի ձևը, որ համապատասխանում է զնոյն Եղիսարիոսն եզակիին, եթե վերջինս ընդմիջարկություն չէ. հակառակ դեպքում դեսպանս հոգնակին տեղին է:

17 Եղիշե, քննակ հրատ., էջ 73.13:

13. V 68.7 և շար., bS 81.23—25 եւ իբրև զայս ամենայն բովանդակ ցուցին նմա, միաբան լինէր ամբաստանութիւն երկոցունց կողմանցն՝ զառաքինեացն և զչեաս կացելոցն[18]. *որպէս գուր և տարապարտուց նեղեաց զնոսա [bS էջ 82.1—5] ի Հայրենի օրինացն չեաս կալ, և դիտաբէրութիւն ապատամբին վաստակայ, որպէս Հայոց բանիւ խարեաց զքաղաւորն, յանձն առնուլ զմոգութիւն. իբրև չէր ուրուք ընդ նմա բանս եդեալ, նա յանձնէ սուտակասպաս լինէր։*

Իբրև լիով զայս իմացուցին, արձակեցին զնա հրեշտակութեամբ...— Մեյեն այս տողերի մասին գրել է. «նախադասութիւնը երկար է. այն պետք է հասանել հետևյալ կերպ, գուրս գցելով մեկնութիւն-ընդմիջարկութիւնները և վերականգնելով ուղիղ բնագիրը»։ Ու նա գրի է առել իր վերականգնած բնագիրը. «եւ իբրև զայս ամենայն բովանդակ ցուցին նմա[19], *(զ)միաբան (ձեռ. միաբան) [լինէր]*[20] *ամբաստանութիւն զերկոցունց (x, y, z. AV երկոցունց) կողմանցն՝ զառաքինեացն (A չիք զ) և զչեաս (A չիք զ) կացելոցն*[21]. *որպէս գուր և տարապարտուց նեղեցան (A—նեղեաց զնոսա, գուցե և հարկավոր է պահպանել այս)ի Հայրենի օրինացն չեաս կալ, և դիտաբէրութիւն ապատամբին վաստակայ, որպէս Հայոց բանիւ խարեաց զքաղաւորն, յանձն առնուլ զմոգութիւն. [իբրև չէր ուրուք ընդ նման բանս եդեալ, նա յանձնէ սուտակասպաս լինէր]. իբրև լիով զայս ամենայն իմացուցին, արձակեցին զնա հրեշտակութեամբ...»։ Մեյեն ավելացրել է. «երկու բան են ցույց տալիս պատվիրակին՝ միաբան ամբաստանությունը և վաստակի կեղծիքը. այնուհետև նրան ուղարկում են։ Էական ուղղումն այն է, որ միաբան-ի վրա պետք է ավելացնել զ նախդիրը և ջնջել լինէր-ը. միաբան-ի զ-ի անկումը եղել է անշուշտ մեկնակետն այն սխալի, որով խանգարվել է ամբողջ նախադասությունը. դրանից առաջ է եկել լինէր ընդմիջարկությունը, և ամեն ինչ դարձել է անհասկանալի»։ Կարծում ենք, որ Մեյեի վերականգնած բնագիրը շատ ավելի հստակ է, քան համահավաքը։*

14. V 69.26, bS 83.14—15 ...որ նստէր ի մեծ գահոյս յայսմ.— Մեյե՝ «ներգոյականի համար (ի) գահոյ բնթերցվածն ուղիղ չէ։ Ուրիշ ձեռագրեր, ըստ V-ի, ունեն (ի)գահս և (ի)գահիս։ Ո՞րն ընդունել»։ Համահավաք բնագրում կարդում ենք ի գահոյս. ըստ ՆՀՐ և Առձեռն բառարանների՝ գահ գոյականի թեք ձևերն են -ու կամ -ոյ, -ուց. և -ի, -իցֈ Ուստի այստեղ ճիշտ կլիներ ի գահի կամ, հազվադեպ, ի գահ։

15. V 72.29, bS 86.24—87.1—2 Որպէս զի չիք յանիրաւութենէ արդարութիւն, այսպէս և ոչ (V չիf և ոչ)ի սուտենէ ճշմարտութիւն, ոչնոյնպէս և ի խոռվասէր մտաց՝ ակնկալութիւն խաղաղութեան.— Մեյեն գտնում է, որ մեր ընդ-

---

18 *Անկախ Մեյեի դիտողությունից և նրա առաջարկած ուղղումներից նշենք, որ (զ)առաքինեացն և (զ)չեաս կացելոցն սեռականները փոխանակ սեռականներ են. ըստ այժմ դրանք չպետք է ընդունած լինեին զ նախդիր, քանի որ դրանց ներառած հատկացյալը՝ ամբաստանութիւն, ուղղական հոլով է։ Այս այսպես է, եթե ընդունում ենք համահավաք բնագրի բնթերցվածը. սակայն ստորև կտեսնենք, որ Մեյեն վերականգնում է նախադասությունը և բացատրում զ-ի անհրաժեշտությունը դրանում։*

19 *Պարսիկ գերիներից մեկին։*

20 *Քառակուսի փակագծերի մեջ առնված բառերը Մեյեն առաջարկում է հանել բնագրից որպես բնդմիջարկություն։*

21 *Տե՛ս ծանոթ. 18. ըստ Մեյեի խմբագրմանը՝ զառաքինեացն և զչեաս կացելոցն փոխանակ սեռականները բերականորեն հիշտ կերպով են ընդունել զ նախդիրը որպես ուղիղ խնդիրներ ցուցիչ ստորոգյալի. դրանք այս դեպքում ներառել են զմիաբան ամբաստանութիւն հատկացյալը, որը նույնպես ուղիղ խնդիր է նույն ստորոգյալի։*

ցծած և ոչ-ը ավելորդ է. «և ոչ-ը, որ ավելացված է A-ում, խախտում է նախադասության համաչափությունը, որն ունի երեք մաս նույն պլանի վրա, և ոչ մի համեմատություն, ինչպես ցույց է տալիս և ոչ-ը. սոյնպէս-ով ներմուծված 3-րդ մասը ոչ մի կապակց չի բողնում»: Տասնչորս ձեռագիր չունեն այս և ոչ-ը, իսկ ինը ձեռագիր՝ այսպէս-ը. և իրոք, առանց դրանց էլ նախադասությունը միանգամայն կանոնավոր կառուցվածք կունենար և կնշանակեր. «ինչպես որ անիրավությունից արդարություն չկա, սուբյունից՝ ճշմարտություն, նմանապես խռովասեր մարդից՝ խաղաղության ակնկալություն»: Նախադասության առաջին երկու մասերում ասվածներն իմաստաբանական հիմք են ծառայում, որպեսզի հայերը չհավատան Հոգևկրթի Բողոքյան կամ նրման հրովարտակին, նրիշնի բառերով՝ խռովասեր մարդի խաղաղություններ:

* * *

Մեզնի այս դիտողությունները հրատարակության պատրաստելիս մենք առաջնորդվել ենք նրա հետևյալ սկզբունքով, որ նա հաճախ է կրկնել իր գրախոսականներում. «Իմ նպատակը միշտ էլ եղել է բանավիճեր հարուցել»:

М. П. МИНАСЯН

ЗАМЕЧАНИЯ МЕЙЕ О «ПОСЛАНИИ» ПАРПЕЦИ И ТРЕТЬЕЙ ГЛАВЕ «ИСТОРИИ» ЕГИШЕ

Р е з ю м е

От известного французского арменоведа А. Мейе остался ряд филологических заметок о текстах «Послания» Лазаря Парпеци и «Истории» Егише.

В данной статье автор сопоставляет эти замечания с научно-критическими текстами вышеупомянутых историков, отмечает научную ценность работы Мейе для уточнения отдельных разделов этих памятников V века.

M. P. MINASSIAN

REMARQUES INEDITES DE MEILLET SUR LES TEXTES DES HISTORIENS ARMENIENS LAZARE DE P'ARPI ET ELISEE

En 1965, Mme Meillet a fait envoyer à Erévan de nombreuses notes de son mari qui sont conservées au Musée Littéraire et Artistique d'Erévan. L'auteur de l'article a trouvé des remarques inédites, personnelles, sur le texte de la „Letire de Lazare de P'arpi à Vahan Mamikonian" et sur le troisième chapitre de „L'Histoire de Vardan et de la guerre des Arméniens" d'Elisée. En présentant plusieurs de ces remarques et les comparant aux éditions critiques des deux historiens, l'auteur montre l'importance du travail de collation accomplie par Meillet, pour une meilleure lecture des passages en question.

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌՔՆԵՐ
ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ—«ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ»
ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ
ԵՐԵՎԱՆ № 9 1969

ԽՈՍՐՈՎ ԹՈՐՈՍՅԱՆ

ՍԵԲԵՈՍ ՊԱՏՄԻՉԸ ԵՒ ՆՐԱ ԵՐԿԸ*

Միջնադարյան մեր պատմիչներից Առաքել, Սամվել և Մխիթար Անեցիների, Կիրակոս Գանձակեցու և Մխիթար Այրիվանեցու հաղորդած տեղեկություններից դիտենք, որ ունեցել ենք մի պատմիչ՝ Սեբեոս անունով, որը գրել է «Հերակլի պատմությունը»: Առաքելն, օրինակ, իր աղբյուրների շարքում նշում է. «Պատմութիւն Հերակլի, որ ի Սեբէոսէ եպիսկոպոսէ ասացեալ»: Նույն փաստը հաղորդված է միջնադարյան մատենագիտական մի քանի ցանկերում ևս:

Սեբեոսի «Պատմութիւն ի Հերակլն» գործը, սակայն, համարվում էր կորած: Անցյալ դարում, Հովհաննես Շահխաթունյան եպիսկոպոսը էջմիածնի Մատենադարանի ձեռագրերից մեկում հանդիպում է պատմական մի գրվածքի՝ անվերնագիր և առանց հեղինակի անվան: Ծանոթանալով նորահայտ այդ բնագրին, Հ. Շահխաթունյանը հանգում է այն եզրակացության, որ դա Սեբեոսի կորած Պատմությունն է: Իր համոզման համաձայն էլ նա ձեռագրի վրա մակագրում է. «Պատմագիրք Սեբէոսի ի Հերակլն»: Այս ձեռագիրն ընդօրինակված է եղել 1568 թվականին, «ի տուրս և տիեզերական ուխտն Մարմաշինու վանաց, ձեռամբ յոգնամեղ և անարդիւն գրչի տէր Յուսիկ կոչեցելոյ»[1]: Հ. Շահխաթունյանի մակագրությունը կրող այս ձեռագիրը կորել է: Հ. Շահխաթունյանի կողմից Սեբեոսի Պատմություն համարված բնագրի այժմ հայտնի ձեռագրերից հնագույնը մեր Մատենադարանում պահվող № 2639 ձեռագիրն է, ընդօրինակված Բաղեշի Ամրդոլու վանքում, 1672 թվականին: Պատմության մյուս բոլոր ձեռագրերը, որոնց հիմքը № 2639 գրչագիրն է, նորագույն արտագրություններ են և եթե ունեն վերնագիր և հեղինակի անուն, այն գրել են գրիչները, հետևելով Հ. Շահխաթունյանին[2]:

Հ. Շահխաթունյանի կողմից Սեբեոսի Պատմություն համարված բնագիրը առաջին անգամ հրատարակել է Թադեոս Միհրդատյանը, Կ. Պոլսում, 1851 թվականին: Հետևելով Հ. Շահխաթունյանին կամ իր համոզմամբ, Թ. Միհրդատյանը ևս նորահայտ բնագիրը համարել է Սեբեոսի երկը և հրատարակել է «Պատմութիւն Սեբէոսի եպիսկոպոսի ի Հերակլն» վերնագրով: Այս բնագիրը նույն վերնագրով և դարձյալ որպես Սեբեոսի Պատմություն, երկրորդ անգամ հրատարակել է Ք. Պատկանյանը 1879 թվականին, Պետերբուրգում: 1862 թվա-

---

* *Հրապարակելով սույն հոդվածը, խմբագրությունը համոզված է, որ մտքերի անկաշկանդ փոխանակությամբ հնարավոր կլինի պարզել Սեբեոսի «Պատմության» հետ առնչվող վիճելի հարցերը:*

1 *Պատմութիւն Սեբէոսի եպիսկոպոսի ի Հերակլն, հրատարակություն Թ. Միհրդատյանի, Կ. Պոլիս, 1851, Կանխաբանութիւն, էջ ժ:*

2 *Մանրամասն տե՛ս Սեբէոսի եպիսկոպոսի Պատմութիւն, հրատարակություն Ստ. Մալխասյանցի, Երևան, 1939, Առաջաբան: Այսուհետև՝ ՍեՊ:*

կանին Պետերբուրգում Ք. Պատկանյանը հրատարակից բննվող բնագրի ռուսերեն իր թարգմանությունը։ Թարգմանությանը կցած փոքրիկ առաջաբանով նա ակիզը դրից մի մեծ բանավեճի։ Հարցի էությունը այս է. նորահայտ բնագիրը հրատարակելիս Ք. Մխրդատյանը իր կողմից Պատմությունը բաժանել է երեք դպրությունների՝ Ա, Բ և Գ։ Ա և Բ դպրությունները վերաբերում են Հայկի ու Բելի առասպելին, Բագրատունիների և Մամիկոնյանների ծագմանը, հայ, պարթև և այլ թագավորների համաժամանակյա ցանկերին։ Գ դպրությունը շարադրում է Հայաստանի, Պարսկաստանի ու Բյուզանդիայի պատմությունը 5-րդ դարից մինչև արաբական առաջին արշավանքները։ Նշված առաջաբանում Ք. Պատկանյանն այն կարծիքը հայտնեց, որ Ա և Բ դպրությունները Սեբեոսի գրչին չեն պատկանում։ Սեբեոսի գործ նա համարեց միայն Գ դպրությունը։ Ըստ այսմ, նա փոփոխության ենթարկեց Պատմության՝ իր կողմից հրատարակած հայերեն բնագիրը։ Այս հրատարակության մեջ Պատմությունն ունի հետևյալ կառուցվածքը. Ա դպրություն՝ առանց հեղինակի անվան, Բ դպրություն՝ առանց հեղինակի անվան և Գ դպրություն՝ հեղինակի անունով՝ «Պատմութիւն Սեբէոսի եպիսկոպոսի ի Հերակլն»։ Ք. Պատկանյանի առաջաբանից հետո Սեբեոսի շուրջ հսկայական գրականություն ստեղծվեց։ Այդ ամբողջ գրականությունը նվիրված է Ա և Բ դպրություններին։ Գիտնականները վիճել են հիմնականում մի հարցի շուրջ. ո՞ր դարի գործեր են Ա և Բ դպրությունները և ո՞վ է դրանց հեղինակը կամ հեղինակները։ Սկսած 1851 թվականից, երբ հրատարակվեց Սեբեոսի Պատմությունը, մինչև մեր օրերը գիտնականներից ոչ ոք չի կասկածել, որ Գ դպրությունը Սեբեոսի երկն է, նրա «Պատմութիւն ի Հերակլն» գործը։

Սեբեոսի Պատմությունը, բացի ռուսերեն երկու հրատարակություններից (վերջինը՝ Ստ. Մալխասյանցի ձեռքով), թարգմանվել ու հրատարակվել է նաև ֆրանսերեն ու գերմաներեն և այսպիսով գիտական լայն շրջանառության մեջ մտել նաև Եվրոպայում։ Եվրոպացի գիտնականները ևս քիր ու գեմ արտահայտվելով Ա և Բ դպրությունների Սեբեոսին պատկանելու հարցի շուրջ, չեն կասկածել, որ Գ դպրությունը Սեբեոսի «Պատմութիւն ի Հերակլն» գործն է։ Այդուհանդերձ, որքան մեզ հայտնի է, ոչ ոք չի հաստատել, չի ապացուցել, համակապես չի քննել, թե իրո՞ք Շահխաթունյանի գտած անվերնագիր ու անհղինակ գործը Սեբեոսի Պատմությունն է։ Այդ բացն զգացել է ակադ. Ստ. Մալխասյանցը և փորձել է վերացնել։ 1939 թվականին նա ի նորո հրատարակում է Սեբեոսի Պատմությունը։ Առաջաբանում Ստ. Մալխասյանցը գրում է. «Շահխաթունյանի ենթադրությունը, թե յուր գտած պատմական գրվածքն իրոք Սեբեոսի Պատմությունն է՝ արդարանում է մի բանի կողմնակի փաստերով։ Ոչ մի ուրիշ հին հայ հեղինակ այնպես մանրամասն չէ գրել Հերակլի արշավանքների պատմությունը՝ ինչպես այս գրվածքը, և վերոհիշյալ միջնադարյան հեղինակները Սեբեոսին են վերագրում «Պատմութիւն ի Հերակլն»։ Մյուս կողմից՝ այդ միջնադարյան հեղինակները Սեբեոսին կոչում են եպիսկոպոս, և արդարև, յոթներորդ դարի կեսերին մոտ, ուրեմն Հերակլի արշավանքների ժամանակ, Հայաստանում ապրել է մի ոմն եպիսկոպոս Սեբեոս անունով, որը մասնակցել է Դվինի եկեղեցական ժողովին և յուր անունն ստորագրել է «Տէր Սեբէոս եպիսկոպոս Բագրատունեաց»։ Որ հենց այս Բագրատունյաց եպիսկոպոս Սեբեոսն է Պատմության հեղինակը՝ պարզ երևում է այն մեծ ուշադրությունից, որ պատմիչը դարձնում է Բագրատունյաց իշխանների գործերի վրա և այնպես

սիրով ու մանրամասն նկարագրում: Ուրիմն ոչ մի տարակույս չէ մնում, որ ներկա պատմական գրվածքը Սեբեոսինն է»[3]: Ակադ. Ստ. Մալխասյանցը հենվում է մի քանի կողմնակի փաստերի վրա, բայց անում է ամեն մի տարակույս բացառող եզրակացություն:

Այսպիսին էր իրերի վիճակը մինչև 1965 թվականը, երբ լույս տեսավ Գ. Աբգարյանի «Սեբեոսի պատմությունը» և Անանունի առնդծվածը» ուսումնասիրությունը: Այս աշխատությունը կազմված է առաջաբանից և երեք գլուխներից կամ բաժիններից՝ 1. Սեբեոս ինչ խոսրով, 2. Անանունի հատվածը և նրա հորինման ժամանակը, 3. Բնագրի վերականգնում:

Յուրաքանչյուր ուսումնասիրություն այս կամ այն չափով իր մեջ պարունակում է և չի կարող չպարունակել բանաքաղություն, որովհետև ամեն մի ուսումնասիրող հենվում է նաև նախորդ հետազոտողների գործերի վրա: Բայց այլ բան է, երբ հենվելով նախորդ ուսումնասիրությունների վրա, հայագիտական այս կամ այն հարցը դիտվում է նոր կողմից, հարստացվում են առկա դիտելիքները, նոր խոսք է ասվում, բայց այնպիսի մի նոր խոսք, որ ճշմարտություն է արտահայտում կամ կարևոր քայլ է դառնում դեպի ճշմարտությունը և բոլորովին այլ բան է, երբ նախորդ ուսումնասիրությունների եզրակացություններն ու փաստերը առանց կրկնվում են և ներկայացվում որպես ինքնուրույն հետազոտություն[4]: Քննարկվող աշխատության նշված մասի հիմնա-

---

3 ՍԵՊ, էջ 62: Ընդգծումները մերն են:

4 Սեբեոսի Պատմության մեջ կարդում ենք. «Սերեալ բազմացան յոյժ, և եղեն յաղթ մեծ ի Մամիկոնեայ և ի Կոնակայ» (ՍԵՊ, էջ 13): Գ. Աբգարյանը գրում է. «Պետք է ուղղել՝ «...ի Մամիկայ և ի Կոնակայ» («Սեբեոսի պատմությունը» և Անանունի առնդծվածը», Երևան, 1965, էջ 157: Այս գրքից կատարված միջբերումների էջերը այսուհետև ցույց կտրվեն տեքստում, փակագծերի մեջ): Ընթերցողը հավատում է և իրավունք չունի չհավատալու, որ այս ուղղումը իրեն՝ Գ. Աբգարյանի սեփականն է, որովհետև այս ուղղմանը նվիրված 24 տողանոց բաժնում նա բացարձակապես ոչ մի խոսք, ոչ մի ակնարկ չի արել նախորդ ուսումնասիրողների մասին: Բայց ահա, Գ. Աբգարյանին շատ լավ ծանոթ, նրա կողմից բազմիցս վկայակոչված Ն. Ադոնցի մի աշխատության մեջ կարդում ենք. ... Читать последние слова отрывка так: «եղեն յաղթ մեծ ի Մամիկայ (не Մամիկոնայ, как в печ.) և Կոնակայ,...». (Адонц Н., Начальная история Армении у Себеоса в ее отношениях к трудам Моисея Хоренского и Фауста Византийского, „Византийский временник", т. VIII, вып. 1—2, СПб, էջ 66, ծանոթագր. 1):

Սեբեոսի Պատմության մեջ կարդում ենք. «Եւ եղև ոչ ի կամայական պիտոյից վարժ խուչակի զանստարագրել ժամանակ և ընտրեի բաջացն ձեռնարկելով դրոշմել վիպասանութիւնս...» (ՍԵՊ, էջ 1): Գ. Աբգարյանը գրում է. «Պետք է ուղղել՝ «զանստորագրեալ... Թյուրիմացությունը առաջացել է «զանստորագրեալ» բառի ո տառը ա-ի հետ շփոթելու և սկզբնական բնագրում բառի վրա եղած հապավման նշանն անտեսելու հետևանքով: Այս պատահական գրչական վրիպակը առիթ է տվել զանազան ենթադրությունների: Բառը արթագրելու համար առաջարկված ԲՈԼՈՐ փորձերը հեռացել են բնագրից (ընդգծումը մերն է—Խ. Թ.): Այսպես. առաջարկվել է «զանստորագրեալ»-ի փոխարեն կարդալ «զայն ստորագրել» (Մխիթարյան, Մատ), «զայն ստորագրեալ» (Մխիթարյան,) «ջան ստորագրել» (Մխիթարյան, Պատկանյան, Ն. Ջնտոյան, Գ. Տեր-Պողոսյան), «անստեիւր գրել» (Տեքթեր), «զանստա գրեալ» (Մատիկյան), «զանստոյգն նկարագրել» (Ակինյան), «զանցս տարագրեալ» (Ա. Ջամինյան) և այլն: Որ ազավաղված բառում թաքնված է «ստորագրեալ» բառը և որ բնագրի ավյալ հատվածում միայն այդ բառն է տպասելի՝ երևում է նրանից, որ գրեթե բոլոր բանասերները որպես ուղղում առաջարկել են հենց այդ բառը կամ՝ նույնիմաստ «նկարագրել», «գրել» բառերը: Այսպես միաձայն դանվելով «ստորագրել»-ի դեպքում՝ բանասերները խիստ անհամերաշխ են եղել այդ բառի մյուս մասնիկի՝ զան-ի հարցում: Մատենադարանի № № 2867 և 3122 ձեռագրերի գրիչներն անցյալ դարում վերականգնել են բառը ուղիղ ձևը՝ «զանստորագրեալ»: Բառը ճիշտ են թարգմանել («неописанное время») Գր. Խալաթյանցը (Армянский эпос, стр. 73...), Ստ. Մալխասյանցը..., Հ. Մանանդյանցը..., (136—137)»

կան, գլխավոր միտքն այն է, որ Ա և Բ դպրությունները Սեբեոսի Պատմությանը չեն պատկանում: Այդ միտքն առաջին անգամ արտահայտել ու փաստարկել է Ք. Պատկանյանը. նրանից հետո՝ Լանգլուան, Հյուբշմանը, Գուտշմիդը, Գարագաշյանը, Զարբհանալյանը, Բաումգարտները, Ֆեյֆերը, Մառը, Խալաթյանցը, Թուխյանը, Տեր-Սահակյանը, Մատիկյանը և ուրիշներ: Գիտության մեջ քիչ չեն դեպքերը, երբ թեև շատերն են արտահայտում ու պաշտպանում միևնույն տեսակետը, այդուհանդերձ այն մնում է վիճելի, հիպոթետիկ: Եվ երբ, այս պարագային, մեկը նոր տվյալներով, հիմնավոր ու ծանրակշիռ նոր փաստերով հաստատում է արդեն գոյություն ունեցող, բայց վիճելի տեսակետը, դրանով, անշուշտ, լուրջ ծառայություն է մատուցում գիտությանը, որովհետև, այնուամենայնիվ, կարծիք հայտնելը ավելի դյուրին է, քան այն ապացուցելը: Քննարկվող ուսումնասիրությունը, գո՞ւցե, արտահայտում է վերջին դեպքը: Ամեննևին ոչ: Գ. Աբգարյանը հոլովում է հիմնականում նույն փաստերն ու փաստարկները, որ շրջանառության մեջ են դրել վերը նշված ուսումնասիրողները:

Անշուշտ հապավումով մենք բերեցինք այն ամբողջ բաժինը, որ Գ. Աբգարյանը նվիրել է այս ուղղմանը: Այստեղից տեղեկանում ենք, որ բառը արբագրելու համար առաջարկված բոլոր փորձերը հետացել են բնագրից: Այլ կերպ՝ Գ. Աբգարյանը ուղղակի ասում է, որ իրենից առաջ ոչ մի ուսումնասիրող, բացարձակապես ոչ մեկը, չի առաջարկել «զանստարագրել»-ը կարդալ «զանստորագրեալ», և որ Գ. Խալաթյանցը միայն հիշտ է թարգմանել, այսինքն՝ «զանստագրել»-ը հասկացել է որպես «չնկարագրված ժամանակ», բայց նա էլ չի առաջարկել Գ. Աբգարյանի կողմից ընդունված ընթերցումը: Բայց ահա ինչ է գրում Գ. Խալաթյանցը իր աշխատության հենց այն էջում, որը վկայակոչում է Գ. Աբգարյանը. «Я предлагаю զանստարագրել читать «զանստորագրեալ» или «զանստորագրել» (ժամանակ), с титлом над окончанием причастия прошед. времени, что очень обычно в рукописях. Это значит — „неописанное время"... Титло над последним слогом զանստորագրել, по неграмотности переписчиков, могло со временем отпасть...» (Г. Халатянц. Армянский эпос в Истории Армении Моисея Хоренского. ч. I. Москва. *1896, էջ 73, ծանոթագրություն № 1*):

Բացի դրանից, Ք. Մինրդատյանը առաջարկել է քննելի բառի չորս ընթերցում: Գ. Աբգարյանը բերել է երեքը, մեկը՝ ոչ: Ինչո՞ւ: Պարզվում է, որ դա հենց այն ընթերցումն է, որն ընդունել է Գ. Աբգարյանը: Մինրդատյանը գրում է. «Յոյժ հաւանական երևի լինել «Զանստորագրեալ կամ զայն ստորագրեալ...» (Պատմութիւն Սեբէոսի եպիսկոպոսի ի Հերակլն, Կ. Պոլիս, *1851, էջ 15*, ծանոթ.: Այս փաստը նշել է նաև դր. Մևորոպ ծ. վ. Գ. Գրիգորյանը «Հանդէս ամսօրեայ»-ի *1965* թ. հոկտեմբեր—դեկտեմբեր ամիսների համարում տպագրված իր գրախոսականում, որ արված են բննադատական բազմաթիվ այլ դիտողություններ ևս):

Պատմության մեջ կարդում ենք. «Յուրից համառաւտիւք զարդեաց ժամանակացս զաղետից վերաբերութեան» (ՍԵՊ, էջ 1): Գ. Աբգարյանը գրում է. «Պետք է ուղղել՝ «վերաբերութիւն»: ...Բառն ունի մի քանի նշանակություն, որոնցից մեկն է՝ «ի վերայ բերումն, դալուստ ի վերայ, յարձակումն սաստիկ... վրա գալ, հարձակուել... Բնագրում գործածված «զաղետից վերաբերութիւն» արտահայտությունը ունի այս իմաստը և նշանակում է «աղետների վրա գալը... աղետների կատակումը»... Ն. Մառը..., Գ. Խալաթյանցը..., Ն. Ակինյանը..., Հ. Մանանդյանը..., բնտրել են բառի այս նշանակությունը: «Սեբեոսի Պատմության» տվյալ հատվածի բոլոր թարգմանիչները (ընդգծումը մերն է—Ն. Թ.) սխալ են վերծանել բնագիրը...» (էջ 138—139): Գ. Աբգարյանի ասածից տեղեկանում ենք, որ Մառը, Խալաթյանցը, Ակինյանը, Մանանդյանը «զաղետից վերաբերութեան» արտահայտությունը հասկացել են ոչ թե որպես «отношение» (Պատկանյան), Լանգլուա), «обстоятельства» (Մալխասյանց), այլ որպես «աղետների վրա գալը»: Գ. Աբգարյանը ընդհանուր առմամբ հիշտ է: Նրա ասածից, դարձյալ, հետևում է, որ մյուս ուսումնասիրողների նման Ն. Ակինյանը ևս «զաղետից վերաբերութեան» արտահայտությունը հասկա-

Այդպիսին է իրերի վիճակը քննարկվող ուսումնասիրության նաև մյուս կարևոր հարցերի կապակցությամբ, ինչպես օրինակ՝ Բուզանդի Պատմության հորած համարվող դպրությունների վերաբերյալ և այլն։

Առհասարակ պետք է նշել, որ այսօր պայմանները դեռ հասունացած չէին Ա և Բ դպրությունների հարցը նորից քննության առարկա դարձնելու համար։ Հայագիտությանը ցարդ հայտնի փաստերը հնարավորություն չեն տվել վիճող կողմերին վերջնականապես ընդունելի դարձնելու իրենց տեսակետները։ Այս պայմաններում Ա և Բ դպրությունների հարցին կարելի կլիներ անդրադառնալ միայն այն դեպքում, եթե հայտնաբերվեին այս կամ այն տեսակետը հաստատող նոր ու վճռական ապացույցներ։ Հակառակ պարագային, նշված հարցին նվիրված ամեն մի ուսումնասիրություն չէր կարող չդառնալ արդեն եղածի, արդեն հայտնիի կրկնություն, ինչ և պատահել է ներկա դեպքում։

ցել է որպես «աղետների վրա գալը», որ իրենից առաջ ոչ ոք, այդ թվում և Ն. Ակինյանը, չի առաջարկել «վերաբերութիւնան»-ը դարձնել «վերաբերութիւն»։ Գ. Աբգարյանը իրականությունը չի ներկայացնում։ Ն. Ակինյանը Սերեոսի Պատմությանը նվիրված իր արժեքավոր ուսումնասիրության մեջ մանրամասն քննում է Պատմության բնագիրը և գտնում, որ «ակզբնավորությունը կարոտ է սրբագրության»։ Այնուհետև, Ն. Ակինյանը «Սկզբնավորության վերակազմված բնագիրը» խորագրի տակ ներկայացնում է Պատմության սկիզբը, իր կողմից վերականգնված ձևով. «...և ցուցից համառաւտիւք զարդեաց ժամանակացս զաղետիցս վերաբերութիւն...» (Ն. Ակինյան, Սերեոս եպիսկոպոս Բագրատունեաց և իր Պատմութիւնն ի Հրակղ, Մատենադարանի հետազոտութիւններ, հատ. Բ, Վիեննա, 1924, էջ 76)։ Ըստ որում, վերջին բառի վրա նշան է դրել և տարբերվածքների բաժնում ցույց տվել, որ տպագիրներն ունեն «վերաբերութիեան», որը ճիշտ ձևը չէ։

Ինչպես տեսանք, Գ. Աբգարյանը գրում է նաև, որ Պատմության «տվյալ հատվածի բոլոր թարգմանիչները սխալ են վերծանել բնագիրը»։ Բայց ահա, Պատմության տվյալ հատվածի թարգմանիչներից մեկը՝ Գ. Խալաթյանցը, Գ. Աբգարյանից դեռ 70 տարի առաջ տվյալ հատվածը վերծանել է հենց այն ձևով, որն ընդունել է Գ. Աբգարյանը։ Գ. Խալաթյանցը թարգմանել է. „и укажу вкратце постигающие нас бедствия" (Армянский эпос, էջ 73)։

Պատմության մեջ կարդում ենք. «զամս և զաւուրս հինգ թագաւորացն յիշատակիւմ» (ՍԵՊ, էջ 1)։

Համեմատենք Գ. Աբգարյանին իր նախորդների հետ.

Գ. Աբգարյան

«Հինդ» (էջ 1, տ. 14)։ Պետք է ուղղել՝ «հին» (Այսպես պետք է ուղղել նաև էջ 2, տ. 3)։

Այս բառը հանդիպում է «Սերեոսի պատմությանը» կից հատվածի սկզբում, որտեղ հեղինակը խոստանում է նկարագրել «զամս և զաւուրս հին թագաւորացն», իսկ քիչ հետո (էջ 2, տ. 8) «զամս առաջին թագաւորացն Հայոց»։ Հին և առաջին բառերն այստեղ համատոր նշանակություն ունեն...

Այս բառի սրբագրության մասին մանրամասն խոսել ենք մեր ուսումնասիրության նախորդ գլուխներում (էջ 139)։

Հ. Աճառյան

... Յայտնապէս հատուածն այլայլութիւն կրած է. բնագիրը պիտի լինէր հին թագաւորացն, և երկրորդ գրիչ մը հինգ օրինակած է սխալելով. ինչ որ կը տեսնենք երբ համեմատենք նոյն հատուածին երրորդ կրկնութիւնը՝ գործածել է նոյն էջ. «Գրեցի ի վերայ սրբոցն այսորիկ... զամս առաջին թագաւորացն Հայոց»։ Ուր՝ առաջին = հին (Հայկական—«Բազմավէպ», 1897, էջ 169)։

Հ. Աճառյանի «Ուր՝ առաջին = հին»-ը դարձել է «հին և առաջին բառերն այստեղ համատոր նշանակություն ունեն»։ Եթե չլիներ ձևակերպման այս մեծ տարբերությունը, պիտի խոսք լիներ երկու միջբերումների տատոգի նույնության մասին։ Գ. Աբգարյանի «մեր ուսումնասիրության նախորդ գլուխներում» ևս նույնիսկ ակնարկ չկա Հ. Աճառյանի այս հոդվածի մասին։

Ասացինք, որ Գ. Աբգարյանի ուսումնասիրությունն ունի նաև ինքնուրույն մաս: Հիմնականում դա առաջին գլուխն է՝ «Սեբեոս թե՞ Խոսրով» վերնագրով: Այստեղ Գ. Աբգարյանը հայտնում և «Հաստատում» է նոր տեսակետ: «Ուսումնասիրության գլխավոր արդյունքները» վերնագրով եզրափակիչ էջում նա գրում է. «1. Հայտնաբերված է VII դարում գրված մի խոշոր դասական գործի հեղինակ՝ Խոսրովը, որը գրել է VI—VII դարերի Հայաստանի և հարևան երկրների պատմությունը: Նրա արժեքավոր աշխատությունը մինչև այժմ սխալմամբ վերագրվել է ուրիշ հեղինակի՝ Սեբեոսին: 2. VII դարում Հայաստանում գրվել է բյուզանդական կայսր Հերակլի գործունեությանը նվիրված մի պատմություն, որի հեղինակը եղել է հայ պատմիչ Սեբեոսը: Պարզվում է, որ այս գիրքը մեզ չի հասել» (էջ 205—206): Այսպես ուրեմն, ուսումնասիրության գլխավոր արդյունքներից մեկը հանդիսացող այս վճռական ու վերջնական եզրակացությամբ, ցարդ Սեբեոսի անունով հայտնի Պատմության հեղինակը Սեբեոսը չէ, Խոսրովն է: Սեբեոսի Պատմությունը մեզ չի հասել: Մեր քննության առարկան, ահա, այս հարցն է:

Գ. Աբգարյանի տեսակետը քննության է ենթարկվում, հարկավ, ոչ այն պատճառով, որ նա փորձում է վերանայել ընդունվածը: Վերն ասացինք, որ Հ. Շահխաթունյանի տեսակետը ոչ ոքի կողմից հիմնավորապես չի հաստատվել, չի ապացուցվել, ուստի այն, վաղ թե ուշ, քննության առարկա էր դառնալու: Թեև ընդունված, բայց դեռ չապացուցված տեսակետը վերանայելու, այն հաստատելու կամ հիմնավորապես մերժելու Գ. Աբգարյանի փորձը միայն ողջունելի կլիներ, եթե անհիմն չլիներ:

Վ. ԲԱՂԻՇԵՑՈՒ ՅՈՒՅԱԿԸ ԵՎ № 2639 ՁԵՌԱԳԻՐԸ

Մեզ զբաղեցնող խնդրին, ինչպես ասացինք, Գ. Աբգարյանը նվիրել է իր ուսումնասիրության առաջին գլուխը՝ «Սեբեոս թե՞ Խոսրով» վերնագրով, որը ներքուստ բաժանվում է երկու մասի. սկզբում (էջ 15—21) բանասերը փորձում է ապացուցել, որ «Հերակլի պատմության» մասին պատմիչների հաղորդած տեղեկությունները չեն համապատասխանում Սեբեոսի անունով ցարդ հայտնի երկի բովանդակությանը, հետևապես ներկա Սեբեոսը իրական Սեբեոսը չէ: Այնուհետև, Գ. Աբգարյանը ջանում է հիմնավորել, որ այդ գործի իրական հեղինակը Խոսրովն է: Սկսենք այս վերջին կետից և մեկ առ մեկ ծանոթանանք բանասերի փաստարկներին:

որի ընդարձակված կրկնությունն են Գ. Աբգարյանի «սույն ուսումնասիրության նախորդ գլուխները»:

Մենք կարող ենք շարունակել այս կարգի օրինակների թիվը, որովհետև բերվածով բնավ չի սպառվում դրանց քանակը, բայց խնայենք ընթերցողի ժամանակը: Ասենք միայն, որ Գ. Աբգարյանի առաջարկած՝ բնագրի 46 ուղղումներից շատերը առաջարկված են եղել նախորդ ուսումնասիրողների կողմից: Ինքնուրույն ուղղումները երկրորդական-երրորդական նշանակություն ունեցող ընթերցումներին են վերաբերում. մեկը, սակայն, շոշափում է շատ կարևոր հարց: Գ. Աբգարյանն առաջարկում է բնագրի «տամ ձեզ օգնութիւն հոգի» արտահայտությունը կարդալ «տամ ձեզ օգնութիւն 70 000 հոգի»: Սրա մասին մենք դրել ենք առանձին. հուսանք, որ այն էլ կտպագրվի, իսկ մինչ այդ ասենք միայն, որ բնագրի տվյալ ընթերցումը անաղարտ է: Բնագրի ընթերցման իմաստը անմատչելի է մնացել, ուստի առաջարկված ընթերցումն է հենց ազատվում բնագիրը:

Նախ, ի՞նչն է առիթ կամ հիմք հանդիսացել Աբգարյանի համար Պատմության հեղինակ համարելու Խոսրովին: «Այս տեսակետից,— գրում է նա,— առանձին նշանակություն է ստանում քննարկվող գրվածքի մասին մի նորահայտ տեղեկություն, որը վերաբերում է Սեբեոսին վերագրվող բնագրի մայր ձեռագրին» (էջ 21):

Այդ տեղեկությունը կապված է Մաշտոցի անվան Մատենադարանի № 2639 ձեռագրի և վարդան Բաղիշեցու ցուցակի հետ, որոնց մասին անհրաժեշտաբար պետք է մի քանի խոսք ասել: № 2639 ձեռագիրը մեր բանասիրությանը հայտնի է շատ վաղուց և մանրամասնորեն նկարագրված է մի շարք անվանի հայագիտների կողմից, սկսած դեռ անցյալ դարից մինչև մեր օրերը (Միսբան, Ստ. Մալխասյանց, Ն. Ակինյան, Ե. Տեր-Մինասյան և այլք): Դա Սեբեոսի և Փարպեցու Պատմությունների մայր ձեռագիրն է, որի մեջ կան նաև Ագաթանգեղոս, Խորենացի, Եղիշե և այլն: Այս ձեռագիրը, ինչպես ասացինք, ընդօրինակվել է Բաղեշում՝ Ամրդոլու վանքում, 1672 թվականին: Այդ թվականից հետո Բաղեշի դպրոցի խոշոր գործիչներից մեկը՝ վարդան Բաղիշեցին կազմում է վանքում եղած ձեռագրերի ցուցակը, որի մեջ մեզ հետաքրքրող ձեռագրի բովանդակությունը ներկայացնում է այսպես (քաղում ենք այնքանը միայն, որ մեջ է բերել Գ. Աբգարյանը). «Ագաթանգեղ, Մովսէս, Եղիշէ, Ներսէսի պատմութիւն, Ղազարու Փարպեցոյ և Խոսրովու»[5]: Ձեռագիրն իր այսօրվա տեսքով, սակայն, Փարպեցու Պատմությունից հետո ունի երկու անխոցապիր բնագիր՝ Սեբեոսի Պատմությունը և «Մաշտոցի վարքը»: Այստեղ մոտենում ենք այն կետին, որը հանդիսանում է նորահայտ տեղեկությունը: № 2639 ձեռագիրը դիտողն անմիջապես կնկատի, որ վերջին պրակը, որը պարունակում է «Մաշտոցի վարքը», ձեռագրին է միացվել հետագայում, այն բանից հետո, երբ ձեռագրի մյուս՝ հիմնական պրակները արդեն ամփոփվել ու կարվել են կազմի մեջ: Պրակները միացնող թելերի և տեխնիկական այլ մանրամասների միջոցով, Գ. Աբգարյանը մի ավելորդ անգամ ևս հաստատում է, որ «Վարքը» պարունակող պրակը միացվել է № 2639 ձեռագրին հետագայում: Դա ճիշտ է, բայց տարօրինակ է, որ այստեղից Գ. Աբգարյանը եզրակացնում է, թե «Վարքը» ձեռագրին է միացվել անպայման այն բանից հետո, երբ Բաղիշեցին կազմել է իր ցուցակը: Դրանից հետո բանաւորը տրամաբանում է այսպես. Բաղիշեցու ցուցակում մեզ հետաքրքրող ձեռագիր-ժողովածուի հեղինակների շարքում վերջինը Խոսրովն է, իսկ ձեռագրում վերջին գործը («Մաշտոցի վարքը» հանելուց հետո) Սեբեոսի ընդունված Պատմությունն է, հետևապես այդ Պատմության հեղինակը Խոսրովն է (էջ 24—25): Խոսրովին պատմության հետ կապելու միակ փաստարկը, միակը, այն էլ ոչ թե փաստը, այլ փաստարկը, այս է:

Անհամոզիչ է այս բացատրությունը, որովհետև հենց բուն եղանակը, որով ղեկավարվում է Գ. Աբգարյանը՝ վարքը ձեռագրի կազմից հանելու միջոցով Խոսրովին Սեբեոսի Պատմության հեղինակ դարձնել, ինքնին, արդեն գիտական չէ: Ինչպես նշում է նաև Գ. Աբգարյանը, Բաղիշեցին իր ցուցակը կազմել է 1675—1704 թվականներին, իսկ ձեռագիրը գրվել է 1672 թվականին, այնպես որ 47-րդ պրակը կարող էր միացվել ձեռագրին և 1672, 1673, 1674 և

5 «Արարատ», 1903, էջ 179: Տե՛ս նաև Գ. Աբգարյան, «Սեբեոսի պատմությունը» և Անանունի առեղծվածը, էջ 22:

նույնիսկ 1705 թվականներին, այսինքն՝ թեև 1672 թվականից հետո, բայց այն տարիներին, որոնք ցուցակի ստեղծման հավանական թվականներն են։ Գ. Աբգարյանն, այսպիսով, չի կարողացել ապացուցել իրեն համար շատ կարևոր այն հանգամանքը, որ Վարքը ձեռագրին է միացվել ավելի ուշ, քան Բաղիշեցին կազմել է իր ցուցակը։ Անկախ Գ. Աբգարյանից, մենք հիմնավոր փաստեր ունենք պնդելու, որ այն ժամանակ, երբ Բաղիշեցին կազմում էր իր ցուցակը, Վարքը, իրոք, չկար ձեռագրի կազմում։ Վերը մենք մեջ բերեցինք Բաղիշեցու ցուցակի քննվող մասը, այն ձևով, սակայն, որ քաղել էր Գ. Աբգարյանը։ Իսկ այժմ անհրաժեշտություն ենք զգում ծանոթանալ հատվածին ամբողջությամբ։ Իր ցուցակի 12 թվահամարի տակ Բաղիշեցին գրանցել է. «ԺԲ. Մէկ Մովսէս պատմագիրք, որ կայ ի մէջ է պատմագիրՙ Ագաթանգեղ, Մովսէս, Եղիշէ, Ներսէսի պատմութիւն, Ղազարու Փարպեցոյ և Խորենու»[6]։ Ուշադրություն դարձնենք մեր կողմից ընդգծված բառերի վրա։ Ինչպես տեսնում ենք, Վարդան Բաղիշեցին շատ պարզ և ուղղակի ասում է, որ իր կողմից ընդհանուր անունով «Մովսէս պատմագիրք» կոչված ձեռագրում եղել է (կայ) «է պատմագիրք»՝ 7 Պատմություն, բայց, հակառակ հանվանն թվարկված է 6 գործ։ № 2639 ձեռագրում եղած գործերի քանակը ցույց տվող թիվը՝ 7-ը ստույգ է, որովհետև ցուցակի 34 թվահամարի տակ Բաղիշեցին գրանշել գրում է. «ԼԴ. ԺԲ դիրք այլ պատմագիրք, որոց յատկութիւն և զանազանութիւն այս է. երկոքեան այնոքիկ են, զոր յառաջագոյն գրեալ եմ ի կարգ մեծ գրեանցն ի միւս երես թղթիս. մինն մեծ Մովսէս պատմագիրՙ ն, որ է պատմագիր է...»[7]։

Այսպիսով, երբ Վարդան Բաղիշեցին կազմում էր իր ցուցակը, № 2639 ձեռագրում կար 7 գործ։ Եվ իրոք, եթե ձեռագրից հանենք Վարքը, կմնա ուղիղ 7 գործ՝ Ագաթանգեղոս (Դաշանց թղթով), Խորենացի, Մեսրոպ Վայոցձորեցի, «Սահակի Պատմություն», Եղիշե, Փարպեցի (Թղթով) և Սեբեոս։ Ուրեմն՝ այն ժամանակ, երբ Բաղիշեցին կազմում էր իր ցուցակը, Վարքը դեռ չէր միացվել № 2639 ձեռագրին և ձեռագրում վերջին գործը, իրոք, «Սեբեոսի Պատմությունն» էր։ Ինչպես տեսնում է ընթերցողը, ապացուցվեց հենց այն, ինչ շատ էր կամեցել, բայց չէր կարողացել անել Գ. Աբգարյանը։ Այդուհանդերձ, դա ոչ մի հիմք չի տալիս արհեստականորեն իրար միացնել, ինչպես անում է Գ. Աբգարյանը, ձեռագրի վերջում մնացած անխորագիր երկը Բաղիշեցու ցուցակում վերջինը նշված հեղինակի հետ և ստանալ Խորովի Պատմություն։

Գ. Աբգարյանը, պարզապես, մեխանիկական համադրություն է կատարել, որը ավելի դիպքում կայանում է նրանում, որ Բաղիշեցու ցուցակը տարածվում է № 2639 ձեռագրի վրա և ըստ հերթականության ցուցակի յուրաքանչյուր անուն համարվում է ձեռագրի յուրաքանչյուր Պատմության հեղինակ։ Այսպես. ցուցակի առաջին անունը՝ Ագաթանգեղոս, ձեռագրի առաջին Պատմության հեղինակ, ցուցակի երկրորդ անունը՝ ձեռագրի երկրորդ երկի և այսպես մինչև ցուցակի վերջին անունը՝ Խորով, ձեռագրի վերջին Պատմության (Սեբեոսի) հեղինակ։ Առհասարակ կարելի էր կիրառել այս եղանակը, բայց մի պայմանի անհրաժեշտ պահպանմամբ, որը սակայն, չի արել (կամ որի անհրաժեշտությունը չի կռահել) Գ. Աբգարյանը. պետք է նախապես անկեղծորեն

6 «Արարատ», 1903, էջ 179։

7 «Արարատ», 1903, էջ 179։ Տե՛ս նաև մեր Մատենադարանի ձեռագիր № 737, թ. 224ա, որտեղ ապագրի համեմատությամբ կան մեկ-երկու մանր տարբերություններ, ինչպես օրինակ՝ տպագիր՝ երկոքեան, ձեռագրում՝ երկոքինն։

Համոզմունք լիներ, որ Բաղիշեցին իր ցուցակում հեղինակներին թվարկել է խստագույնս այն հաջորդականությամբ, որ ունեն պատմությունները № 2639 ձեռագրում: Բայց, այդպե՞ս է արդյոք: Այդ տեսակետից անհետաքրքրական չի լինի, եթե № 2639 ձեռագրի բովանդակությունը համադրենք նրա մի քանի նկարագրությունների հետ:

№ 2639 ձեռագրի բովանդակությունը

№	Իրականում	Ըստ Բաղիշեցու	Ըստ Միսրանի[8]
1	Ագաթանգեղոս, Դաշանց քուղք, թ. 5ա—142ա	Ագաթանգեղոս	Ագաթանգեղոս Դաշանց քուղք
2	Խորենացի, թ. 143—244	Մովսես	Ներսեսի վարք
3	Մեսրոպ Վայոցձորեցի, թ. 245—270	Եղիշե	Խորենացի
4	«Պատմութիւն Սահակայ», թ. 270—281	«Ներսեսի Պատմություն»	
5	Եղիշե, թ. 281—356[9]	Փարպեցի	Եղիշե
6	Փարպեցի և Թուղք, թ. 364—486	Խորով	Փարպեցի և Թուղք
7	Սեբեոս, թ. 488—548		Սեբեոս
8	Կորյուն, թ. 548—562		Կորյուն

Ինչպես տեսնում ենք, ինչքան նկարագրություն, այնքան տարբերություն գործերի հերթականության մեջ[10]: Եվ հերթականության առաջին խախտողը եղել է հենց ինքը՝ Բաղիշեցին: Եթե Գ. Աբգարյանը, Բաղիշեցու ցուցակով, Փարպեցուց հետո նշված հեղինակին՝ Խորովին համարում է ձեռագրում Փարպեցու պատմությունից հետո դրված գործի հեղինակ, ապա նույն ցուցակի համաձայն, օրինակ՝ Խորենացուց հետո նշված հեղինակին՝ Եղիշեին, ինչո՞ւ չպետք է համարել ձեռագրում Խորենացու պատմությունից հետո դրված գործի՝ «Ներսեսի պատմության» հեղինակ: Ո՞րն է սկզբունքը, հերթականությո՞ւնը. այն խախտված է: Ակնհայտ է, որ Գ. Աբգարյանի սկզբունքը՝ մեխանիկական համադրությունը, անընդունելի է:

---

8 «Արարատ», 1891, էջ 148:

9 Ձեռագրի 356—363 թերթերի մի մասը մաքուր է, մյուս մասը պարունակում է հիշատակարան և նախորդ գործերում բաց թողնված որոշ հատվածներ:

10 Ձեռագրին լիովին համապատասխան նկարագրություն տվել է միայն Ս. Տեր-Մինասյանը: Տե՛ս Եղիշէ, Վասն Վարդանայ և հայոց պատերազմին, Երևան, 1957, էջ XXXIV:

Դիցուք, ապագա մի բանասեր, մեր № 2639 ձեռագրի շուրջ որոշ դատողություններ անելիս, ստիպված օգտվեր միայն Միաբանի՝ Վարդան Բաղիշեցուց շատ ավելի գիտակ ու հմուտ հայագետի նկարագրությունից, ճիշտ այնպես և ճիշտ նույն ոտիքով, որով Բաղիշեցու ցուցակին է դիմել Գ. Աբգարյանը: Վերջինիս նման մտածելով, նա պիտք է ասեր, որ Մխոթոս Վայոցձորեցու գրած «Ներսեսի վարքի» հեղինակը Խորենացին է, այն պատճառով միայն, որ ձեռագրում երրորդ գործը «Ներսեսի վարքն» է, իսկ Միաբանի ցուցակում երրորդ հեղինակը՝ Խորենացին: Իսկ ինչ արդյունքի կհասներ բանասերը, թվում է, պարզ է:

№ 2639 ձեռագրի բերված նկարագրությունները չեն տրվել խիստ գիտական ձեռագրացուցակների (օրինակ՝ Տաշյանի) սկզբունքով: Դրանք սովորական, պարզ նկարագրություններ են, որտեղ ձեռագրում եղած գործերի հաջորդականությունը տրված է, հայտնի չափով, պատահական հերթականությամբ: Վարդան Բաղիշեցու ցուցակում ևս, որը ոչ թե ձեռագրացուցակ է այսօրվա իմաստով, այլ սովորական մի գույքամատյան, № 2639 ձեռագրում եղած գործերը թվարկված են պատահական հերթականությամբ: Ուստի, չէր կարելի պատահական հանդամանքը հիմք դարձնել լուրջ եզրակացությունների:

Գ. Աբգարյանը գրում է, թե Բաղիշեցին էլ Սերեոսի Պատմության հեղինակ համարում է Խորովին, և ավելացնում. «Մեզ հայտնի չէ, թե Վարդան Բաղիշեցին որտեղից է վերցրել Խորովի անունը: Փաստն այն է, որ նա այդ անունը նշում է առանց կասկածի, որպես հայտնի իրողություն, մյուս նշանավոր պատմիչների հետ միասին» (էջ 25): Որ Բաղիշեցին նշում է Խորովի անունը առանց կասկածի, որպես հայտնի իրողություն, փաստ է, բայց թե Բաղիշեցին ևս հայտնի Պատմության հեղինակ համարում է Խորովին, սա արդեն Գ. Աբգարյանի ավելացրածն է: Ինչպես տեսանք, Բաղիշեցին գրում է, որ № 2639 ձեռագրում կա 7 գործ, բայց թվարկում է այդ գործերից միայն 6-ի հեղինակին: Դրանով Բաղիշեցին շատ պարզ ասում է, որ չգիտի 7-րդ գործի հեղինակին, իսկ 7-րդ գործը Սերեոսի Պատմությունն է: Արդեն այս հանդամանքը շատ լավ վկայություն է այն մասին, որ Բաղիշեցին Խորովին չի կապել Սերեոսի Պատմության հետ: Սակայն, այս դիտողությունը, հօգուտ Գ. Աբգարյանի, կարող ենք համարել չարված: Ամեն պարագայի, ձեռագրում եղած 7 գործերից մեկի հեղինակին Բաղիշեցին չգիտի: Սա անկասկած է, որովհետև վկայում է ինքը՝ Բաղիշեցին: Արդ, ձեռագրում եղած ո՞ր գործի հեղինակին չգիտի Բաղիշեցին: Ձեռագրում եղած 7 գործերից միայն երկուսն են անհեղինակ՝ «Սահակի Պատմությունը» (այս վերնագիրը մենք գործածում ենք որոշ վերապահումներով) և Սերեոսի Պատմությունը: Բաղիշեցու նշած Խորովը, ահա, այս երկու գործերից մեկի հեղինակն է: Բաղիշեցին, իհարկե, գիտեր, թե այդ գործերից որի հեղինակն է Խորովը: Ամբողջ հարցն այն է, որ մենք չգիտենք, թե Բաղիշեցին այդ գործերից որի հեղինակ է համարում Խորովին: Չգիտենք, որովհետև նրա ցուցակը այդ հարցին պատասխանելու համար ոչ մի կռվան չի տալիս: Այս պայմաններում, առավելագույնը, որ կարելի էր անել Բաղիշեցու ցուցակի հիման վրա, այն է, որ պիտք է արձանագրվեր վերը նշված փաստը. ձեռագրում կա անհեղինակ երկու գործ, Բաղիշեցու նշած Խորովը դրանցից մեկի հեղինակն է: Բայց, իրերի նմանօրինակ վիճակում հայտարարել, թե Բաղիշեցու ցուցակի համաձայն Սերեոսի Պատմության հեղինակը Խորովն է, մեղմ ասած, նշանակում է կամայականորեն վարվել:

Խոսրովին հայտնի Պատմության հետ կապելու համար պետք էին, ուրեմն, պետական-բանասիրական լուրջ ու ծանրակշիռ փաստեր: Բայց, Գ. Աբգարյանը նման ոչ մի փաստ, բացարձակապես ոչ մի փաստ չի բերել:

ԽՈՍՐՈՎԸ ԵՎ «ՍԱՀԱԿԻ ՎԱՐՔԸ»

Խոսրովի հեղինակության հարցը լուծած համարելով, Գ. Աբգարյանը, բնականաբար, պիտի անցներ և անցել է այն խնդրին, թե մեր մատենագրությանը հայտնի բազմաթիվ Խոսրովներից ո՞րն է Սերեոսի Պատմության հեղինակը: Նա գրում է. «Հայտնի են մի քանի տարբեր Խոսրովներ՝ Խոսրով պատմագիր (ապրել է Զ—Ը դարերում), Խոսրովիկ Թարգմանիչ կամ Խոսրով Հռոմոր (Ը դարի մատենագիր...), Խոսրով Անձևացի (Գրիգոր Նարեկացու հայրը, ժ դարի մատենագիր) և այլն: Այս Խոսրովներից առաջինը հիշատակվում է որպես Ը դարի պատմիչ Ղևոնդ երեցին նախորդող պատմագիր» (էջ 26—27): Այնուհետև Գ. Աբգարյանը բերում է համապատասխան վկայություններ մեր մի քանի պատմիչներից ու մատենագիտական ցանկերից. «Կիրակոս Գանձակեցին այս Խոսրովին հիշատակում է Ղևոնդից անմիջապես առաջ... Մխիթար Այրիվանեցին նրան հիշում է Թովմա Արծրունուց առաջ... Մատենադարանի № 126 ձեռագրում (թ. 255բ) գտնվող մի ցուցակում նույնպես Խոսրովը հիշատակված է Ղևոնդից առաջ... Հայ պատմագիրների մի այլ ցուցակում (նկատի ունի Հ. Ղ. Ալիշանի «Հայապատում»-ում հրատարակվածը—Խ. Բ.) նույնպես Խոսրովը հիշատակված է Ղևոնդ երեցից անմիջապես առաջ: Այդպես է նաև Ղազար Ջահկեցու ցուցակում» (էջ 27):

Բայց, Խոսրովի ապրած ճիշտ ժամանակը որոշելու համար, այս ցուցակները վստահելի տվյալներ չեն պարունակում: Համոզվելու համար համադրենք թեկուզ այն պատմիչների տվյալներն ու մատենագիտական ցանկերը, որը վկայակոչել է Գ. Աբգարյանը (քաղվածքները կատարում ենք ըստ Հ. Անասյանի Մատենագիտության, հատ. Ա, էջ XLVIII—LIII). տե՛ս էջ 70:

Այս ցանկերի համաձայն, նրանցում նշված հեղինակների ապրած ժամանակի մասին կարելի է կազմել միայն ամենաընդհանուր պատկերացում: Ոչ հեղինակների ապրած կոնկրետ ժամանակի մասին հնարավոր կլիներ խոսել, եթե վստահություն լիներ, որ այդ ցանկերը կազմվել են ժամանակագրական սկզբունքի խստագույն պահպանմամբ: Այնինչ, ակնհայտ է, որ այս ցանկերից և ոչ մեկը հետևողական չի եղել ժամանակագրական հաջորդականության հարցում: Գանձակեցու դեպքում, օրինակ, Սերեոսը նշված է Կորյունից առաջ: Ըստ Այրիվանեցու ցանկի՝ Խորենացին, Փարպեցին ու Եղիշեն ապրել են Թովմա Արծրունուց հետո, ուրեմն ժ կամ հաջորդ դարում: Ըստ 4-րդ ցանկի («Հայապատում») Սերեոսը, Կորյունը, Ղևոնդը ապրել են Ուխտանեսից հետո, ուրեմն դարձյալ ժ կամ հաջորդ դարում և այլն: Բայց, Գ. Աբգարյանը կարող է առարկել, թե այդուհանդերձ, ցանկերից երեքում (Ա, Գ, Դ) Խոսրովը միշտ նշված է Ղևոնդի ու Կորյունի միջև, Ղևոնդից առաջ և Կորյունից հետո: Դա էլ ոչինչ չի նշանակում, որովհետև Կորյունից մինչև Ղևոնդ ընկած է առնվազն երեք դար՝ Ը—Ը-ը: Եթե օգտվելով դրանից, Աբգարյանը Խոսրովին ուզում է դնել անպայման է դարում, ապա նույն հաջողությամբ, նույն Խոսրովին կարելի է դնել Ե, Զ և Ը դարերում, դարձյալ Կորյունից հետո և Ղևոնդից առաջ:

№	Կիրակոս Գանձակեցի	Մխիթար Այրիվանեցի	Մեր Մատենադարանի № 126 ձեռ.	Ալիշանի «Հայապատում»	Դպրոց Գանձակի
1	Ազաթանգեղոս	Ազաթանգեղոս	Ազաթանգեղոս	Ազաթանգեղոս	Ազաթանգեղոս
2	Խոբենացի	Զենոբ	Խոբենացի	Խոբենացի	Խոբենացի
3	Եղիշե	Բուզանդ	Եղիշե	Եղիշե	Եղիշե
4	Փարպեցի	Փարպեցի	Փարպեցի	Փարպեցի	Փարպեցի
5	Բուզանդ	Նեբատ և Սահակ	Բուզանդ	Ուխտանես	Փաւստոս
6	Սեբեոս	Տարխն Սայակայ	Եվսեբիոս	Սեբեոս	Կորյուն
7	Կորյուն	Խոսրով	Կորյուն	Կորյուն	Բուզանդ
8	Խոսրով	Թոմմա Արծրունի	Խոսրով	Խոսրով	Խոսրով
9	Վանդ	Խոբենացի	Վանդ	Վանդ	Վանդ
10	Թոմմա Արծրունի	Փարպեցի	Թոմմա Արծրունի	Թոմմա Արծրունի	Թոմմա Արծրունի
11	Շապուհ Բագրատունի	Եղիշե	Շապուհ	Շապուհ Բագրատունի	Շապուհ
12	Համառոտ կիրակ.	Շապուհ Բագրատունի	Համառոտ կիրակ.	Համառոտ կիրակ.	Համառոտ կիրակ.
13	Մովսես Կաղանկատվացի	Եվսեբի	Մովսես Կաղանկատվացի	Մովսես Կաղանկատվացի	Մովսես Կաղանկատվացի
14	Ուխտանես	Մովսես Աղվանեցի	Ուխտանես	Ասողիկ	Ուխտանես
15	. . . .	Վանդ	. . . .	. . . .	Ասողիկ
16		Ուխտանես			Արիստակես
17		. . . .			Հերակլ
					. . . .

Այս մեկ. երկրորդ՝ նույն (Ա, Գ, Դ) ցանկերի համաձայն, Սերեոսը նշված է Կորյունից առաջ։ Հետևողությանը չդավաճանելու համար Գ. Աբգարյանը պետք է ընդունի, որ Սերեոսը ամենաուշը ե դարի հեղինակ է և ապրել է Կորյունից առաջ։ Իսկ եթե Գ. Աբգարյանը մերժում է այս օրինակը, բայց ընդունում Խոսրովինը, ապա ի՞նչ սկզբունքներով։

Մեզ հետաքրքրող Խոսրովի ապրած կոնկրետ դարը որոշելու համար պետք էին, ուրեմն, լրացուցիչ փաստեր։ Գ. Աբգարյանը չի բերել այդպիսի ոչ մի փաստ։

Ստորև մենք կբերենք փաստեր, որոնք հաստատում են, որ Գ. Աբգարյանի նշած Խոսրովը ե դարի հեղինակ է և Սահակի ու Մեսրոպի աշակերտներից մեկն էր։ Սրանով միաժամանակ պատասխանած կլինենք նաև այն հարցին, թե Բաղիշեցին ինչո՞ւ է հիշել Խոսրովի անունը և ձեռագրում եղած ո՛ր գործի հեղինակ է համարել նրան։

Այս հարցին, թեև հարցականով, պատասխանել է արդեն Ս. Տեր-Հակոբյանը՝ Բաղիշեցու ցուցակի հրատարակիչը։ Ցուցակի Խոսրով անվան վրա նա նշան է դրել և ծանոթագրել. «Խոսրովայ Թարգմանչի Պատմութիւն Սրբոյն Սահակայ?»[11]։ Բաղիշեցու ցուցակից անկախ, նույն կարծիքն է հայտնում նաև Ղ. Ալիշանը, բայց առանց հարցական նշանի, հաստատապես։ Այստեղ, սակայն, չենք կարող, գեթ մի օրինակով, չցուցադրել Գ. Աբգարյանին հատուկ այն եղանակը, որով նա փորձում է հիմնավորել իր տեսակետները։ «Հայապատում» մեծարժեք աշխատության մեջ Ղ. Ալիշանը խոսում է Խոսրովի մասին երկու անգամ՝ էջ 50—51 և 64։ Վերջին դեպքում Ղ. Ալիշանի խոսքը առնչվում է մեր պատմագիրների այն ցանկին, որ կազմել է Մխիթար Այրիվանեցին, ուստի բերենք այն. «...Ագաթանգեղոս. Ջենոբ Ասորի. Փոստոս Բիւզանդ. Ղազար. Ներսէս. Սահակ. Կորիւն. Սայակայ. Խոսրով. Թոմայ վարդապետ. Մովսէս Խորենացի, Ղազար Փարպեցի...»[12]։ Այս վկայության կապակցությամբ Ղ. Ալիշանը գրում է. «Իսկ Այրիվանեցւոյն Սահակ Կորեան և յետոյ Սահակայ Խոսրով սեռական հոլովով և անորոշ կիսադրութեան բաժանմամբ անուանքն, կարծեցընեն թէ պէտք է իմանալ Պատմութիւն բառն այլ. և թէ ինչպէս Կորիւն՝ Ս. Մեսրովբայ վարքը գրած է, նոյնպէս գրած ըլլայ և Խոսրով ոմն Ս. Հայրապետին Սահակայ վարքը, որ հաւանական երևի... Վասնզ՝ ութերորդ դարու պատմիչն է՝ Արարացւոց գործոց. առաջ կամ ետև՝ անտարակոյս երևի Խոսրով անուամբ հին պատմիչ մի, և հավանօրէն Ս. Սահակայ վարքը գրող»[13]։ 50-րդ էջում, Խոսրովի մասին խոսելիս, արդեն փաստարկած լինելով, որ նա «Պատմութիւն Սահակայ» գործի հեղինակն է, Ղ. Ալիշանը 64-րդ էջում այլևս հարկ չի համարել կրկնել իր փաստարկները։ Գ. Աբգարյանը կառչում է Ղ. Ալիշանի այս երկրորդ խոսքից և ուղում է հերքել նրան. «Մեծանուն բանասերը Խոսրովին համարում է «հավանօրէն Ս. Սահակի վարքը գրող», հիմնվելով Մխիթար Այրիվանեցու հետևյալ ցուցակի վրա... Ալիշանի կարծիքով «Սայակայ» բառի առջև

---

11 «Արարատ», 1903, էջ 179, ծանոթ. 2. Ինչպես տեսանք, Գ. Աբգարյանը (էջ 21) Բաղիշեցու ցուցակի մեզ հետաքրքրող մասը հայտարարում է «նորահայտ տեղեկություն», այսինքն՝ նոր միայն իր կողմից հայտնաբերված տեղեկություն։ Այնինչ, այս «նորահայտ տեղեկությունը» ավելի քան 60 տարվա հնություն ունի։ Ցուցակի հրատարակիչն արդեն հատուկ ուշադրություն է դարձրել քննվող տեղեկության վրա։

12 Պատմութիւն Հայոց, Մոսկվա, 1860, էջ 22—23։

13 Հայապատում, Վենետիկ, 1901, էջ 64։

եղել է «Պատմութիւն» բառը, որը հետագայում ընկել է: Այս ենթադրության համաձայն՝ հատվածը կկարդացվի այսպես. «Ներսէս, Սահակ, Կորիւն, Պատմութիւն Սայակայ, Խոսրով, Թոմայ վարդապետ»: Այսպիսի ընթերցումից հետո էլ «Սայակայ Պատմութիւն» չի առնչվի Խոսրովի հետ: Այն կարող է վերաբերել ավելի շուտ Կորյունին» (էջ 27—28, ծանոթ. 30): Գ. Աբգարյանը ձգտում է, ինչ գնով էլ լինի, ցույց տալ, որ Խոսրովը կապ չունի «Սահակի պատմության» հետ, որպեսզի նրան կարողանա կապել Սեբեոսի Պատմության, անտեսելով այն փաստերը, որ բերում է իր կողմից քննադատվող պատմագիրը: Ահա ինչ է գրում Ղ. Ալիշանը 50-րդ էջում. «Յայսմաւուրք (Հոռի Ը.) ընդ գլխաւոր և երեքի թարգմանիչս յիշեն զԽոսրով... բայց մեր խնդիրն իր Պատմիչ ըլլալն է, զոր և ի շարս պատմչաց յիշեն Կիրակոս և Մխիթար Այրիվանեցի. յետինս չեն Կոչման գրէ (ըստ մեզի հասած ձեռագրի) Սահակայ Խոսրով, ուր պակասի բառ մի, և պիտի ըլլայ Պատմութիւն Ս. Սահակայ: Զայս գրած ըլլալն անտարակոյս է վասն զի Հայրն Սիսուան յԹ դարու յիշէ զայդ: Նաև յետին դարուց ճոր Ջուղայի ձեռագրաց Յանկի մի մէջ յայտնապէս գրուած է. «Խոսրովայ թարգմանչի Պատմութիւն Սրբոյն Սահակայ»: Եւ Յակոբ Այութեանց այսպէս կը գրէ. «Խոսրով Թարգմանիչ, որ է պատմութիւն Սրբոյն Սահակայ Հայրապետին»[14]:

Ինչպես տեսնում ենք, մեծ հայագետը հիմնավորապես փաստարկել է այն իրողությունը, որ Խոսրովը «Պատմութիւն Սահակայ» գործին հեղինակն է:

Խոսրովին Սեբեոսի Պատմության հետ կապելու համար Գ. Աբգարյանը անպայման պետք է հերքեր Ղ. Ալիշանի բերած փաստերը: Բայց որովհետև Գ. Աբգարյանը չի կարողացել, ասենք նաև, որ չէր էլ կարող անել այդ, նա անտեսել է փաստերը: Այնինչ, մեր մատենագրության մեջ բավարարաչափ փաստեր կան թե այն մասին, որ եղել է «Պատմութիւն Սահակայ» կամ «Վարք Սահակայ» գործը, և թե այն մասին, որ դրա հեղինակը Խոսրով Թարգմանիչն է՝ մեկը Սահակի աշակերտներից[15]:

Թ դարի մեր մատենագիրներից մեկը՝ Ահարոն Վանանդեցին կամ Հայր Ահարոնը գրել է պատմական մի փոքրիկ աշխատություն՝ «Պատմութիւն սրբոյ նշանին Նունէի վրաց առաջնորդի»: Գործի վերջում Հայր Ահարոնը խոսում է իր աղբյուրների մասին. «Իսկ ես, Հայր Ահարոն, զարմն Վանոդ երիցու յիջաւանից գնդէ, ապաստաւոր Սրբոյ Խաչին, բազում աշխատութեամբ և խուզիւ քննեալ ի բազում մատենից Հայոց և վրաց յաղագս Սրբոյ Խաչին Մրծ. խիթարի, որ այժմ բնակեալ է յերկիրս մերում ի տեսչութենէ խաչելոյն Քրիստոսի, թէ ուստի՞ կամ որպէ՞ս առ մեզ լեալ է, և աւուրհալ հասեալ գտի յԱգաթանգեղայ պատմագրէ և ի վկայութենէ Շուշանիկեանն, ի վարուց Սրբոյն Սա-

---

14 *Ավելի վաղ Ղ. Ալիշանը գրել է. «Արդեօք գրո՞ց սա (խորենացին—Ա. Բ.) յետոյ հրաշափառագոյն բան մը, ինչպէս արժանի էր, ի պատիւ իր մեծ հայրապետին, յայտնի չէ: Կարծուած է թէև Տիրուկ Վանանդացի բահանայն՝ որ նուիրակ զացած էր ի Պարսս խնդրելով զՍ. Սահակ, գրած ըլլայ անոր վարքը.—սակի հաւանական է թէ խոսրով թարգմանիչն այլ գրած է անոր վարչը: Մարկաւագ վարդապետ այլ ներքոյ մը գրած է ի պատիւ նորա: Այս գրուածներէն և ոչ մէկն հիմա ծանօթ են» (Յուշիկք հայրենեաց Հայոց, հատ. Ա, Վենետիկ, 1920, էջ 313, ծանոթ. 1):*

15 *Այդ մասին մենք գրել ենք մի առանձին ուսումնասիրություն, որը տպագրվել է «Բանբեր Երևանի համալսարանի» հանդեսի 1967 թվականի № 2-ում: Մանրամասնությունների համար հղելով նշված հոդվածին, այստեղ կբերենք միայն մի քանի փաստ:*

հակայ և ի հնդուրէն Անդրէասայ»[16]: Ինչպես տեսնում ենք, իր աղբյուրների շարքում Հայր Ահարոնը նշում է «վարք Սահակայ», որը կարդացել է և որից օգտվել է իր պատմությունը շարադրելիս: Տվյալ դեպքում մեզ համար բնորոշելին այն է, որ նախքան Թ դարը, որտեղից՝ վարդան Բաղիշեցուց շատ առաջ գոյություն է ունեցել «Սահակի վարքը»:

«Սահակի Պատմության» հեղինակի մասին ուղղակի վկայություններ ենք հանդիպում մատենագիտական մի քանի ցանկերում: Ալիշանը, ինչպես տեսանք, գրում է. «նաև նորին դարուց Նոր Ջուղայի Ջևաղրաց ցուցակի մի մեջ հայտնապես գրված է. «Խոսրովայ Թարգմանչի «Պատմութիւն Սրբոյն Սահակայ»[17]: Ալիշանը նույնանման փաստ է բերել նաև «Ազգարարից»: Եվ իրոք, Հակոբ Այուբյանի կողմից «Ազգարարում» հրատարակված մատենագիտական ցանկում ևս կարդում ենք. «5. Խոսրով Թարգմանիչ, որ է Պատմութիւն Սրբոյն Սահակայ Հայրապետին»[18]:

Հատկապես նշելի են մեր Մատենադարանի № 2271 և 2220 ձեռագրերում եղած մատենագիտական ցանկերը[19]: Այս ցանկերի կամ ցանկի հեղինակը խիստ ատելագործում անձ է: Բավական է հիշեցնել, որ Մաղաքիայի Պատմության իսկական հեղինակը պարզվեց նաև այս ցանկով[20]: Ահա այս ցանկի մեզ հետաքրքրող մասը. «Խոսրով ևս Թարգմանիչ, որ է Պատմութիւն Սրբոյն Սահակայ Հայրապետին»[21]:

Այսպիսով միանգամայն պարզ է, որ «Պատմութիւն Սահակայ» գործի հեղինակը Խոսրով Թարգմանիչն է: Բազմաթիվ Խոսրովներից մեր մատենագրության մեջ երկուսն են հայտնի որպես Թարգմանիչ, երկուսն էլ ե դարի անձինք. «Թարգմանիչ» մակդիրն էլ իր հերթին մատնացույց է անում նրանց ապրած ժամանակը:

Խոսրով Թարգմանիչներից մեկը Փարպեցու Բղջում հիշատակվածն է: Մյուս Խոսրովը հիշատակվում է ի շարս Սահակի և Մեսրոպի աշակերտների[22]. «Որք էին երեսելիք եւ գլխաւորք յաշակերտաց նոցա այսոքիկ. Սուրբն Յովսէփ. եւ Սուրբն Ղեւոնդ երէցն որ ի Պարս վկայեցին. եւ Սուրբն Եղիշէ վարդապետ. եւ Մովսէս Խորենացին. եւ եղբայր Մովսէսի Մամբրէ վերծանող եւ նմանակ Կողբացին. եւ Սահիտանոս Առաղնիին. Խոսրով եւ Ղազար պատմագիր.

---

16 «Հանդէս ամսօրեայ», 1947, էջ 520, հրատարակություն Հ. Ն. Ակինյանի:

Անդրեաս Հռնազորք նույնպես ե դարի հեղինակ է և մենք էլ Սահակ Պարթևի աշակերտներից: Հայր Ահարոնը Անդրեասի մասին գրում է. «Վանական ի Ղազարու վանաց, ի յերկրէն Տարաւնոյ... անեալ առ ոտս Սրբոյն Սահակայ»: Այս տեղեկությունը Ահարոնը քաղել է, հավանաբար, հենց Անդրեասի գրությունից (տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1947, էջ 515):

Ն. Ակինյանը կարծում է, որ Ահարոնի հիշատակած «Սահակի վարքը» Փարպեցու Պատմությունն է. ««Հավանաբեն Ղազար Փարպեցվո Պատմութիւնը կանխարկվի, ուսկից քաղած կերևա տեղեկութիւններ Հայաստանի ազգաններու նկատմամբ» (տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1947, էջ 500):

17 Հայաստաստում, Վենետիկ, 1901, էջ 51:

18 «Ազգարար», 1795, էջ 188:

19 Այս ցանկերը և Հ. Այուբյանի հրատարակածը ծագում են, հավանաբար, նույն նախնադարձակարագրից կամ սրա հետ սերտ կապակցվող որևէ ձեռագրից:

20 Տե՛ս Հ. Ծամկոչյան, «Պատմութիւն վասն ազգին Նետոզաց» երկի հեղինակը, Երևանի պետական համալսարանի գիտական աշխատություններ, հատ. XXIII, Երևան, 1946, էջ 367—388, հատկապես՝ էջ 382, ծանոթագրություն 4:

21 Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, Ա, Երևան, 1959, էջ LIV:

22 Հետաքրքիր է, որ այս երկու Խոսրովները միևնույն անձն են:

Արձան և Կորիւն, Դաւիթ անյաղթ փիլիսոփայն»[23], *կամ՝ «Եւ առաքեցին (Սահակն ... Մեսրոպը—Ն. Թ.) յաշակերտաց իւրեանց յԱբիէնս... Մովսէս, Դաւիթ, Մամբրէ, Եղիշէ, Եղնակ, Խորէն և Ասողնիկ...»*[24]:

Խորովի մասին տեղեկութիւնները չեն սպառվում ուշ շրջանի մատենադիտական այդ ցանկերով միայն: Խորովը, ինչպես ցույց տրվեց վերը, ծանոթ հեղինակ է նաև մեր պատմիչներին[25]: *Խորով Թարգմանիչը Սահակի ոչ միայն աշակերտն է եղել, այլև գործակիցը: Ձեռագրերում հաճախ հանդիպում ենք այսպիսի վկայության. «Իսկ կանոն ջրաւրհնէիցն Ս. Բարսեղի է արարեալ յեօթներորդ ամի հայրապետութեան իւրոյ յԵրուսաղէմ, զի անդ հանդիպեցաւ և Խորով Թարգմանիչն, երկեր ի Հայս, որ երթեալ էր յԵրուսաղէմ հրամանաւ Ս. Սահակայ»*[26]: *Ակներև է, որ Սահակի աշակերտ Խորով Թարգմանիչն ու նրա հրամանով Երուսաղեմից ջրօրհնեքի կանոնը բերած Խորով Թարգմանիչը, ինչպես և «Վարք Սահակայ» գործի հեղինակ Խորովը նույն անձն է: Եվ շատ բնական է, որ Սահակի աշակերտը գրեց «Սահակի պատմութիւնը», ճիշտ այնպես, ինչպես Մեսրոպ Մաշտոցի աշակերտը գրեց «Մաշտոցի պատմութիւնը»:*

Մատենադիտական այս ցանկերը, որոնցում Խորով Թարգմանիչը նշվում է որպես «Պատմութիւն Սահակայ» գործի հեղինակ, կազմվել են կամ ընդօրինակվել Վարդան Բաղիշեցու ժամանակաշրջանում, այլ կերպ՝ Բաղիշեցու ժամանակ էլ շատ լավ հայտնի էր, որ մենք ունեցել ենք (այդ ժամանակ և դրանից հետո էլ այդ գործը դեռ կար) «Պատմութիւն Սահակայ» և դրա հեղինակը Խորով Թարգմանիչն է: Արդ՝ № 2639 ձեռագրում, որի բովանդակության նկարագրությունը իր ցուցակում տվել է Բաղիշեցին, ինչպես տեսանք, կա նաև «Յառաջաբան տեսլեան Սրբոյն Սահակայ Պարթևի Հայոց կաթողիկոսի...» տեսիլ, մեկնություն և այլն: Սա համապատասխանում է Փարպեցու Պատմության քննական հրատարակության էջ 19, տող 12 մինչև էջ 38-ի վերջը, և, ուրեմն, այլ բան չէ, քան «Սահակի պատմություն»: Բացի դրանից ձեռագրում, այս գործը ղբաղեցնող թերթերի ստորին լուսանցքներում, երեք անգամ (թ. 270բ—271ա, 272բ—273ա, 274բ—275ա) նույն գրչի ձեռքով գրված է՝ «Պատմութիւն Սրբոյն Սահակայ»: Հնարավոր է, որ բազմաթիվ ձեռագրերում և Փարպեցու Պատմությունից առանձին հանդիպող այս գործը մասն է (կամ համառոտությունը) հինգերորդ դարում գրված այն «Սահակի պատմության», որից բառ առ բառ քաղել է Փարպեցին, և դրանով է բացատրվում այս գործի ու Փար-

---

23 Հ. Տաշյան, *Յուցակ ձեռագրաց...*, էջ 60:

24 Անդ, էջ 76: Տե՛ս նաև Հ. Թոփճյան, *Յուցակ ձեռագրաց Արմաշի վանքին*, Վենետիկ, 1962, էջ 190, 350 և այլն: Վերը բերված և նման մի շարք այլ ցանկերում հիշատակված Ասողիկը, ինչպես ցույց են տալիս ոչ սակավաթիվ այլ փաստեր ևս, հակառակ հայագիտության մեջ վաղուց արդեն արտահայտված և վերջերս առանձին եռանդով Գ. Աբգարյանի կողմից կրկնված կարծիքին, ժ—ժԱ դարի պատմիչ Ասողիկը չէ: Ըստ այդմ, Սեբեոսի Պատմության Գ գլխում վկայակոչված Ասողիկը ևս «Տիեզերական պատմության» հայտնի հեղինակը չէ, այլ ե դարի մատենագիր: Այս հարցին կանդրադառնանք առանձին:

25 Տե՛ս, օրինակ, Կիրակոս Գանձակեցի, *Պատմութիւն Հայոց*, Երևան, 1961, էջ 6—7, Մխիթար Այրիվանեցի, *Պատմութիւն Հայոց*, Մոսկվա, 1860, էջ 22—23:

26 Հ. Թոփճյան, *Յուցակ ձեռագրաց...*, էջ 340: Տե՛ս նաև Ն. Պողարյան, *Մայր Յուցակ ձեռագրաց Սրբոց Հակոբյանց*, հատ. ե, Երուսաղեմ, 1960, էջ 238 և այլուր:

ւիցու Պատմության Համապատասխան հատվածի բառացի նույնությունը[27]: Բայց, առայժմ, նույնքան էլ հավանական է, որ այս գործը քաղվածք է Փարպեցու Պատմությունից և հետագայում է շրջանառության մեջ դրվել որպես առանձին միավոր: Ինքնին շատ կարևոր այս հարցերը ներկա դեպքում նշանակություն չունեն: Քննվող հարցի տեսանկյունից կարևորն այն է, որ Բաղիշեցու նկարագրած № 2639 ձեռագրում կա մի գործ, որը Բաղիշեցու և նրա աշակերտների համոզմամբ «Սահակի պատմությունն» է: Արդ, մի կողմից № 2639 ձեռագրում կա մի գործ, որը Բաղիշեցին և նրա աշակերտները համարում են «Սահակի պատմություն», մյուս կողմից Բաղիշեցու ժամանակ էլ շատ լավ հայտնի էր, որ «Սահակի պատմության» հեղինակը Խորովն է: Ուրեմն, մենք բոլոր հիմքերն ունենք ասելու, որ Բաղիշեցին իր ցուցակի Խորովին համարել է № 2639 ձեռագրում եղած «Սահակի պատմության» հեղինակ:

Այս կապակցությամբ ուշագրավ է նաև մեր մատենագրության խորը գիտակ գրկտ. Ա. Մնացականյանի կարծիքը, որը նա հայտնել է Մատենադարանում մեր այս աշխատության քննարկման ժամանակ և որը բերում ենք նրա թույլտվությամբ: Բաղիշեցու ցուցակի Խորովը պետք է կապվի № 2639 ձեռագրում եղած վերջին գործի՝ Սեբեոսի Պատմության հետ: Պատմությունը շատ կարևոր երկ է և չէր կարող դուրս մնալ ցուցակից: Քանի որ Պատմությունը № 2639 ձեռագրում չունի ոչ վերնագիր և ոչ հեղինակի անուն, ապա այն պետք է արտահայտվեր ցուցակում ըստ բովանդակության, ինչպես առհասարակ վարվում են նման դեպքերում: Ընթերցելով Պատմությունը, Բաղիշեցին տեսել է գրքի հենց առաջին պլուխներից մեկի վերնագիրը՝ «Մատեան ժամանակական, պատմութիւն թագաւորական, վէպ արքական, վանումն սիեղխտական, հէն սասանական՝ յԱպրուէզն Խոսրովեան»: Ըստ այս վերնագրի, հետագա շարադրանքը կոչվում է «Խոսրովի պատմություն»: Այս վերնագրի համաձայն էլ Բաղիշեցին իր ցուցակում այդ գործը գրանցել է որպես «Պատմութիւն Խոսրովու»: Ա. Մնացականյանի այս բացատրության համաձայն, «Պատմութիւն Խոսրովու» նշանակում է ոչ թե Պատմություն գրված Խոսրովի կողմից, այլ Պատմություն գրված Խոսրովի մասին: Թող որ այդպես: Ամեն պարագայում պարզ է մի բան. Բաղիշեցու ցուցակի Խոսրովը, որպես հեղինակ, կապ չունի քննվող Պատմության հետ:

Ցուցակի Խոսրովին, որպես հեղինակ, քննվող Պատմության հետ մի կերպ կապելու ճիգերից Գ. Աբգարյանին ազատելու համար կարող ենք, նույնիսկ, ընդունել նրան խիստ ձեռնտու այսպիսի վիճակ: Դիցուք, Բաղիշեցին ոչ թե ցուցակում, այլ № 2639 ձեռագրի մեջ հետաքրքրող գործի վրա գրած լիներ «Պատմութիւն Խոսրովու»: Նույնիսկ այս դեպքում էլ չէր կարելի վճռականապես պրնդել, թե Խոսրովը այդ գործի հեղինակ է, որովհետև «Պատմութիւն Խոսրովու» արտահայտությունը հավասարապես նշանակում է նաև Պատմություն գրված Խոսրովի մասին և ոչ թե միայն՝ Պատմություն գրված Խոսրովի կողմից:

---

27 Ն. Ակինյանը նույնիսկ համոզված է, որ Պատմության Ա գրվագը Փարպեցու գրչին չի պատկանում: Ա գրվագի հեղինակ նա համարում է այն Խոսրովին, որին Գ. Աբգարյանը վերագրում է Սեբեոսի Պատմությունը:

ՍԵԲԵՈՍԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՎԵՐՆԱԳԻՐԸ ԵՎ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Որ վիճելի Պատմության հեղինակը Խոսրովը չէ, փաստ է, բայց դա, իհարկե, չի կարող դեռ ապացույց լինել, թե այդ Պատմության հեղինակը, իրոք, Սեբեոսն է։ Գ. Աբգարյանը, սխալվելով Խոսրովի հարցում, դուցե, այնուամենայնիվ, ճիշտ է նրանում, որ Սեբեոսի անունով հայտնի Պատմությունը, իրականում, Սեբեոսինը չէ։ Ծանոթանանք, ուրեմն, այս կապակցությամբ Գ. Աբգարյանի դատողություններին ու փաստարկներին։

1. Շատ չեն Գ. Աբգարյանի փաստարկները, թեև ապացույցների արժեքը նրանց քանակի մեջ չէ։ Դրանցից հիմնականն ու ամենագլխավորն այն է, որ Սեբեոսի Պատմության վերնագիրը՝ «Պատմութիւն ի Հերակլն» չի համապատասխանում ներկա Պատմության բովանդակությանը։ Մյուս փաստարկների մի մասն էլ բխում է հենց այս կետից։ Նորություն չէ այս փաստարկը, բանասերները գրել են այդ մասին Գ. Աբգարյանից շատ առաջ։ Բայց, այն դեպքում, երբ մեծանուն հայագետներ Հ. Գաթրճյանը, Ն. Ակինյանը, Ստ. Մալխասյանցը և այլք, նշելով հանդերձ Պատմության ու նրա վերնագրի «հակասությունը», ամենևին չեն կասկածել, որ այն Սեբեոսի գործն է, Գ. Աբգարյանը ոչ միայն կասկածում է, այլև ժխտում է այն։ Ակադ. Ստ. Մալխասյանցն, օրինակ, գրում է. «Հերակլ անունը չէ համապատասխանում Պատմության բովանդակությանը», այս գրքի 40 գլուխներից միայն 10-ն է վերաբերում Հերակլին[28]*։ Այստեղից Ստ. Մալխասյանցը եզրակացնում է. «Հերակլի անունը գրքի վերնագրում՝ պղտորում է Սեբեոսի գրվածքի բուն էությունը... ուստի ընտրեցինք «Սեբէոսի եպիսկոպոսի պատմութիւն» վերնագիրը»*[29]*։ Նույն փաստից Գ. Աբգարյանը եզրակացնում է, որ ներկա Պատմությունը Սեբեոսի գրած Պատմությունը չէ։ Ծանոթանանք այս հիմնական ապացույցից բխող մյուս երկու փաստարկներին ևս։*

2. Աբգարյանը գրում է. «Ժյուրիմացարար Սեբեոսին վերագրված այս երկի հեղինակը սովորություն ունի երբեմն ճարտասանական դարձվածքներով սկսել իր Պատմության որևէ նոր գլուխ։ Այդպես է նա վարվել Ը, ԻԸ, Խ, ԽԲ, ԽԵ, ԽԷ և այլ գլուխներ սկսելիս։ Խոսրով Անրվեղի մուտքը Պատմության մեջ նշանավորված է գրիչի չափածո մի նախերգանքով։ Այս պայմաններում, նրան քննարկվող երկը իրոք «Հերակլի պատմությունը» լիներ, բնականաբար Պատմության գլխավոր հերոսի՝ Հերակլի մուտքը նույնպես կնախապատրաստվեր ինչ-որ մի ձևով։ Այնինչ Հերակլը ներկա «Սեբեոսի Պատմության» մեջ մուտք է գործում հարևանցիորեն» (էջ 18)։ Շատ մանր ու խախուտ հիմք է սա, որպեսզի հնարավոր լինի կառուցել դրա վրա այնպիսի մի ծանր շենք, ինչպիսին երկի հեղինակի հարցն է։ Ծանոթանանք ճարտասանական այն դարձվածքներին, որոնցով սկսվում են քաղվածքում նշված գլուխները։ Գլուխ ԻԸ, «Իսկ արդ՝ զի՞նչ ևս զԱստատ խոհխոհունդ ասացից և զմիաւանդամ զապստամբութիւնն»[30]*, գլուխ Խ. «ԶԱբրահամեանն ճառեցից ղզաւակէ, ոչ զաղատէն, այլ զայն՝ որ յաղախնոյն ծնեալ...»*[31] *գլուխ ԽԵ. «Ճառեցից դարձեալ զրուցելով*

---

28 *Սեբ*, էջ ԼԶ։
29 *Անդ*, էջ ՀԷ։
30 *Սեբ*, էջ 70։
31 *Անդ*, էջ 105.

պրանս ըստ չարիս հասելոյ ի վերայ մեր ժամանակի...»[32]. գլուխ Խէ. «Արդ՝ ասացից փոքր մի ի շատէ վասն Հայոց կաթուղիկոսին Ներսեսի»[33]: Մենք բաց թողնելով Ը և ԽԹ[34] գլուխները: Ը գլուխը, իրոք, սկսվում է գրեթե չափածո մի ճաշեցրպանքով՝ նվիրված Խոսրով Ապրվեղին: Այդուհանդերձ, չի կարելի ասել: Բե Հերակլի մուտքը Պատմության մեջ ինչ-որ ձևով նախապատրաստված չէ: Հերակլի մուտքը ապդարարված է յուրովի և որոշակիորեն: Պատմության Լ-ր գլուխը, որով, ըստ էության, սկսվում է Հերակլի գործերի նկարագրությունը, սկսվում է այսպես. «Խոսրով Ի-ր, Երակղոս զառաջինն»[35]: Պատմության ոչ մի գլուխ, որտեղ որևէ թագավորի գործունեության մասին խոսք է բացվում առաջին անգամ, չի սկսվում այսպես: Հեղինակը շատ ցայտուն ձևով հայտարարում է, որ սկսում է պատմել Հերակլի մասին: Ուրեմն, Հերակլը ներկա «Սեբեոսի Պատմության» մեջ մուտք է գործում ոչ հարևանցիորեն: Ճիշտ է, այդ մուտքը այնպես ճոխ չէ, ինչպես Խոսրովինը, բայց դա արդեն ուրիշ հարց է:

3. Վիճարկվող Պատմության հեղինակը գրքի Ը գլխում ասում է, որ ինքը նկարագրելու է Պերոզ, Որմիզդ, Խոսրով, Մորիկ, Փոկաս, Հերակլ, Կավատ թագավորների ժամանակ տեղի ունեցած իրադարձությունները, ինչպես նաև արաբական նվաճումները: Այս փաստից Գ. Աբգարյանը եզրակացնում է. «Պերոզից մինչև իսմայելցիների արշավանքներն ընկած ժամանակամիջոցն ընդգրկում է պարսիկ և հույն մոտ 15 թագավորների երկուհարյուրամյա տիրապետության պատմություն: Այսպիսի ընդհանուր բովանդակություն ունեցող Պատմությունը, անշուշտ, չէր կարող կոչվել ոչ Հերակլի, ոչ էլ Խոսրովի անունով» (էջ 18): Այս եզրակացությունը մերժելի է նույնքան, որքան որ կոչուկ է: Պատմությունը կարող էր չկոչվել ոչ Հերակլի և ոչ էլ Խոսրովի անունով, բայց կարող էր կոչվել Բե երկուսի անունով միասին վերցրած և Բե նրանցից մեկի անունով առանձին, բեկուզ այն պատճառով, որ Պատմության կենտրոնական դեմքերը, գլխավոր դերակատարները, այնուամենայնիվ, Խոսրովն ու Հերակլն են, բայց Բողնենք սա:

Ինչպես տեսանում ենք, Գ. Աբգարյանի գլխավոր փաստարկն այն է, որ Պատմության վերնագիրն ու բովանդակությունը չեն համապատասխանում իրար, ընդ որում անվերապահորեն ելակետ է ընդունվում այն միտքը, որ Սեբեոսի գրքի վերնագիրը անպայման եղել է «Պատմութիւն ի Հերակլն»: Ընդունենք, ի նպաստ Գ. Աբգարյանի տեսակետի, որ մեր մատենագիրների ու մատենագիտական ցանկերից մի քանիսի հաղորդումը գրքի վերնագրի մասին ճիշտ է, և այն, իրոք, կոչվել է «Պատմութիւն ի Հերակլն»: Բայց մի՞թե դա իրավունք է տալիս ծայրահեղորեն նեղ ու տառացի համապատասխանություն

32 Անդ, էջ 137:

33 Անդ, էջ 143:

34 ԽԹ գլուխն ամբողջովին Հայոց Դավանության թուղթն է, որ ընդունել էր մեր եպիսկոպոսների ու նախարարների ժողովը Ներսես կաթողիկոսի և Թեոդորոս Ռշտունու գլխավորությամբ և պետք է ուղարկվեր Հունաց Կոստանդ կայսրին: Պաշտոնական այս փաստաթղթի սկզբում, տեքստից առաջ կարդում ենք. «Աղաչեմ զքեզ, ընթերցիր՝ որ զբրիստոնէական հաւատն ունիս, ստուգաբանէր»: Կարծում ենք, որ ճիշտ չէ այս տողերը համարել Պատմության հեղինակի խոսք և գլուխն սկսող ճարտասանական դարձվածք: Սա Պատմության ձեռագրերից մեկի լուսանցքում գրված դիմումն է ընթերցողին, որ հետագայում անցել է բնագրի մեջ: Մեր գրիչները ձեռագրի լուսանցքներում երբեմն նման նշումներ անելու սովորություն ունեն: Թվում է, որ Պատմության ապագա հրատարակության ժամանակ այդ տողերը պետք է հանվեն բնագրից:

35 Անդ, էջ 79:

տեսնել գրքի վերնագրի ու բովանդակության միջև և այնպես պատկերացնել, թե հեղինակը կարող էր կամ պետք է պատմեր միայն ու միայն Հերակլի և սրա հետ առնչվող իրադարձությունների մասին: Հերակլին նվիրված Պատմությունը կարող էր սկսվել նաև նրան նախորդող դեմքերի ու դեպքերի նկարագրությամբ հենց թեկուզ այն պատճառով, որ նախապատրաստվեր Հերակլի մուտքը Պատմության մեջ, նախապատրաստվեր ոչ թե կամ ոչ միայն ճարտասանական դարձվածքով, այլ բուն պատմության ընթացքով: Իսկ թե որքան հետևից պետք է սկսեր Պատմության հեղինակը, դա մի հարց է, որ չի կարող ենթակա լինել բանաձևերների որոշմանը: Պերոզը «Հերակլի պատմության» համար Գ. Աբգարյանին կարող է թվալ շատ հեռավոր սկզբնակետ, բայց հեռավորի վերաբերյալ Սեբեոսը կարող էր ունենալ միանգամայն այլ պատկերացումներ: Եթե նույնիսկ ընդունելու էլ լիներ, որ գրքի վերնագիրը՝ «Պատմութիւն ի Հերակլն» գրել է ինքը՝ Սեբեոսը, ապա միթե՞ կարելի է լրջորեն ենթադրել, թե Պատմության հեղինակը ծայրահեղ խստությամբ ինքն իրեն կաշկանդելու էր վերնագրով և չէր շեղվելու դրանից ոչ աջ, ոչ ձախ: Հեղինակը որքան շեղվեր վերնագրում նշված կետից աջ ու ձախ, այնքան նվազ էր երևալու գլխավոր հերոսին գրքում հատկացված ծավալը: Բայց, դա արդեն վկայում է հեղինակի ստեղծագործական թոիչքի մասին և բնավ չի կարող ապացույց լինել, թե տվյալ գործի հեղինակը տվյալ անձը չէ:

Վերնագրից, իհարկե, կարելի է պատկերացում կազմել գրքի բովանդակության մասին, բայց անթույլատրելի է այդ հիման վրա, մանավանդ միջնադարյան երկի վերնագրի հիման վրա, անել շատ հեռու գնացող և կտրուկ եզրակացություններ գործի ամբողջ բովանդակության վերաբերյալ: Մեր այս միտքը բացատրելու համար բերենք մեր տրամադրության տակ եղած բազմաթիվ այլաոուն փաստերից երկուսը:

Գիտությանը վաղուց հայտնի է հուն հեղինակ Ագաթիասը (+582): Նա Հուստինիանոսի ժամանակակիցն էր և գրել է պատմական մի աշխատություն՝ «Հուստինիանոսի թագավորելու մասին»: Դատելով վերնագրից, այդ գործը պետք է պատմեր այն մասին, թե ինչպես է կայսր դառել Հուստինիանոսը, ինչպես է կառավարել աշխարհը, ինչ գործեր է արել, երբ է մահացել և այլն: Մի խոսքով ակնկալվում է, որ պատմությունը պետք է պատմեր նրա շուրջը: Այնինչ, այս Պատմությունը ծայրից-ծայր նվիրված է բյուզանդական ծառայության մեջ գտնվող հայազգի մեծ զորավար Ներսեսի պատերազմներին արևմուտքում՝ դիմանական ցեղերի դեմ և հույների մղած պատերազմներին արևելքում՝ պարսիկների դեմ: Սեբեոսի Պատմության մեջ Հերակլին նվիրված է 10 գլուխ: Այս գրքում գոնե մի գլուխ էլ չի նվիրված Հուստինիանոսին: Սրա անունն ամբողջ գրքում հիշատակված է մի քանի անգամ, այն էլ հարևանցիորեն, ի միջի այլոց: Ագաթիասի Պատմությունը, այսպիսով, շատ ցայտուն օրինակ է գրքի վերնագրի և բովանդակության հակասության: Բայց եթե մենք այդ հիման վրա ասեր, թե Ագաթիասը գրել է Հուստինիանոսի թագավորելու մասին, այս գրքում, սակայն, պատմվում է Ներսեսի և այլոց պատերազմների մասին, հետևապես այս դիրքը Ագաթիասի Պատմությունը չէ, ապա այդ տեսակետը, պարզապես, զրպարտանք կառաջացներ:

Մի օրինակ ևս: Ուխտանեսն իր Պատմության առաջաբանում այսպես է ներկայացնում իր գործի բովանդակությունը. «Կարդել մի քան միոջէ քան իւրաքանչիւր խորհրդոյ. նախ՝ զթիւ թագաւորացն և զհայրապետացն մերոց,

և զբաժանումն վրաց ի Հայոց միաբանութենէ. և յետ այնորիկ զմկրտութիւն ապգին՝ որ Մադն կոչի»[36]: Ըստ այմ՝ Ուխտանեսի Պատմությունը կազմված է երեք մասից. 1. մեր թագավորներն ու կաթողիկոսները, 2. վրաց եկեղեցու բաժանումը մեր եկեղեցուց, 3. ծադերի մկրտությունը:

Այժմ տեսնենք, թե ինչ են հաղորդում Ուխտանեսի Պատմության մասին մեր մատենագիրներն ու մատենագիտական ցանկերը: Կիրակոս Գանձակեցին, թվարկելով մեր պատմագիրներին, գրում է. «Եւ Ուխտանէս եպիսկոպոս Ուռհայի, որ գրեաց զբաժանումն վրաց ի Հայոց ի ձեռն Կիւրիոնի»[37]: Այնուհետև համառոտաբար վերաշարադրելով հայոց և վրաց եկեղեցիների բաժանման պատմությունը՝ Գանձակեցին ավելացնում է. «Զայս ամենայն ստուգութեամբ ուսուցանէ քեզ Ուխտանէս եպիսկոպոս, զի նա ամենայն լիով գրեաց...»[38]: Ըստ Գանձակեցու, ուրեմն, Ուխտանեսը գրել է միայն ու միայն եկեղեցիների բաժանման պատմությունը:

Հայ պատմագիրների ցանկ՝ ըստ Մաշտոցի անվան Մատենադարանի № 126 ձեռագրի. «Ուխտանէս եպիսկոպոս, որ զվրաց քակտումն գրեաց»[39]:

Հայ պատմագիրների ցանկ՝ ըստ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանի № 2271 և 2220 ձեռագրերի. «Ուխտանէս, որ է Պատմութիւն բաժանման վրաց ի Հայոց»[40]: Համաձայն այս ցանկերի, Ուխտանեսը գրել է զարձյալ եկեղեցիների բաժանման պատմությունը միայն:

Ինչպես հայտնի է, Ուխտանեսի Պատմությունը ծանոթ է մեզ մեկ հիմնական ձեռագրով, այն էլ պակասավոր: Պատմության երկրորդ մասը թերի է, իսկ երրորդը ամենևին չկա: Բայց պատկերացնենք, որ մեզ հասած չլիներ Պատմության սկիզբը՝ գործի խորագիրն ու Ուխտանեսի առաջաբանը, որտեղ, ինչպես տեսանք, հեղինակը հայտնում է, որ իր աշխատությունը կազմված է երեք մասից, այդ թվում մեր թագավորների ու հայրապետների պատմությունը և ծադերի զարձի պատմությունը: Ծանոթանալով անխորագիր այդ ձեռագրին, բանասերը կասեր. ձեռագրում կա Ուխտանեսի Պատմությունը, բացի դրանից կան նաև երկու ուրիշ գործեր. մեկը՝ համառոտագուն պատմություն հայ, պարթև, հուն և այլ թագավորների, մյուսը՝ ծադ կոչվող ժողովրդի կողմից քրիստոնեություն ընդունելու պատմությունը: Այս երկու գործերի հեղինակն անհայտ է: Իսկ եթե մեկը փորձեր ասել, թե այդ երկու գործերը ևս պատկանում են Ուխտանեսի գրչին, ապա նրան կառարկեին և թերևս գիրք էլ կգրեին մոտավորապես այսպիսի բովանդակությամբ. մեր պատմիչներն ու մատենագիտական ցանկերի հեղինակները հաղորդում են, որ Ուխտանեսի գործի վերնագիրն է «Պատմութիւն բաժանման Վրաց ի Հայոց», սա անկասկած է, հետևապես Ուխտանեսը գրել է միայն հայոց և վրաց եկեղեցիների բաժանման պատմությունը, ոչ ավել, ոչ պակաս: Թագավորների և ծադերի զարձի պատմությունը ոչ մի կապ չունի հայոց և վրաց եկեղեցիների բաժանման պատմու-

---

36 Ուխտանէս, Պատմութիւն Հայոց, Վաղարշապատ, 1871, էջ 14:

37 Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Ա. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 7: Տե՛ս նաև Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն Սիւնեաց նահանգին:

38 Անդ, էջ 46:

39 Տե՛ս Հ. Աճառյան, Հայկական մատենագիտություն, Ա, Երևան, 1959, էջ LI:

40 Անդ, էջ LIV: Հայ պատմագիրների այն ցանկերը, որոնցում Ուխտանեսի անունն է միայն հիշատակված, առանց գործի, անտեսում ենք:

թյան հետ, հետևապես առաջին երկու դործերը Ուխտանեսը չի գրել և այլն այս ձևով: Իսկ թե ինչ արդյունքի կհասներ այս բանասերը, ավելի քան պարզ է:

Այս օրինակը, որ միակը չէ, մի քանի կարևոր հետևությունների հիմք է տալիս: Առաջին. մեր պատմիչներն ու մատենագիտական ցանկերի հեղինակները միշտ չէ, որ հաղորդում են երկի ճիշտ, իրական վերնագիրը, այն վերնագիրը, որը դրել է ինքը՝ երկի հեղինակը: Պատմիչներն այս հարցում ինչ-որ չափով իրենց ազատ են զգացել և որևէ երկի վերնագիրը երբեմն հաղորդել են ավյալ երկի կարևոր հատվածներից մեկի բովանդակության հիման վրա, քանի որ, թե որ հատվածն են իրենք ավելի էական համարել, կամ որ հատվածն է նորություն եղել մյուս պատմագիրների համեմատությամբ և այլն:

Երկրորդ. միջնադարյան պատմագրական որևէ երկի այն վերնագրի հիման վրա, որ հաղորդում են մյուս պատմիչները, վերը նշված պատճառով, չի կարելի անել շատ հետու գնացող ու կտրուկ եզրակացություններ այդ գործի ամբողջ բովանդակության վերաբերյալ:

Ի վերջո, «Պատմութիւն ի Հերակլն» վերնագիրը կարող էր դրած լինել ոչ Սեբեոսը: Այդ վերնագիրը դրին կարող էին տված լինել հետագա մատենագիրները: Ուրեմն, բավական է թեկուզ այս ենթադրությունը և Գ. Աբգարյանի ամբողջ կառույցը փլվում է, որովհետև այս դեպքում վերանում է վերնագրի և բովանդակության կարծեցյալ հակասությունը:

Վիճարկվող Պատմության նկատմամբ Սեբեոսի հեղինակային իրավունքը հաստատող դրական փաստեր մենք կբերենք քիչ հետո, այժմ շարունակենք ծանոթանալ Գ. Աբգարյանի փաստարկներին:

4. Գ. Աբգարյան. «Ուխտանեսը, օրինակ, Սմբատ Բագրատունու մասին գրում է. «Բազում պատերազմունս վանեալ և վառնեալ ի Հայս, ի Յոյնս և ի Պարսիկս՝ որպէս ցուցանէ քեզ Պատմութիւնն Հերակլի»: Ներկա «Հերակլի Պատմությունում» հիշատակություն չկա Սմբատի՝ Հայաստանում և Հունաստանում վարած բազում պատերազմների մասին: Այստեղ Սմբատը մատնակից է միայն պարսկական ներքին պատերազմներին» (էջ 19. ընդգծումը Գ. Աբգարյանինն է): Սա առաջին և միակ քիչ թե շատ լուրջ փաստարկն է, որ բերում է Գ. Աբգարյանը, բայց և այնպես դրանից չի բխում անվերապահ այն եզրակացությունը, որ արել է նա: Հովհաննես Դրասխանակերտցին գրում է. «Խոնարհեալ հաստատեալ ի թագաւորութիւնն Պարսից՝ ատաւնօր Սմբատ քաջ Բագրատունի բազում և անհնարին մարտս յարդարէր ընդդէմ բոլոր բշնամեաց նորա. և արիաբար մրցմամբ վանեալ վառնգեալ զբնաւ հակառակորդս նորա՝ յոտին նման կացուցանէր...»[41]: Ուշադրություն դարձնենք բառերի ու դարձվածքների այն նմանության վրա, որ կա այս երկու մատենագիրներից բերված բազմաձևերում.

Դրասխանակերտցի	Ուխտանես
...Բազում մարտս....	...Բազում պատերազմունս
վանեալ վառնգեալ...	վանեալ և վառնեալ...

Նշենք նաև, որ Դրասխանակերտցու «ընդդէմ բոլոր բշնամեաց նորա» արտահայտությունն ըստ էության հավասար է Ուխտանեսի «Ի Հայս, ի Յոյնս

41 Յովհաննու Դրասխանակերտցւոյ *Պատմութիւն Հայոց*, Թիֆլիս, 1912, էջ 69:

և ի Պարսիկս» արտահայտությանը, որովհետև Սմբատը Խոսրովի բոլոր թշնամիների դեմ պատերազմները մղելու էր սովորաբար կամ Հայաստանում, կամ Հունաստանում և կամ Պարսկաստանում:

Բառերի ու դարձվածքների այս նմանությունը թեև հիմք է տալիս, բայց մենք չենք ուզում ենթադրել, թե Ուխտանեսը ծանոթ լինելով Հանդերձ Սերեոսի «Հերակլի պատմությանը», վերոհիշյալ տեղեկությունը քաղել է Դրասխանակերտացուց: Կարելի է անել մի ենթադրություն ևս՝ այն, որ և՛ Դրասխանակերտացին, և՛ Ուխտանեսը Սմբատի մղած այս պատերազմների մասին տեղեկությունը քաղել են մի երրորդ աղբյուրից: Հավանական է նաև հետևյալ ենթադրությունը. Դրասխանակերտացուց բերված տողերը և դրանց հաջորդող ամբողջ հատվածը քաղված է Սերեոսի Պատմությունից: Նկատի ունենալով այդ, ինչպես և Ուխտանեսի հաղորդումը, կարելի է ընդունել, որ Սերեոսի «Հերակլի պատմությունում» խոսք է եղել Սմբատի մղած բազում պատերազմների մասին ընդդեմ Խոսրովի բոլոր թշնամիների: Այս պարագայում նման տեղեկության բացակայությունը Սերեոսի ներկա Պատմության մեջ կարող է բացատրվել ոչ անպայման նրանով, թե դա Սերեոսի իրական Պատմությունը չէ, այլ թեկուզ հետևյալով: Հայտնի է, որ Սերեոսի իրական Պատմությունը մեզ է հասել թերի վիճակում: Պատմության մեջ տեղ-տեղ էջեր են պակաս: Շատ հավանական է, որ կորել է նաև այն էջը (կամ էջերը, հավանաբար առանձին գլուխ կազմող), որտեղ պատմվել է Սմբատի մյուս պատերազմների մասին:

Գ. Աբգարյանը նորից վկայակոչում է Ուխտանեսին. վերջինս «Սմբատի մասին հայտնում է նաև հետևյալ տեղեկությունը, որը դարձյալ բացակայում է ներկա Սերեոսից. «Եւ Սմբատն՝ գործէ ասացաք, թէ մարզպան էր Հայոց» (էջ 19): Որ Ուխտանեսը հայտնում է այդ տեղեկությունը, ճիշտ է, բայց Գ. Աբգարյանը թյուրիմացության մեջ է գցում ընթերցողին, այնպես ներկայացնելով, թե իբր Ուխտանեսն այդ տեղեկությունը հայտնում է դարձյալ հիմնվելով Սերեոսի կամ «Հերակլի պատմության» վրա: Այնինչ, Ուխտանեսը հաղորդելով Սմբատի Հայոց մարզպան լինելու մասին, չի վկայակոչում ոչ մի հեղինակ, ոչ մի աղբյուր: Ուխտանեսը «Հերակլի պատմությունը» վկայակոչում է միայն մի անդամ, իր գործի երկրորդ հատվածի 56-րդ էջում, մինչդեռ այս տեղեկությունը նա հայտնում է 17-րդ էջում[42]: Եթե Ուխտանեսն ասեր, որ Սմբատի մասին այդ

---

42 Ի դեպ՝ Ուխտանեսի այս հաղորդման մասին. «Եւ Սմբատն՝ գործէ ասացաք թէ՝ մարզպան էր Հայոց» (էջ 17): Ինչպես տեսանում ենք, Ուխտանեսը գրում է, որ արդեն մի անգամ ասել է, թե Սմբատը մարզպան էր Հայոց: Այդ տողից առաջ Ուխտանեսը միայն մի անգամ է խոսել Սմբատի մասին և ահա թե ինչ է գրել. «Ի ժամանակս թագաւորութեանն Հռոմայեցւոց Մաւրիկայ, և ի բռնակալութեանն Պարսից եւթներորդ ամի Ապրուէզ Խոսրովու արքայից արքայի, և ի տէրութեանն Տհառն Սմբատայ Վրկան Մարզպանի Հայոց մնծաց՝ նկաց յաթոռ Հայրապետութեան Հայոց՝ Աբրահամ» (էջ 3, 2-րդ հատված, սկզբի տողերը). Պայմանականորեն այս վկայությունը նշենք I համարով, իսկ 17-րդ էջինը՝ II: Առաջին և երկրորդ վկայությունների միջև հակասություն կա: Երկրորդ վկայության մեջ Ուխտանեսը շատ պարզ ասում է, որ Սմբատը Հայոց մարզպան էր և հղում է այս առաջին վկայությանը, որտեղ նույնպես պետք է ասած լիներ (գործէ ասացաք), թե Սմբատը Հայոց մարզպան էր: Այնինչ առաջին վկայության մեջ Ուխտանեսն ասում է, որ Սմբատը Վրկանի մարզպան էր: «Ի տէրութեանն Տհառն Սմբատայ Վրկան մարզպանի Հայոց Մնծաց» նախադասությունը չի կարելի հասկանալ այլ կերպ: Նախադասությունը բնականորեն թեև հատակ չի ձևակերպված, բայց նրա թարգմանները աշխարհաբարի՝ կատարվի այսպես. «Հայոց մնծերից տեր Սմբատի՝ Վրկանի մարզպանի տերության (իշխանության) ժամանակ»: Այս ընթերցումը հաստատվում է Ուխտանեսի Պատմության ամբողջ երկրորդ հատվածով: Բացի 3-րդ և 17-րդ էջերից, Ուխտանեսը Սմբատի մասին խոսում է այս հատվածի նաև հետևյալ էջե-

տեղեկությունը քաղում է Սերեոսից կամ «Հերակլի Պատմությունից», այն ժամանակ միայն Գ. Աբգարյանը իրավունք կունենար այդ օգտագործելու որպես փաստ ի նպաստ իր տեսակետի: Իսկ երբ Ուխտանեսը Սմբատի մարզպանության մասին խոսում է հենվելով «Հերակլի Պատմության» վրա, նա ասում է, համաձայն այդ Պատմության, որ Սմբատը Վրկանի մարզպան է. «Գրեմ քեզ այժմ՝ որ յաղագս միոյն Սմբատայ... որ լեալ մարզպան Վրկան իշխանութեանն ի հրամանէ Ապրուէզ-խոսրովու արքայից արքային Պարսից, յաշխարհակալութեանն Մուրկայ Յունաց թագաւորի. որ բաղում պատերազմունս վանեալ և վատնեալ ի Հայս, ի Յոյնս և ի Պարսիկս՝ որպէս ուսուցանէ քեզ Պատմութիւնն Հերակղի» (էջ 56):

5. Գ. Աբգարյանը շարունակում է. «Միջնադարյան ոչ մի մատենագրական հուշարձանում չի պահպանվել որևէ տեղեկություն, որից երևար, որ այժմ Սերեոսին վերագրվող երկը միջնադարում նույնպես դիտվել է որպես Սերեոսի գործ: Ընդհակառակը, մի շարք պատմիչներ—Բ. Արծրունի, Ստ. Ասողիկ, Հովհ. Դրասխանակերտցի, Վ. Արևելցի և այլք—երբեմն բառացի մեջբերումներ են կատարում Սերեոսին վերագրվող երկից, բայց նրանցից ոչ մեկը, բացի Ասողիկից, չի նշում Սերեոսի անունը» (էջ 19—20):

Գ. Աբգարյանը ճիշտ չէ: Միջնադարյան մի քանի մատենագրական հուշարձաններում պահպանվել են մի շարք արժեքավոր տվյալներ, որոնցից շատ պարզ երևում է, որ այժմ Սերեոսին վերագրվող երկը միջնադարում նույնպես դիտվել է որպես Սերեոսի գործ: Որ Գ. Աբգարյանի թվարկած հեղինակները, Ասողիկից բացի, չեն նշում Սերեոսի անունը, դա դեռ ոչինչ չի նշանակում: Մեր պատմիչները, ինչպես ցույց կտրվի, սովորություն ունեն և երբեմն չեն նշում հեղինակի կամ գործի անունը, որից քաղում են: Սերեոսից օգտվող հեղինակներից Սերեոսի անունը նշում են ոչ միայն Ասողիկը, այլև Սամվել Անեցին ու Մխիթար Անեցին:

րում. 54—62, 64, 70, 73, 92—93, 95, 98—99, 101, 109 և 130: Եթե չհաշվենք մեկ-երկու այն օրինակները, երբ տրված է միայն Սմբատի անունը կամ ասված է «Սմբատ մարզպան», մնացած բոլոր դեպքերում Սմբատը միշտ անվանված է Վրկանի մարզպան, այսպես՝ «Հրամանաւ Սմբատայ Վրկան մարզպանի» (էջ 54), «խորհուրդ արարեալ Սմբատայ Վրկան մարզպանի» (անդ), «գրէ Սմբատ Վրկան մարզպան հրովարտակ» (էջ 60) և այլն: Սմբատը Վրկանի մարզպան է կոչվում ոչ միայն ուրիշների կողմից, պաշտոնական գրագրություններում, այլև Ուխտանեսի կողմից, հեղինակային խոսքում: Ուխտանեսը գրում է. «Այլ զիւուղին Սմբատայ Վրկան մարզպանի ոչ գտայ» (էջ 92) կամ՝ Սմբատը, «որ լեալ մարզպան Վրկան իշխանութեանն ի հրամանէ Ապրուէզ խոսրովու արքայից արքային պարսից...» (էջ 56): Աբրահամ կաթողիկոսն իր նամակներից մեկում գրում է. «Մինչդեռ տէր Սմբատ աստ է, փութամք՝ որով օրինակաւ նախ զայդ ի գլուխ տանել» (էջ 70): Ուխտանեսը բացատրում է. «Եւ որ վասն Սմբատայ գրէ, թէ աստ է, թուի թէ՝ հանդերձեալ էր գնալ յաշխարհն Վրկան, որ զիշխանութիւնն ունէր մարզպանութեան» (էջ 73): Ուրեմն ինքը՝ Ուխտանեսը ևս Սմբատին, որպես պաշտոնյայի, գիտի միայն իբրև Վրկանի մարզպան: Այսպիսով, երկրորդ վկայությունը (էջ 17) հակասում է ոչ միայն առաջին վկայությանը, այլև Պատմության ամբողջ երկրորդ հատվածին, ինչպես և հենց իրեն՝ Ուխտանեսին: Պարզ է, որ երկրորդ վկայությունը աղավաղված է և Պատմության ապագա հրատարակության մեջ պետք է ուրթագրվի. «Եւ Սմբատն, զորմէ ասացաք, թէ մարզպան էր Վրկանայ»:

Ասողիկը ևս (տպ. 1885 թ., էջ 85) հայտնում է. «Հրամանաւ Սմբատայ Բագրատունւոյ, որ էր մարզպան Հայոց ի խոսրովու հրամանէ»: Ասողիկի այս վկայությունը ոչ մի կապ չունի ոչ Սերեոսի և ոչ էլ Ուխտանեսի հետ, որին նա ծանոթ չէ, համենայն դեպս իր աղբյուրների ցանկում չի նշում:

6. Արգարյանի այս փաստարկին ավելի հանգամանորեն կանդրադառնանք ստորև, կապված նրա հետևյալ հարցադրում-պատասխանի հետ. «Այս դեպքում, սակայն, ինչպե՞ս բացատրել,—գրում է Գ. Արգարյանը,—այն հանգամանքը, որ Ասողիկը և մյուս պատմիչները կարծեցյալ Սեբեոսից լայնորեն օգտվելով հանդերձ, հայ պատմիչների ցանկում չեն նշել այս հեղինակի անունը» (ուզում է ասել Խոսրովի անունը. չէ՞ որ, ինչպես տեսանք, Արգարյանը սրան է համարում Սեբեոսի Պատմության հեղինակ)։ Պատասխանը նույնքան հնարամիտ է, որքան և անհիմն. «Հետազոտությունը պարզում է, որ Սեբեոսին վերագրվող Պատմության մեզ չհասած ձեռագրերի մի խումբ գրկվել է խորագրից դեռ շատ վաղ ժամանակներում և ընդօրինակված է եղել առանց հեղինակի անվան... Ահա այս է պատճառը, որ ոչ միայն Ասողիկը, այլև կարծեցյալ Սեբեոսից օգտված շատ պատմիչներ չգիտեն հեղինակի անունը» (էջ 20)։ Եվ որպեսզի իր խոսքը լոկ հայտարարություն չթվա, Գ. Արգարյանը բերում է նաև «փաստը». «Այս նույն գործը վերնագիր չի ունեցել նաև Սամվել Անեցու ձեռքի տակ եղած ձեռագրում։ Անեցին ներկա «Սեբեոսի Պատմությունից» քաղում է մի տեղեկություն Դվինի առման մասին և այն ժամանակ, երբ մյուս պատմիչներից օգտվելիս նշում է նրանց անունները... Սեբեոսին վերագրվող Պատմությունից օգտվելիս նրա հեղինակի անունը չգիտե և գրում է. «ասէ պատմագիրն» (էջ 20)։ Առհասարակ կարող է պատահել (և իրականում քիչ չեն դեպքերը), որ որևէ գործ մեկ կամ մի քանի ձեռագրում չունենա վերնագիր։ Պատճառները տարբեր են. օրինակ՝ կորել է տիտղոսաթերթը, գրիչը տեղ է թողել հետագայում գործի վերնագիրն ու հեղինակի անունը կարմիր ներկով կամ նկարազարդ տառերով գրելու համար և այդպես էլ չի արել (մի բան, որին հաճախ կարելի է հանդիպել մեր ձեռագրերում) և այլն։ Եթե մեր պատմագիրներից որևէ մեկի Պատմությունը որևէ ձեռագրում չի ունեցել վերնագիր ու հեղինակի անուն, ապա այդ պարագան դեռ չի նշանակում, չի կարող անպայման ապացույց լինել, թե դրանից օգտվող մեր պատմիչը, կրկնում ենք՝ ոչ թե սովորական գրիչը, այլ պատմիչը չգիտեր, թե ո՞ւմ գործից է օգտվում կամ ի՞նչ գործից է օգտվում։

Այժմ «ասէ պատմագիրն» արտահայտության մասին։ Սեբեոսը գրում է. «Արդ՝ ժամանակս թագաւորութիւնն չարագործին Յազկերտի. և եթէ որպէս նա կամէր գաստուածայինն եղծանել կարգս, և կամ որպէս քաջ նախարարացն Հայոց և նախանձաւորն Աստուծոյ նահապետն Մամիկոնէից տանն, Կարմիրն կոչեցեալ Վարդան, հանդերձ միագունդ սպառազէն նիզակակից ընկերաւքն և զաւրաւք իւրեանց կազմեալ զինեցան ի պատերազմ... և կամ որպէս ի դիմի հարեալ զիւրեանց կատարեցին զնահատակութիւն... այն ամենայն ի ձեռն այլոց գրեցաւ, որպէս ցուցանէ նոյն իսկ պատմութիւնն»[43]։ Հետևո՞ւմ է այստեղից, թե Սեբեոսը կամ Գ. Արգարյանի բառերով ասած՝ կարծեցյալ Սեբեոսը չգիտի այն հեղինակի անունը, որի գործից օգտվում է։

Ուխտանեսի Պատմության մեջ հաճախ հանդիպում ենք. «Սա (Տիգրանը—Խ. Բ.) աջակցեալ Կիւրոսի՝ ի բաց բառնալ զթագաւորութիւնն Մարաց՝ ասէ պատմագիրն...»[44], կամ՝ «Թագաւորէ Արտաշէս... և գրամ առանձին զիւրն հարկանէր պատկեր՝ ասէ պատմութիւնն»[45], կամ՝ «Իսկ ի կատարման առաքե-

43 ՍԵՊ, էջ 23—24։

44 Ուխտանէս, Պատմութիւն Հայոց, Վաղարշապատ, 1871, Հատված առաջին, էջ 37։

45 Անդ, էջ 42։

լոյն Բադէի պատառումն եղև վիմին, որպէս ասէ պատմութիւնն»[46], կամ՝ «Սա ծնանի զերուանդ յանկարգ իմն խառնակութենէ՝ ասէ պատմագիրն»[47], կամ՝ «Եւ երթեալ Հանդիպի նա (Հայոց թագավոր Խոսրովի ուղարկած զորքը՝ Անակին—Խ. Թ.) առ Հանգստարանի սրբոյ առաքելոյն Բադէոսի, զոր անդ՝ ասէ պատմագիրն»[48], կամ՝ «Որ էին լեալ (Հռիփսիմեանք—Խ. Թ.) աւելի քան զեւթեսնասուն հոգի՝ ասէ պատմագիրն»[49] և այլն և այլն։ Այս տեղեկութիւնները քաղված են Ագաթանգեղոսից, խորենացուց։ Հետևելով Գ. Աբգարյանի տրամաբանութեանը, պետք է ասենք, որ Խորենացու և Ագաթանգեղոսի Պատմութիւնների ձեռագրերը, որ օգտագործել է Ուխտանեսը, վերնագիր չեն ունեցել։ Ուխտանեսը չի իմացել այդ Պատմութիւնների հեղինակներին, այդ պատճառով նրանցից օգտվելիս գրել է. «ասէ պատմագիրն»։ Մինչդեռ Ուխտանեսը շատ լավ գիտի Խորենացուն և մեր մյուս պատմիչներին։ Որևէ տեղեկություն հայտնելիս, նա նույնիսկ համեմատում է իրար հետ տարբեր պատմագիրների. «Գրեցաք... յաղագս Տրդատայ Բագաւորելոյն, թէ ե՞րբ և յորո՞ւմ ժամանակս եղև։ Բայց ոչ միաբանէին ընդ միմեանս Զենոբ և Մովսէս վասն նորա. զի Զենոբ ի Պռոպայ ասէ Բագաւորեալ Տրդատայ... իսկ Մովսէս ի Դիոկղետիանոսէ՝ ասէ՝ Բագաւորեալ... Բայց Մովսէս աւուզարանեալ՝ ասէ այսպէս։ Քանզի ոչ է վկայութիւնն ճշմարիտ՝ ասէ՝ առանց ժամանակագրութեան...»[50]։ Մի վկայութիւն ևս Ուխտանեսի Պատմութենից. «Հրաշեայ Բագաւորեալ Հայոց զկնի Պարոյրայ... Առ սովաւ՝ ասեն՝ կացեալ զնաբուզոդոնոսոր Բաբելացւոց արքայ՝ որ գերեաց զՀրէշտան. և որպա ասեն զմի ի գերելոց գլխաւորաց եբրայեցւոցն խնդրեալ ի Նաբուզոդոնոսորայ, անուն Շամբատ, օծեալ բնակեցոյց յերկիրս մեր մեծաւ պատուով, և ի սմանէ՝ ասէ պատմագիրն՝ լինել զազգ Բագրատունեաց... Արդ ի դառնալն Նաբուզոդոնոսորայ ի Հրեաստանէ բազում ատրաւ և գերութեամբ, ընդ առաջ առաքէ նմա Հրաշեայ հրեշտակս պատուական զանձիւք և պայծառ պատարագօք... և խնդրէ ի նմանէ մասն յաւարէ անտի. և նա տայ նմա զմի ի գերելոց գլխաւորացն՝ Շամբատ անուն, որպէս վերագոյնդ ասացաւ ի Մովսիսէ»[51]։

Ինչպես տեսնում ենք, այս քաղվածքում գրելով «ասէ պատմագիրն», Ուխտանեսը նկատի ունի անպայման Խորենացուն և այդ մասին ուղղակի հայտնում է քաղվածքի վերջում. «որպէս վերագոյնդ ասացաւ ի Մովսիսէ»։ Այլ կերպ՝ Ուխտանեսը շատ լավ իմանալով Խորենացուն ու նրա գործը, փոխանակ ամեն անգամ գրելու «ասէ Մովսէսն» կամ «ասացաւ ի Մովսիսէ», մեկ մեկ էլ գրում է՝ «ասէ պատմագիրն»։ Օրինակների թիվը կարելի է մեծացնել բազում անգամ, վկայակոչելով մեր Համարյա բոլոր պատմիչներին, բայց այսքանն էլ բավական է թվում, որպեսզի կարողանանք գրել՝ «ասէ պատմագիրն» արտահայտությունը մի շատ սովորական և ընդունված դարձվածք է մեր մատենագիրների համար և նրանք իրենց աղբյուրը հանդիսացող պատմիչի անվան փոխարեն երբեմն գրում են՝ «ասէ պատմագիրն», այդ բնավ չի նշանակում, թե նրանք չգիտեն այն գործի անունն ու հեղինակին, որից քաղում են և կամ թե

46 Ուխտանէս. էջ 54։
47 Անդ, էջ 56։
48 Անդ, էջ 73։
49 Անդ, էջ 92. տե՛ս նաև էջ 26, 28, 39, 54, 63 և այլուր։
50 Անդ, էջ 111։
51 Անդ, էջ 36։

իրենց օգտագործած ձեռագիրն անխորագիր է եղել: Եվ, ուրեմն, կթի ընդունելու էլ լիննենք, որ Սամվել Անեցին Դվինի գրավման մասին տեղեկությունը քաղել է Սեբեոսից, ինչպես պնդում է Գ. Աբգարյանը, և փոխանակ գրելու՝ «ասէ Սեբէոսն», գրել է՝ «ասէ պատմագիրն», ապա դրանով դեռ չի ապացուցվում և չի կարող ապացուցվել, թե Անեցին չգիտե, որ իր վկայակոչած պատմագիրը Սեբեոսն է և կամ թե այդ Պատմության՝ Անեցու օգտագործած ձեռագիրը վերնագիր չի ունեցել:

Որպեսզի Գ. Աբգարյանը կարողանար գրել, որ Սամվել Անեցու «ասէ պատմագիրն» արտահայտությունը վերաբերում է Սեբեոսի ներկա Պատմությանը և քան այդմ եղրակացներ, թե Անեցին չգիտե իր օգտագործած երկի վերնագիրը կամ հեղինակին, պետք է անկասկած լիներ, որ Դվինի առման մասին տեղեկությունը քաղված է հենց «Սեբեոսի պատմությունից»: Վերը մենք տեսյալն ընդունեցինք, հօգուտ Գ. Աբգարյանի, որ Դվինի առման մասին տեղեկությունը Անեցին, իրոք, քաղել է ներկա Սեբեոսից և տեսանք, որ նույնիսկ այդ դեպքում էլ չէր կարելի եղրակացնել, թե «այս նույն գործը վերնագիր չի ունեցել Սամվել Անեցու ձեռքի տակ եղած ձեռագրում», թե Անեցին «Սեբեոսին վերագրվող Պատմությունից օգտվելիս նրա հեղինակի անունը չգիտե»: Տեսանք, որ «ասէ պատմագիրն» շատ սովորական և ընդունված արտահայտություն է, որն օգտագործում են մեր մատենագիրները նաև այն դեպքում, երբ լավ գիտեն հեղինակին, որից քաղում են:

Այժմ տեսնենք, թե Դվինի առման մասին տեղեկությունը Անեցին իսկապե՞ս քաղել է ներկա Սեբեոսից: Այս հարցը պետք է քննենք ավելի մանրամասն, որովհետև Սեբեոսի Պատմության այդ մասի վերաբերյալ Գ. Աբգարյանը առաջարկում է բնագրի ուղղում, որը, սակայն, կամայական է և որի հետևանքով բնագիրը ոչ թե ուղղվում-վերականգնվում է, այլ աղավաղվում: Համեմատենք.

Սեբեոս	Սամվել Անեցի
Եւ եղև յաւուրն հինգերորդի դիմեցին ի վերայ քաղաքին... Եւ դիմեալ ի ներքս զաւրք Թշնամեացն՝ սատակեցին սրով զբազմութիւն բաղաքին, և առեալ զաւար և զկապուտ քաղաքին՝ ելին և բանակեցան ի նմին բանակատեղն, որ աւր ի էր առէ ամսոյն. յաւուր ուրբաթի: Եւ դադարեալ աւուրս ինչ՝ ելին և գնացին ընդ նոյն ճանապարհ, ընդ որ եկեալ էին: Եւ խաղացուցին զբազմութիւն գերւոյն լե հազար հոգի... Եւ եղև այս յամս եղրի կաթուղիկոսի:	Արդ՝ յաւուրս Կոստանդի որդւոյ Հերակլեայ՝ առաւ Դուին ի Տաճկաց, ասէ պատմագիրն, և սպանին յաւուր սրբոյ յայտնութեանն՝ ի ս. վկայարանի Ս. Սարգսի 12 000 և արեամբ կատարելոցն ծածկեցաւ սեղանն սուրբ՝ և աւազանն. և զայլսն գերեցին՝ աւելի քան զ30 000: Ապա ժողովեաց Հայրապետն Ներսէս զդիակունս անկելոցն ի պատերազմին և թաղեաց ի նմին վկա-

Իսկ ի ձեռն այնր պատերազմի ի կայսրէ Հրաման հասեալ զաւրավարութեանն Թէոդորոսի Ռշտունեաց

տեառն՝ հանդերձ պատրուճեան պատուով։

Այս ամենայն լինի ի ձեռն կաթուղիկոսին Ներսիսի, որ յաջորդեցաւ ի նմին ամի յաթոռ կաթուղիկոսութեան փոխանակ եղբի կաթուղիկոսի»[52]։

յարանի՝ զոր նորոգապէս շինեաց ի վերայ նոցա»[53]։

*Մինչ այս հատվածների քննումը, լանք Գ. Աբգարյանին. «Անեցին նշում է իր աղբյուրը այնպիսի մի ձևով, որ կասկած չի թողնում այն մասին, որ դա «Սերեոսի Պատմութիւնն» է։ Վերն արդեն ասացինք, որ «Սերեոսի Պատմութիւնը վաղուց գրկվել էր իր խորագրից և այդ պատճառով էլ նրա հեղինակը անհայտ է մնացել։ Եվ ահա, Սամվել Անեցին էլ հիշելով 12 000 զոհերին, գրում է. «ասէ պատմագիրն», առանց նշելու այդ պատմագրի անունը, մի փաստ, որը մատնացույց է անում անխորագիր «Սերեոսի Պատմութիւնը»» (էջ 180—181. ընդգծումը Աբգարյանինն է)։ Այսպես ուրեմն, Անեցին նշում է իր աղբյուրը այնպիսի մի ձևով, որ կասկած չի թողնում, թե դա Սերեոսի Պատմութիւնն է։ Գ. Աբգարյանն էլ է գրում այնպիսի մի ձևով, որ կասկած չի թողնում այն մասին, թե Գ. Աբգարյանը կասկածում է։ Այդուհանդերձ թող զարմանալի չթվա, եթե ասենք, որ ինքը՝ Գ. Աբգարյանը չի հավատում իր գրածին, համենայն դեպս կասկածում է իր գրածի ճշտությանը։ Վերը բերված քաղվածքում Գ. Աբգարյանն ընդգծում է «պատմագիր» բառը և ծանոթագրում. «Պատմագիր» ասելով Անեցին կարող էր հասկանալ նաև Դրասխանակերտցուն (որի մականունն է Պատմաբան)...» (էջ 180, ծանոթ. 13)։ Տարօրինակն այստեղ այն է, որ կասկածելի, անհաստատ փաստերից Գ. Աբգարյանը հանում է հաստատ եզրակացություններ։ Ինչպես տեսանք, Գ. Աբգարյանը չի բացառում, որ Դվինի առման մասին տեղեկությունն Անեցին քաղել է Դրասխանակերտցուց, և չնայած դրան, նա վճռականապես պնդում է, որ այդ տեղեկությունն Անեցին քաղել է Սերեոսից։ Ինչո՞ւ։ Պատճառը, թվում է, պարզ է։ Իր տեսակետը հաստատելու համար Գ. Աբգարյանը ձգտում է ինչ գնով էլ լինի ապացուցել, համոզել ընթերցողին, որ Դվինի առման մասին տեղեկությունն Անեցին քաղել է «Սերեոսի Պատմութիւնից», որպեսզի նրա «ասէ պատմագիրն» խոսքերը համարի ակնարկ այդ Պատմության մասին և եզրակացնի, թե քննվող Պատմությունը խորագիր չուներ, Անեցին չգիտեր նրա հեղինակին և այլն։ Բայց որովհետև խիստ կասկածելի է, թե Դվինի առման մասին տեղեկությունը Անեցին քաղել է «Սերեոսի Պատմութիւնից», Գ. Աբգարյանը հետևետևորեն նահանջի ճանապարհ է թողնում իրեն համար։ Հատկանշական է դարձյալ, որ այն մասին, թե պատմագիր ասելով Անեցին կարող էր նկատի ունենալ Դրասխանակերտցուն, Գ. Աբգարյանը գրում է ոչ թե իր գրքի 20-րդ էջում, այլ... 180-րդ էջում։ Իսկ եթե Անեցին այդ տեղեկությունը քաղել է Դրասխանակերտցուց, ապա Գ. Աբգարյանի կառուցած շենքը, ինքնին անհիմն, նորից փլվում է, որովհետև, նրա իսկ արտահայտությամբ, դեկավարվելով, պետք է ասենք. Դրասխանակերտցու Պատմության այն օրինակը, որ օգտագործել է Անեցին, խորագիր

52 ՍԵՊ, էջ 110—111։

53 Հատվածներ ի գրոց պատմագրաց, էջ 80—81։

չի ունեցել, Անեցին չգիտի այդ Պատմության հեղինակին, այդ պատճառով նրանից քաղելիս գրում է. «ասէ պատմադիրն» և այլն և եթե այսպես շարունակենք, կարող է նույնիսկ ստացվել, որ Դրասխանակերտցու Պատմության հեղինակը Խոսրովն է:

Այժմ երկու պատմիչներից վերը բերված հատվածների մասին: Սամվել Անեցու ժամանակագրության որոշ ձեռագրեր գերիների թիվը 30 000-ի փոխարեն նշում են 35 000: Ընդունենք, որ այս կետում Անեցին համաձայն է Սեբեոսին: Անեցին, սակայն, հաղորդում է շատ կարևոր մանրամասներ եա. Դվինի Ս. Սարգսի վկայարանում արաբները կոտորել են 12 000 հոգի և դա տեղի է ունեցել «յաւուր սրբոյ յայտնութեան»: Այս փաստերը չկան «Սեբեոսի պատմության» մեջ, հետևապես Դվինի գրավման մասին տեղեկությունը Անեցին չէր կարող վերցնել «Սեբեոսի Պատմությունից», ուստի Անեցու խոսքը՝ «ասէ պատմադիրն», այդ Պատմությանը չի վերաբերում:

ԱՅՍՕՐ ՍԵԲԵՈՍԻ ԱՆՈՒՆՈՎ ՀԱՅՏՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ ԻՐԱԿԱՆ ՍԵԲԵՈՍԻ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ Ի ՀԵՐԱԿԼԻՆ» ԳՈՐԾՆ Է

Այսպիսով, մենք քննեցինք Գ. Աբգարյանի բոլոր փաստարկները, բոլոր ապացույցները, որոնցով նա փորձում էր հաստատել, որ Սեբեոսի իսկական Պատմությունը, իբր, մեզ չի հասել, և թե Սեբեոսի անունով հայտնի Պատմությունը, իբր, Խոսրովինն է: Տեսանք, որ նրա փաստարկները և եղրակացությունը մերժելի են:

Գ. Աբգարյանի անհաջող փորձի հերքումով, թեև ինքնին արդեն, անխախտ են մնում մեր ունեցած պատկերացումները Սեբեոսի ու նրա Պատմության վերաբերյալ, այնուամենայնիվ ավելորդ չենք համարում վկայակոչել մի քանի փաստ, որոնք հաստատում են Սեբեոսի հեղինակային իրավունքները հայտնի Պատմության նկատմամբ:

ա. Սեբեոսի Պատմությունը և «Ի Հերակլա պատմութեանց» բնագիրը

Ապացուցած համարելով, որ Սեբեոսի անունով հայտնի Պատմությունը Սեբեոսինը չէ, քննարկվող աշխատության հեղինակը, այնուհետև, ջանում է գտնել իրական Սեբեոսի իսկական պատմության հետքերը: Նա մատնացույց է անում մեր Մատենադարանի № 993 և 7729 ձեռագրերը, որոնք պարունակում են երկու փոքրիկ գործեր, ըստ Գ. Աբգարյանի՝ «Ի Պատմութենէ Հերակլի» խորագրով: Նա կարծում է, որ այդ գործերի «խորագիրն ու Հերակլին նվիրված լինելու փաստը թույլ են տալիս ենթադրելու, որ դրանք հավանաբար Սեբեոսի երկից մնացած հատվածներ են» (էջ 29):

Նշված «հատվածները» Գ. Աբգարյանն, այսպիսով, փաստ է դարձնում, թեկուզ և ենթադրական, նորից ապացուցելու, որ Սեբեոսի անունով հայտնի Պատմությունը Սեբեոսինը չէ: Մորև ցույց կտանք, որ բնագրական այդ մի հատվորները, Սեբեոսի հայտնի Պատմության հատվածներ չլինելով հանդերձ, ապացուցում են, հակառակ Գ. Աբգարյանի, որ այսօր Սեբեոսի անունով

Հայոնի Պատմությունը իրական Սերեոսի իսկական Պատմությունն է։ Մինչ այդ, սակայն, ձեռագրերի մասին։

Մեր Մատենադարանի № 993 ձեռագիրը, որին գրիչն անվանում է «Հրաշափառ ոօնական», գրվել է 1456 թվականին Սյունիքում (Վերին Նորավանք)։ Մեզ հետաքրքրող հատվածը ձեռագրում գրավում է 647—648 թերթերը և ունի հետևյալ վերնագիրը՝ «Յաղագս Սրբոյ Խաչին. ի Հերակլա պատմութեանց»։

№ 7729 ձեռագիրը Մշո Հայոնի Ճառընտիրն է, հայկական ամենամեծ և ամենածանր ձեռագիրը։ Հատվածն գրազինում է ձեռագրի առաջին կեսի 538—539 թերթերը և ունի այս վերնագիրը՝ «Ի Պատմութենէ Հերակղի»։ Ձեռագրից թերթեր են պակաս և խոսքն ընդհատվում է հետևյալ բառով. «իսկ յորժամ եկն զաւրավարն Խոսրոյ եկն եւ Թագաւորն Խոսրով եւ միաբանեալ երկոցունց Թագաւորացն Խոսրով և Խաբան խարէութեամբ...»։

Երկու ձեռագրերում էլ պատմությունն ունի, ընդհանուր առմամբ, նույն բովանդակությունը, թեև ներքին հատվածների (պարբերությունների) հաջորդականությունը տեղ-տեղ տարբեր է։ Բացի դրանից, որոշ մասեր կան մի ձեռագրում և չկան՝ մյուսում։

Քանի որ № 7729 ձեռագրում բնագիրը պակասավոր է, բնական է, որ հիմնականում պետք է հենվենք № 993 ձեռագրի վրա։

№ 993 ձեռագրի քննվող բնագիրը 1909 թվականին հրատարակել է Ն. Մառը[54] իրեն հատուկ խորաքննին ուսումնասիրությամբ և հանգել այն եզրակացության, որ № 993 ձեռագրի բնագիրը ստեղծվել է Թ—Ժ դարերում կամ ավելի ուշ։ Նա բերում է հետևյալ փաստերը.

1. «Հուշարձանը,— գրում է Ն. Մառը,— ուշագրություն է գրավում Հերակլի ընդգծված փառաբանությամբ՝ կայսրը անվանվում է ոչ միայն աստվածապաշտ կամ աստվածասեր, այլև սուրբ[55]։ Հերակլ կայսեր այդպիսի պաշտամունքի գոյությունը հայկական աղգային եկեղեցու միջավայրում մեզ վերին աստիճանի կասկածելի է թվում։ Այդ պատճառով սաքը կարող է մեզ համար հատուկ հետաքրքրություն ներկայացնել, որպես հայ գրականության բազմիդարնական հոսանքի պահպանված հազվագյուտ հուշարձաններից մեկը»[56]։

2. Խաչափայտը Պարսկաստանից Հունաստան տանելու ճանապարհի մասին № 993 ձեռագրում կարդում ենք. «Այնուհետև բարձեալ սայլից՝ բազում դադարս հանեալ ի բուն պողոտայն վրաց՝ առեալ տանէր ի Թագաւորութիւնն Յունաց»[57]։ Խաչափայտան, այսպիսով, վերադարձրել են Հունաստան «բուն Վրաց պողոտայով»[58]։ Ըստ Ն. Մառի, այս ճանապարհը Թուրքական տիրապետության ժամանակ կոչվում էր «Գյուրջի բողազ», որը թարգմանություն է տեղական հին անվան։ Այս ճանապարհն անցնում էր Ճորոխի վտակ Խափրի ավա-

---

54 *Տե՛ս Антиох Стратиг*, Пленение Иерусалима персами в 614 г. Тексты и разыскания по армяно-грузинской филологии, книга IX, СПб, 1909, էջ 52—59։ Այսուհետև՝ Ն. Մառ։

55 «Յայնժամ աստուածասէր Թագաւորն Յունաց (Ձեռ. № 993, թ. 647 բ1)։ «Աստուածասէր Թագաւորն Հերակլ» (անդ, թ. 647 բ2), «Այնուհետև Խոսրեան եկն անկաւ առաջի սուրբ կայսերն» (անդ, թ. 647 բ2), «եւ Հրամանաւ սուրբ կայսերն» (անդ, թ. 648 ա1)։

56 Ն. Մառ, էջ 60։

57 Նույն տեղում, էջ 58։ Տե՛ս նաև Ձեռ. № 993, թ. 648 ա1։

58 Հերակլ կայսեր պարսկական արշավանքների ուղղությունների մասին ժամանակակից տե՛ս Я. А. Манандян, Маршруты персидских походов Ираклия, „Византийский временник", 1950, III, էջ 133—153։

պանով, այսինքն Տայքով: Տայքը կամ նրա միջով անցնող ճանապարհը կարող էր կոչվել Վրացական միայն այն բանից հետո, երբ երկրամասի հայ բնակչությունը ընդունել էր Քաղկեդոնի դավանանքը: Ինչպես նշում է Մառը, դա տեղի ունեցավ Ը դարի վերջերից և Թ—Ժ դարերում[59]: Արդեն Ն. Մառի նշած այս փաստերը միայն (մանաւանդ՝ Ճանապարհի «Վրաց պողոտա» անունը), թվում է, բավական են արձանագրելու, որ № 993 ձեռագրում եղած «Հատվածը» ոչ թե է դարի, այլ Թ—Ժ կամ ավելի ուշ ժամանակների գործ է: Այդուհանդերձ, բերենք մի քանի փաստ ևս, որոնք դարձյալ հաստատում են, որ № 993 ձեռագրի բնագիրը կրում է քաղկեդոնական միջավայրի կնիքը:

«Յայնժամ,—կարդում ենք բնագրում,— Թագաւորն Խոսրով ժողովեալ զբազմութիւն ազգաց անաւրինաց, արանց խուժդուժաց բազմաց բիւրաւորաց եւ զԱտրապատական եւ զԲոզոմեանս եւ զլեռնային աշխարհին»[60]: Բնագրի հայ հեղինակը անօրեն ազգ է անվանում հայերին (Բոզոմյաններին): Ակնհայտ է, որ մեր հեղինակը քաղկեդոնական է:

Քննվող բնագրում աչքի է ընկնում Աստվածածնի ընդգծված պաշտամունքը: Ստեղծված վիճակից ելք գտնելու համար Հերակլը «աղաւթս առ բարձրեալն մատուցանէր՝ ունելով բարեխաւս զիտառաւորեալ Աստուածածին սուրբ կոյսն Մարիամ»: Հերակլն ասում է. «Ոչ զոք ունիմք բարեխաւս եթէ ոչ զքեզ Մարիամ»: Ադոթքների չորրորդ օրը Հերակլին տեսիլ է երևում. «Տեսանէի զՍուրբ Աստուածածինն՝ ունելով սուսեր մերկ հրեղէն ի ձեռին իւրում՝ մատոյց առ իս եւ ասէ. Հատ զնա (Խոսրովին—Խ. Ք.) եւ ընկեա»: Հերակլը հաղթում է, ի վերջո, Աստվածածնի զորավոր միջամտության շնորհիվ[61]:

Հայկական ազգային (մի բնության դավանանքի) միջավայրում Աստվածածնի պաշտամունքը, իհարկե, նույնպես կար և տարածված էր, բայց և այնպես առաջին տեղում Քրիստոսն էր միշտ (կամ Հայր աստվածը—ներկա դեպքում դա կարևոր չէ), այնինչ մեր Հարևան Վրաստանում, քաղկեդոնական Վրաստանում (նաև Բյուզանդիայում) Աստվածածնի պաշտամունքը անհամեմատ ավելի ընդգծված էր, քան Հայաստանում: Ասածը հաստատելու համար կարելի է վկայակոչել վրաց միջնադարյան մատենագրության բազմաթիվ գործեր. բավականանանք, սակայն, պատմագրական մի երկով, ստեղծված 1042 թվականին, որի վերնագիրն է «Պատմութիւն»—თხრობაჲ և որի զգալի մասը նվիրված է Հերակլ կայսեր արշավանքին Պարսկաստան: Այդ Պատմությունն սկսվում է հենց Աստվածածնի ներբողումով. բազում են ու անպատմելի հրաշքներն ու շնորհները, որ ցույց է տվել ամբողջ մարդկությանը սուրբ Թագուհին մեր՝ Աստվածածինը: Նա Թագուհին է բոլորի, հովանավորը տիեզերքի, պահապանը քաղաքների ու ժողովուրդների, վեմը հեկեղեցու և այլն[62]: Հայր և որդի աստվածների հետ միասին, թերևս ավելի հաճախ ու ավելի ընդգծված է ներկայացված Աստվածածնի պաշտամունքը նաև բուն Պատմության մեջ, պահպանելով առաջարանի ոգին: Տեսանք, որ նույն պաշտամունքի կնիքը կա նաև մեր բնագրի վրա:

---

59 Ն. Մառ, էջ 59—60:

60 Ձեռ. № 993, թ. 647 բ1:

61 Անդ, թ. 647 բ2:

62 Տե՛ս Сборник материалов для описания местностей и племен Кавказа, вып. XXVIII, Тифлис, 1908, էջ 8: Այսուհետև Сборник материалов: Այս Պատմության մասին տե՛ս մանրամասն՝ Ն. Մառ, էջ 24—26:

Մեր բնագիրը կրում է ոչ միայն բաղկեդոնական դավանանքի դրոշմը, այլև վրաց պատմագրական որոշ ավանդույթների ազդեցությունը: Այս հարցը կքննենք կապված մեր բնագրի վերնագրի հետ:

Ինչպես տեսանք, նրա վերնագիրն է «Յաղագս Սրբոյ Խաչին. ի Հերակլա Պատմութեանց»: Այս գործը, կամ № 993 ձեռագիրը, կամ սրա նախագաղափարագիրը կազմողի նպատակներից մեկն է եղել ունենալ առանձին կամ «ի մի տիւր» խաչին նվիրված պատմություն-զրույցներ: Եվ իրոք, № 993 ձեռագրում մեր բնագրից առաջ կան հետևյալ բնագրերը. «Գիւտ բեհեռաց խաչին Ք[րիստոսի]», «Գիւտ վերատին գարձեալ սրբոյ խաչին յԵրուսաղէմ ի ձեռն Հեղինեայ Թագուհոյ», «Տեսիլ Կոստանդիանոսի մեծի և պատուածասէր Թագաւորի»: Խաչին նվիրված բազմաթիվ պատմություն-զրույցներ կան թե մեր, թե օտար մատենագրությունների մեջ: Այսպիսի պատմություն-զրույցներ կան և չէին կարող չլինել նաև Հերակլին նվիրված Պատմություններում, կապված, մանավանդ, խաչափայտը գերությունից ազատելու փաստի հետ: Հիշենք, մեր պատմիչներից բացի, Հացունյաց խաչի, Միծառնյա խաչի և այլ պատմությունները: Արդ, մեր բնագրի վերնագրի երկրորդ մասն է՝ «ի Հերակլա պատմութեանց», ոչ թե «Հերակլի Պատմությունից», այլ «Հերակլի Պատմություններից»: Այլ կերպ՝ հեղինակը նկատի ունի ոչ թե Հերակլին նվիրված մեկ որոշակի Պատմություն, այլ մի շարք Պատմություններ: Միայն այս փաստը բավական է ասելու, հակառակ Գ.Աբգարյանի, որ № 993 բնագիրը չի կարող լինել հատված Սեբեոսի, իբր, կորած կամ հայտնի Պատմությունից: № 993 բնագրի վերնագրից դատելով, հեղինակի նպատակն է եղել Հերակլին նվիրված մի շարք Պատմությունների տվյալների հիման վրա ստեղծել խաչի մասին ամփոփ մի Պատմություն: Դա հաստատվում է, սակայն, ոչ միայն բնագրի վերնագրով, այլև անկախ վերնագրից, բուն բնագրով, որտեղ կան տարբեր Պատմությունների ցայտուն հետքերը: Բերենք մի քանի օրինակ: Ըստ հայ մատենադիրների, Խոսրով Ապրուեղին սպանել են նրա պալատականները իր որդու հրամանով: Ըստ վրաց մատենագիրների (որոշ բացառություններով), Խոսրովին սպանել են Հերակլը կամ նրա զինվորները: Այսպես՝

Սեբեոս	Սումբատ
Եւ արքայ Խոսրով յայլակերպս լեալ եմուտ ի բուրաստանն արքունի... Եւ եկեալ Կաւատ արքայ Հրամայեաց խնդիր առնել, և գնացեալ ի բուրաստանն՝ զտին զնա. կալան զնա և ածին ի դահլիճ անդր. Եւ Հրամայեաց Կաւատ արքայ, և սպանին զնա[63]:	*Թագավորը (Հերակլը—Ա. Թ.) Գարդարանից գնաց Լալ... Բաղդադ: Գրավից Բաղդադը, գերից Խուասրո Թագավորին և ստիպեց վերադարձնել Կենաց Փայտը*[64]:

63 ՍԵՊ, էջ 96:

64 ქართლის ცხოვრება, ტომი I, თბილისი, 1955, էջ 375$_{10-13}$:

Դրասխանակերացի

Բայց Կուտաս՝ որդի առաջնոյ խոսրովայ, սպանեալ զերկրորդն խոսրով Պարսից արքայ, ինքն փոխանակ նորա թագաւորէ[65]*։*

Վրաց դարձի պատմություն

Հերակլը գրավեց Բաղդադը, գերի վերցրեց Խուասրո թագավորին և ստիպեց հանձնել Կենարար խաչը[67]*։*

Կաղանկատվացի

Եւ լեալ հետիոտս ընդ դուռն բուրաստանին իւրոյ, գնաց և թագեաւ ընդ ծառովք... Ապա եկին հասին... դարին գնա (Կալատի մարդիկ— Խ. Թ.)... մուծին ի սրահ մի... եւ պահեալ գնա առ այն օր՝ ի վաղիւն բռնայիւն սրով գլուխն (Խոսրովի—Խ. Թ.)[66]*։*

Ջուանշեր

Սակայն Հերակլ թագավորը մտավ Պարսկաստան և սպանեց Խուասրո թագավորին[68]*։*

Իսկ ինչ է հաղորդում այս դեպքի մասին մեր բնագիրը։ Ահա. «Եւ ի լուսանալ առաւաւտուն եկին ի պատերազմ. եւ մանկունքն Հերակլայ զհետ մտանալ՝ հասին զգլուխն Խոսրովու և բերին առաջի Հերակլի»[69]*։ Ինչպես տեսնում ենք, չնվազ բնագրի հեղինակը ավելի դեպքում հետևում է վրաց պատմագրությանը։*

Բերենք մի օրինակ ևս. ըստ հայ պատմագրության, երբ Կալատի կարճատև թագավորությունից հետո գահ է բարձրանում մանուկ Արտաշիրը, Հերակլը նամակ է գրում պարսից զորավար Խոյամին, խոստանալով նրան տալ պարսից գահը և բանակցություններին համար ժամադրություն է նշանակում։ Խոյամը հանդիպում է Հերակլին վերջինիս հրավերով։ Այսպես է ըստ Սեբեոսի[70]*, Արծրունու*[71]*, Ասողիկի*[72] *և այլն։ Ըստ վրաց պատմիչի, Սարվարոնը, նույն ինքն Խոյամը, «իմանալով Խուասրոյի, Թրթի, Կավոսի և Ուրմիզդի մահվան մասին, գրում է Հերակլ թագավորին. «Գիտես ինքդ, որ ես եկա հույների թագավորությունը ոչ իմ կամքով և ոչ էլ իմ կամքով արեցի այն, ինչ արեցի Խուասրոյի հարկադրանքով, որն ուղարկեց ինձ»։ Այնուհետև խնդրում է նա Հերակլին, որ թույլ տա իրեն գալ և կանգնել նրա առաջ որպես ստրուկ։ Հերակլ թագավորը խոսք է տալիս նրա հետ նեղոդամատաբար վարվել։ Նա (Սարվարոնը—Խ. Թ.) այդպես էլ վարվեց»*[73]*։ Մեր բնագրի հեղինակը ևս դեպքը ներկայացնում է այնպես, ինչպես վրաց պատմիչը։ «Այնուհետև,—պատմում է մեր բնագիրը,—խոսրան եկն անկաւ առաջի սուրբ կայսերն և ասէ. տուր ինձ զաւրս*

---

65 *Պատմութիւն Հայոց, 1912, էջ 75։*

66 *Պատմութիւն Աղուանից աշխարհի, 1912, էջ 168—169. տե՛ս նաև Ասողիկ, 1885, էջ 116, Արծրունի, 1887, էջ 95։*

67 Сборник материалов, вып. XXVII, Тифлис, 1900, *էջ 44։*

68 ქართლის ცხოვრება, ტ. I, *էջ 227*$_9$*։*

69 *Ձեռ. № 993, թ. 647 բ2։*

70 *Սեբ., էջ 99։*

71 *Պատմութիւն, էջ 96—97։*

72 *Պատմութիւն, էջ 117։*

73 Сборник материалов, вып. XXVII, *էջ 52։*

եւ ընդ իս լեր եւ ինքեան ինձ աւգնական...»[74]: *Հայտնի է, որ վրաց մատենագրութիւնից մեր վկայակոչած բոլոր գործերն էլ ստեղծվել են է դարից շատ հետո, ժ—ԺԱ դարերում և ավելի ուշ: Քանի որ մեր բնագիրը կրում է ժ—ԺԱ դարերի գործերի աղդեցութիւնը, ակնհայտ է, որ այն ստեղծվել է ավելի ուշ՝ ԺԲ կամ հետագա դարերում*[75]:

Այստեղից այն ապավորութիւնը չպիտի ստեղծվի, թե այս բնագիրը կազմվել է միայն օտար աղբյուրների հիման վրա. հեղինակն օգտագործել է նաև հայկական աղբյուրներ, առավելապես կամ հիմնականում նա օգտվել է հայկական աղբյուրներից: Քննվող բնագրի վերնագրից և բուն բնագրից ակնհայտ է, որ նրա հեղինակն օգտվել է հատկապես Հերակլին նվիրված Պատմութիւններից: Արդ՝ բնագրի հեղինակը օգտվե՞լ է նաև Սեբեոսի Հայտնի «Պատմութիւն ի Հերակլն» գործից, թե՞ ոչ. եթե այո, ապա այս երկու գործերը նույնանում են, և, ուրեմն, այսօրվա Սեբեոսը իրական Սեբեոսն է: Փորձենք պատասխանել այս հարցերին:

Սեբեոսի անունով Հայտնի Պատմութեան ու № 993 բնագրի համեմատութիւնը ցույց է տալիս, որ վերջինս, եթե նկատի չունենանք վերը նշված և մի քանի այլ տարբերութիւնները, իր պատմական մասով ընդհանուր առմամբ հետևում է Սեբեոսի Հայտնի Պատմութեանը: Բացի դրանից, Սեբեոսի անունով Հայտնի Պատմութեան մեջ բերված է Խոսրովի նամակը Հերակլին: Համաշխարհային պատմագրութեան մեջ այս նամակը հայտնի է միայն ու միայն այն Պատմութիւնից, որ համարվում է Սեբեոսինը[76]: *Արդ՝ այդ նամակը բերված է նաև մեր բնագրում: Համեմատենք.*

Սեբեոս

Աստուծոյ պատուական և ամենայն երկրի տէր և թագաւոր և ծնունդ մեծի Աբրամազդայ Խոսրով՝ առ Երակլէս անմիտ և անպիտան ծառայդ մեր:

Ոչ կամեցեալ տալ զանձն ի ծառայութիւն մեզ, այլ տէր և թագաւոր կոչես զքեզ... Բայց արդ՝ զամենայն յանցանս թողում քեզ. արի, առ զկինն քո և զորդիս և նկ այսր: Եւ ապա քեզ ազարակս, այգիս և ձիթենիս, որով կեցցես, և մեր սիրով նայիցուք ի քեզ... Չի եթէ իջանիցես յանդունդս ծովու՝ ձգիցիմ զձեռն իմ և ըմբռնեցից զքեզ...[77]:

№ 993 ձեռագիր

Խորհուրդ վատթար ի մէջ առեալ՝ զրէ առ նա այսպիսի ձեւով. Ես Խոսրով նատեալ ի վերայ ամպոց եւ ընդ աստուածս փառաւորեալ՝ որ հրամայեալ էմ քեզ Հերակլի գալ եւ չեռոյ խոհակերաց իմոց լինել ի սարկութեան. և յորժամ հասանի առ քեզ հրամանք իմ մի յապաղեր գալ պաշտել զիս, ապա թէ ոչ, չարաչար անցք անցուցանեմ ընդ քեզ...[78]:

---

74 Ձեռ. № 993, թ. 647 բ2—648 ա1:

75 Ըստ Սամվել Անեցու (էջ 79), կիրակոս Գանձակեցու (1961, էջ 52) «Ծիծառնեայ խաչի» խոսրովին պատկել է Հերակլը: Եթե մեր բնագրի հեղինակը օգտվել է նշված պատմիչներից, ապա այն պետք է հորինված լինի դարձյալ ԺԲ դարում կամ հետո: Հնարավոր է, որ № 993 բնագրի հեղինակը օգտված լինի հունական աղբյուրներից, բայց դա դարձյալ նույն բանն է հաստատում:

76 Տե՛ս, օրինակ, Ф. И. Успенский. История Византийской империи, том I, էջ 705:

77 ՍեՊ, էջ 91—92:

78 Ձեռ. № 993, թ. 647 ա2:

Նորից հիշեցնենք, որ Խոսրովի նամակը Հերակլին հայտնի է միայն Սերեոսի անունով ծանոթ Պատմությունից: Արդ՝ № 983 բնագրի հեղինակը (կամ գրիչը) հայտնում է, որ ինքը օգտվել է Հերակլին նվիրված Պատմություններից: Այդ բնագրում գտնում ենք մի փաստ, որ կարող էր վերցված լինել միայն ու միայն այն գործից, որն այսօր էլ համարվում է «Պատմութիւն ի Հերակլն», հետևապես այսօր Սերեոսի անունով հայտնի «Պատմութիւն ի Հերակլն» գործը իրական Սերեոսի «Պատմութիւն ի Հերակլն» գործն է[79]:

բ. № № 2220 և 2271 ձեռագրերի մատենագիտական ցանկերը

Ինչպես վերը տեսանք, Գ. Արգարյանը որոշակիորեն գրում է. «Միջնադարյան ոչ մի մատենագրական հուշարձանում չի պահպանվել որևէ տեղեկություն, որից երևար, որ այժմ Սերեոսին վերագրվող երկը միջնադարում նույնպես դիտվել է որպես Սերեոսի գործ» (էջ 19): Թողնենք հայտարարությունը և անցնենք փաստերին: Դրանցից մեկն արդեն բերեցինք, ահա հաջորդ պերճախոս փաստը: Խոսքը վերաբերում է մեր Մատենադարանի № № 2220 և 2271 ձեռագրերում պահպանված հայ պատմագիրների ցանկին[80]: Այս ցանկն օգտագործել է նաև Գ. Արգարյանը, և անհետաքրքրական չի լինի, եթե ծանոթանանք նրա գնահատականին. «Սա մի արժեքավոր աղբյուր է, որի հեղինակը երբեմն հայտնում է այնպիսի տեղեկություններ, որոնք այլուր չեն պահպանվել» (էջ 112), կամ՝ «Հանձին «Պատմագիրք հայոց» ցանկի հեղինակի մենք ունենք հայ մատենագրությանը քաջատեղյակ մի մասնագետ: Բնագիր նշելիս նա աղբյուրագիտական վերլուծության է ենթարկում դրանք... Այնպիսի դեպքերում, երբ հեղինակը հայ մատենագիրների այս կամ այն երկը ճշելիս՝ դրանք չի ունեցել ձեռքի տակ կամ առնասարակ չի տեսել, այդպիսի դեպքերում նա ճշում է այն աղբյուրը, որտեղից քաղել է տեղեկությունը» (էջ 113, ընդգծումը մերն է—Խ. Թ.) և այլն: Այս հիրավի արժեքավոր ու վստահելի ցանկում կարդում ենք. «11. Հերակլ, յԵւսեբիոսէ եպիսկոպոսէ ասացեալ, որ ինչ սակս պատերազմացն Հերակլի և Խոսրովու, և այլ բանք պիտանիք»:

Այսպիսով, ցանկի հեղինակը պարզ կերպով հայտնում է, որ այն գործը, որի մեջ պատմվում է Հերակլի ու Խոսրովի պատերազմների մասին, գրել է Սերեոսը, այլ կերպ՝ անկասկածելիորեն հաստատում է, որ ցարդ Սերեոսի անունով հայտնի Պատմությունը, իրոք, Սերեոսի գործն է:

գ. Սերեոսը և Ասողիկն ու Մխիթար Անեցին

Մեր մատենագիրներից շատերն են օգտվել Սերեոսի Պատմությունից, բայց, ժամանակագրական, ոչ բոլորն են նշել նրա անունը: Այս հանգամանքը չի կարող, իհարկե, ապացույց լինել, թե այդ Պատմության հեղինակը Խոսրովն

79 Ենթադրությունը, թե № 993 բնագրի հեղինակը նամակին կարող էր ծանոթ լինել մեր մյուս պատմիչներից (օրինակ՝ Արծրունի), հիմնավոր չէ, որովհետև հեղինակն հայտնում է, որ ինքն օգտվել է Հերակլին նվիրված Պատմություններից:

80 Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, Ա, Երևան, 1950, էջ LIII—LV:

է, իսկ Խոսրովի անունն էլ չեն նշել, որովհետև ձեռագիրը խորագիր չի ունեցել։ Թումա Արծրունին, օրինակ, օգտվել է, Սերեոսից բացի, մի շարք այլ պատմիչներից ևս, որոնցից մի քանիսի անունը դարձյալ չի տալիս։ Սերեոսի հեղինակային իրավունքները հայոնի Պատմության նկատմամբ հաստատելու համար նպատակահարմար չի լինի վկայակոչել Սերեոսից օգտվող, բայց նրա անունը չհիշող պատմիչներին։ Պարզության համար, պետք է դիմել այն մատենագիրներին, որոնք և քաղել են Սերեոսից, և նշել նրա անունը։ Բավականանանք երկու հեղինակով՝ Ասողիկ և Մխիթար Անեցի։

Մինչ այդ, սակայն, երկու խոսք ասենք հետազոտության այն եղանակի մասին, որով ներկա դեպքում զեկավարվում ենք մենք քննվող Պատմության հեղինակի հարցը պարզելիս։ Տվյալ պահին մենք մի կողմ ենք դնում Սերեոսի Պատմության հայտնաբերման ամբողջ պատմությունը, գիտակցաբար մոռանում ենք Հովհ. Շահխաթունյանին, ընդունում ենք, որ Սերեոսի Պատմությունը ցարդ հրատարակված չէ և բոլորովին անծանոթ է գիտական աշխարհին։ Այս պայմաններում, դիցուք, այսօր Մատենադարանի բազմահարուստ ձեռագրերի միջից հայտնաբերվում է պատմագրական մի գործ՝ քննվող Պատմությունը, այնպես ինչպես այն կա № 2639 ձեռագրում՝ առանց հեղինակի, առանց վերնագրի։ Բնականաբար մեր առաջ խնդիր է դրվում՝ պարզել ի՞նչ Պատմություն է այդ և ո՞ւմ Պատմությունն է։ Ուշի ուշով ու հանգամանորեն ծանոթանում ենք նորահայտ բնագրին և արձանագրում առաջին ակնհայտ փաստը։ Նորահայտ բնագիրը ոչ Խորենացի է, ոչ Փարպեցի, ոչ Բուզանդ, մի խոսքով՝ հայոնի Պատմություններից ոչ մեկը չէ։ Այնուհետև արձանագրում ենք երկրորդ և շատ կարևոր փաստը՝ նորահայտ բնագիրը 7-րդ դարի գործ է։ Սա արդեն վստահելի ուղեցույց է բնագրի հեղինակին որոնելու ժամանակագրական շրջանակների համար։ Բնականաբար մեր ուշադրությունն է գրավում նաև Սերեոսը, որպես որոշյալ ժամանակաշրջանի հեղինակ։ Բազմաթիվ և հավասարապես ստուգելի ենթադրությունների շարքում, իր տեղն է գրավում նաև պարզ մի ենթադրություն. հնարավոր է, որ նորահայտ բնագիրը Սերեոսի գործն է։ Ջուգահեռաբար ստուգում ենք բոլոր ենթադրությունները, վերջին ենթադրությունը ևս։ Պրպտումները բերում են նաև ստ. Պատմությունը Ասողիկին։ Իր գործի սկզբում Ասողիկը գրում է. «Իսկ ըստ հայումս՝ նախ և առաջին քաջն Ադաթանգեղոս... եւ գինի մնձն Մովսէս... եւ ապա եղիշէ... եւ գինի՝ Ղազարու Փարբեցւոյ Ճարտասանի Պատմութիւն. և Փաւստոս, որ և Բիւզանդ. և Պատմութիւն Հերակլի, որ ի Սեբէոսէ եպիսկոպոսէ ասացեալ. և Պատմութիւն Ղևոնդ երիցու... Հուսկ յետոյ ի վերջին աւուրս Պատմութիւնք Շապհոյ Բագրատունւոյ և Տեառն Յովհաննիսի Հայոց կաթողիկոսի, որք ստ ժամանակօքն Աշոտոյ և Սմբատայ, առաջին թագաւորաց Բագրատունեաց։

Արդ յամենեցունց ի սոցանէ, իբր ի լայնալիր մարգոց և ի հովտային լերանց՝ հաւաքեալ ծաղիկս հեշտալի աշաց հայելոյ... բերեալ ընծայ մատուցանեմ աստուածասէր անձինդ... ով... Տէր Սարգիս»[81]։

Ընդգծելի է, որ Ասողիկը, ի տարբերություն մեր մյուս մատենագիրների, ոչ թե ընդհանրապես պատմագիրների ցանկն է տալիս, այլ թվարկում է միայն այն պատմիչներին, որոնցից ինքն օգտվել է իր Պատմությունը հյուսելիս։ Այս

81 Ստեփանոսի Տարօնեցւոյ Ասողկան *Պատմութիւն տիեզերական*, Պետերբուրգ, 1885, էջ 6—7։ Այսուհետև՝ Ասողիկ։

կետի վրա պետք է հատուկ ուշադրություն դարձնենք։ Ինչպես տեսնում ենք, Ասողիկը խոսքով անունը չի նշում, այլ կերպ՝ նրի խոսքով, նույնիսկ, եղել է ու Պատմություն գրել, Ասողիկը նրանից չի օգտվել։ Եվ ընդհակառակը՝ Ասողիկը շատ պարզ գրում է, որ օգտվել է «Պատմութիւն Հերակլի» գործից, որն «ասացեալ է ի Սեբէոսէ եպիսկոպոսէ»։ Ուրեմն՝ Ասողիկի Պատմությունը ինչ-որ չափով պարունակում է նաև իրական Սեբեոսի իսկական «Հերակլի պատմությունը»։ Բայց, ինչպե՞ս իմանանք, թե Ասողիկի Պատմության ո՛ր հատվածներն են քաղված իրական Սեբեոսի իսկական Պատմությունից։ Գ. Աբգարյանի համար այս հարցը անլուծելի է մնացել։ Նա գրում է, «Մի շարք պատմիչներ... որոնցից բառացի մեջբերումներ են կատարում Սեբեոսին վերագրվող երկից, բայց նրանցից ոչ մեկը, բացի Ասողիկից, չի նշում Սեբեոսի անունը։ Ասողիկն էլ այդ անունը հիշատակում է հայ պատմիչների ընդհանուր ցուցակում և ոչ թե «Տիեզերական պատմության» այս կամ այն հատվածի կապակցությամբ, որով հնարավոր լիներ որոշել, թե «Տիեզերական պատմության» ո՛ր հատվածին է վերաբերում Սեբեոսի անունը» (էջ 19—20)։ Մեր պարտքն ենք համարում ցույց տալ այն եղանակը, որով հնարավոր կլիներ պատրվել այդ հարցը։ Տվյալ դեպքում պետք էր զեկավարվել հայտնիի բացատման սկզբունքով։ Այսպես, Ասողիկի Պատմությունը բառ առ բառ համեմատում ենք նրա աղբյուրների հետ և հանում ենք այն ամենը, ինչ նա վերցրել է օտար աղբյուրներից։ Այնուհետև հանում ենք այն ամենը, ինչ նա վերցրել է իր կողմից թվարկված հայ հեղինակներից, որոնց գործերը մեզ հայտնի են, այսինքն հանում ենք այն, ինչ նա վերցրել է Ագաթանգեղոսից, Խորենացուց, Փարպեցուց, Բուզանդից, Ղևոնդից և Դրասխանակերտացուց։ Հանում ենք նաև այն, ինչ Ասողիկը պատմում է որպես ժամանակակիցից։ Այդ բոլորից հետո Ասողիկի Պատմությունից կմնան ինչ-որ հատվածներ։ Հատվածների այս ամբողջությունը անվանենք զանգված ՍԲ։ Ասողիկի թվարկած հայ հեղինակների գործերից մեզ անծանոթ են Սեբեոսի Պատմությունը (վերը մենք պայմանականորեն ընդունեցինք, որ այս Պատմությունը մեզ անհայտ է) և Շապուհ Բագրատունու Պատմությունը։ Զանգված ՍԲ-ն, այսպիսով, կազմված է Սեբեոսի և Բագրատունու Պատմություններից քաղված հատվածներից։ Հետագա քայլն անելու համար երկու ճանապարհ կա՝ կամ զանգված ՍԲ—Ս=Բագրատունու Պատմությանը և կամ զանգված ՍԲ—Բ=Սեբեոսի Պատմությանը (հասկանալի է, երկու դեպքում էլ ոչ ամբողջ Պատմությունը)։ Որոշենք վերջինը։ Շապուհ Բագրատունու Պատմությունը մեզ չի հասել, բայց նրա Պատմության բովանդակության մասին ընդհանուր պատկերացում ունենք շնորհիվ Դրասխանակերտացու։ Վերջինս երկու առիթով գրում է այդ մասին. «Կամ թէ զիարդ այսրէն ի մեզ նորոգեալ տեսաւ Բագաւորութիւնն, որ ի վաղնջուցն հետէ սպառեալ դադարեալ էր՝ պատկերով զմեծ իշխանն Աշոտ Բագաւոր ի վերայ մեր։ Զի թէպէտ նախ քան զմեզ Շապհոյ Բագրատունւոյ և մերումս ժամանակի պատմագրի զրով դրոշմեալ է զնորայն գործոց և զգնացից... հանդէս...»[82], կամ՝ «վասն զի հաճեցաւ բանս ոչ երկրորդիլ միւսանգամ զհետևանս գրուցաց Բագրատունւոյ... որ յայտագրատում իսկ արարեալ է զրոյցս պայազատութեան որդւոյ Աշոտոյ սպարապետին Սմբատայ։ Զի թէպէտ առուգութիւն... բանի բացատրութեան... ոչ կարացեալ բատ քերթողական հրահանգացն համառօտարար

82 Պատմութիւն Հայոց, 1912, էջ 6—7։

ընձեռել սակայն քան իրումն ժամանակի ընտանի զոլով նորա զրուցացն ամենայնի՝ զեղջուկ բանիւ բաւական քիչ տայ պատճառս տեղեկութեան»[83]։ *Ղեկավարվելով Դրասխանակերացու շատ որոշակի այս հաղորդումով և մեր մատենագրության մեջ եղած մի շարք ավյալներով, դժվար չի լինի զանդված ՍԲ-ից, գոնե մոտավորապես, առանձնացնել այն, ինչ վերաբերում է Շապուհ Բագրատունու Պատմությանը։ Այն ամենը, ինչ այդ բոլոր հանումներից հետո կմնա Ասողիկի Պատմությունից, ուրիմն այլ բան չէ, քան հատվածներ Սեբեոսի Պատմությունից։ Այսպիսով, գտանք Ասողիկի Պատմության այն հատվածները, որոնք քաղված են իրական Սեբեոսի իսկական «Պատմութիւն ի Հերակլն» գործից։*

Ասողիկի Պատմությունից մնացած զանդված Ս-ն՝ Սեբեոսի Պատմությունը, համեմատում ենք նորահայտ բնագրի հետ և զարմանքով, բայց և ուրախությամբ արձանագրում, որ այս երկուսը քառ առ քառ համընկնում են։ Այս բոլորից հետո դժվար չէ, իհարկե, եզրակացնել, որ նորահայտ բնագիրը Սեբեոսի Պատմությունն է։ Աւածք հատուցանելու համար դիմենք համեմատություններին.

Ասողիկ	«Նորահայտ բնագիր»
Քանզի ոչ երբէք ընդունէին Հայք զՀոռոմն ի հաղորդութիւն մարմնոյ և արեան Տեառն։ Եւ արդ զրեն նորա ամբաստանութիւն ի Կոստանդնուպօլիս առ Կոստանդին թագաւորն և առ հայրապետն, թէ «Իբրև զանօրէնս համարեալք եմք յաշխարհիս այսմիկ, զի անարժանս համարին Քրիստոսի Աստուծոյ զժողովն Քաղկեդոնի և զտոմարն Լևոնի, և նզովեն զնոսա և զամենեսին, որք քան նոցա խորհին ի հաւատս։	*Քանզի ոչ երբէք ընդունէին Հայք զՀոռոմն ի հաղորդութիւն մարմնոյ և արեան Տեառն։ Եւ արդ՝ զրեն նորա ամբաստանութիւն առ թագաւորն Յունաց Կոստանդին և հայրապետն, թէ «Իբրև զանաւրէնս համարեալ եմք յաշխարհիս յայսմիկ։ Քանզի անարգանս համարին Քրիստոսի Աստուծոյ զժողովն Քաղկեդոնի և զտումարն Լևոնի, և նզովեն զնոսա։*
Յայնժամ հրաման եւ թագաւորն հայրապետաւն՝ գրել ի Հայս հրովարտակ առ արբասէր կաթողիկոսն Հայոց Ներսէս և առ եպիսկոպոսունսն ամենայն և առ մեծն Եէոդորոս Ռշտունեաց տէր, որ էր իշխան աշխարհիս և զօրավար զօրացն, և առ ամենայն իշխանս աշխարհիս՝ զի միաբանութիւն հաւատոյ արասցեն ընդ Հռոմոց, և մի խոտնացեն զժողովն զայն և զտոմարն»[84]։	*Յայնժամ հրաման եւ թագաւորն հայրապետաւն հանդերձ, և զրեն հրովարտակ առ Հայս, զի միաբանութիւն հաւատոյ արասցեն ընդ Հռոմի, զի մի խոտնացեն զժողովն և զտումարն զայն»*[85]։

83 Անդ, էջ 131—132։
84 Ասողիկ, էջ 90։
85 ՍԲՊ, էջ 121։

Ասողիկ	«Նորահայտ բնագիր»
*Արդ թէպէտև անարժանութիւնս մեր յոլովագոյն է՝ բայց զհրամայեալն մեզ յոյժ փութամբ կատարել, առնել աղօթս ի վերայ ամենայն մարդկան, բայց և առաւել ի վերայ աստուածընկալ փառաց Քաղաւորութեանդ և ամենայն իշխանաց և զօրաց և բոլորովին իսկ աստուածապահ պալատանդ, յոր սէր Աստուծոյ լիով հանդուցեալ է, և շնորհք աստուածային պարգևացն ամենեցուն իսկ յայտնի են ի վերայ ձեր: Զի ահա Քաղաւորութիւն մեծ և հզօրագոյն քան զամենայն Քաղաւորութիւնս, որ ոչ մարդկային ձեռամբ, այլ աստուածային աջովն է պահպանեալ, զոր ոչ ոք երբէք կարացեալ փոխանորդել՝ բայց միայն Քրիստոսի Քաղաւորութիւնն...»[86]:	*Հոգիբնկալ մարգարէիցն և յառաքելոցն Քրիստոսի ունիմք զպատուէր՝ առնել աղաւթս խնդրուածովք ի վերայ աստուածասէր Քագաւորութեանդ և ամենայն իշխանացն և զաւրաց, և բոլորովին ամենայն աստուածապահ պաղատանդ, յոր սէր Աստուծոյ հանդուցեալ է, և շնորհք աստուածային պարգևացն յայտնի են ի վերայ ձեր:* *Զի ահա Քագաւորութիւն մեծ և հզաւր քան զամենայն Քագաւորութիւնս, զոր ոչ ձեռին մարդկան, այլ Աստուծոյ աջովն պահպանեալ, զոր ոչ ոք կարացեալ փոխանորդել բայց Քրիստոսի Քագաւորութիւն...»[87]:*

Բերենք մի օրինակ ևս: Սորվե բերվող տեղեկությունը, Ասողիկից բացի, հաղորդում է նաև Դրասխանակերտցին: Ասողիկը թէև ծանոթ չէ Թովմա Արծրունու Պատմութեանը, բայց թերևս ավելորդ չլինի, եթե համադրենք նաև վերջինիս համապատասխան հատվածը: Տեսնենք ումի՞ց է քաղում Ասողիկը:

Դրասխանակերտցի	Արծրունի	«Նորահայտ բնագիր»	Ասողիկ
Եւ Քագաւորէ որդի Նոյնն Որմիզդ ընդ Նոյա, զոր իւրոց իսկ մերձաւորացն և այլոց ևս նախարարաց տեղեաց գործել յիւրումն իսկ դահլիճի զնա սպանանեն. և փոխանակ Նոյա որդի Նոյնն Քասրով Քագաւորէ: Այլ և սմա ևս ի վահրամայ ուժմնէ իշխանել, որ Քագաւոր զինքն կոչեցուցէ՝ տեղեաց գործել, փախստական անկանի առ Մօրիկ կայսր Հռոմոց[88]:	*Վահրամ ումն Մեհրեւանդակ, որ էր իշխան կողմանցն արեւելից, այր հզօր զօրութեամբ՝ քաջութեամբ իւրով ետար զզօրս Քեռայացւոց, և բռնութեամբ կալեալ զբաժել և զամենայն երկիրն Քուշանաց, մինչև յանկոյս զետոյն մեծի, որ կոչի Վահոօտ. առ և զՔագաւորութիւնն Պարսից չինէն կոչեցուցանել և օրդի Որմզդի Քասրով զնաց փախստական առ Մու-*	*Վահրամ ումն Մերհեւանդակ, իշխան արեւելից կողմանց աշխարհին Պարսից, որ հարկանէր քաջութեամբ իւրով զգաւրս Քեռատացւոց և բռնութեամբ ունէր զերկիր և զամենայն երկիրն Քուշանաց, մինչև յայնկոյս զետոյն մեծի, որ կոչի Վահոատ, և մինչև ցառիղն, որ կոչի Կազբան...* *Յայնժամ արտաքսել Վահրամայն զնորին պատա-*	*Վահրամ ումն Մեհեանդ, իշխան արեւելից կողմանն աշխարհին Պարսից, որ հարկանէր քաջութեամբ զզօրսն Քեռատացւոց, և բռնութեամբ ունէր զերկիր և զամենայն երկիրն Քուշանաց մինչև յայնկոյս զետոյն մեծի, որ կոչի Վահոատ, և մինչև ցառիղն, որ կոչի Գաւրուն:* *Այս Վահրամ պատանեցուցանել ընդ արքայիսն Մազքթաց՝ հնար գործելիւն*

86 Ասողիկ, էջ 92:
87 ՍԽՊ, էջ 120:
88 Պատմութիւն Հայոց, 1912, էջ 67:

րիկ Քազաւոն Յունաց[89]։

թագմն ընդ մեծի արքային Մագբիաց, որ էր ի կողմանն յորմմիկ, յորմկոյս գետոյն մեծի՝ նմա զրաղմութիւն դաւթացն, և սպան զՊատգաւորն ի պատերազմի, և ըմբռնեալ յաչխատակից զամենայն զգանձս Քազաւորութեանն տ[ի]նորիկ։

Յայնժամ առաքէ առ արքայն Զարեից ի ձեռն հրեշտակաց իւրոց հրովարտակս աւետաւորս, և սուզ ինչ ասպատաման ի մեծամեծ գանձուցն հասելոց յաւարէ սպասատակին, նշանակ Քազաւորութեանն ի պատերազմական իւրացն, և զամենայն զգանձն գաւթոն շնորհէ ըստ իւրաքանչիւր արժանաւորութեանն։

Արդ՝ իրրև անհաւատ Քազաւորին Որմզդի դրեշատական նկատս աւետաւորս... և ընկալեալ զընծայսն... ի ներքուստ ցասմամբ բարբառեալ ասէր. «Ո՞ՆԴԲԵՐՔ ասուել մեծապոյն, և գնշանն ի պատասխանի հանուցանէ. բայց յայնչափ սասանիկ գանձուցն ոչ էր արժան այնչափ հասանել յարքունիս»[90]։

զօրացն և սպան զՊատգաւորն և յափշտակեաց զգանձս Քազաւորութեանն. և սուզ ինչ ասպատաման առաքեաց ի մեծամեծ ընչից Քազաւորին Որմզդի և զայլսն զօրացն բաշխեաց։ Իսկ Քազաւորն առեալ գայն՝ առ ցասմամբ. «Ո՞ՆԴԲԵՐՔԴ ասուէ՛լ մեծապոյն, և գնշանն ի պատասխանի ծանեալ յայնչափ մեծամեծ գանձուց զա՞յս միայն բերիք յարքունիս»[91]։

Կարող ենք բերել նոր ու նոր հատվածներ ևս, կարող էինք նաև ընդհատված կետերից շարունակել բերված հատվածների համատրությունը, ոչ քիչ ժվով էջեր լրացնելով, բայց այսքանն էլ բավական է ժխում։ Ինչպես տեսնում ենք, Ասողիկը բառ առ բառ արտագրում կամ բաղում-համառոտում է դարի «նորահայտ բնագրից»։ Բայց է դարի «նորահայտ» այս բնագիրը այլ բան չէ,

89 Պատմութիւն տանն Արծրունեաց, 1887, էջ 85։

90 ՍԵՊ, էջ 33—36։

91 Ասողիկ, էջ 112—113։

քան այսօր էլ Սեբեոսի անունով հայտնի Պատմությունը: Բերված և նման մի շարք հատվածները Ասողիկը կարող էր վերցնել միայն ու միայն այն Պատմությունից, որ հայտնի է Սեբեոսի անունով, որովհետև Ասողիկին նախորդող պատմիչների երկերում այդ հատվածները չկան կամ այնպես չեն, ինչպես որ են Ասողիկի ու Սեբեոսի անունով հայտնի Պատմությունների մեջ: Ուրեմն, քանի որ Ասողիկի գործում եղած իրական Սեբեոսի իսկական Պատմության հատվածները նույնանում են այսօր էլ Սեբեոսի անունով հայտնի Պատմության հետ, նշանակում է՝ Ասողիկի հիշատակած «Պատմութիւն Հերակլի, որ ասացեալ ի Սեբէոսէ եպիսկոպոսէ» և ակադ. Ստ. Մալխասյանցի հրատարակած «Սեբէոսի եպիսկոպոսի Պատմութիւն»-ը նույն գործերն են:

Նույն արդյունքն ենք ստանում նաև Մխիթար Անեցու և Սեբեոսի Պատմությունները զուգադրելով:

Մխիթար Անեցին ևս գիտի Սեբեոսին և չգիտի ոչ մի խոսրով, այդ թվում և պատմագիր Խոսրով. համենայն դեպս նա հայ պատմիչների կամ իր աղբյուրների ցանկում նշում է Սեբեոսին և չի հիշատակում Խոսրովին:

Մխիթար Անեցին իր գործի նախաբանում դեռ գրում է, որ Պատմությունը շարադրելու է «քաղելով ի սրբոց և ի պիտանեաց պատմութեանց»[92]: Այնուհետև թվարկելով մեր պատմիչներին՝ Մխիթար Անեցին նորից գրում է. «քաղեցուք ի պատմագրաց ասոի համառօտ և հակիրճ բանիւ»[93]:

Այնքան, որքան Անեցին իր Պատմությունը հյուսում է օգտվելով նախորդներից, որոնց անունները հիշատակում է, ուստի նրա գործում պետք է լինեն, կամ կարող են լինել քաղվածքներ նաև Սեբեոսից, իրական Սեբեոսի իսկական Պատմությունից:

Արդ, եթե Սեբեոսի անունով ցարդ հայտնի Պատմությունը իրականում Սեբեոսինը չէ, այլ Խոսրովինն է, ապա այդ Պատմությունից Անեցու մատյանում քաղվածքներ չպետք է լիներին, որովհետև, ինչպես ասացինք և ինչպես գրում է Անեցին, նա Խոսրովին չգիտի և նրանից չի օգտվել: Իսկ եթե Սեբեոսից օգտված Մխիթար Անեցու գործում գտնում ենք տեղեկություններ, որոնք այլուստ հայտնի չեն և որոնք կան այսօր էլ Սեբեոսի անունով հայտնի Պատմության մեջ միայն, նշանակում է այսօրվա Սեբեոսը իրական Սեբեոսն է:

Այսպիսով, քննությունը ցույց տվեց, որ Գ. Աբգարյանի հարցադրումը՝ Սեբեոս թե՞ Խոսրով, ճիշտ չէ և այդ հարցին նրա տված պատասխանն էլ. բնականաբար, մերժելի:

Քննությունը ցույց տվեց նաև, որ Սեբեոսի անունով ցարդ հայտնի Պատմությունը, իրոք, պատմական Սեբեոսի «Պատմութիւն ի Հարակլն» գործն է: Հետևապես, Գ. Աբգարյանի հարցադրմանը կարող է տրվել միայն մի պատասխան՝ Սեբեոս:

---

92 *Մխիթարայ Անեցւոց Պատմութիւն, ի Ք[երովբէ] Պ[ատկանեան], Պետերբուրգ, 1879, էջ 1:*

93 *Անդ, էջ 15:*

Х. А. ТОРОСЯН

ИСТОРИК СЕБЕОС И ЕГО ТРУД

Резюме

В 1966 году вышло исследование Г. Абгаряна „История Себеоса" и проблема Анонима". В первой главе этой книги исследователь пытается доказать, что автором знаменитой „Истории императора Ираклa" является не Себеос, как было известно до сих пор, а некий Хосров и что подлинная История Себеоса до нас не дошла. По мнению автора статьи, этот вывод Г. Абгаряна не только не имеет никакого основания, но и противоречит всем данным средневековой армянской письменности.

KH. A. THOROSSIAN

L'HISTORIEN SEBEOS ET SON OUVRAGE

Dans son étude intitulée „L'Histoire de Sébéos" et le problème de l'Anonyme", publiée en 1966, G. Abgarian consacre le premier chapitre au problème de l'appartenance de la fameuse „Histoire de l'empereur Héraclius" tout en s'attachant à prouver que l'auteur n'en est pas Sébéos, comme on l'admettait jusqu'à ce jour, mais un nommé Khosrov, et que la véritable „Histoire" de Sébéos ne nous est pas parvenue.

L'auteur du présent article considère les assertions de G. Abgarian comme étant dénuées de fondement et contraires aux données des sources manuscrites médiévales.

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌՔՆԵՐ
ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ—«ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ»
ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ
ԵՐԵՎԱՆ № 9 1969

ՆԻԿՈՂՈՍ ԹՈՒՄԻՋՅԱՆ

ՀԻՄՆԱԿԱՆ ԽԱՋԵՐԻ ՄԻԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Խաղագրության արվեստի գլխավոր տարրերի՝ հիմնախաղերի միակցության որոշումը մեծ ազդեցություն ունի խաղանշանների վերծանության աշխատանքի ողջ ընթացքի հետ. այդ վերջինս էլ, իր հերթին, ուղղակի կախված է առաջինի դեմ նախնական լուծումից, ուստի և անխուսափելի է դառնում հենց դրանից սկսելը:

Մեր աղբյուրներն են հիմնախաղերի՝ միջնադարից եկող տախտակ-ցուցակները (խաղավոր գրշագրերի հետ իրենց ունեցած իրական հարաբերության մեջ), որոնք, ինչպես առիթ ենք ունեցել նշելու[1], բաժանվում են երեք խմբի՝ Ա, Բ և Գ:

Դրանցից առաջին երկուսի բննության և համեմատության արդյունքում պարզվել է[2], որ մենք գործ ունենք հիմնախաղերի՝ տարբեր ժամանակներում ու տարբեր միջավայրերում կազմված երկու տարբեր ցուցակների հետ, որոնցում առաջ բերված նշանները բոլորն էլ գործնականում կիրառված են բուն խաղավոր գրշագրերում, այն էլ խառն ձևով:

Դիտումները ցույց են տալիս, որ մեր միջնադարյան երաժշտական ձեռագրերում կիրառված մեկ այլ խումբ նշաններ ևս, այլ դասակարգության մեջ, առաջ են բերված Գ խմբի ցուցակներում և, որ առավել կարևորն է, Ա, Բ և Գ խմբերի ցուցակների տվյալները համադրելով, մենք առանում ենք հայկական միջնադարի խաղավոր գլխավորագույն երգարաններում (շարական, խազգիրք, գանձարան, տաղարան) օգտագործված հիմնախաղերի գրեթե ողջ միակցությունը:

Նախ պարզվեցին մեր Գ խումբը գոյացնող տախտակ-ցուցակներով: «Ա-նեուանք եղանակաց ձայնից երգոց, գիտից իմաստնոց» վերնագրի տակ դրանք հանդիպում են 1365 թվականին գաղափարված մի խազգրքում[3], 1671-ից առաջ կազմված մի ժողովածուի մեջ[4], Գրիգոր Տաթևացու Քարոզգրքի՝ XVII դարին վերաբերող մեկ ընդօրինակության մեջ (ավելի ճիշտ՝ Քարոզգրքին հետևող Տոմարի մեջ)[5], և դարձյալ՝ Երուսաղեմի Թանգարանի հայկական այն

---

1 *Տե՛ս մեր հոդվածը՝ Նախատուր էդգումենին որպես միջնադարյան հայ երաժշտության տեսաբան, «Լրաբեր հասարակական գիտությունների», 1966, № 11 (նաև՝ Ոսկան վարդապետ ու խազագրության արվեստը, «Էջմիածին», 1966, № 11—12):*

2 *Տե՛ս մեր հոդվածը՝ Հայկական խազագրության հիմնական նշանների երկու ցուցակների մասին, «Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 1:*

3 *Մաշտոցյան Մատենադարան, ձեռ. № 8307, էջ 310բ—311ա:*

4 *Ձեռ. № 605, էջ 47բ:*

5 *Ձեռ. № 2068, էջ 356բ:*

ձևագրում, որից ժամանակին օգտվել է Ե. Տնտեսյանը[6]: Սրանք տարբերենք՝ համապատասխանաբար՝ «ա», «ֆ», «ղ» և «ձ» տառերով:

Պետք է ասել, որ հիմնախաղերի այս Գ խումբը, ըստ բոլոր ովկյաների, պատմականորեն նախորդել է մեր Բ անվանածին, բայց մենք անհրաժեշտ համարեցինք Ա-ից հետո հենց Բ-ն քննել, որովհետև նախ ովկյալ երկու խաղախմբերը, ի տարբերություն Գ-ի, կազմված են միևնույն սկզբունքով, որով դրանք հարաբերակցելու և համեմատելու աշխատանքներն ավելի հարթ ընթացք կստանային: Եվ հետո, Գ խմբի ցուցակները առհասարակ անհամեմատ ավելի են աղավաղված, քան մյուսները, չնայած դրանցից մեկը պահպանվել է նույնիսկ 1365 թվականը կրող գրչագրում: Հետևաբար պարզ է, որ նախապես ճշդրտելով Ա և Բ խաղացուցակները, ավելի դյուրին կվերացվեին Գ խմբի տախտակների աղավաղումները:

Անցնելով այդ աշխատանքին, նախ պարզենք Գ խմբի խաղերի թվաքանակն ու անունները, մի բան, որն այնքան էլ հատակ չի երևում, գոնե առաջին հայացքից, ինչպես դա հաստատում է նաև քննարկվող ցուցակներին ընդհանրապես ծանոթ Ռ. Աբայանը[7]:

Մեզ զբաղեցնող չորս ցուցակների վերջում նույնանման ձևով որոշակի մի տեղեկություն է հաղորդվում դրանցում ընդգրկված խաղերի թվաքանակի մասին, որն և վճռական օգնություն է ցույց տալիս խնդիրը լուծելիս: Այնտեղ ասվում է, թե առաջ բերված հիմնախաղերը «են Թուով ԻԳ» (23): Այս տեղեկությանը լրիվ համապատասխանում են «ֆ» տախտակի ովկյալները: Հիմք ընդունելով դա, կարող ենք հեշտությամբ վերացնել մյուս տախտակների անհարթությունները: Այսպես, համեմատելով, օրինակ, «ֆ» տախտակը «ղ»-ի հետ, անանում ենք, որ վերջինում պարզապես բաց է թողնված մի նշան՝ «վերադիր» կոչվածը: Այնուհետև, նույն «ֆ»-ի համեմատությամբ «ա» տախտակում հանդիպում ենք Գ խմբի խաղերի շրջանակի համար մի ավելորդ անվան՝ «ծնկնեբին», որի ավելորդ լինելը հասկացվում է նրանից, որ այստեղ դրան, կրկնության կարգով, կցված է «խաղ» կոչված խաղի նշանը, մինչդեռ բուն «ծնկնների» նշանը ևս քիչ ստորև երևում է՝ «ողոմանեակ» անվան տակ: Իսկ «ձ» տախտակում, բացի այն, որ նախորդի նման և նույն պայմաններում բերվում է «ծնկնները», վերջում բաց է թողնված «Թագաւորաց» (կամ «Թագաւորաց») անուն խաղը: Այսպիսով հաստատվում է, որ նշանների թվաքանակը իրոք 23 է: Գալով դրանց անուններին, հարկ է դիտել, որ եթե մի կողմ թողնենք մանր տարբերություններն, ապա կբախվենք հետևյալին: Չորս ցուցակներում էլ 12-րդ նշանի անունը ինչ կարդացվում է «բեր», բայց սա Թերագրություն է և պետք է լինի «ծոցբեր»: Որովհետև Ա և Բ խաղախմբերի համեմատությունից արդեն գիտենք, որ «բերը» նույն «պարույկն» է[8]: Իսկ վերջինս քննարկվող Գ խաղախմբում իր նշանակությամբ յուրովի տարբերակված է՝ «քաշին» (կամ «երկարին») ազգակից՝ «ձայնդարձ» և «յարնշտ» կոչվող նշանների մեջ, ինչպես պիտի տեսնենք ստորև: Այնուհետև՝ 1-ին, 9-րդ և 10-րդ նշանների անունները տարբեր են «ա» և «ֆ» տախտակներում՝ մի կողմից (որտեղ կարդում ենք, համապատասխանաբար, «արաշնշտ», «Հար» և «Հարկոր-

6 Ե. Տնտեսյան, Ազգային երաժշտություն, «Միսն», 1867, № 9, էջ 147 (տե՛ս այստեղ հրատարակված փաստորեն երկու խաղացուցակներից առաջինը, մինչև «շնշտ»-ը):

7 Ռ. Աբայան, Հայկական խաղային նոտագրությունը, Երևան, 1959, էջ 174—175:

8 «Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 1, էջ 73:

հայ») և «ֆ» ու «ֆ» ցուցակներում՝ մյուս կողմից (որտեղ նույն նշանները կրում են «յարեշա», «խածրեկ» ու «խածլէ» անվանակոչություններ): Սրանցից «յարեշան» ու «արաշեշտը», որպես անուններ, շատ մոտիկ են իրար, իսկ մյուսները՝ ոչ, բայց որովհետև վերաբերում են միևնույն նշաններին, պետք է (և շահեկան էլ է) դրանք ևս հաշվի առնել զույգ-զույգ: Եվ վերջապես պիտի նշել, որ Գ խմբի խազերի թվաբանական որոշմամբ պարզվում է, թե երկու բառից կազմված «կուռ զրհհիկ» անվանակոչությունը վերաբերում է միևնույն՝ 6-րդ նշանին, որով վերանում է այս կապակցությամբ ժամանակին հարուցված կասկածն էլ[9]: Այստեղ նախ բերենք Գ խմբի խազերի ճշգրտված անվանացանկը:

1. Յարեշա (կամ արաշեշտ), 2. բաշ, 3. սաորադիր, 4. վերադիր, 5. վանկ, 6. կուռ զրհհիկ, 7. խազ, 8. զող, 9. խածրեկ (կամ Հար), 10. խածլէ (կամ Հարկորճայ), 11. կորճայ, 12. ծոցբեր, 13. բազմեղանակ, 14. ողոմանեակ, 15. Հարուկ, 16. ձայնդարձ, 17. Հանդոյց, 18. խունճ, 19. բմաղարդ, 20. առանձնատրոպ, 21. բմատրոպ, 22. ծանրատրոպ, 23. թաղատրոպ (կամ թաղատրատրոպ):

Ինչ վերաբերում է այս խազերի գծագրական ձևերին, ապա պիտի ասել, որ Հատկապես դրանք են շատ աղավաղված: Սակայն, համեմատելով մեր չորս տախտակները իրար հետ, և աչքի առաջ ունենալով բուն խազավոր ձեռագրերը, ինչպես և Ա ու Բ խմբի ցուցակների արդեն ճշգրտված-համեմատված խազերը, որոնցում ընդգրկված նշաններից 15-ը նույն կամ տարբեր անուններով երևում են այստեղ էլ, հնարավոր է լինում առանց դժվարությունների սրբագրել սխալները:

Սկսենք այն խազերի նշաններից, որոնք չորս տախտակներում էլ բացարձակ սխալ են գծագրված: Դրանք երկուսն են՝ «ծոցբերը» և «խունճը»: Բայց որովհետև դրանց Հատակ ձևերը մենք արդեն ունենք Ա և Բ խմբի ցուցակներում, վերջիններիս ավյալների հիման վրա էլ հնարավորություն կունենանք վերացնելու նրանց աղճատումները: Այսպիսի մոտեցման ճշտության մասին կարելի է դատել նաև նրանից, որ մեր չորս տախտակներում բնութագրվող սխալներն առաջացել են նույնանման ձևով. անհայտ գրիչները բոլոր դեպքերում «խունճ» անվանը կցել են «ծոցբերի» նշանը, որովհետև վերջինիս նույնպես, իր հերթին, սխալմամբ կցվել է «ողոմանեակի» գծագրաձևը, մինչդեռ ինքը «ողոմանեակն» ևս առկա է այստեղ, իրեն Հատուկ, բայց արդեն կրկնողության կարգով Հանդես եկող նշանով: Տախտակներում առավել աղավաղված նշանների թվին են պատկանում նաև «սաորադիրի» ու «վերադիրի» գծագրաձևերը, որոնք այստեղ ընդունել են «բութի» և կամ վերջինիս այլագրություններից որևէ մեկի ձևը:

Խազավոր դրչագրերի քննությունից պարզվում է, որ այդպիսի աղավաղումներ այս կամ այն չափով Հատուկ են նաև դրանց, և նույնիսկ բնաիր ձեռագրերին: Բայց խազավոր երգարաններում, Համենայն դեպս, Հիշատության համար տարբերում ենք ավյալ երկու խազերը Հեռավոր պատճառով: «Սաորադիրը», որը մի փոքրիկ ենթամնայի ձև ունի, գործնականում դրվում է տարբեր խազերի և խոսքի վանկերի տակից, որով իսկույն առանձնանում է, ինչքան էլ անխնամ գծագրված լինի. իսկ «վերադիրը»՝ խազաշարքերում երևա-

9 Ռ. Աբայան, նշվ. աշխ., էջ 174:

ցող մի առոր նշան, գրության իր առանձնահատուկ պայմաններն ունի, որով չի շփոթվում «բութի» հետ, ինչքան էլ աղավաղվելով հիշեցնի այն:

Ասվածը պարզաբանելու համար բերենք հետևյալ օրինակը, առանց խոչընդոտելու հարցի էության մեջ: Ավագ վանքում գաղափարված մի ընտիր խաղպրքի երկերից մեկում ողորմելա խոսքի «ը» ձայնավորի վրա դրված է երկու խաղ՝ «փուշ» և «վերադիր»[10]: Վերջինս նման է «բութին», բայց չի կարող այն լինել, որովհետև «փուշ»—«բութ» ընթացքը, երաժշտական մեկ նախադասության սահմաններում, այն էլ միևնույն վանկի վրա, բոլորովին հակառակ է խաղերի հաջորդականության հիմքում ընկած տրամաբանությանը, ինչպես դա հայտնի է մեր երաժշտական ձեռագրերին ծանոթ պիտնականներին:

Կանգ պիտի առնել նաև «վանկ» և «հարուկ» խաղերի գծագրաձևերի վրա: Դրանք աղավաղված չեն, բայց փոխադարձաբար խառնված են տախտակներում: «Հարուկ» անվան կից բերվում է նրա ճիշտ նշանը «ա» և «յ» տախտակներում (որն, ի դեպ, նախկին ցուցականների «փուշին» է համապատասխան), այնինչ «ղ»-ում և «ծ»-ում այստեղ երևում է «վանկի» գծագրաձևը: Իսկ «վանկ» անվան կից՝ միայն «յ»-ում է հանդիպում նրա ճիշտ ձևը, մյուս տախտակներում այստեղ երևում է «հարուկի» գծագրաձևը: Տվյալ դեպքում մեզ օգնության չեն կարող գալ խաղավոր ձեռագրերը (քանի ձևերի աղճատում չկա): Այնպես որ խնդիրը լուծենք՝ քննարկվող երկու խաղերից թեկուզ և մեկի անվանակոչության ու գծագրաձևի միջև գոյություն ունեցող կապը ապացուցելով: Նպատակահարմար է վերցնել «վանկը»:

«Վանկի» ճիշտ նշանը (որը հանդիպում է «յ» տախտակում հենց «վանկ» անվան կից, ինչպես և «ղ» ու «ծ» տախտակներում՝ սխալմամբ՝ «հարուկ» անվան կից), ունի համեմատաբար բարդ գծագրաձև, որն արդեն իսկ հուշում է, թե տվյալ խաղը նշանակել է ոչ թե սոսկ մեկ հնչյուն, այլ մեկից ավելի հնչյուններից կազմված մեղեդիական մի դարձվածք: Սույն համոզումը ավելի ևս ամրապնդվում է, երբ մտաբերում ենք, թե սա այն խաղն է, որը հետագայում ստացել է «մենկորճ» անունը, որովհետև վերջինս մեր «վանկի» ազգակցությունն է բացահայտում երեք այլ խաղերի՝ «բենկորճի», «էկորճի» ու «ձակորճի» հետ, որոնք նույնպես բարդ գծագիր ունեցող և, հետևաբար, մեղեդիական դարձվածքներ նշանակող խաղեր են: Արդ, իմանալի է, որ «վանկ» խոսքն էլ հետևում նշանակել է ոչ միայն ձայն, հնչյուն և հնչողություն ընդհանրապես[11], այլև մեղեդի և նույնիսկ ութ ձայնի դրությամբ ընդգրկված ձայնեղանակ, ինչպես դա պարզ հասկացվում է մեր հին մատենագրության մեջ նրա գործածության ձևերից ու հանգամանքներից: Այսպես, խիստ հատկորոշ մի տեսակ է, օրինակ, որ Թովմա Արծրունին, պատմելով արաբ զորավար Բուղայի և Հարավային Արցախի իշխան Եսայի (Աբու-Մուսեի) բանակների վերջին ճակատու բախման մասին, հաղորդում է, թե Սմբատ սպարապետի որդին՝ «տէր Մուշեղ», «նստէր անդ ի բացեայ ի վերայ բլրի միոջ... և կայր հիացեալ ահեղ և մեծ զարմացմամբ... և դի էր վարժեալ Աստուածաշունչ գրոց և ընդել և ծանօթ էր ճարտասանական հրահանգիցն՝ եղ... զերդս՝ որոյ սկիզբն է՝ «Անգթացել ական սրտի նայեցող անձն իմ ի միտանդամ զալուստն», և ասէ ի յուրեարդ

10 Ձեռ. № 755, էջ 20ա:

11 Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հատ. Բ, Վենետիկ, 1837 (տե՛ս վանգ կամ վանկ):

վանգէ»[12] (այսինքն՝ ութերորդ ձայնեղանակում, այն է՝ Դկ-ում։ Ընդգծումը մերն է—Ն. Թ.)։ Եթե «վանկ» նշանակում էր նույնիսկ ամբողջական ձայնեղանակ, ապա նա անկասկած կարող էր օգտագործվել նաև առհասարակ մեղեդիական հատվածի կամ դարձվածքի իմաստով, մանավանդ այն դեպքում, երբ վերաբերում էր մեկ, առանձին վերցրած խազի։ Այսպիսով պարզ է, որ «վանկի» անվանակոչությունն ու նրա գծագրական համեմատաբար բարդ ձևը աղերս ունեն միմյանց հետ։

Վերջապես չորս նշան ճիշտ են գծագրված միայն երկուսական ցուցակում (ընդամենը չորս ցուցակի առկայության պայմաններում). «խազը», «խածրիկը» (կամ «հարը») և «քաղաքրդը»՝ «յ»-ում և «ղ»-ում. ու «առանձնատրոպը» «ա»-ում և «ճ»-ում (թեև այստեղ փոքր ինչ ենթագրված ձևով)։ Բայց որովհետև այս խազերի նշանները տարբեր անունների տակ կան նաև Ա և Բ խմբի տախտակներում, հնշանակությամբ ևնք կողմնորոշվում։ Մեկ ուրիշ նշան՝ «ձայնդարձը», որ չկա Ա և Բ խմբի խազերի շարքում, միանման է գծագրված դարձյալ երկու տախտակում միայն՝ «ա» ու «ճ» (խազի տակից դրվող «կ» տառի հետ միասին, որը որպես օժանդակ նշան, ավելորդ է այստեղ)։ Բայց այն՝ «յ»-ում ևս առկա լինելով «վանկի» հետ միակցված ձևով, բավականաչափ որոշակի երևակում է իր գծագրաձևը, որ հանդիպում է նաև խազավոր գրչագրերում։ Անցած խազերի մեջ չկա մեկը, որ ճիշտ գծագրված չլինի չորս տախտակներից գոնե երեքի մեջ (եթե հաշվի չառնենք կետերի շնորհիվ երբեմն առաջացող ավելագրություններր)։

Հարկ է հատկապես նշել, թե քննարկվող բոլոր տախտակների վերջում (բացի այն, որ նրանցում ընդգրկված նշանների թվաքանակի մասին բերվում է մեզ արդեն հայտնի տեղեկությունը), արվում է մի շահեկան դիտողություն ևս, ըստ որի՝ առաջ բերված խազերից «եւթն... գլխաւորք են ըստ եւթն հղանակաւոր գրոցն... և այլդ խառնուրդք են, որպէս զանազան անուշահոտ համեմք համադամ կերտուած»։ Հիշյալ յոթը գրերն են՝ հայոց լեզվի ա, ե, է, ը, ի, ո և ւ ձայնավորները, որոնց և համապատասխանեցված են մեկական խազանշան։ Վերջիններիս մասին մեր չորս ցուցակները թեև կատարելապես համաձայն չեն, բայց այստեղ դա չէ կարևորը։ Կերտերեցյալ տեղեկությունը նախ և առաջ քննելի է բոլորովին տարբեր մի տեսանկյունից՝ ձայնավորների մասին հայկական միջնադարյան ուսմունքի լույսի տակ։ Իսկ որ հայերը նույնպես միջնադարում մշակած են եղել ձայնավորների մասին մի ուսմունք, կապված երգեցողության հետ, դա վկայում են Եկեղեց և Եփրեմ երաժիշտ վարդապետի (XVII դ.) հետևյալ խոսքերը, առանձավորել դրված իր մի հիշատակարանում՝

«Եփրեմ ասքիդ ողկոյզաբեր,
որ երաժիշտ ես անուաներ։
Քաղցրանուագ ալեօքդ ծեր,
երգեա անուշ մեղեդիքներ։
Ջմանկունս ուսոյ տագ և դանձեր,
նոքա երգեն, զուարթ դու լեր։
Ներհըմտացեալքն մեղեդիքներ,
և այլ ուսմունք ձայնաւորեր»[13]։

12 Թովմայի վարդապետի Ալծրունւոյ Պատմութիւն տանն Արծրունեաց, Թիֆլիս, 1917, էջ 297—298։


13 Ձեռ. № 7717 (Տաղարան), էջ 258բ (ընդգծումը մերն է—Ն. Թ.)։

Այժմ կարող ենք ծանոթանալ Գ խմբի խազերի համեմատված և ճշգրտված տախտակ-ցուցակին (գծ. 1)։

Այս տախտակի մասին խոսելուց առաջ անհրաժեշտ է փոքր ինչ կանգ առնել նրա խազերից մի քանիսի վրա։ Դրանք են «ստորադիրն» ու «վերադիրը», «յարեշտը» (կամ «արաշեշտը»), «քաշը» և «ձայնդարձը»։

Առաջին հայացքից կարող է անհասկանալի թվալ, թե ինչու այստեղ «ստորադիրը» և «վերադիրը» դասվում են հիմնախազերի շարքը։ Երաժշտական ձևագրերի քննությունը ցույց է տալիս, սակայն, որ հիշյալ երկու նշաններն իրոք կարևոր դեր են խաղացել խազագրություններում։ Երկուսն էլ հանդիպում են շարականոցներում ևս, բայց առավել առատ օգտագործված են խազկրքերում։ «Ստորադիրը» կապող նշանակություն ունի և համապատասխանում է մեր ժամանակակից նոտագրության liga-ին։ Նրա օգնությամբ կապվում են (legato են կատարվում), ինչպես նույն վանկի վրա դրվող իրար կից տարբեր խազեր[14], այնպես էլ մեկ խազով նշանակվող մի խումբ տարբեր բարձրության ձայներ, երբ այն դրվում է մեկ, առանձին վերցրած խազի տակից[15]։

Գծ. I



Այս վերջին կետի կապակցությամբ հարկ է երկու խոսք ասել հատկապես «երկարի» տակից դրվող «ստորադիրի» մասին։ Հայտնի է, որ հայկական խազագրություններում «երկար» խազով նշանակվում է մետրական երկու միավորի արժեքով վանկը, որը կարող էր հնչյունավորվել հենց մեկ երկար ձայնով։ Բայց քիչ չեն դեպքերը, երբ «երկարով» խազագրված վանկը, պահելով մետրական երկու միավորի իր արժեքը, հնչյունավորվել է տարբեր բարձրության մեկից ավելի ձայներով։ Եվ ահա այս հանգամանքը պարզելուն կարևոր օժանդակություն է բերում «ստորադիրը» (հոգ չէ, թե ձայների կապված կատարման սահմաններում), որովհետև նրա ներկայությունն իսկ արդեն խոսում է տարբեր բարձրության մեկից ավելի ձայների առկայության մասին. այլապես «երկարի» տակից այն դրելը բոլորովին անիմաստ կլիներ։ Երաժըշ-

14 Ձեռ. № 755, էջ 4ա (տե՛ս «Յիշեցուր» խոսքի առաջին վանկը)։

15 Նույն տեղում. տե՛ս «ի գիշերի» խոսքի «ի» նախդիրի խազը, էջ 20ա, «ողոմանա» խոսքի առաջին վանկը և այլն։

տական ձեռագրերի ուշադիր ընթերցման միջոցով կարելի է նաև «վերադիրի» նշանակությունը, որ գաղտ, անջատող պաշտոն ունի։ Պետք նշել, որ խազագրություններում «վերադիրի» նշանակալից դերը լրիվ բացահայտելու համար, անհրաժեշտ է նախապես պարզել վերև հիշատակված՝ ձայնավորների մասին հայկական միջնադարյան ուսմունքի էությունը, սակայն առ այժմ չանդրադառնալով դրան՝ դեռ այն կարող ենք ասել, որ քննարկվող խազը կարևոր ցուցումներ է տվել երաժիշտներին երգեցողության ընթացքում մեղեդիական նախադասությունների (ֆրազների) առավել արտահայտիչ մասերն առանձնացնելու (фразировка կոչվածը կատարելու), քան այդմ շնչառությունը կանոնավորելու և այլ տեսակետներից։ Նախքննթացից թեև պարզ պետք է լինի արդեն, թե ինչու վերը բերված ուսխատակում քննարկվող երկու խազերը առաջ են բաշխում որպես հիմնական նշաններ (չնայած, իհարկե, դառնալով, դրանք այդպիսին կարող են և չհամարվել). բայց մենք չենք կարող չհիշատակել նաև այն փաստը, որ Կոմիտասը նույնպես հայկական խազագրության ընդամենը տասնմեկ «տարրերը» ամփոփող իր ուսխատակում ժ համարի տակ առանձնացրել է «կապող և գաղտ խազերը»[16], որոնք, մեր համոզմամբ, ուրիշ բան չեն կարող լինել, քան նեթե նույն «տորդադիրն» ու «վերադիրը»։

Այնուհետև, ինչպես երևում է մեր ձեռքում ուսխատակից, «յարեշտ» (կամ «արաշեշտ»), «քաշը» և «ձայնդարձը» իրենց գծագրական ձևերով շատ մոտիկ են իրար։ «Յարեշտն» ունի թեթևակի ալիքավորված «երկարի» ձևը. «քաշի» տարրերությունը սրանից մեկ կետի հաշվին է միայն. իսկ «ձայնդարձն» ավելի խոր ալիքավորված մի «երկար» է պարզապես։ Սույն երեք նշաններից բուն «երկարին» համապատասխանողը «քաշն» է, որին այստեղ մի կետ է ավելացված՝ այն «յարեշտից» տարբերելու համար անկասկած։ Բայց մյուս երկու խազերը ևս այս կամ այն ձևով ու չափով առնչվում են «երկարի» հետ։ Խնդիրը նրանումն է, որ, ինչպես ցույց են տալիս երաժշտական ձեռագրերում «երկարի» գործածության հանգամանքները (դրանցից մեկն է, օրինակ, «տորդադիրի» հետ միասին հանդես գալու վերը նշված պարագան), նրանով նշանակված ձայն-եղանակային իրողությունները մեկից ավելի են եղել[17], թեև վերջիններս տարանջատելու մի ձգտում էլ գոյություն ունեցել է միշտ։

16 Կոմիտաս, Շարականի խազերի նշանակությունը («Հոդվածներ և ուսումնասիրություններ», Երևան, 1941, էջ 167)։

17 Ի դեպ, խիստ հատկանշական է, որ Կոմիտասի կատարած խազագրանական ուսանելի փորձերում «երկար» անվան կցված են մի դեպքում մեկ, և մի այլ դեպքում՝ հինգ նշաններ. «ձայնդարձի» նշանը բերված է «Հարց» պայմանական անվանակոչությամբ. և դարձյալ՝ Եաշխ (հոդնակիով բերված) անվան կցված են, մի անգամ՝ երեք, ու մի երկրորդ անգամ էլ՝ չորս նշաններ, որոնց տարբերությունները որոշակիորեն դուրս են գալիս սուկ այլագրությունների սահմաններից (տե՛ս Ջաբենցի անվան գրականության և արվեստի թանգարան, Կոմիտասի Ֆոնդ, խազագրանական նյութեր, № 662, թերթ 34 և 35)։ Այնուհետև, դեռ Կոմիտասից էլ առաջ, Ռիմսկի-Կորսակովը, որը խազավոր ժամագրքի և Շարականի հրատարակության առիթով բավականին բան է արել երաժշտական համապատասխան ձեռագրերն ուսումնասիրելու ուղղությամբ, «հետևելով Եջմիածնի Համամատության հնագույնից բնօրինակ ձեռագրաց և Հերմոյ Բ արքայի շարականին մանաւանդ, որ թերևս բնագրից բնօրինակն է», աշխատության նախակցած «Ջնորհավորական» վերջում դիմավոր խազերի մի տախտակ է առաջ բերում (հիմք վերցնելով Ա խմբի խազերի թվարանական ու կարգավորությունը), որտեղ «երկար» անվանը կցված 14 նշաններից մի քանիսը (չհաշվելով այստեղ սխալմամբ գծագրված «խոսրովածինի» նշանը), նույնպես դուրս են գալիս սովորական այլագրությունների սահմաններից (տե՛ս Կարգաւորութիւն հաւատացեալ ազգիս Հայաստանեայց եկեղեցւոյ, Վենետիկ, 1898, էջ ԻԸ և ԼԱ)։ Վերջապես ուշագրավ փաստ է

Նախ խոսենք «ձայնդարձի» մասին: «Ձայնդարձը» մի կողմից սերտ ազերա է ունեցել «երկարի» հետ և նույնիսկ խառնվել է նրան, ինչպես կտեսնենք ստորև. մյուս կողմից, սակայն, տարբերվել է «երկարից» նրանով, որ վերջինս բովանդակություն ընդգրկելով, միևնույն ժամանակ «ինչ-որ բան» ավել է նշանակել (ասենք՝ «երկար» +y, որն և հետագայում, ավելի տարանջատ մոտեցման պայմաններում, կոնկրետացվել է, նայած տեղին, երաժշտական կոնտեքստին): Նշված երկու կետերի մասին էլ մեզ գաղափար է տալիս հետևյալ փաստը: Էջմիածնում 1679 թվականին գաղափարված, բայց խազագրության արվեստի դեռևս ոչ լրիվ բյուրեղացած վիճակին արտացոլող մի շարականոցում, առաստղին օգտագործված նիշ տեսնում «ձայնդարձը», այն էլ այնպիսի ընդգծված դծագրական ձևով, որ, առաջին հայացքից, շփոթվում է անգամ «խոսրովայինի» հետ[18]: Համեմատելով տվյալ գրչագիրը XVI դարում օրինակված ավելի ընտիր մի շարականոցի հետ, տեսնում ենք, որ առաջինի «ձայնդարձները» այստեղ գրեթե միշտ համընկնում են «երկարին»[19]: Էջմիածնի հիշյալ գրչագրի այս համատարած «ձայնդարձ»=«երկարների» մեջ սակայն, թաքնված են բուն «ձայնդարձները» ևս, որոնք և մեր ընտիր շարականոցում փոխարինվում են «պարոյկով», կամ «խազով» և կամ մեկ ուրիշ խազով, որը, «երկարի» բովանդակությունն ընդգրկելով հանդերձ, մի հավելյալ նշանակություն էլ ունի[20]:

Ինչ վերաբերում է «յարիշաին» կամ «արաշեշաին», ապա պիտի ասել, թե այն իրենից ներկայացնում է «երկարի» գործածության հին ու նույնիսկ առողանական ձևերի մնացորդներից մեկը և, որպես այդպիսին, սերտ առնչություններ ունի մի կողմից «շեշտի» և մյուս կողմից դարձյալ «պարոյկի» հետ: Ահա այս կարող ենք վկայակոչել հետևյալ փաստերը: Քննվող խազի անունն իսկ, մանավանդ նրա երկրորդ, ավելի հիշատ ձևը՝ «արաշեշտ» (որ և յարաշեշտ), վերցված է մեր հին քերականությունների «Յաղագս առոդանութեանց» բաժնից, բստ որում մի ժամանակ, երբ դեռևս լրիվ դիտակցված չեն եղել՝ «յարաշեշտություր», «նախայարաշեշտություր», «յարապարոյկ»[21] և նման տիպի ոլորակների՝ բացառապես հին հունարենին կապված լինելը: Այնուհետև, պիտելի է, որ մեր միջնադարյան հեղինակները նույնպես, հույն քերականների հետևողությամբ, աշխատել են հատուկ կերպով հարաբերակցել առոդանության «ամանակի» նշանները «ոլորակի» նշանների հետ, և բստ այդմ, բնա-

---

և այն, որ XII դարի Կիլիկյան նշանավոր գիտնական, գրչության արվեստի հմուտ Արիստակես գրիչը, խոսելով բնթերցանության և մանավանդ վերծանության դյուրացնող կետադրության մասին, «բաշը» հիշատակում է «գրաշա» հոդնակի ձևով, թեև սրան կցված է լոկ մեկ գծագրածև, որից և պարզ է, թե վերջինս ավելացված է հետագայում, պատահական մի գրչի ձեռքով (տե՛ս «Վերլուծութիւնք բացերևապէս բազմազան բառից և բայից յոգնախոտմբ շարադրութեամբ արարեալ գրա Առիստակիսի գրչի ի խնդրոյ բազմաց յարհնաց գրչութեան», Մաշտոցյան Մատենադարան, ձեռ. № 2373, էջ 161ա—161բ):

18 Ձեռ. № 5161:

19 Ձեռ. № 8542:

20 Համմ. «Տեառն ընդ առաջի» կանոնի «Օրհնութեան» երկրորդ պատկերը՝ ԴՉ, «Այսաւր աւետարանական ծրնունդ». ձեռ. № 5161, էջ 24ա, և ձեռ. № 8542, էջ 4բ:

21 Արուեստ Դիոնիսիոս Փերականի (տե՛ս Н. Адонц, Дионисий Фракийский и армянские толкователи, Петроград, 1915, էջ 38—39):

կանաբար, համապատասխանություն տեսել «երկարի» ու «պարույկի» միջև[22]: Մեր քերականներից ոմանք «պարույկի» մասին խոսելիս նույնիսկ բավարարվել են՝ նրա «երկարացնող» դերությունը նշելով միայն[23]: Անկախ այս բոլորից Ռ. Աթայանը ցույց է տալիս, թե հնում, հայկական առոգանության մեջ «երկարը» դրժե է ածված նաև «շեշտի» և մանավանդ «պարույկի» փոխարեն[24]: Իսկ այն մասին, որ մեր բուն խազագրության մեջ ևս հաշվի են առնված եղել «երկարի» և մանավորապես «պարույկի» առնչությունները, մենք իմանում ենք ձեռագրական մի բնորոշ հատվածից, որին կծանոթանանք քիչ ատրև:

Այժմ Գ խմբի խազերի ստեղծակը կարող ենք դնել իր ամբողջության մեջ: Նախընթացից արդեն պարզ է, որ հիմնախազերի Գ խումբը ևս ինչ-որ կապեր ունի առոգանության նշանների հետ: Ակներև է, սակայն, որ այդ կապերը թույլ են: Իսկույն աչքի է զարնում, օրինակ, որ այստեղ չկա առոգանության նշանների այն կոմպլեքսը («շեշտ»—«բութ»—«պարույկ»—«սուղ»—«երկար»), որը ժամանակին ընդգրկված է եղել երաժշտախազերի դրության մեջ: Եվ սա գլխավոր առանձնահատկություններից մեկն է, որով հիմնախազերի Գ խումբը տարբերվում է և՛ Ա-ից և՛ Բ-ից: Բայց այն ավելի հեռու է հատկապես Ա-ից (որում արտացոլված է խազագրության արվեստի զարգացման ավելի հին մի շրջանը, կապված, սննդային հավանականությամբ, բուն Հայաստանի երաժշտական կյանքին). և ընդհակառակը, ընդհանուր առմամբ մոտենում է Բ-ին, ինչպես իր խազերի ճոխությամբ, այնպես էլ նրանց (խազերի)՝ երբեմն «գրական տարբերակների» ու երբեմն էլ «բարբառային ձևերի» տպավորությունն առիթող յուրօրինակ անվանակոչություններով:

Ըստ բոլոր ավյալների, Գ խմբի հիմնախազերի ստեղծակը նույնպես (Բ-ի նման) կազմվել է Կիլիկիայում: Պատմական կարևոր մեկ ավյալ լույսի տակ այն մասին, թե Կիլիկիայում մի ժամանակ հատկապես զբաղվել են առոգանության նշանները երաժշտախազերի դրության մեջ ներմուծելու խնդրով, կարող ենք ասել նաև, թե մեր Գ տեսակը ստեղծվել է Բ-ից առաջ, և վերջինս նման եղել է գործնական խազագրության զարգացման փուլերից մեկի ցույցիչը: Խոսքը վերաբերում է Առաքել Սյունեցու հաղորդած հետևյալ տեղեկությանը, որի վրա առաջին անգամ լուրջ ուշադրություն է դարձրել Ղ. Ալիշանը: «Քերիաւ, զտեսակ և ճշմարիտ... բանք երգոցն... խլկայ օրինակն է ի Շարակնոցն,—գրում է Սյունեցին,— զոր մեծ վարդապետն ուղղեաց. այն որ զնաայի նախասացն մեկնեցաց ի խնդրոյ Հնթում Թագաւորին ի Սիս... զի արհետն առոգանութեան՝ խառնեալ լիցի չերգոն, որ զխորհուրդ բանին յայտնէ. որպէս նոյն խլկոյն օրինակն է, զոր սահմանեաց վարդապետն Գէորգ»[25]: Այստեղ խոսք կոչված երաժիշտը՝ կիլիկյան ժամանակագրի խոսքերով ասած՝ XIII

22 Յառոգանութիւնն պատասխկս, զոր գտի: Տե՛ս անդ, էջ 40 («Բութն ոչ է իսկապէս ոտրակ, այլ փազառնական, զի երկու ամանակք են՝ երկար, սուղ. երկարն պարույկ ոտրակ է... իսկ ի վերայ սուղ վանգիցն շեշտ դիցեն»):

23 Մովսիսի Քերդողի Մեկնութիւն Քերականին: Տե՛ս անդ, էջ 178 («Առոգանութիւնք են տասն: Ի տասն ժողովեաց զամենայն սահման կարդացողութեան. շեշտ՝ վերացման ձայն, բութ՝ հարթ, որ ոչ ի վեր և ոչ ի վայր. պարույկ, որ երկարացուցանէ զմէջ տանն»):

24 Ռ. Աթայան. Հայկական խազային նոտագրությունը, էջ 26—27:

25 Գիրք Սահմանաց որոյն Դաւթի անյաղթ փիլիսոփայի և յետ ժամանակի արարեալ յուծումն սորին Հոգնշահ մեկնութեամբ՝ Տեառն Առաքելի եռամեծ վարդապետի, Մադրաս, 1793, էջ 523—524:

դարի «պատուական վարժապետն և երաժիշտն և առաջին քարտուղարն Սուրբ Գրիգոր» նույն է, որ «երարձ դաւելորդն, և զպականն լցոյց զՇարականին. որ նոյն օրինակքն կոչին. Ալկքի,. զոր սուգեալ է նորա, և են Սուրբ բուն կոչնցեալ»[26]: Իսկ «մեծ վարդապետ Գէորգը» ոչ այլ ոք է, քան «սուգաձէր» և «չափագիտակ» Գևորգ Սկևռացին, ինչպես բացատրում է Ղ. Ալիշանը[27], ակնհայտաբար ելնելով այն փաստից, որ Հնիում Բ Բագավորի հանձնարարությամբ «Մեկնութիւն Եսայեայ» աշխատությունը գրողը հենց նա է եղել[28]: Ղ. Ալիշանը պարզաբանման կարգով նաև գրում է, թե «որպէս դուշակի նույն զնդանական ձշգրտեաց, իսկ Գէորգ զրանն և զնդանական»[29]: Ավելի քան համանական է: Որովհետև Սկևռացու գործունեության շրջանումն է, որ կիլիկյան երգարաններն սուանում են իրենց ավարտուն տեսքը թե՛ գրական և թե՛ երաժշտական առումով: Միայն ընդգծել հարկ է, որ, ինչպես հետևում է Առաքել Սյունեցու վերաբերյալ խոսքերից, Գևորգ Սկևռացու կատարած աշխատանքի սլաքը ուղղված է եղել հիմնականում մեկ նպատակի՝ խազավոր երգարաններում առոգանության նշանների կիրառության սահմաններն ընդլայնելուն և դրան (կիրառությանը) հետևողական ու վերջնականապես օրինականացված բնույթ տալուն: Այսպես ենք հարցը դնում, որովհետև, բացի այն, որ Հիմնախազերի Ա խմբի համակարգում արդեն իսկ հանդիպում ենք առոգանության նշաններին, դատելով ինչպես Ռ. Աբրահամյանի օգտագործած խազավոր պատառիկներից[30], այնպես էլ Մատենադարանի № 9838 գրչագրում[31] պահպանված, XII դարին վերաբերող խազավոր շարականոցի շատ մասերից, առոգանության նշանները խազագրության մեջ կիրառվել են Գևորգ Սկևռացուց էլ առաջ, միայն՝ բնավ ոչ այն չափով ու այն հետևողականությամբ, ինչ չափով որ դա արված է՝ սկսած Սկևռացու գործունեության ժամանակներից: Բնորոշ է, հենց վերջին տեսակետից, որ նշված ժամանակաշրջանում գաղափարված շարականոցները, վերևում քիչ առաջ հիշատակված XII դարի երգարանի համեմատությամբ, օրինակ, շատ ավելի խիտ մի խազագրություն ունեն, և որ այդ խտությունը շատ դեպքերում ձեռք է բերված առավելապես առոգանության նշանների հաշվին: Այսպես ուրեմն, Գևորգ Սկևռացին, ըստ երևույթին, XIII դարի վերջին քառորդում, հատուկ զբաղվելով իրենից առաջ Գրիգոր Նույի կողմից արդեն խմբագրված շարականոցով (և, ամենայն հավանականությամբ, ոչ միայն շարականոցով), գործնականում մշակում է մանավորապես առոգանության նշանների երաժշտական կիրառման սկզբունքները, և դրանով մի նոր մակարդակի բարձրացնում երգարանների խազավորման արվեստը առհասարակ:

---

26 Ղ. Ալիշան, *Սիսուան, Վենետիկ, 1885, էջ 517:*

27 *Անդ, էջ 105:*

28 Հ. Աճառյան, *Հայոց անձնանունների բառարան, Հատ. Գ, Երևան, 1946, էջ 71 «Հնիում Բ Բագրատ կիլիկիոյ»):*

29 Ղ. Ալիշան, *նշվ. աշխ., էջ 106:*

30 Ռ. Աբրահամյան, *նշվ. աշխ., էջ 45—63:*

31 *Ձեռագիրը (որի վրա առաջին անգամ ուշադրություն է հրավիրել Ա. Մնացականյանը, տե՛ս «Բանբեր Մատենադարանի», № 7, էջ 131), ժողովածու է՝ Շարակնոց—Տոնացոյց—Մանրուսմունք բովանդակությամբ: Այն սկզբնապես գաղափարվել է 1193 թվականին Երուսաղեմում, և խիստ բարգավճելուց հետո նորոգվել 1526-ին՝ Ս. Խաչիկ Հոր անապատում: Նորոգողը, սակայն, օգտագործել է հին ձեռագրի շատ թերթեր: Այստեղ հին Շարակնոցի մասերն են՝ էջ 9ա—10բ, 14ա—61բ և 69ա—111ա:*

խազագրության արվեստի զարգացման հենց այս աստիճանն է, որ իր գլխավորագույն գծերի մեջ արտացոլված է հիմնախազերի մեր Բ կոչած տախտակում։ Եվ ահա թե ինչու վերջինիս «հաստատիչը» չէր կարող եղած լինել Ներսես Շնորհալին, ինչպես հավաստիացնում է Եփրեմ Երաժիշտ Վարդապետը[32]։ Բայց, եթե Ներսես Շնորհալին իրոք «հաստատիչն» է հիմնախազերի որևէ միակցության, իսկ դա խիստ հավանական է (նշենք, որ Ռ. Աթայանն էլ, ըստ երևույթին հաշվի առնելով Եփրեմ վարդապետի կարծիքը ևս, ենթադրում է, թե «Շնորհալու կողմից ձեռնարկված հոգևոր երաժշտության կարգավորումը, որի մասին խոսում են նրա կենսագրիչները, ընդգրկել է նաև երաժշտական խազերի սիստեմը»[33]), ապա դա անկասկած եղած պիտի լիներ Գ խմբի խազերի միակցությունը։ Այսպես թե այնպես, պարզ է մի բան. հիմնախազերի Գ տախտակը կազմվել է Բ-ից շատ առաջ, մոտավորապես XII դարի երկրորդ կեսին։ Անհրաժեշտ է ընդգծել, որ սա այն ժամանակաշրջանն է, երբ Կիլիկիայում ծաղկում էր մանրուսման հատուկ խազագրությունը ևս, որովհետև ավյալ հանգամանքը որոշակի հարաբերություն ունի Գ տախտակի կազմության հիմքում ընկած սկզբունքին։ Արդարև, համեմատությունը ցույց է տալիս, թե Գ տախտակի ստեղծման հիմնական նպատակը եղել է՝ ի մի բերել երաժշտական ձեռագրերում և ավելի առատորեն խազգրքերում կիրառվող «արուեստաւոր» կոչված խազերը, որոնք այդպես են կոչվել ի հակադրություն հենց առոգանության նշանների։ Այն մասին, թե անցյալում իրոք ձգտում է եղել տարբերելու առոգանության նշանները («շեշտ»—«բութ»—«պարոյկ»—«երկար»—«սուղ»)՝ «արուեստաւոր» խազերից, իմանում ենք երաժշտագիտական գրչագիր մի աշխատության շահեկան մի հատվածից, որը թեպետ պահպանված է մասամբ XV և մասամբ էլ XVII դարում գաղափարված ժողովածուներից մեկում, բայց շատ ավելի հնուց է գալիս, և դարձյալ՝ Կիլիկիայից կամ նրա հետ սերտ կապված մի ուրիշ վայրից, գաղելով թեկուզ և լեզվից և ուղղագրությունից։

Հատվածն ուղղակի մեջբերելուց առաջ, սակայն, նշենք հետևյալ չորս կետերը։ Նրանում, «ծնկների» գծագրաձևն աղավաղվելով, վերածվել է «բարձրահարերին», որ ուղղել ենք. «շերեփ» (իմա՝ «խունճ») անվան կցված երկրորդ նշանը «բեռկորճի» և «խունճի» հարակցումը լինելով, հիշյալ անվան դիմաց առնվազն ավելորդ է, որ և ջնջել ենք. խիստ կասկածելի են՝ «վանկի» ու «բարձրահարերի» հարակցման վերագրված «դայկուռճայ», և «խոսրովայինի» գծագրաձևերից մեկին (որ բնավ գրաձև չէ) հատկացված «դուր» անվանակոչումները, բայց հարմար չդատելով դրանք փոխարինել այլ անուններով, թողել ենք. հատվածս ունի նաև առանձնահատկություններ, ինչպես՝ «բութից», որպես առոգանության նշանից բացի, «ներքնաբութի» ձևով գծված մի «դիր» բերելը, «պարոյկին» գծագրական երկու տարբերակ հատկացնելը[34], «բադուղներ» անվան տակ չորս տարբեր նշաններ խմբավորելը, «վանկը»՝ «տակն», իսկ «խուն-

32 «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1968, № 1, էջ 69։


33 Ռ. Աթայան, նշվ. աշխ., էջ 90։

34 Ի դեպ, սա բնավ պատահական չէ, քանի որ Եսայի Նչեցին ևս, իր Քերականի մեկնության մեջ, «պարոյկի» մասին խոսելիս՝ մեկ բերում է նրա հիմնական գծագրաձևը և մեկ էլ՝ իրենց վերջին կամ նախավերջին վանկի վրա «պարոյկ» ունեցող անունների օրինակներ առաջարկելիս (Երակլէս, Պատրոս և այլն) տալիս է նույն նշանի մի երկրորդ գծագրաձևը, որ նման է «ձայնդարձին» կամ «յարեշտին»։ Տե՛ս Մաշտոցյան Մատենադարան, ձեռ. № 2373, էջ 16ա։

ձը»՝ «շնիւի» անվանելը, առանց կետի «սուրբ» (ի հակադրութիւն «դիրին»)՝ «առ», մեկ կետովը՝ «սուբ» և երկու կետովը՝ «լար» կոչելը և այլն, որոնք բոլորն էլ նկատառնելի կետեր են առհասարակ: Ծանոթանանք դրան (գծ. II):

Նախքան առաջ անցնելը հիշեցնենք ընթերցողին «պարույկի» առնչակցութիւնները «յարեշտի» ու «ձայնդարձի» հետ, ինչպես երեքի ևս կապերը «երկարի» կամ «քաշի» հետ. դիտենք նաև այս կապակցութիւնամբ, որ մեզ բերված հատվածում «պարույկին» կցված նշաններից երկրորդը՝ «ձայնդարձը» կամ «յարեշտն» է հենց, որից բուն «երկարը» տարբերելու համար, վերջինս այստեղ ևս մեկ կետով է ծագրված, ինչպես Գ տախտակի «քաշը»:

գծ. II



Դառնանք բուն նյութին:

Եթե անցյալում, խազագրության տարրերի կատարյալ բյուրեղացումից հետո իսկ, հայ երաժիշտներն անհրաժեշտ էին համարում այսպես «ճանաչել և բաժանել» միմյանցից «արուեստաւոր» խազերը առոգանության նշաններից, ապա ավելի քան հասկանալի պիտի լինի, թե ինչու և ինչպես է, որ XII դարի երկրորդ կեսին, երբ առոգանության նշանների լայնորեն կիրառումը դեռևս ընդհանրացված չէր, բայց երբ արդեն ծագում էր մանրուսման գրքերի խազա-

---

35 Մաշտոցյան Մատենադարան, ձեռ. № 20, էջ 289ա—289բ:

վորման արվեստը, կարող էր առնղծվել գլխավորապես «արուեստաւոր» խազերի մի ցուցակ, որպիսին է մեր Գ տախտակը։ Ի դեպ, վերջինիս ընդհանրացած խուրապիրն էլ, որ բերել ենք վերը, խիստ տարբերվելով թե Ա և թե Բ խազամեջերի վերնագրերից, նույն միտքն է հուշում, ինչպես դա հպանցիկ կերպով շոշափել է Ռ. Աթայանը ևս[36]։ Այսպես, Ա խմբի խազերն ունեն՝ «Անուանք խազից շարականաց» խորագիրը. Բ խմբի խազերը դնահղվում են՝ «Այս է անուն ձեներուն» կամ «Անուն խազերուն այսոքիկ են» վերնագրի տակ (որտեղ շարականի հատուկ հիշատակություն արդեն չկա, որովհետև սա իրոք ավելի լայն մի բնդգրկում ունի առհասարակ). իսկ Գ-ի խորագիրն է՝ ինչպես պիտանք՝ «Անուանք նղանակաց ձայնից երգոց, զիւտից իմաստնոց» (այսինքն, առավելապես «բարդ» խազեր, կամ մեղեդիական տիպական դարձվածքներ՝ «եղանակներ» նշանակող անուններ)։ Եվ հատկորոշ է, որ Գ տախտակը այս վերջին տեսակետից Բ-ից էլ հարուստ է։ Ճիշտ է, Գ-ում տակա չեն Բ տախտակի մեջ ներմտակված բոլոր «բարդ» խազերը, բայց նա էլ ունի ուրիշ նշաններ, որոնք բացակայում են Բ-ում։ Ըստ որում, այդ նշաններից երկուսը՝ «բազմեղանակն» ու «Յաղաւորաորոյը», լայնորեն կիրառված լինելով խազգրքերում, գրեթե չեն պատահում շարակնոցներում[37]։ Գ ցուցակն այլ տարբերություններ ևս ունի Ա-ից և Բ-ից, բայց նաև՝ ընդհանրություններ նրանց հետ, որոնք բոլորն էլ պարզ երևում են երեք ցուցակների ստորև բերվող համեմատական տախտակից (դժ. III տե՛ս էջ 114)։

Սրանից պարզ երևում է (ինչպես նույնը տեսանք նաև լոկ Ա և Բ տախտակները համեմատելիս)[38], որ մեր ցուցակներում՝ ա) որոշ նշաններ ունեն նույն կամ գրեթե նույն գծագրաձևը, բայց տարբեր անուններ (ասենք՝ «ծրնկներ»=«ծրնկիկք»=«ողոմանեակ»). բ) այլ նշաններ, ընդհակառակը, ունեն նույն կամ գրեթե նույն անունը, բայց տարբեր գծագրաձևեր (օրինակ՝ «Հուհայը», «քաշը»). գ) երեք ցուցակները ներփակում են տարբեր թվով նշաններ (Ա=24, Բ=28, Գ=23). դ) և որ երեք ցուցակներից ամեն մեկն էլ ունի խազեր, որոնք տակա չեն մնացած երկուսի մեջ։

Քննությունը ցույց է տալիս, սակայն, թե մեր երեք ցուցակների բոլոր նշաններն էլ գործնականում կիրառված են միջնադարյան խազավորված երգարաններում, և դարձյալ՝ խառն ձևով։ Այս հանգամանքը, ահա, մեզ անխուսափելիորեն հանգեցնում է մի եզրակացության. տարբեր վայրերում, տարբեր ժամանակներում և տարբեր նպատակադրումներով առնղծված այն երեք ցուցակների ավյալների համադրումից է, որ մենք առանալու ենք առհասարակ խազագրության հիմնական նշանների գրեթե ողջ միակցությունը։

---

36 Ռ. Աթայան, նշվ. աշխ., էջ 266։

37 Մեր վերապահումը բացատրվում է հետևյալով։ XVII դարի սկզբում օրինակված, բայց բուն բոլոր ավյալների, Գևորգ Սկևռացու մեզ արդեն ծանոթ գործունեությունից առաջ բնկած մի ժամանակաշրջանի վերաբերող նախագաղափարի հետ դեռ սերտ կապեր ունեցող շարակնոցներից մեկում, ուրիշ բան փնտրելիս, Հրեշտակապետաց կանոնի երգերի մեջ պատահաբար հանդիպեցինք «բազմեղանակին» (տե՛ս Մաշտոցյան Մատենադարան, ձեռ. № 6101, էջ 157ա—157բ)։ Եթե այս տեսանկյունով հատուկ նայենք թվուզ և միայն մեզ մոտ պահվող շուրջ 350 շարակնոցները, թերևս հանդիպենք «Յաղաւորաորոյին» ևս։ Բայց միևնույնն է, այս երկու նշաններն էլ բնորոշ չեն Շարակնոցի խազագրությանը, և պատահական չէ, որ դրանք ի վերջո դուրս են մնացել Շարակնոցի հնդհնակավոր խմբագրություններից, միաժամանակ առատորեն գործածվելով խազգրքերում։

38 «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1968, № 1, էջ 73—74։

գծ. III.

Ա	Բ	Գ
շեշտ /	շեշտ \	–
փուշ ✓	փուշ ✓	հարուկ ✓
քուր \	դիր \	–
պարույկ ⌒	բեր ⌒	–
երկար —	քաշ ~	ձաք ~
–	–	ձարեշտ ~ /կամ արաշեշտ/
–	–	դայնդարձ ~
ոսուղ ○	գլոր ○	–
սուր /	սուր ⁄	–
թուր ⁀	թուր ⁀	–
ֆունկ ⁀	–	–
թաշտ ~	թաշտ ~	–
ուղորակ ⌒	ծոցբեր ⌒	ծոցբեր ⌒
խուռնք ~	խուռնք ~	խուռնք ~
վերնախաղ ⁀	վերնախաղ ⁀	խաղ ⁀
ներքնախաղ ⁀	ներքնախաղ ⁀	դաղ ⁀
բեռնկորք ⌒	բեռնկորքաձայ ⌒	կորքաձայ ⌒
խոսրովաձին ⁀	խոսրովաձին ⁀	քմաշարդ ~
ծնկներ ⁀⁀	ծնկիկք ⁀⁀	ողմանեակ ⁀⁀
հկորք ~	հկորքաձայ ~	խաղբեկ ~ /կամ հար/
ձակորք ⁀	ձակորքաձայ ⁀	խաղէ ⁀ /կամ հարկորքաձայ/
խուռմ ≈	ղուռմ ≈	–
փայտուր ⁀	փայտուր ~	հանգոյց ~
ձարձաշ ⁀ (⁀)	ձարձաշ ⁀ (⁀)	–
հուհայ ⁀	–	ատանձնատուպ ⁀
–	հուհայ ⁀	քմատուպ ⁀
	/կամ հայհուհայ, հայհոյ/	
զարկ ⁄	զարկ ⁄	կուռ զրնգիկ ⁄
–	հեռկ ⁀⁀	–
–	խաղ ~	–
–	քարձրահարեր ⁀	–
–	վերձաշ ⁀	–
–	միմնաւոր ⁀	–
–	–	ստորադիր ⁀
–	–	վերադիր ⁀
–	–	վանկ ⁀
–	–	ծանրատուպ ⁀
–	–	թաքստուպ ⁀
–	–	/կամ թաքստուրա-տուպ/
–	–	բաժանեղանակ ⁀⁀

Բայց դա էլ հենց միանշանակորեն չէ, որ պիտի կատարվի: Այստեղ համակարգը նկատի առնվելիք մի քանի կետեր կան: Հիմնախազերի թվաքանակի հարցը, դեռ իր պլուսավոր սահմանագծերով, կարծում ենք, լուծված կլինի, վերը բերված ախտակից երկու նշան դուրս թողնելով և նրա վրա վեցն ավելացնելով: Դուրս մնալիք նշաններն են՝ գ ցուցակի «յարեշան» ու «ձայնդարձը», որոնք արխաիկ ձևեր լինելով, հետագայում իրենց նշանակությամբ տարրալուծվել են մասամբ «երկարի» (կամ «քաշի») և մասամբ էլ «պարույկի» ու մի քանի այլ խազերի մեջ (ինչպես տեսանք վերը. թեև դա չի նշանակում, որ հիշյալ խազերը այսուհետև պետք է առհասարակ դուրս մնան մեր տեսադաշտից):

Քիչ կանգ առնենք այն նշանների վրա, որոնք հարկ է ավելացնել, ասացինք, մեր համեմատական ախտակի ավյալներին: Դրանք են՝ հայոց լեզվի արտահայության նշաններից՝ «առոգակետը», «միջակետն» ու «վերջակետը». հիմնախազերի ռ խումբը դոյացնող ցուցակներից երկուսի մեջ հանդիպող «հավելյալ» նշաններից երկուսը՝ «տաշտիկ» (կամ «թաշտիկ») ու «կրտվէ» (կամ՝ ավելի ճիշտ՝ «կրտուէ»)[39]. և մեկ էլ «յէ» կամ հետագայում «կիսափակում» անվանված նշանը:

Տրհուության հիշյալ երեք նշանները հիմնախազերի շարքը դասելու անհրաժեշտության մասին պիտի դառնալ հետևյալից: Նախ՝ դրանք առանց այդ էլ ընդգրկված են առոգանության պլուսավոր նշանների դրության[40], որն և խազագրության հատվածներից մեկն է պարզապես[41]: Հետո՝ արդեն հայտնի է, թե նույն այդ կետերը խազավոր երգարաններում հաճախ ցույց են տալիս մեղեդիի արտհության ևս[42]: «Առոգակետն» ու «միջակետը» արտհելով գրական խոսքը, նաև հրաժշտական համապատասխան նշանակություն են ձեռք բերում մանավանդ սաղմոսատիպ, ասերգային բնույթի շարականներում և ոտանավոր պարզ երգերում: Իսկ «վերջակետը» (մասամբ «միջակետն» էլ), բացի իր բուն պաշտոնին համապատասխանող հրաժշտական նշանակությունից, «ծանր» տիպի երգերում անջատվելով գրական խոսքից և ներթափանցելով խազաշարքերի մեջն իսկ, նաև դառ մեղեդիական մի դեր է կատարում: Այս կապակցությամբ մեր հրաժշտագիտության մեջ կարծիք է հայտնվել, թե որի՝ «վերջակետը» քննարկվող դեպքերում ցույց է տալիս մեղեդիի համեմատաբար «փոքր մասերը»[43]: Եվ սա ընդհանուր առմամբ ճիշտ է: Մի քայլ էլ առաջ գնալով, սակայն, կարող ենք հաստատել, թե դիտողությունները ցույց են տալիս, որ առավել բարդ երգերում (որոնցում խոսքի մեկ վանկը հաճախ զուգորդվում է բազմաթիվ հնչյունների հետ) «վերջակետը» ողջ մեղեդին բաժանում է յուրատեսակ «տակտերի»: Դրանք ընդհանրապես լինում են աղատ, այն է՝ իրար անհավասար, ինչպես և պետք էր սպասել միջնադարից: Բայց հետաքրքրական է, որ ամենևին էլ հաղվադյուտ չեն հավասար կամ մոտավորապես հավասար «տակտերը» ևս, որպիսիք պարզ տեսանելի են, օրինակ, «ուղիցիների» Դկ շարքի «փողն» կոչվող հետևյալ ստեղծագործության մեջ (գծ. IV. համմտ. թե-

---

39 Անդ, էջ 70:


40 Տե՛ս Կոմիտասի „Armenische Kirchenmusik" ուսումնասիրությունը (Sammelbände der Internationalen Musikgeseischaft, Ա տ., 1899 թ.):

41 Տե՛ս մեր հոդվածը՝ Ոսկան վարդապետ ու խազագրության արվեստը, «Էջմիածին», 1966, № 11—12:

42 Ի. Աբրյան, նշվ. աշխ., էջ 193—195:

43 Անդ, էջ 198:

կուզ և նուչանման «տակտերը»՝ «վերնախաղ»—«ներքնախաղ»—«բնկորճ»—«վանկ»+«վերնախաղ» և «ծրնկներ» բանաձևով, կամ 5-րդն ու 11-րդը, և կամ՝ 1-ինը, 14-րդը, 17-րդն ու 20-րդը և այլն):



44

Վերջապես պիտի նշել, որ հայոց լեզվի տրոհության այս երեք նշաններըհիմնախաղերի շարքը դասելը մեր նորամուծությունը չէ բնավ: Այդ քայլն արել է դեռևս Գր. Գապասաքալյանը, թեև առանց հատուկ կերպով հիմնավորելու[45]:

«Թաշտիկ» անվան հանդիպում ենք ոչ միայն Բ խմբի խաղերի «ձ» ցուցակում (որպես հավելյալ անուն): Ձևերի տակ ունենք կազմման սկզբունքով Ա, Բ և Գ խաղախմբերի ցուցակներից անկախ մի տախտակ ևս՝ «X»: Սա ակնհայտորեն թերի է, ունի սխալներ/էլ, բայց, այդուհանդերձ, շահեկան է: Այս-

44 Մաշտոցյան Մատենադարան, ձեռ. № 755 (Մանրուսումն), էջ 242ա:

45 «Հանդէս ամսօրեայ», 1895, № 4, էջ 123 (տե՛ս այստեղ «տոթրակ», «միջակ» ու «վերջակ» անուններով բերված նշանները):

անդ իր հատուկ անդն ունի «Թաշտիկը» (թեև դարձյալ սխալ գծագրաձևով), առկա է նաև «չէ» կոչվող խաղը: Ծանոթանանք դրան էլ, նախապես նշելով նրա առանձնահատկությունները և ուղղելով սխալները: Տախտակս անկախ է, սացիենք, Ա, Բ և Գ խաղախմբերի ցուցակներից: Այսուամենայնիվ, նա որոշ հարաբերություններ ունի այդ խաղախմբերից վերջին երկուսին պատկանող ցուցակների հետ, հատկապես իր ներփակած նշանների գծագրաձևերի առումով: Նրա առանձնահատկությունները մեծ մասամբ վերաբերում են խաղերի անուններին: Նկատառելի են, այս տեսակետից, «փուշը»՝ «զարկ» և «զարկը»՝ «առուդիր» կոչելը (որ այստեղ պատահական սխալմունքի արդյունք չէ). «վիրնախաղը»՝ «խաղբեր», «ներքնախաղը»՝ «աբիվեր» և «էկորճը»՝ «խողող» անվանելը և այլն: Ուշադրության է արժանի նաև «տակ և թուր» անվան տակ գծագրված համապատասխան դասդրդությունը, չնայած անորոշ է մնում, թե ինչ նպատակով է բերված. որպես հնարավոր (և գործնականում իրոք կիրառված) համակցությո՞ւն, թե՞ որպես հիմնախաղ: Այստեղ նույնպես օգտագործված է օտարոտի «չաղար» անվանակոչությունը, որին կցված է «թագատրոպի» նշանը: Տախտակիս ուղղելի սխալները հետևյալներն են: «Շեշտի» նշանը «փուշ» է անվանված, որ բացատրելի վրիպակ է, քանի ինքը «փուշը» այստեղ կրում է «զարկ» անունը (իսկ «զարկն» էլ՝ «առուդիր» կոչումը): Այնուհետև, «բեննդրճ» անունը նախ հատկացված է համապատասխան նշանին, և դարձյալ՝ նրա հեռապատկմանը, որ բացարձակ ավելորդ է, որով ներփակված նշանների թիվը 18-ից իջնում է 17-ի: Երկու անգամ է օգտագործված «չէ» անունը ևս. մեկ՝ իրեն համապատասխան նշանի, և մեկ էլ՝ «լերկի» վերաբերությամբ, որ անտեղի է, քանի վերջինս ունի իր հատուկ անունը: Ի դեպ՝ սույն «չէ» անվան մասին: Սա, խաղարեն դասելով, անուն չէ, այլ՝ ավյալ խաղի հնչյունավորման գործնական կերպը բնորոշող մի ձայնարկություն: Բայց այս պարագան պետք չէ դժվարացնի մեզ, քանի որ ունի իր նախադեպերը. օրինակ՝ Ա և Բ տախտակների «Հուհայ» (կամ «Հայհայ», այլև «Հայուհայ») ձայնարկությունները, որոնց համապատասխանող նշանները Գ տախտակում երևում են իրենց հատուկ գեղեցիկ ու խոսուն անուններով՝ «առանձնատրոպ» և «քմատրոպ» (տե՛ս վերը): Ինչ վերաբերում է «չէ» (կամ «կիսափաթութ») անվան կցված նշանին, ապա խաղավոր երգարաններում հանդիպում ենք դրան ևս, ու նույնիսկ՝ «լերկը» հիշեցնող մի ձևափոխությամբ էլ, որից դժվար չէ հասկանալ, թե «չէի» պարզ ձևը բանեցված է եղել որպես հիմնախաղ[46]: Վերջապես մեր «X» տախտակում սխալ է նաև «Թաշտիկի» գծագրաձևը, որ հիշեցնում է հորիզոնական դիրք ընդունած «խունձի» կամ մի փոքրիկ «էկորճի» նշանը: Մինչդեռ «Թաշտիկը» իր գծագրաձևով «Թաշտի» փոքրացումն է հենց (ինչպես հուշում է անունն իսկ), որն անգամ ընտիր ձևագրերում հեշտությամբ կարող էր խառնվել բուն «Թաշտի» այլագրություններին ու թերագրություններին, և այդպես էլ եղել է դժբախտաբար: Սակայն՝ «Թաշտի» մետրական արժեքի մասին հայտնի տվյալները՝ մի կողմից, և իրենց խաղերի շարքում «Թաշտիկը» ունեցող երգերի կառուցվածքի մասին մեր դիտելիքները՝ մյուս կողմից, թույլ են տալիս տարբերելու «Թաշտիկը» «Թաշտից» և, հետևաբար, հաստատելու «Թաշտիկի» ինքնուրույն դոյությունը: Խոսելով «Թաշտի» մետրական արժեքի մասին,

---

46 Համմ. Մաշտոցյան Մատենադարան, ձեռ. № 1576, էջ 13բ և 24բ:

դեռևս Ե. Տնտեսյանը այն դասել է «երկար վանկ» նշանակող խազերի շարքը[47]։ Եվ դա իսկույն երևում է նույնիսկ «միջակ» կամ «չափավոր» մի քանի քաջ հայտնի վառ ստեղծագործությունների խազագրության և դրանց՝ ավանդաբար մեզ հասած մեղեդիների համեմատությունից էլ (չխոսելով «ծանր» ու «սահուն» երգերի մասին), ինչպիսիք են՝ Հռիփսիմյանց «Անակիզրն բանն Աստուածը», Գևոնդյանց «Անճառելի բանդ Աստուածը», Վարդանանց «Նորահրաշ պատկառելը» և այլն։ Բայց կան շատ երգեր ևս, որոնցում առաջին հայացքից «թաշտի» տպավորությունն ստեղծող նշանը մետրական մեկ միավորի արժեքից ավելին չի կարող ցույց տալ, ինչպես դա նկատել է Ռ. Աթայանն էլ[48], և սրանց մեջ է, որ պիտի տեսնել «թաշտիկը»։ Վերցնենք, օրինակ, Տեր Գևորգ Շնորհալու «Նորաստեղծեալը»։ Սրա գրական խոսքը խաղերին չափավորված մի պարզ ոտանավոր է։ Քառավանկ երկու անդամներ (կամ ոտքեր) առաջ են բերում մի տող. երկու տողը՝ իմաստային մի ամբողջություն. և չորս այսպիսի երկտողեր՝ մի տուն։ Նույն կառուցվածքն ունի երգի հայտնի մեղեդին ևս։ Գրական յուրաքանչյուր տողին համապատասխանում է երաժշտական մի «տող». այսպիսի երկու «տողերը» առաջ են բերում երաժշտական մի նախադասություն, որ ավարտվում է կիսակադանսով, իսկ վերջին նախադասությունը՝ վերջնակադանսով։ Դարձյալ՝ երգի մեղեդիի (սրա երկու տարբերակների էլ) քննությունը ցույց է տալիս, որ այն ունի ոչ միայն պարզ կառուցվածք, այլև մեղեդիական պարզ, լակոնական գիծ ու պարզ կշռույթ (ռիթմ), որում «երկար վանկը» հանդիպում է միայն վերջնակադանսում։ Եվ սույն պատկերը ևս մենք տեսնում ենք երգի խազագրության մեջ։ Այն նոսր է ու իրացված՝ մետրական մեկ միավորի արժեքով ընդամենը մի քանի նշանի օգնությամբ, ինչպիսիք են՝ «բուֆը», «փուշը», «ծունկը» և «խունճը». ամբողջ տան լուկ վերջին երկու վանկերի վրա են երևում «երկար վանկ» նշանակող «բինկորճը», «վերնախաղն» ու «երկարը»[49]։ Ահա այսպիսի կոնտեքստում է, որ երգի յուրաքանչյուր երկտողի սկզբում «սուղի» հետ միասին հանդես է գալիս նաև «թաշտը» հիշեցնող խազը, որը, սակայն, «թաշտիկն» է իրականում։ Այժմ տեղն է նշելու, որ դեռևս Հարց է, թե մեկ կետավոր «թաշտը», որ դուն ուրեք հանդիպում է հին ընտիր ձեռագրերում[50] և, ինչպես տեսանք, նաև Բ խմբի հինգ խազագուցակներում[51], արդյո՞ք հենց «թաշտը» «թաշտիկից» տարբերելու ձգտումից չի առաջացել։ Դա կպարզվի հետագայում։ Այս ուղղումներից հետո նախ բերենք, վերջապես, մեր «X» կոչած տախտակը[52] ևս (գծ. V տե՛ս էջ 119)։

Հիմնախազերի թվաբանակի խնդրի կապակցությամբ մեզ մնաց խոսել «կրաուչի» մասին։ Ասել ենք, որ այն հանդիպում է (բացի բուն խազավոր ելպարաններից) Բ խմբի խազերի «ն» ցուցակում, որպես հավելյալ նշան, իրե-

47 Ե. Տնտեսյան, *Տեսութիւն Շարականի երգոց խազերուն*, «Ժամանակ», 1864 (հավելված № 45-ի)։

48 Ռ. Աթայան, նշվ. աշխ., էջ 233—239։

49 *Հմմտ. Մաշտոցյան Մատենադարան*, ձեռ. № 1576, էջ 273ա. և՝ երգը ձայնագրելը և ժամագրոց, Վաղարշապատ, 1877, էջ 318 ու 320։

50 *Տե՛ս նույն № 1576 ձեռագիրը*, էջ 51բ, 94բ, 258ա, 349բ և այլուր։

51 «Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 1, էջ 71—72։

52 *Մաշտոցյան Մատենադարան*, ձեռ. № 8976, էջ 37բ (տախտակիս վրա մեր ուշադրությունը հրավիրեց Մատենադարանի ավագ գիտաշխատող Ս. Լայփաթյանը, որի համար հայտնում ենք նրան մեր շնորհակալությունը)։

նից ներկայացնելով «բննկորճի», «ներքնախաղի» ու «ծոցքերի» համակցությունը[53]: Բայց, դատելով նրա անունից, սա ևս (ինչպես «բարձրահարները», «վերքաշն» ու «միմնաւորը»), այն դուզորդություններից է, որոնք իրենց բաղկացուցիչների պարզ գումարը չեն: Խաղիս անունը՝ «կրաուէ», հրամայական եղանակն է «կառւիմ» բայի (և այս սկզբունքով կազմված ուրիշ անուններ էլ ունենք, ինչպես օրինակ՝ «յետ ձգէ»), որ նշանակում է՝ «կրկտելով սրբել և կոթել զաւելորդ ոսոս անկոց, յատաննել»[54], և որի հրամայականը մասնավորապես երգչին ուրիշ բան չէր կարող հուշել, քան նրա խազերի ավյալ համակցությունը վերարտադրել, նրա բաղկացուցիչների պարզ գումարի համեմատությամբ՝ ինչ-ինչ տարրերից սրբված, այն է համառոտված, կրճատված ձևով: Եվ նրա սա մի մասնավոր դեպք լիներ, մեթոդական «քատ տեղի» մի ցուցումնք, անհայտ դրիչը հարիվ թե իր դաղափարած խազացուցակին ավելացներ քննարկվող անունը:

գճ. V

դիր. զարկ. առւդիր. շեշտ. խաղբեր. ձայդարճա.

լերկ. ծոցբեր. քազ. խոզոզ. թուր. վաղար. յէ.

տաշտիկ. բեներճա. տակևթուր. աքիվեր:

Այսպիսով առանում ենք 42 հիմնախաղ: Սրանց դասակարգման գործում չենք կարող դեկավարվել մեր Ա, Բ և Գ տախտակներից յուր մեկի հիմքում ընկած սկզբունքով: Ընդհակառակը՝ օգտակար և նպատակասլաց է այս հարցում որոշ ու առավել ևս զարգացնել երեք տախտակներից յուրաքանչյուրի մեջ առկա բանական (ռացիոնալ) հատիկները: Ասենք՝ սկզբից առոգանության նշանները բերելու միտքը Ա տախտակում. խազային համակցություններ ներկայացնող «բարձրահարները», «վերքաշն» ու «միմնաւորը» մի տեղ խմբավորելու փորձը Բ ցուցակում. «առանձնատրոպ»— «քմատրոպ»— «ծանրատրոպ»— «թառատրոպ» յուրահատուկ «բնատանիքի» գաղափարը Գ-ում և այլն:

Այնուհետև, այն բոլոր դեպքերում, երբ միևնույն խազանշանին վերաբերող անունները մեկից ավելի են, դրանք ներկայացնելու ենք անխտիր, օգտվելով և մեր երեք հիմնական տախտակներից (Ա, Բ, Գ), և «X» ցուցակից, և վերևում № 20 գրչագրից բերված հատվածի ավյալներից, դոնելով, որ դրանք հին են (գալիս են XII—XVII դարերից) ու շահեկան՝ այլապես դիտարկումներ կատարելու տեսակետից: Ջորս նշաններ կան, որոնց երկրորդ կամ երրորդ անունները միաժամանակ տարբեր խազերի, եթե կարելի է ասել՝ «հիմնական» անուններն են. դրանք տալու ենք փակագծերի մեջ, հատուկ նշելով աղբյուրը (ասենք՝ բատ Ա ցուցակի, կամ բատ Գ-ի և այլն): Երկու անգամ էլ, նորեն փա-

---

53 «Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 1, էջ 70:

54 Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, հատ. Ա:

կազմերի մեջ, բերելու ենք ավելյալ նշանի նաև հետագա դարերում ստեղծված անունը, խաղերի ընդհանուր դասակարգության մեջ նրա տեղն ավելի հստակացնելու մտահղացմամբ: Իսկ երբ միևնույն նշանի գծագրաձևն է տարբեր մեր երեք ցուցակներից մեկում, այն տալիս ենք որպես ընդհանրացած տարբերակ (որ հիշեցնում ենք, թե ուրիշ բան է, քան որևէ մեկ խաղի այլագրությունը):

Ելնելով վերը շարադրվածից, առաջ բերինք միջնադարյան հայ խաղագրության հիմնական նշանների ստեղծագործությունը (գծ. VI տե՛ս էջ 121):

Սա առհասարակ մինչև այժմ առաջարկված խաղային տախտակներից առավել ճշգրիտն ու ամբողջականն է թվում մեզ: Նրա ներփակած նշաններն ընդգրկում են հայկական խաղավոր բոլոր տիպի երգարանների հիմնախաղերը: Այստեղ նշանների գծագրաձևերը հստակված են ու բերված՝ իրենց ընդհանրացած տարբերակներով հանդերձ: Եվ նույն այդ նշանների՝ XVIII—XIX դարերում արմատացած հետահնար անվանակոչությունների փոխարեն (վերջիններիս մեր արդի երաժշտագիտությունը դիմել է լոկ «հնարավոր խաղնաշխոթից խուսափելու համար»)[55], հավաքված ու համադրված են դրանց հին, ավելի ճիշտ ու հարազատ և շատ դեպքերում ավելի խոսուն անուննները[56], որոնց առաւգաբանության մեջ խորանալը, երևմն կարող է անգամ վճռական դեր խաղալ ավյալ խաղի գործնականում ունեցած նշանակությունն ըմբռնելու խնդրում:

Եվ սակայն, մենք հետու ենք սույն տախտակը լիակատար ու վերջնականապես ճշգրտված համարելու մտքից: Ընդհակառակը, այժմ իսկ կարող ենք ասել, որ հետագայում, ամեն մի խաղանշանով առանձին զբաղվելուց և խաղերի դրությունը բացահայտելուց հետո տախտակը վերջնականապես կհամբարվի, կլրացվի և կպարզաբանվեն մի շարք նշանների՝ որպես հիմնաձևերի գործածության հանգամանքները, ինչպես՝ կետերով դրության պարագան: Մինչդեռ ներկայումս, ասենք, վերջին կոնկրետ հարցի տեսակետից, դրությունը հետևյալն է: Արդեն նշել ենք, և տախտակից էլ պարզ երևում է, որ նշաններ կան, որոնց կետերով ձևափոխված գծագրաձևերն ընդունվել են որպես հիմնաձևեր: Դա տեղի է ունեցել ժամանակի ընթացքում, որոշ օրինաչափության հիման վրա: Վերցնենք, օրինակ, «ձակոբճը»: Ասել ենք[57], որ նրա մեկ կետով ձևափոխված նշանը որպես հիմնաձև է ընդունվել նույնիսկ Ա խմբի ցուցակներում, որոնք մյուսներից ավելի հին պետք է լինեն: Բայց սա դեռ չի նշանակում, որ «ձակոբճը» կետավոր է գծագրված եղել սկզբից ևեթ: Վերոհիշյալ XII դարին վերաբերող խաղավոր հնագույն շարականոցում «ձակոբճը» գրեթե միշտ գործածված է առանց կետի[58], որով նրա կետավոր գծագիրն իսկույն ընկալվում է որպես ձևափոխված նշան: XIII—XIV դարերի ընտիր ձեռագրերում, սակայն, ճիշտ հակառակն է, և սրանցում առանց կետի «ձակոբճը» թողնում է պատահական թերագրության տպավորություն, որից այժմ միայն մեկ եզրակացության կարող ենք գալ. քան եղած ավյալների, ժամանակին կետավոր «ձակոբճին» համապատասխանող միջնադարյան դարձվածքն իրեր

55 Ե. Աբրահամյան, նշվ. աշխ., էջ 178:

56 Դրան, որի անհրաժեշտությունը մատնացույց էր անում դեռևս Տրդատ եպ. Պալյանը («Հանդէս ամսօրեայ», 1895, № 4, էջ 123):

57 «Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 1, էջ 72:

58 Մաշտոցյան Մատենադարան ձեռ. № 9838:

գծ. VI

հնց ձևը բերելով հիմնական դարձվածքի նշանակություն, կետավոր «ձակորճի» նշանին ևս հաղորդել է հիմնաձևի գործություն: Համանման մի օրինակ է տալիս մեզ նաև «առանձնատրոպի» և «ծանրատրոպի» համեմատությունը: Չփորձված աչքն անգամ իսկույն նկատում է, որ հիշյալ խազանշաններից երկրորդը, առաջինի՝ մեկ կետով ձևափոխված գծագիրն ունի պարզապես (տե՛ս վերը): Միայն թե, այս դեպքում՝ առանձին անուններով, որպես առանձին հիմնաձևեր գործածվել են և՛ մեկը և՛ մյուսը: Դժբախտաբար կետերի կիրառման ոչ բոլոր դեպքերն են, որ երևան են բերում նման հետևողականություն[59], որով խնդիրն իր ամբողջության մեջ դեռևս մնում է բննելի:

Այս բոլորով հանդերձ, վերը բերված տախտակն ունի աշխատանքային կարևոր նշանակություն: Խնդիրը նրանումն է, որ նրաժշտախազերի դրության բացահայտումն էլ, իր հերթին, պահանջում է նախօրոք ձևերի տակ ունենալ հիմնական նշանների ըստ կարելվույն լրիվ և ստույգ ցուցակը, և այս իմաստով բերված տախտակը նախնական անհրաժեշտ պատվանդան է ստեղծում՝ աշխատանքային հաջորդ փուլին անցնելու, որ ի վերջո հանդելու է, տախտակում ներփակված խազերից յուրաքանչյուրով առանձին զբաղվելով, նրա նշանակությունը վերականգնելուն:

Ի դեպ, տախտակիս վրա հարևանցի ակնարկն իսկ հուշում է, թե այս գործում չի կարող լինել ուրիշ «կարճագույն» մի ճանապարհ, քանի որ միջնադարից մեզ չեն հասել խազագրության արվեստի տեսության նվիրված մասնավոր ձեռնարկները (ինչպիսիք են, ասենք, բյուզանդական παραδοχή-ները), և որ ինքը՝ խազագրությունը միջնադարում (և ոչ միայն մեզ մոտ), որպես յուրատեսակ ձայնագրություն, տարանջատված չի եղել հին ու նոր եղանակների (ավելի լայն՝ մոնոդիաների) և դրանց տեսակների կազմության մասին դիտությունից, ինչպես հասկացնել է տալիս Ե. Տնտեսյանն էլ[60]:

Մի ճաշակ տալու համար ընթերցողին այն մասին, թե ինչպես էր գործում հատկապես միջնադարյան հայ նրաժիշտ-խազագետի միտքը՝ վերծերկյալ նշանները յուրացնելիս, դրանք ըստ էության հղանալիս, համապատասխան գծագրաձևեր ստեղծելիս, և, հետևաբար, նաև կիրառելիս, հակիրճ նշենք այդ նշանների հարաբերակցություններում նշմարվող մի քանի ընդհանուր կարգի սկզբունքներ (որոնք անկախ են վերը ցույց տրված՝ «առոգանության» ու «արվեստավոր» խազերի բաժանման սկզբունքից): 1) Հակադրության և հակադրությունների համադրման սկզբունքը (մի տեսակ՝ թեզ, անտիթեզ, սինթեզ): Սրա դասական օրինակը տալիս են նախ՝ առոգանության «շեշտ»—«բութ»—«պարույկ» խազերը, որոնցից առաջին երկուսը հակադրություններ են,

---

59 Այս և նման մի-երկու այլ հանգամանքներ դեռ ստ այժմ մեզ կանգնեցնում են հետևյալ մտորման առաջ: Խազանիշների յուրատիպ դրության անվիրջ կատարելագործության ճանապարհի վրա հասա՞վ արդյոք իր բոլոր մանրամասների լիակատար մշակվածությանը, թե՞ ոչ: Համապատասխան երկու վարկածներն էլ հավանական են թվում, որով հասկանալի է, թե դրանցից մեկը կամ մյուսը դեռևս հատուկ պիտի հիմնավորել: Բայց այս փաստը բնավ չվերաբերվով խազագրության արվեստի էության դրական ու բացասական կողմերի հարցին, և ոչ մի չափով չխանգարելով խազանիշների դրության վերծանման հնարավորությունների խնդիրը (ինչպես կտեսնվի է մոտիկ ստորև հայացքից), պարզապես հետազոտողից պահանջում է ունենալ հետևեսային առավել ճկուն ու տարողունակ դիրքեր:

60 Նկարագիր երգոց Հայաստանեայցս եկեղեցւոյ, Կ. Պոլիս, 1874, էջ 88:

Յայտաւուրքը և տարածվում, իսկ 1401 թ. Գր. Խլաթեցին վերատին խմբագրում է և ավելի հայացնում: Յայտաւուրքի գոյության և տարածման պայմաններում փոխվում է Տնկականի բնույթը: Նրա օգտագործման բնույթի հետ փոխվում է նաև պարունակության համամասնությունը և անվանումը: Տնկականը աստիճանաբար վերածվում է ճառընտիրի, ընտիր ճառերի ժողովածուի: ԺԴ դարի մի գրիչ իր ավարտած ձեռագիրն անվանում է «Ճառընտիր և Տաւնականի ձագ կոչի սա», մինչ ուրիշը սուրբ գրքերը թվարկելիս Տնկականի կողքին դնում է նաև Ճառընտիրը. «...Տարէգիրք, մեծ Տաւնականն, Ճառընդիրն, Սարգիս դիրքն» և այլն:

Գ

Ձեռագրի անբակտելի մասն են կազմում Հիշատակարանը և հիշատակագրությունները: Դժբախտաբար Մշո Տնկականի գլխավոր հիշատակարանը չի գրվել, սակայն պահպանվել են բազմաթիվ հիշատակագրություններ՝ գրչից, որոնք օգնում են պարզաբանելու ձեռագրի գրչության հանգամանքները: Գրչի հիշատակագրություններին մեծապես օգնում է նաև Մշո Առաքելոց վանքում ձեռագրի գերության ու վերադարձման մասին գրված Հիշատակարանը, որը «բաց ամենայնի պատմական արժեքով մի հիշատակարան է... իր բովանդակությամբ հիշատակության արժանի մի գործ, բարեպաշտության և մշակույթի պնդհատության մի կենդանի և հավերժական ապացույց, թե միաբանության նոանդի և մասնակցության, և թե բարեպաշտների մասնակցության՝ գնման մեջ»[25]:

Որովհետև հիշատակագրությունների և Հիշատակարանի մեզ անհրաժեշտ մասերին պետք է անդրադառնանք առաջ, կրկնություններից խուսափելու համար այստեղ դրանք չենք բերում: Անհրաժեշտ է հիշել, սակայն, որ ձեռագրի գրիչը Վարդանն է, իսկ ստացողը Վասուած և Հռիփսիմեի որդի պատրոն Աստուածատուրը, որին գրիչը շատ հաճախ է հիշատակում. «Զստացաւդ սուրբ կտակիս և փափագող յիշատակիս՝ զամէնաւրհնեալ պատրոն Աստուածատուրն և բարի ծնաւդն իւր յիշեցէք ի Քրիստոս Յիսուս աղաչեմ, և զանպիտան գծապիրս Վարդան և զամենայն աշխարհս հաւատացեալ, և Աստուած զձեզ յիշէ, ամէն»[26]:

Մշո Առաքելոց վանքում գրված Հիշատակարանի և Տնկականի, ավելի քան կես հազարամյակ այդ վանքում պահվելու պատճառով, բանասերներից ոմանք այդտեղ էլ ընդօրինակված են համարում ձեռագիրը: Տարակարծություններ կան նաև գրության թվականի վերաբերյալ: Բարսեղ Սարգիսյանի կազմած Վենետիկի ձեռագրաց ցուցակում Ճառընտիրի թվականը նշանակված է «ՈՇԱ.—ՈՇԴ (1201—1205)», իսկ գրչության վայրը՝ «Առաքելոց կամ Ղազարու վանքն՝ ի Մուշ»[27]. մինչդեռ Ղ. Ալիշանը այն համարում է «ԺԲ դարու վերջն և հաջորդին սկիզբն գրված»[28]: Գարեգին Հովսեփյանը «Հիշատակարանք ձեռագրաց»-ի Ա. հատորում 1204 թվականի տակ է դրել ձեռագիրը և տեղը դարձյալ համարում

25 Հիշատակարանք, Ա, էջ 721, 722, ծանոթ. 1: Մատենադարան, ձեռ. № 7729, էջ 213բ:

26 Գրչի և ստացողի վերաբերյալ հիշատակագրություններ տե՛ս ձեռագրի 3ա, 43բ, 63բ 73բ, 82բ, 93բ, 105ա, 110ա, 130բ, 182ա, 205ա, 225բ, 228ա, 237ա, 243ա, 254բ, 265ա, 270ա, 285ա, 288բ, 323բ, 338ա, 351ա, 376բ, 458ա, 476ա, 484ա, 490բ, 498բ, 534ա, 555բ, 590ա, 601ա էջերում:

27 Բ. Սարգիսյան, Ցուցակ Վենետիկի, Բ, էջ 435, 477:

28 Ղ. Ալիշան, Հայապատում, հտ. Բ, էջ 338, ծանոթ. 1:

է Մուշը։ «Տաւնականիս գրչութեան ժամանակը, մենք համարում ենք 1204 թվականը. թեպետ և ՈՄԴ համապատասխանում է 1205 թվին»[29] և ապա, «գրվելուց ոչ ավելի քան երեք տարի հետո դարձել է Առաքելոց վանքի սեփականություն[30]։ Գարեգին Լեոնյան «Հայ գիրքը և տպագրության սրվեսառը» ուսումնասիրության մեջ այն մերթ համարում է 1203 թ., մերթ 1202 թ. ընդօրինակություն[31]։ Լ. Դուրնովոն պարզապես գրում է. «1205 թ. ձեռագիր։ Նկարազարդված Մուշում»[32]։

1941 թ. պատմաբան Աշ. Աբրահամյանը մի հոդվածում, վրաց-հայկական գրքերի կողմից Ռուբն-էդ-դինի ջախջախման թվականը որոշելիս, հենվում է Մշո Տօնականի հիշատակարանի վրա և գտնում, որ «այն տեղի պիտի ունեցած լինի 1202 թվի գարնանը, այսինքն հիշատակարանի գրվելուց մոտ երկու և կես տարի առաջ»[33], այսինքն, ձեռագրի ավարտման թվականին։ Սակայն 1959 թ. հրատարակած «Մատենադարանի ձեռագիր գանձերը» գրքում, հեղինակը գրում է, «որ ձեռագրի գրիչն է հանդիսացել վարդան Կաֆայեցին (պետք է լինի՝ Կարնեցին Ա. Մ.), որը ձեռագրի գրչության վրա աշխատել է երեք տարի և վերջացրել 1204 թվականին։ Ձեռագիրը գրված է Աստուածատուրի պատվերով Մուշի Առաքելոց վանքում և նրան էլ նվեր է տրված եղել։ Ձեռագիրն ուշադրավ է ոչ միայն իր մեծությամբ, այլ և պատմական արժեքավոր հիշատակարանով։ Այն պարունակում է 1204 թվականին Բասենում հայ-վրացական և Ռուքն-էդ-դինի զորաբանակների միջև տեղի ունեցած ճակատամարտի մասին արժեքավոր տեղեկություններ»[34]։

Տօնականի գրչության տեղի և ժամանակի վերաբերյալ տարակարծությունների պատճառը ձեռագրի գլխավոր հիշատակարանի բացակայությունն է, որը, ինչպես երևում է, չի գրվել վերահաս աղետի պատճառով։ Սակայն ձեռագրում պահպանված գրչի հիշատակագրություններն և հիշատակարանի[35] մնացյալների քննությունը հնարավորություն է տալիս որոշակի դարձնելու ձեռագրի գրչության ժամանակը և տեղը։

Դ

Նախ ճշտենք Տօնականի գրչության ժամանակը։

Առաքելոց վանքում գրված հիշատակարանում Ռուբն-էդ-դինի արշավանքի ակնարկությունը, ինչպես նաև հիշատակարանի գրության ժամանակի արձա-

29 Հիշատակարանք Ա, էջ 699—726, ծանոթ. 8։

30 Անդ, էջ 3։

31 Գ. Լեոնյան. Հայ գիրքը և տպագրության սրվեսառը, Երևան, 1958 թ., էջ 11 և 30։

32 «Հին հայկական մանրանկարչություն», ալբոմ, Երևան, 1952, 13-րդ նկարի բացատրություն։ Համմ. Л. А. Дурново. Краткая история древнеармянской живописи. Ереван, 1957, էջ 29։

33 Աշ. Աբրահամյան, Ռուքն-էդ-դինի ջախջախումը, «Տեղեկագիր» ՍՍՀՄ ԳԱ հայկական ֆիլիալի, Երևան, 1941, № 5—6 (10—11), էջ 82։

34 Նույնի, Մատենադարանի ձեռագիր գանձերը, Երևան, 1959 թ., էջ 30—31։ Ի դեպ, այստեղ, սխալ է նշված ձեռագրի համարը, 7729-ի փոխարեն գրված է 7721։

35 Հիշատակարանք, էջ 699—721։ Համմ. Սահակ Ա. Մուրադյան. Նոզարեր Պ. Մատթիոսյան. Յուցակ ձեռագրաց Մշոյ սուրբ Առաքելոց-Բարդմանչաց վանքի և շրջակայից, Երուսաղեմ, 1967, էջ. 1։ Սահակ Պ. Մուրադյանը Տօնականը նկարագրել է 1912 թ., Առաքելոց վանքում եղած ժամանակ։ Նա ձեռագրի գրչության վայրը Մուշն է համարում։ Յուցակի հրատարակիչները միայն Հիշատակարանն են տպագրել, իսկ բովանդակությունը՝ ոչ։

նագրումը միմյանց լրացնում և հավաստում են Մշո Տօնականի գրչության ժամանակը:

Բաբերդի[36] ռայիս պատրոն Աստուածատուրը ցանկանում է ունենալ Սողոմոն Մաքենացու կարգավորած Տօնականի ընդօրինակությունը: «Եւ ապա խնդրէր արարեալ յոդնիմաստ գրչի և գտեալ քահանայ մի ի գաւառին Կարնոյ, յորում վարդան կոչեցեալ, հմուտ և վարժ ամենայն արհեստի գրչութեան և նա յանձին կալեալ և աւդնականութեամբն Աստուծոյ սկիզբն արարեալ ղկնի երից ամաց հնաս յաւարտ բանիս»[37]:

Վարդան քահանա Կարնեցին երեք տարում ավարտում է ձեռագիրը: Այդ ժամանակ Սեբաստիայի սուլթան Ռուքն-էդ-դինը հարձակվում է Կարինի վրա, «եւ ի կատարման գրոցս՝ սուլտանն Սեբաստիոյ ժողով արարեալ անհուն բազմութեամբ... փքացեալ, լեռնացեալ հնաս՝ ի Թէոդուպատիս, և անդի կամեցեալ անցանել յաշխարհն Հայոց և վրաց»[38], բայց Հանապարհին, չախչախվում է Զաքարիա Սպասալարի կողմից: Այս դեպքերի արձանագրումը գտնում ենք Ստեփանոս եպիսկոպոսի ժամանակագրության մեջ. «Ի սոյն ամի (ՌԾԱ—1202) Ռուքնադդին սուլտանն էառ զԿարնոյ քաղաք և կատորեցաւ ի Զաքարիայէն»[39]: Ուրեմն Վարդան Կարնեցին Տօնականը ավարտել է 1202 թ.: Այս թվականը հաստատվում է ձեռագրի հետագա ճակատագրի պատմությամբ:

«Եւ յայսմ ամի (իմա՝ 1202 թ.),—շարունակում է հիշատակագիրը,—ի սպրիլոյ շաբթին ըմբռնեցաւ այրս Աստուածատուր ի ձեռն ամիրային Իրզն Ալադին կոչեցեալ: Որ և ի ձեռն այնմ գաղանի Աստուածատուրն այն ընկալաւ գվախճան, և չափշտակեցին զբստացուածս նորա և ոչ մնաց և ոչ մի ինչ, բայց այս գիրքս»[40]:

Օգտվելով ստեղծված ծանր դրությունից, Բաբերդի դատավոր բոծորը, որ նշանակում է տաճիկ, «ձեռն յաւաջ տարեալ գուր պատճառանաւք բանս ի վերայ եղեալ, թէ հինգ հարիւր պատառ մնաց ինձ առ Աստուածատուրն»: Կարծեցյալ պարտքի դիմաց ձեռագիրն հափշտակելով՝ «չու արարեալ գաւառսն ևկն բնակեցաւ ի հռչակաւոր քաղաքն Խլաթ և Բ ամ կայր ի պահեստի»[41]:

Ձեռագիրը երկու տարի թաքցնելուց հետո, հափշտակողը համոզվելով, որ ձեռագիրը չի հետապնդվում (որովհետև ձեռագրի ստացող պատրոն Աստուածատուրի սոհմը սուժել էր ոչ միայն Ալադինի վայրագություններից, այլև վերահաս սովից)[42], այն վաճառքի է հանում:

Խլաթին մերձ Դանջան գյուղացի Ստեփաննոս, Վարդապետ և Հովհաննես քահանա եղբայրները, որոնք միաբանած էին Մշո Առաքելոց ուխտին, այդ մասին լուր են ուղարկում Առաքելոց վանք: Եպիսկոպոսապետ Եսային՝ չորս քահանաներով «փոյթ ընդ փոյթ դնաց ի Խլաթ», և որովհետև «ոչ կարաց հա-

36 «Թերևս ոչ Բաբերդ քաղաքն՝ այլ դիպ մի», գրում է Ղ. Ալիշանը (Հայապատում, էջ 448, ծթ. 3): Բայց ձեռագիրը հափշտակողին հիշատակագիրը «գաւառսն քաղաքին» է կոչում, որ հաստատվում է գաւառսն այն քաղաքի (Բաբերդի), ուր տեղի էին ունենում նկարագրված իրադարձությունները:

37 Մատենադարան, ձեռ. № 7729, էջ 602ա, 602բ: Հմմտ. Հիշատակարանք, Ա, էջ 712:

38 Անդ:

39 Մանր ժամանակագրություններ, կազմեց Վ. Հակոբյան, հտ. Ա, Երևան, 1951, էջ 37:

40 Մատենադարան, ձեռ. № 7729, էջ 602բ: Հմմտ. Հիշատակարանք, Ա, էջ 712:

41 Անդ, էջ 602բ:

42 «ՌՃՄԲ (1203) Թուականին... Սով եղեալ ի վերայ երկրի»,—կարդում ենք Բաբերդի մոտ օրինակված մի ձեռագրում (Հիշատակարանք, Ա, էջ 1031):

անել ի փափագ բազձանացն, քանզի ժամանակն ձմեռնային էր»[43], *վերադառնում է վանք: Տուն են վերադառնում նաև Արծկեի քահանաները, որոնք իրենց հերթին ուզում էին գնել Տօնականը: «Ու մի ամ այլ մնաց գիրքս առ բոժոն այն: Ապա ի գալ միւս ամին խնդիր արարեալ, թէ գիրքս Ղազարու վանից էր, զի առաջին գնող այն մեծ եպիսկոպոսն էր»*[44], *Տօնականը վաճառվում է Առաքելոց միաբաններին: Այս տեղի է ունենում ձեռագիրն ավարտելուց երեք տարի անց, ձմռանը. «զի ժամանակն ձմեռնային էր և ուղն դառնաշունչ»*[45]: *Այդ ժամանակ գրվում է նշանավոր Հիշատակարանը և ձեռագիրը՝ կազմվում:*

«Ի թուականութեան արարչութեանն, որ լինի յիսկզբան լինելութեանն մինչև ցայժմ ամք վեցհազարերորդ վեցհարիւրերորդ երեսներորդ (6630), և ի ծննդենէ բանին Աստուծոյ լինի ամք հազար երկերիւր և չորս (1204), եւ ըստ Հայկազեանն տոմարի, որ լինի վեցհարիւրերորդի յիսներորդի և չորրորդ (1205)[46], *սկսա կազմել զպատմութեանան շրեմարանս աստուածային գանձուց՝ ի նահանգիս, որ կոչի Ղազարու վանս, ընդ հովանեաւ սուրբ Առաքելոցս»*[47]:

Այսպիսով ձեռագիրն ավարտվելուց հետո երեք տարի մնում է Խլաթ քաղաքում և 1205 թ. տարվում է Մուշ, ուրեմն ձեռագիրը գրվել է 1205 թվից երեք տարի առաջ, այսինքն, 1202 թ.: Ինչպես տեսնում ենք, այս թվականը նախորդի հետ նույնանում է և հաստատում Մատենադարանի № 7729 ձեռագրի գրության տարին՝ 1202 թվականը:

Ե

Բայց որտե՞ղ է ընդօրինակվել ձեռագիրը, ո՞րն է գրչության վայրը:

Ք. Սարգիսյանը, Գ. Հովսեփյանը և ուրիշներ գրչության վայրը համարում են Մշո Առաքելոց վանքը: Բայց տեսանք, որ միայն 1205 թ. և հետագայի հիշատակարաններն են գրվել Մշո Առաքելոց վանքում և ոչ ձեռագիրը: Ձեռագրի այնտեղ գրվելու մասին նույնիսկ ակնարկներ չկան: Ընդհակառակը՝ փաստերը ցույց են տալիս, որ ձեռագիրը Մշո Առաքելոց վանքում չի գրվել: Գ. Հովսեփյանը ձեռագրի հիշատակարանի ծանոթագրություններից մեկում վերանայում է իր նախորդ տեսակետը, գրելով. «Ձեռագիրն ամբողջապես չի գրված և նկարազարդված Առաքելոց վանքում, բայց այդ վանքի միաբանների ջանքերով է, որ գրվելուց ոչ ավել, քան երեք տարի հետո, դարձել է Առաքելոց վանքի սեփականություն և պահվել է այնտեղ մինչև 1915 թվականը՝ հավելյալ արժեքավոր հիշատակարաններով: Գրչության վայրը պարզ չէ, Կարնո՞ւմ, Խլաթո՞ւմ, թէ մի այլ տեղ այդ շրջանի»[48]:

Հիրավի, Առաքելոց վանքի միաբանները ձեռագրի մասին լսում են գրությունն ավարտելուց երկու տարի անց միայն և տեր են դառնում, «զի առա-

43 *Մատենադարան, ձեռ. № 7729, էջ 602բ:*

44 *Անդ:*

45 *Անդ, 603ա:*

46 *Գ. Հովսեփյանը գրում է. «Քրիստոնեական և հայկական թվերը համապատասխանում են միմյանց, բայց ոչ Աշխարհի ստեղծագործությանը. կարելի է կարծել, որ ստեղծագործության թվականը պիտի լիներ 6730 և գրիչը սխալմամբ 6630 է գրել՝ Աղեքսանդրի թվականով և ոչ Բյուզանդական: Այդ դեպքում բոլոր երեք թվականներն էլ համապատասխան կլինեն միմյանց. այսինքն, 6730—5509=1221, 1221—16=1205», (Հիշատակարանք, Ա, էջ 726, ծանոթ. 8):*

47 *Մատենադարան, ձեռ. № 7729, էջ 603ա: Համմտ. Հիշատակարանք, Ա, էջ 718—719:*

48 *Հիշատակարանք, Ա, էջ 722, ծանոթ. 3:*

չին գնող այն մեծ եպիսկոպոսն է» (խոսքը Առաքելոց վանքի Եսայի եպիսկոպոսի մասին է, այլապես՝ Արծկեի միաբաններն էին գնելու)։

Եթե Տճնականի թվականը որոշելիս մեզ օգնեց Առաքելոց վանքում գրված Հիշատակարանը, ապա գրչության տեղը որոշելիս նույն դերը կատարում են բուն գրչի հիշատակագրությունները։ Այստեղից իմանում ենք, որ ձեռագրի ստացողը Վասուաի և Հռիփսիմեի որդի՝ պատրոն Աստվածատուրն է (մշեցիների վկայությամբ՝ Բաբերդի ռայիսը), որ սրա եղբայր Ավետիս քահանան շատ է հետևում գրչության գործին, և «բազում հոգաբարձութեամբ նպաստ եղև ի տառս յայս»[49]։ Գրիչը Վարդանն է, որը, մշեցիների վկայությամբ, Կարնո գավառից է։ Սրան օգնում է իր եղբայր Բարսեղը, որը «զաւրինակս պատրաստեաց»[50], հիշվում են մի քանի միաբաններ, իսկ մի գլխազարդի մեջ կարդում ենք «Ստեփանոս» անունը։

Այս բոլորից բացի Վարդան գրիչը հիշում է այն ուխտի առաջնորդներին[51], որտեղ օրինակվել է Տճնականը։ Սրանք Մշո Առաքելոց վանքի առաջնորդները չեն, այլ մի ուրիշ վանքի, ուր և տանում են մեզ որոնումները։ Սկսենք Վարդան գրչից։

Վարդան անունով մի գրչի հանդիպում ենք Գարանաղյաց գավառի Ավագ վանքում, որը գրչության նշանավոր կենտրոն էր՝ մեկից ավելի վարժ գրիչներով և ծաղկողներով։ Ահա այդտեղ «յամի Ո որդի յիսներորդի, միով թուով պա[կա]ս (1200) կատարեցաւ գծագրութեամբ սուրբ Աւետարանս... ձեռամբ Վարդանա, յետնեալ և անպիտան կրաւնաւորի, հրամանաւ և ծախիւք... վերապիտոյ նահանդիս տէր Սարգսի և եղբաւր Ամբակումա, ի գաւառիս, որ կոչի Գարանաղեաց, ի լերինս Սեպուհ, յորում կան հանգստարան սուրբ Լուսաւորչին՝ առնթիներ գոլով վկայուհոյ բնակութեան և շիրիմի, որ կոչի Մանէ Այրք, ուրում ողորմեցի Քրիստոս Աստուած ամենեցուն, ի մեննաստանիս, որ կոչի Աւագ վանք՝ առ դրան սրբոյ Աստուածածնիս և սուրբ Կարապետին և սուրբ Առաքելոց, ի մէջ աստուածասէր ճգնաւոր եղբարց, յորում ամրացեալ կան ընդ հովանեաւ սուրբ խորանացս»[52]։

Գրչության վայրը որոշելու հիմնական կռվանը Տճնականի գրիչ Վարդանի վկայություններ են իր ուխտի առաջնորդների և միաբանների վերաբերյալ։ Նա գրում է. «զառաջնորդք սուրբ ուխտիս զՅովհաննէս պատուական ծերն և զՄարտիս, և զԱստուածատուր, որ ի դիրս աւժանդակեաց»[53], կամ «Քրիստոս աստուած, բարեխաւսութեամբ սրբոյն Մամասայ, ողորմեա՝ պատրոն Աստուածատրին և ծնողաց և եղբարց և քերց իւրոց, ողորմեա և Հաւր Յովհաննիսի

---

49 Մատենադարան, ձեռ. № 7729, էջ 338ա.

50 Անդ, էջ 27ա, 105բ։

51 Անդ, էջ 358ա։

52 Հիշատակարանք, Ա, էջ 646, համմտ. Բ. Կյուլեսերյան. Հուշակ ձեռագրաց Ղալաթիոյ ազգային Մատենադարանին հայոց, Անթիլիաս, 1961, էջ 33։

Ավետարանը մինչև 1605 թ. մնում է Կամախում. այդ թվականին, երբ «եղև հալածումն բրիստոնեից», Գրիգոր վարդապետ Սեթի խնդրանքով, որին պատկանում էր ձեռագիրը, բերում է Կոստանդնուպոլիս և նվիրում սուրբ Նիկողոս եկեղեցուն։ 1848 թ. ձեռագիրը նույն քաղաքի սուրբ Աստուածածին եկեղեցում էր և կոչվում էր «Ոսկէն եւած Աւետարան»։ Բ. Կյուլեսերյանը 1897 թ. օրինակում է ձեռագրի հիշատակարանը, իսկ 1902 թ. նկարագրում՝ իբրև Ղալաթիո ազգային Մատենադարանի թիւ 6-րդ ձեռագիր։ Ձեռագիրն այժմ գտնվում է Նյու-Յորքում, Գևորգյան հավաքածուի մեջ։

53 Մատենադարան, ձեռ. № 7729, էջ 323բ։

Եւ Սարգսի եւ[ւ] գրագիր Վարդանայ, Դրիդոր[ի]ւ, Մարգարիին եւ Թաւակէս միաբնակեցին եւ որ գիրս գրեաց (նախադասության մասին է— Ա. Մ.) եւ ծնողաց նոցա եւ եղբարց նոցա...», «... Զծեր Յակոբ վարդապետն յիշեցէք աէր»[54]*, «Ողորմեա Բարսեղին, որ գաւրինակս պատրաստեաց»*[55]*, «զՔաւրս եղբայր, որ բարիւք սպասաւորէ, յիշեա՝ Քրիստոս աստուած»*[56]*։ Սրանց, ինչպես նաև գրիչ Վարդանին հանդիպում ենք Դարանաղի գավառի Սևպուհ լեռան (Լուսավորչի լեռ) վրա գտնվող Ավագ վանքում։ «Ի գաւառիս Դարանաղեաց, ի լեառն սրբոյ Լուսաւորչին մերոյ մնծին Գրիդորի մերձ ի յայրս սրբուհւոյն Մանէ» որ հետու չէր Ավագ վանքից և միշտ կապված էին իրար հետ, «...ընդ հովանեաւ Լուսավորչաշէն սուրբ Կարապետի»։ 1201 թ. Հովհաննէս գրիչը ընդօրինակում է մի Ավետարան, ուր հիշում է «զՅովհաննէս քահանայ՝ սպասաւոր սուրբ և փրկարար սուրբ Կարապետիս»։ Նույն թվականին Լուսավորչի վանքում Ղազար գրիչը՝ իր ընդօրինակած Ավետարանում թվարկելով «զվարդապետան մեր» ի շարս այլոց հիշում է նաև «զՅովհաննէս ծեր, զվարդան»*[58]*։ 1201 թվականին Ստեփանոս գրիչը «ի գաւառիս Դարանաղեաց... անապատիս կոչեցեալ Աւագ վանք» օրինակում է մի Ավետարան և հիշում «զբարի առաջնորդ սրբոյ ուխտիս զտէր Սարգիս»*[59]*։ Վերջինս Վարդանի՝ 1200 թ. նույն վայրում օրինակած Ավետարանի առաջդրն է, որտեղ նա կոչվում է «վերատիտող նահանգիս»։ Սարգիսը, ինչպես տեսանում ենք, Աւագ վանքի առաջնորդն է, իսկ Հովհաննես ծերը՝ սուրբ Կարապետի առաջնորդը։ Եվ որովհետև Վարդանը Տօնականը օրինակում էր «ընդ հովանեաւ սուրբ Կարապետին», դրա համար սկզբում հիշում է նրա առաջնորդ «զՅովհաննէս պատուական ծերն» և ապա Աւագ վանքի առաջնորդ Սարգսին։

Այստեղ է նաև Աստուածատուրը. Վարդանը ուխտի առաջնորդներ Հովհաննես ծերից և Սարգսից հետո հիշում է Աստուածատուրին, «որ ի գիրս աւժանդակեաց»։ Սա վերը հիշված գրիչ Ղազար վարդապետի եղբայրն էր, որ 1201 թ. ընդօրինակության ժամանակ «միշտ սպասաւորէ մերում սկարութեանս»*[60]*։

54 Անդ, էջ 73բ։

55 Անդ, էջ 73բ։

56 Անդ, էջ 461բ։

57 Յիշատակարանք, Ա, էջ 686—687։

58 Անդ, էջ 684, 688։

59 Մատենադարան, ձեռ. № 6332, էջ 7։ Ի դեպ Վարդան, Յովհաննէս, Ղազար և Ստեփանոս գրիչների ավետարաններն ընդօրինակվել են միևնույն գաղափար օրինակից։ Բոլորի մոտ գրեթե հիշատակարանները շատ տեղեր համընկնում են, իսկ օրինակը համարվում է «բնտիր և ստոյգ... ամենայն արհեստիւ լի և պատարուն, բան և անհատ, հրաման և ստորատ, միջնակատար և վերնակնիռ»։ Ստեփանոսը գրում է, որ այդ օրինակը Կոզմա հեռուից ընդօրինակածն է։ Սրանցից առաջին գրչի օրինակածը այժմ Նոր-Նորքում է, վերջինը՝ Մաշտոցյան մատենադարանում, իսկ մյուսները խիստ համառոտ նկարագրված են Բորգոմ Գուշակյանի կազմած Անբաստիայի Սուրբ Նշան վանքի ձեռագրաց ցուցակում (Բորգոմ տես՝ Գուշակյան, Ցուցակ հայերէն ձեռագրաց Սուրբ Նշանի վանուց ի Անբաստիա, Վիեննա, 1961, էջ 12—14, թիւ 12, 13)։ Այստեղ միայն Ղազարի Ավետարանի հիշատակագրություններն ու հիշատակարանն է բերված, իսկ Հովհաննես գրչի ընդօրինակության մասին գրում է. «յուրաքանչյուր ավետարանի վերջը կան հիշատակարաններ, որոնք բոլորովին նույնն են թիվ 12 գրչագրի հիշատակարաններու հետ, հազիվ մեկ կամ երկու անվան տարբերությամբ։ Բայն հիշատակարանը գրեթե թիվ 12-ի բովանդակությունն ունի, սակայն դանց կառնվի» (Անդ, էջ 14)։ Բարեբախտաբար այդ երկու ձեռագրերն էլ թվրկված են, և այժմ գտնվում են Երուսաղեմի սուրբ Հակոբյանց մատենադարանում։

60 Յիշատակարանք, Ա, էջ 687։

Ահա այն անձնավորությունները, որոնց հիշում է Վարդանը որպես միաբաններ և առաջնորդներ այն ուխտի, ուր նա Տնտականն էր ընդօրինակում, և որոնց մենք հանդիպում ենք Գարանաղեաց գավառի Աւազ վանքում։ Աւազ վանքի միաբաններից հաջորդը ինքը՝ գրիչ Վարդանն է, որին հանդիպում ենք այդտեղ ոչ միայն 1200 թ., այլև 1201 թվականին՝ Ղազար և Ստեփաննոս գրիչների հիշատակարաններում։ Ստեփաննոսը նրա մասին 1201 թ. գրում է. «եւ ընտրեալ քահանայն Վարդան յիշեսջիք ի սէր, վի բազում իրօք օգնական եղև մեզ»[61]։ Այնուհետև Տնտականում հիշատակված Վարդանի եղբայր Բարանղին, Հակոբին, Ռատակես միաբնակցացին, Թորոսին հանդիպում ենք Աւազ վանքում այդ ժամանակ ընդօրինակված տարբեր ձեռագրերում, որպես տեղի միաբաններ։

Ահա և այլ փաստարկներ, որոնք խոսում են Աւազ վանքի միաբան Վարդանի և Մշո Տնտական ընդօրինակող Վարդանի նույնության օգտին։ Գարեգին Հովսեփյանը «Յիշատակարանքի» Ա հատորում Վարդանի 1200 թ. Աւետարանից երկու նկարագրող էջերի հետ բերել է նաև մի էջ՝ որպես գրչության նմուշ[62]։ Ով տեսել է Տնտականի գրությունը, առաջին իսկ հայացքից կնկատի, որ Աւետարանից բերված այս էջի գրությունը շատ է նման, կամ ավելի շուտ նույնն է Տնտականի գրության հետ։ Այդ ժամանակ Լուսավորչի վանքում ավետարաններ գրվում է բոլորգրով[63], այնինչ Վարդանը ոչ միայն Աւետարանը, այլև Տնտականը երկաթագրով է գրում։ Մեզ հետաքրքրող ձեռագրերի հիմնական գրության նույնությունից բացի, անշուշտ, ոչ պատահականորեն բերված այս էջում՝ գրչագրական մի երևույթ ավելի է հաստատում մեր ենթադրությունը։ Աւետարանից բերված էջի երկրորդ սյունակի չորրորդ տողը վերջանում է «աստուածային» բառով, իսկ հաջորդ տողն է «աւք վարժեալ ոսամամբ», որի առաջին բառը, ինչպես տեսնում ենք, թերի է։ Գրիչը մոռացել է բառի կեսը և ահա լրացվել է նախորդ տողի վերջում ԱՒՔԻՆ (աւք) մասնիկը այնպիսի տառաձևերով, որպիսիք հանդիպում ենք Մշո Տնտականի մեջ, գրչի անվան մի քանի հիշատակություններում և նույնպիսի արտագրություններում[64]։ Այդ տառերի սկզբնաձայրերը և վերջնաձայրերը ամարտվում են նոտնկյունաձև։ Դեռ ավելին. այդ նույն տառերով են նշանակված ինչպես Աւետարանի, նույնպես և Տնտականի պրականիշերը։ Այս երկու ձեռագրերը գրված են միանման բաղադրության և գույնի թանաքով։ Աւետարանը նկարագրող Բարգեն Կյուլնսերյանը գրում է. «Այնքան ՔՔու (ասիա) եղած է բաղադրությունը մեւանին, որ ծակծկվիր է գրերուն տեղերը... որ շատ մի էջեր բոլորովին թուած են և գրերուն ուղեցուցած տեղերը հազիվ հազիվ կերևին»[65]։ Այս նույն երևույթը նկատելի է նաև Տնտականի մեջ, բայց ոչ այդ խստությամբ և չափերով, պատճառը Տնտականի մագաղաթի ամրությունն է, որովհետև միայն բարակ թերթերի վրա է նկատելի թանաքի բացասական ազդեցությունը[66]։ Միևնույն սկզբունքով են կազմված նաև հիշյալ ձեռագրերի պրակները։ Աւետարանի «Թերթերը կարի

61 Մատենադարան, ձեռ. № 6332, էջ 7։

62 Յիշատակարանք, Ա, էջ 643—644։

63 Անդ, էջ 685։

64 Մատենադարան, ձեռ. № 7729, էջ 323բ, 494ա, 510ա և այլն։

65 Բարգեն Կյուլնսերյան. Տուցակ, էջ 29։

66 Մատենադարան, ձեռ. № 7729, էջ 285։

կողմն ծալված չեն, այսինքն դույզ թղթերն չեն կազմված թերթերը, այլ մեկ մեկ թուղթերն, որոնք նաև բարակ սըրբմով (կաշին բարակ թել) կարված են թերթերը կազմելու համար, եւթը, ըստ կազմութեան օրինաց, իրարու կարված են գիրքը կազմելու համար»[67]*: Անշուշտ, հիշյալ երևույթները (թանաքի քայքայելը և պրակավորելու ձևը) միայն այս ձեռագրերին կամ գրչության այս կենտրոնին հատուկ չեն: Տվյալ դեպքում մեզ այն հետաքրքրում է որպես նույն գրչի և գրչության կենտրոնի ստեղծագործության առանձնահատկության օժանդակ ապացույց: Կան այս տեսակետը հաստատող կողմնակի փաստեր ևս: Ստեփաննոսը «բազում իրօք օգնական» եղած վարդանի հետ հիշում է նաև «ծերունի պատուական զԱետիս քահանայն», և «զընորհազարդեալ քահանայն Ստեփաննոս»*[68]*: Ինչպես երևում է Ավագ վանքի միաբան Ստեփաննոսը և վարդան գրիչը 1201 թ. գործակցել են միմյանց հետ, որոնց մասնակից է եղել նաև Աետիս քահանան: Սա ստացող Աստուածատուրի եղբայր Ավետիսն է, իսկ շնորհազարդյալ քահանա Ստեփաննոսը Օձնականի և Ստեփաննոսի Աետատրանի ծաղկողը:*

Ավագ վանքում գրչության արվեստը այդ ժամանակ բուռն ծաղկում էր ապրում: Այնտեղ հավաքվել էր գրչության արվեստին հմուտ վարպետների մի բույլ: Ղազար վարդապետը՝ «զվարդապետան մեր» ասելով, Լուսավորչի և Ավագ վանքերի մի շարք միաբաններ է հիշում: Աստվածատուր Բարերդցին այս միջավայրից միայն կարող էր ընտրել իր ծրագրած գործի համար «հմուտ և վարժ ամենայն արհեստի գրչութեան» վարպետ, որ գրեր հսկայատիպ մագաղաթյա թերթեր, և ծաղկող, որ գործին արժանի մանրանկարներ կատարեր: Վարդանը ոչ միայն գրելու մեջ էր վարժ ընդհանրապես, այլև Օձնական գրելու մեջ: Նա արդեն մի անգամ Օձնական էր ընդօրինակել: 1200 թ. իր օրինակած Ավետարանի ստացող Ամբակումի «հռչակեալ բարեհամբաւութիւն» է համարում այն, որ նա «նաև բազում աշխատութեամբ ստացեալ Տաճկական գիրս այցեծառ», որից հետո միայն «եւ գրել զսուրբ Աետարանս»[69]*: Եվ ահա վարդան Կարնեցին Ավագ վանքում 1200 թ. Ամբակում և Սարգիս եղբայրների համար մի ավետարան ավարտելուց հետո սկսում է Բարերդի տանուտեր Աստվածատուրի պատվիրած Օձնականի ընդօրինակությունը և «զկնի երից ամաց հնաս չաւարտ բանիս»*[70]*: Մենք տեսանք, արդեն, որ Վարդանը Օձնականն ավարտում է 1202 թվականին, հետևաբար 1200, 1201 և 1202 թվականներն են այն երեք տարիները, որոնց ընթացքում գրիչն ստեղծում է հայերեն մեզ հայտնի ամենամեծ ձեռագիրը:*

Այսպիսով, Մաշտոցյան Մատենադարանի № 7729 ձեռագիրը, որ հայտնի է Մշո Օձնական կամ Ճառընտիր անունով, ընդօրինակվել է Դարանաղյաց գավառի Սեպուհ լեռան վրա գտնվող Ավագ վանք մենաստանում, որը, որպես հայ գրչության կարևոր կենտրոն, այդ և հետագա դարերում հռչակվում է իր ընտիր գրիչներով և մատենագիրներով:

---

67 Բարգեն Կյուլեսերյան, *Յուցակ*, էջ 27:

68 *Մատենադարան*, ձեռ. № 6332, էջ 7:

69 *Յիշատակարանք*, Ա, էջ 646:

70 *Մատենադարան*, ձեռ. № 7729, էջ 602բ:

9

«Ձեռագիրը մանրանկարչության տեսակետով էլ առաջնակարգ արժեք ունի,— գրում է Գարեգին Հովսեփյանը,— որտեղ կան բազմաթիվ զծանկարչական և զարդարանքի, և արևելյան կենդանական և բուսական ու թռչունի օրինակներ... Ամբողջն ուշադրության արժանի հայ-արաբ և սելջուկյան արվեստների համեմատության տեսակետով»[71]: Առաջնակարգ մանրանկարչության ուսումնասիրությանը թողնելով մասնագետներին, մի քանի նկատողություններ աններ ծաղկողի անձի և տեղի վերաբերյալ: Գ. Հովսեփյանը գրում է. «Ձեռագիրն ամբողջությամբ չի գրված և նկարազարդված Առաքելոց վանքում»[72]: Այս նշանակում է նաև, որ այն, բուն երևույթին, մասամբ գրված և նկարազարդված է Առաքելոց վանքում, մասամբ էլ մի ուրիշ վայրում: Տարբեր վայրերը ենթագրում են նաև տարբեր ծաղկողներ, ինչպես կարծում են ոմանք: Լ. Դուրնովոն ուղղակի գրում է. «Նկարազարդված է Մուշում»[73]: Վերը ցույց ավելինք, որ այն գրված և նկարազարդված է Ամատ վանքում: Մի քիչ ավելի պատճառաբանենք:

452ա էջի երրորդ սյունակի գլխագրերում զարդագրված է «Ստեփաննոս» անունը (տե՛ս նկ. 1): Ոչ մի կասկած չկա, որ ծաղկողն իր անունն է գրել այդ-



Նկար 1

տեղ, որովհետև այն ո՛չ գրչինն է (Վարդան), ո՛չ էլ տտացողինը (Աստուածատուր), որոնց անունները (Հատկապես վերջինի) կարող էր նկարիչը այդպես ծաղկագրել: Ստեփաննոսը Տնտականի սկիզբը զարդարել է գեղեցիկ մեծ խորանով, որը կանգնած է մինչև տողին լուսանցքը հասնող չորս զարդասյուների վրա: Երրորդ զարդասյունը միաժամանակ ի զարդագրի հիմնական գիծն է հանդիսանում: Խորանի վերևում գեմ-դիմաց կանգնած են երկու գույգ վայրի այծ և եղջերու: Խորանի դիմացի ամբողջ էջը նկարազարդ է:

Խորանի աջ և ձախ լուսանցքներում «Ստեփաննոս» զարդագրերի տատաձևերով, բայց միագույն կարմիրով, վերից վար գրված է «Աստուած վայելել տացէ պատրոն Աստուածատրո եւ Հատաստրիմ ազդի աստուածասէր անձանց եւ

71 Յիշատակարանք, Ա, էջ 722, ծանոթ. 2:

72 Անդ, էջ 722—3:

73 «Հին Հայկական մանրանկարչություն», Երևան, 1952, նկ. 13-ի բացատրություն:

ինձ ողորմեցի եւ առացողին ամէն», իսկ մյուս լուսանցքում. «Յիսուս Քրիստոս, աւգնա Աստուածածուրս բարի պատրոնի եւ ողորմիա նկարողի»[74]: Սա նկարողն է գրել: Այդ տառաձևերով են գրված նաև բազմաթիվ գլխագիր գարդագրերի մեջ հանդիպող հիշատակագրությունները, ուր հիշվում են գրիչն ու առացողը: 6ա և 9բ էջերի գարդագիր Զ-ի մեջ համապատասխանաբար գրված է «Վարդան յիշեցի ի տէր» և «Աստուած ողորմիա աշխատողաց»: 495ա էջում գարդագիր Ա-ի մեջ՝ «Աստուածածուր յիշեցի ի տէր և գրագիրն» վերջի բառերը բոլորգիր են: Բոլորգիր է նաև 489բ էջում գարձյալ Ա գարդագրի մեջ գրված «Աստուածածուր պատրոն յիշեցի ի տէր և Վարդան» հիշատակագրության «Աստուածածուր» բառը: Այդ նույն տառերով են գրված Ա—կն պրականիշերը և որոշ սրբագրություններ[75], որոնք գարձյալ Ստեփանոսի ձեռքի գործն են և ոչ ուրիշի: Այլապես անհասկանալի կլիներ, թե ինչու այդ ուրիշը պետք է սրբագրեր ծաղկողի տառերով: Իսկ որ ծաղկողները հաճախ նաև սրբագրում էին ձեռագրերը, շատ փաստեր ունենք: Ահա մեկը. «ով իմ հոգևոր Հայր, ծաղկելու ժամանակն լաւ միտ դնես դրչիս պակասն և գմոացս»[76]: Ինքնատիպ է նաև պրականիշերը գրելու եղանակը. ծաղկողը ցանկացել է ուրիշին չկրկնել: Պրակի առաջին նիշը գրել է ոչ թե տողերին լուսանցքի կենտրոնում, ինչպես սովորաբար արվում է, այլ վերին լուսանցքի աջ անկյունում, բացառությամբ Ա-ի (էջի վերին անկյունը նկարազարդ է): Այդպես՝ մինչև ԿԶ պրակը, որից հետո գրված է սովորական բոլորգրով: Ստեփանոսը կատարել է բոլոր լուսանցազարդերը և գլխազարդ-կիսախորաններ: Նա կատարել է նաև անկյունազարդեր և այունամիջյա լուսանցազարդեր, որ արժանի են ուշադրության: Հիմնական գույներն են «բոցագույն» կարմիր, կապույտ, կանաչ և սպիտակ: Գլխազարդերում օգտագործել է նաև ոսկու փոշի, լուսանցազարդերի որոշ մոտիվները կրկնվում են գլխազարդ կիսախորաններում: Մեծ մասամբ բուսական և երկրաչափական զարդեր են, միայն մի քանի թռչնազարդեր կան, մյուսները հավանաբար պատռված-հանված են ձեռագրից: Ստեփանոսն է գրել նաև բոլոր գլխագիր գարդագրերը՝ գունավոր և անգույն, վերջիններիս մեջ՝ նաև հիշատակագրությունները: Այս ամենը ցույց է տալիս, որ Տօնականը Ստեփանոսը ծաղկել է Ավագ վանքում: Ծաղկողը նախ պրականշել է, ապա գարդագրել (ոչ բոլոր գլխագրերը) և գարդանկարել՝ գարդերը դնելով յուրաքանչյուր գլխի հանդեպ: Հազվադեպ են նրանք կրկնվում, և ամեն մեկը մի ավարտուն նկար է. այնպես որ, չնայած ձեռագրի լուսանցքների մեծությանը, որևէ անկյունում գրված լուսանցազարդը մեղմացնում է մագաղաթի մարմարյա սառնությունը և լցնում է ամբողջ էջը ջերմությամբ: Այս նույն Ստեփանոսն է նկարազարդել նաև Վարդանի 1200 թ. ընդօրինակած Աւետարանը և կատարել մասնակի սրբագրություններ: Այդ Ստեփանոսը Ավագ վանքի միաբան Ստեփանոս գրչի հիշած «չնորհազարդեալ քահանայ Ստեփանոսն» է:

Մեր այս կարծիքի օգտին է խոսում Գարեգին Հևոնյանի մի վկայություն: Ստեփանոսի 1201 թ. Ավագ վանքում ավարտած Ավետարանը մինչև վերջերս գտնվում էր Փարիզում (ներկայումս Մաշտոցյան մատենադարան, ձեռ. № 10359): Մեզ թվում է, այդ ձեռագիրը նկատի ունի Գ. Հևոնյանը, երբ գրում է. «13-րդ դարի առաջին իսկ տարիներին գրվել ու պատկերազարդվել են երկու

74 Մատենադարան, ձեռ. № 7729, էջ 3ա:

75 Անդ, էջ 6բ, 9բ, 495ա, 498բ, 508բ և այլն:

76 Ա. Այուրմեյան. Յուցակ Հալէպի, էջ 69:

նշանավոր գրքեր, որոնք մեր միջնադարյան գրքի պատմության մեջ վերին աստիճանի հաղվագյուտ գործեր են: Դրանցից առաջինը Քեմախի Ավազ վանքում 1201 թվին գրված ավետարանն է, երկրորդը՝ Մշու Առաքելոց վանքի (Ս. Ղազար) 1202 թվին գրված մեծ Տօնականը (Ճառընտիրը): Առաջինը, որ ներկայումս գտնվում է Փարիզում, մասնավոր ձեռքերում, արժանացել է եվրոպացի գիտնականների առանձին ուշադրության, այդ գրքի զարդանկարների մեջ մասնագետները գտել են հայկական հին գորգերի ծաղկանկարների մեծ նմանություն...»[77]: Բաղմաթիվ են այդպիսի գորգեր հիշեցնող ծաղկանկարները նաև Մշո Տօնականի գլխազարդ կիսախորաններում: Ինչ իմանային, որ այդ երկու նշանավոր ձեռագրերը ստեղծվել են միևնույն վանքում և զարդարողը նույն մարդն է եղել, հայ միջնադարյան մանրանկարչության տագնդավոր վարպետներից մեկը (տե՛ս նկ. 2, 3):

Է

Իր վիճակագրության հետ միասին Տօնականը նշանավոր է նաև ձեռագրագիտական տեսակետից: Արդեն 12-րդ դարում խոշոր ձեռագրերը նախընտրում էին գրել թղթի վրա և բոլորգրով. դյուրամատչելի էր և՛ գրանյութը և՛ գիրը: Հարևան ս. Գրիգոր Լուսավորչի վանքում, այդ ժամանակ Հովհաննես և Ղազար գրիչները թղթի վրա բոլորգրով նույնիսկ ավետարան էին ընդօրինակում: Բնորոշ ավելին, Ղազար վարդապետը իր ավետարանը սովորականից փոքր չափերով էր գրում. «գրեցաւ սա փոքրագոյն հատակաւ, վասն դիւրաբարձիկ լինելոյ, ի շրջապտոյտ և ի խռովասէր ժամանակիս և ի զառն դիպող աւուրցս բերմանց»[78]:

Այդ բանը Վարդան գրիչին չէր անհանգստացնում, որովհետև ստացող պարոն Աստուածատուրը կամեցել էր, որ իր Տօնականը գրվի ոչ թե «փոքրագոյն հատակաւ, դիւրաբարձիկ լինելոյ» համար, այլ լինի հսկայածավալ մի մատյան և պարունակությամբ լինի ավելին, քան նրան հայտնի Տօնականները: Բացի այդ Ավազ վանքի գրչության պարագում ընդունված գիրը ուղղագիծ երկաթգրերն էր, ինչպես երևում է տեղի Վարդան և Սահիանոս գրչի ընդօրինակություններից: Ձեռագրերն ստեղծելու գործում խոշոր է ստացողի դերը: Նա ձեռագրի միայն նյութական կողմը չէր ապահովում, այլև՝ թելադրում չափը, նյութի և գրի տեսակը, նկարազարդելու և կազմելու որակը և այլն: Վերոհիշյալ Ղազար վարդապետ գրիչը վերևում հանդես է գալիս որպես ստացող, որովհետև նա իր համար էր ընդօրինակում և մատհոգվում իր ստացած ձեռագրի ճակատագրով: Այս բնագծում ենք այն պատճառով, որ երբեմն գրի կամ նյութի գործածության ժամանակը որոշելիս հաշվի չեն առնվում ստացողի, գրչի ցանկությունները, նրանց հնարավորությունները ու կարողությունները: Մշո Տօնականի ստեղծման մեջ գրչի կարողություններին հավասար վճռական է ստացող պարոն Աստվածատուրի դերը, որը ոչինչ չի խնայել պատկառելի մեծությամբ հոյակապ ձեռագրական մի հուշարձան ստեղծելու համար: Պարոն Աստվածատուրին չվիճակվեց տեսնել իր դանձն ավարտված: Ձեռագրի հիշատակարանը չգրվեց, ձեռագիրը չկազմվեց: Պատճառը անշուշտ Սեբաստիայի սուլթանի արշավանքն էր դեպի Կարին, որի ճանապարհն անցնում էր

77 Գ. Ալոնյան. Հայ գիրքը..., էջ 29—30:
78 Յիշատակարանք, Ա, էջ 687:

Նկար 2

Նկար 3

Ամագ վանքի վրայով։ Գուցե դույժը լսելով՝ գրիչ Վարդան Կարնեցին շտապել է Հայրենի Կարին գավառը, իսկ ձեռագիրը տարվել է Բարերդ «եւ յայսմ ամի» պատրան Աստուածատուրը ձերբակալվել է ամիրայի կողմից «և ի ձեռն այնմ դաղանի»[79] կնքել իր մահկանացուն։

Բ. Սարգիսյանը, Տօնականի վիննաիկյան թերթերի վրա գրված հիշատակարանը նկատի ունենալով, ուր ասված է «գՅովհաննէս Միջնադրեացի, որ յի Հալատով եւ Հոգով ձեռնտու եղև յաղագս սուրբ գրոյս... որ մեծաւ յուսով մասնակից եղև. սուրբ և բարեճաշակ բուրաստանիս, եւ փոխանակ երկրաւորիս առացաւ զանճառելին», գրում է. «կիրևի թե փրկանալորելն վերջ գրված է սուն հիշատակագրութիւնը և թե Աստուածատուրի մահվանն հետք Հովհաննես քահանան առացող եղած լլլա մասնիս, եթե «առացաւ դանճառելին» բացատրութեամբ գայս ակնարկել ուզած է գրիչը»[80]։ Հովհաննես Միջնադրեացին նույնպիսի առացող էր, ինչպիսիք Տօնականի փրկագնման մասնակից մյուս, մի քանի տասնյակի հասնող անձնավորություններն են։ Հովհաննես Միջնադրեացուն մի քանի անգամ են հիշատակում ձեռագրում, նույնիսկ Հիշատակարանում (603ա, 603բ), որովհետև ձեռագրի 4000 գրամ փրկագնից 1100-ը նա էր տվել։ Այդ պատճառով «գրեցաք երկրորդ պատարագ Յովաննիսի՝ հրամանաւ տէր Եսայեա, փիլիսոփայից և համարէն ուխտիս և դերապայծառ առաջնորդիս մերոյ Աբրահամու և սուրբ բնմբականաց Բ պատարագ անխարան ամ-յամէ կատարել»[81]։ Տօնականի առացողը, Աստուածատուրից հետո, Մշո Առաքելոց վանքն էր։

Ը

Այդ թվականից հետո անհայտ է նաև գրիչ Վարդանի ճակատագիրը։ «Հրատուռ և վարժ ամենայն արհեստի գրչութեան» Վարդան Կարնեցի գրչից մեզ հայտնի են մինչև 1200 թվականը օրինակած մի Տօնականի մասին տեղեկություն, այդ թվականին ավարտած Ավետարանը և վերջապես մեր Տօնականը։ Միայն վերջինս էլ բավական է, որ Վարդան գրիչը մնա որպես հայ գրչության արվեստի մեծ երախտավորներից մեկը, որպես մեզ հասած հայերեն ամենախոշոր ձեռագրի կերտողը։ Բայց փորձենք որոնումները։ Սեփհանոս գրիչը, որի ընդօրինակած Ավետարանի հիշատակարանը շատ նման է Վարդանի ընդօրինակության հիշատակարանին, և էջերով համընկնում են միմյանց, գրում է որ ինքն արտագրել է «յ(ր)նաիր եւ ի սուրգ աւրինակէ ամենայն արհեստիւք լի եւ պատատուն, որ էր Կաւզմայ Հռեսորի»[82]։ Կոզմա Հռեսորը ԺԲ դարավերջի և ԺԳ դարասկզբի նշանավոր գրիչ և ծաղկող էր, որի ընդօրինակությունները համարվում էին ընտիր օրինակներ։ Ի միջի այլոց այսպիսի դեպքերում «Հռեսոր» բառը ոչ թե ճարտարախոս, ճառախոս է նշանակում, այլ ճարտարագիծ, գրչության նշանավոր վարպետ։ Կոզմա գրչից Մաշտոցյան Մատենադարանում պահվում է Խարբերդի Բարջանջ գյուղում 1219 թ. գրած և

79 Հիշատակարանք, Ա, էջ 712։

80 Բ. Սարգիսյան. Ցուցակ, Վիննաիկ, Բ, էջ 480։

81 Մատենադարան, ձեռ. № 7729, էջ 603բ։ Առաքելոց վանքի միաբաններից են նաև Աետիս Երանցին և Երեմիան, որոնց հիշատակագրություններ «Հիշատակարանք»-ի մեջ տեղամատ գրված են որպես ձեռագրի գրչի և տառացողի ժամանակակիցների հիշատակագրություններ։

82 Մատենադարան, ձեռ. № 10359, էջ 307բ։

ծաղկած մի ավետարան[83], մի այլ ավետարան՝ 1205 թվից գտնվում է սուրբ Ղազարի Մխիթարյան Մատենադարանում[84], և մի ձեռագրի նկարագրություն՝ Թորգոմ Գուշակյանի Սեբաստիայի ս. Նշան վանքի ձեռագրերի ցուցակում[85]: Այս վերջին ձեռագիրը գրված է «Հաւանաբար ԺԲ դարու վերջ»[86], և սոսկ դեղ է վարդան կրոնավորը «ես նուաստս քահանայ և կրաւնաւորս Վարդան զիմաիտաւումն սորին իմոյ և ղյիշատակ Հոգւոյ իմոյ նոյնպէս գրել զսուրբ Աւետարանս իմով աշխատութեամբ և արդեամբք, ծաղկի նկարով և ոսկւով զարդարեալ, ի յիշատակ Հոգւոյ իմոյ և ծնողաց իմոց, հաւր իմոյ Գաւթի և մաւր իմոյ՝ Թագուհիի...»[87]: Այստեղ հիշվում են հորեղբայր Գրիգորը և որդին՝ Պողոս պատանյակը: Արդյոք սույն Վարդան կրոնավորը մեր գրիչ Վարդան Կարնեցին չէ՞ և Կոզմա գրչի սույն օրինակից չէ, որ 1200 թվականին ինքը, իսկ 1201 թվականին Սահիանոսը ընդօրինակեցին մեկական ավետարան Սարգսի և Սահիանոսի համար: Արդյոք օրինակ տալու համար չէ՞, որ Սահիանոս գրիչը հիշում է «զբնութեալ քահանայն Վարդան... զի բազում իրաւք աւդնական նմա մեզ»[88]: Հետագայում նրա անվանը չենք հանդիպում Ամագ վանքում, որտեղից հաջորդ ձեռագիրը՝ 1227-թվականին է պատկանում: Արդյոք 1202 թ. Ռաբդն-էդ-դինի հրոսակների՞ց ապանվից ոսկեծղի զրադիրը, թե՞ մահացավ բնական մահով: Ամագ վանքի գրչության դպրոցը շարունակեց իր գոյությունը և ծաղկման հասավ հաջորդ ժԳ դարում, իր դպրոցով ու վարդապետներով[89], որի մասին մի ուրիշ անգամ:

Բ

Իսկ ո՞վ է Մշո Առաքելոց վանքում Տօնականը կազմել և հիշատակարանը գրել: Կազմողը և գրիչը իր անունը չի տալիս: Նա հիշատակարանում հիշվածներից որևէ մեկը չէ, բայց հիշատակարանում երևում է ոչ միայն որպես գրիչ, այլև որպես ձեռագրի փրկությանը գործուն մասնակից. «նոյն եւ մեք առնալ զբաս՝ դարձար երկնագումար եղբայրանոցս մեր»,— գրում է ձեռագիրը Առաքելոց վանք բերելու առթիվ, իսկ վերջում՝ «ակաս կազմել», ապա՝ «զկազմող զեղկելիս և զեղբայրիկ իմ զԱտեփանոսն յիշեսջիք ի սուրբ յաղաւթս ձեր»:

Հիշատակարանը ամբողջական մի պատմություն է, անշուշտ խմբագրված նաև եպիսկոպոսի կողմից: Գրիչը, որ աշխատել է հիշատակարանի գրությունը նմանեցնել ձեռագրի գրության ոճին, գրչության արվեստի վարպետ է երևում: Այդ ժամանակ Առաքելոց ուխտի միաբաններից մեջ կար մի նշանավոր վարպետ, որի անունը չի հիշվում հիշատակարանում, այդ անձը Թևորգոս վարժապետն էր: Ներսես Լամբրոնացին Տատեորդու Քղթի պատասխանում, իր տեսակետը պաշտպանողների շարքում, թվում է նաև «բոլոր գաւառն Տարօնոյ և որ ի նմա իմաստուն եպիսկոպոսն նաև և վարժապետ Թէոդորոս»[90]: Նաև

83 Մատենադարան, ձեռ. № 7734:

84 Հայկական մանրանկարչություն Մխիթարեան մատենադարանի ձեռագրաց, Ա, Վիեննա, 1967, էջ 51:

85 Ք. Գուշակյան, Ցուցակ, էջ 25:

86 Հիշատակարանք Ա, էջ 667:

87 Անդ:

88 Մատենադարան, ձեռ. № 308:

89 Հ. Ոսկյան, Բարձր Հայքի վանքերը, Վիեննա, 1951, էջ 1—25:


90 Հ. Տաշյան, Ցուցակ հայերեն ձեռագրաց, Մատենադարանի Մխիթարեանց, ի Վիեննա 1895 թ., էջ 334:

եպիսկոպոսին մենք տեսանք Տօնականի փրկութիւնը կազմակերպելիս։ Մեզ թվում է հիշատակարանի հեղինակը, գրիչը և ձեռագրի կազմողը ուխտի այս նշանավոր միաբանն էր՝ Թեոդորոս վարժապետը, իսկ եղբայրիկ Ստեփանոսը ուխտի կրտսեր միաբաններից մեկը։

* * *

Մեր հոդվածը ապագրության էր հանձնված, երբ Մարկոսյան հավաքածուի երեսունվեց ձեռագրերի հետ միասին, որոնք կոտակված էին Մատենադարանին, Փարիզից սառցվեց Ստեփանոս գրչի Ավագ վանքում ընդօրինակված Ավետարանը։ 30,5×21 սմ մեծության մագաղաթյա ձեռագիրը համարյա անվթար է, եթե չհաշվենք խորաններից մի քանիսի և մեջտեղից երկու թերթի պակասը։ Թե՛ բնագիրը և թե՛ հիշատակարանը գրված են միանման ուղղագիծ երկաթագրով, համարաբերաւորը նույնպես, բայց փոքր տառերով։ Մագաղաթը կոշտ է. «կաշիս կա(ր)ծր է», գրում է գրիչը լուսանցքում։ 8-ական թերթ է պրակը, բացառությամբ մեկի, որից 2 թերթ չկա։ Ա պրակից, ուր համարաբրառն է գրված, մնացել է 7 թերթ։ Առկա առաջին թերթի ա էջը եվսեբիի Քղթի երկրորդ կեսն է. նշանակում է առաջին կեսը գրված է եղել նախորդ թերթի բ էջում, որը չկա։ Մյուս 6 թերթերից երևում է, որ համաբարբառները գրված են միայն թերթի մեկ, իրար հանդիպակաց էջերում։ Երրորդ և վեցերորդ թերթերը ոչնչված են, համապատասխանաբար պակասում են Բ, Ե և Զ կանոնները։ Եվսեբիի Քղթի վերջի հաջորդ ամբողջ էջում նկարված է հյուսածո խաչ՝ հյուսածո շրջանակի մեջ։ Խաչի իրար հավասար թևերի մեջտեղի մեկական և բրգաձև հիմքի չորս քառակուսիները ոսկեզօծ են։ Խաչի այսպիսի ձևը հնագույն ձեռագրերում ենք հանդիպում, մինչև ԺԲ դարը։ Ա կանոնի գլխամասի զարդը կոբրված է, իսկ մաքուր երեսում Տօնականում նկարված թռչնազարդերի գրչափորձն է արված։ Գրչափորձ կա նաև 4-րդ ա երեսում։ 7բ և 8ա հանդիպակաց ապատ էջերում Հովհաննես երեցը հետագայում նկարել է երկուական ավետարանիչ։ Նկարազարդված են չորս ավետարանառաջ էջերը և մեկ լուսանցազարդ։ Ա պրակը բաղկացած է եղել 10 թերթից, որից երեքը կորած են։ Եվսեբիի Քղթի խորանը չի նկարված, չեն ավարտված որոշ կանոնների սյուները, որոնք պարզ գծեր են։ Իսկական ծաղկողը չի նկարել ավետարանիչներին, չկան լուսանցազարդեր։ Ծաղկողի աշխատանքում նկատվում է չավարտվածություն, ինչ-որ բան նրան խանգարել է, նա չի հասցրել լրիվ նկարազարդել ձեռագիրը։

Սակայն եղած բոլոր նկարները, բացառությամբ Հովհաննեսի կատարած չորս ավետարանիչների նկարներից, ոճով ու գույնով նման են Մշո Տօնականի մանրանկարներին, և կասկած չի մնում, որ Ավագ վանքում միևնույն ժամանակ գրված այդ ձեռագրերը նաև միևնույն նկարչի գործերն են։ Ավետարանառաջ էջերի երկաթագիրը և Մշո Տօնականի առաջին էջի երկաթագիրը իրար նման են ոչ միայն ձևով, այլև բանաքով։ Գլխագրերի մեջ նկարված մարդկանց դեմքերի կատարումը համընկնում է Տօնականի առաջին թերթի նկարին։ Խորանների վերին մասի զարդերը ավանդական գլխազարդերի նման չեն՝ նրանք երբեմն ո՛չ շրջանակ են ճանաչում ո՛չ ծանր սյուներ։ Ազատ ոճավորված բուսական տերևներ են, որոնք տարածվում են վեր ու վար (տե՛ս նկ. 3)։ Նույնպես են նաև ավետարանառաջ էջերը։



Այդպես է վարվել Սահիանոս ծաղկողը՝ Տօնականի լուսանցազարդերը և սկիզբնազարդերը գծելիս։ Սահիանոսը զրչափորձեր է կատարել ավետարանի խորանների թևքերի ազատ էջերում, ի դեպ, Ավետարանը ավարտվել է 1201 թվականին, Տօնականը՝ 1202, բայց քանի որ վերջինս սկսված էր 1200 թ., մոտ երկու տարի հետո նրա երկու երրորդը պետք է ավարտված և ծաղկած լիներ։ Գրչափորձի թուղթը մոտավորապես այդտեղ էլ ընկնում է՝ 83 պրականոց ձեռագրի 60-րդ պրակում։ Շատ պողպատանութիւնը ու թերավարտութիւնը, որ նկատվում է Ավետարանը ծաղկելիս, հետևանք էր Տօնականի ծաղկման հսկայական աշխատանքի, որ ամբողջովին զբաղեցրել է ծաղկողին։ Եթե դրան ավելացնենք նաև Տօնականի արտագրութիւնը, որ կատարում էր ծաղկողը, պարզ կդառնա նրա ծանրաբեռնվածութեան աստիճանը։

Ձեռագրի վերջում կա 1250 թ. կազմելու վերաբերյալ հիշատակարան։ Երևում է որ կազմվել է վերատին, որովհետև կտրված են բոլոր ծաղկած էջերի լուսանցային մասերից։ Այստեղ հիշվում է նաև «զԸնձեր նաղաշն և ծնողսն իւր զԳայլերն, որ աշխատեցաւ և ծաղկեցաւ իւր հայրալ բնչիւք զտուրբ Աւետարանս»։ Եթե ձեռագիրը կազմված չէր, բայց գրված էր համաբարբառը, ինչու Ընձերը չավարտեց գոնե կանոնների լրիվ ծաղկումը, չէ որ մի քանի պիծ էր պետք գծել միայն։ Այնուհետև որտե՞ղ են ավետարանի լուսանցազարդերը։ Հովհաննեսը ավետարանիչներին նկարել է ձեռագիրը կազմելուց առաջ, մինչ նրա մասին ակնարկութիւն չկա, այն ժամանակ, երբ կազմողը հիշում է կազմի համար մի բիչ մետաքսաթել ավողին՝ Սահիանոսին։ Բանն այն է, որ վերջինս իր ժամանակակիցն է, իսկ ծաղկող Հովհաննեսը՝ ոչ։ Հովհաննեսը խորանները ծաղկելուց հետո է նկարել ավետարանիչներին։ Նշանակում է կազմողին ժամանակակից չէ նաև խորանների ծաղկողը (որը Սահիանոս ծաղկողն է) և որ ավետարանիչների փոխարեն նկարել էր խաչը, ինչպես անում էին հետո։

Ա. Կանոնի պլխազարդում արդյոք Սահիանոսի անունը չի եղել, որ կտրվել է։ Ձեռագրի բոլոր նկարների եզրերի, ինչպես նաև մյուս էջերի, խորը կտրվածութիւնը ցույց է տալիս, որ ձեռագիրը կազմվել է երկրորդ անգամ, առաջին կազմողը չէ Հովհաննեսը, ոչ էլ Ահարոն քահանան՝ առաջին ստացողը։ Առաջին ծաղկողը Սահիանոսն է, երկրորդը՝ Հովհաննեսը, Ընձեր նաղաշից նկար չկա։ Մանրանկարների Սահիանոսի հեղինակութեան ապացույցն է Տօնականի և սույն ձեռագրի նկարների նմանութիւնը, որոնցից բերված է մի քանի նմուշ։

* * *

Ամփոփենք։ Հայերեն ձեռագրական արվեստի գլուխ-գործոցներից մեկը, Մաշտոցյան Մատենադարանի № 7729 Տօնական-Ճառընտիրը պատրոն Աստուածածնատուր Բաբերդացու պատվերով Վարդան Կարնեցի գրիչը գրել, իսկ Սահիանոս քահանան ծաղկել է 1200—1202 թթ., Դարանաղյաց գավառի Ավագ վանքում։ Այն կոչվում է և պիտի շարունակվի կոչվել Մշո Տօնական կամ Մշո Ճառընտիր։ Մշո Առաքելոց վանքի միաբանները, նույն եպիսկոպոսի գլխավորութեամբ, այն փրկեցին գերութիւնից, պահպանեցին գուրգուրանքով և ավանդեցին դարերին։ Եթե Հայերեն ամենախոշոր ձեռագիրը իր ծնունդով պարտական է Ավագ վանքին, նրա գրիչներին, ծաղկողներին և Բաբերդի ռա-

յիս պատրոն Աստվածատուրին, ապա իր գոյութեամբ՝ Մշո Առաքելոց վանքի միաբաններին։ «Եւ ոչ ևս կարեաք գնել, զի հինգ հազար դրամ խնդրէր բոծորն[91] *այն, որ է տաճիկ, և դարձեալ մնծաւ (աղաչանաւք) հազիւ կարացաք գնել ի շորս հազար դրամ, և փա՜ռք, փա՜ռք Քաղաւորին ...Եւ մեք առեալ զբսա՝ զարձաք յերկնագումար եղբայրանացս մեր, որ յորջորջի Զաղարու վանս, և եղաք զբսա առ զրանս սուրբ Առաքելոցս»*[92]։ *Զեռագիրն այնտեղ մնաց ավելի քան յոթ դար, մինչև մեծ եղեռնը։*

A. C. MATEVOSSIAN

КОГДА И ГДЕ НАПИСАН МУШСКИЙ ТОРЖЕСТВЕННИК

(Р е з ю м е)

Рукопись Матенадарана № 7729 является в настоящее время самой крупной по величине армянской рукописью и называется Мушским торжественником (Чарынтиром), так как в течение 700 лет—с 1205 по 1915 год — хранилась в монастыре Аракелоц Мушской области.

Тщательное изучение письма памятной записи и содержащихся на полях книги исторических данных, а также сравнение с другими рукописями, написанными тем же переписчиком и украшенными тем же художником, дают возможность установить, что данная рукопись написана в 1200—1202 гг. в монастыре Аваг-ванк, находящемся на горе Сепух области Даранагяц Великой Армении.

Рукопись состоит теперь из 600 пергаментных листов, размером 70,5×51,55 см и весит 27,5 килограмма. Вначале рукопись имела 661 страницу.

Писец Вардан, художник—Степанос, получатель Аствацатур Бабердци.

A. S. MATEVOSSIAN

LA DATE ET LE LIEU D'EXECUTION DU RECUEIL D'HOMELIES DE MOUCH

Le Recueil d'Homélies de Mouch qui représente le plus grand manuscrit arménien connu est conservé au Maténadaran d'Erévan sous le numéro 7729. Si son nom se rattache à celui de Mouch, c'est qu'il appartint pendant sept siècles, de 1205 à 1915, au monastère Arakélots du lieu.

---

91 «Բոծոր» բառը հատուկ անուն չէ, ինչպես կարծում են ոմանք, այլ համարժեք է տաճիկ բառին, 1347 թ. մի ձեռագրի հիշատակարանում կարդում ենք. «Ջատացաւղ Ճառիս (անունը չի գրված) միայնակեացն, որ էր ի տղայութեանն յաղքէն բոծորայ... և հայեցաւ ի Քրիստոս, և հաւատաց և եղև միանձնաւոր» (Մատենադարան, ձեռ. № 3797, էջ 713բ)։

92 Մատենադարան, ձեռ. № 7729, էջ 603ա։

Le manuscrit se composait à l'origine de 661 feuilles de parchemin (dimension 70,5×51,55 cm). Il n'en compte plus que 600 et pèse 27,5 kg.

Un examen minutieux de l'écriture, du colophon et autres inscriptions mémoriales, d'une part, les renseignements recueillis dans des manuscrits dus aux mêmes copiste et peintre, d'autre part, permettent d'établir que le manuscrit 7729 fut exécuté en Grande Arménie, dans le canton de Daranaghik, au couvent d'Avag Vank, au pied du mont Sépouh, en 1200–1202.

Le copiste en fut Vardan; le peintre, Stépanos; le commanditaire, Astvadzatour Baberdatsi.

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԵՆԵՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌՔՆԵՐ
ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ — «ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ»

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

ԵՐԵՎԱՆ № 9 1969

А. Я. КАКОВКИН

СЕРЕБРЯНЫЙ ОКЛАД 1255 г. ЕВАНГЕЛИЯ 1249 г.

Среди сокровищ, хранящихся в Институте древних рукописей им. Маштоца в Ереване, находится интересный памятник древнеармянской письменности и миниатюры, а вместе с тем и ювелирного искусства — евангелие 1249 г. в серебряном окладе, изготовленном в 1255 г. (илл. 1, 2)[1].

Этот памятник неоднократно упоминался в литературе и воспроизводился[2], но не подвергался детальному изучению. Между тем, оклад чрезвычайно интересен: он может служить одной из хронологических вех в истории развития киликийско-армянского ювелирного дела, характеризуя одновременно и некоторые специфические, местные особенности этого вида искусства.

Обычай украшать переплеты богослужебных книг, в частности евангелий, накладками из слоновой кости, эмалей, драгоценных металлов, а иногда и целиком закрывать обтянутые кожей или тканями доски переплета золотыми и серебряными пластинами далеко не нов. Письменные сведения о таких окладах встречаются уже в VII в.[3]. Оклад из слоновой кости знаменитого Эчмиадзинского евангелия является первоклассным памятником такого рода.

Освященный традицией подбор изображений на окладах евангелий — событий земной жизни и чудес Иисуса Христа — достаточно однообразен. Изображались Христос, богоматерь, Креститель, апостолы, пророки, евангелисты. Широко использовались сцены чудес (на ранних произведениях), различные варианты деисусных композиций, двунадесятые праздники. Из последних предпочтение отдавалось композициям

---

[1] Матенадаран, № 7690. Разм.: 16,5×12,5 см.

[2] *Г. Овсепян.* Страница из истории армянского искусства и ремесла. Алеппо, 1930 (на арм. яз.), стр. 23—29, илл. 8, 9; *А. Свирин.* Миниатюра древней Армении. М.—Л., 1939, стр. 60, илл. на стр. 13; *Г. Овсепян.* Хишатакараны рукописей. Антилиас, 1951 (на арм. яз.), стр. 1001—1006; *Г. Тер-Гевондян.* О серебряных переплетах Матенадарана. «Эчмиадзин», 1961, № 12 (на арм. яз.), стр. 49—53, илл. 4; *Г. Тер-Гевондян.* Из истории киликийского армянского ювелирного искусства. Историко-филологический журнал АН Арм. ССР, № 4 (23), 1963 (на арм. яз.), стр. 75—77, илл. 1, 2; *S. Der Nersessian.* Le reliquaire de Skevra et l'orfèvrerie cilicienne aux XIIIe et XIVe siècles „Revue des études arméniennes", N. S. T. I, Paris, 1964, pp. 135—136.

[3] *S. Der Nersessian.* Une Apologie des images du septième siècle. „Byzantion", vol. XVII, 1944—1945, p. 65.



Илл. 1.



Илл. 2.

с наиболее драматическим и глубоко символическим значением: рождество Христово, распятие, воскресение и др.

Каких-то предписанных жестких норм в оформлении окладов не было. Используемый для этих целей материал варьировался в зависимости от эпохи, вкусов заказчиков и средств, которыми они располагали. В этом смысле оклад нашего евангелия ничем, казалось бы, не противоречит установившейся традиции[4].

Деревянная основа переплета и корешок сплошь закрыты серебряными позолоченными пластинами с чеканными изображениями деисуса на верхней крышке (илл. 1) и четырех евангелистов на нижней (илл. 2)[5]; по бортикам выбиты надписи. На верхней крышке[6] читаем: *Ք[ՐԻՍՏ]Ս Ա[ՍՏՒԱ]Ծ ՈՂՈՐՄԵԱ Տ[ԵԱՌ]Ն ԿՈՍՏԱՆԴԵԱՅ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԵՒ ԾՆԱՒՂԱՅ ԻՒՐՈՑ ԵՂԲԱՐՑ ԵՒ ԵՂԲԱՒՐՈՐԴԵԱՅ. ԱՄԷՆ. ԹՈՒ[ՎՆ] ՉԴ»* («Христос бог, помилуй владыку Константина католикоса и родителей его, братьев и племянников. Аминь. 704 г.» (704+551 = 1255). На нижней крышке: *«Գրեցաւ աւետարանս եւ կազմեցաւ հրամանաւ Տ[ԵԱՌ]Ն ԿՈՍՏԱՆԴԵԱ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ Ի յիշատակ իւր եւ ծնողաց իւրոց եւ եղբարց, ամէն»* («Написано евангелие и переплетено повелением владыки Константина католикоса в память его и родителей его и братьев. Аминь»). Итак, надписи на крышках оклада сообщают нам имя заказчика — католикоса Константина I, тонкого ценителя и покровителя искусств.

Прежде всего обратимся к композиции верхней крышки. Вариант деисуса[7], представленный на окладе — три фигуры в рост — древний. Для произведений середины XIII столетия такой вариант был уже архаичным[8]. К этому времени его вытеснила более отвечающая идее вели-

---

[4] Наиболее полный перечень дошедших до нашего времени армянских окладов приведен в работе *В. А. Абрамян* «Ремесла в Армении IV—XVIII вв.», Ереван, 1956 (на арм. яз.).

[5] Заметим, что в армянских памятниках изображения евангелистов чаще помещались на верхних крышках окладов. Например, оклад 1254 г. евангелия 1248 г., находящегося в католикосате Киликии в Антилиасе; оклад 1334 г. евангелия 1332 г. из собрания армянского патриархата в Иерусалиме, № 2691 и др. *S. Der Nersessian.* Le reliquaire de Skevra..., pl. X, fig. 12, pl. XII, fig. 14).

[6] Часть надписи, занимающая левую сторону верхней крышки, вычеканена на отдельной пластине и прикреплена к основе пятью гвоздиками, шляпки которых торчат между буквами. Из-за этого несколько пострадала в своей левой части фигура богоматери.

[7] Литература, касающаяся иконографии «деисуса», приведена в работе *В. Н. Лазарева* «Мозаики Софии Киевской». М., 1960, стр. 38. Относительно деисусных композиций в армянском искусстве см.: *Г. Овсепян.* Страницы из истории..., стр. 27; *K. Weitzmann.* Die armenische Buchmalerei des X. und Beginnenden XI. Jahrhunderts. Bamberg, 1933, S. 21; *S. Der Nersessian.* Le reliquaire de Skevra..., pp. 135—136.

[8] В восточно-христианском искусстве подобный вариант деисуса в мелкой пластике встречается в X—XI вв. *A. Goldschmidt, K. Weitzmann.* Die Byzantinischen Elfenbeinskulpturen der X—XIII. Jahrhunderts. II. Berlin, 1934, Taf. LXXV, 235; LVIII, 173); в иконописи, как правило, не выходит за рамки XI—XIII вв. *G. et M. Sotiriou.* Icones du Mont Sinaï. T. I. Athenes, 1956, pl. 48, 83, 111); в миниатюре прослеживается до конца XII вв. (*K. Weitzmann,* Op. cit. Taf. XIII, Abb. 44); *Ш. Амиранашвили.* Грузинская миниатюра. М., 1966, табл. (37, 43).

чия божества композиция восседающего на престоле Христа с предстоящими по сторонам «ходатаями за людей»[9].

Черты архаизма дают о себе знать и в стиле. Фигура Христа с непропорционально большой головой, превышает размерами фигуры предстоящих[10]: нимб Иисуса перебивает надпись, в которой обозначены имена Марии и Крестителя[11]. Трактовка густых прядей бороды и заброшенных за плечи волос, подчеркнуто удлиненные пальцы правой, расположенной перед грудью, благословляющей руки Христа, изображение в боковом аспекте его правой ноги, а также отсутствие подножия, наконец, инициалы Христа, значительно большие по размерам, чем буквы в надписях, обозначающих имена предстоящих,— все эти особенности характерны для более ранних произведений[12]. Предтеча на окладе представлен в матерчатой милоти — одеянии, в котором Креститель изображался на памятниках XI—XII столетий[13]. Как очевидный архаизм воспринимается и некоторая неустойчивость в постановке фигур предстоящих. Связь с древними памятниками ощущается и в сохранении монументальности.

Не менее интересные наблюдения позволяют сделать изображения нижней крышки оклада, где, как уже упоминалось, представлены четыре евангелиста в рост[14].

Г. Овсепян был прав, предполагая, что чеканщик оклада в качестве образца для изображения евангелистов использовал миниатюру[15]. Однако наш мастер не пошел по пути слепого подражания оригиналу. В известных нам миниатюрах четыре евангелиста, стоящие в одном ряду, изображались всегда вдоль страницы. Глашатаи учения Христа представлялись либо в строго фронтальных позах, не связанные общим действием[16], либо их фигуры объединялись по-двое с помощью легких по-

---

9 Примерами могут служить деисусные композиции грузинских памятников конца XII в.: оклада Цкароставского и Бертского евангелий (*Ш. Амиранашвили.* Бека Опизари. Тбилиси, 1956, табл. 3, 5).

10 Фигура Христа в некоторых аспектах (постановка, именословное благословение и т. п.) близка рельефному изображению Спасителя на западной стороне Ахтамарского храма (*S. Der Nersessian*, Aght'amar. Church of the Holy Cross. Cambridge (Mass.), 1965, fig. 8).

11 Отметим любопытную особенность, также говорящую об ориентации мастера на архаический образец: перед именами персонажей нет традиционного слова «святой».

12 *A. Goldschmidt, K. Weitzmann*, Op. cit., Taf. XXXVII, 94, 95, 97; S. 19, Abb. 7.

13 *Л. Мацулевич.* Византийские резные кости собрания М. П. Боткина. «Сборник Государственного Эрмитажа», вып. II. Птб., 1923, стр. 55.

14 Вопросы, связанные с изображениями евангелистов в армянских памятниках, нашли достаточно полное освещение в научной литературе: см. *A. M. Friend.* The Portraits of the Evangelists in the Greek and Latin Manuscripts. „Art Studies" Cambridge, 1927; 1929 (Ch. „Types of Evangelists portraits in Armenian Manuscripts" „Art Studies", 1929, pp. 22—29); *K. Weitzmann*, Op. cit., S. 7, 9—13, 15—18, 20—21; *T. Izmailova.* L'iconographie du manuscrit n°2877 du Maténadaran. „Revue des études arméniennes", N. S. T. II, 1965, pp. 196—203 (Ch. „Les évangelistes").

15 *Г. Овсепян.* Страница из истории..., стр. 29.

16 См., например, изображения евангелистов в рукописи 1018 г. (Матенадаран, № 480).

воротов в три четверти или соответствующих жестов[17]. При изображении евангелистов поперек страницы миниатюристы (во избежание тесноты) размещали персонажи попарно в два ряда: двоих вверху, двоих внизу[18].

В армянской миниатюре вариант изображения евангелистов вдоль страницы встречается с X в.[19] до последней трети XI в.[20] Уже в произведениях середины XII в. он воспринимается как архаический[21].

Перед чеканщиком оклада стояла трудная задача — вместить в узкое пространство четыре фигуры, размеры которых должны были быть соотнесены с размерами фигур верхней крышки, скомпоновав их при этом так, чтобы не создавалось впечатления тесноты. В меру возможного мастер с этой задачей справился, причем, помимо того, что могло быть ему подсказано миниатюрами, как раз размеры бывшей в его распоряжении плоскости определили единственно возможный характер решения. При том, что евангелисты стоят плечом к плечу, ощущения тесноты не возникает, ибо художник (в отличие от того, что было в деисусе) заметно вытянул пропорции фигур евангелистов[22], изобразил их в трехчетвертных поворотах — двоих вправо, двоих влево. Это подчеркивает некоторую глубину и вызывает иллюзию, что перед нами группа людей, ведущих общую беседу, и таким образом, сближенность фигур воспринимается как нечто само собой разумеющееся. Ощущение внутреннего единства усиливается еще за счет обрамления из полос надписей, обведенных «жгутиками».

Чеканщик, создав хорошо продуманную композицию и добившись большой выразительности лиц персонажей, не вполне справился с передачей фигур. Особенно это дает себя знать во второй слева фигуре, словно «перекрученной» в четырех противоположных направлениях.

Если говорить об изображениях оклада в целом, нельзя не отметить, что мастер не только учитывал, но и хорошо понимал, каково должно быть соотношение рельефных изображений с плоскостью-фоном. Естественно, что о пространственном решении в обычном его понимании говорить не приходится[23]: оно противоречило бы не только средневековым

---

17 Изображение евангелистов в рукописи из Мелитены 1057 г. (Матенадаран, № 3784) — *F. Macler.* Miniatures arméniennes. Vie du Christ. Peintures ornementales (Xe au XVIIe siècle). Paris, 1913, pl. XIV, fig. 23.

18 Единственным известным нам примером такой «двухярусной» композиции может служить изображение стоящих изолированно друг от друга евангелистов на миниатюре венских фрагментов № 697—*F. Macler.* Op. cit., pl. VIII, fig. 16.

19 *C. der Nersessian.* Armenian Manuscripts in the Freer Gallery of Art. Washington, 1963, p. 4.

20 *T. Izmailova.* Op. cit., p. 196.

21 *Л. Дурново.* Краткая история древнеармянской живописи. Ереван, 1957, стр. 26.

22 Отношение головы к фигуре: евангелисты—1×6,5; Мария—1×6,5; Христос—1×6; Предтеча—1×5,5.

23 Следует, однако, сделать оговорку в связи с деисусом верхней крышки. Здесь в одном случае может возникнуть ощущение, что мастер попытался дать подобие пространственного решения, отодвинув фигуру Христа в какую-то условную «глубину».

художественным представлениям вообще, но и тем декоративным задачам, которые в нашем, частном, случае стояли перед исполнителем оклада. Прибавим, что мастеру приходилось считаться и с назначением памятника.

Все это, вместе взятое, определило характер построения рельефа, в достаточной мере оригинальное, если сравнить его с тем, что дают нам другие памятники[24]. В целом он несколько уплощен, лишь головы более выпуклы, а «воронкообразные» нимбы создают ощущение еще большей их высоты.

Низкий по существу рельеф фигур не кажется таковым благодаря тому, что он строится как бы ступенчатыми пластами. Особенно это заметно в трактовке одежд.

При первом взгляде на обе крышки оклада в развернутом виде может возникнуть мысль, что они выполнены разными мастерами. Ибо рядом с изображением евангелистов композиция деисуса кажется особенно архаичной. Однако при тщательном сопоставлении обеих сцен убеждаешься, что они были выполнены одной рукой: слишком близкие средства художественной характеристики[25], те же технические приемы[26].

Мастер, выполнявший оклад, хорошо «чувствовал» материал, в котором работал. С помощью весьма ограниченных художественных средств он добивался нужных ему декоративных эффектов, в поисках

Ибо, если Мария и Креститель как бы стоят на рамке, то Спаситель лишь едва прикасается к ней пальцем левой ноги, тогда как правая, отставленная в сторону, не имеет никакой опоры. Однако ощущение это будет явно ошибочным. Во-первых, потому, что оно может появиться, если рассматривать композицию по частям—отдельно верхнюю и нижнюю ее части,—что абсолютно недопустимо. Во-вторых, рельеф всех трех фигур равновысок, т. е. находится в пределах одной плоскости. Скорее всего отмеченная деталь объясняется тем, что мастер не изобразил под ногами Христа подножия, обычного в памятниках на этот сюжет.

[24] К примеру, складень-реликварий из Скевры (Ленинград, Эрмитаж); *S. Der Nersessian*, Le reliquaire de Skevra..., pp. 121—133; *А. Каковкин.* Еще к вопросу о скеврском складне 1293 г. ВВ, XXVIII (в печати).

[25] Что же касается некоторой застылости форм в композиции деисуса, то (помимо архаического образца, на который ориентировался мастер) сама идея, символический смысл, вкладываемый в эту сцену, требовал церемониальности, торжественности решения. Взаимосвязь между персонажами здесь обуславливалась самим характером каноничной композиции. Преобладание вертикальных линий в складках одежд персонажей деисуса подчеркивает статуарность фигур. Разнообразие направлений складок в одеждах евангелистов усиливает впечатление большей свободы, движения в фигурах изображенных.

[26] Любопытная деталь в передаче хитонов у Христа и евангелистов. В нижней части фигур этих персонажей расположена вертикальная широкая складка материи. Такую же деталь видим в трактовке хитонов у евангелистов (кроме Иоанна—внизу справа) на верхней крышке оклада 1254 г. упоминавшегося выше евангелия 1248 г., и в одеянии Христа на фрагменте оклада рукописи 1256 г. хранящейся в армянском патриархате в Стамбуле. Примечательно, что все три памятника вышли из Ромклы (*S. Der Nersessian*, Le reliquaire de Skevra..., pl. X, fig. 12, pl. XIV, fig. 16, p. 137); Любопытная особенность наблюдается на интересующем нас памятнике в трактовке представленных в боковом аспекте ступней Христа и евангелистов, изображенных босыми: отведенный чуть в сторону большой палец и поднятый кверху второй.

которых главное для него — найти правильное соотношение рельефа и плоскости. Разнообразная разделка складок одежд, когда «валиком», когда сдвоенными линиями, проведенными различными чеканами; «воронкообразные» нимбы, точечный орнамент в деталях одежд, книгах, нимбах; выпуклые «жгутики», окаймляющие надписи,— наконец, мерцающие переливы золоченых и оставленных «белыми» частей оклада — все это придает последнему удивительную живописность, подчеркнутую мягкой моделировкой форм рельефа.

Остановимся еще на некоторых особенностях этого памятника — на надписях. Содержание надписи на пластине с изображением деисуса несколько необычно. Согласно традиционному символическому толкованию данной сцены, выражавшему идею заступничества святых за людей, богоматерь и Предтеча молят небесного судью — за все грешное человечество[27]. Надпись же на окладе гласит, что извечные предстатели за род людской на этот раз молят Христа за вполне конкретных лиц: «Христос бог, помилуй владыку Константина...». Вероятно, что именно в связи с таким «частным характером» молитвы образ Христа лишен черт, присущих грозному судье: мягкость выражения лица, отсутствие подножия, именословное благословение правой руки[28] и т. д.

Имена евангелистов, выбитые в тянущейся над их головами надписи, приведены в порядке, обратном принятому при расположении евангельских текстов «по авторам», т. е. вместо требуемой последовательности имен — Матфей, Марк, Лука, Иоанн,— мы читаем: Иоанн, Лука, Марк, Матфей. Это противоречит традиционной иконографической характеристике некоторых евангелистов, которой неукоснительно точно придерживался мастер. Эти иконографические черты, вопреки надписям, сразу дают возможность опознать например, во второй фигуре слева Марка, а в третьей — Луку[29].

Подведем итоги сказанному.

---

[27] В эпистолии Иисуса Христа о неделе Спаситель говорит: «И хотел я истребить всякого человека на земле, но смилостивился над вами ради пречистой матери моей и слез Иоанна Крестителя моего...» — *A. Vassiliev.* Anecdota graeco-byzantina. I. Mosquae, 1893, p. 24; см. *Д. Шестаков.* Исследования в области греческих народных сказаний о святых. Варшава, 1910, стр. 148.

[28] В большинстве деисусных композиций на различных памятниках Христос представлен благословляющим двухперстно—отличительная особенность Спаса Вседержителя (*Н. Кондаков.* Лицевой иконописный подлинник Т. I. Иконография Иисуса Христа. СПб., 1905, стр.38—39). Именословное перстосложение—знак, символизирующий пророчество (*Д. Айналов.* Новый иконографический образ Христа. «Seminarium Kondakovian», т. 11, Pragae, 1928, стр. 19) и благовестие (с таким жестом почти всегда изображался Гавриил в благовещении),—присуще Богу Слова (*Н. Кондаков,* ук. соч., стр. 38—39).

[29] Отличительным признаком Марка, когда он изображался в рост, в большинстве памятников является отведенная в сторону правая рука, которой он благословляет двуперстно (см., например, миниатюру в рукописи сер. XII в., Матенадаран, № 2877, на которой Марк представлен слева (*L. A. Dournovo.* Miniatures arméniennes. Paris, 1960, pl. 71), также изображение Марка справа в верхнем ряду на миниатюре фрагмента рукописи из Вены № 697 (*F. Macler,* Op. cit. pl. VIII, fig. 16). Лука изображался на армянских памятниках XIII в., как правило, с тонзурой (*S. Der Nerses-*

Изображения и надписи оклада выполнены в одной лишь технике чеканки, без комбинации с резными изображениями или орнаментами[30]. Эта особенность, как и самый материал, из которого изготовлен оклад — серебро, характерна и для других произведений ювелирного искусства Киликийской Армении. Другой любопытный момент — отсутствие по углам оклада нижней крышки переплета так называемых «жуков» (своего рода защитных ножек).

Значение рассмотренного нами памятника, несомненно, очень велико. Детальное изучение сохранившегося почти полностью в первоначальном виде оклада, стилистических и иконографических особенностей имеющихся на нем изображений, а также техники выполнения приоткрывает одну из интереснейших страниц в истории киликийского серебряного дела XIII в. В частности, мы получаем возможность говорить о связи ювелирного дела Киликии данного периода с искусством миниатюры и об ориентации мастеров-миниатюристов и ювелиров на древние образцы. Последнее обстоятельство, как и отличающее наш памятник высокое мастерство исполнения доказывают правомочность предположения о существовании давней местной художественной традиции.

Думается, что на основании изученного и накопленного исследователями материала, можно ставить вопрос о существовании различных центров среброделия в Киликийской Армении. Скажем, ромклайской мастерской середины XIII в., из которой вышли три известных нам памятника: оклад 1254 г. евангелия 1248 г., оклад 1255 г. евангелия 1249 г., фрагменты оклада евангелия 1256 г. Все три обнаруживают сходство технических приемов и родство средств в художественной характеристике изображенных персонажей. В общих чертах можно говорить об особенностях, присущих скеврской мастерской, где был изготовлен складень-реликварий 1293 г. Можно предположить существование в первой половине XIV в. мастерской в Сисе, общее представление о которой дает оклад 1334 г. евангелия 1332 г.

Настоятельная необходимость всестороннего изучения этих памятников очевидна. Во-первых, это позволит выявить особенности каждого из названных центров среброделия Киликийской Армении. Во-вторых, расширит наши представления о многообразном некогда искусстве этого армянского государства, о котором пока судят главным образом по миниатюре. Наконец, это явится отправной точкой в исследовании богатого наследия, оставленного нам средневековыми мастерами-ювелирами Армении.

---

sian. Le reliquaire de Skevra..., p. 136). В таком виде он изображен и на миниатюре нашего евангелия (*Л. Азарян.* Киликийская миниатюра XII—XIII вв. Ереван, 1964 (на арм. яз., илл. 52).

[30] Это станет типичным для армянских памятников позднейшего времени: см., напр., оклад (1347 г.) евангелия 1325 г. (Собр. Эрмитажа); оклад 1496 г. (*А. Свирин,* ук. соч., илл. на стр. 15); оклад XVII в. из Галереи Фрира (*S. Der Nersessian.* Armenian Manuscripts..., pl. 102, fig. 347—348).

Ա. Յ. Ա. ԿԱԿՈՎԿԻՆ

1249 Թ. ԱՎԵՏԱՐԱՆԻ ԱՐԾԱԹՅԱ ԿԱԶՄԸ (1255 Թ.)

Հոդվածը նվիրված է Մաշտոցյան Մատենադարանի 1249 թ. № 7690 գրչագիր ավետարանի արծաթյա կազմի արվեստագիտական վերլուծությանը: Կազմը ունի դրվագված հիշատակարան. այն պատրաստվել է 1255 թ. Կիլիկիայում Կոստանդին կաթողիկոսի պատվերով:

Տվյալ հուշարձանը պատկանում է կիրառական արվեստի՝ նվակի գեղարվեստական արժեք ներկայացնող գործերի շարքին և իր հորինվածքով ու պատկերման սկզբունքներով սերտորեն առնչվում է հայ մանրանկարչության հետ:

Այս և այլ նույնանման կազմերի կատարման բարձր վարպետությունը հեղինակին հնարավորություն է տվել ենթադրելու, որ հայ արծաթագործությունն ունեցել է վաղեմի գեղարվեստական ավանդույթներ, որոնք զարգանում էին ինչպես Մեծ Հայքի, այնպես և Կիլիկյան Հայաստանի ոսկերչական արվեստի դպրոցներում:

A. Ya. KAKOVKINE
(Léningrad)

LA RELIURE D'ARGENT (1255) DE L'EVANGILE DE 1249 DU MATENADARAN D'EREVAN

L'article est consacré à la reliure d'argent de l'Evangile de 1249 (ms. 7690 du Maténadaran d'Erévan) que l'auteur examine du point de vue de son exécution artistique. A la différence des nombreuses autres reliures du genre conservées au Maténadaran, celle-ci mentionne dans les bordures des plats supérieurs et inférieurs la date de 1255 qui est celle de son exécution en meme temps qu'elle y comporte un mémorial nous renseignant sur son commanditaire, le catholicos Constantin de Cilicie.

Le plat supérieur est orné aux figures en haut-relief en pied du Christ (au centre), de Marie et de Jean-Baptiste. Le plat inférieur est réservé aux quatre Evangélistes.

L'auteur range cette reliure parmi les oeuvres d'art mineur de valeur exceptionnelle. Il en souligne les rapports étroits avec la Miniature arménienne.

Le degré de perfection de la reliure de 1255 et d'autres ne peut que témoigner en faveur des traditions artistiques anciennes de l'orfèvrerie d'argent arménienne développées tant en Grande Arménie que dans l'Arménie cilicienne.

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌՔՆԻՔ
ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ—«ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ»

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

ԵՐԵՎԱՆ № 9 1969

ԼԵՎՈՆ ԽԱՉԻԿՅԱՆ

ՍՅՈՒՆԱՑ ՕՐԲԵԼՅԱՆՆԵՐԻ ԲՈՒՐԹԵԼՅԱՆ ՃՅՈՒՂԸ

XIV—XV դարերում պատմական Հայաստանի Սյունյաց նահանգի մի շարք գավառների աշխարհիկ ու հոգևոր իշխանությունը կենտրոնացված էր Օրբելյան ֆեոդալական գերդաստանի Բուրթելյան կոչվող ճյուղի պայազատների ձեռքում[1]։

Շուրջ երկու հարյուրամյակ, սկզբից որպես Սյունյաց մի շարք գավառների հզոր տիրակալներ, իսկ այնուհետև որպես նույն աշխարհի տարբեր մասերում որոշ կալվածքներ ունեցող սակավազոր ավատատերեր կամ հոգևոր առաջնորդներ՝ XIV—XV դարերի սկզբնաղբյուրներում հիշատակվում են Օրբելյանների Բուրթելյան ճյուղից սերված տասնյակ ներկայացուցիչներ։ Առ այսօր, սակայն, այդ տվյալների բազդատական ուսումնասիրությամբ դեռևս չի ստեղծված ֆեոդալական այդ գերդաստանի ճյուղագրությունը՝ ժամանակագրական վստահելի հիմքով։

Առաջին փորձն այս ուղղությամբ կատարել է հայագիտության մեծ երախտավոր Ղ. Ալիշանը[2]։ Երկրորդ փորձը, շատ ավելի հարուստ նյութերի հիման վրա, ըստ իր հավաստման, կատարելու էր Գ. Հովսեփյանը՝ Օրբելյանների մասին գրելիք իր ուսումնասիրության մեջ[3]։ Նրա անտիպ գործերի շարքում հիշատակված է նաև Օրբելյան իշխանության մասին անավարտ մի երկ, որի մեջ, թերևս, տրված է նաև Բուրթելյան գերդաստանի տոհմագրությունը. ցավոք այդ ձեռագիր աշխատությունը անմատչելի է մնում։

Ալիշանի «Սիսականում» տպագրված տոհմածառը, մնալ հետաքրքրող իր մասով, այսպիսի տեսք ունի (տե՛ս հաջորդ էջ)։

XIV—XV դարերի հայերեն ձեռագրաց հիշատակարանների և վիմական արձանագրությունների վերջին տարիներս կատարված հրատարակություններում մեջ ամբարված են բազմաթիվ տվյալներ ու ակնարկներ, որոնք հնարավորություն են ընձեռում վերանայելու Ղ. Ալիշանի խիստ թերի տոհմածառը և կազմելու Բուրթելյան գերդաստանի շատ ավելի ամբողջական ու ստուգապատում ժամանակագրական պատմություն։ Այդ աշխատանքը, անշուշտ, ինքնանպա-


---

1 *Ժամանակակից հիշատակարաններում Օրբելյանների այդ ճյուղը կոչվում է «Տուն Բուրդելի» (ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, էջ 560), «Տուն Բիւրթելեանց» (ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, I, էջ 194, II, էջ 194), «Պուրթելեանց զարմ» (ԺԵ, I, 258), «Բուրթելեանց ազգ» (ԺԵ, III, էջ 147) և այլն։*

2 Ղ. Ալիշան, *Սիսական, Վենետիկ, 1893, ներդիր 92—93-րդ էջերի միջև։*

3 Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյան, *Խոշրակյանք և Պռոշյանք Հայոց պատմության մեջ, մաս առաջին, Երևան, 1928, էջ IV—V*; Ս. Սիմոնյան, *Գարեգին կաթողիկոսի բանասիրական վաստակը, «Հասկ», 1952, էջ 253։*

տակ չէ. հիշյալ դարերի հայ քաղաքական ու մշակութային կյանքի շատ իրողություններ առնչվում են Սյունյաց աշխարհի հետ, և շատ անցուդարձերի ժամանակագրությունը պիտորեն Սյունյաց այս կամ այն իշխանի ու եպիսկոպոսի աթոռակալության տարիներին։ Ըստ այդմ՝ Բուրթելյան գերդաստանի տոհմածառն ու ժամանակագրական պատմությունը, անտարակույս, իր դույզն նպաստն է բերելու վերոհիշյալ ժամանակաշրջանի Հայոց պատմության ամբողջական ուսումնասիրությանը։



Ահա այս ակնկալությամբ, մանրակրկիտ քննության կատարելուց հետո, նորովի ի մի ենք բերում մեզ հայտնի բոլոր կարևոր վկայությունները Բուրթելյան գերդաստանի պայազատների մասին։ Քիչ թե շատ նշանավոր անձանց կյանքի դրվագներին նվիրել ենք առանձին սմփոփ հատվածներ, Բուրթելյանների պատմությունը, բնականաբար, սկսելով այդ գերդաստանի հիմնադրի կյանքի համառոտ տարեգրությամբ։

ԲՈՒՐԹԵԼ ՕՐԲԵԼՅԱՆ

Բուրթելը՝ Տարսայիճ Օրբելյանի թոռն է, էլիկումի որդին, անվանի պատմիչ և Սյունյաց մետրոպոլիտ Ստեփանոս Օրբելյանի եղբորորդին։

Սյունիքում ու նրա սահմաններից դուրս Բուրթելը, որպես Սյունյաց մեծ իշխան, հիշատակվում է 1306—1344 թվականներին։ Առաջին անգամ նրա անունը գտնում ենք 1306 թ. Սարգիս գրչի եղեգիսում շարադրած հիշատակարանում (ԺԴ, 42)[4], իսկ վերջին անգամ՝ Նորատուսի 1344 թ. վիմական մի արձանագրության մեջ։

Ժամանակակիցները Բուրթելին մեծարում են շռայլ տիտղոսներով. «մեծ ամիր» (ԺԴ, 100), «մեծ կոմս և կողմնակալ» (ԺԴ, 117)», մեծ քրիստոսասիրտ

4 Այսուհետև և այսուհետև ամենուրեք մեր կազմած «ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ» (Երևան, 1950 թ.) ժողովածուն վկայակոչում ենք «ԺԴ» համառոտագրությամբ՝ շարադրանքի մեջ և ո՛չ տողատակում։ Նույն ձևով՝ XV դարի հիշատակարանների եռյակ հատորները՝ ԺԵ, I, ԺԵ, II և ԺԵ, III համառոտագրությամբ։

իշխան» (ԺԴ, 167), «մեծ իշխանաց իշխան տանս Սիւնեաց», «յաղթող ապայսպես» (ԺԴ, 182), «Հայոց Միջագ թագաւորիմ ժառանգ՝ տէր տանն Սիսական՝ մեծիմաստ պարոն» (ԺԴ, 292), «մեծ սպարապետ Հայոց և Վրաց՝ թագաւորիմ իշխան» (ԺԴ, 297), «հիւպատոս և սպարապետ Հայոց» (ԺԴ, 328) և այլն։

Շուայլորեն մատնատրված այս բնույթի տիտղոսները, իհարկե, հնարավորություն չեն ընձեռում ճշգրիտ որոշելու այս կամ այն գործչի քաղաքական ու տնտեսական կշիռն իր ապրած ժամանակաշրջանում։ Սրանք, այնուամենայնիվ, ցուցանիշ են այն իրողության, որ մոնղոլական իլղանության վերջին տասնամյակներում Սյունյաց իշխանաց իշխան ամիր Բուրթելը ազդեցիկ դիրք էր գրավում։ Մի հիշատակարանում ասված է, որ նա «առաջի աշխարհակալացն մեծարեալ և բազում ընծաիւք պատուեալ» էր, և որ 1307 թվականին իր զորքերով (Ջեսար Օրբելյանի հետ միասին) մասնակցել է Խարբանդա խանի դեմ Գիլանի կողմերը ձեռնարկած մի արշավանքին, որից «խաղաղութեամբ» ետն է դարձել՝ բայց կորցրել է իր զորքի մի մասը («բայց զօրացն պակաս մնացին»[5])։

Իր իշխանության տարիներին Բուրթելը մասնակցել է նաև այլ պատերազմների, վաստակելով «քաջի և միշտ յաղթողի» համբավ[6]։

Ժամանակակից աղբյուրներում տվյալներ կան նաև Բուրթելի զորահրամանատարի՝ Շահուռեցի Վահրամ իշխանի որդի Ամատա զորավարի մասին (մեռել է 1349-ից առաջ), որ տեր էր կարգված Վայոց ձորում գտնվող Երերան (Հերհեր), Վանք և Քալատակ կոչվող բնակավայրերի (ԺԴ, 376)։ Տեղեկություն ունենք նաև Բուրթելի նախիջ (հավատարմատար) կոչված ումն Ալինախ իշխանի մասին, որը հիշատակված է միջնադարյան ուշագրավ մի գրույցի մեջ[7]։

---

5 «Բազմավէպ», 1947, № 9—10, էջ 216—217։

6 Մատենադարան, ձեռ. № 4515, էջ 81։

7 Տե՛ս Ն. Մառ, Ժողովածոյք առակաց Վարդանայ, մաս Բ, Ս. Պետերբուրգ, 1894, էջ 343—344։ Զգալի տարբերություններ ունի տպագրվածից նույն գրույցի Մատենադարանի № 8076 ձեռագրում ընդօրինակված փոփոխակը, որ բերում ենք ստորև. «Պարոն Բուրթելն յաւուր միում գնայր զօրօք ի ճանապարհ, և երէց մի աշխարհի պատահեալ ի ճանապարհին եւ իջեալ ի ձիոյն՝ հանդերձ զօրօքն համբուրեցին զոչ քահանային։ Եւ նայիպն Ալինախ անուն տրտնջաց պարոնին եւ նա զաղտ պատուէր եւս, զի մի կնքեսցեն և թաղեսցեն զընտանիս նորա։ Մնաւ որդին և ոչ թաղեցին զնա։ Եկն առ Բուրթելն և նա ասէ. «Ես և դու գնամք, թաղեմք զնա»։ Եւ նա ասէ. «Այդ անհնար է»։ Եւ նա ասէ. «Բայց դու այն օրն էր տրտնջեցեր՝ յորժամ զքահանային պատուեցի»։ Վասն այսորիկ պատուել զքահանային պարտ է՝ միջնորդ հաշտութեան առ աստուած» (ձեռ. № 8076, էջ 72ա)։

Բուրթել Օրբելյանի մասին կան նաև այլ գրույցներ, որոնք ուշագրավ են որպես պատմական նշանավոր անձնավորությունների շուրջ հյուսված զվարճախոս պատմություններ և վկայում են Սյունյաց այդ իշխանի ժողովրդականության մասին։ Ավելորդ չենք համարում ներկայացնել նաև դրանք՝ քաղելով Մաշտոցյան Մատենադարանի № 2226 ձեռագրից։

—«Վարդապետ մին գովեցին մօտ պարոն Բուրթելն, թէ յոյժ համբերող է։ Ասէ «Գնացէք, բերէք, որ փորձեմ»։ Երբ ի դուռն երեկ, տեսաւ զնա, ասէ. «Երթ ի բաց, չիմաւ և շէթ»։ Եւ նա լուռեամբ ի բաց գնաց։ Դարձեալ ասէ. «Վարդապետ, եկ, վարդապետ, եկ»։ Եւ դարձեալ եկն առ իշխանն։ Ասէ. «Վարդապետ, զայդ ուստի գիտէիր համբերել»։ Ասէ. «Պարոն, զայդ ի շանէն եմ ուսել, զնո ի որոց շատ բան գիտեմ»։ Եւ պարոնն յոյժ սիրեաց զնա»։

— «Ձհիւրատուր վարդապետն ի պաշտօն տարան և այն օրն հաց մոռացան տալ ուտելոյ։ Երեկոյին ժամուն տարան ի տուն։ Ասէ պարոնն (Բուրթել) «վարդապետ, քանի՞ տարոյ եա»։ Ասէ. «Ես. (40) տարոյ, պակաս մի օր»։ Ասէ. «Մէկն է՞ր է պակաս»։ Ասէ. «Օրս այս, որ քաղցած պահեցեր, ժամանակի կարգ ոչ է» (ձեռ. № 2226, էջ 59ա—59բ, համմտ. նաև Ղ. Ալիշան, Սիսական, էջ 127)։

Մնծարվել է Բուրթել իշխանը նաև որպես բարեպաշտ մի անձնավորություն, որ «էր խստակրօն ցայգաջան և գիշերաւաստակ ծնրադրող, առաւել քան զմիանձունս քարանձաւաց»[8]: Եղեգիսի Նորվանքում կառուցել է Բուրթելաշեն կոչվող հոյակապ եկեղեցին՝ հայ միջնադարյան ճարտարապետության գոհարներից մեկը, գրել է ավել ու շքեղ զարդարել ձեռագրեր[9]:

Գլաձորյան համալսարանի բարեունապետ Եսայի Նչեցին, 1323 թվականին գրած մի հիշատակարանում, մնծարում է Բուրթելին ու նրա որդիներին և հայտնում, որ նրանց առատաբաշխությամբ՝ «յոլով շինութիւն և խաղաղութիւն գործեցաւ մեզ և ամենայն եկեղեցեաց Քրիստոսի», և որ՝ «ի հասարակաց բարեացդ սոցա ընդ ամենեսեան և մեք՝ մեր աշակերտաւք՝ բազում և անբիւ գութս գտաք ի սոցանէ» (ԺԴ, 182—183):

1306—1315 թթ. Եղեգիսում շարադրված հիշատակարաններում Բուրթելի կողքին, որպես տեղի տեր, հիշատակվում է նրա եղբայր Բուղտա (կամ Պուղտա) իշխանը, որը, սակայն, երիտասարդական հասակում՝ «յետ յոլով բաց մրցմանց տիգախոցեալ զանթառամն ընկալաւ պսակ», այսինքն՝ սպանվեց (1318 թվականին):

Բուրթելի մահվան տարեգրի թվականը չգիտենք. վերջին անգամ, որպես ապրող անձնավորություն, հիշված է 1344 թ., մեռած էր արդեն 1348-ին: Այդ թվականին շարադրված մի հիշատակարանում ասված է. «Փոխեցելոյն առ Քրիստոս յոյժ ամենեցուն պարոն Բիւրթելին» (ԺԴ, 369):

Բուրթելի կինն է Վախախ իշխանուհին, որ հավանաբար Ծարի Դոփյան կոչվող գերդաստանից է սերում: Բուրթել ու Վախախ ամուսիններից ծնված զավակներն են՝ Բիշքինը, Իվաննն ու Սամեղը, որոնք միասին հիշատակված են 1344 թվականին Նորատուսում գտնվող վիմական մի արձանագրության մեջ[10]:

Սամեղը (իմա՛ Սամուել)՝ եղբայրներից կրտսերն է, մեռած լինելով պատանի հասակում՝ չի հիշատակված այլ աղբյուրներում, իսկ Բիշքինի և Իվաննի մասին կան բավարար տեղեկություններ:

ԲԻՇՔԻՆ ՈՐԴԻ ԲՈՒՐԹԵԼԻ

Անտարակույս՝ Բուրթելի ավագ որդին է. հիշատակագրիները, ամենուրեք, նախ սրա անունն են տալիս և նոր միայն Իվաննի: Առաջին անգամ հիշատակվում է Արփա գյուղի եկեղեցու արձանագրության մեջ (1322 թ.) և ապա՝ Եսայի Նչեցու կողմից՝ 1323 թվականին (տե՛ս վերը):

1337 թվականին Բիշքինը գտնվում էր իլղանության կենտրոններում՝ Թավրիզում և Սուլթանիայում՝ դիվանական ծառայության մեջ: Այս քաղաքներում Բիշքինի պատվերով նշանավոր գրիչ Ավագն ընդօրինակեց փառահեղ մի ավետարան, որ նա վաղամեռիկ իր տիկնոջ՝ Փաշայի հիշատակին նվիրեց Տաթևի վանքին (ԺԴ, 232): Ձեռագրի հիշատակարանում Ավագը Բիշքինին կոչում է «մեր տէրն ըստ մարմնոյ» և մնծարում նրան՝ «Հայոց Մնծաց Թագաւորաց ժառանգ, տէր տանն Սիսակայ, մնծիմաստ պարոնաց պարոն» տիտ-

8 Մաշտոցյան Մատենադարան, ձեռ. № 4515, էջ 81—82:

9 Տե՛ս «Բազմավէպ», 1947, № 9—10, էջ 216—217:

10 Ղ. Ալիշան, Սիսական, էջ 47:

դոաններով։ Այստեղ հիշատակվում է նաև Բեշքենի մանկահասակ որդի Էլիկումը։

Ուշագրավ են Բեշքենի և Իվանեի մասին Սարգիս մետրոպոլիտի շարադրած տողերը՝ 1337 թ. հիշատակարանում. այնտեղ ասված է, որ սրանք ամեն բանով նման են իրենց բարեպաշտ հորը՝ Բուրթել իշխանին՝ «խոհականութեամբ և մատակարարութեամբըն զաշխարհս և զզօրս, նաև յառաջադէմ յարքունիս և մեծափառ, զի մեծարանս արար սէր երիսաց սոցա»[11]։

Վերջին անգամ Բեշքենը հիշատակված է 1349 թվականին՝ որպես «քաջ զաւրավար Հայոց, աստուածասէր և բարեպաշտ իշխանաց իշխան» (ԺԴ, 375)։ Ե՞րբ է կնքել իր մահկանացուն, չգիտենք։

Բեշքենի որդի Էլիկումի մասին տվյալները խիստ աղքատիկ են։ 1337 թվականին Ավագ գրիչը հիշատակում է նրան, որպես «նորաբոյս ոսկերոզոջ ատտուածատուր հարազատ, ծիրանածին և բարեշնորհ զաւակ» (ԺԴ, 292), որը որբ էր մնացել մորից և դաստիարակվում էր, հավանաբար, իր պապ Բուրթելի և տատ Վախախի խնամածությամբ։

Երբ Օրբելյանների ապարանքը Ամատա Շահուռեցին վախճանվեց երիտասարդ հասակում, թողնելով միայն մի դուստր՝ Նաթիլ անունով, Բուրթելն ու Վախախը Շահուռեցի իշխանների սիրույրների ժառանգ այդ դեռատի օրիորդին ամուսնացրին Բուրթելի որդի Էլիկումի հետ, որ 1349 թ. հիշատակարանում (ուր խոսվում է այդ ամուսնության մասին) կոչված է Կուկա («զորդի Բեշքենայ՝ զԿուկայն»)։ Գիտենք արդեն, որ Բեշքենն ուներ միայն մեկ որդի, ուստի դժվար չէ հետևցնել, որ Կուկա անունը էլիկում անվան փաղաքշական ձևն է։

Արդ, այս ամուսնությամբ Բեշքենի որդի Էլիկումը ժառանգեց Ամատա Շահուռեցու (Նաթիլի հանգուցյալ հոր) կալվածքները և իր պապի կողմից կարգվեց «տէր Հայրենեաց Վահրամայ որդոյ Շահուռեցոյն՝ Երերան և Վանացն և Քալատակին և այլ հայրենեացն ամենայնի» (ԺԴ, 376)։ Այս դեպքերը կատարվել են 1344—1348 թվականներից առաջ, երբ դեռ ողջ էին Բուրթելն ու Վախախը։

Ինչքան են ապրել ու տիրել իրենց կալվածքներին Էլիկումը (Կուկան) և Նաթիլը, չգիտենք։ Նրանց մասին որևէ այլ տվյալ չեն հաղորդում ժամանակակից աղբյուրները։ Ըստ այդմ կարծում ենք, որ շատ կարճատև է եղել նրանց կյանքը, և հեռացել են աշխարհից՝ անհիշատակ։

ԻՎԱՆԵ ՈՐԴԻ ԲՈՒՐԹԵԼԻ

Բուրթելի երկրորդ որդու՝ Իվանեի անունը սկզբնաղբյուրներում տառադարձված ենք գտնում տարբեր ձևերով՝ Իւան (ԺԴ, 303), Իւանէ (բազմիցս), Իվանի («Սիսական», 96), Իվանիկ (ԺԵ, II, 317, «Սիսական», 47), Ինանիկ (ԺԵ, I, 87, 656, «Սիսական» 96), Նանիկ (ԺԴ, 567)։ Բարեբախտաբար, գրեթե ամեներեք, նա հիշատակված է կամ իր հոր ու ավագ եղբոր հետ միասին, կամ իր որդիների ու թոռների առնչությամբ, ուստի դյուրությամբ որոշվում է, որ տարբեր ձևերով գրի առնված այդ անվան տակ ժամանակակիցները նկատի են ունեցել նույն անձնավորությանը՝ Բուրթել իշխանի Իվանե որդուն։

11 Երուսաղեմ, ձեռ. № 1033, էջ 62, համմ. ԺԴ, 297։

XIV դարի առաջին տասնամյակներին, սակայն, Սյունիքում ապրել է նաև մի այլ Իվանե իշխան՝ տեր Որոտան գավառի։ Եվ ահա մինչև Իվանե Բուրթելյանի կենսագրականին անցնելը անհրաժեշտ է տարբերակել Համառուն այս իշխաններին[12]*։*

Նախ, անդրադառնանք Որոտանի տեր Իվանեին։

Այս անձնավորության և նրա գերդաստանի մասին ամենաուշագրավ տվյալները գրանցված են 1337 թվականին ընդօրինակված մի Սաղմոսարանի հիշատակարանում, որ ստացել է հենց այս Իվանեի եղբայր՝ Սյունյաց մետրոպոլիտ Սարգիս եպիսկոպոսը՝ «յիշատակ անջինջ իւր և ծնողաց իւրոց՝ հօր իւրոյ Հասանայ, որ էր յազէ և յազնէ մեծափառ իշխանաց տանս Սիւնեաց, և մօր իւրոյ տիկին Վախախին, և եղբօրն իւրում՝ պայազատի և քաջագօտի գամրի Իվանէի, որ էր ամիրա և պետ երկրին Որոտան, և եղբօրորդւոյ իւրոյ՝ կոյսուվամիտ սրբազան նորընծա քահանայի Յովաննիսի... նայ և եղբարց սորին հարազատաց և հակայազօրու հաստատագոյն մանկտուցն՝ Հասանայ և Զաքարէի, և ամենայն արեան մերձաւորաց»[13]*։*

Այս արժեքավոր տվյալները հավաստվում և լրացվում են Իվանե իշխանի դուստր և Օրբելյանների սպարապետ Ամատա Շահուռեցու տիկին՝ Թուղթանի իշխանուհու հիշատակարանով, որ շարադրված է 1349 թվականին։ Այնտեղ ասված է. «Արդ, ես՝ անարժան Թուխթանի, դուստր Իւանէ Որոտան իշխեցողի, քոյր քաջ քարտուղարի և երջանիկ բարեմնապետի Յովաննէս վարդապետի, հարսն մեծ Շահուռեցեանց, կենակից հզաւր և մեծ իշխանին Ամատին շինեցի զերեզման ժամատունս... յիշատակ ինձ, և առն իմում Ամատին... և զաւակին իմ Նաթիլին, և հաւր իմ Իւանէ, և մաւր իմ Տիկնանց-Տիկնոյ, հարազատ եղբարց իմոց Հասանայ և Զաքարէի, և ամենայն արեան մերձաւորաց» (ԺԴ, 375)։

Որոտան գավառի հին ավատատերերի այս գերդաստանի մասին ավելի ազգատիկ տվյալներ կան նաև ձեռագրաց այլ հիշատակարանների մեջ, գրանցված մեծանուն գիտնական ու մանկավարժ Հովհան Որոտնեցու կապակցությամբ, որը ըստ վերոհիշյալ աղբյուրների և բազմաթիվ այլ վկայությունների, որին էր «քաջի Իվանէի՝ Որոտան իշխեցողի» (տե՛ս օրինակ, ԺԴ, 497, 520)։ Թովմա Մեծոփեցին ևս հայտնում է, որ Հովհան Որոտնեցին ծննդյամբ էր «ի գաւառէն Որոտնոյ, ի գեղջէն Վաղանդնայ՝ որդի մեծի իշխանին Իվանի, որ էր ի գարմէ առաջին իշխանացն Սիւնեաց, յորմէ Վասակն էր»[14]*։*

Այս գերդաստանի տոհմագրությունը ըստ վերոհիշյալ տվյալների՝ հնադույն դարերից է գալիս, նրանք սերված են համարվում Սյունիքի հին ու բնիկ իշխաններից։ Սակայն, ցավոք, հանվանեն հիշատակվում են միայն Հասանը (կինն է՝ Վախախ), նրա որդիները՝ Սարգիս եպիսկոպոսն ու Իվանե իշխանը (կինն է՝ Տիկնանց-Տիկին), և թոռները (Իվանեի զավակները)՝ Հովհան Որոտ-

---

12 *Այդ աշխատանքը առ այսօր չի կատարված, և ինչպես այլ բանասերներ, այնպես էլ մենք («ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ» ժողովածուի անձնանունների ցանկի մեջ և այլուր), շփոթել և որպես մի անձնավորություն ենք ներկայացրել Իվանե անունը կրող այս երկու իշխաններին։ Դրանց տարանջատման գործում մեզ օգնել է Աս. Մնացականյանը, որին հայտնում ենք շնորհակալություն։*

13 *Երուսաղեմ, ձեռ. № 1033, էջ 61—62 (Տե՛ս նաև «Սիոն», 1868, № 8, էջ 192, 1938, № 9, էջ 275—278)։*

14 *Թ. Մեծոփեցի, Պատմութիւն Լանկ-Թամուրայ, 1860, Փարիզ, էջ 14։*

նեցին, Հասանը, Ջաբարեն և Թուղթանին, և այս վերջինի դուստրը՝ Նաթիլ իշխանուհին։

Հասան իշխանը, հայրը լինելով Սարգիս մետրոպոլիտի (որ արդեն 1326 թվականին հիշված է որպես Վաղադնի վանահայր) ապրած պետք է լինի XIII դարի երկրորդ հիսնամյակում։ Այդ ժամանակաշրջանից հայտնի են Հասան անունը կրող շուրջ երկու տասնյակ դործիչներ[15], որոնցից մեկը՝ Դլենյանց կոչվող Հասանը՝ բուռ երևույթին նույնացվելու է սրա հետ։

Ստ. Օրբելյան պատմիչը հայտնում է, որ Դլեն իշխանի սերնդից Հասան իշխանը, իր երկու եղբայրների հետ միասին, «եկեղեցի և բազում միաբանություն» է ունեցել Տաթևում, սակայն XIII դարի վերջին՝ «յաւերման գաւառին իւրեանց և ի դառն և վերջին աղքատութեանէ», ստիպված է եղել Ստ. Օրբելյանին վաճառելու իրենց գերդաստանին պատկանող մի սուրբ մասունք, ստանալով 500 դահեկան և «այլ բազում պարգևս ձիոց և եղանց և հանդերձից»[16]։

Ահա Դլենյան այս Հասանի որդին է եղել, հավանաբար, մեզ հետաքրքրող Իվանե Որոտնեցի իշխանը։ Իվանեի եղբայր Սարգիս մետրոպոլիտի 1337 թ. հիշատակարանում ասված է, որ նա «էր ամիրա և պետ երկրին Որոտան», ուստի մնում էր արդեն այդ թվականից տարիներ առաջ, մինչդեռ Բուրթելի որդի Իվանե իշխանը առաջին անգամ հիշատակված է Արփա գյուղի եկեղեցու մի արձանագրության մեջ՝ 1322 թվականին որպես «նորաբողբոջ» երիտասարդ։ Հետագա տարիների (1323, 1333, 1334, 1337, 1338, 1348, 1349) բազմաթիվ հիշատակարաններում, Սյունյաց իշխանների թվարկման ժամանակ, տրվում է նաև այս Իվանեի անունը՝ նրա ավագ եղբայր Բեշքենից հետո։ Վերջին անգամ, որպես կենդանի անձնավորություն, Իվանեն հիշատակված է 1377 թվականին, երբ, մի ժամանակագրի վկայությամբ, «իշխանութիւնս Հայոց էր նուազեալ, և միայն մնացեալ Իվանի, որ կոչի Իւանիկ, որդի մեծին Բուրթելին, ի մէջ այլազանից՝ բազում հարկապահանջութեամբ»[17]։

Իվանե Բուրթելյանը ունեցել է 4 արու զավակ. դրանք են՝ Սահիփանոս-Սուլթանշահ, Սմբատ, Բուրթել և Գորգուն։ Արդ, առանձին առանձին ծանոթանանք Իվանեի այս որդիներին։

ՍՈՒԼԹԱՆՇԱՀ-ՍՏԵՓԱՆՈՍ ՈՐԴԻ ԻՎԱՆԵ ԲՈՒՐԹԵԼՅԱՆԻ

Մաշտոցյան Մատենադարանի № 9450 ավետարանի վերջում կան այդ ձեռագրի հետագա օտարումների մասին մի քանի հիշատակագրություններ։ Մեզ համար հատուկ հետաքրքրություն են ներկայացնում 374ա և 373բ էջերի գրանցումները։ Գրանցից առաջինում ոմն «Գրիգոր նուաստ և անարժան քահանայ» ասում է, որ իր հալալ արդյունքով 1366 թվականին գնել է այդ ավետարանը՝ «յիշատակ ինձ և ծնողաց իմոց և եղբարց»։ 373բ էջի հիշատակագրության առաջին տողը («Կամաւ կարող հզաւրին աստուծոյ») գրված է վերոհիշյալ հիշատակարանի ձեռագրով, իսկ շարունակությունը գրել է ոմն տեր Ստեփանոս-Սուլթանշահ՝ այսպես. «Ես ատէր Ստեփաննոս մականուն Սուլթանշահ, թոռն Բուրթելին որդի Նանկի[ն և]ղբարն [Բ]շքինի պարոնի՝ ի Քրիստոս է հանդուցել։ Մեք վկայ եմք այս սուրբ Աւետարանիս վահրամայ և իւր եղ-

15 Տե՛ս Հ. Աճառյան, Հայոց անձնանունների բառարան, Գ, էջ 57—59։

16 Ստ. Օրբելյան. Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 485—487։

17 «Սիսական», էջ 96։

բայր ///, իրեանց հալալ արդեմք դնեցին զայս սուրբ Աւետարանս, ասուած շնհաւոր առնէ, ամէն, ամէն»:

Ստացող վահրամի և նրա եղբոր եղծված անունները գրված են ջնջված այլ բառերի վրա, իսկ ջնջվել են, հավանաբար, վերոհիշյալ Գրիգոր քահանայի ու նրա եղբոր անունները[18]: Ըստ այդմ Ստեփանոս-Սուլթանշահի հիշատակագրությունը գրանցված պետք է լինի նույն թվականին, ինչ Գրիգոր քահանայինը, այսինքն 1366-ին: Այս հիշատակագրության համաձայն Բուրթելի որդի, Բեշքենի եղբայր Նանիկ-Իվանեն ունեցել է Ստեփանոս-Սուլթանշահ անունով մի որդի, որ եղել է եպիսկոպոս (սրա մասին ավելի հանդամանալից խոսք կլինի Սյունյաց եպիսկոպոսաններին նվիրված բաժնում):

ՍՄԲԱՏ ԵՎ ԲՈՒՐԹԵԼ՝ ՈՐԴԻՔ ԻՎԱՆԵ ԲՈՒՐԹԵԼՅԱՆԻ

Սմբատի մասին առաջին տեղեկությունը գտնում ենք Հովհան Որոտնեցու աշակերտ Հակոբ գրչի 1386 թվականին շարադրած բովանդակալից հիշատակարանում: Խոսելով 1—2 տարի առաջ տեղի ունեցած քաղաքական անցուդարձերի մասին, նա գրում է, որ «զմեղքն իմ ծովացեալ ևհան զգունդս անօրինաց ի վերայ քրիստոնէից, մանաւանդ ի վերայ տանն Բուրդելի: Որ ևկին և առին զերդն Որոտան, և հայբենապուրկ արարին զպարոն Սմբատն, որդի Նանիկին» (ԺԴ, 560): Այստեղ հիշատակված «անօրենները», հավանաբար, Ոսկյա-Հորդայի զոր Թողթամիշի զորքերն են, որ 1385-ին մեծ ավերածություններ գործեցին նաև Սյունիքում: 1400—1403 թթ. Սմբատ և Բուրթել եղբայրները Տաթևում շարադրված մի հիշատակարանում կոչվում են տեղի իշխաններ (ԺԴ, 632, ԺԵ, I, 4, 35): Հավանաբար 1403 (կամ հաջորդ) թվականին Լանկթամուրի Թոռ Միրզա-Օմարը, որ կուսակալ էր կարգված Իրանի և Անդրկովկասի վրա, Սմբատ և Բուրթել իշխաններին «զարձոյց բռնութեամբ ի յանհաւատութիւն» (այսինքն՝ զարձրեց մահմեդական) և, իրենց ընտանիքներով, ուղարկեց Սամարղանդ: Շատ չի տևում, սակայն, սամարղանդյան գերությունը, շուտով նրանք վերադառնում են Սյունիք[19] և կրկին դառնում քրիստոնեական հավատքի: 1406 թվականից նրանք նորից սկսում են հիշատակվել Տաթևում գրված ձեռագրերում (ԺԵ, I, 74):

Բուրթել իշխանն իր երկու մանկահասակ որդիների հետ, ինչպես և Սմբատի մի որդին (բոլորն էլ՝ անանուն) զոհ են գնում 1407 թ. մեծ հունձ կատարած համաճարակին. «Այսօր եղբայր Սմբատին պարոն Բուրթէլ՝ հանդերձ որդովք իւրովք հանդեաւ ի Քրիստոս, և որդի Սմբատին, և այլքս անթուելիք են»,— գրել է Թ. Մեծոփեցին իր ընդարձակ հիշատակարաններից մեկում (ԺԵ, I, 80, համմ. նաև ԺԵ, I, 75):

1407 թվականին Սմբատ իշխանն իր հնձելադնդով մասնակցում է Ջալաիրյան Ահմադ Ղանի և Կարա-Յուսուֆի դաշնակցած ուժերի մղած կռիվներին՝ թամուրյանների դեմ: Հիշատակարանը, որի մեջ ավյալներ են եղել այդ մասին, պահպանվել է խիստ քայքայված վիճակում, ուստի շատ բան մութն է մնում: Պարզ է, սակայն, որ Սմբատի զորագունդը մեծ կորուստներ է ունեցել (ԺԵ, I, 82):

18 Անունների այս փոփոխության կատարողը նպատակ է ունեցել ներմուծել այդ հիշատակագրության մեջ ձեռագրի նախկին ստացողների՝ Վասիլի և Վահրամի անունները:

19 Թովմա Մեծոփեցի. Փարիզ, 1860, էջ 68:

Երբ Կարա-Յուսուֆը զբաղված էր Աղ-Կոյունլուների դեմ պատերազմելով, Սուլթան-Ահմադը իշխանությունը գրավելու փորձ է կատարում, միաչնակ վայելելու համար Կարա-Կոյունլուների գործակցությամբ թամուրյանների դեմ ստրած հաղթանակը: Սմբատ Բուրթելյան իշխանը, անսալով իր ոչ հնազանդ խորհրդատուներին, նույնպես հայտնվում է Ահմադի կուսակիցների շարքում և նրանից պարգև ստանում Անգեղակոթ գյուղը[20]: 1410 թվականի օգոստոսին Ահմադը պարտություն է կրում և սպանվում Կարա-Յուսուֆի կողմից: Ջելայիրյաններին աջակցողները պատժվում են: Յուսուֆը բռնագրավում է Սմբատ իշխանի կալվածքները. «էառ զՈրոտան ի Սմբատայ իշխանէ»,—հայտնում է Թ. Մեծոփեցին[21]: Եվ Սմբատ իշխանը ստիպված է լինում պատսպարվել Վրաստանում: 1412 թվականին, իր Բեշքեն որդու հետ միասին, նա հիշատակվում է որպես Գորիի մոտ գտնվող Աֆխացիխան գյուղաքաղաքի իշխան: Այստեղ շարադրված մի հիշատակարանում Մելքիսեդեկ գրիչը հայտնում է, որ ձեռագիրն ընդօրինակել է «իշխանութեան տեղոյս (Աֆխացիխէի) պարոն Սմբատի և որդւոյ նորին պարոն Բէշքէնի, որ ի յաստմանէ չարին վտարեցան ի հայրենեաց իւրեանց» (ԺԵ, I, 133):

Սմբատ իշխանը կնքում է իր մահկանացուն օտարության մեջ՝ 1412—1414 թթ. միջոցին: 1415 թ. Տաթևում գրված մի ձեռագրում, որպես տեղի իշխաններ, հիշատակվում են սրա որդիները՝ Բեշքենն ու Շահը: Ուստի հավանաբար հայրը՝ Սմբատ իշխանը, մեռել էր այդ թվականից առաջ (ԺԵ, I, 653): Մատթեոս Մոնոզոնը 1417 թ. Գանձասարում շարադրած հիշատակարանում Սմբատի մասին գրում է. «Քանզի այն, որ կայր մնացեալ շառաւիղ տանն Բիւրթելեանց՝ ...որոյ անուն Սմբատ կոչիւր, և անդ (ի Վրաստան) ի յօտարութենէն վախճանեցաւ» (ԺԵ, I, 194):

Սմբատ Բուրթելյանը մեծ հավանականությամբ ամուսնացած է եղել վրացուհի մի իշխանուհու հետ, այդ ամուսնությունից ծնված որդիներից տեղեկություն ունենք 4-ի մասին. մեկը 1407 թ. մահմադական ժամանակին զոհ գնացած պատանին է, որի անունն իսկ չի պահպանվել, մյուսներն են՝ Բեշքենը, Իվանե-Սահիանոսը և Շահը: Բայց մինչև սրանց անդրադառնալը անհրաժեշտ է ի մի բերել Իվանեի մյուս որդու՝ Գորգուն իշխանի գործունեությունը լուսաբանող հատուկենտ վկայությունները:

ԳՈՐԳՈՒՆ ՈՐԴԻ ԻՎԱՆԵ ԲՈՒՐԹԵԼՅԱՆԻ

Գորգունի անունը, իր հոր անվան պես, տատադարձված ենք գտնում տարբեր ձևերով՝ Գորգուն, Գորգոն, Գուգուն, թերևս նաև Գօրգունէ:

Սամուել Անեցու «Ժամանակագրության» շարունակողներից մեկը, ՊԼԵ (1386) թվականի տակ, պատմում է հետևյալը. «Թուրքն էառ զբերդն Որոտան, և մեծ վարդապետն Կախիկ գնաց փախստական ի Շարայ, և պարոն Գօրգունէն դարձեալ եղև»[22]: Այս ուշագրավ տեղեկությունը Հր. Աճառյանի կողմից հասկացվել է այն իմաստով, որ «Սրա (իմա՝ Գորգուն իշխանի) ձեռքից վշտամահ

20 Նույն տեղում, էջ 72—73:

21 Նույն տեղում, էջ 34:

22 Սամուէլի Կահանայի Անեցւոյ. Հաւաքմունք ի դրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 170:

եղավ Հովհան Որոտնեցին»[23]*։ 1386 թվականի այս վկայությունը միակն է, ուր Իվանե Բուրթելյանի Գորգուն որդին հիշատակված է որպես կենդանի, կամ քիչ առաջ մեռած անձնավորություն։*

XV դարի հիշատակարանների ու Թ. Մեծոփեցու «Պատմության» մեջ մի երկու անգամ դարձյալ հանդիպում ենք Բուրթելյան այս իշխանի անվանը, բայց արդեն՝ նրա Տարսայիճ որդու կապակցությամբ։ Մեծոփեցին, օրինակ, հայտնում է, որ Սմբատ և Բուրթել իշխանների հետ մեկտեղ Բամուրյան տիրակալ Միրզա-Օմարը բռնի հավատափոխ է արել նաև վերոհիշյալ Տարսայիճին («Զտէրն եղեգնաց Տարսայիճ անուն՝ զորդի Գորգոնին ուրացուցին»[24]*), իսկ Գրիգոր Ախալցխացի գրիչը, 1419 թ. շարադրած իր հիշատակարանում, Բուրթելյանների այս ճյուղի հաջորդականության մասին այսպիսի ցուցում է տալիս. «...պարոն Տարսայիճին, որդւոյ Գուգունին, որդւոյ Ինանիկին, որդւոյ Բուրթէլին» (ԺԵ, I, 656)։ Այս վկայություններից պարզվում է, որ պարոն Գորգունը իշխել է եղեգնաձորում։*

Այժմ դառնանք Սմբատ իշխանից սերվող պայազատներին։

ԲԵՇՔԵՆ ՈՐԴԻ ԻՎԱՆԵ ԲՈՒՐԹԵԼՅԱՆԻ

Սրա անվանն առաջին անգամ հանդիպում ենք 1406 թ. Տաթևում շարադրված մի հիշատակարանում, ուր ասված է, որ ձեռագրի ընդօրինակությունը կատարվել է «յիշխանութեան պարոն Սմբատին և որդոյ նորին Բէշքէնին և Իւանէին» (ԺԵ, I, 58)։

1410 թվականից հետո, իր հոր հետ միասին, Բեշքենն էլ հայրենազուրկ է լինում, վտարվում Սյունիքից ու պատսպարվում Վրաստանում։ 1412 թվականին, ինչպես գիտենք արդեն, նա ևս հիշվում է որպես Աֆխազիխի դյուղաքաղաքի տեր («իշխանութեան տեղոյս պարոն Սմբատի և որդւոյ նորին պարոն Բէշքէնի») (ԺԵ, I, 133)։

Սմբատը, տեսանք, որ վախճանվում է «ի յօտարութեանն» (Վրաստանում), բայց նրա որդիներից երկուսը, Մատթեոս Մոնոզոնի ստուգապատում տվյալներով, «եկին ի հայրենիս իւրեանց, և ոչ են տեարք իշխանութեանն իւրեանց, այլ ընդ ձեռամբ անօրինաց» (ԺԵ, I, 194)։ Երկու այդ որդիներից մեկը, անտարակույս, Բեշքենն է, մյուսը՝ Շահը. այդ մասին է վկայում Հովհաննես գրիչը, որ 1415 թվականին Տաթևում շարադրած իր հիշատակարանում գրում է. «Իշխանութեան տեղոյս մեծաւորմի Բէշքէնի, հարազատով Շահիւ» (ԺԵ, I, 653)։ Մի քանի տարի անց՝ 1422 թվականին, նույն Տաթևում, նա հիշատակվում է որպես այդ վայրի իշխան՝ միայնակ, առանց իր եղբայր Շահի ընկերակցության (ԺԵ, I, 292)։

Բեշքենի որդի Ռուստամը, Կարա-Կոյունլու Սքանդար փադիշահի մերձավոր պինակիցներից մեկը լինելով, պետական բարձր պաշտոններ է զբաղեցրել (այդ մասին՝ քիչ հետո)։ Սքանդարի իշխանության տարիներին (1421—1437) Բեշքենին հաջողվում է, անշուշտ իր Ռուստամ որդու աջակցությամբ, վերա-

---

23 Հայոց անձնանունների բառարան, հտ. Ա, էջ 493։ Բացատրված չէ, որ տարածև գրանցված այս (Գորգուն) անձնանվան ուղղական հոլովաձևերից մեկն էլ եղել է Գօրգունէ (համ. Իւանէ, Կուրիկէ, Ստեփանէ և այլն)։ Այդ դեպքում պետք է ենթադրել, որ ժամանակագիրն ակնարկել է պարոն Գորգունի վշտամահ լինելու մասին՝ Բուրթելի կողմից իր կալվածքների զրավման կապակցությամբ։

24 Թ. Մեծոփեցի, էջ 68։

ռանալ Բուրթելյան ռան կալվածքների մի մասը։ 1428 թվականին, օրինակ, Նրան էր պատկանում նաև Անդեղակոթ գյուղը (ԺԵ, I, 382), իսկ 1429-ի մի պաշտոնական գրության մեջ Բեշքենը հիշատակվում է իր մի քանի վասալների հետ միասին[25]։

Գրությունը, սակայն, փոխվում է 1434—1435 թվականից հետո, երբ Լանկ-Թամուրի Շահռուխ որդին, երրորդ անգամ լինելով, արշավից Կարա-Կոյունլու Ջքանգարի վրա և պարտության մատնից նրան։ Թամուրյանները ներխուժում էն նաև Սյունիքի սահմաններր և ավերածություններ գործում. Բեշքենը, իր Ռուստամ որդու հետ միասին, դարձյալ ստիպված է լինում թողնել իր հայրենական կալվածքները և, հաղարավոր հպատակների գլուխ անցած, գաղթել վրաց տիրապետության տակ գտնվող Հյուսիսային Հայաստանի շրջաններր։

Վրաց Ալեքսանդր թագավորը, որ Բեշքենի փեսան էր, Լոռու բերդն իր շրջակայքով հանձնում է իր աներոջը։ Սյունիքից Լոռի կատարված մեծ գաղթի մասին ուշագրավ տողեր է գրանցել Թովմա Մեծոփեցին. «...Առեալ (Բեշքենն) զամենայն կողմն Սիւնեաց և զամենայն գաւառս շրջակայ մերձ ի Սիւնիս, ասելի քան զՋՌ. (6000) քրիստոնեա առեալ, ազատեալ ի Շահռուհէն, հասոյց ի կողմն վրաց։ Եւ թագաւորն առ նոսա պատուական, տայ նմա զդղեակն Լոռու»[26]։

Որպես Լոռու տիրակալ Բեշքենը և Ռուստամը հիշատակվում են նաև 1437 թ. Սանահնի վանքում Շմավոն վարդապետի շարադրած հիշատակարանում. այնտեղ կարդում ենք. «Իշխանութեան տեղոյս իշխանաց իշխանին պարոն Բէշքենին՝ շառաւիղին Օրբելեանց, և որդոյ իւրոյ պարոն Ռոբատամին» (ԺԵ, I, 468)։

Մի տարի անց՝ 1438 թվականին, վրաց Ալեքսանդր թագավորը, երկյուղ կրելով, որ «Հայք առ նա ժողովեսցին և աւերումն լինի կողման վրաց», թուղթ է տալիս իր աներոջը՝ Բեշքեն իշխանին[27]։

Բեշքենի զավակներից տեղեկություն ունենք երեքի մասին. Ռուստամից բացի ունեցել է 1438-ին հազիվ 10 տարին բոլորած մանկահասակ մի որդի[28], որի անունը չի հաղորդված և որի հետագա կյանքի մասին վկայություններ չկան։ Դուստրը, որի անունը նույնպես չգիտենք, ինչպես ասացինք, եղել է վրաց Ալեքսանդր թագավորի (1412—1443) կինը։

---

25 Տարբ բերում ենք այդ գրությունը. «Յանուն աստուծոյ ես՝ Բեշկէն, որդի մեծի իշխանին Սմպա[տա]յ, տեսի զԱւետարանս, որ բաղում ժամանակ ի մեր երկիրս էր ու գնել էր Տանծիկանց Աւագն, երեկ Թումայ եբէց Սիւնյվանից, թէ այս մեր եկեղեցուն է, Սիւնյվանից թալան է տարել, ու երդումն կերաւ ես Բեշքէն, որդի պարոն Սմպատին, տուի մեզ արեշատութեան ու մեր նախնեցն յիշատակ ի Սիւնեց վանից, որ Սիւնիվանք ասեն։

Ես Յովհաննես վարդա[պ]ետ, որ զդիրս գրեցի վկա եմ։ Ես Յովանէս եկեղեցւոյն Վաղատեայ [վա]նացն վկայ եմ։ Ես Գրիգոր որդի Լեշին վկա [եմ], ես Պաշարաթ՝ որդի էլէկ[ս]անին Լորնցի վկայ եմ, ես էլտուբ՝ որդի Փալիկին վկայ եմ, ես Ափղազ՝ որդի Սեբիկայ, որ մեր հայրն ու հարևորայրն Աւաքն գնել էր, մեք էլ յետ տուինք, մեք ենք Դաւայքարու տէր՝ տուինք ի եկեղեցին Սիւնէվանից, ոչ ում խաւաք ու զրոյց չկայ, աստուած շնհաւոր առնէ։

Սմբատ արևդ, Բուսական հայոց ՊՀԸ. (1429), Դաւայքարն պատժաւք լինի» (ԺԵ, I, 392)։

26 Թ. Մեծոփեցի, էջ 117—119։ Տպագիրն այստեղ աղավաղված է, սրբագրում ենք մի շարք ձեռագրերի բաղդատությամբ։

27 Նույն տեղում, էջ 118։

28 Նույն տեղում, էջ 119։

ԻՎԱՆԵ-ՍՏԵՓԱՆՈՍ ՈՐԴԻ ՍՄԲԱՏ ԲՈՒՐԹԵԼՅԱՆԻ

Սմբատ իշխանի այս որդին մեզ արդեն ծանոթ է 1406 թ. Տաթևում շարադրված հիշատակարաններից, ուր նա հիշված է հոր և եղբոր հետ միասին, որպես տեղի իշխաններից մեկը («յիշխանութիւնն պարոն Սմբատի և որդոց նորին Բեշքենին և Իւանէին»)։ Այդ ժամանակ նա դեռևս աշխարհական էր ու արդեն ընտանիք կազմած։ (Իվանեի որդի պարոն Սմբատի տարիները հետո թողած մի հիշատակագրությունից հայտնի է դառնում նաև նրա կնոջ՝ Մարգարիտա-Խաթունի անունը)։

Ե՛րբ է Իվանեն եկեղեցականի սքեմ հագել ու դարձել Ստեփանոս Սյունյաց եպիսկոպոս, առայդ չգիտենք, գուցե 1410-ին (այս մասին տե՛ս Սյունյաց եպիսկոպոսանների ժամանակագրությանը նվիրված բաժնում)։ 1419 թ. Հերմոնի վանքում շարադրված արժեքավոր մի հիշատակարանի մեջ նրա մասին կարդում ենք. «Եւ ի հայրիարքութեան այսմ նահանգի տէր Ստեփանոսի՝ մանկանուն Իւանէի, որդի պարոն Սմբատայ և եղբայր պարոն Բէշքէնի» (ԺԵ, I, 656)։

Իվանե-Ստեփանոս պարոնտերը վերջին անգամ հիշատակված է 1421 թվականին՝ Տաթևի վանքում («Ի յառաջնորդութիւն տէր Ստեփաննոսի ի գարմէն Պուռիչեանց»). մեռել է հենց նույն թվականին (ԺԵ, I, 256) վրաստանում, ուր գնացել էր իր մորը տեսության։ Թումա գրիչը նրա վախճանի մասին գրում է. «Յառաջնորդութեան տանս Սիսականայ տէր Ստեփաննոսի՝ որդւոյ պարոն Սմբատին, որ և յայսմ ամի գնացեալ ի տունն Վրաց առ մայրն իւր՝ փոխեցաւ ի Քրիստոս» (ԺԵ, I, 292)։

Իվանե-Ստեփանոս պարոնտերի որդուն ու սերնդին քիչ հետո անդրադառնալու խոստումով, երկու խոսք ասենք Սմբատ իշխանի մյուս որդու՝ Շահի մասին։

ՇԱՀ ՈՐԴԻ ՍՄԲԱՏ ԲՈՒՐԹԵԼՅԱՆԻ

Շահը, իր ավագ եղբայր Բեշքենի հետ միասին, հոր մահվանից հետո վերադարձել է Սյունիք։ 1415 թվականին Տաթևում գրված մի հիշատակարանից պարզվում է, որ երկու այս եղբայրները այդ ժամանակ գտնվում էին Սյունիքում («Իշխանութեան տեղոյս մեծատոհմի Բէշքէնի, Հարազատով՝ Շահիւ»)։ Մի քանի տարի անց Բեշքենը մենակ է հիշվում որպես իշխան Տաթևի, հետագայում նաև այլ կալվածքների։ Պետք է ենթադրել, ուրեմն, որ Շահը երկար չի մնացել Սյունիքում, այլ վերադարձել է Վրաստան, ուր ապրում էր դեռևս իր մայրը (հավանաբար ազգությամբ վրացուհի)։

Բեշքեն իշխանի եղեռնական մահվան պատմությունը շարադրելիս Թումա Մեծոփեցին տխրությամբ արձանագրում է, որ այդ ժամանակ (1438 թ.) նրա Շահ անունով եղբայրը ողջ էր և հանգիստ ապրում էր Վրաստանում՝ «վարժեալ և անեալ առ որովայնամոլ ազգին Վրաց։ Եւ անարի գտեալ և ոչ ի խնդիր ելեալ հայրենի գաւառին»[29]։

---

29 Թ. Մեծոփեցի, էջ 119։

ՏԱՐՍԱՅԻՃ ՈՐԴԻ ԳՈՐԳՈՒՆ ԲՈՒՐԹԵԼՅԱՆԻ

Տարսայիճն իշխում էր Եղեգիսում. հիշատակված է այն իշխանների շարքում որոնք բռնությամբ մահմեդական դարձվեցին Լանկ-Թամուրի Բոռ Միրզա-Օմարի կողմից, 1403 թվականին[30]*: Թամուրյանների պարտությունից հետո Տարսայիճը նույնպես դառնում է քրիստոնեական հավատքի. «Մարդիկ,— գրում է Ք. Մեծոփեցին,—որք յաւուրս չաղաթայիին ի հաւատոյ ուրացեալք էին, նկին ի հաւատս՝ Բուրթէլն Որոանայ, Տարսայիճ՝ Եղեգեաց»*[31]*: 1415 թվականին Տարսայիճի մասին ուշագրավ տվյալներ է գրանցել Գրիգոր Ախալցխացի գրիչը, հայտնելով, որ հենց նույն տարում նա զրկվեց հայրենական իր կալվածքներից ու թշվառ վիճակի մեջ է գտնվում: «Գրեցաւ գիրքս, որ կոչի Հարցմունք,—կարդում ենք վերոհիշյալ գրչի հիշատակարանում,—...ի հայրապետութեան աւուրք ուխտիս և գաւառիս պարոն Տարսայիճին, որդոյ Գուգունին, որդոյ Ինանիկին, որդոյ Բուրթէլին: Զի յայսմ ամի յոյժ ի նեղութիւն, ի տառապանք և յաղքատութիւն անկաւ, զի նա, որ բոլոր գաւառիս իշխէր, այժմ ոչ միոյ ագարակի կամ գեղջ ոչ կարէ իշխել, զի խլեալ և յափշտակեալ էին ի նմանէ զամենայն գետղ և զքաղաք, զվանք և զանապատ ի նմանէ. և նա փախեալ և թագուցեալ էր ի ծերպս վիմաց և ի մայրիս, մինչև այց արասցէ նմա տէր աստուած և յառաջին փառան և իշխանութիւնն դարձուսցէ ինայ» (ԺԵ, I, 656):*

Գրչի այս բաղձանքը չի իրականացել. ճիշտ է, Տարսայիճի որդիներից Սմբատը դարավերջի մի հիշատակարանում (տե՛ս ստորև) մեծարված է «իշխանաց իշխան» տիտղոսով, բայց չունենք որևէ վկայություն հավաստելու, որ Տարսայիճին կամ նրա ժառանգներին հաջողվել է հետագայում վերստանալ իրենց կալվածքները Եղեգիսում:

«Իշխանաց իշխան» այդ Սմբատը հիշատակված է իր որդի՝ Վայոց-ձորի արքեպիսկոպոս Եղիշեի կապակցությամբ՝ Եղեգիս քաղաքում ընդօրինակված մի ավետարանի հիշատակարանում, որի մեզ հետաքրքրող մասը բերում ենք ստորև. «Արդ, գրեցաւ սուրբ Աւետարանս ի թվականիս Հայոց ՋԽԴ. (1495), ի կաթողիկոսութեան տեառն Սարգսի ...և վերագիտող այսմ նահանգի (իմա՛ Վայոց ձորի) պարոնաէր Եղիշա արքեպիսկոպոսի, որդոյ իշխանաց իշխանի պարոն Սմա[ատ]ա, որդոյ մեծին Տա[ր]սայիճի»[32]*:*

Այսքանով սպառվում են Տարսայիճի հաջորդների մասին մեզ հայտնի աղբատիկ տվյալները:

ՌՈՒՍՏԱՄ ՈՐԴԻ ԲԵՇՔԵՆ ԲՈՒՐԹԵԼՅԱՆԻ

Ռուստամը մեզ արդեն մասամբ ծանոթ է Բեշքենի կյանքի տարեգրությանը նվիրված հատվածից: XV դարի Հայոց պատմության մեջ կարևոր դեր կատարած մի գործիչ է: Սքանդար Կարա-Կոյունլուն ներքնապես ուժեղ պետություն ստեղծելու իր ծրագրերն իրագործելու ճանապարհին ինչ-որ չափով հենվում էր նաև հայ իշխող վերնախավի վրա. իրեն կոչում էր «Հայաստանի թագավոր» (Շահ-ի արմեն), պետական բարձր պաշտոններ էր շնորհում հայ ֆեո-

30 Ք. Մեծոփեցի, էջ 68:

31 Նույն տեղում, էջ 73:

32 Ք. Սարգիսյան, *Մայր ցուցակ հայ ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վենետիկ*, հտ. Ա, 1914, էջ 585:

դալական տներից սերված որոշ գործիչների, իր զորքի մեջ հավաքագրում էր նաև հայ ռազմիկների և այլն։ Ռուսաստամ Բուրթելյանը, անտարակույս իր արտակարգ ընդունակությունների շնորհիվ, դարձել էր Սքանդարի մերձավոր գործակիցներից մեկը և առաջ քաշվել պետական բարձր պաշտոնների։ 1431 թվականին, լինելով հավանաբար Երևանի նահանգի կառավարիչ, Ռուսաստամը էջմիածնի վանքին վաճառքի անվան տակ վակֆ արեց 7 խոշոր գյուղեր, որով և տնտեսական հող ստեղծեց հայ եկեղեցու հոգևոր կենտրոնը Կիլիկիայից մայր հայրենիք՝ էջմիածին տեղափոխելու համար։ Նվիրատրված այդ գյուղերի պարսկերեն ընդարձակ կալվածագրում շատ ուշագրավ են Ռուսաստամին տրված տիտղոսները, որոնք ինքնին ցուցանիշ են այն բարձր դիրքի, որ գրավել էր Բուրթելյան այդ իշխանապետը Կարա-Կոյունլուների վարչական աստիճաններում։ Այնտեղ ասված է. «Վեհանձնյա էմիր և իշխան, մեծափառ, ազնվաշուք, բարձրաստիճան, բարձրագույն, վստահելի ծառա և ամենաազնիվ վեզիր, նորին կայսերական մեծություն սուլթանի մտերիմ, ամենազոր, արքայական պետության սիրելի, մեծագույն արքունի խորհրդական, արքաներից ամենից իմաստունի վստահելի, որի անձը վեր է ամեն տեսակ նկարագրությունից ու գովաբանքից, հավիտենականության տեր աստուծո ողորմածությամբ իշխանության և կրոնի քաջահաղթ էմիր Ռուսաստամ, որդի էմիր Բհշքենի, որդի էմիր Սմբատի»[33]։

Պետք չէ տարակուսել, որ Սքանդարի իշխանության տարիներին Ռուսաստամի բարձր հեղինակությամբ Սյունյաց Օրբելյանները և, մասնավորապես, Ռուսաստամի հայր Բհշքենը, վերստացել էին իրենց կալվածքների մի մասը և բարեկեցիկ վիճակ ստեղծել իրենց համար։ Դրությունը փոխվեց արմատապես Սքանդարի պարտությունից ու սպանությունից հետո։ Գիտենք արդեն, որ 1437 թվականին Ռուսաստամը, պետական գործերից հեռացած ու պատիվներից զրկված, պատսպարվել էր Լոռիում։ Հետագայում սակայն նա կրկին վերադարձել է Սյունիք։ 1451 թվականից պահպանվել է մի պարսկերեն կալվածագիր, որի համաձայն նույն Ռուսաստամը Տաթևի վանքին է վաճառում իրեն պատկանող Սվարանց, Տաշու, Աղանց ու Տանձատափ գյուղերը։ Բայց այս փաստաթղթում նա հիշատակվում է առանց բազմահարկ տիտղոսների, սոսկ որպես՝ «հայ ամիրզադա Ռուսաստամ, որդի ամիր Բհշքենի, որդի Սմբատի»[34]։

Ամիր Ռուսաստամի կյանքի հետագա տարիների մասին տեղեկություններ չեն պահպանվել։ Մեծ հավանականությամբ նա ունեցել է որդիներ, զուտ ոչ հայ և ոչ քրիստոնյա կնոջից կամ կանանցից։

Դառնանք այժմ Ռուսաստամի հորեղբայր՝ պարոնտեր Իվանե-Ստեփանոսի անընդին։

ՍՄԲԱՏ ՈՐԴԻ ԻՎԱՆԵ-ՍՏԵՓԱՆՈՍ ԲՈՒՐԹԵԼՅԱՆԻ

Այս Իվանե-Ստեփանոսը, տեսանք արդեն, որ մինչև Սյունյաց եպիսկոպոս պառնալը ամուսնացած է եղել և ունեցել Սմբատ անունով մի որդի։ Այս պարոն Սմբատը 1471 թվականին ստանում է մի ավետարան, որի հիշատակա-

33 Հ. Փափազյան, Մի էջ Արևելյան Հայաստանի քաղաքական կյանքի պատմությունից («Տեղեկագիր», 1955, № 8, էջ 86)։

34 Նույն տեղում։

բանում տվյալներ է հաղորդում իր նախնիների մասին. «Ես՝ պարոն Սմբատս,— գրում է նա,— ած դկենսաբեր Աւետարանս յիշատակ ինձ և ծնողաց իմոց՝ գհայրն իմ Սահփանոս, մայրն իմ Մարգարիտ-Խաթուն, պապան իմ Սմբատ, զմեծ պապն Իվանիկ» (ԺԵ, II, 317):

Կարելի է ենթադրել, որ հենց այս Սմբատն է հիշատակված Հերհերի մոտ գտնվող ավերակ գյուղատեղում կանգնեցված մի խաչքարի արձանագրության մեջ, ուր ասված է. «Թվ. ՉՃԼ. (1489), կամաւն աստուծոյ ես խաչատուր երէցս... կանգնեցի զխաչս Հոգ(ոյ) փրկութիւն պարոն Սմբատին»:

Այս գրությունը խորհրդածությունների տեղիք է տալիս. նախ, ինչո՞ւ է խաչքարը կանգնեցված ոմն խաչատուր երեցի կողմից, որը, կարծես, ազգակցական կապ չունի պարոն Սմբատի հետ, և ապա Սմբատի ի՞նչ մեղքերն ի նկատի ունի արձանագրություն կազմողը՝ աղերսելով նրա հոգու փրկությունը: Կարելի՞ է, արդյոք, հետևցնել, որ հենց այս Սմբատով է սկսվում Սյունյաց Օրբելյանների հավատափոխության պրոցեսը, և որ նա կնքեց իր մահկանացուն՝ դրանց առաջինը մահմեդականություն ընդունած Բուրթելյան պայազատներից:

Այս հարցին անկարող ենք պատասխանել, բայց տեղեկություն ունենք «Սմբատի որդի Ռուսթեցի (իմա՝ Որոտնեցի) Սոհրաբ» անունով մի մահմեդականի մասին, որը 1508 թվականին, որպես վկա, իր ստորագրությունն է դրել Տաթևի վանքապատկան գյուղերի Շամախոն վարդապետին պատկանելու իրողությունը հավաստող մի վակֆնամակի տակ: Գուցե այդ Սոհրաբը որդին է հենց 1489 թ. մահացած այս Սմբատի, բայց կարող է նաև լինել Ռուստամի սերնդից (թոռը՞): Ռուստամ ու Սոհրաբ անունները բնական են ազգակցական ավելի սերտ աղերս ունեցող անձանց համար: Սոհրաբի ստույգ տեղը Բուրթելյանների տոհմածառում առկախ թողնելով, հայտնենք, որ նրա հետագա ժառանգներին՝ «Բուրթելյունների համայնք» جاعت بورتللو անվան տակ, բազմիցս հանդիպում ենք XVI—XVII դարերի փաստաթղթերում. այդ բուրթելյունները, ազդային իրենց դիմագծերը կորցրած, հաճախ վիճի են բռնվել Տաթևի վանքի հետ և, միջոցների ընտրություն չհատարելով, փորձել են բռնագրավել վանական կալվածքները[35]:

Այսպիսով, XV դարի վերջերին Սյունյաց Օրբելյանների Բուրթելյան ճյուղը, որ շուրջ երկու դար հայրենի աշխարհին պարգևեց աշխարհական ու հոգևորական նշանավոր գործիչներ, օտար տիրակալների անլուր բռնություններին ենթարկվելով՝ ազգային դիմահղձման է ենթարկվում և իջնում Հայոց պատմության բեմահարթակից:


* * *

Որպես աշխարհիկ ու հոգևոր տերեր XIV—XV դարերում Սյունյաց աշխարհում տիրակալած Օրբելյան իշխանների Բուրթելյան ճյուղի պայազատների մասին մեր հետազոտության արդյունքները հնարավորություն են ընձեռում կազմելու այդ գերդաստանի ըստ հնարավորի ամբողջական տոհմածառը:

Հարկ է նշել, սակայն որ ձեռագրական հիշատակարանների, վիմական արձանագրությունների և այլ աղբյուրների մեջ կարող են դեռևս հայտնաբերվել նոր տվյալներ, որոնց օգտագործմամբ հնարավոր կլինի լրացնել տոհմածառը աննշան դեր կատարած մի քանի նոր անուններով, ինչպես և ճշգր-

[35] *Բուրթելյունների մասին այս տվյալները քաղել ենք Հ. Փափազյանի «Մատենադարանի պարսկերեն կալվածագրերը» տպագրվող աշխատությունից:*

ԲՈՒՐԹԵԼՅԱՆՆԵՐԻ ՏՈՀՄԱՏԱՌԸ



աումներ կատարել Թվականների մեջ: Որոնավանքում պահպանված մի տապանաքարի արձանագրության մեջ, օրինակ, հիշատակված է ոմն «բարեպաշտ իշխան արքայազուն Սմբատ», վախճանված 1430 Թվականին: Սրկղունքում 1461 թ. շարադրված մի հիշատակարանում, Պռոշյան իշխան Ջումայի հետ մեկտեղ, տեղեկություն է գրանցված նաև ոմն իշխան Ինանիկի մասին (ԺԵ, II, 157): Ձենք տարակուսում, որ այդ Սմբատն ու Ինանիկը նույնպես Բուրթելյան տիրապետանից են սերված, բայց անհրաժեշտ տվյալներ չունենք պարզելու նրանց ծնողների անունները և տեղ տալու նրանց Բուրթելյանների տոհմածառի մեջ: Ավելացնենք նաև, որ հետագա դարերի աղբյուրներում կան ու դեռևս կարող են գտնվել առույգ կամ շինծու տվյալներ իրենց Օրբելյան իշխանների շառավիղ համարող ընտանիքների մասին[36]: Այդ կարգի տվյալների հավաքումն ու դասակարգումը՝ մեր նպատակից դուրս ենք համարել:

Կից էջի վրա տալիս ենք Բուրթելյանների տոհմածառը, յուրաքանչյուր անձնանվան տակ նշանակելով ծայրային այն Թվականները (կամ Թվականը), որ գտել ենք նրա մասին սկզբնաղբյուրներում:

* * *

Այժմ, մասնավոր քննության նյութ դարձնելով, փորձենք որոշել Սյունյաց մետրոպոլիտների հաջորդական կարգը XIV—XV դարերում՝ Բուրթելյան գլխադաստանի գործունեության երկդարյա ժամանակաշրջանում:

Ղ. Ալիշանը «Սիսականի» մեջ՝ «Եպիսկոպոսունք Սիւնեաց» խորագրի տակ (էջ 20—21) տալիս է այսպիսի ցանկ.

— 1310 Յովհաննէս Օրպէլ

— 1329 Ստեփանոս Օրպէլ (վրիպակ է, պետք է լինի Տարսայիճ), որդի Ջալալայ

— 1337 Սարգիս և Ներսէս

. . . . . .[37]

— 1407 Առաքել քեռորդի Գր. Տաթևացւոյ

— 1422+Ստեփանոս, որդի Սմբատայ Օրբելեան

— 1464+Ստեփանոս միւս, որդի Իւանէի Որոտնեցւոյ

— ...+Շմաւոն յաղագս տանէ

— 1483+Ստեփանոս, եղբօրորդի Շմաւոնի

— 1495+1522 Եղիշէ Օրպելեան:

Ալիշանի հաղորդած տվյալների վրա որոշ հավելումներ կատարելով մի ցանկ էլ կազմել է Արտակ Եպս. Սմբատյանը, «Համառօտ պատմութիւն Տաթևի վանքի» իր ուսումնասիրության մեջ, առանց սկզբնաղբյուրների վկայության[38]:

Ավելի հանդամանորեն Սյունյաց եպիսկոպոսների հաջորդական ցանկը կազմելու աշխատանքով զբաղվել է Նորայր Եպս. Պողարյանը իր «Տաթև» ուսումնասիրության մեջ[39], յուրաքանչյուր անձնանվան դիմաց տալով նրա

---

36 Այդպիսի մի տվյալ, շարադրված կիսագրագետ մեկի կողմից XVIII դարում, հրատարակել է Ղ. Ալիշանը «Սիսականի» մեջ (էջ 97):

37 Յոթնեսունամյա այս բացատի կապակցությամբ Ալիշանը գրում է. «Ոչ յիշին և յաջորդք ասցա (իմա՝ Սարգսի և Ներսեհի—Լ. Խ.) մինչև ի սկիզբն ԺԵ դարու՝ ցամս 70» («Սիսական», էջ 21):

38 Տե՛ս «Տաթև» տարեցույց, 1930, էջ 276—351:

39 Ն. Վ. Պողարյան, «Տաթև» («Սիոն» 1950, Յունիս-յուլիս, էջ 197—202):

աթոռակալության իրին հայտնի թվականները, նաև համառոտակի նշելով աղբյուրները (ըստ մեծի մասին Հր. Ա.Ճաուշյանի «Անձնանունների բառարանի» ընձեռած տվյալներով)։

Տանոթանանք նաև այդ ցանկին (առանց նշելու աղբյուրները).

— Յովհաննէս նպս. Օրպէլ, 1310—1324

— Ստեփանոս նպս. Օրպէլ, 1329

— Շմաւոն նպս., 1332

— Սարգիս արքեպիսկոպոս, 1337

— Յովհաննէս Որոտնեցի, 1375՞—1386, որդի Իւանէ Օրբելեանի

— Գրիգոր Տաթևացի, 1336—1407

— Առաքել նպս. Սիւնեցի, 1407—1416՞

— Ստեփանոս նպս. 1417՞—1422, որդի Օրբելյան Սմբատի

— Յովհաննէս փակակալ, 1422՞—1463՞

— Ստեփանոս նպս. 1464—1472, որդի Որոտնեցի Իւանէի՞

— Շմաւոն նպս. 1472՞, յաղտատ տանէ

— Յովհաննէս նպս. 1478

— Ստեփանոս նպս. 1478՞—1485, եղբորորդի Շմաւոն նպս.-ի

—Եղիշէ նպս. Օրբելեան, 1495—1522

Ալիշանի և Պողարյանի (Սուվական) այս ցանկերը՝ վերանայման ու ճշգրտման խիստ կարիք են զգում։

Ուրիշի կամ այլ առիթի թողնելով հարցի մանրակրկիտ ու ամբողջական ուսումնասիրությունը, հիմնականում ձեռագրական հիշատակարանների մատուցած տվյալներով, փորձելու ենք ավելի ճշգրտված ցանկ կազմել XIV—XV դարերում աթոռակալած Սյունյաց եպիսկոպոսների։

Հովհաննես-Օրբել. նշանավոր պատմագիր՝ Ստեփանոս Օրբելյանի կենդանության օրոք (Ստեփանոսը մեռել է 1303 թվականին[40]) Սյունյաց մետրոպոլիտ է օծվել նրա հորեղբայր Լիպարիտ Օրբելյանի որդի Հովհաննես-Օրբելը։ 1302 թվականի մի պաշտոնական գրության մեջ նա իրեն կոչում է. «Տէր Յովհաննէս յաղդէ Աւրպելեանց, պռատաւորեանտէս Հայոց Մեծաց և մետրոպոլիտ Սիսական[ան] նահանգի» (ԺԴ, 7)։ Վերջին անգամ հիշատակված է որոշ-ինորեն 1323 թվականին՝ «Տէր Յովհաննէս մականուն Աւրպէլ, մետրոպոլիտ և այցելու Սիւնեաց երկոտասան գաւազանաց» (ԺԴ, 183)։ Երբ է վախճանվել՝ չգիտենք։

Ստեփանոս-Տարոայիճ. որդին է Ջալալ Օրբելյանի, եղբորորդին Ստեփանոս պատմագրի։ Հոգևոր կոչում էր ընդունել 1314-ից առաջ. այդ թվականին, դեռևս «դեռաբողբոջ և լուսազարդ պատանի», նա հիշատակված է որպես «Տէր Ստեփանոս մականուն Տարսաիճ» (ԺԴ, 99,100)՝ աթոռակալ Սյունյաց (ԺԴ, 104)։ 1321—23 թվականներին ևս, Հովհաննես-Օրբելի հետ միասին, հիշատակված է որպես «վերադիտող տանս Սիւնեաց» (ԺԴ, 166)՝ «մանուկ տիւրք առեալ զաշտիճան արհիպիսկոպոսութեան» (ԺԴ, 183)։

Հովհաննես-Օրբելի մահվանից հետո (տարեթիվը անհայտ) միայնակ է վարել Սյունյաց մետրոպոլիտությունը. 1331 թվականին հիշատակված է որպես «տէր և վերատեսուչ գահերից և պլուխ արհիերից աթոռոյս Սիւնեաց՝

40 Ալիշանը մահվան տարեթիվ է համարում 1309-ը, որ անընդունելի է։

Տաթևոյ և Նորավանից և Յախացքարոյ, պետ երկոտասան գաւառաց» (ԺԴ, 231)։

Սարգիս մետրոպոլիտ—*Որդին է Հասան իշխանի, «որ էր յաղգէ և յազնէ մեծափառ իշխանաց տանն Սիւնեաց»։ Սրա եղբայր Իվանե իշխանը կոչված է «ամիրա և պետ երկրին Որոտան» (Հայրն է նշանավոր Հովհան Որոտնեցու)։*

Սարգիսը 1326 թվականին եղել է Վաղադնի վանքի վանահայր և այնտեղ կառուցել մի պանդոկ։ 1333-ին հիշատակված է որպես «աթոռակալ» Սյունյաց (ԺԴ, 257)։ Իսկ նույն թվականի մի այլ հիշատակարանում (Նոր Ջուղա, ձեռ. № 402) կոչված է արդեն արքեպիսկոպոս Սիւնեաց («Իշխանութեան պարոն Բուրթելին... և ի յարքեպիսկոպոսութեան մերոյ տէր Սարգսի»)։

1337 թվականից առաջ եղել է Երուսաղեմում, ուր ստացել է մի Սաղմոսարան (Երուսաղեմ, ձեռագիր № 1033), որի հիշատակարանում ուշագրավ տեղեկություններ է հաղորդում իր աղգականների մասին։ Նույն 1337 թվականին ստացել է նաև Մանրուսման մի ձեռագիր, որի հիշատակարանում կոչված է «Մեծ և ամենեղջանիկ մետրապոլիտն և արհիական գլուխն այսմ (Սիւնեաց) նահանգիս տէր Սարգիս»[41]։

Սրա աթոռակիցն է եղել ոմն տեր Ներսես. պահպանվել է Սարգսի ու Ներսեսի մանրանկար համատեղ պատկերը՝ 1337 թվականից («Սիամանտո», էջ 20)։ Ակդ տարեթվից հետո յոթանասունամյա անջրպետ կա, որ Ղ. Ալիշանը դատարկ է թողել՝ բազմակետեր դնելով, իսկ Արտակ եպս. Սմբատյանն ու Նորայր եպս. Պողարյանը լրացրել են Հովհան Որոտնեցու, Գրիգոր Տաթևացու և Առաքել Սյունեցու անուններով։ Սակայն Սարգիս մետրոպոլիտն և Հովհան Որոտնեցին շարունակական շղթա չեն կազմում, շուրջ 40-ամյա անորոշ ժամանակաշրջանով նրանք անջատված են միմյանցից Ն. Պողարյանի ցանկում։

Ահա այդ տարիների մի մասը պետք է տալ Ստեփանոս-Սուլթանշահ եպիսկոպոսին։

Ստեփանոս-Սուլթանշահ—*Սրա ինքնագիր հիշատակարանի հետ, շարադրված շուրջ 1366 թ., ծանոթացանք Բուրթելյան պայազատանների տոհմապրության բաժնում։ Վերհիշենք այստեղ, որ նա ներկայանում է որպես «տէր Ստեփանոս մականուն Սուլթանշահ»։ Այս մականունը հնարավորություն է ընձեռում նույնացնելու այս տեր Ստեփանոսին՝ «Տաղ տէր Ստեփանոսին Սիւնեաց եպիսկոպոսին» պոեմի նահատակ հերոսի հետ[42]։ Պոեմի տվյալներով Սյունյաց այս եպիսկոպոսը, մինչև հոգևոր կոչում ընդունելը, եղել է Թավրիզում՝ զինվորական ծառայության մեջ։ Ինչ-ինչ պատճառներով ապանել է իր խորթ մորը՝ Էլխութլուին, զժտվել հոր հետ։*

Ստեփանոսի աշխարհական անունն ի հայտ է գալիս այն տողերից, որ գրել է պոեմի հեղինակը որդեկորույս մոր բերանին. սա ողբում է վաղաթառամ իր որդուն՝ կոչելով. «Որդեակ իմ, որդեակ, Սալթանշայ» (տպագրված է

---

[41] *Dr. N. Karamianz*, Verzeichniss Armenischen Handschriften, Berlin, 1888, էջ 26։

[42] *Թերի պահպանված այս պոեմը Ա. Մնացականյանի աշխատասիրությամբ հրատարակվել է «Բանբերի» նախորդ հատորում («Բանբեր Մատենադարանի», № 8, 1967, էջ 291—317)։ Պոեմին անդրադարձել է նաև Գ. Խաչատրյանը («Պատմա-բանասիրական հանդես», 1965 թ., № 2, էջ 197—204)։ Պոեմի հերոսին նույնացնելով Իվանե Բուրթելյանի որդի Ստեփանոս-Սուլթանշահի հետ, հնարավորություն ենք ստանում քննարկելու ուշագրավ այդ ստեղծագործության շարժառիթը հանդիսացող ողբերգական դեպքերի ժամանակի, միջավայրի ու գործող անձանց հետ առնչվող վիճելի հարցերը՝ նոր լուսաբանությամբ։*

սխալ՝ «սալթան» և «շահ» ձևով, որպես առանձին բառեր)։ Նահատակության տարեթիվը չգիտենք, բայց պետք է եղած լինի 1466-ից հետո և 1477-ից առաջ։ Մեծ հավանականությամբ նա թաղված է Վայոց ձորի Հերմոնի վանքում. այնտեղ հանդչող նշանավոր անձինք հիշատակված են 1423 թ. մի ձեռագրի մեջ՝ այսպես. «Աստ (ի վանս Հերմոնի) հանգուցեալ կան Տիրայուր վարդապետն, Գրիգոր վարդապետն, Բարսեղ վարդապետն, տէր Սուլտանշէն...» (ԺԹ, I, 301)։

Հովհան Որոտնեցի, Կախիկ մականունով—Մնվել է 1313 թվականին, Որոտան գավառի Վազագին գյուղում։ Որդին է մեղ ծանոթ Իվանե իշխանի, որին Մեծոփեցին համարում է «ի զարմէ առաջին իշխանացն Սիւնեաց, յորմէ վասակն էր»։ 1337 թվականին Որոտնեցին նորընծա քահանա էր, որ «մեծ ջանիւ և սիրով յիմաստս բանի դիզերի՝ ղպատուականան ի սուրբ մատենաց որճաւով» (Երուսաղեմ, ձեռ. № 1033, էջ 61)։ Սովորել է Գլաձորի ու Հերմոնի վանքերում՝ աշակերտելով նաև Նշեցուն և Տիրատուր վարդապետին, եղել է Մարաղայում[43], Տփղիսում, Դարանաղյանց գավառում, Երուսաղեմում, Գողթան գավառի Սինեական անապատում, Վաղագնի վանքում, Մարում, ի վերջո՝ Երնջակի Ապրակունյաց վանքում, ուր և մահացել ու թաղվել է 1386 թվականին։ Տաթևի վանքում համալսարան է հիմնել 1373 թ., անհաշտ պայքար է ծավալել կաթոլիկ քարոզիչների ու նրանց հարած հայ ունիթորների դեմ։ 1379 թ. Ապրակունյաց վանքը մաքրել է կաթոլիկներից, դպրոց է հիմնել նաև այդտեղ, իր աշակերտ Գր. Տաթևացուն կարդելով դեկավար։ Մի-երկու տարի անց կրկին վերադարձել է Տաթև, ուր շարունակել է մանկավարժական գործունեությունը, ունկնդիր ունենալով 60 ուսանող։ Ժամանակակիցներից, մասնավորապես Տաթևացու կողմից մեծարված է «մեծ վարժապետ», «տիեզերալոյս բարեբանապետ», «աստուածաբեալ բարեբանապետ» և այլ տիտղոսներով (տե՛ս ԺԴ, 497, 498, 501, 507, 514, 556), և միայն մեկ անգամ 1386 թ.՝ «տիեզերահամբաւ և երանաշնորհ բարեբանապետ Հայաստանեաց և վերադիտող տէր Յովհան Որոտնեցի» (ԺԴ, 560)։ «Վերադիտող» բառացի նշանակում է եպիսկոպոս, ուստի վիճելի կամ ինչ-որ տարիների համար միայն ստույգ պետք է համարել Հ. Աճառյանի հաղորդած տվյալը, թե որի «Հրատիրվեց Սյունյաց առաջնորդական աթոռը, բայց նա մերժեց»[44]։ Որ կյանքի վերջին տարիներին Հովհան Որոտնեցին ստանձնել էր Սյունյաց թեմի դեկավարությունը, երևում է նրա աշակերտներից մեկի՝ Հակոբ Կրոնավորի բովանդակալից հիշատակարանից. այնտեղ ասված է, որ խուսափելով օտար դավիճիներից (որոնք ներխուժել էին Սյունիք, գրավել Որոտան բերդն ու ցանկանում էին ձերբակալել նաև Որոտնեցուն «վասն հայրենեացն ժառանգութեան»), նա փախուստ է տալիս ու աղոտվում. իսկ ապա՝ կրկին վերադառնում «ի վերայ վանորէից իւրոց, ի գաւառն Երընջակայ», և որոշ ժամանակ խաղաղ կյանք վարում. «Շինէր և հաստատէր զսուրբ

43 Հ. Որոտնեցու Մարաղա գնացած լինելու մասին վկայություն է պահպանվել Թովմա Մեծոփեցու թերի վիճակում պահպանված մի հիշատակագրության մեջ։ Ինչ-որ աշխատությունն օրբագրելու կապակցությամբ նա ասում է, որ այդ ձեռագիրը «բերաւ ի Մարաղու քաղաքէն ձեռամբ Յովանէս դպրապի՝ աշակերտի մեծին Տիրատուրայ» (Ս. Տեր-Ավետիսյան, Ձեռագիրք Նախիջևանի վանաց Դարաշամբի Ս. Ստեփանոսի, որ ի Գողթն, 1904 թ., ձեռագիր № 54)։ Որոտնեցին Մարաղա էր գնացել, հավանաբար, այնտեղ հաստատված կաթոլիկ միսիոներ Բարթուղիմեոս Բոլոնիացու հետ ծանոթանալու և, դուցե, նրա դաստիարակությունն ունկնդրելու նպատակով։

44 «Հայոց անձնանունների բառարան», Գ, էջ 628։

Եկեղեցիս շինել և փառատոր ի մէջ անօրէն իշխանաց և բնիթաւագաց» (ԺԴ, 560):

Այս անուղակի ապացոյցները հուշում են, որ Հովհան Որոտնեցին, եթե նույնիսկ չի օծվել պաշտոնապես Սյունյաց եպիսկոպոս, ապա փաստորեն իր կյանքի վերջին տարիներին վարել է այդ պաշտոնը:

Գրիգոր Տաթևացի— հուշիչ մականունով: Հայրը՝ Ամիր Սարգիս՝ Քաջբերունյաց նահանգից էր, մայրը՝ Մարիամ՝ Փարպի գյուղից: Ծնվել է շուրջ 1344 թ. Վրաստանի Բիռովի բերդամոտում, և պատանեկությունը անցկացրել այնտեղ՝ նորոգ խնամակալության ներքո (ԺԲ, I, 103): 1370 կամ 1371 թվականին Հովհան Որոտնեցին, Երուսաղեմ գնալու նախօրեին, տեսնելով պատանի հուշիչների առաջադիմությունը «յամենայն ումանս», վերցնում է նրան իր մոտ աշակերտ, տանում Երուսաղեմ և, դարձի ճանապարհին, Դարանագյաց գավառում ձեռնադրում վարդապետ (Հավանաբար 1373 թվականին):

Հովհան Որոտնեցու մահվանից մի քանի տարի հետո, հավանաբար 1393-ին, Սպրակունիից տեղափոխվել է Տաթևի վանք ու առանձնել Սյունյաց դպրոցի ղեկավարությունը: Այս տարիներին է Տաթևի համալսարանն ապրել իր ամենածաղկուն շրջանը, որ տևել է շուրջ 15 տարի: Տաթևում եղած տարիներին՝ մինչև 1408 թ., երբ նա «վասն իւիր ինչ պատճառի» (ԺԲ, I, 93) ստիպված էր իր դպրոցը տեղափոխել Մեծոփա վանք, Գրիգոր Տաթևացին միաժամանակ (հավանաբար տէղապահի հանդամանքներով) ղեկավարել է Սյունյաց աթոռը: XIV դարի վերջերին և, մանավանդ, XV դարի սկզբներին Տաթևի վանքում շարադրված մի շարք հիշատակարանների այն հատվածում, ուր քառասովորության պետք է հիշատակվեր տեղի եպիսկոպոսը, գտնում ենք միայն Գրիգոր Տաթևացու անունը, որպես «բազ հոետոր և բանիբուն վարդապետ», «ամենիմաստնի դիտապետ Հայոց», «[առաջնորդ] տանս Սիւնեաց» և այլն (տե՛ս ԺԲ, I, էջ 34, 60, 77): Շատ ավելի ուշագրավ են Հովհաննես գրչի հաղորդած ապյալները. վերջինս 1407 թվականին Տաթևում ձեռագիր էր ընդօրինակում «ի տեղապահութեան աթոռոյս... վարժապետին Գրիգորի» (ԺԲ, I, 81). նույն թվականի մեկ ուրիշ հիշատակարանում նույն գրիչը հայտնում է, որ «վարդապետեան մեր Գրիգոր... հակի յաթոռ վարդապետութեան և աթոռակալութեան Սիւնեաց վիճակիս» (ԺԲ, I, 82):

Առաքել Սյունեցի — Այս նույն տարիներին, Սյունիքում եպիսկոպոս էր նաև Գր. Տաթևացու բնորդի Առաքել Սյունեցին (հայրն է Դավիթ, մայրը՝ Մելիք):

Իր «Քարոզգրքի» հիշատակարանում Տաթևացին նրա մասին գրում է.

«Նախ բնորդացն իմ բուռ մարմնի
Ծնընդամիտ երջարանի՝
Առաքելոյ առաքինի,
Եւ Սիւնական գլուխ արհի» (ԺԲ, I, 73):

Առաքելն իրեն «Տէր Առաքել» է կոչում 1401 և 1403 թվականներին շարադրած «Ադամգրքի» հիշատակարաններում, ուստի եպիսկոպոս էր այդ թվականներից առաջ: Վերջին անգամ նրա մասին, որպես կենդանի անձնավորություն տեղեկություն է գրանցված 1422 թվականին Անգեղակոթ գյուղում շարադրած ինքնագիր հիշատակարանում, ուր նա հիշատակվում է որպես «Տէր Առաքել Սիւնեաց», (ԺԲ, I, 292):

1425 թվականին արդեն մեռած էր (ԺԵ, I, 336)[45]: Ղ. Ալիշանը Առաքելին Սյունյաց եպիսկոպոս է համարում 1407—1422 թվականների միջոցին, Ն. Պողարյանը՝ 1407—1416 թվականներն է նշում, Մ. Պոտուրյանը և նրան հետևող Ն. Տեր Ներսեսյանը՝ 1401 կամ 1403-ից են սկսում նրա եպիսկոպոսության տարիները[46]:

Գր. Տաթևացու և Առաքել Սյունեցու մասին ներկայացված տվյալներից կարելի է եզրակացնել, որ մինչև 1407 թվականը Սյունյաց մետրոպոլիտության գահը գտնվում էր Տաթևացու ձեռքում: Նախորդ շարադրանքից գիտենք արդեն, որ Սյունյաց եպիսկոպոսները իրենց կենդանության օրոք հաճախ ունենում էին նաև փոխանորդ եպիսկոպոսներ, ուստի Առաքելը անձնիշխան Սյունյաց եպիսկոպոս կարող էր լինել միայն Գր. Տաթևացու Մհծոփա վանք մեկնելուց (1408 թ.) հետո: Իսկ մինչև ո՞ր թվականը. այս հարցին որոշակի պատասխան տալու համար ստույգ տվյալներ չունենք. սակայն կարելի է մոտենալ ճշմարտությանը՝ ծանոթանալով հաջորդ եպիսկոպոսի՝ Ստեփանոս-Իվանեի կյանքի տարեգրությանը:

Ստեփանոս—Իվանե եպիսկոպոսը, ինչպես ասել ենք Բուրթելյան պայազատների տոհմագրությանը նվիրված էջերում, Սմբատ Բուրթելյանի որդին էր, 1406-ին՝ դեռևս աշխարհական: 1410 թվականին, երբ Կարա-Յուսուֆը դրավեց Բուրթելյանների կալվածքները, սրա հայր Սմբատն ու եղբայր Բեշքենը գաղթեցին Վրաստան: Իվանե-Ստեփանոսը նրանց հետ չէր: Նա, ըստ երևույթին, մնաց Սյունիքում և հոգևոր կոչում ընդունելով՝ կոչվեց «Տէր Ստեփանոս մականուն Իւանէ»: Որպես «Հայրապետ Սյունյաց նահանգի» կամ «առաջնորդ տանս Սիսականայ» նա հիշատակված է 1419 թվականին Հերմոնի վանքում և 1421 թ. Տաթևում շարադրված հիշատակարաններում: 1421 թվականին մեկնել էր Վրաստան իր մոր մոտ, այնտեղ էլ կնքել է իր մահկանացուն (ԺԵ, I, 258, 292):

Այս Ստեփանոսից հետո Սյունյաց մետրոպոլիտական աթոռը, որ դարեր շարունակ հոգևոր իր իշխանության տակ էր պահում Սյունյաց աշխարհի 12 գավառները, փեղկվում է տարբեր մասերի:

Սյունիքի տարբեր գավառների՝ Վայոց ձորի, Ծղուկի, Գողթան վանական հաստատություններում շարադրված հիշատակարանները տեղեկություններ են հաղորդում հաճախ նույն տարիներին կամ տասնամյակներին եպիսկոպոս եղած անձնավորությունների մասին: Ուստի սխալ կլիներ միահյուս շարահարությամբ կազմել Սյունյաց թեմի առաջնորդների գավազանագիրքը XV դարի 20-ական թվականներից հետո: Նույնիսկ այն դեպքերում, երբ ժամանակակիցների կողմից այս կամ այն հոգևոր առաջնորդը, հին ավանդույթի ուժով մեծարված է «Սյունյաց եպիսկոպոս» բարձր կոչումով, վստահաբար չենք կա-

45 Առաքել Սյունեցու մասին առկա շատ սուղ կենսագրական տվյալները պետք է լրացնել 1407 թ. ուշագրավ մի հիշատակարանով, որ շարադրել է նա իր իսկ նկարագրած ամետարանի մեջ: Նախ պարզվում է, որ Առաքելը եղել է նաև ծաղկող և ապա Հայտնի դառնում, որ նրա ավագ եղբայր Բարսեղ քահանան, 1393-ին, մեկնած է եղել Կիլիկիա՝ կաթողիկոսի մոտ (գուցե և եպիսկոպոս ձեռնադրվելու), բայց դարձի ճանապարհին սպանվել է անօրենների կողմից: Առաքելը իր եղբոր մասունքները գտնելու համար 7 ամիս շրջել է «յերկրէ յերկիր, բազում աշխատութեամբ». ի վերջո այլոց օգնությամբ մարմինը գտել է եղջախոտ կոչվող ապրում, տեղափոխել Սյունիք ու ամփոփել Վաղաղնի վանքում (ԺԵ, I, 602):

46 Առաքել Սիւնեցի, Դրախտագիրք, հրատարակեց Հ. Ներսես Տեր Ներսեսյան, Վենետիկ, 1956, էջ 54:

րող հավատալ, թե նա իրոք եղել է ողջ Սյունյաց աշխարհի հոգևոր առաջնորդը:

1424—1425 թթ. Տաթևի վանքում հիշատակվում է «մեծ րաբունապետ և տիագնթալոյս վարդապետ» Մխիթարը (ԺԵ, I, 319, 338):

1428 թ. ոմն Պետրոս արքեպիսկոպոս Եղեգեցի իրեն կոչում է «վերադիտող այսմ (Եղեգե՞ց) նահանգի» (ԺԵ, I, 382):

Բաղմիցս հիշատակվում է Հերմոնի գպրոցի րաբունապետ Հովհաննես Կոլոտիկը, որը մեծ հեղինակություն ունեցող եկեղեցական էր:

1475-1484 թվականներին Վայոց ձորի Բոլորաբերդ անապատում և Սրկղունքում բանիցս հիշատակվում է մի այլ Հովհաննես արքեպիսկոպոս, որպես հոգևոր առաջնորդ «այսմ նահանգի», կամ «յայսմ գաւառի» (ԺԵ, II, 375, 400, 427, ԺԵ, III, 27, 55):

Գողթան գավառում 1477 թ. արքեպիսկոպոս է հիշվում ոմն տեր Սիմոն (ԺԵ, II, 420), իսկ 1489 թ.՝ տեր Ապարիան (ԺԵ, III, 129):

Այս ցանկը կարելի է կրկնապատկել, սակայն մեզ հետաքրքրող հարցի համար ուշադրավ են հատկապես հոգևոր այն առաջնորդները, որոնք գրավել են Սյունյաց գլխավոր եպիսկոպոսանիստ՝ Տաթևի աթոռը, և, մասնավորապես, այն գործիչները, որոնք Բուրթելյան գերդաստանի պայազատներ են:

Այս առումով ըստ ժամանակի Ստեփանոս-Իվանեից հետո ուշադրության արժանի գործիչ է Եմավոն Անգեղակոթցին (Հայրն է Խաչատուր, մայրը՝ Ադում): Եմավոնին առաջին անգամ հանդիպում ենք 1437 թվականին Սանահնի վանքում շարադրված մեծարժեք հիշատակարանում, որը տեղեկություն է հաղորդում իշխան Բեշքենի ու նրա Ռուստամ որդու Սյունիքից արտագաղթելու և վրաստանում հաստատվելու մասին:

Եմավոնն այստեղ կոչվում է «երանաշնորհ և երջանիկ րաբունի՝ առաջնորդ և վերադիտող առաքելական աթոռոյն Սիւնեաց» (ԺԵ, I, 470):

Ռուստամ Բուրթելյան նշանավոր իշխանը 1451 թ. այս Եմավոնի անունով Տաթևի վանքին վաճառում է 4 գյուղեր:

1459 թ. շարադրված մի քանի հիշատակարաններում Եմավոնը իրեն կոչում է րաբունապետ և հայտնում, որ Շամախի ու Շամրան քաղաքներում ձեռք է բերել ձեռագրեր ի վայելումն իր եղբորորդի Ստեփանոս արքեպիսկոպոսի: Դրվատական խոսքեր են գրանցված Եմավոնի մասին Ստ. Օրբելյանի «Պատմության» վերջում որպես հավելված հրատարակված «Շարակարգութիւն եպիսկոպոսաց Սիւնեաց» ցանկի մեջ: Այնտեղ ասված է, որ «Տէր Սիմէոն (իմա՝ Եմաւոն) եպիսկոպոսն Անգեղակոթցի... յոյժ ջանակուռ եղև վասն շինութեան և պայծառութեան սրբոյ աթոռոյս: Եւ զի տաճիկք բռնութեամբ յափշտակեալ էին զբազում անդս և անդաստանս սրբոյ աթոռոյս, սա... վերստին սեփականեալ է սրբոյ տանս պնչեցեալսն զամենայն»: Ասված է նաև, որ այդ պատճառով մահմեդականները թշնամացել են նրա դեմ ու սպանել[47], բայց այդ ավյալը հավաստող ժամանակակից որևէ վկայություն չի պահպանվել:

1471 թ. Տաթևի վանքում ընդօրինակված մի ձեռագրի հիշատակարանում ասված է. «Ի յառաջնորդ[ութեան] Եմաւոն վարդապետի և Ստեփանոս արքեպիսկոպոսի», ուստի Եմավոնը 1471-ին դեռ ապրում էր, հավանաբար մահացել է մեկ-երկու տարի հետո:

47 Ստ. Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1919, էջ 525:

Ստեփաննոս արխեպիսկոպոս—Շմավոնի եղբորորդին է։ Առաջին անգամ հիշված է Թ. Մեծոփեցու կողմից որպես 1441 թ. էջմիածնի ժողովի մասնակիցներից մեկը. «Տէր Ստեփաննոս տեղապահ Սիւնեաց աթոռոյն ի չորս»[48]։

1459 թ. Շմավոնը իր եղբորորդուն կոչում է արդեն «եպիսկոպոս Եւսաթէի սուրբ առաքելոյս», կամ «Տէր Ստեփաննոս արքեպիսկոպոս Սիւնեաց նահանգէ» (ԺԵ, II, 123, 124)։

1478 թվականին Աղ-Կոյունլուների նշանավոր դրաշհրամանատար, աթաբեկ Սուֆի-Խալիլը բանտարկից Ստեփաննոս արքեպիսկոպոսին և բռնադատեց ընդունել մահմեդականություն։ 5 տարի շարունակ, անասելի խոշտանգումների ղիմանալով, տակաց Ստեփաննոսը, ի վերջո ազատվեց բանտարկությունից, վերադարձավ Տաթևի վանք, զնաց Երուսաղեմ ուխտի և վերադարձին՝ 1485 թվականին վախճանվեց[49]։

Ստեփաննոսի անմիջական հաջորդը, հավանաբար, եղել է Շմավոն Բ. եպիս. կոպոսը[50]։ Հիշված է 1508 թվականին։ Մի քանի տարի հետո՝ 1513 թ. Գեղարքունյաց մելիքները առորոշրնցին պարտավորագիր իրենց ենթակա գյուղերը վերստին Տաթևի վանքի հոգևոր իշխանությանը ենթակա դարձնելու մասին։ Պարտավորագրի մեջ ասված է. «Թիվն ՋԿԲ. (1513) էր, մեր Գեղարքունոյ միւիր ու ամենայնքրա նկայք ի սուրբ յաթոռս Ըստաթէի Սիւնեաց Բժ-ն գաւառ, ևս առաւել երկրին մեր Գեղամայ, որ ճշմարիտ երկիրն մեր Գեղարքունի ինի և վիճակ է սուրբ առաքելոցս Ըստաթէի... Յուխտ և դաշինք դրինք սուրբ առաքելոցս և առաջի եպիսկոպոսացս՝ Շմաւոն եպիսկոպոսի և տէր Ստեփաննոսի և Մարաիրոս փակակալի և տէր Ղուկաս Հայրապետին և այլ միաբանից՝ մնծի և փոքու...»[51]։

Այս Շմավոնի և նրան հաջորդող եպիսկոպոսների աթոռակալության ժամանակաշրջանը դուրս է մնում մեր հետաքրքրության շրջանակից։

XIV—XV դարերի Սյունյաց եպիսկոպոսների հաջորդական ժամանակագրությունը փակելուց առաջ անհրաժեշտ է անդրադառնալ նաև երկու այլ հոդևոր պետերի, որոնք սերված են Բուրթելյան տոհմից։

Ղ. Ալիշանի «Սիսականից» վերը մեջբերված «Եպիսկոպոսունք Սիւնեաց» ցանկի մեջ, 1464 թվականի տակ, կարդում ենք՝ «Տաթեի վիւս, որդի Իւանէի Որոնենցւոյ». նույն այս անձնավորության մասին Ալիշանը հայտնում է նաև այսպիսի մի տվյալ. «Յիշի գրեալ և ի կէս ԺԵ դարու (1447) Տէր Ստեփաննոս եպիսկոպոս Սիւնեաց որդի Իւանէի՝ տեառն Որոտան, Հարկ է ուրիշ ի նախորդէն (իմա՝ Ստեփաննոս—Իւանէի, որդւոյ Սմբատայ—Լ. Խ.), զի նա մեռաւ յամի 1422 (ուղղելի է՝ 1421—Լ. Խ.), բայց այս Իւանէ որո՞յ որդի և զիարդ էր տակաւին տէր Որոտան, ոչ գիտեմ»[52]։

---

48 Թ. Մեծոփեցի, *Յիշատակարան*, էջ Ա։

49 Հայոց նոր վկաները, գիտական հրատարակություն, էջ 313—319։

50 Մի ավետարան վաճառելու մասին 1491 թ. շարադրված գրության տակ պահպանվել է իրեն «տէր Սարգիս եպիսկոպոս Տաղեացի» կոչող բարձրաստիճան մի եկեղեցականի առորագրություն (ԺԵ, III, 172), սակայն հիմք չունենք այդ Սարգսին Սյունյաց եպիսկոպոս համարելու։ Նա իրեն նույնիսկ չի կոչում Տաթևի եպիսկոպոս, այլ՝ Տաթևացի եպիսկոպոս։

51 «Բանբեր Մատենադարանի», 8, էջ 192։

52 «Սիսական», էջ 218։

Եվ իրոք, այս տեղեկություններից մեջ, որոնց սկզբնաղբյուրը հայտնի չէ, կան սուտման ու բացատրության կարոտ տեղիներ: Նախ, ինչո՞ւ Ալիշանը ցանկի մեջ այս Ստեփաննոսին եպիսկոպոս է համարել 1464, իսկ նույն աշխատության մի այլ բաժնում՝ 1447 թվականին: Եթե նրան հայտնի էին երկու տարբեր աղբյուրներ, ինչո՞ւ է նա զլացել ցանկի մեջ 1464-ից առաջ նշելու 1447 թվականը, և, հակառակը, 218-րդ էջի մեր կողմից մեջբերված հատվածում չի հիշեցրել, որ այդ նույն Ստեփաննոսի մասին տեղեկություն ունի նաև 1464 թվականից: Այս հարցերին պատասխանել կարելի է միայն Ալիշանի դիվանը ուսումնասիրելուց հետո. թերևս պարզվի, որ այդ ավյալները քաղված են անհատույց աղբյուրներից (որ բացառված չէ): Ո՞վ էր այս Ստեփանոս եպիսկոպոսի հայր Իվանեն և ինչպես կարող էր նա XV դարի կեսերին կոչվել «տէր Որոտան», այս հարցը հուզել է Ալիշանին. պատասխանը եղել է՝ «ոչ գիտեմ»: Կարելի է երկու ենթադրություն անել. կամ առաջադրված թվականները (1447, 1464) մեկ հարյուրամյակով պետք է նա տարվեն ու սրբագրվեն 1347, 1364, այդ դեպքում այս Ստեփանոսը կնույնանա մեզ արդեն ծանոթ Ստեփանոս-Սուրթանշահ եպիսկոպոսի հետ, որ իրոք Իվանե Բուրթելյանի որդին էր: Կամ էլ պետք է ենթադրել, որ Սմբատ Բուրթելյանի որդի Ստեփանոս-Իվանե եպիսկոպոսը, որ մինչև հոգևոր կոչումն ընդունելը ամուսնացած է եղել և հայրն է Սմբատ անունով մի իշխանի, ունեցել է նաև մի այլ որդի, որ հետագայում ընդունել է հոգևոր կոչում՝ Ստեփանոս անունով: Եթե հաստատվի այս վարկածը, ապա պետք է կարծել, որ նրա հայրը Իվանեն (հետագայում Ստեփանոս եպիսկոպոս), ինչ-որ կարճատև ժամանակ Որոտանի տեր է եղել, կամ այդպես է կոչվել ավանդությամբ (Որոտանի տէր էր, իրոք, նրա հայրը՝ Սմբատ իշխանը):

Այսպիսով 1447 կամ 1464 թվականներին Իվանեի որդի Ստեփանոս Սյունյաց եպիսկոպոսի գոյությունը երկբայական է:

Գորգուն Բուրթելյանի որդի Տարասայիճին նվիրված հատվածում արդեն ասել ենք, որ Տարասայիճի թոռ, Սմբատի որդի Եղիշեն՝ XV դարի վերջերին, եղել է արքեպիսկոպոս: Նրա մասին տեղեկություններ են պահպանվել 1490 թ. վերին նորավանքում և 1495—1496 թթ. Եղեգիսում շարադրված հիշատակարաններում. այսպես. «յարհեպիսկոպոսութեան մերոյս նահանգի տէր Եղիշէի՝ յազգէ Բուրթելանց» (ԺԵ, III, 147) և «վերադիտող այսմ նահանգի պարոնտէր Եղիշա արքեպիսկոպոսի» (ԺԵ, III, 213, նաև 229): Ըստ այդմ Եղիշեի հոգևոր իշխանության սահմանները սահմանափակվել են Եղեգնաձորի շրջանակներով, ուստի նրա անունը պետք է դուրս հանել Սյունյաց եպիսկոպոսների զավազանացանկից:

Վերը մեջբերված ավյալները հնարավորություն են ընձեռում կազմելու XIV—XV դարերում աթոռակալած Սյունյաց եպիսկոպոսների ճշգրտված ու ստուգված ցանկը, որ տալիս ենք ստորև, յուրաքանչյուր եպիսկոպոսի դիմաց նշելով նրա աթոռակալության ծայրային թվականները՝ եթե հայտնի են, կամ այն տարեթվերը, որ հիշատակված են նրանց կատակցությամբ ժամանակակից աղբյուրներում:

ՅԱՆԿ ՍՅՈՒՆՅԱՑ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐԻ

(XIV—XV դարեր)

1. Ստեփանոս Օրբէլյան, *որդի Տարսայիճի—1286—1303 թթ.։*
2. Հովհաննես Օրպել, *որդի Լիպարիտ Օրբելյանի—1302—1323 թթ.։*
3. Ստեփանոս—Տարսայիճ, *որդի Ջալալ Օրբելյանի—որպես աթոռակալ Սյունյաց Հիշված 1314—1323 թթ., որպես մետրոպոլիտ՝ 1331 թ.։*
4. Սարգիս, *որդի Որոտան իշխան Հասանի, եղբայր Իվանեի (Սյունիքի հին իշխանական տան սերնդից)—վաղագնի վանահայր 1326 թ., մետրոպոլիտ՝ 1333՞—1337 թթ. (Հիշված է վերջին անգամ)։*
5. Ստեփանոս—Սուլթանշահ, *որդի Իվանե (Նանիկ) Բուրթելյանի—Հիշված շուրջ 1366 թ.։*
6. Հովհան Որոտնեցի, *որդի Իվանե Որոտնեցու, եղբորորդի Սարգիս մետրոպոլիտի—մահ. 1386 թ.։*
7. Գրիգոր Տաթևացի, *որդի ամիր Սարդսի—1386՞—1408 թթ.։*
8. Առաքել Սիւնեցի, *որդի Դավթի, թոռորդի Գր. Տաթևացու—եպիսկոպոս էր 1401-ից, Սյունյաց մետրոպոլիտ 1408՞՞—1410՞ թթ.։*
9. Ստեփանոս—Իվանե, *որդի Սմբատ Բուրթելյանի—1410՞—1421 թթ.։*
10. Եմաւոն Անգղադնորցի, *որդի Խաչատուրի—Հիշված 1437—1471 թթ.։*
11. Ստեփանոս եպիսկոպոս, *Եմաւոնի եղբորորդին, «ի յապատաց»—Հիշված 1441-ից որպես «տեղապահ Սիւնեաց», եպիսկոպոս 1471՞—1485 թթ.։*
12. Եմաւոն Բ.—*Հիշված 1508—1513 թթ.։*

Սյունյաց 12 այս եպիսկոպոսներից 5-ը Օրբելյան-Բուրթելյան գերդաստանի պարոնտերեր են՝ (Ստեփանոս Օրբելյան, Հովհաննես-Օրբել, Ստեփանոս-Տարսայիճ, Ստեփանոս-Սուլթանշահ, Ստեփանոս-Իվանե)։ Ուշագրավ է, որ Հովհաննես-Օրբելից բացի, բոլորն էլ հոգևոր կոչումն ընդունելով՝ Ստեփանոս անունն են ժառանգել, բայց պահել են նաև իրենց աշխարհական անունները։ Եպիսկոպոսներից երկուսը (Սարգիս և Հովհան Որոտնեցի) սերվում են Սյունյաց հին իշխանների գերդաստանից, որոնք մինչև XIV դարի առաջին տասնամյակները դեռևս տերն էին Որոտանի։ Ըստ երևույթին ազգակցական կապերով շաղկապված մի փունջ են կազմում նաև մյուս 5 եպիսկոպոսները, սկսած Գր. Տաթևացուց, մինչև Եմաւոն Բ (Առաքել Սյունեցին Տաթևացու թոռորդին է, Եմաւոն Անդղադնորցին ևս Առաքելի ազգականներից պետք է լինի)։

Л. С. ХАЧИКЯН

БУРТЕЛЯНОВСКАЯ ВЕТВЬ СЮНИЙСКИХ ОРБЕЛЯНОВ

(Р е з ю м е)

Автор статьи на основе имеющихся рукописных и эпиграфических данных уточняет генеалогическое древо князей Бурtелянов, одного из

последних крупных феодальных родов средневековой Армении, и впервые дает полную родословную этого рода. Бурteляны, правившие Сюником в XIV—XV веках, сыграли видную роль в политической и культурной жизни Восточной Армении. Уточнение родословной этого княжеского рода важно с точки зрения исследования истории Сюника, сохранившего в условиях тюрко-монгольского владычества полунезависимое существование.

Значительное место в статье уделяется также преемству епископов-митрополитов Сюника, тесно связанных с родом Орбелянов-Бурteлянов. Автор уточняет и восполняет список митрополитов, правивших Сюнийской епархией на протяжении двух веков.

L. S. KHATCHIKIAN

LA BRANCNE DES BOURTELIAN DE LA FAMILLE DES ORBELIAN DE SIOUNIE

Matériaux manuscrits et données épigraphiques ont permis à l'auteur de l'article d'apporter des précisions à l'arbre généalogique des princes Bourtélian qui furent l'une des dernières grandes familles féodales de l'Arménie médiévale, et de présenter pour la première fois un tableau généalogique complet de cette famille. Les Bourtélian qui gouvernèrent en Siounie aux XIV^e^ et XV^e^ siècles jouèrent un rôle prédominant dans la vie politique et culturelle de l'Arménie orientale. Les précisions mentionnées sont surtout importantes du point de vue des recherches historiques concernant la Siounie qui mena, lors de la domination turco-mongole, une existence semi-indépendante.

L'auteur se consacre de même longuement aux évêques-métropolitains qui se succédèrent à la tête de l'évêché de Siounie au XIV^e^ et au XV^e^ siècles tout en entretenant d'étroits rapports avec la famille des Orbélian-Bourtélian, et dont il nous précise et complète la liste.

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ ԱՐՎԵՍՏԻ
ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ—«ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ»

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

ԵՐԵՎԱՆ № 9 1969

ԷՄՄԱ ԿՈՐԽՄԱԶՅԱՆ

XIV—XV ԴԱՐԵՐԻ ՂՐԻՄԻ ՀԱՅ ՄԱՆՐԱՆԿԱՐՉԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՈՐՈՇ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ղրիմի հայկական գաղթավայրը դարերի պատմություն ունի, որը իր ծաղկման բարձրակետին է հասնում XIV—XV դարերում: Այդ ժամանակ Ղրիմում կառուցվում են բազմաթիվ եկեղեցիներ ու վանքեր, պարիսպներ ու աղբյուրներ, գրվում են հարյուրավոր ձեռագրեր:

Ղրիմահայ մանրանկարչական արվեստը ուսումնասիրելիս պետք է նկատի ունենալ, որ հայերը Ղրիմ էին գաղթել Հայաստանի տարբեր նահանգներից: Յուրացնելով իրենց նախնիների դարավոր փորձն ու սովորույթները, նրանք միաժամանակ կրել էն նաև Կիլիկյան հայերի արվեստի ազդեցությունը, որոնց գաղթը դեպի Ղրիմ մեծ ծավալ է ստանում XIV դարի վերջերին՝ Կիլիկյան թագավորության անկումից հետո: Այս բոլորից բացի, տվյալ գաղթօջախի հայ մանրանկարչության վրա իր որոշակի ազդեցությունն է թողել նաև նոր միջավայրը, որտեղ հայերը առիթ ունեցան ծանոթանալու միջնադարյան Ղրիմի այլ ժողովուրդների արվեստին:

Ղրիմահայերի մանրանկարչական արվեստի հիմքում, սակայն, ընկած են բուն Հայաստանի արվեստից նրանց ժառանգած ավանդները, մի հարց, որին կանդրադառնանք սույն հոդվածում:

Բավական մեծ թվով հայերեն ձեռագրեր են հասել մեզ՝ գրված XIII դարի վերջում և XIV դարի սկզբում (Ղրիմի հայ մանրանկարչական դպրոցի կազմավորումանը նախորդող ժամանակաշրջանում): Սակայն այս ձեռագրերի մանրանկարների ոճը միատեսակ չէ:

Հայտնի է, որ Հայաստանի գրչության խոշորագույն կենտրոններում ստեղծվել են մանրանկարչության տարբեր դպրոցներ՝ իրենց գեղանկարչական առանձնահատկություններով: Հետևաբար, երբ խոսք է լինում Ղրիմի մանրանկարիչների կողմից բուն Հայաստանի գեղանկարչական ավանդների օգտագործման մասին, անհրաժեշտ է պարզել, թե Ղրիմի նկարիչների համար մայր երկրի ո՞ր դպրոցի ավանդներն են ավելի հարազատ:

XIV դարի ձեռագրերի հիշատակարաններում բազմաթիվ տեղեկություններ են հանդիպում, որոնք վկայում են Ղրիմի հայերի զգալի մասի՝ Բաբերդ, Կարին, Սեբաստիա, Երզնկա, երբեմն էլ Արճեշ ու Երևան քաղաքներից գաղթած լինելը[1]: Հիշատակարանների հաղորդած տեղեկությունները հաստատվում են Ղրիմի ու Բաբերդ-Կարինի ձեռագրերի նկարազարդումների ոճական ընդհանրությամբ:

---

[1] Ն. Ծ. Խաչիկյան, *ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ*, Երևան, 1950, էջ 162, 286, 327, 341, 364, 385, 428, 443, 452, 467, 494 և այլն:

Բացի այդ, ինչպես վկայում է XVII դարի Ղրիմում գրված մի ձեռագրի հիշատակարան[2], Ղրիմ էին գաղթել Հայեր նաև Անի քաղաքից:

Փորձենք սկզբում գտնել Ղրիմահայ մանրանկարչության աղերսը Անիի արվեստի հետ: Այս հարցը բավականին բարդին է, քանի որ Անիից պահպանված ձեռագիր-հուշարձանները խիստ սակավ են և մեզ թույլ չեն տալիս ամբողջական պատկերացում կազմել միջնադարյան Հայաստանի մայրաքաղաքի մանրանկարչական արվեստի մասին: Առ այսօր մեզ հայտնի են Անիում ընդօրինակված միայն չորս ձեռագիր[3]: Ըստ որում պատկերազարդված է նրանցից միայն մեկը՝ Ասիայի ժողովուրդների ինստիտուտի Լենինգրադի բաժանմունքում գտնվող ավետարանը: Հետևաբար, այդ շրջանի մանրանկարչության արվեստի մասին մեր պատկերացումները լրացնելու համար, հարկադրված ենք ուշադրության առնել նաև այն ձեռագրերը, որոնք ստեղծվել են Անիի մոտակա վայրերում և իրենց գեղարվեստական առանձնահատկություններով հավանաբար առնչվել են Անիի մշակույթին: Այդպիսիններից է Հոռոմոսի վանքը կամ Խոշավանքը, որը գտնվում է Անիի մոտ, Ախուրյան գետի հանդիպակաց ափին: Այս վանքում գրված ձեռագրերից առավել հետաքրքրություն են ներկայացնում 1232 թ. ավետարանը, որը նկարազարդել է Իգնատիոսը[4], ինչպես նաև Հաղպատի ավետարանը: Վերջինիս պատվիրող և ստացող է Սահակ կրոնավորը՝ «ազգաւ և տոհմիւ ի մեծ մայրաքաղաքէն յԱնւոյ»[5]:

Ղրիմում զարդարված ձեռագրերից միայն մեկի մանրանկարներում հանդիպում ենք որոշ գծերի, որոնք մի փոքր աղերս ունեն նշված ձեռագրերի մանրանկարների հետ. դա 1359 թ. Սուրխաթի ավետարանն է, գրված Նատիրի ձեռքով և զարդարված անհայտ ծաղկողի կողմից[6]:

Ձեռագիրն ունի ընդամենը երկու մանրանկար. մեկը պատկերում է Դավիթ թագավորին երաժշտական գործիքը ձեռքին, որի կողքին կանգնած է Հակոբ առաքյալը, իսկ մյուսում՝ «Մուտքը Երուսաղեմ» կոմպոզիցիան: Հետազոտում երկու մանրանկարների կերպարանքների ուրվագիծը շեշտվել է ներկով, որից և նրանք կոպտացել են ու որոշ չափով տուժել: Սակայն, բարեբախտաբար, առանձին մասերում ներկը չի թափվել և պահպանվել են սկզբնական նկարի

---

2 Մաշտոցյան Մատենադարան, ձեռ. № 7442, էջ 281: Այս ձեռագրի հիշատակարանը բազմիցս հրատարակվել է: Տե՛ս Մ. Բժշկյանց. Ճանապարհորդութիւն ի Լեհաստան, Վիեննոյի, 1830, էջ 335: Ք. Քուշնեռյան. Պատմութիւն գաղթականութեան Խրիմու Հայոց, Վիեննոյի, 1895, էջ 103: Ղ. Ալիշան. Հայապատում, Վիեննոյի, 1901, էջ 580: Ա. Ալպոյաճյան. Պատմութիւն Հայ գաղթականութեան, Գահիրե, 1955, հ. Բ, էջ 366: О. Халпахчян. Армяно-русские культурные отношения и их отражение в архитектуре. Ереван. 1957. стр. 20: Վ. Միքայելյան, Ղրիմի հայկական գաղութի պատմություն, Երևան, 1964, էջ 75:

3 Մաշտոցյան Մատենադարանի ձեռագրեր № № 988, 1342: Երիքսիում գտնվող մի ձեռագիր. տե՛ս Լ. Խաչիկյան. նշված աշխ., էջ 353 և հետագա՝ Լենինգրադում, ИНА Арм. В—44.

4 Գ. Հովսեփյան. Նիւթեր և ուսումնասիրութիւններ Հայ արուեստի և մշակոյթի պատմութեան, Նյու-Յորք, 1943, պրակ Բ, էջ 61:

5 Գ. Հովսեփյան. անդ, պրակ Ա, Երուսաղեմ, 1935, էջ 60: Ձեռագրի գրչության վայրն է Հաղպատը: Կազմվել է Հոռոմոսում, որտեղ, ինչպես ենթադրում է Լ. Դուռնովոն, ծաղկվել է: Գ. Հովսեփյանը ծաղկման տեղը համարում է Հաղպատը: Ջնորհանալով այդ հարցում, մտաբերենք միայն, որ նույնիսկ Հաղպատում նկարազարդված լինելու դեպքում, այդ ավետարանը որոշ չափով կարտացոլեր Անիի արվեստի ոճական որոշ առանձնահատկություններ: Տե՛ս «Հին հայկական մանրանկարչություն», Երևան, 1952, մանրանկար 14—17:

6 Մաշտոցյան Մատենադարան, ձեռ. № 2040:

անվնաս մնացած փոքրիկ հատվածները, որոնք օգնում են պատկերացում կազմելու մանրանկարի նախնական տեսքի մասին (նկար 1)։



Նկ. 1

Ղրիմի 1359 թ. ձեռագրի «Մուտքը Երուսաղեմ» մանրանկարը փոքր ինչ հիշեցնում է Հոռոմոսի և Հաղպատի ավետարանների համանման մանրանկարները։ Նրանց բոլորին հատուկ են որոշ ընդհանուր գծեր՝ հորինվածքների կառուցվածքը, պարզ և մաքուր ներկերի պայծառ գունաշարը, շեշտված ուր-

վածները, ցայտուն արտահայտված արևելյան դիմագծերը՝ հայերին բնորոշ մեծ դեղնցիկ աչքերով:

Ղրիմի ավետարանի «Մուտքը Երուսաղեմ» մեսարանին հատուկ է բարձր առնական արտադրություն: Ըստ որում ծառին հատկացված է կենտրոնական տեղ, դրեթե Քրիստոսին հավասար (մնացած մանրամասները մղված են հեռին պլանի վրա): Ինչպես հայտնի է, «Մուտքը Երուսաղեմ»-ի առնը քրիստոնյաների մոտ համընկնում է բնության զարթոնքի գարնանային հեթանոսական առնին: Ղրիմի մանրանկարում մենք կարդում ենք «ծառազարդար» մակագրությունը: Այստեղ նկարված են նաև գարունն ավետող երեք թռչնակներ: Երկուսը նստած են ճյուղերին, իսկ երրորդը՝ ճախրում է: Ընդհանուր առնական արտադրությանը նպաստում է նաև պայծառ ու հնչեղ գունաշարը: Կարմիր, կանաչ, կապույտ և դեղին գույների մաքուր և բավականին վառ երանգները խիստ ներդաշնակ են:

Այդ առնական արտադրությունը ավելի ցայտուն կերպով արտահայտված է Հաղպատի ավետարանում, թեև այստեղ հորինվածքը մի փոքր ավելի բարդ է: Ղրիմի մյուս ձեռագրում, նկարազարդված Ստեփանոս Սևաձիսոնցի ձեռքով[7], ավետարանիչի նախշավոր լուսապսակը հիշեցնում է ճիշտ այդպիսին՝ Հաղպատի ավետարանում:

Սուրխաթի № 2040 ավետարանը, որի մասին խոսեցինք վերևում, միակն է Ղրիմի ձեռագրերից, որը որոշակի կերպով տարբերվում է Ղրիմում զարգացված հայկական ձեռագրերի ընդհանուր ոճից: Այդ ձեռագիրը թեև քիչ չափով, բայց աղերսվում է Անիի շրջանից պահպանված ձեռագրերի մանրանկարներին: Այդ պատճառով ավետարանի մանրանկարները գրավեցին մեր ուշադրությունը:

Ավելի հեշտ դիտելի են Ղրիմի մանրանկարների ընդհանրությունները Բարբերդի ու Կարինի (մասամբ և Երզնկայի) մանրանկարների հետ: Ղրիմի ու այս վայրերի ձեռագրերի մանրանկարների համեմատությունը, նրանց ոճի, կատարման և պատկերագրության ակնհայտ նմանությունները դալիս են հաստատելու հիշատակարանների հաղորդած տեղեկությունները: XIII—XIV դարերում այս շրջանների ձեռագրերի մանրանկարներում մշակված յուրօրինակ ոճը լուրջ ազդեցություն է թողել Ղրիմի վարպետների ստեղծագործության վրա: Պահպանելով հանդերձ տեղական հին ավանդները, վերոհիշյալ վայրերի ծաղկողները միաժամանակ որոշակի տուրք են տվել Կիլիկյան արվեստին՝ յուրօրինակ ձևով համադրելով կոթողայնությունն ու գծայնությունը նրբագեղության ու երիտերանգության հետ: Ի տարբերություն Կիլիկյան մանրանկարների, որտեղ շռայլորեն օգտագործված է ոսկին, ծածկելով համարյա մանրանկարի ամբողջ խորքը, վերոհիշյալ շրջանների ծաղկողները նախընտրում են ավելի զուսպ երանգավորում: Ոսկին հազվադեպ է, իսկ որպես խորք ծառայում է մեծ մասամբ կապույտը: Այս հազեցած մուգ կապույտ գույնի խորքը դերիշխում է նաև Ղրիմի մանրանկարներում: Բարբերդի, Կարինի ձեռագրերի մեծ մասում գծային ու երիտերանգայինը հետաքրքրական ձևով են զուգակցված: Խորաններն, գլխազարդերն ու լուսանցազարդերը (այլ խոսքով՝ զարդանկարները) կատարված են գծային եղանակով մեկ, սակավ դեպքերում՝ երկու գույնով (ուրվագծերը բաց շագանակագույն են կամ մուգ կարմիր, վարդագույն

7 Մաշտոցյան Մատենադարան, ձեռ. № 7547:

Լբանդով, իսկ նվագ գնպքերում՝ ավելանում է կապույտ կամ կանաչ)։ Մյուս կողմից՝ ավետարանիչների դիմանկարներն ու ավետարանական շարը, ինչպես և այլ մանրանկարներ պատկերված են բազմագույն երիզներանդությամբ, օգտագործելով երբեմն նաև ոսկի (նկ. 2, 3)։

Երկու ձևերի նմանօրինակ զուգակցումը հանդիպում է նաև Կիլիկյան ձեռագրերում, թեև համեմատաբար քիչ։ Ըստ որում, Բաբերդի, Կարինի մանրանկարների բնույթը բոլորովին այլ է։ Ի տարբերություն Կիլիկյան նրբագիծ ստեղծագործությունների՝ Բաբերդի, Կարինի ձեռագրերում թանձր ու հագեցված ներկերը օգտագործված են համարձակ վրձնահպադներով, որը կերպարանքներին տալիս է որոշ կոթողայնություն՝ ստեղծելով ծավալի տպավորություն։

Նման գծերի հանդիպում ենք Ղրիմում նկարազարդված բազմաթիվ ձեռագրերում։

Այս յուրահատկություններն առավել ցայտուն են արտահայտված երեք ծաղկողների մոտ՝ XIV դարի անհայտ մի մանրանկարչի, Նաատերի որդի Ավետիսի և Առաքել ծաղկողի։

XIV դարի Ղրիմի ձեռագրերի թվում կան երեք նկարազարդ ավետարաններ, որոնց մանրանկարները իրենց ոճով ու կատարման եղանակով այնքան են նման, որ կարող են վերագրվել միևնույն վարպետի վրձնին[8]։ Այս ձեռագրերի մանրանկարներն ունեն վերը նշված հատկանշական գծերը, այն է՝ գծային ու երիզներանդային ձևերի զուգակցում, մուգ հագեցած երանգավորում և որոշ կոթողայնություն։ Բաբերդ-Կարինի մանրանկարների հետ նրանց ունեցած կապը դրսևորվում է հատկապես պատկերագրության ու տեխնիկական կատարման մեջ։ Իրենց մեկնաբանմամբ մոտիկ են որոշ գնպքերում նույնիսկ առանձին մանրամասներ՝ ճարտարապետական խորքը, շենքերի զարդային երիզները, ոտոռնդները, որոնց գմբեթները ծածկված են մի կողմից մյուսը աստիճանաբար մգացող կնտերով, կատարման մի եղանակ, որը ստեղծում է ծավալի տպավորություն։ Ավետարանիչներն ևս ունեն շատ ընդհանրություններ։ Նրանք պատկերված են իրենց ավանդական դիրքով՝ նստած են կիսաշրջված, հանդիսա ու խոհուն դեմքով (նկ. 4, 5, համմտ. նկ. 2, 3)։

Նույնպիսի գծեր հատուկ են և Նաատերի որդի՝ Ավետիս ծաղկողի ստեղծագործություններ։ Ինքը, Ավետիսը, Բաբերդից էր, որտեղ և ստացել է իր կրթությունը։ Նրա աշխատություններում տեսնում ենք դարձյալ գծայինի ու երիզներանդայինի միևնույն շաղկապումը, միևնույն մուգ հագեցած երանգավորումը, ներկերը հատ ու լայն շերտով օգտագործելու միևնույն եղանակը։ Սակայն, ի տարբերություն Բաբերդի մանրանկարների, Ավետիսի մոտ դեմքերի մշակումը ավելի նուրբ է, իսկ խիտ մգացրած ակնախոռոչները հաղորդում են նրանց խորը արտահայտչականություն։ Ավետիսի ստեղծագործության մեջ յուրովի են համադրվում բուն Հայաստանի և Կիլիկիայի ավանդները։ Սերը դեպի կապույտ խորքը, որոշ կոթողայնությունը, շեշտված ուրվագծերն ու ցայտուն արտահայտված արևելյան դեմքերը կապում են Ավետիսի արվեստը բուն Հայաստանի ավանդներին։ Միևնույն ժամանակ, նա մեծ չափով օգտվում է և Կիլիկյան վարպետներից, չվերարտադրելով սակայն նրանց մանրանկարների նրբագեղությունը (նկ. 6)։

---

8 Մաշտոցյան Մատենադարան, ձեռ. № № 7337, 7750, 7598։

Նման հատկանշական գծեր ունեն Ավետիսի կրտսեր եղբոր՝ Ստեփանոսի նկարները: Այս ծաղկողը շատ բաներում հետևում է եղբորը: Նրա մի քանի մանրանկարներ Ավետիսի կատարած գործերի ուղղակի ընդօրինակություններ են (№ 7477 ձեռագրի մանրանկարները), որոնք սակայն իրենց արվեստով



Նկ. 2

գիջում են: Ստեփանոսը զարդային մոտիվներով է ծածկում նույնիսկ այնպիսի մանրամասներ, ինչպես ժայռերը, հաղորդելով նրանց գունազարդ կտավի տեսք: Յուրաքանչյուր մանրուք զարդարելու նրա սերը վկայում է ժողովրդական ստեղծագործության հետ նկարչի ունեցած կապի մասին:

Բուն Հայաստանի ավանդները տեսնում ենք նաև տաղանդավոր մանրանկարիչ Առաքելի մոտ։ Նա ապրել և ստեղծագործել է XIV դարի կեսերին, Ղրիմի տարբեր քաղաքներում՝ Կաֆայում, Սուրխաթում և Կոկտուում[9]։



նկ. 3

Վերևում նշված բոլոր ձեռագրերի հատկանշական գծերը հատուկ են և Առաքելին, որի մոտ դրանք հատնում են ծայրահեղ արտահայտչականության։

[9] Է. Կոչխմազյան. Ղրիմի հայ մանրանկարիչ Առաքելը, «Բանբեր Մատենադարանի», № 6, էջ 321։

Նրա գրաֆիկական գործերը առավել հստակ են, գծերն ավելի նուրբ ու ճկուն, իսկ գծագրությունը, չնայած երկրաչափական ու բուսական ձևերի բարդությանը, չափազանց պարզ ու որոշակի։ Իր երիտասարդական մանրանկարներում ծաղկողը հանդես է գալիս որպես նուրբ երանգավորման վարպետ։ Ընդհանուր



Նկ. 4

առմամբ պահպանելով Ղրիմի մանրանկարչությանը բնորոշ հագեցած մուգ գունաշարը, կապույտ գույնի գերակշռությամբ, Առաքելը հասել է բացառիկ հնչեղության։ Կապույտ գույնը նրա մոտ հանդես է գալիս երեք աստիճանավորումով՝ բաց կապույտից մինչև մուգ կապույտ (ուլտրամարին)։ Ծաղկողը


Համարին համապրում է մուգ կապույտը մրենագույնի և կարմրի հետ։ Այս մուգ հագեցած երանգավորումը միացած կապույտ խորքին մատնցնում է Աստաքելի ստեղծագործությունը բուն Հայաստանի մանրանկարչական այնպիսի հրաշալի նմուշի, ինչպիսին է Թարգմանչաց Ավետարանը, նկարազարդված 1232 թվականին, Գրիգորի ձեռքով (Մատենադարան, ձեռ. № 2743)[10]։



Նկ. 5


10 Հետագրի գրության հիշյա տեղը հայտնի չէ։ Երկար ժամանակ պահվում էր Թարգմանչաց վանքում (Արցախ), որի պատճառով և կոչվել է Թարգմանչաց Ավետարան։ Հետագրի մանրա-

Թեմբերի մշակման հարցում Առաքելը պերպանցում է Ավետիսին: Նրա կերպարները ավելի նուրբ են, բայց և միաժամանակ՝ վեհաշուք: Առանձնապես հաջող են ստացվում թեմբերը՝ խոշոր, լայն բացված աչքերով, մուգ ակնախոռոչներով, որոնք հաղորդում են նրանց մեծ արտահայտչականություն (նկ. 7):



Նկ. 6

Նկարները հրատարակված են՝ Л. А. Дурново, Древнеармянская миниатюра, Ереван 1952, табл. 20—23. *Л. А. Дурново,* Древнеармянская миниатюра, Ереван, 1967, табл. 24—28. *L. A. Dournovo,* Miniatures arméniennes, Paris, 1960, p. 88—95.



Նկ. 7

Մեր նշած բոլոր ծաղկողների ստեղծագործությունները ընդգրկում են ԺԴ-դարի երկրորդ կեսը, մի ժամանակաշրջան, երբ Հայաստանը հնծում էր մոնղոլական սիրապետության լծի տակ, իսկ Կիլիկյան թագավորությունը մոտենում էր իր մայրամուտին: Այս իմաստով, Ղրիմի հայ մանրանկարչական դպրոցի ծաղկումը XIV—XV դարերում ձեռք է բերում առանձնահատուկ նշանակություն: Սկսած այդ ժամանակից, հայկական գաղթավայրերը դառնում են այն հիմնական կենտրոնները, որտեղ համախմբվում է հայ հոգևոր մշակույթի ներկայացուցիչների զգալի մասը: Այդպիսի խոշորագույն մի գաղթավայր է Ղրիմի հարավ-արևելյան ափը, իսկ այնտեղ ստեղծված արվեստը՝ միջնադարյան հայ արվեստի ավանդների բնական շարունակությունը:

Э. М. КОРХМАЗЯН

О НЕКОТОРЫХ ОСОБЕННОСТЯХ СТИЛЯ АРМЯНСКОЙ МИНИАТЮРЫ КРЫМА XIV—XV вв.

Резюме

В основе миниатюрной живописи крымских армян лежали традиции, унаследованные ими от искусства коренной Армении. Как письменные источники (памятные записи рукописей XIV—XV вв.), так и стиль крымских миниатюр этого периода указывают на их большую связь с искусством северо-западного района коренной Армении, в частности с искусством миниатюры городов Баберд, Карин и, отчасти, Ерзынка.

В статье разбирается творчество крымских миниатюристов Аветиса, Степаноса и Аракела, искусство которых многими нитями связано с миниатюрной живописью городов Баберд и Карин.

E. M. KORKHMAZIAN

QUELQUES PARTICULARITES DE STYLE DE L'ART DE LA MINIATURE ARMENIENNE DE CRIMEE AUX XIV^{e}—XV^{e} SIECLES

L'art de la miniature, chez les Arméniens de Crimée, se fondait avant tout sur les traditions artistiques héritées de la Grande Arménie. Les sources manuscrites (colophons des XIV^{e}—XV^{e} siècles) d'une part, le style des peintres arméniens de Crimée de cette époque, d'autre part, témoignent en faveur des liens étroits qui rattachaient ces derniers à l'art des régions nord-ouest de la Grande Arménie, notamment les villes de Baberd, Karine, et en partie Erznka.

[27] Под госпиталем не обязательно нужно понимать заведение лечебного типа. В средние века в этот термин вкладывалось также понятие дома для престарелых. В связи с этим нельзя согласиться с утверждением Л. А. Оганесяна (см. его кн. История медицины в Армении с древнейших времен до наших дней, ч. 3, Ереван, 1946, стр. 148), рассматривавшего львовский госпиталь исключительно как лечебное заведение.

стены городского кладбища (лл. 2, 30). Совет занимался ремонтом монастыря св. Рипсимэ (л. 101), госпиталя (лл. 103, 112), жилых домов, принадлежащих общине (л. 110). Во время реставрации и перестройки часовни и ризницы при городской церкви, проводимых в 1670 г. на средства богатого купца Л. Матиашевича, совет вместе с епископом-суффраганом Я. Керемовичем (замещавшим Торосовича, уехавшего в Рим) разработал подробный проект строительства, в котором отразились его утилитарно-эстетические воззрения на церковную архитектуру: «Церковную дверь оставить на прежнем месте, ниши замуровать. В этих нишах сделать окна с решеткой и крепкими железными ставнями. Восточные ворота, через которые входили со стороны кладбища на галерею, надо заделать наглухо» (л. 14)[28].

Старейшины наряду с церковной верхушкой несли ответственность за работу приходской школы, в которой дети должны были изучать основы армянского языка. Как указывалось выше, в 1669—1670 гг. в состав совета входили два школьных смотрителя. После смерти одного из них, очень образованного представителя львовской армянской колонии, Г. Капрусевича, интерес совета к деятельности школы погас. По-видимому, школа работала со значительными перебоями. Из других источников известно, что в конце 60-х годов учителями (лат. magister) приходской школы, которая находилась уже под контролем театинцев, были воспитанники последних, священники Г. Захнович и О. Асланович[29]. Позже школа бездействовала и потому во время переговоров, которые в конце 1674—начале 1675 гг. велись между общиной и епископом-суффраганом — со стороны старейшин было выдвинуто требование, «чтобы наши дети проходили начальное обучение на нашем армянском языке и одновременно на латинском» (л. 48). Этот вопрос не был тогда решен — и только в 1676 г. совместным решением совета и архиепископа Торосовича священник К. Муратович был назначен учителем школы (л. 67).

В фактическом подчинении совета находились церковные братства — религиозные объединения армян, возникшие при церквах под влиянием широко распространенных украинских братств. В протоколах упомянуто молодежное братство непорочного зачатия девы Марии и братство взрослых св. Григория. Братства имели в своем распоряжении определенные денежные средства, которые хранились в «братских ларчиках» и расходовались по указанию совета на содержание священников (лл. 7, 16). Этим, по существу, исчерпываются административные функции совета, находившие себе применение внутри общины.

---

[28] Процитированный отрывок имеет большую ценность для исследования истории построенной в XVI в. армянской городской церкви во Львове — единственного в своем роде памятника архитектуры в Восточной Европе, сохранившегося до наших дней.

[29] *A. M. Pidou*, Poczatki i postępy kolegium papieskiego we Lwowie... В кн.: Dzieje zjednoczenia Ormian polskich z kosciołem Rzymskim w XVII w., Warszawa, 1876, стр. 110—111.

Внешняя деятельность совета связана с двумя первостепенной важности вопросами, от решения и дальнейшего развития которых зависела не только роль колонии в общественной и экономической жизни города, но и перспективы дальнейшего ее развития как отдельного национального организма. Два вопроса стояли в центре внимания всей «львовской армянской нации» во второй половине XVII в.: с одной стороны, борьба против засилия католического патрициата, пытавшегося уничтожить автономию общины и ликвидировать ее экономический потенциал, с другой — борьба против введения унии с Римом и одновременно против уничтожения древних армянских национальных традиций, против денационализации армянского населения.

Основные этапы борьбы львовской общины против всеусиливающегося наступления католического патрициата на автономные права общины известны: в XV в. последовало упразднение армянского войта, в XVI в.— сужение компетенции армянского суда, во второй половине XVI — начале XVII в.— ограничение экономических привилегий армян. С моментом окончательной победы контрреформации в Польше (конец XVI в.) к этому присоединились религиозные преследования. Сложившиеся обстоятельства ловко использовало городское управление, не без основания рассчитывавшее на поддержку со стороны всесильной в Речи Посполитой католической церковной иерархии.

В борьбе между советом старейшин и городским управлением, во время которой фактическое существование львовской колонии ставилось на карту, допускались все возможные методы. В соответствии с существовавшими в это время «обычаями» в судах армяне вынуждены были искать окольные пути для решения судебных дел в свою пользу. Потому в протоколах столь часто упоминаются денежные сборы на подарки высокопоставленным лицам, рассматриваются пути для ускорения прохождения дел по различным инстанциям. Судебные разбирательства тянулись годами и даже десятилетиями. Все это требовало от общины не только значительных денежных расходов, но и создания настоящей агентурной сети в высших судебных инстанциях, при помощи которой в нужный момент можно было справиться о состоянии дел. Еще в период 1645—1650 гг. какой-то пан Лапинский снабжал львовских армян необходимыми сведениями (например, о возможном введении подушной подати на армян) — за эти услуги он получил «желтую кожу» и один ковер (л. 31). В Варшаве армяне содержали информатора, некоего пана Сатковского, который считался «покровителем армянских дел» (1683 г., л. 107). Насколько необходимы были подобные методы борьбы, ясно показывает эпизод, имевший место в октябре 1677 г. Старейшины получили из Варшавы сигнал, что «решение, которое паны радные [городского управления] подготовили против нас, они должны были получить из королевской канцелярии». «Хотя удалось предупредить это,— заявили старейшины,— и они не получили подписи его королевской милости, тем не менее необходимо приложить все усилия к тому, чтобы добиться поло-

жительных результатов и они (т. е. радные—Я. Д.) не осуществили столь вредное дело, направленное против нашей нации» (л. 77).

Вот краткий перечень столкновений между общиной и городом, которые нашли отражение на страницах протоколов. В 1673 г. городские власти без ведома старейшин закрыли ювелирную лавку в Бернатовическом доме и арестовали ювелира (л. 73). Разбирательство дела тянулось несколько лет и в 1678 г. дошло до королевского суда, который должен был решить вопрос о том, имеют ли армяне право продавать определенные виды серебряных изделий (л. 85). Одновременно тянулось разбирательство иска общины против городского управления, незаконно требовавшего податей, а также другим образом ущемлявшего привилегии армян (лл. 89, 91, 93, 99, 102, 107, 111, 114 и др.). Иск переходил из одной инстанции в другую и только на восьмой год был решен в пользу армян[30], которые добились некоторого улучшения своего положения в городе (хотя до полного равноправия было еще далеко). Начиная с 1686 г. совет направлял одного члена в комиссию десяти, ведавшую финансами города, двух — в комиссию для сбора подымной подати и трех — в так называемое стрелецкое общество[31]. Шесть членов совета ежегодно освобождалось от податей. В 1684 г. несколько видных членов общины было арестовано по распоряжению бургомистра Д. Вильчека. Таким образом было положено начало новому судебному процессу, длившемуся с 1685 по 1692 г. Выиграли в конечном счете армяне[32].

Несомненно, взаимоотношения между городским управлением и советом не исчерпывались судебными делами. Заседания армянского суда проводились в ратуше (местопребывании городского управления), и старейшины постоянно соприкасались с городскими властями. В ратуше старейшины — как присяжные армянского суда — ежегодно приносили присягу (л. 41). Старейшины посылали двух делегатов в коллегию рецуператоров в ратуше (лл. 46, 76), а также рекомендовали новопоступивших членов общины городскому управлению для получения прав городского гражданства (лл. 73, 76, 99, 115).

В своей борьбе против городского управления армяне умело использовали противоречия, существовавшие между городским патрициатом и феодалами. Феодалы-магнаты, настоящие короли в своих огромных латифундиях, враждебно смотрели на укрепление городской власти и всячески препятствовали этому. В лице некоторых феодалов армяне приобретали покровителей и союзников. Кроме этого, они пользовались поддержкой королей, особенно более дальновидных из них, понимающих значение армянских торговых связей с Востоком для развития экономической жизни в Польше. Несомненно, отношения между армянами и королем, а также верховными (коронными) учреждениями не строились

---

[30] Королевское решение по поводу этого дела опубликовано в кн. F. Bischoff, Urkunden zur Geschichte der Armenier in Lemberg. Wien, 1865, стр. 131—147.

[31] Стрелецкое общество — привилегированное объединение горожан-католиков, занимавшееся военной подготовкой жителей города.

[32] F. Bischoff, цит. работа, стр. 148—152.

исключительно на системе подарков-взяток. Тем не менее эти отношения не были столь бескорыстными и идеальными, как это пытались представлять некоторые историки. Отношения между Яном III (протекционизм которого по отношению к армянам общеизвестен) и армянами базировались на взаимной выгоде. Если, с одной стороны, армяне в определенной степени могли рассчитывать на благосклонность короля при разборе судебных и других жалоб, Ян III часто пользовался кредитом, который ему предоставляла армянская верхушка.

Взаимоотношения армянского патрициата (особенно той его части, которая ради сохранения своих экономических выгод пошла на принятие унии), магнатов и центральной власти необходимо отличать от отношения армянских низов к польской феодальной и церковной верхушке. Заправляющему делами общины совету, конечно, хотелось при каждом удобном случае подчеркивать свои верноподданнические чувства. Среди неимущих и малоимущих армян было много приверженцев древних национальных и религиозных обычаев и не особенно много сподвижников унии и католицизма. Эти внутренние противоречия нашли свое выражение в отказе армянского населения принимать участие в торжественных встречах магнатов, высокопоставленных церковных сановников и даже королей. Для предотвращения бойкота встречи короля Михала старейшины в связи с его приездом во Львов в 1671 г. приняли постановление о наказании возможных виновных 50 зл. штрафа и тюремным заключением (лл. 21—22). Подобное постановление было принято в 1678 г. в связи с приездом короля Яна III (л. 84). На ослушавшихся армян, которые в 1676 г. отказались встречать львовского старосту Я. Цетнера, был наложен денежный штраф (л. 63). Штрафу были подвергнуты также те члены общины, которые в 1682 г. не вышли встречать львовского римско-католического архиепископа К.-С. Липского, а в 1684 г.— львовского старосту А.-М. Сенявского (л. 111). Во время встречи архиепископа Липского дело дошло до вооруженной схватки между армянами и католическим населением. Армяне рассеяли горожан и только после того, как против них был брошен отряд войск, вернулись в свой квартал[33].

Взаимоотношения между советом старейшин и армянской униатской верхушкой во Львове были очень сложными. И в самой общине, и в совете существовали группировки, поддерживавшие идею унии с Римом, и выступавшие против нее. Подобное положение существовало и среди духовенства. Сам архиепископ в 40—60-х гг., учитывая настроение общины, вынужден был лавировать между Римом и Эчмиадзином и был склонен к какому-то компромиссному решению. Обстановка изменилась коренным образом после приезда в 1664 г. во Львов папской миссии театинцев, возглавляемой известным итальянским востоковедом и ревностным пропагандистом унии среди армян Великой Армении К. Галяно. К меркантильным соображениям армянской верхушки, рассчитывавшей

[33] *S. Baracz*, Rys..., стр. 128—129.

после принятия унии сохранить свои экономические привилегии и упрочить свое место в городе, примешивались политические соображения — неясные мечты о том, что Рим способен сколотить антитурецкую коалицию и освободить угнетенный армянский народ.

Приезд театинцев обострил внутреннюю борьбу. С периодом колебаний, когда Торосович формально подчинялся Риму и одновременно поддерживал хорошие отношения с эчмиадзинским католикосом и константинопольским патриархом, было покончено. В совете старейшин, большинство членов которого (также из личных соображений) относилось враждебно к Торосовичу, с приездом театинцев окрепла проримская группировка, возглавляемая Г. Капрусевичем. Однако с того момента, когда выяснилось, что архиепископ и его заместитель стремятся любой ценой — в соответствии с принципами организации римско-католической церкви — избавиться от контроля старейшин и прибрать церковное имущество в свои руки, обстановка еще больше накалилась. Совет старейшин, даже проримски настроенные его члены, ни в коем случае не соглашался идти на столь большие уступки, в результате которых сам попал бы в зависимость от церковной власти.

В конце 60-х гг. под влиянием этих факторов отношение совета к идее унии заметным образом изменилось. В определенной мере оно начало отражать враждебность основной массы армянского населения к идее подчинения церкви владычеству папы, упразднения древних обычаев и обрядов. Патриотические тенденции деятельности совета нашли выражение во многих его решениях и действиях.

Подробное рассмотрение материала протоколов опровергает выдвинутый буржуазно-клерикальной историографией тезис о том, что «личная уния» Торосовича (с 1630 по 1664 гг.) после приезда театинцев на Украину сменилась в 1664—1665 гг. «унией народа». Даже наиболее зажиточная верхушка колонии, которая только в незначительной степени отражала стремления и чаяния армянских низов, в 70—80-х гг. XVII в. отнеслась враждебно к реализации унии на местах в целом, и к деятельности театинцев в частности. Недаром значительная часть армянского населения Украины, опасаясь насильственного введения унии, эмигрировала из пределов Речи Посполитой в более веротерпимые страны (в Молдавию, Венгрию).

27 сентября 1668 г. совет старейшин в связи с очередной поездкой Торосовича в Рим, рассматривал вопрос «об отрыве нашей нации от своей церкви» и вынес решение: «просить его милость отца архиепископа предотвратить это» (л. 3). Конечно, подобное обращение не могло подействовать на столь беспринципного человека, каким являлся Торосович, тем не менее оно характерно для настроений совета (в составе которого находилась ведь проримская группировка!) и общины в это время. Через две недели совет сделал следующий шаг. 11 октября 1668 г., в день отъезда Торосовича в Рим, старейшины отказались снабдить его верноподданническим письмом, написанным от имени общины папе Клименту IX (л. 3). После отъезда Торосовича, которого удалили ловкие

театинцы (архиепископ с его склонностью к компромиссам никак не способствовал укреплению унии), между общиной и этими последними возникло состояние войны. Интриги театинцев, которые добились отсрочки утверждения привилегий львовской общины королем Михалом в 1669 г., чуть было не привели к открытому взрыву народного возмущения[34].

Негодующая община требовала возвращения Торосовича, который в Риме очутился под домашним арестом. Предпринимаемые советом меры — попытка отправить в 1670 г. своего посланца в Рим (л. 16), посылка писем архиепископу с призывом к возвращению (л. 17) — оказались бесплодными. Проримская группировка, возглавляемая Г. Капрусевичем, опиравшимся не только на театинцев, но и на всесильное римско-католическое духовенство, снова подняла голову. Ее участники разгоняли собрания армян, выступавших против национально-религиозных притеснений. Новый (после смерти К. Галяно) руководитель миссии, французский монах Л.-М. Пиду де Сент-Олон (в дальнейшем епископ и французский посланник в Иране) безуспешно пытался маскировать истинные цели театинцев.

Совет старейшин, подталкиваемый общиной, пошел на более решительные меры. Старейшины постановили выдворить театинцев из Львова и потребовали от них освободить занятые под миссию и коллегию помещения около церкви св. Креста[35]. 4 марта 1671 г. на совместном заседании совета и всей общины было принято торжественное решение о бескомпромиссной борьбе против театинцев и местной верхушки униатской церкви. «Совет армянской нации,— записано в постановлении собрания,— совместно со всей общиной и неотделимо от нее, повсюду там, где необходимо, будет расправляться с указанными милостями[36] за их неправильные действия и поступки» (л. 20).

Силы были неравные. Общине не от кого было ждать помощи — да и жаловаться приходилось «по инстанциям», т. е. по существу тем, кто всячески поддерживал театинцев. От жалоб, которые направлялись королю Михалу и папскому нунцию кардиналу Г. Маескотти (постановление совета от 22 января 1671 г., л. 18) или папской консистории (постановление от 4 марта 1671 г., л. 20) нечего было ждать положительных результатов. Обнаглевшие театинцы принялись за перестройку захваченных помещений — это снова вызвало бурную реакцию со стороны общины. Длительные переговоры между советом и театинцами, происходившие в мае-июне 1672 г. (лл. 28—30), также оказались безрезультатными. Театинцы укрепили свои позиции—и дальнейшие жалобы совета, который неоднократно в 1677, 1678 и 1681 гг. (лл. 76, 85, 95) ставил во-

---

[34] Аноним, стр. 171.

[35] Это помещение было предоставлено театинцам под давлением римско-католического архиепископа В. Корыцинского, великого коронного гетмана Я. Собеского и воеводы провинции Руссии С. Я. Яблоновского, в присутствии которых был подписан соответствующий договор (л. 30).

[36] Имеется в виду епископ-суффраган Я. Керемович, замещавший Торосовича, и руководители театинцев Л.-М. Пиду и Дж. Багатта.

прос о возвращении общине зданий около церкви св. Креста, не принесли ровно ничего.

Борьба, которая разгорелась вокруг помещений коллегии театинцев, выдвинула на первый план вопрос о праве архиепископа и епископов распоряжаться церковным имуществом. Театинцы игнорировали права общины, подчеркивая, что захват помещений состоялся по согласию местной армяно-униатской иерархии. После фактического проигрыша дела советом, был создан прецедент для того, чтобы Торосович и (после его смерти в 1681 году) его наследники могли постепенно прибирать церковное имущество к своим рукам.

Материал протоколов превосходно иллюстрирует постепенное ограничение реальных прав совета на церковное имущество. Еще в 1668 г., когда Торосович единолично разрешил богатому армянскому купцу Л. Матиашовичу провести ремонт часовни и ризницы кафедрального собора, запрет старейшин подействовал. Л. Матиашович вынужден был принести свои извинения совету, а строительство началось только после компромиссного решения совета и епископа-суффрагана, совместно утвердивших программу реконструкции (лл. 6, 7, 14). В 1668 и 1674 гг. старейшины еще могли распорядиться произвести переучет церковных ценностей. В 1674 г. они еще были в силах отказать Л.-М. Пиду в передаче ключей от церкви св. Креста (л. 76).

Постепенно церковники берут верх. Церковные ценности в 1675 г. перешли в руки специально назначенных священников-ризничных — представители совета только формально подтверждают их назначение и присутствуют при передаче ценностей (в 1676, 1677, 1684 и 1685 гг., лл. 65, 80, 110, 116). Протесты совета о том, что «выборы ризничного принадлежат радным», а не архиепископу (1677 г., л. 79), прозвучали впустую. В 1677 г. по указанию Торосовича старейшины передали ризничному поступления от сбора пожертвований (церковную сумку) и от колокольного звона (л. 74).

К середине 80-х гг. в области церковных дел у старейшин остались только одни обязанности (содержание священников, ремонт церковных помещений) и ровно никаких прав. В сентябре 1685 г. епископ-администратор Д. Нерсесович отнял у совета ключи от церковной ризницы (л. 117), которые, по-видимому, никогда больше не возвратились в руки старейшин.

Постепенное, но неуклонное сужение компетенций совета старейшин в церковной области коснулось, конечно, не только материальной стороны. Старейшины лишились какого-либо влияния на решение персональных вопросов, к которым они, по многовековой традиции, имели самое тесное отношение. В 60—70-х гг. кандидаты в священники еще изредка обращались к совету за поддержкой у архиепископа или епископа. В 1669 г. в совет обратился дьякон Онуфрий с просьбой, «чтоб он, по древним обычаям, мог получить разрешение на сан священника» (л. 6). В 1673 г. и 1677 г. по этому же вопросу обращались дьякон Ю. Мисирович и Л. Кобачовский (лл. 39, 76); да и то последний только доводил до

сведения совета, что он принимает духовный сан. В то же самое время целый ряд других лиц принял сан униатских священников, не считая нужным сообщить об этом совету. В 80-х гг. никто уже не обращался за рекомендацией к совету. Старейшины лишились также какого-либо влияния на распределение приходов, которое ранее (до 60-х гг.) находилось исключительно в их компетенции.

Исход борьбы между общиной и верхушкой армяно-униатской церкви был предрешен. В столь ультракатолической и нетолерантной стране, какой в XVII в. являлась Речь Посполитая, театинцы и униаты могли рассчитывать на полную поддержку со стороны всех ее административных и судебных учреждений. При столь неравном соотношении сил сопротивление совета и общины — каким решительным оно бы ни было,— не могло продолжаться долго.

На фоне борьбы общины против введения унии в новом свете вырисовываются ее связи с григорианскими церковными центрами. Сложная международная обстановка, постоянные военные действия на территории Украины, да и внутренние неурядицы в среде самой армяно-григорианской церкви очень осложняли связи Эчмиадзина со Львовом. Тем не менее отдельным посланцам католикоса удавалось пробраться во Львов. Оппозиционно настроенный совет, несомненно отражая симпатии более широких слоев населения, оказывал материальную поддержку представителям католикоса, пересылал при их помощи подарки и денежные сборы в Эчмиадзин. Когда в период между 1645 и 1650 гг. к польскому королю направлялись посланцы-нвираки эчмиадзинского католикоса — совет ассигновал 450 зл. на отрез златотканного материала для украшения их повозки (л. 31). В начале 50-х гг., по-видимому, с чашей, подарком общины католикосу Филиппосу, уехал из Львова писарь Кжиштоф. В 1672 г. посланец католикоса Акопа IV Габриель Богосович получил 33 злотых как «подарок и пожертвование католикосу» (лл. 27—28, 35). По поводу прибытия во Львов в 1677 г. другого посланца католикоса Акопа IV — епископа-вардапета Аристакеса был объявлен всеобщий сбор пожертвований, в результате которого было собрано 120 зл. Характерно, что в сборе пожертвований принимал участие также представитель Торосовича — униатский священник К. Муратович (л. 76).

Сохранились сведения о связях общины с армяно-григорианским патриархатом в Иерусалиме. В 1683 г. был объявлен сбор пожертвований в связи с отъездом иерусалимского нвирака Саркиса (л. 107). Неизвестный по имени нвирак получил в 1685 г. для передачи в Иерусалим легаты двух умерших львовских купцов — 100 «левковых» талеров[37].

К сожалению, внутреннее содержание этих связей общины с григорианской церковной иерархией не нашло отражения в источнике. Переговоры старейшин с представителями католикоса и патриарха, несомненно, относились к разряду секретных, и сведения о них не могли вноситься в официальную документацию.

---

[37] Талеры с изображением льва.

Отдельную сторону деятельности совета составляют его связи с другими армянскими колониями на Украине. В отношении некоторых из них (Луцк, Киев, Варяж) львовская колония играла своеобразную «шефскую» роль — небольшое количество армянских поселенцев этих городов передало защиту своих прав и управление общинным имуществом в руки более сильной львовской общины.

Особенно тесными были связи между советом и колонией в Луцке. Совет старейшин управлял всем имуществом луцкой колонии (селом Цеперов, мельницей в этом селе, лл. 26, 27, 38—39, 86, 87 и др.), назначал жалование священнику церкви св. Стефана (лл. 21, 45, 103), собирал деньги на нужды луцкой церкви (л. 6).

Совет принял на себя управление финансами небольшой колонии в городе Варяж. Денежный фонд великого коронного конюшего М. Матчинского (собственностью которого являлся город), определившего в 1682 г. размер жалования местному армянскому священнику, находился в руках совета (л. 104).

Львовские купцы поддерживали торговые связи со своими соплеменниками, проживавшими в городах Ярославе (лл. 8, 17) и Язловце (л. 8), в которых в это время существовали довольно многочисленные колонии.

Трагическая судьба Каменца Подольского, захваченного в 1672 г. турками, вызвала большой приток армянских эмигрантов во Львов. Львовские старейшины приняли на себя защиту прав беженцев — в 1677 г. они представили их пожелания львовскому городскому управлению (лл. 76—77). Некоторые из беженцев были приняты в состав львовской общины (л. 74).

Протоколы дают очень мало материала для освещения взаимоотношений между армянами и коренным украинским населением, а также другими национальностями. Правда, подобные «межнациональные» связи не осуществлялись советом — их надо искать во взаимоотношениях частных лиц. Только отдельные упоминания о подобных связях нашли отражение в источнике. В период 1645—1650 гг., когда община находилась во временных финансовых затруднениях, ее кредитором был львовский горожанин Степан — украинец, одолживший совету 550 зл. (л. 31). Украинцы упоминаются в роли арендаторов села Цеперов, а также мельницы в этом селе (лл. 26—27). В 1668 г. армяне вместе с украинцами входили в состав делегации от города Львова, отправлявшейся на варшавский сейм (л. 1).

Как это ни странно, ни о каких-либо связях между армянами и польским населением города протоколы не упоминают.

На основании протоколов можно совершенно четко судить об общих тенденциях национального развития львовской общины. Полонизация колонии отразилась на ряде любопытных деталей. Исчезают армянские имена и патронимиальные фамилии — на их месте выступают польские имена и полонизированные фамилии. Украинские и тюркские (половецкие, татарские) наслоения, характерные для имен и фамилий украинских

армян в XIV—начале XVII в., уступают место польским влияниям. Эти перемены осуществлялись как раз во второй половине XVII в. Так, например, один из самых богатых львовских купцов Бернат К. Бернатович после получения польского шляхетства переменил имя и фамилию на Бернард Бернацкий[38]. Писарь общины переменил украинизированную фамилию Иваськович[39] на более индифферентную — Лыськевич.

Подобная эволюция наблюдается в области общественно-административной терминологии. Армянские и армяно-половецкие термины — ясах, ереспохан, ивирак и др. постепенно были вытеснены польскими и латинскими — składka, director, posłaniec. Характерный для первой половины XVII в. (и для более раннего времени) термин хуц, употреблявшийся для обозначения совета старейшин, в протоколах совершенно не встречается. Обилие латинских и польских терминов (не говоря о том, что вся внутренняя документация совета велась на польском языке) является несомненным доказательством укрепления польского культурного влияния на армянское население, особенно на его имущую верхушку, которая и не думала о каком-либо серьезном противодействии ассимиляции. Лучшим подтверждением преобладания подобной тенденции в общественно-национальной жизни колоний явилось дальнейшее их развитие.

60—80-е гг. XVII вв.— переломный момент в жизни украинских армян. Армянские колонии очутились под тройным ударом. Экономические основы их существования были подорваны резкими переменами в социально-экономической и политической жизни Украины и Польши. Духовные связи колоний с их далекой закавказской Отчизной были прерваны экспансией римско-католической церкви и последовавшей за ней денационализацией армян. И если только в одном отношении — в административно-судебной области — армянской верхушке удалось временно отстоять обломки автономии, то это была настоящая Пиррова победа, за которую пришлось уплатить национальной самобытностью.

Протоколы армянского совета старейшин во Львове 1668—1686 годов — ценнейший документ жизни армян в столь напряженный период их истории на Украине. Этот исторический источник первостепенной важности заслуживает дальнейшего исследования и изучения.

ՅԱ. Ի. ԴԱՇԿԵՎԻՉ

ՀԱՅԿԱԿԱՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԼՎՈՎՈՒՄ 17-ՐԴ ԴԱՐԻ 60—80-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

(Հայ ավագների խորհրդի արձանագրությունները որպես պատմական սկզբնաղբյուր)

Ա մ փ ո փ ո ւ մ

Հոդվածում քննարկման է ենթարկվում պատմական մի բացառիկ սկզբնաղբյուր՝ Լվով քաղաքի հայկական գաղութի ավագների խորհրդի 1668—1686

[38] *S. Baracz*, Żywoty..., стр. 75.
[39] Иваско — украинская диминутивная форма от Иван.

Քվականների նիստերի արձանագրությունների դիրքը, որն այժմ պահվում է Ուկրաինական ՍՍՀ կուլտուրայի մինիստրության Լվովի գիտական գրադարանում: Այդ սկզբնաղբյուրի մեջ արտացոլված են հարյուրամյակների ընթացքում Լվովի հայկական գաղութի ինքնավարության օրգան հանդիսացող ավագների խորհրդի հասարակական-քաղաքական և վարչական պարտականությունները: Սկզբնաղբյուրի հիման վրա քննարկված են գաղութի սոցիալական կազմվածքի, խորհրդի և գաղութի ներքին անտեսական ու մշակութային կյանքը ղեկավարող նրա հիմնարկությունների առաջացման հարցերը, տրվում է խորհրդի ֆինանսական անտեսության վերլուծությունը: Մեծ ուշադրություն է դարձվում Ուկրաինայի հայ եկեղեցին հռոմեական եկեղեցուն ենթարկելու կապակցությամբ ատրվող պայքարի ուժեղացման ժամանակ լվովահայության վարչա-դատական ինքնավարության պահպանման պայքարում խորհրդի կատարած դերին և նրա դիրքորոշմանը: Հեղինակը ուսումնասիրում է նաև խորհրդի Հայաստանի հետ ունեցած կապերի և Ուկրաինայի հայկական այլ գաղթավայրերի նկատմամբ նրա ղեկավար դերի հետ կապված հարցերը:

I. R. DACHKEVITCH

LA COLONIE ARMENIENNE AUTONOME DE LVOV DANS LES ANNEES 60—80 DU XVII[e] SIECLE

(Une source historique: Les Protocoles du Conseil arménien des Anciens)

Le présent article est consacré à une source historique unique: le Livre des Protocoles des séances du Conseil des Anciens de la colonie arménienne de Lvov de 1668 à 1686 qui est actuellement conservé à la Bibliothèque scientifique du Ministère de la Culture de la R. S. S. d'Ukraine à Lvov.

Cette source donne un tableau des attributions sociales, politiques et administratives de ce même Conseil qui fut, durant quelques siècles, l'organisme central de la colonie arménienne autonome de Lvov.

L'auteur étudie la structure sociale de la colonie, ainsi que les facteurs ayant contribué à l'établissement du Conseil et de ses différents départements chargés de gérer la vie économique et culturelle de la colonie, et nous soumet une analyse des affaires financières du Conseil.

L'article nous éclaire de même sur maints aspects de l'activité du Conseil: sauvegarde de l'autonomie, mesures administratives et juridiques, position adoptée dans la question de la soumission de l'Eglise arménienne d'Ukraine à la papauté de Rome, liens et rapports avec l'Arménie, son rôle dans les autres colonies arméniennes d'Ukraine.

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԵՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ԱՌԸՆԹԵՐ
ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ—«ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ»

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

ԵՐԵՎԱՆ № 9 1969

ՀԱԿՈԲ ՓԱՓԱԶՅԱՆ

ՀԱՅԵՐԻ ԴԵՐԸ ԹՈՒՐՔԻԱՅԻ ՄԵՏԱՔՍԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԵՎ 1729 Թ. ԹԱՎՐԻԶՈՒՄ ԿՆՔՎԱԾ ՀԱՄԱԶԱՅՆԱԳԻՐԸ

Ստամբուլի համալսարանի տնտեսագիտական ֆակուլտետը 1960 թ. հրատարակել է Ֆահրի Դալսարի աշխատությունը նվիրված Բուրսա քաղաքի մետաքսագործության պատմությանը: Դա մի ընդարձակ մենագրություն է, որտեղ հեղինակը աշխատել է բազմակողմանի քննության ենթարկել Թուրքիայում մետաքսագործության զարգացման պատմությունը հարյուրամյակների ընթացքում, սկսած 14—15-րդ դարերից մինչև մեր օրերը: Ուսումնասիրության մեծ մասի համար որպես աղբյուր են ծառայել Բուրսայի Ուլու-Ջամի կոչվող մզկիթում պահպանված և 815 տոլար հաստորներից բաղկացած նույն քաղաքի մահքեմեի (քաղաքացիական դատարանի) նիստերի արձանագրությունները, որոնք սկսվում են Սուլթան Մուհամմադ Բ-ի ժամանակներից (1451—1481 թթ.) և հասնում մինչև 18-րդ դարի կեսերը:

Այդ հետաքրքիր նյութերի մասին հեղինակը տեղեկացել է 1940 թ. բոլորովին պատահական կերպով, իսկ հետո բանակցության մեջ մտնելով մզկիթի վակֆային վարչության հետ, ամբողջ արձանագրությունները տեղափոխել է քաղաքային թանգարան, կարգի է բերել, դասավորել և ապա տարիներ շարունակ զբաղվել դրանց ընթերցման և վերծանության բարդ ու դժվարին գործով:

Արձանագրությունների հարուստ փաստական նյութը Ֆ. Դալսարին հնարավորություն է տվել քննության առնել Թուրքիայի 15—18-րդ դդ. տնտեսական պատմության հետ առնչվող շատ հարցեր և միանգամայն հավաստի տվյալների հիման վրա հանգել նոր և ուշագրավ եզրակացությունների: 10 ընդարձակ գլուխներում մանրամասն հետազոտված է մետաքսի հումքի և գործվածքների արհեստագործական տեխնոլոգիան, գործվածքների արտադրության պետական դեկավարությունը, մետաքսագործական համքարությունների ներքին կառուցվածքն ու նրանց դերը արտադրության կազմակերպման գործում, հումքի ներմուծման և արտադրվող բազմազան և բազմանուն գործվածքների արտահանման պատմությունը, շերամապահության բնագավառում ձեռնարկվող աշխատանքները և ընդհանուր գիտական հետաքրքրություն ներկայացնող այլ հարցեր: Յուրաքանչյուր գլխին կցված են նաև նույն գլխում լուսաբանվող հարցերին վերաբերող փաստաթղթերի (վասիքաներ) խիստ արժեքավոր բնագրեր:

Ֆ. Դալսարի հրապարակած վավերագրերը գալիս են հաստատելու, որ Բուրսայի մետաքսագործության հումքը հիմնականում ներմուծվում էր այն

---

[1] Türk sanayi ve Ticaret Tarihinde Bursa'da Ipekçilik, Fahri Dalsar, Çalışma Vekâleti Araştırma Kurulunda, Istanbul, 1960.

ժամանակ Սեֆյան Իրանի տիրապետության տակ գտնվող Գիլանից, Ադրբեջանից և Հայաստանից: Նյութերի առատությունը Ֆ. Դալտաբին բերել է այն համոզման, որ հատկապես «Տրապիզոնի ճանապարհը Հայաստանից, Ատրպատականից և Կասպիականի ափերից եկող մետաքսի ճանապարհն էր: Գանձակի, Կաֆայի և այլ հեռու երկրների մետաքսը այս ճանապարհով էր գալիս և այս ճանապարհից բացառապես հայերն էին օգտվում... Պարզվում է նաև, որ Արևելքի երկրներում արտադրվող մետաքսը վաճառվում էր Թավրիզում և Հայաստանի մի քանի մեծ քաղաքներում գտնվող գնորդների և այս վաճառականների միջոցով ուղարկվում Անատոլու: Այսպիսով Անատոլու ներմուծվող մետաքսի վաճառքը վաղ ժամանակներից ի վեր մեծ մասամբ Թավրիզցիների և հայերի միջոցով էր կատարվում»[2]:

Ըստ վաճրանների ավյալների հայերի դերը մետաքսի ներմուծման գործում ավելի է մեծանում հատկապես 16-րդ դարում, երբ Սուլթան Սելիմի օրոք ծայր են առնում բուռն հալածանքները շիաների, այդ թվում ադրբեջանցի (Թավրիզցի) վաճառականության նկատմամբ: Այս շրջանում է տեղ, որ Սուլթան Սելիմի հրամանով Բուրսայից և շրջակայքից աքսորում են բոլոր իրանցիներին և նրանց ունեցվածքը ամբողջովին բռնագրավում: Քաղաքում գնալով աճում է հայ ազդարնակչության թիվը և, ինչպես ընդգծում է Ֆ. Դալտաբը, «Հայերը Բուրսայի մետաքսագործության մեջ մեծ գործունեություն են ծավալում»[3]:

Մի այլ տեղ փորձելով մեկնաբանել այս գործունեության համար ստեղծված նպաստավոր իրադրության քաղաքական նախադրյալները, նա գրում է. «Որ մետաքսի առևտրով զբաղվելու Անատոլու երթևեկող հայերի նկատմամբ ավելի նպաստավոր վերաբերմունք է եղել, այդ երևում է նաև Յավուզ Սելիմի հրամանագրից: Տրված խիստ հրահանգում (որտեղ արգելվում էր իրանցիներին մետաքսի առևտրով զբաղվել—Հ. Փ.) նշված է հատկապես, որ հայերը ազատորեն կարող են զբաղվել մետաքսի առևտրով: Պարզվում է նաև, որ շատ հայեր, բոշվոր թուրքերի նման, Թավրիզից և Հայաստանից դուրս գալով՝ շարունակ եկել են ու տեղավորվել Անատոլիում: Այս նորեկներից ինչ կարգով հարկեր գանձելու մասին առանձին հրամաններ կան տրված»[4]:

Սակայն այս բոլորից հետո Ֆ. Դալտաբը իր այս արժեքավոր աշխատության մեջ հարկ է համարել տալու ազգային անհանդուրժողականության, դրելով նեղմիտ ազգայնականության բնորոշ այս տողերը.

«Արևելյան երկրներից Անատոլու մետաքս ներմուծողների մեջ ամենից շատ տեսնում ենք հայերի: Սակայն մետաքսի վաճառական այս հայերի կյանքի ուսումնասիրությունը ևս խիստ օգտակար է, որովհետև մեր ձեռքն անցած շատ վաճրաններից երևում է, որ նրանք միանգամայն թուրքական անուններ են կրել: Հնարավոր է նաև, որ թուրքական անուններ կրող այդ անձնավորությունները թուրքերեն են խոսել: Թուրքական անունով և հավանաբար թրքախոս, սակայն հայ անվանվող այս մարդկանց թուրքության հետ ունեցած առնչությունները պարզելը մեզ չի վերաբերում: Այդուհանդերձ, չի՞ կարող արդյոք, որ Հայաստան մուտք գործած թուրք ցեղերի մի մասը, այնտեղ քրիստոնյա դառնալով, իրենք իրենց հայ են համարել: Եթե մեր ձեռքի տակ վաճրաններ

2 Նույն տեղում, էջ 132:

3 Նույն տեղում, էջ 140:

4 Նույն տեղում:

չլինեին, այսպիսի բան չէինք մտածի։ Ահա օրինակ ինչպիսին են հինգ հոգուց բաղկացած մի հայ ընտանիքի անդամների անունները. Մուրադ որդի Կոջայի, Գոհար դուստր Բուդաղի (Մուրադի կինը) և Շահ-Բուլա, Սուլթան և Մարիամ (սրանց դուստրերը)»[5]։

Կարելի է չկասկածել, որ մեր հեղինակը աշխատել է ընտրել ամենահաջող օրինակը, որտեղ իր կարծիքով բոլոր 5 անուններն էլ թուրքական են։ Բայց արդյո՞ք դա այդպես է։ Նախ պետք է ասել, որ արտարատա վավերագրերում հիշված հատուկ անունների վերծանության ժամանակ վրիպումները անխուսափելի են, մանավանդ, երբ ուսումնասիրողը նախապես ծանոթ չէ դարաշրջանի անուններին, և երբ չկա բնագրի լուսանկարը՝ հնարավոր չէ ստուգել վերծանության ճշտությունը։ Սակայն մի պահ ընդունենք, որ վերծանությունը ճիշտ է։ Այդ դեպքում հիշված անուններից միայն Կոջա (որ ի դեպ, կարող է նաև Խոջա լինել) և Բուդաղ անուններն են, որ կարելի է թուրքական համարել։ Մուրադ անունը արաբական է, որ օգտագործում էին և՛ հայերը և՛ թուրքերը և՛ պարսիկները։ Սուլթանը որպես իգական, ինչպես նաև արական անուն նույնպես արաբական է, որ միջնադարում շատ տարածված էր հայերի մեջ, Շահ-Բուլա (հավանաբար պետք է լինի Շահ-Բանու) իգական անունը պարսկական է, իսկ Գոհար և մանավանդ Մարիամ անունները հայկական են, թեև դրանցից առաջինը, որ պարսկերենում ևս նույն իմաստն ունի, օգտագործում են նաև պարսիկները, որոնցից փոխ են առել նաև թուրքերը, իսկ երկրորդը նույնպես ընդհանուր է և՛ քրիստոնյաների, և՛ մահմեդականների համար։ Հիշված են նաև մի քանի այլ անուններ, ինչպես օրինակ Ջալար-վերմիշ, Խուդա-վերդի և այլն։ Սակայն ինչպես այս, այնպես նաև տասնյակ այլ անունների թվարկումը չի կարող հիմք ծառայել կասկածի տակ առնելու այդ անձնավորությունների ազգային պատկանելիությունը, որի մասին այդ դարերում հարկ է համարվել հատկապես շեշտել։

Ի գիտություն Ֆ. Դալսարի պետք է ասենք, որ 13—18-րդ դարերում արաբական, պարսկական և թուրքական անձնանունները շատ տարածված են եղել հայերի մեջ։ Մեր ձեռագրաց հիշատակարաններում, վիմական արձանագրություններում, ինչպես նաև հայ վաճառականների թողած օրագրություններում և այլ բնագրերում հայկական և քրիստոնեական անունների շարքին հաճախ ենք հանդիպում Ամիր, Ամիրբեկ, Խութլուբեկ, Խաղարբեկ, Բեկթամուր, Ամիրխան, Ամիրշահ, Սուլթանշահ, Շահինշահ, Ջհանշահ, Արդլ Մահմ, Դուվլաթ, Գուման, Հասան, Թաճադին, Խերադին, Շամսադին, Ֆախրադին, Թամամ, Խաթուն, Խասխաթուն, Սուլթանխաթուն, Նազխաթուն, Շահնիգար, Շահնազար, Շահզադե, Շահբուդաղ, Միրզա, Միրաթ, Միրաք, Սարհադ, Նազար, Ֆարուխ, Ֆարխունդե և բազմաթիվ այլ անուններ, որոնց մի զգալի մասը հանրահայտ հայ իշխանների և անվանի հոգևորականների անուններ են[6]։ Անձնանունների փոխառությունը շատ տարածված երևույթ է եղել միջնադարում և շարունակվում է նաև մեր օրերում։

---

5 Նույն տեղում, էջ 139—140։

6 Տե՛ս Լ. Ս. Խաչիկյան, ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1950. ԺԵ դարի հայ. ձեռ. հիշատակարաններ, մաս Ա, Բ, Գ, Երևան, 1955—1967։ Ս. Բարխուդարյան. Ինվան հայ վիմագրության, պրակ, 2, Երևան, 1960։ Հմմտ. Հ. Աճառյան. Հայերեն անձնանունների բառարան, հ. 1—5, Երևան, 1942—1962։

Կարիք կա՞ արդյոք հիշեցնելու նաև, որ Թուրքական անձնանունների մեծ մասը ևս արաբական և պարսկական ծագում ունեն, որ մղումը դեպի զուտ ազգային անունների կիրառությունը նոր երևույթ է՝ կապված կապիտալիստական հարաբերությունների զարգացման և ազգային ինքնագիտակցության վերելքի հետ, որպիսի երևույթ հայ իրականության մեջ սկսում է երևան գալ 19-րդ դարի սկզբներին, իսկ Թուրքերի, ինչպես նաև պարսիկների մոտ 20-րդ դարի 20-ական թվականներից հետո:

Իսկ ինչ վերաբերում է Ֆ. Դալսարի այն «հիպոթեզին», որ 15—17-րդ դարի վավերաններում հիշվող և այսպես կոչված «Թուրքական» անուններ կրող հայ վաճառականները կարող են քրիստոնեություն ընդունած Թուրքեր լինել, ապա ստիպված ենք նշելու, որ հավաստի աղբյուրների այսպիսի հաղվագյուտ մի շանմարանի հետ գործ ունեցող հեղինակը կարիք չունի ոչ մի ապացույց չհիմնավորված հակապատմական ենթադրություններ անելու:

15-րդ դարում բուռն կերպով զարգացող մետաքսագործությունը 16-րդ դարում սկսում է անկում ապրել: Դա մեծ մտահոգություն էր պատճառում օսմանյան պետությանը, որը մետաքսի առևտրից ամեն տարի 6—7 միլիոն ակչե եկամուտ էր ստանում[7]: Փորձելով մեկնաբանել մետաքսագործության զարգացմանը խանգարող ներքին և արտաքին գործոնները, ինչպես վավերանների, այնպես նաև Թուրքական և եվրոպական աղբյուրների ապացույցներով Ֆ. Դալսարը ընդգծում է նախ՝ ամեն քայլափոխին մետաքսագործներից գանձվող ահռելի հարկերը, ապա Արևմուտքում զարգացող մանուֆակտուրային արտադրության մրցակցությունը և հատկապես անվերջ բորբոքվող պատերազմները Արևելքում: Պատերազմներ, որոնց հետևանքով վտանգվում էին կարավանային ճանապարհները և խանգարում հումքի մատակարարմանը, որն, ինչպես վերը տեսանք, գալիս էր հենց ռազմական գործողությունների թատերաբեմ հանդիսացող շրջաններից:

Սակայն մյուս կողմից, ինչպես ճիշտ կերպով նկատված է, տատանվողներ շարունակվող ավերիչ պատերազմների գլխավոր նպատակը՝ այդ մետաքսով հարուստ շրջանների նվաճումն էր և կցումը Օսմանյան կայսրության:

Պարսկա-օսմանյան հարաբերությունների մեջ մետաքսը շատ կարևոր տեղ էր գրավում: Շուրջ երկու հարյուրամյակ տևող թշնամության և արյունահեղ ընդհարումների շրջանում, մի քանի անգամ կնքված հաշտության պայմանագրերում, հատուկ հոդվածով խոսվում էր Իրանից դեպի Թուրքիա մետաքսի առաքումների մասին: Շահ Թահմասպի օրոք 1555 թ. կնքված պայմանագրում նշվում էր, որ Իրանի շահինշահը ամեն տարի 200 բեռ մետաքս էր «նվիրում» սուլթանին: Նվերի անվան տակ ամեն տարի որոշակի քանակով ուղարկվող մետաքսի մի մասը, տրվում էր գործված, իսկ մյուս մասը անմշակ վիճակում: Մոտավոր հաշվումներով այդ 200 բեռի քաշը 30000 կիլոգրամ էր լինում, որ հատուկ արարողությամբ և օսմանցիների կողմից մեծ շուքով կատարվող ընդունելության պայմաններում, հանձնվում էր Դիարբեքիրում: Թե որքան մեծ էր այդ մետաքսի նշանակությունը Թուրքերի համար, այդ երևում է Ֆ. Դալսարի կողմից վկայակոչված այն փաստից, որ երբ մի տարի մետաքսի հանձնումը ուշանում է, և Թուրքերն այդ մասին հիշեցնում են Շահ Աբբասին,

7 Նույն տեղում, էջ 305:

նա պայմանած գոչում է. «Հարկատո՞ւ ենք, ի՞նչ է»[8]: Նկատված է նաև, որ պատերազմական գործողությունների վերսկսմանը միշտ էլ նախորդել է մետաքսի առաքման ընդհատումը պարսիկների կողմից:

Ամեն պարագայում Արևելքում Թուրքիայի նվաճումները չէին ընդգրկում ԲՔի մշակության և շերամապահական անտեսությամբ հայտնի այնպիսի շրջաններ, որոնք կարող էին մետաքսի հումքի մատակարարման սեւական աղբյուրներ լինել: Ամբողջ 16-րդ դարում շարունակվող պատերազմները դադարեցին միայն 1590 թ. Կոստանդնուպոլսի հաշտությամբ, որից հետո շուրջ 15 տարի ամբողջ Անդրկովկասն ու Ատրպատականը մնացին Թուրքական տիրապետության տակ: Թուրքերը չկարողացան նվաճել Կասպից ծովի առափնյա շրջանները՝ Լենքորանը, Աբշերոնն ու Գիլանը, որոնք մետաքսի արտադրության գլխավոր կենտրոններն էին: 1605 թ. վերսկսված պատերազմի հենց առաջին տարում պարսիկները կարողացան նա դրավել Ատրպատականն ու Անդրկովկասը: Շուրջ 30-ամյա կռիվներից հետո 1639 թ. կնքված հաշտության պայմանագրով Թուրքերը ստիպված եղան նա թողնել նախկին սահմանները: Այս խաղաղությունը տևեց շուրջ 80 տարի: 1724 թվականին, երբ աֆղանների արշավանքների հետևանքով երկիրը ենթարկվեց անիշխանության, Թուրքական զորքերը նորից մուտք գործեցին Իրանի հյուսիս-արևմտյան սահմանները: Այս անգամ նա Թուրքերին չհաջողվեց տեր դառնալ մետաքսագործության հարուստ շրջաններին: Ռուսական զորքերը արագ կերպով դրավեցին Կասպիականի ափերը՝ Գիլանը, Մազանդարանն ու Աստարաբադը և հաստատվեցին Անդրկովկասի մետաքսագործության ամենախոշոր կենտրոնում՝ Շամախում: Տեղական բնակչության կողմից Թուրքական իշխանություններին ցույց տրվող համառ դիմադրությունը թույլ չտվեց նաև թեկուզ կարճ ժամանակով հաստատվելու Սյունյաց և Արցախի շերամապահական շրջաններում (Ջանդիզուր և Ղարաբաղ):

Սխալվում է Ֆ. Դալտարը իրանական մետաքսի դեպի Անատոլու առաքումների նվազումը բացատրելով սոսկ Արևելքում շարունակվող պատերազմական վիճակով: Նա շրջանցում է այն փաստը, որ 17-րդ դարի 80-ամյա խաղաղության շրջանում նա մետաքսի առևտուրը Իրանի և Թուրքիայի միջև չաշխուժացավ: Թեև դեռ կարավանների երթևեկությունը շարունակվում էր, սակայն առևտուրը տրանզիտային էր: Իրանական մետաքսը Իզմիրի վրայով գնում էր դեպի Վենետիկ, Ճենովա, Ամստերդամ և Արևմտյան Եվրոպայի այլ արդյունաբերական կենտրոններ: Պետք է ասել, սակայն, որ այս ճանապարհն արդեն երկրորդական դեր էր խաղում: Գիլանի և Մազանդարանի մետաքսը դեռ Շահ Աբբաս Ա-ի ժամանակներից սկսած, մեծ մասամբ նոր Ջուղայի հայ վաճառականների միջոցով արտահանվում էր Պարսից ծոցի նավահանգիստներից: Այս վաճառականներից շատերը շահի առևտրական գործակալներն էին (تاجر خاصّهٔ شریفه-Թաջիր-ի խասսե-յի շարիֆե) և արտահանում էին անձամբ շահի կամ խասսեյի շարիֆեի մետաքսը: 17-րդ դարի երկրորդ կեսից սկսած Թուրքիան, հատկապես Բուրսան այլևս այն շահավետ շուկան չէր և չէր հրապուրում մետաքսի մեծաքանակ առևտրով զբաղվող վաճառականներին: Կարևոր նշանակություն ունի նաև այն հանգամանքը, որ կարավանային ճանապարհները անապահով էին և ենթակա ավազակային հարձակումների: Թուրքիայում չկար

8 Նույն տեղում, էջ 304:

բուրժուական շահույթի հիմնական պայմանը՝ վաճառականի անձի ու նրա անվտանգության ապահովությունը[9]:

Այդուհանդերձ իրանահայ վաճառականությունը շարունակում էր օգտվել մետաքսի առևտրի ավանդական ճանապարհներից, միաժամանակ որոնելով տրանզիտային առևտրի ավելի ապահով ճամփաներ: 17-րդ դարի 60-ական թվականներից սկսած ջուղայեցի խոջաները բանակցություններ էին վարում Ռուսաստանի հետ Աստրախանի և Վոլգայի վրայով իրանական մետաքսը դեպի Եվրոպա փոխադրելու ավելի նպաստավոր պայմանների համար: 1666 թ. Ալեքսեյ Միխայլովիչ ցարին ուղղված դիմումի մեջ նրանք գանգատվում էին Թուրքիայում տիրող անիշխանությունից, կառավարների վրա կատարվող հարձակումներից և կողոպուտից, ինչպես նաև ամեն քայլափոխին գանձվող մեծ տուրքերից[10]:

Հաջորդ տարին Ալեքսեյ ցարը հատուկ պայմանագիր կնքեց ջուղայեցի խոջաների ընկերության հետ, որով նա որոշ արտոնություններ էր տալիս հայ վաճառականներին, սահմանելով համեմատաբար ավելի ցածր մաքսային նորմեր[11]: Սակայն, ինչպես ցույց է տալիս ակադ. Աշ. Հովհաննիսյանը, Ռուսաստանի վրայով կատարվող տրանզիտային առևտուրը մեծ չափեր չընդունեց և չկարողացավ լրիվ կերպով փոխարինել Թուրքիայի վրայով կատարվող առևտրին[12]: Ավելի խրախուսելու համար հայ վաճառականությանը, 1689 թ. Մոսկվայի պետությունը արևելյան բոլոր ազգերի առևտրականներին զրկեց Ռուսաստանի վրայով առևտուր անելու իրավունքից, այն դարձնելով միայն հայերի մենաշնորհը: 1711 թ. նոր պայմանագրով վերանորոգվեցին 1667 թ. հայ վաճառականությանը տրված արտոնությունները: Սակայն միջազգային բաղաքական և տնտեսական իրադրությունը այնպիսին էր, որ Ռուսաստանի վրայով կատարվելիք առևտուրը ամեն կերպ պիտի խոչընդոտվեր «ոչ միայն Թուրք առևտրական ուղիների վրա գերիշխող ֆրանսիական կապիտալի, այլև ովկիանոսային ճանապարհների վրա գերիշխող անգլիական կապիտալի կողմից»[13]:

Հակամարտությունը այս հողի վրա շարունակվեց մինչև 1725 թվականը, երբ արդեն Պետրոս Ա-ին հաջողվեց ռազմակալման ենթարկել Իրանի մետաքսագործության ամենահարուստ նահանգները: 1725—1735 թթ. սկզբնաղբյուրներն ու դիվանական նյութերը վկայում են, սակայն, որ պայքարը մետաքսի համար շարունակվել է նաև այս շրջանում: Որոշ վիճակագրական տվյալների համաձայն, ռազմակալման միայն առաջին հինգ տարիների ընթացքում ռուսական իշխանությունները Գիլանից արտահանվող մետաքսից և այլ ապրանքներից 734661 ռուբլի մաքս էին գանձել[14]: Այդ նշանակում է, որ միջին հաշվով

---

9 *Ф. Энгельс.* Внешняя политика русского царизма. «К. Маркс и Ф. Энгельс. Сочинения» том XVI, часть II, первое издание, Москва, 1936, стр. 22.

10 Армяно-русские отношения в XVII веке, сборник документов, Ереван, 1953, стр. 37.

11 *Նույն տեղում, էջ 62—65:*

12 *Աշոտ Հովհաննիսյան, Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, դերք երկրորդ, Երևան, 1959, էջ 448:*

13 *Նույն տեղում, էջ 451:*

14 *П. Г. Бутков,* Материалы для новой истории Кавказа, том I, СПБ, 1869, *էջ 150.*

տարին 146932 ռուբլի եկամուտ էր ստացվում միայն այդ մի կետից, որ իրարին ամենահարուստ շրջանն էր:

Մատենադարանի կաթողիկոսական դիվանում պահպանվել է մի համաձայնագիր կնքված՝ մի կողմից՝ Թավրիզի փաշայի և մյուս կողմից՝ մի խումբ Բուրք վաճառականների միջև, որտեղից իմանում ենք, որ այդ տարիներին էլ դեռ շարունակվում էր Գիլանի մետաքսի առաքումը դեպի Միջերկրականի թուրքական նավահանգիստները: Վավերագրում համաձայնություն էր կայացվում մետաքսի բեռներից դանձվող մաքսի չափերի մասին, նշվում էր նաև, որ այն դանձվելու էր միայն Արդարիլում և Թավրիզում և կարդացվում՝ Ասրրպատականի մյուս քաղաքների ռահդարներին, Թավրիզից անցած մետաքսի բեռներից ոչ մի ակչե մաքս չպահանջել:

Փաստաթղթի բովանդակությունից դժվար չէ կռահել, որ թուրքական իշխանությունները այդ տարիներին ամեն կերպ աշխատել են նպաստավոր պայմաններ ստեղծել և արտոնություններ տալ Բուրք վաճառականներին՝ ներգրավելու համար նրանց, Օսմանյան պետությանը մեծ եկամուտներ բերող մետաքսի առևտրի մեջ: Եկամուտներ, որոնք գոյանում էին տարանցիկ առևտրից դանձվող և հատկապես նավահանգստային մաքսերից: Ինչպես հաստատում է նաև Ֆ. Դալսարը, իրանական մետաքսը 18-րդ դարում Թուրքիա էր ներմուծվում արդեն ավելի շատ ոչ թե որպես հումք տեղական արհեստագործության համար, որն այլևս ի վիճակի չէր մրցելու արևմտյան մանուֆակտուրային արտադրության հետ, այլ հիմնականում՝ որպես տարանցիկ ապրանք, որ գնում էր տպավիլու Արևմտյան Եվրոպայի արդյունաբերական կենտրոններում:

Բուրք վաճառականների հետ կնքված այս համաձայնագրի բնագրի պահպանումը էջմիածնի կաթողիկոսական դիվանում հուշում է նաև, որ թուրքական իշխանությունները ցանկացել են մաքսային նոր կարգի մասին տեղեկացնել նաև հայ վաճառականությանը, որոնք, ինչպես վերը տեսանք, դարեր շարունակ առաջատար դեր ունեին իրանական մետաքսի արտահանման գործում:

Այս միջոցառումներն անշուշտ անզոր ճիգեր էին միայն բանուկ պահելու հաղարամյակների անցյալ ունեցող կարավանային ճանապարհները, որոնցից ստացվող եկամուտները կարևոր տեղ էին գրավում Օսմանյան կայսրության ֆինանսներում: Ինչպես ցույց է տալիս Ֆ. Դալսարը, պաշտոնական ավյալների համաձայն 19-րդ դարի երկրորդ կեսում արդեն, երբ կայսրության տարբեր հատվածներում ևս շերամապահությունը բավական զարգացել էր, Միջերկրականի թուրքական նավահանգիստների վրայով Մերձավոր Արևելքից դեպի Եվրոպա արտահանվող մետաքսի 26 տոկոսը գալիս էր Սիրիայից և Պաղեստինից, 24 տոկոսը՝ Թուրքիայից (Անատոլու), 20 տոկոսը՝ Կովկասից, 11 տոկոսը՝ Իրանից, 7 տոկոսը՝ Հայաստանից և 12 տոկոսը՝ Թուրքեստանից (Միջին Ասիա)[15]: Եթե ի նկատի ունենանք, որ Կովկասն ու Հայաստանը (ի նկատի ունի Արևելյան Հայաստանը.—Հ. Փ.) նախկինում իրանական տիրապետությունների մեջ էին մտնում, ապա կտեսնենք, որ 15—16-րդ դարերում համարյա 100 տոկոսով իրանական մետաքս արտահանող նավահանգիստներից, 19-րդ դարում արտահանվող մետաքսի միայն 31 տոկոսն էր գալիս Իրանից և նախկինում Իրանին ենթակա Անդրկովկասից:

---

15 F. Dalsar, նշված աշխատությունը, էջ 452:

Ստորև հրապարակում ենք 1729 թ. հիշյալ համաձայնագրի թուրքերեն բնագրի մեր վերծանությունն ու վավերագրի լուսանկարային պատճենը, ապա-վով նաև բովանդակության հայերեն թարգմանությունը.

ԹԱՎՐԻԶԻ ՓԱՇԱՅԻ ԵՎ ՄԻ ԽՈՒՄԲ ԹՈՒՐՔ ՎԱՃԱՌԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ 1729 Թ. ԹԱՎՐԻԶՈՒՄ ԿՆՔՎԱԾ ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐԸ

(Մատենադարան, կրպկ. թիվ՝ն, թղթապանակ, 1 գ. վավ. 325, մեծ. 29×22 սմ. բնագիր).

Ըստ այսմ թող գործադրվի. (առուգրություն)

Գրությանս պատճառն այն է, որ սույն հազար հարյուր քառասուն մեկ թվականի (1729) մարտի սկզբից մինչև շուբաթի (փետրվար) վերջը, Թավրիզում վաճառականների հետ համաձայնություն է կայացել, որ Գիլանի կողմից փոխադրվող մետաքսի բեռներից՝ յուրաքանչյուր գրասուի բեռան համար Արդաբիլում չորսական դուրուշ, իսկ Թավրիզում 16-ական դուրուշ և չորս հակից բաղկացած մեկ ուղտաբեռից դարձյալ Արդաբիլում 4-ական՝ իսկ Թավրիզում 36-ական դուրուշ մաքս դանձվի։

[Այս մասին] մենք մեր հոժար կամքով վերոհիշյալների (վաճառականների) հետ պայմանավորվել ենք, որպեսզի նրանք էլ իրենց մետաքսի բեռները այլ տեղով չտանեն, այլ բերեն Թավրիզ և նշված հոժարակամ պայմանավորվածության համաձայն մաքսը վճարելուց հետո, բացի Թավրիզից և նրան հնթակա վայրերից, ոչ Սարաբում, ոչ էլ Մարանդում, Չորսում, Մարաղայում, Սոյուղ-Բուլաղում և կամ այլ վայրերում, որտեղ ռահդարություններ կան, նրանցից ռահդարության անունով ոչ մեկ ակչե և ոչ մի հատիկ չոխտի դանձվի, վերոհիշյալ կերպով [մաքսը] վճարելուց հետո, ավել կամ պակաս պահանջներով ոչ մեր և ոչ նրանց կողմից որևէ վնաս չպետք է լինի, որի համար էլ այս գրությունը տրվեց նրանց։

1. Նվաստ Ալի-ադա Գյումուշխանեցի
*կնիք. Հավիտենականության սիրոջ ծառան է՝ Ալին**
2. Նվաստ Սուլեյման-ադա
կնիք. Ամենակալ աստծու աղոթարար ծառան է Սեյիդ-Սուլեյմանը.
3. Նվաստ Իմամ-զադե Ահմադ-ադա
կնիք. Թող Ահմադը արժանանա ով տեր իր պետության.
4. Նվաստ Արդուլլա-ադա
կնիք. Աստծու ծառա՝ Արդուլլա
5. Նվաստ Քյոդակ Ալի-ադա
կնիք. Հավիտենականության սիրոջ ծառան է Ալին.
6. Նվաստ Կարա Իբրահիմ-ադա
կնիք. Իբրահիմ—1140 (1728)

---

* *Կնիքները դրված են յուրաքանչյուրի անվան ճիշտ հակառակ կողմը, քղքի մյուս երեսի վրա։ Փորձել ենք վերծանել նաև կնիքների մակագրությունները, որոնք խալամական կնքագրության համար որոշ հետաքրքրություն են ներկայացնում.*

7. Նվաստ Ալի(՞)-աղա, հաջի Ահմադ-աղա մաքսատան լիազոր Թավրիզում

կնիք. Արժանի արա քո գիությանը ո՞վ սեր Ահմադին.

8. Նվաստ Բեքիր-աղա Արաբկիրցի

կնիք. Առածու սեմին կապավինեմ,
Արուարքրն եմ, չորս սիրելու սիրեցյալն եմ:

9. Նվաստ Մուսաֆա-աղա

կնիք. Տիեզերքի փառքի ստեղ Հողը՝ Մուսաֆա, 1138 (1726)

10. Նվաստ Արաբաքր-աղա

կնիք. Արաբաքրն եմ՝ չորս սիրեցյալի սիրելին եմ, 1139 (1721)

11. Նվաստ Հեծյալ(՞) Մուհամմադ-աղա

կնիքի կենտրոնում. Նրա ծառան՝ Մուհամմադ.
շուրջը՝ մի անբնթեռնելի էսոյակ

12. Նվաստ Իսմայիլ-աղա

կնիք. Ապավինում եմ իմ արարչին, նրա ծառան՝ Իսմայիլ

13. Նվաստ Մինան-աղա և Հասան-աղա

կնիք. Քո գինվորն եմ ես ո՞վ Իմամ Հասան

14. Նվաստ Սալհ-աղա

կնիք. Ապավինում եմ իմ արարչին, նրա ծառան՝ Սալհ

15. Նվաստ Մուհամմադ-աղա չորումցի

կնիք. Քող Ահմադը արժանանա ո՞վ սեր քո գիությանը

16. Նվաստ Սեյիդ Հասան-աղա

կնիք. Քո գինվորն եմ ես ո՞վ Իմամ Հասան

17. Նվաստ Իբրահիմ-աղա անդարացի

կնիք. Ամեն մի բանություն կանցնի այս պատվավոր անունով,
Իբրահիմ անունը թող ամեն վտանգից կպահպանի:

Լուսանցքում.

Ստորագրված և կնքված իսկականի հետ նույնն է.

Գրնց՝ ամենակարող աստծու փառքի առաջ տնանկ՝ մեղկա Սեյիդ-Սուլեյմանը, որ փոխարինում է Թավրիզ քաղաքում: Քող աստված նեղի նրան:

կնիք. Համատապյալների համար գիություն խնդրող՝ մարգարեի ծառա՝ Սեյիդ-Սուլեյման՝

---

* Իսկականի հետ ճիշտ լինելու մասին սույն մակագրությունից պետք է եզրակացնել, որ համաձայնագիրը կազմված է եղել մի քանի օրինակից, տարբեր մարդկանց և տարբեր տեղեր ներկայացնելու համար: Վավերագիրը նոտարական պատճեն չէ, այն վավերացված և կնքված է համաձայնվող կողմերի ստորագրությամբ և կնիքներով:

ՀԱՄԱԶԱՅՆԱԳՐԻ ԹՈՒՐՔԵՐԵՆ ԲՆԱԳԻՐԸ

صحّ

موجبنجه عمل اولنمق

باعث تمسك در كه

اشبو ببك يوز قرق بر سنه‌سى مارت ابتدا سندن شباطن غايتنه كلنجه تبريزده بازركانلرايله قول قرار اولنان كيلان طرفندن مرورعبور ايده‌جك حرير يوكلرينك هربارگير يوكى لربندن اردبيل‌ده دردر غروش وتبريزده اون التى شر غروش و دوه يوكى چارطاى اولورايسه بنه اردبيل‌ده دردر غروش و تبريزده اوتوز التى شر غروش رسم كمرك النمسى حسن رضامزايله مسفورلرايله قول و مسفورلر دخى حرير يوكلرينى بر آخر محلدن كوتورميوب تبريزه كتوروب منوال مشروح اوزره حسن رضامزايله قول قرار ايلدوكمز كبى رسم كمركلرينك ادا ايلدكدن صكره غيرى تبريز و توابعلر يندە كرك سراب و مرند و جورس و مراغه و صوق بولاق و ساير راهدارلغ اولان يرلرده راهدارلغ نامیله بر افچه و بر حبّه النميوب منوال مشروح اوزره ادا ايلدكدن صكره زياده و نقصان طلبيله كرك طرفلريمز و كرك طرفلريندن نزاع* اولنمق اوزره يدلرينه اشبو تمسك ويرلدى

الفقير كومش خانه‌لى على اغا**

مهر ــ بندۀ ازلى عبده على

الفقير سليمان اغا

مهر ــ الله حسبى بندۀ داعى سيد سليمان

الفقير امام‌زاده احمد اغا

مهر ــ لطفك [مظهرى] اوله يارب احمد

الفقير عبد الله اغا

مهر ــ بندۀ خدا عبد الله


الفقير ارض روملى كودك على اغا

مهر ــ بندۀ ازلى عبده على


---

* Բնագրում՝ نظا

** Բնագրում այսպես



1729 թ. Պայմանագրի թուրքերեն բնագրի լուսանկարը



الفقير قرا ابراهيم اغا

مهر ــ ابراهيم ــ ١١٤٠

الفقير على (؟) اغا الحاجى احمد اغا امين كمرك تبريزده

مهر ــ لطفك مظهرى اوله يارب احمد

الفقير عربكرلو بكر اغا

مهر ــ اميد زدركاه خدا دارم ابوبكرم محب چار يارم

الفقير مصطفى اغا

مهر ــ خاك پاى فخر عالم مصطفى ــ ١١٣٨

الفقير ابو بكر اغا

مهر ــ ابوبكرم محب چهار يارم ــ ١١٣٩

الفقير قطنه (؟) محمد اغا

مهر ــ اورته ده «عبده محمد» دردطرفده بر رباعى

الفقير اسماعيل اغا

مهر ــ توكلى على خالقى عبده اسمعيل

الفقير سندن اغا و حسن اغا

مهر ــ عسكرى يا امام حسن

الفقير صالح اغا

مهر ــ توكلى على خالقى عبده صالح

الفقير چورملى محمد اغا

مهر ــ لطفك مظهرى اوله يارب محمد

الفقير سيد حسن اغا

مهر ــ عسكرى يا امام حسن

الفقير انكورلى ابراهيم اغا

مهر ــ هربر ظلم كچه اشبو اسمى معتبر
اسمى ابراهيم نمرود سندن حفظ ايلر

طبق اصله الممضى المختوم. نمقه الفقير الله عزجل السيد سليمان المولى خلافه بمدينه تبريز غفرله

مهر ــ رضا جويندهٔ الطاف مبين رسولك بندسى سيد سليمان

А. Д. ПАПАЗЯН

РОЛЬ АРМЯН В ПРОИЗВОДСТВЕ ШЕЛКА В ТУРЦИИ И ДОГОВОР, ЗАКЛЮЧЕННЫЙ В 1729 г. В ТАВРИЗЕ

Резюме

В монографии Ф. Далсара[1], вышедшей в свет в 1960 г. в Стамбуле, особо подчеркивается, что начиная с XIV в. армяне играли важную роль в производстве шелка в Анатолии. Именно при их посредстве иранское шелковое сырье ввозилось в Анатолию из Гиляна, Азербайджана и Армении.

Однако, начиная с XVIII в., иранский шелк экспортировался в Турцию не в качестве сырья для местного промысла, который уже не был в состоянии соперничать с западным мануфактурным производством, а главным образом как транзитный товар, приносивший ежегодно Османской державе по 6—7 миллионов акче дохода. Но начиная с XVII в. значительная часть иранского шелка экспортируется через порты Персидского залива; армянские же купцы получают по договору, заключенному ими с русским царем, право экспортировать шелк в Западную Европу через Россию на более льготных условиях.

В 1725—1735 гг., когда русские войска временно оккупировали важнейшие шелководческие районы Ирана, турецкие власти пытались задобрить купечество путем введения более доступных таможенных норм.

В данной статье публикуется договор, заключенный между Тавризским пашой и группой купцов. Подлинник договора хранится в настоящее время в архивном отделе Матенадарана имени Маштоца.

H. D. PAPAZIAN

LE RÔLE DES ARMÉNIENS DANS LA PRODUCTION DE LA SOIE EN TURQUIE ET LE TRAITÉ CONCLU À TABRIZ EN 1729

La monographie de F. Dalsar „Türk sanayi ve Ticaret Tarihinde Bursa'da Ipekçilik" (Çalışma Vekâleti Araştırma Kurulunda, Istanbul, 1960) attire l'attention sur le rôle particulièrement important que jouèrent les Arméniens dans la production de la soie en Anatolie à partir du XIV^e^ siècle.

Au XVIII^e^ siècle, la soie iranienne est exportée en Turquie non plus pour les besoins de l'industrie locale, désormais inapte à rivaliser avec les manufactures d'Occident, mais principalement comme marchandise de transit fournissant au trésor ottoman un revenu annuel de 6 à 7 millions d'aktché.

---

[1] Türk sanayı ve Ticaret Tarihinde Bursa'da Ipekçilik, Fahri Dalsar, Çalışma Vekâleti Araştırma Kurulunda, Istanbul, 1960.

Au XVII[e] siècle déjà, la majeure partie de la soie iranienne est acheminée depuis les ports du Golfe Persique. Un traité conclu entre le Tzar de Russie et les négociants arméniens autorisait ces derniers à faire transiter la soie destinée à l'Europe occidentale en Russie à des conditions plus favorables.

En 1725—1735, les Russes ayant occupé provisoirement les principales régions séricicoles d'Iran, la Turquie s'efforça de se gagner la confiance des marchands en introduisant des tarifs douaniers accessibles, ce qui donna lieu à la conclusion d'un traité (Tabriz, 1729) entre le Pacha du lieu et un groupe de marchands.

L'original de ce document se trouve conservé à la Section des Archives du Maténadaran d'Erévan.

Բ Ն Ա Գ Ր Ե Ր

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌՉՆԹԻՐ
ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ—«ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ»

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

ԵՐԵՎԱՆ № 9 1969

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ (XI—XVIII ԴԴ.)

Տպագրության պատրաստեց Նորայր եպս. Պողարյան

(Երուսաղեմ)

Երուսաղեմի Սուրբ Հակոբյանց վանքի մատենադարանի թիվ 3701 ձեռագիրը նոտրագիր համառոտ ժամանակագրություն մըն է, բաղկացած 192 էջերն, խմբագրված ԺԸ դարուն։ Ձեռագրիս սկիզբը պակասավոր է։ Առաջին երեք պրակները—հավանաբար յուրաքանչյուրը 12 թերթե բաղկացած—փրթած կոտրած են, իսկ Դ պրակեն մնացած է միայն չորս թերթ։ Որով էջ 1 այժմ կը սկսի Երիսաոսի Ռեհը, հայոց ՆՂԵ թվականով։

Նախնական մասերուն մեջ նման է Սամուել Անեցիի ժամանակագրության, որ կը հասնի մինչև էջ 22։ Ապա ունի նմանություններ Սամուել Անեցիի ժամանակագրության տարբեր շարունակություններուն հետ։ Ավելի ուշ կհիշեն Առաքել Դավրիժեցիի պատմությունը, ՌՈԿԷ թվականին ներքև։

Ներկա ժամանակագրությունը ունի շատ մը կարևոր տեղեկություններ, իր կողմե գրի առնված կամ այլուստ անծանոթ աղբյուրներե քաղված։

Սույն ժամանակագրության ամբողջական հրատարակությունը թողլով ավելի պատեհ ժամանակի, առայժմ կը բավականանանք հանելով անկե ընտրովի քաղված մը, նախապատվություն տալով հայ ժողովուրդի կյանքին հետ մոտեն կապ ունեցող տեղեկությանց։ Արտագրումի աշխատանքը կատարեց օր. Արփինե Հ. Սրճունի՝ մեր առաջնորդությամբ։

Ն. Ե. Պողարյան

6 մարտ 1966

Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն
(Ընտրովի)

ՌՄԴ = ՇԱ՝.— Տէր Պետրոս կաթողիկոսն երեր գկենաց փայտն ի Պոնտոս, որ է Տրապիզոն, ի ժամանակս Վասլի կայսերն Յունաց, և արար գյուրօրհնէքն և գետն արդելաւ յետս ժամ մի. և անտի դարձաւ ի Կոստանդնուպօլիս և եկաց անդ ամս Դ։

ՌՄԹ = ՇՉ.— Յայսմ թուին փոխեցաւ ի Քրիստոս Տէր Պետրոս ի Սեբաստիայ և եղաւ ի վանս Սուրբ Նշանին, կեցեալ յաթոռ հայրապետական ամս ԽԲ. և յաջորդէ Տէր Յակիկ ամս Ը, ոմանք ամս Բ։

---

* Տեղ տեղ գրիչը թվականը գրած է փակագծի մեջ. ես պահեցի նույն ձևով. Ն. Պ.

ՌԿԲ = ՇՔ.— Տէր Խաչիկ՝ քոյր որդի Տէր Պետրոսին, շատ շարիս կրեաց ի յունաց, զի Տուկիծն տարաւ զնա ի Ստամպօլ և կամէր առնել քաղկեդոնիկ, և պահանջէր ի նմանէ զգանձն Տէր Պետրոսին. և Գ ամ արկ զնա ի բանտ և հրով փորձեալ ի նոցանէ՝ ոչ այրեցաւ։

ՌԿՋ = ՇԺԳ.— Յայսմ թվականի ի ծովի Տիրամօրն յաւուր Բ շրթի առաւ յԱնի

ՈՂԲ = ՇԼՔ.— Բուղան ամիրայ էառ զԳանձակ. զՓառլուն կալաւ և ի սուլտանսն, և ի գերութիւն վարեաց զկանայս եւ զմանկունս, եւ բարձան Թագաւորք յԱնւոյ, որ էր վերջինն Թագաւորն Յովաննէսն, որպէս որ ի վերոյ գրեցաք։

ՌՀԸ = ՇԻԲ.— Օշին իշխանն այսմ ամի ի բռնութիննէն Տաճկաց և ի ժառանգութիննէն իրմէ, որ կոչի Մայրեաց Ջուրք, հանդէպ Գանձակայ, ունելով ընդ իւր զեղբայրն իւր զՀալկամ եւ զմայրն իւր եւ զամուսինն իւր և ազատագունդ իշխանօք, և ամենայն կահիւքն, ունելով եւ ընդ իւր և զմաան Սուրբ Առաքելոյն Պետրոսի։ Եւ եկեալ յաշխարհն Կիլնկեցոցն, և յաջողմամբն Քրիստոսի եւ Սուրբ մաաին առաքելոյն, էառ ի տաճկաց զյականաւոր բերդն Լամբրօն, որ է առ ստորոտով լերինն Տորոսի, ի գահ մայրաքաղաքին Տարսօնի։

ՌՂԱ = ՇԼԸ.— Յայսմ ամի եկն ի Խորասանայ Մէլիքշահ Սուլթանն և էառ զԱնտաք, զՓիլարտոսն տաճկացոյց իւր կամաց եւ ետ նմա զՄարաշ. եւ կոխեալ երիվարաւն ի ծովն եւ ետ շուրթ Աստուծոյ, որ սիրեաց խաղաղութեամբ ի ծովէն Պարսից մինչ ի ծովն յարեւմտից։

ՌՂԲ — ՇԼՔ.— Բուղան ամիրայ էառ զԳանձակ. զՓառլուն կալաւ և ի սուլթանն տարաւ։

ՌՂԳ = ՇԽ.— Ի սուլթանն գնացին Հայոց եւ վրաց Թագաւորքն՝ Կիւրիկէ և Գօրգի։

ՌՂԶ = ՇԽԳ.— Սպանաւ Դըդուշն արքայ Դամասկոսի և Պաղեստինացոցն, և նոցա մերձաւորացն, ի Բէքթարուխէն ի Սպահանն պատերազմաւ։

ՌՃԳ = ՇՄ.— Ոչ վառեցաւ լոյսն Երուսաղէմ յաւուր շրթու, այլ ի կիրակի իններորդ ժամու։

ՌՃԳ = ՇՄԱ.— Ի ծովն ծառզարդարի ծովազատիկ արարին տասն ազգք. Հայք և Ասորիք ուղիղ կացին։

ՌՃԺԸ = ՇԿԲ.— Մերժեցան ի հայրենեացն որդիքն Կիւրիկէի։

ՌՃԻԷ = ՇՀԳ.— Պարոն Թորոս Տէրն Կիւլիկիոյ վերծեալ ի գերութենէ զկնի մահուան հօրն իւրոյ Լեւոնի, զոր գերեալ էր Թագաւորն Ըստամպօլայ, զի խափանեսցեն զյառաջանալ նոցա։ Եւ նա վերծեալ եկն հետեւակ առ Աթանաս պատրիարգն Յակոբեաց, եւ նա եւ նմա զձին իւր եւ երկոտասան այր, եւ ած զնա ի գիշերի ի բերդն, զոր Ամուդայն կոչեն, եւ այնու դարձեալ տիրեաց բոլոր երկրին։

ՌՃԼԱ = ՇՀԸ.— Յայսմ ամի վարդապետն Կիրակոս կանոնադիր Դրազարկուն հանգեաւ ի Քրիստոս։

Եւ ի սոյն ամի մեռաւ պարոն Թորոս եւ թաղեցաւ ի Դրազարկն, եւ էառ զիշխանութիւն նորա Լեւոն՝ եղբայրն իւր։

ՌՃԼԹ = ՇՁ.— Մանիլ թագաւորէ Յունաց ամս ԽԹ. զկնի ՇԹ ամին Կալօժանին։ Յայսմ ամի փոխեցաւ ի Քրիստոս մահուամբ մեծ վարդապետն Սարկաւագն ի Հաղբատ։

ՌՃՇԶ = ՈԹ.— Յայս [յ]արկ նուիրանացն ասացեալ եղեւ ի Տէր Բարսեղ եպիսկոպոսէ Դրազարկու, Ճոն կոչեցեալոյ, որ զմարկոս Աւետարանն մեկնեաց։

ՌՃԿՌ = ՈՔ.— Ի Միլան եղեւ այնքան մեծ ձմեռն եւ ձիւն սաստիկ մինչ զի խՃՈ (?) անձինք մեռան, եւ չորացան ամենայն պտղաբերք եւ բոյսք։

ՌՃՀԱ = ՈԺԸ.— Եկն ձիւն սաստիկ յաւուրս Սուրբ Խաչին ԻԵ. թիզ, եւ ի Հնդիկս ԺԴ թիզ։

ՌՃՀԹ = ՈԻ.— Ի սեպտեմբերի ամսոյն երեւեցան Գ լուսինք եւ Գ Արեգակունք, եւ ի Սիճիլիայ այնքան մեծ շարժ եղեւ, մինչ զի բազում քաղաքք տապալեցան ի հիմանց։

ՌՃՁՌ = ՈԻՔ.— Աստանօր զտեղի առեալ կացին շարագրութիւնք գեղեցկաբանին Սամուէլի հանճարեղ քահանայիւ յԱննեցւոյ... (Համմտ, Ս. Աննեցի, էջ 140)։

ՌՃՁԸ = ՈԼԵ.— Եւ յայսմ թուին երեւեցաւ նոր իմն սքանչելիք... (Համմտ. Ս. Աննեցի, էջ 141)։

ՌՃՁՔ = ՈԼՁ.— Յայսմ ամի թարգմանեաց Մխիթար պատուական քահանայն կաթուղիկեայի զպատճառս խաւարման Արեգական եւ Լուսնի, ի Պարակէ միոջէ, Ոճիքէ անունն, զոր ասէր թարգմանեալ ի Յունաց ի Պարս։

Դարձեալ ի սոյն թվին խաւարեցաւ Արեգակն։

Դարձեալ ի սոյն թվին Մսրայ սուլթան Սալահատինն էառ զերուսաղէմ ի ֆռանկէն։

ՌՃՂ = ՈԼԷ.— Զթամարն կոտորեաց Թուրքն սաստիկ յոյժ ի Դուռն Շամբոյն։

ՌՄԺԲ = ՈԿՌ.— Վաղճանեցաւ Մխիթար վարդապետն որ մականունն Գոշ կոչեցաւ։

ՌՄԺԶ = ՈԿԳ.— Զկարս էառ Զաքարէ ի տաճկաց։ Մեռաւ Մէլիք Էտիլն։

ՌՄԺԷ = ՈԿԴ.— Հայերն ի Մանազկերտոյ ելան։

ՌՄԺԸ = ՈԿԵ.— Սուլթան Քաքայուզն պաշարեաց զբերդն Կապան, եւ թագաւորն Լեւոն թողեալ զայն ընդ այլ կողմ արշաւեալ յերկիր նորա եւ սաստիկ աւերեաց, եւ ապա սէր արար. Եւ տուեալ զկուլուայ՝ փրկեաց զիշխանսն։

ՌՄԺԹ = ՈԿԶ.— Մեռաւ Ֆախրատինն յԵզրնկայն։

ՌՄԻԱ = ՈԿԸ.— Տէր Կոստանդին ամս ԽԸ։ Եւ Մէլիք Ղազիզ զկալաթ էառ և սուվն երեկ։ Մեռանի թագաւորն Լեւոն եւ Բ. ամ իշխանք տիրեն։

ՌՄԻԲ = ՈԿԹ.— Յայսմ ամին յղեաց Զինումէչինու Ջանկիզ խանն, ազգաւ թաթար, զօրք ի Շահաստան, որ եկեալ առին։

ՌՄԻԳ = ՈՀ.— Իսմին ամի ագեւոր ասող երեւեցաւ։ Թաթարն զվրացին կոտորեաց։ եւ յերկիրն Թօսկանայ Գրանդուքի տեղեաց քար ի յերկնից, եւ եղեւ շարժ մեծ, եւ ապան լճի անձինս։ եւ Ֆիլիպ փեսայ Լեւոնի թագաւորէ Կիլիկիոյ ամս Գ. սա Ֆրանկ էր, որդի բրինձին յԱնտիոքայ, առեալ զդուստր թագաւորին Լեւոնի թագաւորէ ամս Գ. կամեցաւ գնալ թագուհեան յԱնտիոք, վասնորոյ լուեալ մնծամեծքն Կիլիկիոյ, կալեալ զնա կորուսին. եւ զՋապէլ, կինն նորա, նստուն ի Հեթում, եւ թագաւորեցուցին զնա։

ՌՄԻԵ = ՈՀԲ.— Լաչ թագաւորն մեռաւ, Ըռուդուբան նստաւ. եւ զՇահմէլիքն ի Կարնոյ քաղաքն տարան։ Հեղեղն զվաթ տարաւ։

ՌՄԻԶ = ՈՀԳ.— Հեթում թագաւորէ Կիլիկիոյ ամս Ե։

ՌՄԻԷ = ՈՀԴ.— Ամիր Ջաքարէ մեռաւ։

ՌՄԻԸ = ՈՀԵ.— Ղազան էառ զվաթ, սուլթանն էհար զվրացին ի Գաոնի։

ՌՄԼ = ՈՀԷ.— Խորազմ էառ զՄուշ եւ զՏողոտափ։ Ցռանկն էառ զերուսաղէմ։ Հոռոմցին կոտորեաց զխորազմն։ Քէմիլն էառ զԱմիթն։ Հոռոմցին էառ զվաթ։ Քէմիլն ի Հոռոմն եկաւ եւ չկարաց առնուլ։ Եւ այսմ ամի նորոգեցաւ պարիսպն Տարսոնի ձեռամբ թագաւորին Հայոց Հեթմոյ։

ՌՄԼԳ = ՈՁ.— Թաթարն զխորազմն կոտորեաց եւ էառ զԳանձակ։

ՌՄԼԷ = ՈՁԴ.— Եկն խորազմն եւ ժ ամիս պաշարեցաց զվաթ եւ առ զնա։ Իսկ Ալաոին սուլթանն և Աշրաֆն կոտորեցին զնա Եասսիճեմէնն։

ՌՄԼԸ = ՈՁԵ.— Թաթարն էառ զԱնի եւ զամենայն տիեզերս։ Դարձեալ ի սոյն թվին շարժ եղեւ երկրական եւ եկեղեցի մի փլաւ։

ՌՄԽ = ՈՁԷ.— էառ թագաւորն զՀօռի եւ զԱնի։ Եւ սարաճինացիք հալածեցան ի Սպանիոյ։

ՌՄԽԱ = ՈՁԸ.— Խաւարեցաւ Արեգակն։ Եւ այսմ թվին մեռաւ Աւագն։

ՌՄԽԴ = ՈՂԱ.— Պաչօն էառ զԿարնոյ քաղաքն. Հոռոմք զնզրնկայն, եւ ԺՁԻ մարդ մեռաւ։

ՌՄԽԵ = ՈՂԲ.— Յաղթեաց Թաթարն սուլթանն Խայաթաւտինի եւ էառ զամէն Հոռոմք։ Եւ Հոռոմցին յԱմիթ եկաւ, չկարաց առնուլ. էառ զՍեւերակն, զՈւրհայ եւ զԽառան։

ՌՄԽԸ = ՈՂԵ.— Տիրեաց Թաթարն աշխարհին. մեռաւ Աշրաֆն Քէմիլն Տէլէդինն։

ՌՄԽԹ = ՈՂԶ.— Հալապին զխորազմ կոտորեաց. Թաթարն զհոռոմցին կոտորեաց եւ զԱնեաստ էառ։ Թաթարն զքաղաքացայ դուռն վանից։ Սուլթան Ղիասատինն մեռաւ, Գ որդի եթող։

ՌՄԾԱ = ՈՂԸ.— Արեգակն խաւարեցաւ։ Պապայ Ռասուլն էլաւ։

ՌՄԾԲ = ՈՂԹ.— Թաթարն զԱմիթ կոտորեաց։ Աւագն մեռաւ։ Պապն փախեաւ։

ՌՄԾԳ = Ջ.— Վանական վարդապետն վաղճանի, որ էր այր բանիբուն եւ աստուածահաճոյ վարուք։ Այսմ ամի եկն մարախ։

ՌՄԾԴ = ՋԱ.— Թաթարն զԿարնոյ քաղաքն էառ։

ՌՄԾԵ = ՇԲ.— Թաթարն ի Հալպայ դուռն գնաց։ եւ Աւետիսն զԱրքէլն չինեաց։ եւ Մանդու խանն թագաւորեաց։

ՌՄՃՂ = ՉԳ.— Շարժ եղեւ էզընկէն։ Եւ Արղունն խանն նստաւ. սա համարեաց զաշխարհս եւ եղ հարկ ի վերայ ամենից գլխոց։

ՌՄԿԱ = ՉԼ.— Դաւիթ Բագրատունի վրաց յԱփխազն եմուտ։

ՌՄԿԲ = ՉԹ.— Սուլթանն Մարայ կոտորեաց զղօրս Բաթարին, որ էր գլխաւորն Իթպուղային։ Եւ ի սոյն թվին Հուլաւու խանն էառ զՀալապ։

ՌՄԿԳ = ՉԺ.— Սպանաւ Զաքարիայ։ Եւ ի սոյն թուին Պաղտատ աւերեաց։ Յայսմ ամի մեռաւ իշխանաց իշխանն եւ հայր Բագրատունիին Հեթմոյ՝ պարոն Կոստանդինն։

ՌՄԿԴ = ՉԺԱ.— Հուլաւու խանն նստաւ։

ՌՄԿԶ = ՉԺԳ.— Շահպանտինն տարաւ զվարդապետն Վարդան ի մօտ Հուլաւու խանին, զրպտում բանս իմաստութեան հարցումն արար, եւ մեծաւ պատուով պատուեաց զվարդապետն։ Եւ ագիւոր ասաղ եղեւցաւ։

ՌՄԿԷ = ՉԺԴ.— Ասբայ խանն նստաւ։ Եւ եկն Մարցին ի Կիլիկիայ, որ է Սիս, կոտորեաց եւ այրեաց զկէս երկրին, եւ զերի տարաւ զԼեւոն որդի Բագրատունիին Հեթմոյ, եւ զմիւս որդին զԹորոս սպան. եւ զԱնտիոք այրեցին եւ որդի Բագրատունիին աղատեցաւ ի Մոնայ։

ՌՄԿԸ = ՇԺԵ.— Կոստանդին կաթողիկոսն բերաւ ի Ֆրանկաց զՀիւանդ օծանելոյ կարգի օրինակն, զձէթ օրհնելոյն եւ Հիւանդ օծանելոյն։ Ապազան խան նստաւ ի տեղի հօրն որ է Հուլաւունն։

ՌՄԿԹ = ՉԺՉ.— Արղուն խանն նստաւ։ Եւ զկնի Տէր Կոստանդնու, որ կաթող դամս ևԸ, յաջորդէ Տէր Յակոբ Տարսօնու ամս ԺԸ։

ՌՄՀԳ = ՉԻ.— Այսմ ամի ժ աղգ քրիստոնէից մոլորեցան վասն զատկին։

ՌՄՀԵ = ՉԻԲ.— Դեմետր Բագրատ նստաւ եւ յայտնեցաւ նշխարք Սրբոյն Մեծին Ներսէսի։

Աստանօր զմեծ բահանայապետն եկեղեաց գաւառէն, զտէր Սարգիսն, ի քառասնորդին անօրէն Հագարացիքն սպանին եւ զԵզեկ եպիսկոպոսն։

ՌՄՉԱ = ՉԻԸ.— Հոռոմոց թուրքն այրեցին զհռչակաւոր ուխտն մենաստանի Սկեւռան. եւ զերեաց զաւագ Մլիճին եւ սպան ի բնակչացն անձինս Չ.։

Մանկու Թամուրն Մարր գնաց կոտորեցաւ։

ՌՄՉԲ = ՉԻԹ.— [Յ]այսմ ամին յետ ԻԲ ամին եւ ԻԳ յաւուր Բագրատունեաննն Միխայէլի Բագրատուրէ յունաց որդի նորա Անդրոնիկոս։

ՌՄՉԳ = ՉԼ.— Շարժ եղեւ եզընկէն Աստուած պահեաց որ ոչ փլաւ։

ՌՄՉԴ = ՉԼԱ.— եկն Մանկու Թամուրն հեծելովք ի Հոռոմք, եւ գնաց առ նայ Լեւոն Բագրատուրն Կիլիկիոյ. եւ դիմեալ ի վերայ եգիպտացւոցն ի սահմանս Պաղեստինոյ, սկիզբն յաղթեաց բայց յետոյ յաղթեցաւ՝ բուռ բանիւք. եւ երկուցեալ յետս դարձուցին։ Եւ Բագրատուրն դարձաւ ի տեղի իւր։

ՌՄՉԵ = ՉԼԲ.— Շարժն անդադար դԱրեւէշ եւ զԽլաթ։ Եւ մեռաւ Պաղանն ի խեռիան, ժէ ամ նստեալ։

ՌՄՉԷ = ՉԼԴ.— Տէր Կոստանդին որ մեծացաւ յաթոռոյն ամս Գ։

ՌՄՉԸ = ՉԼԵ.— Արղունն նստաւ զյուխ Թաթարին ամս է, որ էր յոյժ սիրօղ քրիստոնէից. եւ Բագրատուրն Լեւոն գնաց առ Արղունն։

ՌՄՁԹ = ՉԼՁ.— Շարժ եղեւ եղբնկէն ի մայիսի ամսոյն ահագին, եւ բազում մարդիկ մեռան, որ պիտի միայն Աստուծոյ է գիտելի:

ՌՄՂ = ՉԼԷ.— Տէր Ստեփաննոս եկեղեցաց գաւառէ ի գեղջէ Խախայ, ամս Գ: Եւ Հեթում թագաւորէ ամս է:

ՌՄՂԳ = ՉԽ.— Մոլորեցան յոյնք եւ արարին զծռապատիկ: Եւ յայնմ ժամանակին ի Կիլիկիոյ երկիրն կային թագաւորք Հայոց, որ նոքա ընդ Յունաց արարին, եւ կէսքն ուղիղ են կացեալք: Քաղաքուն խան նստաւ ամս Գ.:

ՌՄՂԴ = ՉԽԱ.— Առին զՀռոմկլայն եւ զկաթողիկոսն զտէր Ստեփաննոսն գերի վարեցին յԵգիպտոս:

ՌՄՂԵ = ՉԽԲ.— Տէր Գրիգոր ամս ԺԳ.: Սա այր գիտնական եւ յոյժ հմուտ հին եւ նոր կտակարանաց, իմաստուն եւ բանիբուն, որ արար բազում երգս շարականաց, եւ պայծառացոյց կարգաւ զեկեղեցիս Հայաստանեայց: Եւ ի սոյն ամի Մարցին եհմուտ ի Կիլիկիայ, եւ առհասարակ այրեաց եւ աւերեաց զդիւղ եւ զքաղաքս բազումս. զորս ապան եւ զորս գերի վարեաց: Ի սոյն ամի փոխեցաւ առ Քրիստոս սուրբ եւ առաքինի վարդապետն Գէորգ Սկեւռացին:

ՌՄՂԶ = ՉԽԳ.— Խան Ղազանն մեծ հալածանս յարոյց եկեղեցւոյ, եւ բարեպաշտն Հեթում խաղացոյց գնալով յարեւելս պատահելով դառնութեան ժամանակին: Եւ Բայտօղան, եղբայր Ապաղին, խան նստաւ յամս Ա.: Խապան նստաւ ամս Բ. շատ պատերազմեցաւ ընդ Մարս:

ՌՄՂԷ = ՉԽԴ.— Սմպատ ամս Բ. թագաւորէ Սսայ, ոչ հաւանութեամբ Կիլիկեցւոցն, այլ բռնութեամբ: Ձի Հեթումն յանձնեաց ի նա զերկիրն, եւ ինքն եւ եղբայր իւր Թորոս գնացին ի Բուղանդիայ. եւ յորժամ դարձան անդրէն, տեսին զի թագաւորեալ էր, ոչ մտին յերկիրն: Եւ յետոյ կալեալ զերկոսին եղբայրան, եւ զերիցագունին զՀեթմոյ զաշխն կուրացոյց, եւ զԹորոսն սպան:

ՌՄՂԸ = ՉԽԵ.— Քակեցին զեկեղեցիքն ի ձեռն Նաւրուզին: Եւ զկնի նորին եղբայրն Հայրպանտէն ամս ԺԲ:

ՌՄՂԹ = ՉԽԶ.— Կոստանդին, որդի Լեւոնի, եղբայր Թորոսի, Հեթմոյ եւ Սմպատայ, պատերազմի ընդ Սմպատայ. եւ ըմբռնեալ զնա եղ ի բանտի: Եւ դառեալ զՀեթում առողջացոյց զմի ակն, եւ թագաւորէ Ա. ամ: Եւ զկնի մի ամի իշխանքն Հայոց զրկեցին զՀեթում եւ նա աքսորեաց զնա ընդ Սմպատայ:

ՌՅ = ՉԽԷ.— Հեթումն զԿոստանդին աքսորէ ընդ Սմպատայ եւ ինքն գնաց ի Տաճարն: Յայսմ ամին Մարայ Լաչինն եկն ի Կիլիկիայ, եւ անթիւ բերդորայք մեռան ի սովոյ եւ ի ջրոյ:

ՌՅԱ = ՉԽԸ.— Յայսմ ամի յարեան ոմանք, որք պահօք Ճղնէին, բայց զեկեղեցի, զքահանայ եւ զխոստովանութիւն արհամարհէին. եւ իմայելացիքն չինքեանս ջանային բարշել: Եւ ընչիւք զերծեալ ի նոցանէ եւ կացեալ քրիստոնեայք:

ՌՅԳ = ՉՇ.— Գնաց Հեթում ի Դամասկոս ի խան Ղազանն:

ՌՅԴ = ՉՇԱ.— Յայսմ ամի Մարցին Գ անգամ եկաւ ի Կիլիկիայ եւ յԱտանայ եւ ի Տարսոն, եւ ապան դրաւումս եւ զերեաց: Յայսմ ամի արար Ստեփաննոս Սիւնեաց եպիսկոպոսն զՀակաճառութեան գիրքն բնդդէմ երկաբնակաց:

ՌՅԵ = ՉՇԲ.— Դարձեալ գնաց Հնձոմ ի Դամասկոս եւ շփոթեալ դարձաւ առ Ղազանն: Ղազանն մեռաւ եւ նստաւ եղբայր իւր Խարբանտան: Սա եղեալ խարաճ առնուլ ի քրիստոնէից: Եւ ոմանց ի մօրթին կրցին վասն աղքատութեան:

ՌՅԶ = ՉՇԳ.— Յայսմ ամի սատակեցաւ խան Ղազանն, որ ուրացաւ զՔրիստոս. քանզի մինչ ի սա քրիստոնեայք էին նախնիք իւր՝ նեստորական դաւանութեամբ, ըստ Վարդանայ: Եւ սա ուրացաւ, ասեն, վասն ժամուն երկարութեան, զի խաղով էր ամենայն ինչ: Եւ նստաւ վերայ գրեալ եղբայրն Խարբանտան:

ՌՅԷ = ՉՇԴ.— Տէր Կոստանդին ամս ԺԵ. սա հրամանաւ Հնձմոյ ջուր էարկ ի սուրբ խորհուրդն, եւ զօծս առնէր ըստ նմանութեան Ֆռանկաց, յորով սպանմունք եղեն յոյովք:

ՌՅԸ = ՉՇԵ.— Խարանումն ժամահարին. եւ ջուր արձակեցաւ ի վերայ Եգբնկային եւ բազում վնաս արար:

Ի բռնակալութեան աղգին նեստորաց Խարբանտայ խանին, որ էր այր չար եւ ատեցօղ քրիստոնէից, եւ պատրեալ ի դիւթականաց եւ յաղանդաւորաց շեխաց, եւ խորհուրդ չար ի մէջ բերելով, գործակցաւն իւրեանց սատանայիւ, սկսան մարանչիլ բնդ անյաղթելի վիմին Քրիստոսի. եւ հանել զհրովարտակ բնդ ամենայն տիեզերս, որ բնդ իւրով իշխանութեամբ էին, ի վերայ քրիստոնէից. այնու կամ դառնալ ի մոլար դաւանութիւն Մահմէտի, կամ տալ գխարաճ ամէն մարդ իւրոյ գլխոյն, զոսկն դահեկան. եւ Թուր եւ ապտակ ի ցերեկն, եւ զմորուան ճողել, եւ սեւ կարկատան մի ի վերայ աջոյ յուսին կարել նախատինք վասն Քրիստոսի:

Եւ չար դեսպանքն իբրեւ դարեւանարրու գազան արձակեցան ի վերայ ամենայն քրիստոնէից, բնդ ամենայն քաղաքս, եւ ի գաւառս, ի վանորայս, եւ յամենայն տեղիս. քննացող(՞) լինէին ահացուցանելով զամենեսեան: Քանզի այսպէս գրեալ է ի մահարեր հրովարտաքին, ոչ գժամ օրհնել, եւ ոչ չհկեղեցի մտանել, եւ ոչ զմանկունս մկրտել. կամելով միահաղոյն բառնալ զամենայն կրօնս քրիստոնէից: Իսկ բանաւոր հօտքն Համբերեցին յամենայն նեղութեան, եւ եառն նմա զոր խընդրեցաք:

Իսկ անօրէն եւ անբարիշտ Խարբանտայ խանն, իբրեւ եհաս եթէ այնու ոչ կարաց յաղթել քրիստոնէիցն, յաւել այլ եւս հարուածս ի վերայ քրիստոնէից. կամ զամենեսեան ներքինիս առնել, կամ զմի ակն հանել, կամ դառնալ ի ...կրօնն Մահմէտի, որոյ վասն բազումք մեռան, վասն անուանն Քրիստոսի, եւ բազումք զանգիտեալ դարձան ի.... կրօնս նոցա:

ՌՅԹ = ՉՇԶ.— Օշին ամս ԺԲ: Յաւուր աւադ Սուրբ Զատկին Կոստանդին կաթողիկոս արար ժողովք, բնդ աւադ պարոնն Հնձոմ, եւ միա-

բանեցան ընդ եկեղեցոյն Հռոմայ եւ բակեցին դուխտ սուրբ էուսաւորչին մերոյ, եւ հաւանեցան առնել զաօն Մինդիանն Քրիստոսի ի դեկտեմբեր ԻԵ. եւ զամենայն սօնս սրբոց իւրաքանչիւր տեղիս ուր եւ դիւրքն։ Եւ ջուր արկանել ի սուրբ խորհուրդն։

ՌՅԺ = ՉՇԷ.— Եկն Սմպատ ի Կիլիկէ եւ եդին ի գղեակն։ Եւ շարժն տարաւ զսուրբ Առաքելոյն վանքն Թաթէոսի, զեկեղեցին եւ զվանքն կործանեաց, եւ Հն. հոգի սպան։

ՌՅԺԱ = ՉՇԸ.— Ի սաղրելոյ իշխանացն կորուսին զՍմպատն. հանին զվարդապետներն ի բանտէն եւ դարձեալ աթոռեցին։

ՌՅԺԲ = ՉՇԹ.— Գրեաց Թագաւորն Օշին յարեւելք, եւ վասն չրի ասաց ժողով լիննել, եւ ոչ եկին յարեւելցիք։

ՌՅԺԳ = ՉԿ.— Մորեխ եկն աշխարհ եւ արար բազում վնաս։

ՌՅԺԴ = ՉԿԱ.— Յայսմ ամի առաւ մայրաքաղաքն Միւտինէ Հայոց ի Հագարացոց, եւ խոտոր գերութեամբ վարեցան եգիպտոս։

ՌՅԺԸ = ՉԿԲ. — Գլուխ աղգին նեստորաց Խարբանտայ մեռանի յիւրոցն եւ նստաւ Ապուսայիտն Խարպի որդին։

ՌՅԺԹ = ՉԿՉ.— Փոխի մահուամբ աւ Քրիստոս պարոն Ալինախ եղբայրն Հեթմայ եւ Օշնի Թագաւորին։ Եւ կա հանդուցեալ ի Դրազարկն։ Եւ պատճառ մահու նորա այս է. լողկացեալ եղեւ ի գետն Տարսոնի, եւ էր ընդ նմա ի լողկանալն տաճիկ մի, եւ կհար զնա ոտամբն ի գլուխն եւ մեռաւ։ Ի սոյն ամի հանուն յաշխարհն Կիլիկիոյ չարն Թամուրտաշն սիրելոյ աղագաւ. եւ նստաւ Գ օր յառաջն Սուայ, եւ ահ տագնապի անկաւ ի վերայ նորա ի Տեառնէ. ել եւ զնաց։ Եւ յիւրանին բազում գերի տարան ընդ ինքեանս և զրազումս սպանին։

ՌՅԻԲ = ՉՀԲ.— Եկն Չօպանն ի Հռոմ ի խնդիր Տամուրտաշէն։ Եւ տարան աւ խանն. եւ սպանին զՏմբշխ խօճան եւ Չօպանն փախեաւ։

ՌՅԻԶ = ՉՀԳ.— Տէր Յակոբ ամս ԺԴ։

ՌՅԻԸ = ՉՀԲ.— Վերացոյց Ապուսայիտն զՉօպանն, որ զաշխարհս ի ձեռն ունէր, եւ մեռաւ ի փախչելն։ Ի սոյն ամի որդի նորա Տամուրտաշն եկն ի վերայ Եղբնկային, եւ դարձեալ փախեաւ ի Մարդ, եւ անդ սպանաւ ի սուլթանայ։

ՌՅԻԹ = ՉՀՉ.— Ի սոյն ամի սպանին զեպիսկոպոսն Կարնոյ՝ զՏէր Գրիգորիս. եւ ջուրն ի խորհուրդն էր։

ՌՅԼ = ՉՀԷ.— Յայսմ ամի եկն շէխ Հասան Ուստապէկն ի Կամախ։

ՈՅԼԲ = ՉՉԲ.— Կապոյտ նշան դրին քրիստոնէից։

ՌՅԼԶ = ՉՉԳ.— Մեռաւ Ապուսայիտ խանն եւ նստաւ ի տեղի նորա Արփայքաւնն կէս ամս եւ սպանաւ։ Եւ նստաւ Մուսայ խանն Գ ամիս. եւ նստաւ Ահմատ խանն Ա. տարի եւ սպանաւ։ Եւ նստաւ Սուլէյման խանն։

ՌՅԼԷ = ՉՉԴ.— Ի սոյն ամի խաստեցին զեղբնկայն Թամուրտաշն, եւ որդի նորա փոքր շէխ Հասանն, եկն Սարոխանէկն. եւ ի սոյն յամի յԱրաղնանն խաստեց զԱհւասատ, մինչեւ ի սովոյն նեղեալ տուին զքաղաքն։ Ի սոյն ամի երթայ Սուլուպէկն ի շէխ Հասանի վերայ։

ՌՅԼՀ = ՉՉԵ.— Յայսմ ամի սպան խամայելեան յարեան ի վերայ Կիլիկէի, զբաղումն ի սուր մաշեցին եւ վարեցին ի գերութիւն յԵգիպտոս եւ ի Ղարաման. զի թագաւորն Լեւոն ոչ էր, այլ գնացեալ էր յօգնութիւն Ֆրանկաց, վասն ապատութեան քաղաքին Երուսաղէմայ. զր եղիպտացիքն առեալ էին զԵրուսաղէմ:

ՌՅԼԹ = ՉՉՂ.— Մարտի Գ յաղուհացիցն Բ շարաթի խաւարեցաւ արեգակն:

ՌՅԽ = ՉՉԷ.— Վախճանեցաւ սուրբ վարդապետն Նարէկ: Մհամատ ամբարշին նստաւ: Ալի փաշէն սպանաւ ի խալիզ սղայէն: Եւ յայսմ ամի եկն շէխ Հասանն, որդի Տամուրթաշին, ի վերայ Եգբնկին, եւ հանեաւ հանին թէ Տամուրթաշն եկեր է ի Մարայ, եւ ի հետէ նստաւ ՂԸ օր:

ՌՅԽԱ = ՉՉԸ.— Տէր Մխիթար ամս ԺԴ: Յայսմ ամի եկն Եաշպատինն ի վերայ Եգբնկին. ի սոյն ամի եկն խալիքն ի վերայ Եգբնկին եւ այրեաց:

ՌՅԽԲ = ՉՉԲ.— Կոստանդին թագաւորէ Կիլիկիոյ ամս Բ.:

ՌՅԽԳ = ՉՂ.— Եկին հրամանաւ փոքր շէխ Հասանին Նաշիտօնն եւ Թօտօնն ի վերայ Եգբնկին եւ նստան ԺԲ օր:

ՌՅԽԴ = ՉՂԱ.— Կոստանդին ամս ԺԱ թագաւորէ Կիլիկիոյ:

ՌՅԽՉ = ՉՂԳ.— Ի նախանձու իշխանացն սպանին զԿոստանտինոս թագաւորն եւ զեղբայրն իւր Մէմբռնդին: Եւ նստաւ միւս Կոստանդին ի Սիս քաղաքի: Եւ յայսմ ամի Ալփին եկն ի Կարնոյ քաղաք, եւ հարկապահանջութեամբ նեղեաց, մինչ զի ամենայն երկիր ի սպառ աւերեցաւ: Մեռաւ մեծ իշխանն պարոն Վասիլն Մարաջախտն նոյեմբերի ԺՐ.:

ՌՅԽԸ = ՉՂԵ.— Սպանանէ Ելականն զՏօրխանն որդի Չօպանին եւ զիշտօնն եւ այլ բազում գլխաւորք: Եւ մեռաւ Սաֆիպէկն եւ էյնապէկն ի Կամախ:

ՌՅԽԹ = ՉՂՉ.— Յայսմ ամի մեռաւ պարոն Թորոս Լիպարենց, յուլիսի Ա.:

ՌՅՇ = ՉՂԷ.— Եղեւ սով սաստիկ ի վերայ աշխարհիս Հայոց ղամս Գ. եւ գայլք արձակեցան ի մարդիկ. եւ ապա անկաւ մահատարաժամ, եւ անապատ արար զբազմամարդ երկիրս Հայոց. եւ յոլովից գիրեղմանք՝ փոր գազանաց եղեն, վասն զի շատք անթաղ մնացին եւ անծնունդ ժամանակի:

ՌՅՇԳ = Պ.— Բայբուզան գնաց էառ եւ գնաց ի Մէքային, եւ տարաւ զդուստրն սուլթանին ի Թավրէզ Աշրաֆին:

ՌՅՇԼ = ՊԵ.—Շարժ եղեւ եղբնկէն: Ի յօրն է և Ը հինգ երիցայր, սակայն Աստուծով վնաս չեղեւ: Եւ ի Սպանիայ երիւեցաւ սիւն մի հրեղէն ի յերկինս, եւ եղեւ շարժ մեհագին: Եւ մեռաւ Կոստանդին թագաւոր եւ թագաւորէ միւս Կոստանդին որդի պարոն Հեթմոյ:

ՌՅՇԹ = ՊՉ.— ԶԱշրաֆ եսպան Ղանբէկն, եւ Ախին նստաւ, սաստիկ պատերազմաւ կռուեցան սուլթան Վայիսն եւ Ախին. յետոյ ձերբակալ արարին զԱխին եւ ածին առաջի սուլթանին, եւ նա ետ սպանանել զնա եւ ինքն նստաւ խան ամս ԺԷ.:

ՌՅԿԵ = ՊԺՌ.— Արեգակն խաւարեցաւ եւ շարժ զԱշու երկիրն տարաւ, եւ զվանորայքն խախտեաց: Ի սոյն ամին էմիրադինն եկն ի վերայ Աբծկու ԺԵՌ. գօրօք, բնդ հեծեալ եւ բնդ հետեւականս:

ՌՅԿԶ = ՊԺԳ.— Եւ Տամուրտաշն, որդի Աշրաֆեանշի, եւ նկն ի վերայ երկրիս, որ գայր տիրէր Թախտին. եւ նկեալ յԱրծկէ սպանաւ: Եւ ի սոյն ամի նկն մահառաժամ սաստիկ եւ աւերեաց զաշխարհս Հայոց:

ՌՅԿՀ = ՊԺԵ.— Ֆռանկն զՔանտարիայ էառ եւ շատ զգայ արար. եւ ԺԲՈ. կոյս աղջիկ գերի տարաւ. Յող զայլ կանայս եւ զղայս: Եւ յայն բանէն խստացան տաճիկքն, եւ արարին Հալածումն քրիստոնէից: Եւ զամենայն ուխտաւորս Երուսաղէմի ի կապանս պահեցին Գ. ամ: Եւ զսուրբ Յարութեան դուռն փակեցին:

ՌՅԿՔ = ՊԺԶ.— Յայսմ ամի ի Կոստանդնուպոլիս շարժ եղեւ եւ անձրեւք սաստիկք եւ կայծակունք: Եւ եղեւ այնպիսի մահառաժամ մինչ զի սակաւք ոմանք մնացին. եւ ի Հոկտեմբերի ամսոյն եղեւ ցուրտ սաստիկ մինչ որ ծովն Պոնտոսի պաղեցաւ ԴՃ. միլս. եւ տեղեաց ձիւն ԼԶ. կանգուն, եւ ցամաքեցան գետք եւ աղբիւրք, եւ մնաց մինչ ի փետրվարի ամիսն:

ՌՅՀ = ՊԺԷ.— Յայսմ ամի անցին Թուրք ընդ դրունս Կասբից ի Հայաստան:

ՌՅՀԲ = ՊԺԹ.— Սէյիտ Խօրօնն եկն եալ ի յԱրծկոյ բերդն եւ սպանաւ անդէն, Իե. հոգով. յաւուրս աւագ պահոց:

ՌՅՀԹ = ՊԻԲ.— Յայսմ ամի փափն փոխեաց զաթոռն իւր ի Ֆրանկոյ ի Հռոմ:

ՌՅՀԶ = ՊԻԳ.— Յայսմ ամի զՍիս առին տաճկունքն, եւ սպանին զԿնչեղակ վարդապետն, որ գրոց աշակերտէր: Եւ դեկտեմբերի Ը օրն ուրբաթու շարժ եղեւ եզրնկէն, եւ Ա ժամ հանդարտեցաւ, կրկին շարժեցաւ, եւ պարիսպ քաղաքին փլաւ:

ՌՅՀԷ = ՊԻԴ.— Սովն սաստիկ էր յԱսորեստան. զԱմիրհաճն սպանին զԴիադինին որդի Բաղէշու տիրոջ որդին, որ էր այր բարի եւ Քրիստոնէից իրաւարար: Եւ Վայիսի որդի Հուսէյն նստաւ:

ՌՅՀՈ = ՊԻԵ.— Յայսմ ամի [առի՞ն] յերուսաղէմ ի Թշնամեաց խաչին Քրիստոսի:

ՌՅՁԱ = ՊԻՀ.— Տէր Կոստանդին ամս Բ:

ՌՅՁԳ = ՊԼ.— Տէր Թէոդորոս ամս Ը. սա գնաց ի Մսըր եւ մնծաւ պատուով ընկալաւ զնա սուլթան Բարղուղն: Եւ Թուղթամ իշխան Ղրիմին առաքեաց զզօրս ի Դավրէժ եւ զքսան բիւր գերի տարաւ:

Եւ այսմ ամի գտին զարհեստ Թօփի եւ ԹՖէնկի, զայս գործ քան զամենայն յառաջ վէնէտիկցիք ի կիր առին ընդ դէմ Ջինիվիզացւոց:

ՌՅՁՁ = ՊԼԳ.— Քեղայոյ խանն նստաւ: Ի սոյն թվին Բուրհան զաթին եսպան զտէրն Սեբաստիոյ, եւ զՍանիփաննոս եպիսկոպոսն Սեբաստիոյ նահատակեաց. եւ զսրբոց Քառասնից վանքն քակեաց:

ՌՅՁԷ = ՊԼԴ.— Թուրքն էառ զՈրոտն և Կախիկ վարդապետն գնաց փախստական ի Մարայ, եւ պարոն Գորգունէն դարդամահ եղեւ, ընդ նմին Մաղաքիայ ճգնաւորն, ի նոյն աւուրս ի տարելից նոցին, տկարացաւ եւ ի նոյն օրն մեռաւ, եւ եղաւ մերձ յԵրնջանկոյ վանքն:

ՌՅՁԸ = ՊԼԵ.— Ի սոյն թվին Թամրազ խանն գնաց մինչ ի Դմբըշխ, եւ նկն

հհաս՝ եկաց ամս ժէ. գնաց ի Սմբրղանդ եւ մեռաւ։ Դարձեալ ի սոյն թվին Լէնկթէմուրն եկն ի Թավրէժ, եւ ի Նախչուան, եւ անտի ի միում յաւուր կալաւ մինչեւ ի Կարբի, եւ ի Բջնի, ի Գառնի, ի Սուրմարի, ի Կողբ, եւ անտի գնաց ի Վրաց տուն, և արար շատ վնաս Տրպխիս քաղաքին, եւ կալեալ զթագաւորն Բագարատ՝ տաճկացոյց, եւ գնացեալ ձմեռնաց ի Մուղան։

ՌՅԶԹ = ՊԼՉ.— Եւ ի դալ տարւոյն յաւուրս աւագ Զատկին եկ ի Սիւնիս եւ ափռնալ տարածեցաւ, եւ գնաց հետ Թուրքմանին մինչ ի Համթա ջուրն, եւ դարձեալ եկն ի վերայ Վանայ եւ խաղարեաց զնա զաւուրս իե. եւ առեալ զնա յաւուրս ե. շաբաթուջ, յաթոռաց պահոց սուրբ խաչին, եւ զամենեսեան ի բերդն ի վայր եկից, եՌ. մարդ, եւ անց գնաց ի յաշխարհն Սմբրղանդ։ Եւ յորժամ աւերեաց զՍեբաստիայ եւ գնաց ի յԱնկուրիայ զխոնդքարին եղբայրն զԵլտրում Պայազիտն եղ ի դաֆէան, եւ ընդ իւր տարաւ։

Յայսմ թվին յունիսի ԻԳ. նահատակեցաւ Ստեփաննոս եպիսկոպոս ի Սեբաստիայ քաղաքի։ (Գրեա՛ աստ)։

ՌՅՂԲ = ՊԼԲ.— Տէր Կարապետ Բոկիկ ամս ԺԲ.։

ՌՅՂԳ = ՊԽ.— Յայսմ ամի կին ոմն Արճիշեցի, անունն Եղիսաբէթ, նահատակեցաւ քարկոծմամբ վասն անուանն Քրիստոսի, յաւուր տօնի սրբոց Քառասնից ի Վան քաղաքի։

ՌՅՂԴ = ՊԽԱ.— Յայսմ ամի, զկնի Զ ամաց դարձեալ Լէնկթէմուրն ի դուրս, և էջ ի Բաղդատ... Քաղեաց աւելի քան զերկու հազար, և դարձաւ ի տեղի իւր. (Համմ. Ս. Անեցի, էջ 171—2)։

ՌՅՂԵ = ՊԽԲ.— Ջտէր Թէոդորոսն ի Սիս սպանին, եւ նստաւ ի տեղի նորա Բոկիկ Կարապետն, ամս ԺԲ.։ Յորժամ զՏէր Թէոդորոսն ի Սիս սպանին, ի նոյն ամի զՏէր Զաքարիայն, զԱղթամարայ կաթողիկոսն, քարկոծ արարին յՈստան. զերկուսն ի միում ամի։

ՌՆ = ՊԽԷ.— Յայսմ ամի նահատակեցաւ քարկոծմամբ կին ոմն Մոկացի հայ ազգաւ Թամար անուն, վասն անուանն Քրիստոսի, յՈստան քաղաքի։

ՌՆԴ = ՊՄԱ.— Տէր Յակոբ ամս Բ.։

ՌՆԵ = ՊՄԲ.— Յայսմ ամի դարձեալ եկն Լէնկթէմուրն յարեւելս յԱղուանից, եւ շինեաց քաղաք մի Բաղաղայ անուն... որ եկաց ի Դրուց յաշխարհս մեր ԺԸ. ամ էր։ (Համմ. Ս. Անեցի, էջ 172)։

ՌՆԺ = ՊՄԷ.— Յայսմ ամի Շմիղդնի հեծեալքն եկին եւ այրեցին զԱատուան, եւ բարկացեալ յամիր Եղտին գնաց եւ այրեաց զԱատուան գիւղ ի Բաղիշոյ։ Ի սոյն ամին մարախ եկն եւ զյոլով տեղիս կերաւ։

ՌՆԺԲ = ՊԿՉ.— Յայսմ ամի նահատակեցաւ սուրբն Իսահակ պարսիկ վարդապետն. յապրիլի ԺՀ., Յայսմաւուրք։

ՌՆԻՉ = ՊՀԳ.— Եւ այսմ ամի նահատակեցաւ Ստեփաննոս վարդապետն ի Հիզան, որ է ի վանից Գամաղիէլի, եւ Պետրոս էրէց աշխարհի, որ միմեանց ուրացութեան պատճառ եղեն, վասնորոյ ի

---

* Ն. Պողարյանի ընդօրինակության մեջ մի բառ բաց է թողնված։ Խմբ.։

միասին յանձն առին զնահատակութիւն վասն անուանն Քրիստոսի։

ՌՆԼԳ = ՊՁ.— Յայսմ ամի եղեւ սով սաստիկ ի Դաւրէժ եւ ի վաճպուրական, եւ տարաժամ մահն սփռեցաւ ընդ չորեք կողմն աշխարհիս. եւ սուրն Աստուածային մանրէր՝ ոչ դիտելով զմեծ եւ զպզտիքն. եւ ով կարէ պատմել զկսկիծն դայն։

ՌՆԼԷ = ՊՁԴ.— Զկնի ժ ամին Տէր Կոստանդեայ յաջորդէ Տէր Յովսէփ։

ՌՆԼՀ = ՊՁԵ.— Նահատակեցին զՄուրատշան ի Բղնունիս եւ լոյս ծագեաց ի վերայ նորա։

ՌՆԼԹ = ՊՁԶ.— Սպան զԻսքէնտէրն որդին իւր եւ ինքն թագաւորեաց։

ՌՆԽ = ՊՁԷ.— Ղուլն եկն եզրնկէն, եւ սպանաւ Սքանտարն յորդւոյն, եւ նստաւ Ջահանշահն։ Ալէքս թագաւորն վրաց սպան մահադեղով զՊէշդինի զիշխանն Հայոց, զորդին Սմպատայ Օրպէլեանց։

Առաքել վարդապետն Բաղիշեցին զՊատմութիւն Յովսաւփու արար։

ՌՆԽԱ = ՊՁԸ.— Զկնի Դ ամին Տէր Յովսէփին յաջորդէ Տէր Գրիգոր Սսեցին Մուսապէկենց։

Յայսմ ամի չինէ Նախաշ եպիսկոպոսն Մկրտիչ զմեծ կաթուղիկէն ի յԱմիթ, ի յանուն սրբոյն Դէդորոսի։

ՌՆԽԲ = ՊՁԹ.— Շամշուլտէ առաւ եւ ԳՌ. այր կոտորեցաւ եւ ԹՌ. գերեցաւ։ Եւ Ջիհանշահն բարկացեալ Հայոց ազգին, գնաց ի վրաց տունն, էառ զՇամու (իմա՝ զՇամշուլտէ) ԲՃ. զալայ. եւ զհայր գերի տարաւ եւ զայլսն կոտորեաց սրով։

ՌՆԽԳ = ՊՂ.— Յայսմ ամի այրեցին զխարշան ի Մարսվան հրով։ Հայ ազգաւ, պատճառելով թէ ի ձանապարհին զմեր օրէնքն անարգեաց, եւ մեք կարծեցաք զնա դոլ Բուրք. վասն զի ի գլուխն ճէրմակ փաթեր էր։ Եւ յայնմ օրէ զճերմակ չալման վերացուցին ի գլխոց քրիստոնէից։

Յայսմ ամի ի Սասւ վանից անյայտ եղեւ Աջն Սրբոյն Լուսաւորչին, եւ յարեւելցիք յորժամ լուան օծեցին զԿիրակոս Խոր Վիրապեցին կաթողիկոս. եւ այս եղեւ պատճառ նորոգութեան Սրբոյն էջմիածնի։

ՌՆԽԴ = ՊՂԱ.— Սսայ Գրիգոր կաթողիկոսն. որ Մուսապէկենց ասի, զկնի Գ-ից ամաց վաղճանեցաւ, եւ ոչ օծեցին զոք ի տեղի նորա վասն Բ. պատճառի. մինն զի էջմիածին զոյր կաթողիկոս աէր Կիրակոս, եւ միւսն զի Լուսաւորչի Աջն անյայտ եղեւ։ Եւ մնաց Սսայ յաթոռն Բ տարի խարտան, մինչ որ ընկենցին զՏէր Կիրակոսն, ապա օծեցին սասցիք զտէր Կարապետ կաթողիկոսն։

ՌՆԽԵ = ՊՂԲ.— Յայսմ ամի զտէր Կիրակոսն փոխեցին վասն նախանձու, եւ Մակունցի Գրիգոր եպիսկոպոսն նստաւ կաթողիկոս զապալով եւ Բուրքով։ Եւ յայսմ ամի յուլիսի ԺԴ օրն, Զ. օր յառաջ քան զլրումն՝ խաւարեցաւ լուսինն։

ՌՆԽԶ = ՊՂԳ.— Ջահանշէն զԱխլցխայ գերեցոյց։

Եւ յորժամ ընկենցին զտէր Կիրակոսն, լուան սասցիք զայն համբաւն, չընդունեցին զԳրիգորն, պատճառելով թէ զապալով եւ Բուրքաց ընտ[ր]ութեամբ է։ Վասնորոյ օծեցին ի Սիս զտէր

Կարապետն կաթողիկոս, որ էր աշակերտաց Գրիգորի Մուսապէկեան. ի երէց էր եւ ի նմանէ օծաւ եպիսկոպոս։

ՌՆՇԲ = ՊՂԲ.— Վաղճանեցաւ Կիրակոս կաթողիկոսն զոր ընկեցին յէջմիածնայ յԱթոռոյն։

ՌՆՇԴ = ՋԱ.— Եկն Ջիհանշահն էառ զերզնկայն։

ՌՆԿ = ՋԷ.— Յայսմ ամի եղեւ գետնաշարժ Երզնկէն եւ մեռաւ լԲՌ հոգի։

Եւ ի յայսմ ամի մեռաւ Թագաւորն Կիպրոսի ոէ Ճուանն։ Եւ ի յայսմ ամի էառ օսմանցին զրհոդն Հերսիքէ։

ՌՆԿԲ = ՋԲ.— Յայսմ ամի, յետ ԺԷ. ամին Գրիգորի, նստաւ յէջմիածին կաթողիկոս Տէր Զաքարիայ։

Եւ յայսմ ամի գվէրէ մանուկն, զորդի պարոն Վարդին, զտէրն Համշինու, ըմբռնեաց Շահալին, եւ ետ ի ձեռն Սօֆուն, որ շէխ կոչէին։

Եւ ի յայսմ ամի սուլթան Մուհամատն ձեռօք էառ զՏրապիզոն ծովով եւ ցամաքով յոգոստոսի ամսոյն։

ՌՆԿԳ = ՋԺ.— Յայսմ ամի Սասոյ տաճիկքն նկին զաղտ ի գիշերի ի սուրբ յաթոռն եւ առաջի Կարապետ կաթողիկոսին արարին ուխտ եւ դաշինքն ընդ Հայոց ազգն, որք են ի Սիս եւ միաբանեցան եւ ի վաղիւն առհասարակ գնացին ի դուռն դարպասին, առ ի ըմբռնել զմէլիք յՕմարն։ Եւ նա իմացաւ, էառ առ ինքն զթուրքմէնք տեղոյն, եւ նոքա մարտեաւ, եւ յաղթեաց զքաղաքացիսն, եւ եմուտ թուրքմէնն ի քաղաքն, եւ տունս յոլով թալանեցին, որոց Գ. մեծամեծաց տունք էին ի տաճկաց, եւ Գ.-ն յիշխանացն Հայոց էին, զՊաղտօնին տղին, զԼեւոնին, եւ զԳրիգորին, որ զԱնցմցկայ կարմունջն նորոգեաց, եւ յիշատակն կայ գրեալ մինչեւ ցայսօր ժամանակի։ Եւ մտեալ ի սուրբ յաթոռն եւ յաւիշատակեցին զամենայն կահ եւ զսրբութիւնս նորա, եւ ելեալ գնացին։

ՌՆԿԶ = ՋԺԳ.— Յայսմ ամի սուլթան Մհամէտն զտէրն Ղարամանայ սուրկուն երեք ըՍտամպօլ զՓիր էհմէտ պէկն, քանզի անհնազանդ եղեւ Թագաւորին մասամբ իիւր։ Եւ յայսմ ամի էառ զերկիրն Աբակլիու զԱզատարայու բերթն, զԿօկիսոնու բերդն, եւ զՊուրսայու Հայերն աւար արարին, եւ զանօթս եկեղեցոյն կողոպտեցին եւ տարան Ըստամպօլ։

Եւ յայսմ ամի ապրիլի ԻԲ. եղեւ փոխումն Տէր Ներսէս եպիսկոպոսին յԱնկուրիոյ։ Էր սա յերկրէն Ղրիմայ, աշակերտ Սարգիս վարդապետին. եւ որպէս զարեգակն փայլէր յերկիրն Հոնաց, զոր բազումք երկրորդ Շնորհալի կոչէին։ Եւ էր աղքատասէր եւ ճգնազգեաց, ձրի առնոյր եւ ձրի տայր, ի բաղանիս ոչ մտանէր, եւ ի կին մարդ բնաւին ոչ հայէր, եւ շնորհիւն սրբոյ հոգւոյն անդադար բարոզէր հայոց, ֆռանկաց եւ յունաց, եւ բազում ի մեծամեծ տաճկաց քաղաքին լսէին զբանն նորին եւ արդարեցուցանէին զանձինս իւրեանց, հաւատալով բանից նորին։ Ի սորա յաւուրս եղեւ ժողով տղայոց. քանզի Թագաւորն տաճկաց ժողովեաց զմանկունս քրիստոնէից եւ տարաւ Ըստամպօլ, եւ տէր Ներսէս գնաց զհետ մանկանցն, եւ երեք

պիուղք ազատութեան հայոց, զոր Մահմէտն տուեալ էր, եւ շաւաղաթլէմէ կոչեն. եւ թագաւորն ոչ ինչ համարեցաւ պիուղքն, բայց միայն զԱնկուրիոյ մանկունքն շնորհեաց նմա: Եւ յետ Զ. ամաց տարան զծնօղք մանկանցն Ըստամպօլ, եւ գնացեալ սրբոյն գհետ նոցա, եւ անդ հիւանդացաւ եւ մեռաւ իսկ՝ Ա. ամաց, եւ անդ թաղեցաւ. որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի:

ՌՆԿԲ = ՉԺԶ.— Յայսմ ամի Հասան բէկն գնաց ի վրաց տուն եւ գերեցոյց: Դարձեալ ի սոյն թվին զՊարոնլոյան նահատակեցին ի Կաֆայ:

Եւ յայսմ ամի էառ սուլթան Մուհէմէտն զԱլայիայ, եւ էր սորա պարոնն Ղըլըճ Ասլան պէկն. իւր կամաւն զբերդն դատարկեցոյց եւ թագաւորին թէսլիմ արաւ. եւ թագաւորն զկոմսուլճէ նմա թիմար եա, եւ յղեաց յՈւռմէլի: Եւ էառ սուլթան Մուհէմէտն ի յայսմ ամի զՂարահիսարն, առ եւ ելից եւ զԱղբիպու բերթն:

Եւ յայսմ ամի Աջրան ի Սիս՝ Հեթում Սպիտակէրեց Խաղոնց կոչեցեալ:

Եւ յայսմ ամի թագաւորեաց ի Գերմանիկէ Շահսուարն, որ էր որդի թագաւորին Գերմանիկոյ, եկն ի վերայ Սսոյ. քանզի հակառակ եղեալ Մսրայ սուլթանին եւ շատ ատեր էած սուլթանայ աշխարհին, եւ զկօշէփէ Թուրքմէնքն զամենեսեան եզարկ եւ թալանեց, եւ անթիւ չարութիւնս գործեաց: Եւ այնժամ Սիս ընդ իշխանութեամբ Մսրայ սուլթանին. վասնորոյ խորհեցաւ չարութիւն Սսայ քաղաքին, բերթին եւ վագայու. եւ յունիսի Բ. օրն էկաւ ի վերայ Սսայ բաղում հեծելօք եւ զքաղաքն հրկէզ արաւ:

Եւ զայս եառնս Աջպան, երկեաւ, էառ զաջերն եւ տարաւ ի Կոպիտառայ, զի մի անկանիցէ ի ձեռս բռնաւորին:

Իսկ Շահսուարն զկնի հրակէզ առնելոյ զթագաւորանիստ քաղաքն Սիս, ելեալ անտի եւ գնաց էառ զԱտանայ, եւ զԹարսիս, եւ զծովահայեաց քաղաքն զԱյաս, զԱնաւարզայ, եւ զԿովռայ, եւ զամենայն դաշտս, եւ զՊախրազու բերդն, զԼեւոն բերդն, զԿոպիտառայ, զԲարձրբերդն, եւ տիրեաց ամենայն լեառնակողմանցն:

Եւ ելաւ յետոյ սուլթանայ հեծելն, եւ գնաց Շահսուարն ընդ դէմ Շամցուն, եւ կռուեցաց, եւ արար փախստական մինչ ի Հալապ, եւ թալանեաց զՀալպայ գեղորայքն, եւ գնաց յԱնտիոք, եւ գնա եւս թալանեաց և դարձեալ եկն դողոզարար ի վերայ Սսայ բերդին, եւ հաարեաց զբերդն: Եւ Զաքամ պարոնն կայր ի բերդն, եւ Ը. հեղ պատերազմ արարին եւ իջին քրիստոնեայքն ի բերդէն, եւ շատ տաճիկ սպանին: Եւ շատ արդարկեցին զբերթն, եւ նա պահեաց: Իսկ սահցիքն անճրկեցան եւ տվին զբերդն ի դեկտեմբերի ԻԳ. եւ եղ Շահսուարն պարոն ի Սիս՝ զՇարամէնտ եւ գնաց:

ՌՆՀ = ՋԺԷ.— Յայսմ ամի գնաց դարձեալ Շահսուարն յերկիրն Շամայ, եւ առեալ Ռ տուն շամցի տաճիկ եւ եբեր ելից ի Սիս քաղաքի: Եւ դարձեալ ելաւ ի Շամու հեծել, եւ գնաց Շահսուարն ընդդէմ նոցա: Իսկ Սսու Թուրքերն եւ շամցիքն միաբանեցան ի մայիսի ԻԴն, եւ արարին պատերազմն, եւ խլեցին զերիվն պարոնին, զձիանն եւ զզօրեստանքն, եւ պարոն կալաւ Ը քրիստոնեայ եւ եդ ի հորն: Եւ քաղաքացիքն ամենեքեան Թողին զտունն և զրոզակն եւ փախեան: Եւ Աջպան Սպիտակէրէցն առեալ զաջերն եւ զայլ Սրբութիւնսն եւ գնաց էլաւ ի Կոպիտառայ՝ առ Թորոս եպիսկոպոսն. եւ ամրացան ի բերդն: Եւ Ֆարսախ Թուրքմէնն Թալանեաց զՍիս քաղաքն, եւ առին շատ մալ եւ եկեղեցոյ անօթ, զոր չեմք կարեր ընդ գրով արկանել:

Եւ Շաբամէնթ պարոնն Սսայ արար երթումն եւ դաշին, եւ յղեաց մարդ ի Կոպիտառայ, առ սոացիքն, եւ ասաց Թէ բերէք ԺՌՌ ղրուշ, որ տամ զձեր մարդիկն: Եւ սոքեքիք ոչ դիտէին զնորա նենգութիւնն, առին շատ մալ եւ ձի, և գնացին ի Սիս, եւ իջին ի բերդէն եւ ըմբռնեցին զամենայն քրիստոնեայսն, եւ եդին ի հոր բանդին: Եւ առին զմալն եւ զձիանքն եւ շատ ըռզակ. եւ ապան Գ տաճիկ, վաստորոյ ի մնացեալ իշխանացն ոմանք ի Տէրէնտէու բերդն, մօտ ի Շահսուարն, եւ առին ի նմանէ հրաման, եւ եկեալ Հանեցին զրանտարգեալ քրիստոնեայսն:

Եւ յայսմ ամի էտիլ կոչեցեալ Ֆախին առեալ զՖարսախն եւ եմուտ ի Սսայ բերդն գողութեամբ, եւ թալանեաց. եւ շատ մալ էառ, եւ շատ անօթ սրբութեանց:

Եւ յայսմ ամի սեաւ արաբացիք ԺԸ. գունտ հաղարաց զօրօք պաշարեցին զՄելիտինէ կոչեցեալ կղզին, որ յայժմ Մալթայ ասի. քանզի կամեցան կործանել եւ հողոյ հաւասար առնել զնա, բայց զկնի երից աւուրց երեւեցաւ սուրբ Առաքեալն Պօղոս՝ աստղալից զդեստիւք, ահեղ իմն երեւմամբ, հեծեալ երիվար եւ սուր ի ձեռին, եւ շուրջ պատեալ զնովաւ անհուն բազմութիւն, դիմեաց ի վերայ սեւոցն, որ թէպէտ նոքա ձգեցին ընդդէմ նորա բազում նետս, սակայն նետքն չեռ դառնային ի ձգօղն, որ եւ բազումք վիրաւորեցան եւ դարձան յամօթալից չեռս:

ՌՆՀԱ = ՋԺԸ.— Եւ յայսմ ամի եղեւ մահատարաժամ ընդ ամենայն երկիր եւ մեռան բազումք կարգաւորք եւ իշխանք եւ տանուտէրք, եւ ի Սիս Աջբան սուրբ Լուսաւորչի Աջոյն մեռաւ. զոր ի նոյն ժամանակի Նաղաշ եպիսկոպոսն ասաց զՈղբն ի վերայ տղայոց որ է սկիզբն «Արարիչն Արարածոց», եւ այլ ողբ ի վերայ իշխանացն, որոյ սկիզբն «Երազ է եւ սուտ եղբարք» եւ այլն:

Եւ յայսմ ամի սպան Հասան Բէկն զՋիհանշահն չեռ ԼԱ. ամի շահութեան, որ եկն ի վերայ յԱմթայ. եւ եղեւ վերջ սոցա թագաւորութեան, քանզի չունէր ժառանգ. վասն զի ինքն սպան զորդին իւր ի պատառս, եւ վերջացաւ թագաւորութիւն սոցին. որ տիրեցին ԿԸ ամ ինքն եւ իւր հայրն Իսքէնտէրն եւ պապն

Ղարայուսուֆն, որ (ՊՄ) թվին թագաւորեաց յետ Լէնկթէմուրին:

Եւ յայսմ ամի եկն եղբինշերն եւ թալանեաց զերկիրն Ռուշաունեաց յաւուր Ծննդեանն Քրիստոսի Աստուծոյ մերոյ:

ՌՆՀԳ = ՋԻ.— Յայսմ ամի, զկնի Ժ ամին Արիստաքէսի, նստաւ էջմիածին Տէր Աբրահամ ամ մի:

ՌՆՀԴ = ՋԻԱ.— Յայսմ ամի նստաւ Տէր Աբստաքէս երկրորդն:

Եւ յայսմ ամի մէգուլ արարին ի Մսըր զաուլթան զՄէլիք Մեյիսէ Թուֆէտէհատն, յետ Զ ամին, եւ ի ամսոյն ամին զթախտն ի մէլիք Խոշղատէմն տուին: Եւ էր սա ի Մէլիք Մէլտինին ծառայիցն, եւ էառ Գ քաղաք: Եւ ի Սիս կիլիկեցոցն եկեղեցի մի մինարէլի ճամի մի շինեաց: Եւ երեր զդարպասին ջուրն ի դուռն ճամուն կամարաւ, աղբիւր վազեցոյց, որ կայ ի ճակատ աղբիւրին զթվական շինօղին. եւ ի Սասյ խաբաճէն ԳՒ դրամ վախըֆ արաւ ճամիյին մուղրոցն եւ սպասաւորացն մինչեւ ցայսօր:

ՌՆՀԵ = ՋԻԲ.— Յայսմ ամի եկն Հասանպէկն ի Հոռոմոց տունն բազում զօրօք եւ շատ աւեր արար: Եւ ի սեպտեմբերի առաջի օրն էառ զԹոխաթն եւ այրեաց զքաղաքն երկրովն եւ զերեաց զրազումս եւ էանց ի Կեսարիայ եւ էառ զնա, եւ դարձաւ ի Սեբաստիա եւ այրեաց զգեղորայքն, եւ բազում վնաս արար քրիստոնէիցն եւ գնաց ի Շամ:

Եւ յայսմ ամի եղեալք զօրք ի Մսրայ եւ եկին ի Հալապ եւ բազմացան յոյժ ի Հալէպ. եւ եկեալ նստան յեզր գետոյն Եփրատայ ընդդէմ Պէրայու, եւ ի միւս կողմանէն նստաւ թագաւորն Պարսից Հասանպէկն, եւ ոչ կարաց առնել զերեզմանն Պէրայու մարցին: Եւ մինչ ոչ կարացին առնել զՊէրայ, կապեցին ի վերայ Եփրատայ կարմունջ, եւ անցին գնացին ի վերայ Ուրհայու եւ կոտորեցին զրազումս եւ բազում աւարաւ դարձան: Եւ յայսմ ամի նահատակեցաւ ի Խարբերթ Դաւիթ, որ է որդի Գրիգորի քահանային, յունվարի ԺԶ:

ՌՆՀԶ = ՋԻԳ.— Եւ յայսմ ամի երկրորդ Արիստաղէս կաթողիկոսն էջմիածնայ վաղճանեցաւ յետ Բ ամին, եւ նստաւ Տէր Սարգիսն:

ՌՆՀԹ = ՋԻԶ.— Յայսմ ամի յետ (ԻԶ) ամի կաթողիկոսութեան վաղճանի Սսայ Կարապետ կաթողիկոսն եւ թաղեցաւ ի Թոխատու վանքն ի տուրբ Աննայի ժամատանն, ի հիւսիսային յորմին տակն: Եւ նստաւ ի Սիս Տէր Ստեփաննոս Սալաձորցի ամս ԺԱ:

ՌՆՁ = ՋԻԷ.— Յայսմ ամի Մարտվանցի էմիրտուվլէթն, որ արուեստիւ բժիշկ էր, ի Սուամոյ քաղաքի, ժողովեաց զՄուֆրէտէթ կոչեցեալ պիրքն ի մի տուփ, ի հայոց լեզուն, ի Հոռոմոց, ի յառապին եւ ի թուրքաց:

ՌՆՁԱ = ՋԻԸ.— Յայսմ ամի յայտնեցաւ Աջն Սուրբ Լուսաւորչի ի Սիս քաղաքի, ի ժամանակն Ստեփաննոս կաթողիկոսին Սսայ: Եւ յօրմէ յորմէ անյայտ եղեւ սուրբ Աջն մինչեւ ցայսս ԼԸ ամ է:

Եւ յայսմ ամի յետ Յովհաննէսի նստաւ կաթողիկոս էջմիածին Տէր Սարգիս:

ՌՆՁԲ = ՋԻԲ.— Յայսմ ամի եկն Պաղն ի Մարայ ի վերայ Ուրհայու բազում զօրօք:

ՌՆՁԳ = ՋԼ.— Յայսմ ամի յետ Տէր Սարգսի նահ կաթողիկոս էջմիածին Ստեփաննոս Առընջեցին:

ՌՆՁԴ = ՋԼԱ.— Յայսմ ամի շարժ եղեւ եղրնկէն եւ լՌ մարդ ի ներգոյ հողոյն մնաց: եւ յայսմ ամի անկաւ հուր յերկնից եւ այրեաց զՄէտինէ քաղաքն եւ զառն Մէհմէտին բնակչօք իւրովք հանդերձ: եւ այսմ ամին, յետ Ա. ամին Ստեփաննոսի, նահ էջմիածին կաթողիկոս երրորդ Տէր Սարգիսն:

ՌՆՁԲ = ՋԼՁ.— Յայսմ ամի զկնի (Զ) ամին Սարգսի նահ էջմիածին Տէր Ստեփաննոս:

ՌՆՂ = ՋԼԷ.— Յայսմ ամի յետ ԺԱ ամին Ստեփաննոսի նահ ի Սիս կաթուղիկոս Տէր Յովհաննէս, ի գաւառէն Սեւերդոյ, ի նահանգէն յԱնտիոքու:

ՌՆՂԱ = ՋԼԸ.— Զկնի մի ամին Տեառն Յովհաննիսի նահ ի Սիս կաթուղիկոս Տէր Յովհաննէս Թուլկուրանցին, յունվարի Զ, ի չորեքշաբաթի յաւուրն. սա կալաւ զաթոռն Հայրապետութեան ամս ԼՁ:

ՌՆՂԲ = ՋԽԲ.— Յայսմ ամի ի Բարերթ նահատակեցաւ Շնոֆոր կինն, վասն զի ոչ ետ տեղի պոռնկութեան:

ՌՆՂԶ=ՋԽԳ.— Յայսմ ամի նահատակեցաւ Հռոմկլայեցի Թորոս, որդի Թագաւորին Օշնոյ, օգոստոսի Ա.:

ՌՆՂԸ = ՋԽԵ.— Եւ յայսմ ամի նահատակեցաւ Տէր Աստուածատուր քահանայ Տիւրիկեցի յԵրուսաղէմ քաղաքի, վասն ի Քրիստոս հաւատոցն իննհարիւրումն ապրիլի. եւ մնաց սուրբ մարմինն Ը օր անկեալ ի դուռն Սուրբ Յարութեան: Եւ ապա տարեալ Թաղեցին զնա ի Սուրբ Սիոն:

ՌՇ = ՋԽԷ.— Յայսմ ամի եղեւ մահատարաժամ ի բազում տեղիս եւ Վէլէթ պէկն Թալանեաց զերկիրն Գեղամայ:

ՌՇԱ = ՋԽԸ.— Յայսմ ամի նորոգեցաւ Լուսաւորիչ եկեղեցին ի Ղալաթիայ, յաւուրս Տեառն Սարգսի կաթողիկոսին: Եւ այսմ ամի եկաւ շահ Իսմայէլն:

ՌՇԲ=ՋԽԹ.— Յայսմ ամի շինեցան եկեղեցիքն ի Հալէպ, Սուրբ Թադեոսն Հայոց, եւ դարպասն, եւ Հռոմոց եկեղեցին:

ՌՇԳ = ՋՄ.— Յայսմ ամի կարմիր գլուխ շահ Իսմայէլն պատերազմեցաւ ընդ Ալվանտին եւ փախոյց զնա, եւ ինքն էառ զԹաւրիզ եւ նստաւ: Եւ նոյն շահ Իսմայէլն եկաւ Արտաւիլու եւ եկն եղրնկէն, եւ էառ Շէհիթպէկին զվան:

ՌՇԴ = ՋՄԱ.— Էառ կարմիր քառակն զԹաւրէզն: Եւ ապդն մարաց արին զվան, զԱխատամար, զԱրծկէ, եւ եղեւ շատ աւերք:

ՌՇԵ = ՋՄԲ.— Դարձեալ եկաւ Արտաւիլու շահ Իսմայէլն եւ գնաց ի վերայ Շամախու, եւ ապան զառլթան նորա, եւ այլ բազում չարիս գործեաց: Եւ եղեւ յայսմ ամի մահատարաժամ:

ՌՇԶ =ՋՄԳ.— Յայսմ ամի եկաւ Սօֆին յաշխարհս Հայոց, որ եկեալ էր յԱրտաւիլու, եւ էլ ընդդէմ նորա Ալվանտ Սուլթանն, թոռն Հարունին. եւ Սոֆին յաղթեաց զնա եւ արար փախստական, եւ դարձեալ եկն եղրնկէն: Եւ յայսմ ամի յետ [՞] ամին

Տեառն Սարգսի նստի Տէր Աւում առաջնորդն Վարագայ, եւ կկնի Աւումայ նստի Տէր Եղիայ ի (ՋՄԷ) թվին։

ՌՇԹ = ՋՄՋ.— Յայսմ ամի բատ Սուրիոսի ի ԺԴն սեպտեմբերի, յաւուր ուրբաթ օրն վերացման Սրբոյ Խաչին, դիպացաւ ծուխն, որ է ի մէջ Կոստանդնուպօլսի եւ Ղալաթիոյ, այնչափ մինչեւ բարձրացաւ ի վերոյ քան զպարիսպն երկաքանչիւր քաղաքաց, եւ ապան զրպզումս եւ ջրահեղձոյց եղեն միայն ի Կոստանդնուպօլիս տաճիկք երեքտասան հազար։

ՌՇԺ = ՋՄԷ.— Յայսմ ամի նահատակեցին ի Կոստանդնպօլիսն զէջմիածնայ նուիրակն զԽաչատմամբ սրոյ, յաւուր ուրբաթ օրն յԱւետարանչացն, զՍարգիս եպիսկոպոսն եւ զԴաւիթ կրօնաւորն։

ՌՇԻ = ՋԿԷ.— Յայսմ ամի առաւ սուրբ Թորոսայ եկեղեցին յԱմթայ ի տաճկաց, եւ բաղում վնաս եղեւ քրիստոնէից։ Եւ յայսմ ամի անկան յերկնից ՌՄ քարինք մեծամեծք, մինչ զի մինն ի նոցանէ կշռեր ՃԿ լիտր, եւ այլք ոմն Կ. եւ ոմն ասկի եւ ոմն պակաս, եւ ունէին զգոյն երկաթի եւ զհոտ ծծմբոյ։

ՌՇԻԱ = ՋԿՀ.— Յայսմ ամի սուլթան Սէլիմն արար զաղայժողովն։

ՌՇԻԳ = ՋՀ.— Յայսմ ամի կկնի ԺԳ. ամին Տէր Եղիշէի նստի յէջմիածին Տէր Սարգիսն հինգերորդ։

ՌՇԻԴ = ՋՀԱ.— Յայսմ ամի այրեցին ի հուր զՊեխին որդին զՍէֆէրն ի Սեբաստիայ վասն անուանն Քրիստոսի։

ՌՇԻԷ = ՋՀԴ—. Յայսմ ամի զօրքն Բօրբօնի ասպատակեցին զՀռոմ։

Եւ ի Միլտինի նահատակեցին զկարապետ եկեղեցականն՝ ազգաւ Հայ, որ վասն անուանն Քրիստոսի հրով այրեցին։ Եւ ի յԱմիթ զՊուտախն նահատակեցին հրով, վասն անուանն Քրիստոսի յունիսի ԺԳ։ Եւ այսմ ամի կկնի ԼՋ ամին Տեառն Յովհաննէսի Թուլկուրանցոյն, որ թաղեցաւ ի վագէն, ի Սուրբ Թորոսի եկեղեցոյն, նստի ի Սիս Տէր Յովհաննէս Քիլիսցի, որ Կայծակ մականուշէին, ամս ԺԴ.։

ՌՇԼ = ՋՀԷ.— Յայսմ ամի նահատակեցաւ Թորոս ի յՈւրհայ։

ՌՇԼԳ = ՋՁ.— Յայսմ ամի տղայժողով արար Թագաւորն, զոր Թաթէոս վարդապետն ողբ ասաց վասն նոցա։

ՌՇԼԵ = ՋՁՔ.— Յայսմ ամի այրեցին զՀարապետ արեղայն ի Սառուցու վանուցն ի Սեբաստիայ։

ՌՇԼԷ = ՋՁԴ.— Յայսմ ամի ի Շնբուկու գեղէն էրէց մի այրեցին։

ՌՇԼՀ = ՋՁԵ.— Եւ աստ բարձեալ եղեւ իշխանութիւն Անատօլային, զոր տիրեցին Ե. Թագաւորք, ասս ՃՀ, Գերմանիկոյ եւ նորին նահանգացն, այլ եւ Կիլիկոյ եւ նորին սահմանացն. եւ անուանք Ե Թագաւորացն են այսոքիկ, Անատօլայն եւ որդին Շահսուարն, եւ երկրորդ Անատօլայն եւ որդին երկրորդ Շահսուարն, եւ որդին Ալի պէկն, զոր ապան Թագաւորն. ի Գերմանիկէ Ճ ամ յիշխեցին, եւ Կիլիկիայ Հ ամ։

Եւ այսպէս յերկուս բաժանեցաւ Թագաւորութիւն սորա, զԳերմանիկէ տուեալ Տուրղաւղու պարոնայց, եւ զԿիլիկէ Իամաւանցուն. այս Իամաւանցին շինեաց զբերդն Ատա-

նայու եւ զկարմունջն առաջի դրան, եւ տարեալ զՍսայ բերդին եւ զպարիսպին դուռն զմինն Ատանու բերդին դուռ արար, եւ զմիւսն կարմնճին։ Եւ բազում շէնք շինեաց յԱտանայ, զոր յայժմ անյայտ են։

Եւ այսմ ամի նահատակեցին ի Սերաստիայ վխճայ Խուպիճանն, եւ զԿօկճան, եւ ասաց ոտանաւոր ի վերայ նոցա Յովասափ Սերաստացին եւ այլ բազում ոտանաւորս։

ՌՇԽԱ = ՋՋՐ.— Յայսմ ամի թագաւորն Սուլէման արար զութերորդ սէֆէրն ի վերայ Ղարայ-Պուղտանին, զի յառաջ խարաճ կուտայր թագաւորին եւ յայսմ ապստամբել կամեցաւ եւ խարաճին ճուղտ հաւուր։

Եւ այսմ ամի յոյնք արարին ծռապատիկ, եւ յունաց առաջնորդն տաճկացաւ, որ էր կիսարացի. վասն դաշին, զոր եդ սակս եղման լուսոյն։

Եւ յայսմ ամի յիւն ԺԴ ամին Տեառն Յովհաննէսի նստի ի Սիս կաթողիկոս Ջէյթունցի Տէր Սիմէոն ապրիլի է. օրն, Բ շաբաթի, ամս Զ.։

ՌՇԽԴ = ՋՂԱ.— Յայսմ ամի յիւն (ԻԱ) ամին Տեառն Սարգսի նստի կաթողիկոս էջմիածին Տէր Գրիգոր, ամս Ե.։

ՌՇԽԵ = ՋՂԲ.— Յայսմ ամի դարձեալ գնաց սուլթան Սուլէման ի վերայ շահ Թահմազին, ի Թէվրուզ, եւ ոչ կարաց առնուլ զնա. էառ զվան եւ պարսպեաց։ Եւ առեալ զԱրճէշ, եւ զԽլաթ, զԲաղէշ, եւ զՄէլրտին, եւ նորոգեաց զպարիսպն Ուրհայու, եւ գնաց Ըստամպօլ։

Եւ այսմ ամի եղեւ տղայժողով, եւ Մաղաքիայ վարդապետն Դերջնցին գնաց Ստամպօլ, եւ ասաց թէ զսիրտ թագաւորին կամիմ համբուրել. զի գրեալ է թէ սիրտ թագաւորաց ի ձեռին Աստուծոյ են, զԱստուծոյ աջն կամիմ համբուրել. քանզի զոր ինչ առնէ թագաւորն ձեռամբ Աստուծոյ է։ Եւ թոյլ եւտուն եւ համբուրեաց. եւ վերացոյց յիւր երկրէն, այսինքն ի Դերջնու եւ ի Բաբերթու զտղայժողովն, տղաչելով զթագաւորն։

Եւ յայսմ ամի ի Թօխաթ նախանձեցաւ սատանայ ընդ քրիստոնեայն եւ շարժեաց զմահմետականքն, որք յարուցին հալածանս ի վերայ քրիստոնէիցն Թօխաթու. եւ բակեցին զՀ. եկեղեցիքն ի միասին, եւ ի մեծի արամուխեան թողին զաղգս հայոց։

ՌՇԽՋ = ՋՂԳ.— Յայսմ ամի եղեւ շարժ յԱլպստան եւ ընկղմեցաւ կէսն, եւ Ջէյթուն ի ներքեւ հողոյն եւ լեռան մնաց. ի ներքոյ հողոյն ձայն աղաղակին մարդկանց կու գայր ի պատառուածէն, եւ մինչեւ Զ. ամիս դոցաց։ Եւ զի մարդիկքն յոյժ մեղօք հեռեալ էին, և չէին անեալ առաջնորդին իւրեանց, այլ բաս կամաց իւրեանց գնացին, վասնորոյ պատժեցան յԱստուծոյ արդար դատաստանէն։

ՌՇԽԷ = ՋՂԴ.— Յայսմ ամի Ալխաս Իմիրզան, շահ Թահմազին եղբայրն, որ փախեաւ ի նմանէ, ընդ Տէմիր-դափին անցաւ ընդ չէրքէզու

երկրէն, եւ ի Թաթարի երկրէն, ելին ի Կաֆայ, եւ նաւով էանց յԼատամպօլ, եւ եղեւ ծառայ Բագատրին։

Եւ յայսմ ամի, յետ Զ. ամի Տեառն Սիմէոնի, նստաւ ի Սիս կաթողիկոս Տէր Ղազար Զէյթունցին, որ է հօր եղբօր որդի Սիմէոն կաթողիկոսին, ամս Գ.։

ՌՇԽՐ = ՋՂԵ.— Յայսմ ամի յետ Ե. ամին Տէր Գրիգորի նստաւ կաթողիկոս էջմիածին Տէր Սահիաննոս Սալմաստացին։ Եւ յայսմ ամի Իլախաց աշխարհն, յերկիրն Կամինիցու, ջուրն կանանչ վազեաց, եւ ջրային կենդանիքն ի ջրէն ի դուրս նետէին զինքեանս եւ մեռանէին. եւ եղեւ մահտարաժամ ի Կամէնու քաղաքն եւ մեռաւ (ԴՒ) անձինք։

ՌՇԽԹ = ՋՂԶ.— Յայսմ ամի, յետ Գ ամին կաթողիկոսութեան Ղազարու Զէյթունցւոյն՝ գնաց վախճանեցաւ ի Ծոնոս, եւ նստաւ կաթողիկոս ի Սիս Տէր Թորոս, ի փետրվարի Բ. օրն Գ. շաբաթի։

ՌՇՄ = ՋՂԷ.— Յայսմ ամի Ալխասն, որ ելին եւ ծառայ եղեւ Բագատրին, հանեալ տարաւ զհօնտքարն ի Թաւրէզ ի վերայ եղբօր իւրոյ, որ ասէինց զԹավրէզն. իսկ Տէրն Թաւրիզու շահ Թահմազն մինչ նոքա դաւեր երկրին իւրում ելին եւ ինքն ասէինց գնոսա, զԹաւէն, զԱրդրում, զԴերջան, զԿեղի, զԲաբերդ, զեղբնկէն, զՍպեր, եւ զայլ անթիւ վնաս տարաւ։

ՌՇՄԱ =ՋՂԸ.— Յայսմ ամի մահ ելին յաշխարհս։ Եւ այսմ ամի տարաւ Բագատրն զարձնալ զտղայժողովն։

ՌՇՄԲ=ՋՂԹ.— Յայսմ ամի ջարդեցին յԱրզրում քաղաքի զաղատորդիսն հօթանասուն հոգի ի մէջ գիշերի և մեծ աղէտ եղեւ։

Եւ յայսմ ամի սուլթան Սուլէման, յետ առնելոյ զերկուտասան աէֆէրն ի վերայ շահին, դարձաւ յԼատամպօլ մեծաւ ուրախութեամբ և բազում աւարաւ և դանձիւ։

ՌՇՄԳ = Ռ.— Եւ շահն յորժամ լուաւ գչուելն Բագատրին, դարձաւ եւ ելին ի յԱրճէշ, եւ շատ աւեր արար. զվանորայքն քակեաց, զմիաբանսն ապանանեց, գկոթ եւ գԱրծկէ էառ, գայգիքն կտրեցին եւ գՏարոնոյ արուարայքն այրեցին, զԲասէնու երկիրն հրձիգ արարին, ի Կապնոյ մինչեւ ի Սիս գբրիստոնեայն գամէնն փախուցին, ոչ հայ ասաց եւ ոչ թուրք։ Ի ձեռս սոցա անկեալքն սրոյ ճարակ արարին. որ եւ ոմն ի բանաստեղծիցն ասաց ողբ ի վերայ նոցա, որ է սկիզբն այս. «Յորժամ Ռ ամն լցաւ թվական հայոց ոսմարին, աղգ մի զղլզաշ կասեն շարժեցաւ նման վիշապին» եւ այլն։ Եւ յորժամ լուաւ սուլթան Սուլէման գվնասն շահին, զոր արար ընդ երկրին իւրոյ, առաքեաց ի վերայ նորա զվէզիրն իւր՝ գԱհմատ փաշայն անթիւ զօրօք, հազարք հազարօք*, եւ շահն ոչ կարաց ընդ դէմ կալ, այլ փախչելով զօղեալ ի լերինս եւ էլլի առաքեաց մեզս գոչելով։ Եւ իննդեամց գհաշտութիւն. եւ գվէզիրն հաշտեցաւ եւ դարձաւ ըՍտամպօլ։

* Ձեռ. Ռք. Ռօք։

Եւ յայսմ ամի պարոնն Պուղտանու եւ յԱլահու՝ Ստեփան կոչեցեալն, բազում չարիս գործեաց ընդ ազգս Հայոց, զի քաղկեդոնիս արասցէ: Խորհուրդ արաւ ընդ իշխանս իւր, եւ եմուտ ի Հայոց եկեղեցին յաւուր ծանի վերափոխման Աստուածածնի. եւ ել ի խորանն, եւ լրութիամբ ձգեաց զձեռն ի սուրբ խորհուրդն, եւ էարկ ի ցերկիր եւ արաւ կռիան յոտից իւրեանց. նոյնպէս եւ զսուրբ մեռանն եհեղ ցերկիր. եւ զարհուռն եւ զսրբութիւնս եկեղեցոյ կողոպտեաց. եւ զգիանս այրեաց, եւ զբազում եկեղեցիս քակեաց, եւ բազում չարչարանօք չարչարէր զուղղափառս որ ի Հայոց, եւ զբազումս կըրկին միրտեաց, եւ զոչհաւանողսն անողորմաբար չարչարէր, եւ այլ բազում չարիս գործեաց, զոր աւելորդ համարեցայ գրել, զի մի լիցի առիթ ձանձրութեան ընթերցասիրացդ:

ՌՇՄԴ = ՌԱ.— Յայսմ ամի յոտիամ դարձաւ Սուլթան Սուլէման ի պատերազմէն, որ ընդ շահ Թահմազին, այրեաց զնախչուան եւ ամենից բազում գաւառս ի Հայոց:

ՌՇՆԸ = ՌԲ.— Յայսմ ամի զԹորոս կաթողիկոսն Սսայ ընկեցին յաթոռոյն, յետ ժ. ամի կաթողիկոսութեան: Եւ պատճառ անկման նորին այս է. զի էրէց էր, եւ զկնի մեռանելոյն կնոջն նովաւ եպիսկոպոս, եւ ունէր որդի անառակ մոեալ ի կարգ աշխարհի. եւ ամուսինն մեռաւ, եւ էառ կոյս աղջիկ, ինքն այրի գոյով: Թէպէտ բազում անգամ խրատեցաւ ի հօրէն, սակայն ոչինչ աստեաց ի նա խրատ հօրն. եւ վասնայնորիկ բարկացեալ մեր ձակայ եղեալ աթոռակալքն, որոց միոնն էր Զէյթունցի Արիստակէս վարդապետն, որք ընկեցին զնա, եւ եդին ի Սիս կաթողիկոս զՏէր Խաչատուր Զորուկ կոչեցեալն, որ էր ի Սեբաստիոյ նահանգացն: Եւ Թորոս կաթողիկոսն գնաց ի Լեւոնեբերդն, եւ անդ եկաց մինչեւ ի վաղճան կենաց իւրոց, եւ թաղեցաւ ի սուրբ Յովաննէսեայ եկեղեցոյն, որ ի Համբերդ, ի հարաւային յոտին տակն: Եւ յոտիամ նորոգեցին զԼեւոնեբերդին զեկեղեցին (ՌԺԲ.) թվին, զգերեզման նորա ի նոր առին:

Յայսմ ամի ի մարտի ԻԱ. ապուր առաջ մի երեւեցաւ յերկինս:

ՌՇՄԲ = ՌՋ.— Յայսմ ամի յոտիամ ընկեցին զԹորոսն յաթոռոյն, ձեռնադրեցին զՏէր Խաչատուր կաթողիկոսն, Զորուկ մականուանեալն. էր սա ի Սեբաստիոյ, այր խստակրօն եւ ճգնաւոր խարազնագնաց, ի վերայ մերկ մարմնոյն մազեղէն ագանէր, եւ կանեփեայ գօտով շրջէր. եւ միշտ հետեւակ գնայր ի ճանապարհս, եւ առաւել ճգնութենէն Զորուկ կոչեցաւ: Վասն որոյ ասեն թէ գնաց ի Հռոմկլայ, յետ գերեզմանին Տեառն Ներսէսի Շնորհալոյն, եւ խնդրեաց տեսանել զնա մարմնաւոր աչօք, որ եւ նոյնպէս իսկ զնա կանգնեալ ի վերայ յաթոռոյն խաչն եւ գաւազան ի ձեռն, որ եւ օրհնեցաւ ի նմանէ: Եւ անտի եւ գնաց, եւ յանցանիլն ընդ Եփրատ, զձեռն ի ճէպն տարաւ, զի Գ. շահի տացէ վասն իւր եւ վասն Բ. սեւագլխացն, որ ընդ նմայն էին: Եւ զի ունէր սովորութիւն երանելին, զի զոր ինչ

տային նմա բնաւին ոչ նայէր ի նա, արծաթ ՃԷ ոսկի, այլ ի ճէպն ձգէր. եւ ի տալն նոյնպէս, վասնորոյ յանդէաս եղ ի ձեռին Բ. ոսկի, եւ նաւավարին եւ եղեւ սովորութիւն, որ մինչեւ ցայսօր ժամանակի ի վարդապետաց զնոյն պահանջել ի պէրճեռկ եղեալ նաւավարքն:

Եւ յայսմ ամի բացին զնոր դուռն յԱմթայ:

Եւ յայսմ ամի արար Ղուկաս Կեղեցին զՀռոմայեցոցն տումարն, որ է սկիզբն՝ «Այս պատճէն Հռոմոց»:

ՌՇԿ = ՌԷ.— Յայսմ ամի արար Սուլթան Սուլէման աշխարհագիր:

ՌՇԿՔ = ՌՔ.— Եւ բուռ ոմանց այսմ ամի վաղճանեցաւ Թորոս կաթողիկոս Սասոյն:

ՌՇԿԸ = ՌԺՔ.— Յայսմ ամի մահ տարածեցաւ ընդ ամենայն երկիր եւ բազում տեղիք եղեն յանապատ ի մարդկանէ:

Եւ յայսմ ամի Թորոս Թօխատեցին ասաց զՀէբիտային տաղն:

ՌՇԿՀ = ՌԺԸ.— Եւ յայսմ ամի ԺԸ. մայիսի, որ օր էր ուրբաթ, հանդիպեցան միմեանց Սսայ Խաչատուր կաթողիկոսն եւ էջմիածնայ Միքայէլ կաթողիկոսն, եւ արարին բազում ուղղութիւն կարգաց. եւ առաքեցին ի վէնէտիկ զնդրնկացի Մելքիսեթ եպիսկոպոսն, վասն հաստատութեան տպագրատանն հայոց զրոց, որ եւ եղեւ իսկ. եւ սկիզբն Սաղմոս տպագրեցին եւ յետոյ բազում գրեանս:

ՌՇՁՁ = ՌԼԳ.— Յայսմ ամի շարժ եղեւ յեզրնկայն յունիսի ԺԷ. սուրբ Լուսաւորչի Բ. շաբաթի Գ. ժամն, յանկարծ դողումն եղեւ, քաղաքն առ հասարակ բլաւ, ԺԸՌ այր եւ կին մեռան, ԵՒ մարդ այլ ի ներքոյ հողոյն մնաց, զորս կիսամահ հանեցին, ոմանք ապրեցան եւ ոմանք սահաւ եղեն: Եւ կին մի ի ժամ շարժին կոչեաց զՍուրբ Նշանն ի յօգնութիւն, եւ չետ ԺԳ. աւուր հանին զորդի նորա կենդանի ի ներքոյ հողոյն: Եւ Ղուլ-օղլին ապր ասաց ի վրայ նոցա:

ՌՇՂԲ = ՌԼՔ.— Յայսմ ամի թուրքն գլուխ քաշեց եւ նկն եզրնկէն:

ՌՋՂԳ = ՌԽ.— Յայսմ ամի Քիղիր-օղլին էլաւ Զալալի՝ թուրդ ազգաւ:

ՌՋՂԴ = ՌԽԱ.— Յայսմ ամի Սերաստիոյ տաճիկքն ոխացան ընդ Հայոց, եւ առին զՍրբոյ Լուսաւորչայ նկեղեցին:

Եւ ի սոյն Ճվին Խիրահիմ փաշայն աւերեաց զԱմիթ հայկապահանջութեամբ:

ՌՇՂԲ = ՌԽՋ.— Եւ յայսմ ամի վաղճանեցաւ Տիրատուր կաթողիկոսն Սսայ, որ հակառակ Ազարիայ կաթողիկոսին ձեռնադրեցաւ. եւ ոչ ընդունեցին: Եւ թաղեցաւ ի Թօխաթ, ի սուրբՍտեփանոսայ նկեղեցին, առաջի դրան մատուռին սրբոյն Նիկողայոսի:

ՌՈԷ = ՌՄԴ.— Յայսմ ամի Առաքել վարդապետն Դաւրիժեցի դնէ զսկիզբն պատմագրին իւրոյ:

ՌՈԺՋ = ՌԿԳ.— Յայսմ ամի առաջինս Շահ-Աբասն զսուրբ էջմիածնայ բարերն եւ զսրբոյն Գրիգորի աջն հանեալ չէջմիածնէ տարաւ յԱսպահան:

Եւ ի սոյն ամին ի գիւղաքաղաքն յՈւլաշ, մերձ ի Սեբաստիայ, զսուրբ Փրկչայ նկեղեցին շինեցին:

ՌՈԺԸ = ՌԿԵ.— Յայսմ ամի յուլիսի Ի, որ օր էր կիրակի, Հարիւր ջայխայ մարդով ի լի Ուռուս էկաւ ի Կաֆան, եւ արարին շատ աւեր, մինչեւ ի կէսօրն. եւ եթէ ոչ հասանէին զօրք թաթարին եւ փախուցանէին, գրեթէ զբոլոր քաղաքն բնաջինջ արարեալ էին։

Եւ յայսմ ամին եւս բազում մորեխք եկին ի Կաֆայն, որ զնբեսս երկնի բուի թէ ծածկեցաւ, եւ լուսինն խաւարեցաւ։

Եւ յայսմ ամի Օքուզ Ահմէտ փաշայն եկն ի վերայ Երեւանայ, Բ. ամիս եւ կէս նստաւ, չկարաց առնուլ, ջարդեցաւ եւ յետս դարձաւ։

Եւ յայսմ թվին Ուռուան կոխեաց զՏրապիզոն։

ՌՈՒԽԵ = ՌՀՔ.— Յայսմ ամի նստաւ Սուլթան Մուրատ թագաւորն ի սեպտեմբերի Ա.։ Եւ ի սոյն թվին Ապաղայ փաշայն, որ նստէր յԱրզրում քաղաքի, ելեալ յԱրզրումայ եւ գնաց մինչեւ յԱնկուրիայ, եւ շատ ննկիչէրի ջարդեաց, զանապան տանջանօք, վրէժ խընդիր լինելով արեան Սուլթան Օսման թագաւորին. եւ դարձեալ եկն յԱրզրում։

Եւ ի սոյն թվին դարձեալ մանչ ժողովօղն ել, եւ պատւպէնկն ի պլսոց քրիստոնէին վերացուցին։

ՌՈՒԽԷ = ՌՀԴ.— Յայսմ ամի Հարիւր եւ քառասուն գայխ ըՌուս եկն ի վերայ Տրապիզոնայ, եւ զներքին բերդն էառ, ապրիլի ԻԳ., յաւուր կիրակէի, եւ եկաց Դ. օր, սակայն (Ռ. եւ ՆՃ.) ըՌուս ջարդեցին ի նոցանէ։

ՌՈՒԽԸ = ՌՀՆ.— Յայսմ ամի Հաֆիզ Ահմատ փաշայն Գ. Ճ. Ռ. մարդով եկն ի վերայ Բաղտատայ, ոչ կարաց առնուլ. հնծիլն ջարդեցաւ եւ յետս դարձաւ, եւ այսմ ամին օսմանցին էրիս ոսկիս խարաճ էառ ի հայոց։

ՌՈՒԼՔ = ՌՀՔ.— Յայսմ ամի եղեւ սկիզբն Հակառակութեան իւովացոց ժողովրդին, ընդ եպիսկոպոսին իւրեանց, եւ այն եղեւ պատճառ Իւով քաղաքի փափագասանութեան, թէպէտ ի (ՌՃԱ) թվին հաշտեցան ներկայութեամբ Փիլիպոս կաթողիկոսին, սակայն, նոյն ֆրանկութիւնն արմատացաւ մինչեւ ցայսօր ժամանակի ի միջի նոցա։

ՌՈՒԼԳ = ՌՀ.— Յայսմ ամի կեսարացի Գրիգոր վարդապետն շինեաց զԹումարպայու կարմունճն՝ երկոտասան աշեայ, զոր բացի Հացէն (ԻԳՌ.) եռեալ գնաց, եւ ԺԱ. ամօք հազիւ թէ ի գլուխ եհան։

ՌՈՒԼԵ = ՌՀՔ.— Յայսմ ամի յունվարի ԺԳ., յաւուր անօրէնութեան Տեառն, Մովսէս կաթողիկոսի աշակերտ զՓիլիպոս վարդապետն օրհնեցին կաթողիկոս սրբոյ էջմիածնի։ Եւ յայսմ ամի ի դեկտեմբերի ամսոյն սուրբ Յակորայ բարեկենդանին օրն օրհնեցին ի Սիս զՏէր Սիմէոն վարդապետն կաթողիկոս։ Սա կալաւ զաթոռն ամս Ի. յառաջ եւ յետոյ, զի ի (ՌՂԳ) հրաժարեցաւ, եւ յետ Գ. ամին դարձեալ ե. ամ վարեաց զիշխանութիւնն։ Եւ ի սոյն ամի յօգոստոսի ամսոյն սուլթան Մուրատն կարի սաստիկ նաւսախ արար պեղծ Բուբունին, եւ յիւր տէրութեան աշխարհին դաւսխանայն խափանեաց։

ՌՈՀԲ = ՌՀՀ.— *Յայսմ ամի Օսխորոտու տղբիւրն վերակացութեամբ Բաղիշեցի մահտասի Սիմաւոնին ի գիւղն իջաւ։*

ՌՈՆԹ = ՌՂԱ.— *Եւ այսմ ամի վաղճանեցաւ Գրիգոր վարդապետն Կեսարացին, որ զԹումարղու կարմունճն շինեաց, եւ թաղեցաւ ի Ղալաթիայ, ի հարաւային կողմն եկեղեցւոյն, շանաւղութեամբ Սահակ Շահին ջէլէպուն, որ յայնմ ժամանակի էր այր երեւելի ի դուռն արքունի եւ ծանօթ մեծամեծաց։ Եւ այս Շահին ջէլէպին սահակ գոլով, շատ հրախտիք արար Սահ քաղաքին ի կողմանէ թաղաւորական իրաւանց եւ հարկաց։ Եւ շինեաց ի Սիս պանդոկս եւ կարմունճս ի վերայ ճանապարհի, եւ յանգս գետոց։ Իսկ սահակիք, նախանձեալ ընդ փառաց նորա, ուխտ եդին ընդ միմեանս չանգանել ընդ կարմունճն Շահանին, որ ի միջոյ երկուց լերանց շինեալ էր ի վերայ գետոյն, մերձ Լամբերդու, եւ մինչեւ ցայսօր ժամանակի թողեալ զկարմունճն ընդ ջուրն անցանել։ Եւ եղեւ այս սովորութիւն ի մէջ սահակաց, որ մինչ բացասել կամին զիրէ իմեքէ, ասեն. «կէշմէյէլիմ Շահանըն քօփրուսընտէն»։ Եւ զնոսա անպակաս տանէր երեմն մարդ եւ երեմն գրաստ։ Եւ նոքա լաւ համարին զկորուստ ընչից եւ զանձանց քան չանգանիլ զաւանդութիւնս նախնեացն։*

ՌՈՋԱ = ՌՂԸ.— *Յայսմ ամի ի մայիսի Լ. եղեւ շարժ սաստիկ չնիթաց բազաքի։*

ՌՈՄԳ = ՌՃ.— *Յայսմ ամի Փիլիպոս կաթողիկոսն ի Սբ. Էջմիածնայ գնաց Երուսաղէմ, բայց ամ մի բոլոր ի քաղաքն Հռոմկատանայ շրջեցաւ, և ի մտանել (ՌՃԱ) ապա նմուտ Երուսաղէմ, Բժ. ան վարդապետօք և Լ. միաբանօք։ Զսուրբ Յակոբայ մէջն գոյնզգոյն քարամբք և մոսխինկերով սալեաց, և զաւագ բեմն բարձրացոյց պի ցած էր յառաջագոյն։*

Եւ յայսմ ամի վաղճանեցաւ Սիմէոն կաթողիկոսն ՀԱ. ամաց։ Սա էր ի Սեբաստիոյ ի Սալջուկ գիւղէն։ Եւ վախճան սորին եղև ի Սիս, յաւուր աւագ ուրբաթի, և եղաւ հանապատ Յովաննէս կաթողիկոսին, ի գաւիթն սրբոյ աթոռոյն, որ ի վերայ գերեզմանաց նոցա նկարեալ միթր և գաւազան։ Սա կալեալ զաթոռն ամս ԺԵ, և չետ Ե. այլ հրաժարեալ։ Սա եդ յաթոռն Սահ ՀԲ. զիրք չիշատակ, և Տ. սիկիճ, և ականակուռ սաղաւարտ մի։ Եւ ականակուռ թագն Կաղակաց Յակոբ վարդապետին երեք ի Հալպայ. և այլ մանր զրեանս և Աստուածաշունչ մի, և Սաղմոս. ամենեքին չիշատակ եթող զկնի իւր, որ չիշատակն օրհնութեամբ եղիցի։

Եւ յայսմ ամի Սարգիս վարդապետ պատրիարգ Կոստանդնուպօլսի ուրացաւ։

ՌՈՆՋ = ՌՃԹ.— *Յայսմ ամի ի Հոկտեմ[բերի] Բ. ի Դաւթայ Բունեցոյն ոճին վաղճանեցաւ Սեբաստացի Ներսէս կաթուղիկոսն Սահ, և թաղեցաւ ի Սեբաստիայ։*

ՌՈՄԷ = ՌՃՊ.— *Յայսմ ամի ի մարտի ԻԵ. յաղուհացից հինգերորդ կիրակին վաղճանեցաւ տէր Փիլիպոս կաթուղիկոսն սբ. Էջմիածնայ, և տարեալ թաղեցին ի Սրբոյն Հռիփսիմէ եկեղեցին։ Եւ նոյն ա-*

մին յապրիլի Ը. օր Սաղկազարդին, զՋուղայեցի Յակոբ վարդապետն օծնցին կաթողիկոս սրբոյ էջմիածնի:

ՌՈՄԸ = ՌՃԵ.— Յայսմ ամի զերևանցի հայերն հանեցին ի Սպահանայ և յիւր քաղաքի բնակեցուցին հրամանաւ երկրորդ Շահ Աբասին:

Եւ ի սոյն թվին ազգն քուրթաց նահատակեցին զայր ոմն քրիստոնեայ Աւետիս անուն, հայ ազգաւ, յաշխարհէն Մարաց, ի բերդն որ կոչի Փիղան. և Քրիստոս փառաւորեաց զնա երկնային լուսովն:

ՌՈՄԹ = ՌՃՋ.— Եւ այսմ ամի ի փետր[ուարի] Իէ վաղճանեցաւ Զուղայեցի Սիմոն վարդապետն ի Թօխաթ քաղաքի և անդ թաղեցաւ: Սա կարի վարժ էր քնարականութեան արուեստին և հանճարոյ յարատաքնոց գրոց, և քաջարան հակաճառող ընդդէմ ամենից ազգաց:

ՌՈԿԷ = ՌՃԺԴ.—Աստանօր զկայ առին վիպասանութիւնք Առաքել վարդապետին Թաւրէզացւոյ, որ ունի զպատմութիւն վաստուն ամաց:

ՌՈՀԱ = ՌՃԺԸ.— Յայսմ ամի սաստիկ մահ եղև յԱնթափ, ունեաց ամիսս Ե., և մեռան ոչիք կին: Եւ ի Բերդայ ի մի օր Ռ-էն մին պակաս մնաւ ի քրիստոնէից և ի թուրքաց: Վասնորոյ համարօղքն որ կային ի գերեզմանատանց հրամանաւ մեծամեծաց քաղաքին, որ ամենայն երիկոյին ծանուցանէին զքիւ մեռելոցն, մինչ տեսին զի ի հազարէն մին քիւ պակաս մնաց, ըմբռնեցին զմի ի շանց փողոցաց և կախեցին ի դուռն քաղաքին, զի քիւ հազարին լնանիցի: Եւ յայնմ օրէ սկսաւ մահն նուազիլ, որ ունեաց ամիսս Զ., որ և քիւ մեռնողացն ճՇՈ սակաւ ինչ ասելի: Եւ գրնիչ ի քաղաքս ծովեղերայց ոչ ոք մնաց որ ոչ նմուտ ի նմա մահն, սկսեալ յԵգիպտոսէ մինչև ի Կոստանդնուպօլիս:

ՌՈՀԸ = ՌՃԻՔ.— Յայսմ ամի փոխեցաւ առ Քրիստոս սրբազան խաչատուր կաթողիկոսն Սսայ զկնի ժէ. ամի կաթողիկոսութեան, և յաջորդէ Տէր Սահակ:

ՌՋ = ՌՃԽԷ.— Յայսմ ամի յԱմթենի Մինաս վարդապետն շարադրեաց ի միում տիպ զկարգս Թագաւորաց Հայոց և յունաց, և յանցք աշխարհին Հայոց:

ՌՋԷ = ՌՃՄԴ.— Յայսմ ամի ի գեկտ. ԺԸ օրն Գ. շաբաթի, օծնցին զՀաճբենցի Յովաննէսն կաթողիկոս Սսայ:

ՌՋԻԴ = ՌՃՀԱ.— Յայսմ ամի նորոգեցաւ սբ. Աստուածածնայ եկեղեցին յԱնթափ ե. խորան, որ յառաջ վիմափոր այր մի էր նեամ և խաւար:

ՌՋԽԵ = ՌՃՂԲ.— Յայսմ ամի ի Հալէպ և ի շրջակայ քաղաքացն, ի Քիլիս, յԱզազ, և յԱնթափ, և ի Պէրէճուկ, հանդերձ գեղորէիւքն, եղև սով և մահ միաւորին. զի ի Բերդայ Ռ. մեռանէր ի միում աւուր, և յԱնդափ ԹՃ, ի Թուրքաց և ի քրիստոնէից: Եւ հացին լիտրն որ ունի գծանրութիւն էՃ. և Ի. տրամից, ԺԷ. փարայ ծախէին:

ՌՋԿՋ = ՌՄԺԹ.—Յայսմ ամի յերկիրն Հղուաց սպանեցին կատաւիղով զԱբրահամ վարդապետն դառաջնորդ սրբոյն Կոնոնոսի վանիցն:

ՌՋԿԲ = ՌՄՋՋ.— Եւ յայսմ ամի ի Բաղէշ սպանեցին զԲաղիշեցի Աւետիք վարդապետն:

Н. ПОГАРЯН
(Иерусалим)

ХРОНОГРАФИЯ

Резюме

Рукопись № 3701 Иерусалимского армянского патриархата представляет собой краткую хронографию, составленную в XVIII веке. Ее начальная часть похожа на хронографию Самуела Анеци, однако в дальнейшем отличается от нее.

Хронография содержит сведения о важных событиях, которые не упоминаются в других источниках.

В статье приводятся отдельные выдержки из этого источника, касающиеся важных событий. Полностью он будет опубликован впоследствии.

N. POGHARIAN
(Jérusalem)

UNE CHRONIQUE

(Fragments choisis)

Le manuscrit 3701 du Patriarcat arménien de Jérusalem est une courte chronique rédigée au XVIII[e] siècle. Le commencement rappelle la Chronique de Samuel Anétsi, dont elle diffère dans la suite.

Cette chronique fournit des renseignements importants que d'autres sources ne mentionnent pas et que l'auteur rapporte en réservant la publication complète à une autre occasion.

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌՆՂԲԵՐ
ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ—«ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ»
ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ
ԵՐԵՎԱՆ № 9 1969

ՏԵՐ ԲԱՂԴԱՍԱՐ ԳԱՍՊԱՐՅԱՆ ՇՈՒՇԵՑԻ

ԾԱՂԿԱՔԱՂ ԱՇԽԱՐՀԱՑՈՑՑ

Տպագրության պատրաստեց՝ Հ. Քյուրտյան
(ԱՄՆ)

Ամերիկահայ բանասեր Հ. Քյուրտյանը «Բանբերի» խմբագրության է ուղարկել հայերեն գրչագրերի իր սեփական ժողովածուի հետաքրքիր ձեռագրերից մեկի լուսանկարային մանրապատճենը, որը պարունակում է 19-րդ դարի սկզբի հեղինակ շուշեցի Տեր-Բաղդասար Գասպարյանի ուղեգրություն։ Հարգելի բանասերը ուղարկել է նաև ուղեգրության մեքենագիր վերծանված բնագիրը, հանձնարարելով այն տպագրության և տալով հետևյալ համառոտ ծանոթագրությունը ձեռագրի մասին.

«Ասկի տարիներ առաջ Կ. Պոլսեն ինծի վաճառված և խրկված կարգ մը ձեռագիրներու շարքին էր նաև, կիսակաշի, մարմարագիծ խավաքարտեն կազմով հատոր մը 78 ավելի կամ նուազ ցեցակեր թերթերն բաղկացյալ $7^3/_4 \times 9^3/_4$ ինճնեզ (18,4×24,4 սմ) ծավալով, բոլորգրով մը, որ մինչև էջ 48բ-ի կեսին կը հասնի անկե վերջ նոտրգիրով շարունակվելու և ավարտելու համար։ Գրությունը, միասյուն, սև մելանով, միագիծ շրջանակի մեջ կատարված է։ Կան բազմաթիվ գունավոր և լոկ սև մելանով գծագրություններ, հատակագիծներ, պատկերագրություններ։ Յավալի է, որ գրչագիրը իմ հավաքածուիս մաս կազմելե առաջ ցեցակեր եղած է և շատ տեղ գրություն իսկ վնասված։ Ա. կողքին, ներսի երեսին վերի ձախ անկյունը կա «Թիւ 100»։ Ունի պահպանակ թերթ մը որուն վերը մատիտով «Թիւ 4» նշանակված է։ Էջ 65բ կավարտի բուն ուղեգրական մասը։ Ասոր կը հաջորդե աշխարհագրական ծանոթություններ Աստր որոշ ազգերու։ Ասոր կը հաջորդե 37 տուննոց տող մը Թիֆլիզի մասին, գավառաններ Տեր Բաղդասար Գասպարյանեն, որմե վերջ էջ մը մանրագիր կենսագրական ծանոթություն Տեր Բաղդասարի մասին և վերջապես Ղուլ Արսլանի մեկ տողը Բանգալի մասին։

Կը խորհիմ որ այս ամենը կարժե հրատարակել եղածին պես և ի վերջ։ կցել Տեր Բաղդասարի մասին կենսագրական ամփոփում մը, իր տուած գրեթե եզական այս գործին արժեքավորումով»։

Ծանոթանալով «Ուղեգրության» հետ, խմբագրությունս որոշեց հանձնարարել Միջնադարյան բնագրերի բաժնի վարիչ Հ. Փափազյանին, վերստին համեմատել ստացված մեքենագիր օրինակը ձեռքի տակ եղած մանրաժապավենի հետ, լրացնել ծանոթագրությունները և գրել համառոտ առաջաբան, ներկայացնելով հեղինակին և տալով «Ուղեգրության» աղբյուրագիտական գնահատականը։

ԽՄԲ.

* * *

Թերթելով Տեր Բաղդասար Գասպարյանի այս յուրօրինակ «Աշխարհացույցը» առաջին հերթին կարիք զգացվեց որոշ լրացուցիչ տեղեկություններ ձեռք բերել հեղինակի կյանքի և գրական գործունեության մասին, սակայն, մեր սրտումները, ինչպես որ ենթադրվում էր, մեծ արդյունք չտվին։

19-րդ դարի 20—30-ական թվականների և հետագա տառնամյակների հնդկահայ հրատարակություններում, մեր հեղինակի համարյա ոչ մի հետք թողած չլինելու մասին կարելի է եզրակացնել, ելնելով սույն բնագրի ոչ այնքան գրագետ լեզվից և սահմանափակ գիտելիքների մասին վկայող շարադրանքի հատարակ ու պարզունակ ոճից։

Մ. Թաղիադյանի գրական ժառանգության ուսումնասիրությամբ զբաղվող Ռ. Նանումյանից շնորհակալությամբ տեղեկացանք, որ «Ազգասէր Արարատեանի» համարներից մեկում որոշ տեղեկություններ կան Տեր Բաղդասարի գրական ստեղծագործության վերաբերյալ։ 1849 թ. 17-րդ համարի «բանասիրական» բաժնում տպագրված փոքրիկ հաղորդումից իմանում ենք, որ Մ. Թաղիադյանը ծանոթացել է Տեր Բաղդասարի թողած ձեռագրերի հետ, որոնց մեջ եղել են սույն «Աշխարհացույցն» ու առանձվորների ժողովածուն։ Յավոք, Մ. Թաղիադյանը ոչ մի կենսագրական տեղեկություն չի տալիս Տեր Բաղդասարի մասին, այլ բավարարվում է միայն համառոտակի բնութագրելով նրան, որպես ոչ գրագետ, սակայն եռանդուն և աշխատասեր մի քահանայի, ընդգծելով նաև «Աշխարհացույցի» ճանաչողական արժեքը։

«Ի քանի ամաց հետէ,—գրում է Մ. Թաղիադյանը,—առընթեր կային աշակերտ մերոց Հատորք օրագրութեան և առանձին հատուածանց տէր Բաղդասարայ Գասպարեան Շուշեցւոյ։ Որք սկսեալ յեղերաց Կասպիականին և ընդ Միջերկրեայս Հայոց և Պարսից անցեալ՝ շրջի ընդ համօրէն Հնդկաստան և տեղագրէ զկրևելի-երևելի քաղաքն։ Ընդ ոճ գրութեանն ո՛չ զարմանամք, ընդ նրբութիւնն հետազօտութեանն ո՛չ ապշիմք, այլ ընդ փոյթ և եռանդն աղօթէն զմայլեցեալ՝ օրինակեմք առաջնոր զկարի սուրբ և օգտակար գիտումն, որ էջ 63—64 օրագրին»։

Ապա քաղվածաբար մեջ են բերված հրատարակվող «Աշխարհացույցի» այն հատվածներից, որտեղ Տեր Բաղդասարը խոսում է իր աշխատության նպատակի մասին, օրինակ վերցնելով եվրոպացի ճանապարհորդներից և խնդրելով թերությունների համար ներողամիտ լինել։ Իրոք, այս հատվածները գտնվում են մեր բնագրի համապատասխան էջերում, ինչ որ գալիս է վկայելու, որ Մ. Թաղիադյանի վկայակոչած ձեռագիրը հենց այն ձեռագիրն է, որն այժմ գտնվում է Հ. Քյուրտյանի մոտ և հիմք է հանդիսանում ներկա հրատարակության։

Այնուհետև շարունակելով իր գնահատական խոսքը Տեր Բաղդասարի ձեռագրերի մասին, Մ. Թաղիադյանն ավելացնում է.

«Մեք՝ որում գրեթէ բնութիւն իմն եղև ի գրագիտութիւն յորդորել զազգն, խօսեցեալք եմք զկարևորութենէ այսպիսեաց ի յառաջաբանին Պատմութեան Հին Հնդկաստանի, և զարդ իս իսկ օրինակաւ հայրենակից երիցուն երկրորդեմք զնոյն, մինչև տեղի գտցուք զինչ-ինչ ի կարևորացն՝ հաղորդել ի գրօսանս սիրելի ընթերցողաց մերոց։

Ի կանգնել խորանի դրագիտութեան ազգիս՝ չգիտի ամէն ումեք Բերբէլիէլ Հարատարապետ գոլ, մաղմանք, ասրանիւթք և ոստայնանկք ևս խնդրին»:

Բարձր կարծիք չունենալով Տեր Բաղդասարի գրական կարողությունների մասին, ինչպես տեսնում ենք, Մ. Թաղիադյանը ըստ արժանվույն է գնահատում նրա գործը և ապա ավելացնում. «կամեցեալ ճաշակ իմն տալ ընթերցողաց՝ ապագրեմք ասատանօր զանարուեստս, բայց զհոգելից տաղն, որ ասէ, «թէ սէր չունիս՝ ոչ ինչ ես»: Հետևում է երկարաշունչ և իրոք անարվեստ բարոյախրատական մի տաղ:

Այսքանով էլ ավարտվում է մեզ ծանոթ միակ տպագիր խոսքը Տեր Բաղդասար Գասպարյանի գրական վաստակի վերաբերյալ, ասված, սակայն, իր ժամանակի այնպիսի մի հեղինակության կողմից, ինչպիսին էր Մ. Թաղիադյանը:

Տեր-Բաղդասար Գասպարյանի ուղեգրությունն անշուշտ որոշակի գիտական արժեք է ներկայացնում և թեև համառոտ, սակայն հետաքրքիր տեղեկություններ է հաղորդում 19-րդ դարի 20-ական թվականների Անդրկովկասի, Իրանի և հատկապես Հնդկաստանի քաղաքների վերաբերյալ: Առանձնապես ուշագրավ են Հնդկաստանում բրիտանական տիրապետության սկզբնական շրջանի մասին եղած տվյալները, որոնք վկայում են ինչպես տեղական, այնպես նաև հայ վաճառականության իրավունքների սահմանափակման և անգլիական խոշոր կոմպանիաներին տրվող լայն արտոնությունների մասին:

Քաղաքների հակիրճ նկարագրությունները, բնակչության զբաղմունքի, կրոնի, սովորությունների, տարազի և այլ հարցերի մասին տրված համառոտ տեղեկությունները, թեև շարադրված բավական պարզ ու հասարակ լեզվով, հետաքրքիր մանրամասներ են պարունակում և կարող են լրացուցիչ աղբյուր հանդիսանալ 19-րդ դարի սկզբի Հնդկաստանի քաղաքների ներքին կյանքի և տնտեսական հարաբերությունների ուսումնասիրության համար:

Ուշագրավ են բրիտանական գաղութարարների վարած քաղաքականության, Հնդկաստանի առանձին նահանգներում գաղութարարներին ցույց տրվող հերոսական դիմադրության և այդ պայքարում հայ դիվանագիտության ցուցաբերած մասնակցության վերաբերյալ տեղեկությունները:

Տեր-Բաղդասարը հարկ է համարել յուրաքանչյուր քաղաքի նկարագրությանը կից տալ նաև նրա մանր գծագիր հատակագիծը, որով պատկերացում տալու համար քաղաքի տեղադրության, միջով հոսող գետի, շրջապատի լեռների, բերդի կամ պարիսպների մասին, իսկ առանձին դեպքերում փորձել է տալ նաև Հնդկաստանի որոշ խոշոր քաղաքների ու նավահանգիստների մեկ կամ կես էջ զբաղեցնող դունավոր համայնապատկերը: Այս, առաջին հայացքից հասարակ գծագրերն ու արտանկարումները այդուհանդերձ որոշ գաղափար են տալիս հայտնի քաղաքների ծավալի և դիրքի մասին և զուրկ չեն ճանաչողական արժեքից:

Ուղեգրությունը արժեքավոր է նաև իրանահայ և հնդկահայ գաղութի ներքին կյանքի տարբեր բնագավառների մասին տեղեկություններով, որոնք եկան լրացնելու մեր գիտելիքները այդ գաղութների գոյատևման պատմության վերաբերյալ:

Ուղեգրության բնագիրը, որ հեղինակը անվանում է «Ծաղկաքաղ աշխարհացույց», ինչպես ասված է Հ. Քյուրտյանի համառոտ նկարագրության մեջ, զբաղեցնում է ձեռագրի 3ա—65բ էջերը, 66—75 թերթերը աշխարհագրական

տեղեկություններ են հեղինակի շրջած երկրների մասին՝ պետական քաղաքների թվարկումով և բնակիչների դիմագծերի ու պետարկների պարզունակ պատկերներով, որին հաջորդում է Թիֆլիսին նվիրված երկարաշունչ և գեղարվեստական տեսակետից առանձին արժեք չներկայացնող տաղի խիստ ցեցակեր և վնասված բնագիրը:

Հ. Քյուրտյանի կարծիքով ձեռագիրը այս վիճակում, երբ արդեն բավական բաշքաշված է եղել 1876 թ. կամ քիչ ավելի ուշ, վերանորոգվել է անհայտ անձնավորության կողմից: Այդ ժամանակ ձեռագրին ավելացվել է սկզբից 1 և վերջից 3 թերթ: Վերանորոգողը, որն ինչպես երևում է, բավական մոտ է եղել Տեր-Բաղդասարի բնատանիքին, այդ թերթերի վրա կատարել է արժեքավոր նշումներ, որոնք կարևոր են ոչ միայն Տեր Բաղդասար Գասպարյանի անձնավորության մասին տվյալներով, այլև չափազանց հետաքրքիր տեղեկություններ են պարունակում հայապետությանը քիչ ծանոթ Քարուլի (Աֆղանստան) հայ գաղութի վերաբերյալ:

Ձեռագրի սկզբի հավելյալ պահպանակ-թերթի վրա կատարած հետևյալ չափածո մակագրությամբ, բնաբան ունենալով պարսկական մի առած, վերակազմողը փորձել է բարոյագիտորեն պատճառաբանել ցույցաբերված հոգատարությունն ու խնամքը, իր ձեռքն անցած, այս գրչագրի նկատմամբ[1]:

«Առակ պարսից»

«Հարչը դար չէշմդ՝ խար այէդ,
Վարդար-նք բուլ քար այէդ»:
«Զոր ինչ յաչս քո երեւի փուշ
Կալ, զի երբեմն փոխի քեզ նուշ»[2]:

«Ի որհրդական միկնութիւն»

«Զայս փորձ իրական՝ բազմօք իմ փորձեալ,
Եւ ոչ ի միում՝ դիպայ զղջացեալ:
Բազ դիս անհաւանն՝ արդեամբ փորձեցէ,
Եթէ անպատուէ՝ ինձ անգոհացէ:
Զոր ինչ արդ անպետք՝ ի վաղիւ պիտոյ,
Դու կալ դիմ խրատ՝ զերթ պատակ արդոյ:
Եթէ լուիցիս՝ ոչ ինչ վնասիս,
Այլ ի դիւրընկալ՝ ժամուն բերկրեսցիս,
Յայնժամ դու չիշես՝ բարեօք եղկելոյս,
Որ առաջնորդէ՝ քեզ յանապատ լոյս»:

«Աշխարհացույցի» էջերում և հատկապես վերջին տողերում Տեր-Բաղդասարը որոշ կենսագրական տեղեկություններ է տալիս իր մասին: Ըստ այդ տեղեկությունների նա ծնվել է 1771 թ. հունվարի 1-ին հին Շուշիում: 1793 թ. սկսած Աղա-Մուհամմադ խանի արշավանքների ժամանակ նա Շուշիից

---

1 Այս և հետագա բոլոր հավելվածությունների բնագրերը մեջ են բերվում Հ. Քյուրտյանի վերծանությամբ:

2 هرچه در چشمت خوار آيد وردار يكرو كار آيد V երկտողի բառացի թարգմանությունն է. «Ինչ որ աչքիդ անշնան թվա, վերցրու, մի օր պետք կգա»: Թարգմանիչը պարսկերեն خوار «նվաստ», «աննշան» բառը շփոթել է خار «փուշ» բառի հետ:

փախել է Թիֆլիս, որտեղից էլ, հավանաբար Թիֆլիսի գրավումից հետո (1795 թ.), անցել է Հյուսիսային Կովկաս, եղել Ղզլարում և այլուր: Որոշ ժամանակ հետո նա եկել է էջմիածին և շրջագայել Արարատյան երկրում և ապա ձեռնարկել իրանի վրայով դեպի Հնդկաստան հեռավոր ուղևորության, որը տևել է 6 տարի: Հնդկաստանից նա նորից վերադարձել է Նոր Ջուղա, որտեղ ձեռնադրվել է քահանա և ուղարկվել է հովվելու Քարուլի հայ համայնքին: Այստեղ էլ 1824 թ. նա ավարտում է ճամբորդության ընթացքում գրի առած նոթերի հիման վրա, Հնդկաստանի Կրնալ քաղաքում սկսած այս «Աշխարհացույցը»:

Տեր-Բաղդասարի կենսագրության վերաբերյալ մեր տեղեկությունները սրանով էլ կսահմանափակվեին, եթե ձեռագրի նորոգողը, վերջում ավելացրած երեք թերթերի վրա թողած չլիներ նրա ընտանեկան կյանքի որոշ մանրամասնություններն ու հովվական գործունեության ընդհատակյանը պարունակող հետևյալ ծանոթությունը.

«Տ[է]ր Բաղդասար հեղինակ գործոյս յայտէ, զի որչափ անհրաժեշտ յուսումն գրոց՝ այնչափ և աշխատասէր, նաև մտացի: Ամուսնացե[ա]լ արն՝ ի Շիրազ քաղաքի Պարսից, ընդ Մարիամու կնոջ այրուց, եղեալ ի Ջուղայ, ձեռնադրի քահանայ ի Յովհաննու (Պարսոյ) եպ[ի]սկ[ոպո]սէ, յորմէ և սեպհականաբար թեմաւորէ ի Քարօլ:

Եթէ հաւատալ արժան է բանից կնոջ Տ[է]ր Բաղդասարի, զիտէր եպ[ի]սկ[ոպո]ս, զամուսնութ[իւն] ն[ո]ր[ա] ընդ կնոջ այրուց, այլ զիտութ[եամ]բ ձեռնադրեալ զնա ի սեպհական քահանայութի[ւն] Քարօլայ, ըստ որում վ[ա]ս[ն] հեռաւորութե[ան] վայրին և անապահովութե[ան] կետից՝ ոչ ոք յանձն առնոյր զթեմն Քարօլայ:

Թեմ Քարօլայ ընդ իշխանու[թ]ե[ամ]բ վանաց Ջուղայ, զկնի սորին Տ[է]ր Բաղդասարայ (որ ասի վախճանե[ա]լ յամի տեառն 1826) փակի, և այլ ոչ ելանէ անդ ոգ ի մատակարարութի[ւն] հայ գաղթականաց, և մնան ընտանիք իրրև 30 անհովիւ և անտերունչ, ոյր վ[ա]ս[ն] և ոմանք յարին ի պապականս:

Յամի Տ[եառ]ն 1860, քարօլցի ոմն Մ[ա]հ[տես]ի Յովհաննէս Գրիգոր անուն, սատարե[ա]լ զրուց[եամ]բ ոմանց եղելոց անտի, չուեալ ցամագաւ ի Պարսկաստան ի վանս Ջուղա, խնդրէ քահանայանալ վ[ա]ս[ն] Քարօլայ: Եպ[ի]սկ[ոպո]ս ժամանակին յանձն չառեալ ձեռնադրել զնա (թերևս վ[ա]ս[ն] չքաւորութե[ան] տիրացուին) դարձեալ սորա ի Կալկաթա մերձ և կարօտ առօրին պիտոյից, օժանդակու [թ]ե[ամ]բ անտի եկեղեցւոյ տեղւոյս առ ճանապարհաւ Փեշաւորայ դարձաւ ի հայրենին Քարօլ, այլ թէ ժամանեաց կամ ո՛չ ոչ ոգ իմացեալ, քան զի ելոգ ճանապարհին անապահովք՝ ընդ ձեռն խժաբարոյ Աղուանից սահմանացն:

Զկնի և այժմ ոչ ոգ ի մերոց մնացեալ անդ, այլ յարեալ ամենեցուն ի պապականս, ահա յարացոյց աւուրց յաւուրս նուաղման Ազգութե[ան]ս, ոմն այսպ[է]ս և ոմն այլ իմնապէս, զու պնդեա թէ յառնելոց է ազգս յոտն իւր յերգոյ:

Յետ մահուան Տ[է]ր Բաղդասարայ՝ Այրի նորա ընդ միով որդուվն (Մնացական) դառնան ի Կ[ա]լկ[ա]թա, ուր որդին ամուսնացեալ թողու որդի մի Յովհաննէս (Յոսէ) վախճանի Այրին յամի Տ[եա]ռն 1865, և որդին Մնացական դրուի ի կենաց յամին 1876. «Ամուլն ծնաւ եօթն, և բազմածինն նուազեցաւ ի ծննդոց»: Երանի թէ համօրէն թեմակալ քահանայք Հնդկաստանի զոնէ ըստ

չառորդի նամանող Տ[է]ր Բաղդասարայ լինէին, որոյ ոհոգին Տ[է]ր լուսաւորիացէ»:

Ձեռագրի վերջին 77 և 78 թերթերի վրա նույն գրիչը գրի է առել նոր ջուղայեցի աշուղ զուլ Սրպունի «երգ բանգալայ» տաղը, ինչպես նաև 10 տող «մեր ազգն հիմարացնելայ» տաղից, տալով նաև օտար բառերի բացատրություններ[1]:

Տեր-Բաղդասար Գասպարյանի «Աշխարհացոյցի» ընագրի Հ. Քյուրյանի կողմից կատարված վերծանությունը, կրտսեր գիտ. աշխատող է. Բաղդասարյանի հետ միասին մեկ անգամ ևս ծայրից-ծայր համեմատել ենք մեր ձեռքի տակ գտնվող մանրաժապավենի հետ, լրացնելով, նման դեպքերում անխուսափելի, մատնակի բաց թողումները և ուղղելով մեքենագրական վրիպակները: Հիմնականում պահպանված է ընագրի ուղղագրությունը. ուղղված են միայն բացահայտ գրչական սխալները:

Հեղինակային ընագիրը ավելի անաղարտ ներկայացնելու նպատակով, և՛ Հ. Քյուրյանի կողմից արված օտար բառերի բացատրությունները և՛ մեր ծանոթագրությունները, ինչպես նաև ձեռագրի վերանորոգողի կողմից առանձին էջերի լուսանցքներում կատարած հավելումներն ու ծանոթությունները, տրված են ընագրից դուրս՝ տողատակի ծանոթագրությունների մեջ: Տողամիջում կամ լուսանցքներում քաղաքների մանր գծագիր հատակագծերի կամ գունավոր համայնապատկերների մասին նույնպես նշված է տողատակում, տալով նաև դրանցից մի քանիսի նմանահանությունները:

Հ. Փափազյան

---

1 «Երգ բանգալայ» և «մեր ազգն հիմարացնելայ» տաղերի լրիվ ընագրերը ժամանակին հրատարակել է Ա. Երեմյանը, տես նրա «Պարսկահայ աշուղներ», Թեհրան, 1930, էջ 22—23 և 23—26: Վերջին տաղը լրիվ վերահրատարակվել է նաև Հ. Սահակյանի «Հայ աշուղները» ժողովածուի մեջ, Երևան, 1961, էջ 92—98:

Գ Ի Ր Ք

ՈՐ ԿՈՉԻ ԾԱՂԿԱՔԱՂ

ԱՐԱՐԵԱԼ Ի ՏԷՐ ԲԱՂԴԱՍԱՐ ԳԱՍՊԱՐԵԱՆԷ ՇՈՒՇԵՑՈՑ

ԿՈՉԵՑԵԼՈՑ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՑ ԷՋՄԻԱԾՆԱՅ ՍՐԲԱՉԱՆ

ՏԵԱՌՆ ԵՓՐԵՄ ՅԵՐԿՆԱՀԱՆՃԱՐ ՍՐԲԱՉՆԱՍՈՒԲՔ

ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԵՒ Ի ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՆՈՐ ՋՈՒՂԱՅՈՑ ՍԲ. ԱՄԵՆԱՓՐԿՉԻ

ՏԵԱՌՆ ԿԱՐԱՊԵՏ ԱՐՀԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԳՐԵՑԱԻ Ի ՀՆԴԿԱՑ ԱՇԽԱՐՀՍ, Ի ՔԱՂԱՔԻՆ ԿՐՆԱԼ

ԿՈՉՆՑԵԱԼ, Ի ՅԻՇԽԱՆՈՒԹԵԱՄԲ ԲՐԹԱՆԷԱՑՈՑ, Ի ՏԵՂԻՆ ՋԱՒՆԻ,

ԱՅՍԻՆՔՆ ՋՕՐԱՅՆ ԵՆԿԷԱՑՈՑ:

ՅԱՄԻ ՏԵԱՌՆ ՄԵՐՈՑ ՅԻ. ՔԻ. 1821–ԻՆ

ԵՒ Ի ԹԻԻՆ ՀԱՅՈՑ 1270:

ՆԱԵԻ Ի ԹԻԻՆ ՀԱՋԱՐԻԱՅԻ ՆՈՐ ՋՈՒՂԱԵՑՈՑ...

ԵՒ ՈՐ ԿԱՄԻ ՋԱՅՍ ՃԱՇԱԿԵԼ

ՊԱՐՏ Է ՆՈՐԱՅ ՈՉ ԲԱՆԲԱՍԵԼ.

ԱՅԼ ԳՈԱՌԱՏ ՍԻՐՈՎ ԴՐՔԵԼ.

ԱՆԱՌԱԿԻՆ ՉԻՍ ՆՄԱՆԵԼ:

էջ 3ա Նախապէս յառաջաբանութեամբ, կամիմ համարձակել, և Ծաղկաքաղ կոչեցեալ փոքրիկ գրքոյս դիմեմ առ Աստուածասէր և բզգօնամիտ, սիրելի ընթերցողդ և յայտնել զիտորհուրդ և զպատճառ սրտի սննկի իմոյ, որ կայր ի վաղուց չհետ ամփոփեալ և ոչ կարէի յամարձակել և լոյս ածել վասն տրկարութեան մտածն այն թէ գուցէ որ ի յիմաստուն արք ընթերցողք անձինք յանդիպելով գրքոյս այսպանման ծաղր արասցեն և վասն թերութեան սորին մեղադրեցին։ Կամ անհմտութեանս իմ բամբասանօք արհամարհեցեն, քանզի իսկ բաչ գիտեմք, որ ի ծագել արեգականն, կորնչին աստեղք. նաև ոչ կարեն լուսաւոր լինել. վասն այսորիկ ի միջոց ժամանակ զայս ցանկութիւն բանին բարձի թողի առնելով պահեցի ի սրտի իմոյ, բաց ի միում աւուր պատահեցայ ընթերձմանս ի սուրբ աւետարանին, ըստ Տէրունեան առակին, վասն թաքուցման քանքարոին որպէս բաչ գիտէք, զայս արդահատութեան օժանդակութիւնն համարձակեցայ. զայն որ ունէի ի սրտի իմոյ. ի արտաքս բերել և ի լոյս ածել՝ որպէս ի մէջ գրքոյս որ կոչեցի Ծաղկաքաղ յայդ իսկ արարի, և իրրեւ զլման այրի կնոջն զոր ինչ ունէի առաջի բարեմիտ ընթերցողացդ ձգեցի, որպէս և ես կամիմ սիրելի ընթերցողքս գրքոյս ընդունելով ընդունեցէք, և սղալմունք սորին ի բաց ձգեցէք և զնոյն լոման այրի կնոջն համարիցէք։

Քանզի յորժամ մարդ մեռանի զոր ինչ աշխատեալ է ի վերայ աշխարհի ընդ նմին մեռանի. բաց գրեալ է ի գիրն սրբոց, թէ երանի այնոցիք, որք ունին զյիշատակ ի Սիոն, զոր օրինակ երօփացոց ազգն, որ շրջումն ի վերայ աշխարհիս, ևթէ ծովում և ևթէ ցամաքի, զոր ինչ տեսանեն ըստ սովորութեանցն իւրեանց գրեն և պահէն և տարածեն ամենայն տեղիս. վասն՝ ապագայն և ընդ նմին օրինակի ես, զոր ինչ տեսեալ էի ի վերայ աշխարհիս, ևթէ քաղաքաց և ևթէ
3բ աշխարհաց, ևթէ ճանապարհա//շափն, ևթէ ծովում և ևթէ ցամաքում, զոր ինչ տեսեալ էի աչօք ի մէջ Ծաղկաքաղ գրոցդն յայտ արարի։

Նախ և հառաջ Ղզլար քաղաքն ի Հայաստան աշխարհումն[1] ի ներքոյ տէրութիւնումն Ռուսաց է ձևակերտեալ ի քառանկունի որպէս

1 Տեր-Բաղդասարի պատկերացումները «Հայաստան աշխարհի» մասին շատ ընդարձակ են։ Պատմական Հայաստանի մեծաւակա այն բոլոր վայրերը, որտեղ երբևէ հայեր են բնակվել, նա համարում է «Հայաստան»։ Միջնադարյան աշխարհագիրների մոտ դա ընդհանուր տենդենց է։ Ճիշտ հակառակը նկատում ենք արաբ և պարսիկ հեղինակների մոտ։ Երկուստեք այն գալիս է կրոնական սահմանափակությունից և միմյանց նկատմամբ ունեցած անհանդուրժողական վերաբերմունքից։

եղայ ի Հանդիման սորա[2], և գնա՛ ելանէ՛ և անցանէ՛ ի ներքոյ քաղաքին երթայ խառնի ընդ ծովն Կասպից[3]։ Եւ Ղզլար քաղաքիս բնակեալքն քրիստոնեայ՝ այսինքն Հայ և Ռուսա, և քաղաքն փայտաշէն և դեղեցկաշէն և բազում այգիս և բաղչինէր ունելով առաւել, մեծ մասն հաղողի, բայց քաղաքի յօդրն շատ վատ՝ այսինքն դառն, և ձրմեռն մեծ, և միջի պարոնեաքն հասարակութեամբ բարեբարոյ ողորմած և սիրով, գթած, աղքատասէրք և երկուղածք, ժամասէրք և վարք նոցին քաղաքավարութեամբ և ըզգեստիւ Հայոց, գեղեցկութեամբ միջակօրէն և ըստածուածքով Հարուստ, և վաճառականութիւն նոցա առ Մակարիայ։

Մղդօբ քաղաք է Հայաստան, ի մէջ դաշտի և է բոլորակ[4], և գնա՛ իջանէ՛ ի ներքոյ քաղաքին և երթայ խառնի ի ծովն Կասպից[5]. և Ղզլարից մինչ Մղդօբա ճօթն աւուրք ճանապարհ է, կարաւանն արաբօվ կու գնայ, և այս Մղդօբա ունի սակաւ բաղէրս, և Մղդօբայ հօդն լաւ է քան զՂզլար, բնակեալքն Հայք և Ռուսաք են, բովանդակն արհեստաւորք և վաճառականք, վարօք և պարկեշտութեամբ նման Ղզլարայ պարոնեաց, բայց գօլվաթով սակաւք։

4ա ‖Անդրիայ քաղաք է Լէզգիաբնակ ի Հայաստան, որ ի ճակատս լեառն Կովկասայ, որ հայի ի դէմս Ղզլար և քաղաքն գոյ ի ծոց սարի միջոյ և ելանէ ի վեր, զոր տեսանես ի Հանդիման[6], որ գոյ յերկան, և գնա՛ մի նուազ իջանէ ի սարէս և անցանէ ի ներքոյ արտաքո քաղաքին և ցրուեալ տարածի ի դաշտս, երբեմն ցամաքէ և երբեմն բազմանայ, բաց ի ժամանակս անձրեւային։ Եւ բնակեալք քաղաքիս Լէզգի և օրինօք և կրօնիւք մահմատական և գործկով մարդածախ, արհեստիւ գող, աւազակ և սուր սուսերօք մարդասպան, որ այժմ ժամանակի կան ի ներքո Ռուսաց։ Եւ Մղդօբայ մինչ Անդրիայ չորս աւուր ճանապար է, և ի միջոյ ճանապարհիս գոն բազում երթեղիք խառնեալ ի մէջ Լէզգիս, և Անդրիայ կայ սակաւ քրիստոնեայ ի Հայոց և ի Վրաց ազգէ վաճառականք և բարեպաշտք և բառիւ վրացոյ խօսին, և Անդրիայ քաղաքս ոչ ունի բաղ և այգիս, քաղաքն բարաշէն և ինքեանք յոյժ գեղեցիք։

Նաև Դարբանդ քաղաք է ի Հայաստան ի եզերք Կասպի ծովու, որ Թուրքերէն Դամր Ղափի[7] կոչեն, որ գոյ ի ներքոյ Կովկաս սարին, այսինքն Դաղստանայ, և ձև քաղաքի օրինակի որպէս տեսանես ի դիմաց[8] և յոյժ գեղեցիք պարսպօք, որպէս լսեմք ի աւանդաց, թէ Աղէքսանդր Մակեդոնացուն ասեն շինեալն, որ այժմ կայ ի ներքո հիշխանութեամբ Ռուսացն։ Եւ բնակեալքն սորին Թուրք և Հայք և Ռուսաք վաճառականք, արհեստաւորք, երկրագործք և այգեգործք։

4բ ‖Եւ Անդրիայից մինչ Դարբանդ չորս աւուր ճանապար է, խաղող և

---

2 Տողերի արանքում տրված է քաղաքի բառանկյունի մանր հատակագիծը։
3 Ղզլար քաղաքի մոտով հոսում է Թերեքի դելտայի ճյուղերից մեկը։
4 Մանր շրջանակաձև գծագիր հատակագիծ։
5 Թերեք գետը։
6 Մանր գծագիր հատակագիծ։
7 Երկաթե դուռ։
8 Մանր գծագիր հատակագիծ։

գինի շատ և հօդն բարի, հարբստութեամբ և գեղեցկութեամբ միջակօրէն։

Որ ի մերձ սորայ է Ղուպայ, այսինքն երէք օրէն ճանապարհ և ի Հայաստան աշխարհումն և է բնակեալքըն Թուրք, Լազդի, և այժմըս Ռուսաց տէրութեանն է։ Եւ բազում զօրք Ռուսաց անդ է, և Ղուպայ քաղաքս է ի մէջ անտառաց, որ ամիսօրէն ասեն ծառոտ։ Եւ ձև քաղաքիս ունի բոլորակ, որպէս տեսանես ի դիմաց[9]. և քառանկունիս է բանակն Ռուսաց և ի միջոյ քաղաքին և բանակին գետ մի փոքրագոյն անցանէ, որ իջանէ ի սարէն և երթայ խառնի ի ծովն Կասպից[10]։ Եւ է հողն Ղուպաու առողջ, և բնակեալքըն արեւտառոր, որ Թուրքերէն ասեն խանջալասազ[11], և է հեռագոյն ի ծովէն Կասպից. Բ. (2) սահաթ[12]։

Իւսխասյին կայսրն Ռուսաց Ալէքսանդր Պաւլովիչն նահս սիրէլ այ Շիրուան, և այս Շիրուանս է լայնատարած աշխարհ մի ի մայրաքաղաքացն Հայոց և ունի բազում գեղօրեաքս, բայց առաջին քաղաքն աւերակ է այժմս, նորումս մէկ քաղաք է շինեալ Մըստաֆա խանն[13] Շիրվանցին, ի ճակատն Կովկասայ սարին և անուն սորին Ֆիթդաղ։ Այս այն Մըստաֆայ խանն է, որ մին միջոց չէր հնազան-
5ա դում ||Ռուսաց Թագաւորին, հետոյ խոնարհեալ հնազանդէց։ Եւ Ֆիթդաղա քաղաքս է այս ձևովն, որ է եռանկիւնի[14], գետ ոչ գոյ և աղբիւրք բազում, և ոչ գոյ ի սմայ այգի կամ բաղ և քաղաքն է շատ բարձր, որ հապիւ ելանեն ի քաղաքն, և դժվարագնաց ճանապարհ և ճարմակ սպիտակ բարամբ շինեցեալ և բնակեալք քաղաքին Թուրք և Հայք, գործք սոցայ վաճառականութիւն, և հողն քաղաքին քաղցր, և հիշխանքն հայոց ողորմած և բարեպաշտ, խաղաղարարք և սիրովք, բայց բառով գէէիքօրէն խօսին, որպէս Ղարաբաղցիք, ըզգեստիւ Հայոց հնոց կարճօրէն և տեսլեամբ գեղեցիք։ Եւ այս Շիրվանայ գեղարէնքի անձինքն միանգամայն են երկրագործ և այգէգործ, որ են մշակք։ Ղուբայուց մինչի Ֆիթդաղ երեք աւուր ճանապարհ է։ Թող մնայ զըՇիրվան և զըվանքս հանապատս, և եկեղեցիքս։ Յելից վերկալով առ Շաքի. սայ ևս է ի ներքոյ լեառն Կովկասայ, որ գոյ ի մէջ Հայաստան աշխարհումն, այսինքն քաղաքս այս, որ կոչի Նուխի։ Եւ գետ մի իջանէ ի լեառնէն Կովկասայ, այսինքն Դաղստանայ և գայ առաջի վանքին, որ ի անուն Սբ. Ստեփանոս Նախավկային է շինեցեալ, և գետս այս գայ անցանի ի մէջ քաղաքին և երթա խառնի ի քուռ գետն[15]։ Շաքուց մինչի Քուռ գետն երկու աւուր ճանապար է, յիշեալ
5բ Շիրվանից մինչի յիշեալ Նուխի վեց աւուր ճանապար է||, և Շաքիս

9 Մանր շրջանակաձև հատակագիծ։

10 Կուրիալչայ գետը։

11 Դաշտեյնագործ։

12 ժամ։

13 Շամախու խանն էր նախքան Ադա-Մուհամմադ խանի արշավանքը, մասնակցեց ռուսական զորքերի հրամանատար Զուբովի դեմ կազմակերպված դավադրությանը, փախավ Շամախուց, սակայն ներման արժանանալով՝ նորից եւ վերադարձավ։

14 Մանր եռանկյունի հատակագիծ։

15 Ալազանի մեջ թափվող Աղրիչայի վտակներից։

է այս ձեւովն, որպէս տեսանես կերպ սորին ի դիմաց[16], և շէնք քաղաքին քարաշէն, և անշափ այգիք, բաղչայ բաղերով, և բնակեալք քաղայքին Հայք և շատ փոքր Թուրք: Բազում մեռաւակ կլանէ տեղէն, այսինքն՝ արբիշում, և շատ թուի լինի, որ սրազ քաշեն, բայց քաղաքի յօդն շատ դառն է, և Հայոց հիշխանքն և մեծամեծ վաճառականքն միշտ տեղն անպակաս են, որ նոցա առ և տուրն միշտ էգզուն հետ կու լինի: Այս Կովկասայ սարումն բնակեալ լազքիքն քօչբաչի շալ և նափնջի և մեղր և մոմ բերէն: Եւ հիշխանք տեղոյս բարեսիրտ, ողորմած, ժամասէր, աղօթքարար, անանկասէր և այլ ամենայն բարութեամբ պարկեշտ և խօսակցութիւնք սոցա զոէքօրէն, որպէս Շիրվանցիք և նոյն ըզդեստիւն և գեղեցկութեամբ միջակօրէն: Եւ այս Շաքիս ունի բազում գեղօրեանք և յիկնդեցիք շատք, և ազգ մի Հայ կայ նոցա Ուդի ասեն և շատ հաւատով քրիստոնեայ աստուածապաշտք, նաև բազում Երրանցիք այսինքն Ջրուղ կան գեղարէնքումն բնակաց, որ ի ժամանակի Ապկար Բագաւորին մերոյ սոքա փախստական լինելով մնացէլ ան տեղն:

Ելից վեր կալով առ Ճառ-Բէլաքան, որ է Հայաստան: Այս Ճառ-Բէլաքանս բնակարան Լազպիացոց, որ ընդ Շաքուվն է տէրութիւն Ռուսաց, որ այժմ կան ի ներքոյ Հրամանի Ռուսաց: Ապայ այս Ճառեցիք միանգամայն զող և աւազակ, մարդածախ, մարդասպան, որպէս Անդրիացիք. սոքայ էին, որ քրիստոնէի մանկունքն գողանային և տանէին վաճառէին Օսմանցոց, և այժմ Ռուսաց զօրքն տեղն
6ա նստած են//, այնքան աստիկ Հրամանի ներքոյ, որ ուլ մի ոչ կարեն գողանալ և ծախել, և տեղրս է անտառային ծառոտ և լայնատարած երկիր, բսկսեալ յիշեալ Կովկասու սարիցն մինչ Քուռ գետն Ճառ է, և սոքայ բառիւ Լէզգու խօսին, և յօդն է բարի:

Այս Ճառիցս ելից վեր կալով առ Կախէթս լայնատարած գաւառ է և ունի բազում գեղէրս: Ես անշահ Համարեցի մանրամասնաբար աշխատիլ: Եւ սորայ քաղաքն է Թէլաւ և շատ գինի լինի և սիրեալ տպրանձէ ընդյանուր աշխարս Վրացոստան: Եւ ի մէջ Կախէթիս և յիշեալ Թէլաւ քաղաքին բնակեալքն Հայ են և Վրացի և Ռուսաց զօրքն տեղն շատ կայ, և գետ մի իջանէ նոյն Կովկաս սարէն և գայ անցանէ ի մէջ Կախէթիս, և անուն գետիս է Ալազան: Եւ Կախէթիս տեղն է անտառաին և շատ բաղէրով: Եւ գայս ասացեալ Ալազան գետս երթայով երթայ խառնի նոյն Քուռ գետն: Եւ բնակեալք սորին յուրաչէր, և Թէլաւ քաղաքի բնակեալքն անդոյզք և բնակեալք սորին չքնաղ և գեղեցիկ: Այս Կախէթիցս մինչ ի Թիֆլիս երեք աւուր ճանապար է: Սոքա վրացևար խօսին:

Նոյն Կախէթիցս վեր կալով մինչի վերի Վրացոստան, որ վրացերէն Քարթէլ ասեն, այս Քարթէլս լայնատարած աշխար է Վրացոց, բսկսեալ նոյն Կովկաս սարիցն մինչ Ախլցխայ և մինչի Բաշաչուխ, որ ասին Իմէրէթ և ունի բազում գեղս և գեղաքաղաքս, որոց մինն ի
6բ սոցանէ Գօրի: Այս Գօրիս է // ի ներքոյ բլրի և եղր գետի, և այս գետս նոյն Կովկասայ իջանէ և խառնի ի Քուռ գետն: Եւ Գօրի է սա-

16 Մանր գծագիր հատակագիծ:

կաւ բազում և բնակեալքն քրիստոնեայ, այսինքն Հայք և Վրացիք, վաճառականք և արուեստաւորք և ինքեանք շատ գեղեցիք: Եւ Գօրուս գէմ հանդիման ի լերինն Կօվկասու կան բնակած երեց ազգք. այսինքն Օս, Թուշ և Փշաւ, մաշկեղէն ըզգեցուօք, այսինքն էծի մորթի հագած, և գլխանոցն, որ է գդակն, խոտ է, և ոտնամանն՝ տուխ և ուրէնքն ումն սատանապաշտ, ումն իծի գլխապաշտ, ումն կատուապաշտ և բազում անասունք ունին, այսինքն կով, գոմէշ, ոչխարք և ձի և անշափ գինարբու և այլեւայլ լեզուս խօսեն: Սոքայ միշտ իջանեն ի լերնէն Կօվկասայ և գոն ասացեալս Գօրի քաղաքս և վաճառեն կամ գնեն, և վերոյ յիշեալ Քարթէլս միշտ առատութիւն և լիութիւն հացիւ և ամենայն պարարտութեամբ, և են սոքայ երկրագործ և մշակք:

Այս Քարթէլիցս մինչի մայրաքաղաքն Թիֆլիս, չորս աւուր ճանապար է, ի Հայաստան աշխարումն, բայց ոմանք ասեն վրաց աշխարհ. բայց ոչ է այս այնքան հաւաստի, վասն յորժամ թագա-
7ա ւորն Հայոց, յորժամ Բակրատոնի թակադիր արար, հարկադիր//Թիփխիս այսինքն Թիֆլիս տվաւ Սուրայ և պարոն շինէց աղարկէց Տիփխիս որ է Թիֆլիս, և այս Թիֆլիս քաղաքս է այս ձեւովն[17], բազմութեամբ ժողովրդովք, քրիստոնեայք, այսինքն Հայք և Վրացիք և Ռուսաք և սակաւ Թուրք և Ջրուդ, ի կերպ քաղաքին, այսինքն թէ Հավլապարն և թէ բերթըն և թէ վանքի մահլան, վերն տեսանես: Եւ Քուռ գետն անցանէ ի մէջ քաղաքին և երթալով երթայ ընդ երասխն միաւորէ և խառնէ ի Կասպի ծովն: Եւ Թիֆլիսցս է գեղեցքաշէն, հանդերձ բազում աւրք նկեղեցօք, նաև հրաշաշէն աւրք վանքովն, որ կոչեն էջմիածին, ունի Թիֆլիսս բազում բաղէր, նաև ունի ի մէջ գետումն ջերմաղացս և ջերմաչարխս[18] և գօվլէլի բաղնիսք, որպէս ասեն ռամկօրէն զուղրաթի[19] տաք ջուր, և ունի Թիֆլիսս գեղեցիք շօգանս, բաղարս, պանտուկս և մեծամեծ քարվասրայքս և բազում վաճառականքս և Աստուածասէր ողորմած իշխանքս, արհեստաւորքս, գեղեցկութեամբ առաւել քան զամենայն, և թէպէտ անօրէն շար նենգինի աշխարաւեր բռնակալն պարսից ի թվին Հայոց 1244 հազար երկու հարուր քառասուն չորսումն, (1795) աւերեալ էր քաղաքս և մերթ տասնևութն հազար հոգի Հայոց և Վրաց ազգէն
7բ եսիր գերի տարաւ, բայց // յորժամ յաւեցաւ Աստուած ի տառապանս ազգիս Հայոց, կամեցաւ այց առնել, առաքեաց զկայսրն Ռուսաց Ալէքսանդր Պաւլօվիչն ի սահմանս մեր, որ եղև Տէր և թագաւոր ի վերայ տանս Հայոց և Վրաց: Ապայ զօրանալով զօրացաւ ազգս մեր, որ այժմս ի Թիֆլիս քաղաքումս այնքան մերազնէիցն եկան բնակեցան, որ առաւել տասնապատիկ քան զառաջինն, և յոյժ փառաւորութեամբ պայծառացան նաև շինութիւն քաղաքին այնքան աւելցաւ և օրըստօրէ ևս աւելանայ և ազգս մեր մեծաւ ուրախութեամբ ցնծան և

17 Մանր գծագիր հաւտակագիծ: Նկ. 1 (1):

18 Ջրանիվ:

19 قدرتی ուժի, առողջութեան, իմա՛ բուժիչ ջուր:

օրհնեն զտէր Աստուած փրկիչն մեր և օրհնեն զօրհնեալ կայսրն Ա-
լէքսանդր Պաւլովիչն, և զհամայն տոհմայինքն նորին: Եւ Ռուսաց
մեծ զօրապետն հանդերձ մեծ զօրքով ի Թիֆլիսումս է նստած, որ
յիշխէ և կարգադրէ զնոր առած քաղաքան ու զօրացն իւրեանց:

Շըրջելովս եկայ առ գովելի քաղաքն Լօռի[20], որ է ի մէջ Հա-
յաստան, և ունի գետս, աղբիւրս բազումս և ջրաղացս ի վերայ գետին
և այգեստանս բազումս և դեղօրանքս բազումս և զեր քան զամե-
նայն պատուականութիւն ի սմայ ունի, այսինքն, անթիւ ոսկոյ և
արծաթոյ պղնձոյ և արկաթոյ և այլ բազում մադանանի, որ այժմ
Ռուսաց կայսրի հրամանաւն բովանդակ մադանանիս բանացա-
նում են և է պահապան սոցա Ռուսայինքն և բազում զանձ և զոլվաթ
ելանէ տեղէն:

8ա //Խորհեցայ ելանել և տեսանել Ղազախ և Շամշադին կոչեցեալ գաւառքն. Ղազախ և Շամշադինս է ի աշխարհումն Հայաստանի ի
ներքոյ հիշեալ Լոռի սարին, բնակեալք սորին են Հայք և Թուրք,
այսինքն, երկրագործք և մշակք: Եւ յօդն խիստ բարի է:

Այժմս վերդալով հասանք օրհնեալ քաղաքն Գանջայ, որ է Հա-
յաստան, որ այժմ է ի ներքոյ Ռուսաց թագուհոյն, որ նորայ Ելիզա-
պօլ կոչեն՝ ըստ նմանութեան անուան կայսերուհուն, այսինքն Եղի-
սաբեթ: Եւ սոյն Գանջէս է հետագոյն ի Թիֆլիսու իբրև աւուրս ութն
և ի լեառն յիշեալ Լոռու ձգտեալ, տարածեալ մինչև Երազիս, որ և
ունի յիշեալ սարն Գանջա ի ներքոյ իւրում, և զայս սարն ունի ի մէջ
իւրոյ բազում մադան շնիլնդի[21], որ Թուրքիէն կոչին շիպ, և բազում
աղբիւրք ունի, որ միաւորեալ լինին մեծ գետս, և իջանէ ի լեռնէս
և գայ անցանէ ի մէջ Գանջայ քաղաքիս, և ջուրս այս խիստ զառն է
և յիւանդարար և երթալով երթայ և խառնի յիշեալ Քուռ գետն: Եւ
Գանջայ քաղաքս է այս ձևովն որպէս դիմաց[22]...

8բ //Բարուն զօրացն Ռուսաց հրամանն այնքան սաստկացաւ աշ-
խարհումն Արցխայ, որ է Աղուանից տան: Քուրապանս[23] է եղր Քուռ
գետին, անտառային, ծառոտ: Ծառն է մադդարի[24] ծառ, լայնատա-
րած զաշտ է մինչի Քուռ-Ղօլշան[25], որ է Կասպի ծովն: Սա ևս Հայոց
աշխար է դարձեալ: Ելից գալով եղր Քուրաքչային, որ Հայոց բառով
Թնագետ կոչին, նաև Ջէյվայ գետն, սորայ ևս խառնին Քուռ գետն:
Ի վերայ Ջէյվայ գետին այժմս շինել ան նոր քաղաք, որ էր Մէլիք Ա-
պովին, և Մէլիք Յուսուֆին, Մէլիք Ծրիդօնին, իւրեանց հայրական
քաղաքն այ, և թաքայորի շնորհն է սոցայ վերայ, և այժմս սոցայ որ-

20 Այստեղ ատտղանիշ է դրված և յուսանցքում այլ ձեռագրով ավելացրած է. «Այս Լօռի քա-
ղաք, իբրև փոխադարձ պարգև ի Հերակլ թագաւորէ վրաց առ Աղայ Շամիր Սուլթանով (որ ի
Մադրաս քաղաքի) չլինի ժառանգել, զի մեռանի Աղայ Շամիր, գոլով և ժառանգացն հոգիք ան-
պիտան՝ չելանեն զհետ ի տիրելն Ռուսաց 30 ամս միջոց տայ պահանջու ժառանգաւորաց, ոչ
ետ փութացեալ ի խնդիր. մնայ ժառանգութիւն իշխանութեան Ռուսաց»: Նշմարվում է նաև մա-
տիտով գրության հետքեր «...Աղայ Շամիր... չհատաց վայելել»:

21 Պողկեղ, շիպ:

22 Մանր գծագիր հատակագիծ: Նկ. 1 (2):

23 Քուռի հովիտ:

24 Մաստոսի խեժ:

25 Քուռի խառնուրդ, այն վայրը, ուր Քուռը միանում է Արաքսին:

դոցըն վերայ, և լաւծով կաւն, եթէ Աստուած Հայոց Յապաւոր Հաստատի, պիտի յառաջ տեղս նստի: Այս նոր քաղաքս Զէյվայ է ի ներքոյ Մոաւայ սարին: Էս սարն նոյն Հօռէ սարն է, որպէս յառաջագոյն յիշեցայք: Եւ քաղաքն է այս ձևըն[26], և նոյն գետն յառաջևն անցանի,
Ցա և այս Մոաւա սարս է երանելեաց այսինքն ճգնաւորաց// բնակարան, որ մինչև ի այժմս և կան անծանօթի, որպէս երբեմն հանկարծակի պատայեն ի յորսողաց: Եւ սարն է անտառ մայրեաց և բաղում գեղրանքս ունի ի ներքոյ իւրում որ են բնակաց ի ազգէս մերմէ: Որ և գաւառիս անունն է Իպիրմիդօրթ[27]: Եւ յելից վեր կալով առ Ջարաբերթ, որ է Մէլիք Մէջնունի գաւառն, ունի քաղաքս մեծ որ այժմս է աւերակ, որ սայ վասն չարութեանն Իբրայիմ խանին, սայ եթող ըզհայրենիս, և գնաց Գանջայ բնակվէց, առ այս պատճառի քաղաքս իւր եղև աւերակ: Եւ յիշեալ Իբրայիմ խանս չարաչար սատակեցաւ ի ձեռանէ զօրաց Ռուսին, գոյ ըզյաւուցումն գործոց իւրոց: Քաղաքիս անուն է Ինն Մաս: Ելից վէր գալով առ խաչան գաւառն, որ այժմս շէն է հանդերձ ժողովրդովք, վանք և եկեղեցովք: Տեղին քաղաքն է Խձորըսատան և մէլիքն այ Մէլիք Ըռուստամ, և գաւառս է անտառախիտ և է այս ձևովն[28], խնձորըսատան և բաղում բաղէրով և բնակեալքն Հայոց ազգ, և աստ է հրաշալի և զարմանալի վանն Գանձաք և աթոռն սրբոյն Գրիգորիսի, որ է թոռն սրբոյն Գրիգորի մերոյ Լուսաւորչին: Յելից վէր գալով առ գաւառն
Ցբ վարանդայ//, որ առաւել շէն և պայծառ քաղցր է և մեծագոյն, քան զմեսասան գաւառքն Ղարաբաղայ: Ի սմայ են մեծամեծք իշխանքն մերազնէից, որ մշտապէս ցաւեն, և Հոգան վասն հաստատելոյ և նորոգելոյ տանս Հայաստանեաց աշխարհին, որ ի սմայ կայ բերդն Շիշայու, որ կոչեն Շուշայ ղալայ: Եւ է ի վերայ բարձր լեռնին էրէվէրայ, այսինքն Երեւելայ և սոյն քաղաքիս տեղն է քառանգունի ի սարից գոյացեալ, և քաղաքս է ի միջի սորայ, և բարցրութիւն սորայ իրրեւ ժամս վեց և Սարու Սուրբերք սարն հօլանացեալ և բարձրացեալ ի վերայ սորայ իրրև ժամս տասն երկու և այս Սարու Սրբերք կոչեցեալ սարն է պատճառաւոր անուն, այսինքն, երանելի ճգնաւորքն ի աստ միանցնաւոր լինելով վարէին ի ժամանակս իւրեանց, վասն այսորիկ կոչեցաւ Սարու Սրբերք սար և նոյն յիշեցեալ Հօռէ սարն է որ ձգտեալ տարածեալ մինչի աստ, և ունի շատ քաղցր աղբուրակունք և բարելի տունք և բուսք: Եւ Շիշու ղալէն որ նոյն իսկ է քաղաքն, և ունի նմանութիւն որպէս տեսանես ի դիմաց[29] և լանատարած տեղ, և ի ներքոյ սորա գետ երթայ և միաւորի ի Քուռ գետս և իջանէ ի նոյն Սարու Սրբերք սարէն, և ի մէջ քաղաքիս բնակեալքն Հայք և Ռուսք և փոքր Քուրդք, և է իշխանութիւն Ռուսաց

---

26 Մանր գծագիր հատակագիծ:

27 Քանչոյա: Դաշտային Ղարաբաղը այսպես էր անվանվում XVI դարում այնտեղ բնակվող Իյուն հատուկառած քանչոյա կրղբլբաշ ցեղերի անունով:

28 Մանր գծագիր հատակագիծ:

29 Մանր գծագիր հատակագիծ: Նկ. 1 (3):

կայսերի և ունի ի սմա զօրք և զօրապետք, և խաղաղութիւն է ներ-
10ա կիրս և բնակեալք//ազգն մեր յոյժ սիրով և բարեպաշտ մանաւանդ հաւատով և սգեսով Հայոց կարճօրէն և տեսլեամբ դեղեցիք, արեսաւորք և վաճառականք և բառիվ կոէբօրէն խօսէն և հասկն[30] և յօդն շատ բարի և աղբերաց ջուրն քաղցր և մարսական, որպէս իսկ է զայս ծննդական և անընդական քաղաք իմ, որ ի թվին փրկչին մերոյ Յի. Քի. հազար եօթն հարուր եօթանասուն և մէկին (1771) և ի թվին Հայոց [Ռ]ԲՃԻ (1220=1771)-ին. և յունվարի մէկին ես Տէր Բաղդասարս ծնայ ի մօրէ և նոյն ամսի վեցին մկրտեցին զիս։ Թողում առ այս իմոյս պատմութիւնն, որպէս լիալիր կտեսանէք ի վերջ ծաղկաքաղ գրքոյս, և այժմ պատմեցից ի գաւառն Դիզակու որ ի ներքու կայ ասացեալ յիշեալ սարի, և ունի Դիզակ գաւառս բազում գեղարէնքս և շատ բաղէրով նաև եկեղեցիք, վանք և անապատ և բնակեալք սորին են ի ազգէս Հայոց երկրագործ, այգեգործ և մշակք, բարխիրս և աղքատասէրք։

Յելից վէր գալով առ դէպ Մուղան չօլն[31] որ ըսկսեալ Արաղ գետից մինչ ի Ասլան դուզովն յիշեալ Քուռ-Ղօլշան սայ ևս Հայաստան է, և բնակեալք սորին մահմետականք, որ կոչին Թարաքա-
10բ մայ[32], և ունին սոքայ բազում անասուն, և մասն գօրացն//Ռուսաց կան ի անդ բնակեալ վասն պահպանութեան ճանապարհաց երթ և եկողացն։

Դարձեալ առեալ ի հերն երասխայ դէպ վեր գալով առ Բարգուշատ գաւառն ունի մեծ գետս ի մէջ Բարգուշատայ անցանէ և երթայ խառնէ Երասխն, և ունի Բարգուշատս բազում դեղէրս, այգեստանս, վանքս, եկեղեցիս, հանապատս, և բնակեալք սորին Հայք և սակաւ Թուրք, և շատ գովելի բրինձ ելանէ։

Յելից վայր գալով առ Ղափան որ է Ծափան. ունի բազում գեղէրս և շատ վանք և եկեղեցիս անապատս, և բնակեալք սորին Հայք և խիստ հաւատովք։ Եւ զայս Ղափանումս կայ Շիդկայհող գեօղաքաղաքս, և սորայ վերն է Մեղրու սարն անասատախիտ ծառոտ։ Սա սահման է Աղվանից և Արարատայ։

Յելից վեր գալով, առ գաւառն Զանկաձոր, որ Թուրքերէն ասեն Զանկազուր։ Սայ ևս ունի գետս, որ երթայ խառնի Երասխ։ Այս Զանկաձորս ունի բազում գեօղէրս, վաներ, եկեղեցիս, կուսանաց անապատս որ սրբազան Գրիգոր Տաթևացոյ յիսաբանչ և հրաշագործ, զարմանաշէն վանն է սմա։ Զանկաձորս ունի ամուր այրիք
11ա և ի մէջ//այրեացս է բնակութիւն մերազնեացս, և յոյժ ողորմած և բարի անձինք։ Եւ անհասապ[33] և անչափ ձէթ ելանէ ասէն։

Յելից վէր գալով առ գաւառն Քուրդստան, և այս Քուրդստանս է ի կողմս յիշեալ Սարն Սրբերքի միոյս կողմն, և ոչ գոյ ասսի բաղ

---

30 Եղանակ, կլիմա։

31 Դաշտ։

32 Թուրքմէն անվան հոդնակի ձևն է. նստակեաց մահմետականները այսպես էին անվանում Բրքախոս քոչվոր ցեղերին։

33 Անհաշիվ։

և այսպի և բնակեալք սորին Հայք և Քուրդք ի մէջ անտառախիտ մայրիաց, և ունի գետս մեծս և բազում աւերակ վանեաս:

Յելից վէր գալով առ Սիսիան գաւառն, և սայ ունի վանեաս, եկեղեցիքս, անապատս, գիւղերս, հաստատուն և աւերակս, և Ռուսաց զօրաց միս մասն կան առ ամենայն պատրաստութեամբ: Եւ զայս լեառն Սիսիանայ է անվանի և միշտ ձիւնաթաւալ: Ահաւ առ վերջացաւ ի Ազուանից աշխարհն: Եւ յիշեալ Բարգուշատ վերջացաւ յիշեալ Լօռու սարն, և այս երկուտասան գաւառքն Ղարաբաղայ, այսինքն, նախ Քուրսատան, երկրորդ Իպիրմիզօրդ, երրորդ Ջարաբերդ, չորրորդ Խաչան, հինգերորդ Վարանդայ, վեցերորդ Դիզակ, յօթներորդ Մուղան չօլ, ութներորդ Ղափան, իններորդ Ջանկաձոր, տասներորդ Քուրդստան, մեսասաներորդ Բարգուշատ, երկոտասաներորդ Սիսիան: Ահա առ վերջ//ացաւ Ռուսաց տէրութիւնն: Եւ այս Ղարաբաղայ երկոտասան գաւառքս, զոր յիշեցի, ես որչա՞փ գովեմ որ բաւականանայ, թէ բարձրաբերց ձիւնաթաւալ լեառքն, թէ տերևալից ինքնաբոյս անտառն. թէ ծաղկափթիթ պաղաբերք ծառքն, թէ զարմանալի այրս, և ի փափարս ճրքնաորաց, թէ քաղցրահամ յորդահոս աղբիւրքն, որ ե ծարփս լերանց իջանէ և լինի կարկաճահոս գետօրէնք և մատակարարէ կանանչագեղ ծախկախառն դաշտն և առողջարար քաղցր հօդն և թէ զարդարար միշտահոսան յարաֆային հողմն, թէ մշտացօղ անձրևաց յարմարութիւնն, և թէ սրբոց բնակարան սրբազնաց ոտաց տեղարէնքն, և թե գիւղեցիք յանգստրանն, և թէ մանուշակախառն բըխղեալ խոտ և բանջարն երկրի: Արդ ես որն գովեմ և որն թողում, թողում այն արժանաւոր օրհնեալ աչացն որ կղնայ ուր աչօք կտեսանի, միանգամայն ասեմ՝ երկրորդ դրախտ է Եդեմային:

Այժմ պատմեմ Արարատեան աշխարհն Հայոց, այն որ տեսեալ
12ա եմ աչօքս իմ և մնացեալ անտեսն իմ ներհիւ խնդրեմ: //Մեղրու սարիցն վայր գալով առ Մեղրի, և այս Մեղրիս է ի մէջ երկու սարի և նոր երասխայ և է բազում բաղէրով, մանա[ւա]նդ խաղողի բաղէրով, անչափ գինի ելանէ որ բաւականանայ ընդ սահմանս իւր, նաև բազում բամբակ, մեղր և մոմ ելանէ և ունի բազում գետօղարանքս և քաղաքս բաժանի երկու յաւորս, առ դէմ հանդիման ի միմիանց և գետ իջանէ ի ծարփէ լեռանց գոյ և անցանէ ի մէջ երկու քաղաքացս և խառնէ ի երասխ գետն և ոչ յետագոյն քան թէ կէս ժամս: Եւ Մեղրի քաղաքացս ձևն տեսանես ի դիմաց[34], և հօդն խիստ դառն է, և բնակեալք սորին բովանտակն ի ազգէս Հայոց և փոքր ինչ անդութք, և ունին ի միջի իրենանց ի յաւուկ բառս խօսակցութիւն, որ է մեզ անծանօթ: Եւ յիշեալ Ղարաբաղից մինչի Մեղրիս երեք աւուր ճանապար է:

Յելից վայր գալով ի եղերէն երասխ, մինչի Օրդուվար գետաքաղաքս բովանտակ բնակեալքն Քուրք են մահմետականք, բայց Հայոց վաճառականքն միշտ անպակաս են վասն առուծախսի, և բամ-

34 Մանր դծագիր հատակագիծ։

բակ շատ եւանէ տեղս։ Այս Օրդվարից վայր գալով մինչի Այքուլիս մայրաքաղաքըս մին աւուր ճեմ ճանապարհ է, և այս Այքուլիս վաղնջոց Հայոց քաղաք է, այժմս է փոքր ինչ աւերակ, և սայ է ի մէջ փոքրիկ երկու լճոն և սայ բաժանի երկու քաղաքս և անուն
12բ վայրին կոչի Դաշտ, և Բ (2) քաղաքս բուանդակի իրրև // ճանապար աւուրս միոյ։ Եւ արդոյ Թօմայի առաքելոյ հրաշաշէն վանս է աստ, և գնա մի փոքրիկ իջանէ ի լճոնէն և անցանէ ի մէջ երկու քաղաքին, գնայ խառնի ի Երասխ գետն։ Եւ քաղաքս է այս ձև[35], և ունի բազում բաղնիս, աղբիւրս և քաղցրահամ, մարսական ջուրս, և ունի բազում գիւղս որ կոչեն Հազար Ջորս և բան ասից Թուրքևար անուն Հազար Դարայ, և բազում սրբոց նկեղեցիքս, վանք, անապատս։ Եւ բնակեալք սորին բովանդակն ի օրհնեալ ազգէս մերազնէից, և յոյժ ողորմած ազգասէր և Աստուածասէր և հարուստ և մեծամեծ իշխանք և շատ սիրուն և գեղեցիք պատկերովք և են վաճառականք, և բամբակ շատ եւանէ, և ունին ի միջի իւրեանց հատուկ բան, և խօսակցութիւնամբ քաղաքավար և ըզգաստիւք Հայոց։

Յաւեցուցեր զաշս իմ տեսանելով ըզքեզ աւերակ ո՜վ գովելի քաղաքս խին Ճուղայ, ո՜հ թէ որչափ պատուելի էիր ի միում ժամանակի, որ ընդ քև ունէիր գօվելի և իմաստուն անձինքս և գեղեցիք հրաշալի նկեղեցիքս, այսօր կաս աւերակ և ամայի։ Եւ արդ յիշեալ Ճուղայս է ի եզր Երազ գետուն, ի ներքոյ փոքրիկ սարի, և է այս ձև[36], նախ գերեզմանատունս և ապայ քաղաքն և ապա Երասխ գետն, և ունի քանի տուն ի Հայոց ազգէս և գործք սորայ է նաւավարութիւն որ
13ա վանն ի գետէս գալացող և գնացողն հանցկացանել։ Եւ Ջուղ//այս է Արարատ ի Հայաստան աշխարումն և Աբուլուց յետի է իրրև աւուր միոյ։

Ո՜հ Աստուածահաջոյ և Նոհայ կոչական Նախաէջ քաղաքդ Իջևան, որ կաս ի մէջ Հայաստանեաց աշխարհի, որ զայս Նախիջևան քաղաքս Նոյ նահապետն շինեաց, այսինքն, յորժամ եկն ի տապանէն և իջաւ ի աստ, առ այն կոչեաց զանուն տեղոյս Նախիջևան։ Եւ է այսօր պարծանք Հայոց ազգիս որով հաւաստեաւ տեսանելմբ ի գիրս աստուածաշունչս, քանզի ելեղոյս Ադամայ մնալով ի Նոյ, և Նոյ կոչեաց զանուն տեղոյս Նախիջևան։ Եւ ազգս Հայոց տեսանի զայս բառրառս ի լեզու և բառս Հայոց, որպէս բազում նշանագիր անունք ի բառս Հայոց, որ ի Նոյէ է կոչեցեալք։ Եւ ունի քաղաքս լայնատարած դաշտս։ Եւ ունի բազում գեօղարանքս և գեօղաքաղաքս և վանքս և եկեղեցիքս, որոց մինն է Ամբլորդոյն այսինքն սուրբ Կարապետայ վանն, և սուրբ Ստեփաննոսի Նախավկայի վանն, Կարմիր վանն, և այլք բազումք և ունի Հասարակօրէն բաղս, և գետ մի իջանէ ի լճառնէն հիշեալ Սիսիանայ, զայ անցանէ առաջևն և երթայ խառնէ ի Երասխ գետն։ Յիշեալ Ջուղայուց մինչև ի աստ մի աւուր
13բ ճանապար է, և բնակեալք սորին շատս մահմետ//ականք և փոքր

35 Մանր գծագիր հատակագիծ։
36 Մանր գծագիր հատակագիծ։ Նկ. 1 (4)։

Հայք, և ձև բաղաքիս այսպէս որպէս տեսանես ի դիմաց[37], և ի Նախիջևանայ աշխարհէն, ելանէ բամբակ, բրինձ և աղ: Եւ քաղաքացիք ըզգեստօք Պարսիցոց նման երկայն:

Յորժամ ելայ ի Նախիջևանայ ի դէպ Յարևան յեռագոյն է Ճանապարհս իբրև աւուրս հօթն դաշտն Արարատեան, և ունի բազում գեղօրանքս, շատ գետէրս: Ասա է սուրբ Գրիգոր Լուսաւորչի Խոր վիրապն: Եւ ասացեալ Յերևանս է ի մէջ Հայաստան աշխարհի Արարատեան և բաղաքն է ի մէջ ձորոյ եւ Ջանկու Ջայ կոչեցեալոյ գետն ընթանայ առաջեւն բաղաքին, և ի ներքոյ պարբսպի բերթին և երթալով երթայ խառնի Երասխ գետն: Եւ Երևանայ բաղաքն և բերդն է այսպէս[38], և ունէ բազում բաղէրս և գեօղօր[ա]նքս, բամբակ, ձէթ և գինի շատ ելանէ և ունի վաճառականք շատ և բնակեալք բաղաքին Հայք և մահմատականք և տէրութիւնն է Պարսիցոց, և յօդն բաղաքին խիստ դառն, և մերազնէիք յոյժ ողորմած մարդասէրք և հնազանդ օրինաց, բայց բնութեամբ ինքնահաւան: Նաև Սեվանայ ծովն ունի ի միոյ կողմամբ ընդ Արարատայ: Եւ կայ ի մէջ ծովոյս վանս Սևանայ և է հաստատուն ընդ վարդապետօք և կրօնաւորօք, որ
14ա մշտապէս աղօթեն// վասն մեր, և սոյն ծովէս ելանէ շատ քաղցրահամ ձուկն, որ իրաւի հաշակոզաց է իմանալի:

Յանկալի մայրն մեր սուրբ էջմիածին է[39]: Այս սուրբ էջմիածինս յեռագոյն է Յարևանայ իբրև ժամս երեք: Այս սուրբ էջմիածին անունըս ի Գրիգորիոս Լուսաւորչէն մերմէ կոչեցաւ, որ ի ժամանակս Տրդատայ թագաւորիս Հայոց զսուրբն Գրիգորիոս, իւր անտանելի չարչարանօքն, լուսաւորեաց ազգս Հայոց և էած ի կռապաշտութենէ առ աստուածպաշտութիւն, առ այս աղագաւ սուրբն էջմիածին եղև պարծանք ի մէջ քրիստոնէից ազգիս Հայոց, քանզի սուրբն Յերուսաղէմ ի յառաջնումն էր սիրելի Աստուծոյ և պարծանք Հրէից ազգին, և երկրորդումս պարծանք ամենայն քրիստոնէից: Բայց սուրբն էջմիածին յատկական սիրելի Աստուծոյ և պարծանք ազգիս Հայոց, առ այս որ Հայրն Աստուած այնքան սիրեաց ազգս Հայոց, որ առաքեաց զմիածին որդի իւր ի Հայաստան Արարատեան աշխարհս, որ լոյսակերպ յեկեղեցիս կառուցին, և կոչեցին զանուն նորայ սուրբ էջմիածին, և դարձեալ այնքան սիրեաց Քրիստոս զազգս Հայոց որ սոյն լուսոյ կանգնեալ յերկրէ յերկինս և գրեթէ հրեշտակք յերկնից իջանէին, ընդ Գրիգորիոսի մկրտին զմանկունս Հայոց: Ահաւ կատարեցաւ պնդիրքս սրբոյն Ագաթրիոսի մերոյ թագաւորին որ գրեաւ թխաւք աղաչէր և խնդ[ր]էր և կոչէր Քրիստոսի
14բ ի Յերուսաղէմայ, առ քաղաքն իւր ի Հայաս//տան: Տեսիք սիրելիք ընթերձողք գրոյս որ որքան ունիմք պարծանս ի մէջ քրիստոնէից ի կողմանէ սուրբ էջմիածնայ: Ապայ ուրեմն եթէ ի ազգէս Հայոց ոմանք վասն որկրամոլութեան իւրեանց ուրանան զծընօղս իւրեանց զսուրբն էջմիածին և զովհաւատս նորին, ուրեմն մի զարմանայք դի այսպիսիքն չին ճշմարտապէս ի ազգէս Հայոց, այլ

37 Մանր գծագիր հատակագիծ:

38 Մանր գծագիր հատակագիծ: Նկ. 1 (5):

39 Մանր գծագիր հատակագիծ:

անհրեւութապէս որթիք են եթանոսաց, քանզի որդի հարազատ նմանութիւն հօրն բերէ, և այլն ըստ մասամբն դուք յիմացէք:

Սուրբ էջմիածին ունի ընդ հինքեանս սրբոյն Հռիփսիմէի վանն և Գայեանեայ վանն և Շողակաթ և ունի մայրաքաղաքն Վաղարշապատ և բազում գիւղարանքս, և ունի սուրբ էջմիածին աթոռս լուսաւորչական այսինքն Գրիգոր Լուսաւորչէն հաստատեալ, և աթոռանիստ սուրբ հայրապետն յիշխէ ի վերայ ընդհանիւր Հայոց ազգի և համայն սոցին եպիսկոպոսաց առաջնորդաց և պատրիարգաց զոր տէր աստուած յաստատուն պահեսցէ:

Ի այս սուրբ էջմիածնէս յելից գալով մինչ ի Բայեազիդ երեք աւուր ճանապար է ի յայն կոյսն Երասխայ, և ի վերայ ճանապարհին կայ լեառն Արարատեան որ կոչի Մասիսայ սար, և ունի ի վերա իւր զտապանն Նոյեանն և մշտապէս ամբն և ձիւնն անպակաս է ի
15ա վերայ նորայ, որպէս տեսանես ի դիմաց[40]: //Եւ այս Բայեազիտս է Հայաստան աշխարհումն և քաղաքն է ի ճակատս սարի և տէրութիւնն է Օսմանեցոց, և ունի բազում գեղարէնքս, որք են բնակեալք ի ազգէս Հայոց կամ ի մահմատականաց, որ կոչին Տրպլի[41] քուրդ լօլօյ: Եւ այս Բայեազիտայ քաղաքս բաղ, և բաղչաից սակաւ, բայց աղբիւրք շատ և ունի գեղեցիք շօկանս այսինքն բազարս: Եւ բնակեալ մերազնէիցն սէրն և բարեպաշտութիւնն շատ և բազմաւոք նման Օսմանեցոց[42]:

Այս Բայեազիդէս յելից վայր գալով դէպ ի Խոյեայ քաղաքն հօրն աւուր ճանապար է, և մերձ ընդ իւրն կայ սրբոյն Թաթէոսի առաքելոյն Քրիստոսի և առաջի լուսաւորչին մերոյ սուրբ վանն: Եւ մերձ Խոյու կայ Մայրանդն որ է կին Նոյեայ սուրբ նահապետի, որ ամկօրէն ասի Մարանդ: Եւ Խոյէս է ի Հայաստան աշխարհումն, և ունի բազում գիւղս գաւառս և բազում բազմանս, և Խոյու քաղաքն է այս ձևն[43], և է տէրութիւն Պարսիացոց, և կայ բնակութիւն ի փոքր ազգէս մեր և մնացեալն բովանդակ մահմետականք: Եւ ունի Խոյըս վաճառականս արվեստաւորս, բազմաւոք նման Պարսիացոց, և տիղիս Թուրք ազգն շատ դառն և թշնամի քրիստոնէիցս, և հօդն բարի է:
15բ Բամնալ շինական բնակեալքն ի Սալմաստ ունին բազում գիւղարանքս, տարածեալ է մինչի Ուրումի: Այս Սալմաստս է ի աշխարհումն Հայաստան, և է տէրութիւն Պարսիացոց, և բնակեալքն Հայք և Թուրք: Եւ ունին բազում գեաս, աղբիւրս, բաղէրս: Այս Սալմաստումս կայ մի գեօղաքաղաք, որ կոչի Զարգարի գեղ: Սորայ բնակեալնքն Հայք են բայց խիստ խայրեբաք են, որպէս յայտնի է ամենեցուն, և շրջապատին ի վերայ աշխարի և շատ արվեստօք և յղնարիւք խարեն զմարդիք: Այս Սալմաստու աշխարհին բնակեալքն բազմաւոք նման են Պարսէացոց երկայն և խիստ գոէիքօրէն խօսին:

Այս Սալմաստից յելից վայր գալով մինչի Ուրումի երկու աւուր ճանապար է: Եւ Ուրումի է ի Հայաստան աշխարհումն ի մէջ

40 Արարատի գծագիր նկարը:

41 Խոսքը Դունբուլի քրդերի մասին է:

42 Մանր գծագիր հատակագիծ:

43 Մանր գծագիր հատակագիծ:

դաշտի, և ունի բազում գեօղարանքս, գետս, աղբիւրս, բաղս, և քաղաքս է այս ձեւովս[44], և սորին բնակեալքն Թուրք և փոքր ինչ Այսորի, և տէրութիւն է Պարսիացոց։ Եւ ի մերձ քաղաքիս ունի փոքրիկ ծովակ, և ի մէջ ծովակիս կղզի մի անմարդաբնակ և գազանք ի միջի սորա բազում։ Վարք սոցայ ըստ նմանութեան Սալմաստացոց, որպէս վերն գրեցի և յայտ արարի։

16ա ||Բոտեմ ի տանէ վասն պահպանութեան մերազնէիցն, որք են բնակեալք ի Մարաղայ։ Եւ այս Մարաղաս է ի Հայաստան աշխարհումն, ընդ տէրութեամբ Պարսիացոց և ունի գեօղարանքս բազումս, և բնակեալքն ի սմայ են ի ազգէս Հայոց, որք են երկրագործ և մշակ, բայց յոյժ ողորմած, մարդասէրք և բարերար, հաւատովք ժիր և արի և սիրող ամենայն բարութեանց գեղեցիք, բայց գէիքօրէն խօսին։ Եւ այս Մարաղուց մինչ Սըլեմանիայ չորս աւուր ճանապար է, և Սըլեմանիայ լրանայ ի մէկ կողմս Հայաստանեաց աշխարհի։ Եւ դարձեալ պատմեմ Մարաղայ քաղաքիս որպիսութիւնն։ Քաղաքս կայ ի մէջ փոսի, և ունի գետս՝ ընդանայ առաջևն, և է այս ձևերն, որպէս տեսանես[45]։ Եւ ունի բազում բաղեր, մանաւանդ խաղողի բաղս, և շատ գինի ելանէ աստ, որ տարածի ընդ ամենայն գեօղս իւր։ Եւ քաղաքիս բնակեալք մեր ազգս ամենեքեան են արվեստաւոր և բարեսիրտ և բարեպաշտ և տեսլեամբ գեղեցիք և քաղաքավարք, և յօդն յոյժ քաղցր։ Եւ մինչ Ուռումի երկու աւուր ճանա-

16բ պար է, և միում ժամանակաւ//սրբազան Դանիէլ կաթուղիկոսն աստ էին եղեալ ի բանդս, այսինքն թելադրութեամբ և կաշառօք Դաւիթ կաթուղիկոսի և հրամանաւ Շահ-Ալի չարին[46] այսինքն Պարսիացոց սրբացին։ Եւ Մարաղու Յօսէն խանն խնամակալ լինելով և ըստքանչելագործութիւնն և սրբակացութիւնն սրբազանիս տեսանելով, արձակեցին սրբազան և երիցս երանեալ Դանիէլ կաթուղիկոսին, որ գնաց ի սուրբ աթոռն իւր, այսինքն սուրբ էջմիածին։ Եւ ես Տէր Բաղդասար Գասպարեանս սրբազանին մօտն գոլով աշոքս տեսի, և ականջօքս լսեցի, առ այն ի աստ յայտ արարի։

Ելի այս Մարաղաէս վայր գալով դէպ Թուխուրղան գեօղաքաղաքն, որ երկու աւուր ճանապարհ է։ Այս Թուխուրղանս է ի ձորակի և բազմութեամբ բաղէրով։ Եւ այս է ձև սորին[47] և ունի փոքրիկ գետ որ անցանէ ընդ յառաջևն, ընթանալով առ դաշտքն։ Եւ բնակեալք քաղաքին Հայք և մահմատականք։ Եւ ազգս Հայոց ի սմայ աղքատասէր, և բառով Հայոց խօսին և ըզգեստով Պարսիացոց։

Այսպէս պատմեմ ըստ Դայւրէժ քաղաքի որպիսութիւնն։ Այս Դաւրէժ քաղաքիս անունըն այլազգ կերպ առ կերպ անուն անվանեն։ Ոմն Թարվէզ ասի, ոմն Թէբրիս ասի, որ ոչ գոյ համեմատութիւն մի

17ա ի տեղի, վասն քաղաքս է այս //Հայաստան և Դայւրէժ անունս այս է բառ Հայոց, որոյ ի ժամանակս թագաւորութեանն Հայոց վերստին Հայք պատերազմելով ընդ զօրացն Պարսիացոց, այնքան կոտորե-

44 Մանր գծագիր հատակագիծ։

45 Մանր գծագիր հատակագիծ։

46 Շահ-Ալի շահը միտումավոր անվանված է «Շահ-Ալի չար»։

47 Մանր գծագիր հատակագիծ։

ցին Պարսիացոցն, որ հազիւ միմիան շահն նոցայ փախստական
լինելով ապրեցոյց զանձն իւր, յայնժամ Հայք կոչեցին զանուն տե-
ղոյս Դավրէժ, այսինքն դայ գդաւ ըզվրէժըս Պարսիացոցէն: Այս
Թաւրէզ քաղաքս է մայրաքաղաք ի մէջ Հայաստան աշխարհի, և է լայ-
նատարած և ունի պարիսպս շրջապատեալ առ քաղաքաւն հանդերձ
գեղեցիք շինուածքով և բազում բազարով, շօկանով, պանտուկով
քարվասարօք, և մեծամեծ վաճառականօք և պատուական զումաշ
ելանէ տեղէս: Եւ քաղաքս է հարուստ, և գետ իջանէ ի սարէ և գայ
անցանէ ընդ առաջևն քաղաքին: Եւ տէրութիւն սորին Պարսիացոց
Ֆաթալիշային, և քաղաքապետն սորա է որդի շայխին, որ կոչի Հա-
պաս Միրզա, և ունի սայ արդար դատողութիւն. և խնամակալ ի վե-
րայ Հայոց և Քուրդ ազգաց: Եւ քաղաքս է ի մէջ դաշտի այս ձևովն
զոր տեսանես ի դէմս սորին[48]: Եւ բնակեալք քաղաքիս Հայք փոքր և
մահմետականք շատ, և են գործքով արհեստավորք ճարտարք, և
17բ ամենայն բնակեալք ազգք ի սմայ հպարտ//բայց ի միայն ազգէս
Հայոց և ըստ ետով նման Պարսիացոց, և քաղաքաւար, և յօդն քա-
ղաքիս բարի, և ջուրն լաւ մարսական: Յիշեալ Թոյխրղանից մինչ ի
Թաւրէզս մի աւուր ճանապար է, և Թաւրէզու մինչ Ղաֆլանբու[49]
կամ Միանայ մեծ գետն, երեք աւուր ճանապարհ է: Ասա լրանայ
սահմանն Հայաստանեաց աշխարհի երկրորդ կողմն: Եւ յիշեալ
Միանու մեծ գետն ընթանայ ի ներքոյ յիշեալ Ղաֆլանբուի, երթա-
լով երթայ անցանէ ի վերայ Թարիմ խալխալ գաւառովն մինչ ի
Գիլան, մերձ Իռաշտ կամ Ռաշտ և անկանի Կասպու ծովն[50]: Յիշեալ
Թարիմ խալխալս է ի Հայաստան աշխարհ, բայց ի յայնկոյս գետոյն
դէպ ի յարևելս է Պարսիացոց աշխարհն: Եւ այս Թէրիմ խալխալիս
բնակեալքն են Շահի Սէվան[51], որ ի ժամանակին Շահբասայ քրշած
բերածն են, և սոցայ գաւառիցն մինչ ի Թալիշ անթիւ ձիթենի ծառ
կայ, և երկիրն խիստ գեղեցիք կանանչախառն ծախկունք, և շատ
աղբիւրակունք և յօդն խիստ բարի է: Նաև Ղարադաղ կոչեցեալ գա-
ւառանին: Այս Ղարադաղս կայ ի Հայաստան աշխարհումն, մերձ ի
Թարվիզ քաղաքն կէս աւուր ճանապարհ, և ունի Ղարադաղս բազում
18ա գեօղարանքս և //քաղաքս Օրդուբադ[52] կոչեցեալ, և բազում քրիստո-
նեայք կան բնակեալք և ունին բազում վանքս, եկեղեցիքս, անա-
պատս, և ինքեանք են Աստուածապաշտ և ազգասէր, և վարք սոցին
նման Ղարաբաղցոց: Այս ամենայն ունի յիշեալ Թավրիզըս:

Լանքրան է եղր Կասպի ծովու, ի Թալիշայ երկրումն և ի ներ-
քոյ սարի որ է անտառային ծառոտ և ունի քաղաքիս նմանութիւն,
որպէս տեսանես ի դիմաց[53], և բնակեալք սորին շատն մահմետա-

48 Մանր գծագիր հատակագիծ:

49 Ի նկատի ունի Միանեի մոտ գտնվող Ղաֆլանբուհի լեռնանցքը:

50 Սֆիդռուդ կամ Կըզըլօվզան գետն է:

51 Այս շրջանում բնակվում էին կըզըլբաշ ցեղերի մնացորդներ, որոնց դեռ շարունակում էին կոչել շահհսևան—«շահի համակիրներ»:

52 Այստեղ սխալմունք կա. Ղարադաղի կենտրոնը Ահարն է, որտեղից մինչև Թավրիզ 3 օրվա ճանապարհ է. Թերևս ի նկատի է ունեցել Արդաբիլ քաղաքը, սակայն այն ավելի հեռու է Թավրիզից:

53 Մանր գծագիր հատակագիծ:

կանք և փոքրն քրիստոնեայք, բայց Աշտարխանայ քրիստոնեայ վաճառականքն տեղս միշտ անպակաս լինին, և առ ու ծախ շատ լինի: Եւ զայս Լանքրանայ ծովումն այսինքն Կասպի, դէմ Հանդիման քաղաքի կղզի մի կայ ի մէջ ծովումն անուն սորայ կոչին Սարու, և զօրք Ռուսաց տեղն կան ի պատրաստի, Հանդերձ Թագաւորական նաւէրով, զօրօք, և զօրապետօք և քաղաքի բնակեալք մերազնէից, սէրն, ողորմածութիւնն, աստուածպաշտութիւնն անչափ է: Եւ տէրութիւն սորա է Պարսիացոց:

Տեսէք սիրելիք, այս վերոյ գրեալ աշխարանին, կամ քաղաքա-
18բ նին, որ աշխատելով յիշատակեցայք, Ղալարիցն ըսկսաց//մինչի ասա, սայ մեր Հայաստան աշխարհացն մին մասն էր, որ պատմեցի որպէսութիւնն նոցա: Բայց մնացեալ աշխարհն մեր, զոր ունէայք, զուր կորուսաք, որ ունիցի ականջըս լսելոյ լվիցէ: Ահա՜ տեսէք քանի ժամանակ է որ կորուսաք, ի սպառ քակեցան կեանքն մեր, և ամբ աւաղելով, թէ զուր կորուսաք Հայաստան աշխարհն, և ամենայն ժամու հառաչեմք թէ վերստին զոր կորուսաք զայն գտանել: Եւ որ ասացի զուր կորուսաք մեր Հայաստան աշխարհն տրվաք ի ձեռս այլ ազգաց, այսու աղագաւ որ ըստ բարձրարտորտա քարօզութեան սրբազան առաքելոյն Պօղոսի, եթէ ըզլեզուս մարդկան և հրեշտակաց խօսիցիմ, եթէ ունիցիմ ըզմարգարէութիւն և գիտիցիմ ըզխորհուրդս ամենայն, և զամենայն գիտութիւն, և եթէ ունիցիմ զամենայն հաւատս, մինչև ըզլերինս փոփոխելոյ և եթէ ջամբիցիմ զամենայն ինչս աղքատաց, և մատնիցիմ զմարմին իմ այրումն, և ըզսէր ոչ ունիցիմ՝ ոչինչ եմ և ոչինչ օգտիմ: Եւ թէ եղէ ես իբրեւ զպղինձ, որ հնչէ, կամ իբրև ըզծընձաղայս որ զօղանչէ և թէ բայց մնան հաւատս, յոյս, սէր: Եւ մեծ քան զսոսայ սէր է: Ահայ այսու ամենակատար սիրով գերահռչակ և փառաւոր նախնիքն և առաջինքն
19ա մեր//հեղուին զպատուական զարիւնս իւրեանց յաղագս փրկութեան և ազատութեան ազգի և աշխարհի մերում, յայնմ ժամանակի յորում նոանդ ազգասիրութիւն կայր ի սրտի իւրեանց, որով և խրախօսեալք Աստուած տեսանելով ըզչոմհոանդ սէրն նոցայ՝ յամենայն իրողութիւնս պահպանէր և նախախնամէր ըզգիութեամբն իւրով, և զօրացուցանէր զնոսայ ընդէմ ամենայն թըշնամեաց, որովք յամենայն ուրեք հախտական գտեալ փառաւորէին Աստուծոյ և մարդկանէ, որոց առաքինական կենցաղ և արիական յանդէս յիշատակեալ բարեբանութեամբ, ի գարուց գարս անխափան արշաւէր, և ինքեանք ըզբարի գործոց իւրեանց բոլորովին հոգիացեալ զանբասիր փառս վայելին: Բայց աւա՜ղ, յորժամ ատելութեան ազգ հմուտ աշխարն մեր, ըսկսան մարդիք չարակնել, թշնամանալ, միմեանց յալածել և բռպանանել ըզմիմեանս, քանդել, աւարել և զերել ըզկալուածս և ըզժողովուրդս իրերաց և բազում անգիրս և եղեռնագործութիւնս գործել, ուստի ըստ բանին տեառն, թէ ամենայն թագաւորութիւն բաժանեալ անձն աւարի և տուն բաժանեալ անձն կործանի, ահա աւա-
19բ րեալ կործանեցաք//, կորուսաք զթագաւորութիւնս և զաշխարհն մեր ըստրուք եղեալ անօրինաց, անմիտ ազգաց, որք անխնայ ի սուր սուսերի մաշեալ, գերեալ, ցիր և ցան արարեալ ըզմեզ և զա-

խարս մեր, վերիվայր տապալեալ Թողին աւերակ և ամայի յոր ա-
ղագաւ այս ամենայն չարիքն եկն ի վերայ մերայնու ազգաւ, որ զի
մեք ի բաց կացաք սիրելոյ զաստուած և զընկերն մեր, վասն որոյ
աստուած ևս ի բաց մերժեաց զմեզ ի պահպանելոյ, և անմիտ ազ-
գաւ ըզկրծնեցոյց ըզմեզ և եթող ըզմեզ լքեալս, լուծեալս և մաշեալ
ի գերութիւն, մայրակորուստ զառան նման շըրջիմք ի վերայ աշ-
խարհիս։ Արդ զամենայն զոր արար աստուած, արդար դատաստա-
նաւ արար, վասն մեղաց մերոց։ Բայց յուս ունիմք ի տեառնէ աս-
տուծոյ փրկչէ մերմէ Յիսուսէ Քրիստոսէ, որ ոչ ի սպառ բարկանայ
մեզ տէր և ոչ յաւիտեան պահէ ոխս և ոչ Թողու զմեզ խսպառ վասն
անուան իւրոյ և ոչ ցրէ զութս իւր և ոչ ի բացեայ առնէ զողորմու-
թիւն իւր ի մէնջ որպէս խոստացաւ ճըշմարիտն աստուած։ Ուստի
ըստ բանի տեառն, որ ասէ. և ապա երևեսցի նշան որդոյ մարդոյ յեր-
20ա կինս և յայն//ժամ կոծեսցին ամենայն ազգք յերկրի և տեսցին զոր-
դի մարդոյ եկեալ ի վերայ ամպոց երկնից զօրութեամբ և փառօք
բազմօք և առաքեսցէ զհրեշտակս իւր փողով մեծաւ, և ժողովեսցեն
զընտրեալս նորայ ի չորից հողմոց, ի ծագաց յերկնից մինչև ի ծագս
նոցայ։ Ահա տեսանիմք զբարի նըշանն որ հայեցաւ աստուած ի տա-
ռապանութիւնս ազգիս Հայոց և առաքեաց զկայսրն Ռուսաց Ալէք-
սանդր Պաւլօվիչն ի աշխարհս Հայաստան վասն փրկելոյ ըզմեզ ի
ձեռաց անօրինի և չարի, որով տիրապետեաց ըզմեզ Հայաստա-
նեայց աշխարի, որ այսօր անչափ սիրէ Հայոց ազգին, որ իւր օրհնեալ
բերանովն խոստացաւ, Թէ իմ սիրելիք և ընդրեալք աստուծոյ ազգս
Պարթևաստան և ուղղափառ Լոյսաորչեան տեառն աստուծոյ հօր
սերական, ես ոչ Թողում զձեզ, և ոչ մոռանամ զձեր սուրբ էջմիածնի
և ամենայն Հայոց ազգի, և Հայոց ազգն փառս տալով աստուծոյ և
շնորհակալ լինեն կայսրէն։

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՊԱՐՍԻԱՅՈՑ ԱՇԽԱՐՀԻ, ԱՒ ԱՅՆ ՋՈՐ ՏԵՍԻ ԱՋՕՔՆ ԻՄ

20բ //Տէրութիւն և աշխարհն Պարսից, լայնութիւնն ըսկսաց
Կասպու ծովէն, Գիլանա աշխարէն մինչի Պարսկական ծովն քա-
ռասուն աւուր ճանապարհ է, և երկայնութիւն ըսկսեալ Խորասանայ
մինչի Երասխ գետն չիսուն աւուր ճանապարհ է, և այս Լանքրանից
վայր գալով մինչի Անձալի[54] անտառովն հինգ աւուր ճանապարհ է,
և ծովովն երեք աւուր։ Այս Անձալիս է ի սկր ծովին. երեք կողմն ծով
է և միոյս կողմն ցամաք, և Անձալու քաղաքն է այս ձեւովն[55] և ի
դէմ հանդիման Անձալուս ի մէջ ծովոյն բազում նաւէր գան և գնան
վասն վաճառականութեան, և մեծ աստուր լինի ապրիշմի կամ այլ
ապրանաց, և բնակեալք քաղաքին մերազնէիք Աշտարխանըցի վա-
ճառականք, բայց շատ աղնիւ բնութեամբ և յոյժ ողորմած, և զօ-
վաթով փարթամ և լի և յօդն քաղաքի բարի և լաւ։ Այս Անձալից
մինչի Ռաշտ մի աւուր ճանապարհ է գետովն։ Եւ այս Ռաշտս է ի

54 Էնզելի, այժմ Փեհլևի, կարևոր նավահանգիստ Կասպից ծովի ափին։
55 Մանր գծագիր հատակագծի

մէջ ծառոտ ծրմակի, և քաղաքն է հնոց Պարսիացոց քաղաք։ Եւ
21ա գետք և բաղում ջուրք իջանէ ի սարէն// և անցանէ և անկանի ի ծովս
Կասպի։ Բովանդակ Գիլան անտառայինք, ունի բաղում գեօղէրս։
Եւ գործք նոցին և վաստակն ապրիշում է և որբն պահելն է։ Եւ երկ-
րի յօդն յոյժ սաստիկ դառն է, և թուրքերէն ասէն մարկ միխայի
բըրօյ Գիլան[56]։ Եւ զայս Գիլանայ բնակեալքն, կամ գեղի, կամ քա-
ղաքին երեսաց գոյնն գեղին է։ Եւ Ռաշտ քաղաքն է գեղեցկայշէն և
բնակեալքն մահմատականք, այսինքն ղզլբաշ[57] և ճարտար արհես-
տօք, որ տեղիս զումաշեղէնն յանվանի է, տարածէ ամենայն աշ-
խարհ։ Եւ սովորութիւն ունեն, որ ամէն աւուր մին գեղում առ
ծախս կանեն։ Եւ տեղս կան վաճառականք[ը] քրիստոնէից մշտապէս։
Եւ Ռաշտ քաղաքս է այս ձեւովն[58]։ Այս Ռաշտիցն մինչի Ղազբին
հօթն աւուր ճանապարհ է։ Է այս ճանապարհս տաժանելի, դժվարա-
գնաց լեռնային, սարէր և մեծամեծ գետք և մեծամեծք ծառք ըստ
մեծի մասն ղէթունի որ կոչեն ձիբեննիք։

Եւ Ղազբին քաղաքս է Պարսիացոց աշխարումն, ի ներքոյ լիառն
միոյ որ Պարսերէն կոչեն Աղայ Բարայ, և քաղաքն է պարսպօք մեծ
21բ և ունի բաղում// գեօղարանքս, բաղս, ըստ մեծի մասին խաղողի,
բայց ջրատակաս, ջրհոր և ջրամբար շատ։ Եւ քաղաքիս ձևն ունի
քառանգունի[59]։ Եւ բնակեալք սորին բովանդակ մահմետականք, և
վարք սոցա Պարսիացոց նման, եթէ բառն և եթէ ըսգետն։ Եւ վա-
ճառականք քրիստոնէից երբեմն լինի, բայց այլ ազգից շատ աւ և
տուր լինի։ Եւ սայ է Բանդար Ռաշտայ[60]։ Եւ հօդն քաղաքիս շատ
բարի է։

Բամնալ ազգն Պարսիացոց աշխարհին շահն, որ թարէզումս է
Ջաթալի շահ Ղաջառն, սայ ունի Պարսիացոց աշխարհն, որ քաղա-
քայցն մինն Զանկան է։ Այս Զանկանս կայ լայնատարած դաշտին
Սուլթանիու, և ունի բաղում բաղիս, և գետ մի ընթանայ ի ներքոյ
նորայ և անկանի դաշտքն։ Եւ բնակեալքն մահմետականք, և գործք
սոցայ է վաճառականութիւն, և ընդ քրիստոնէից թշնամի։

Բարձրաբերց լեառն Համադանայ, այսինքն Ալվանդ դաղ կո-
չեցեալ, որ և մադանն նոյն սարում այ, որ թարքմանի Հա Մադան[61] և
քաղաքն ունի ի ներքոյ իւրում, և սարս շատ բարձր է և միշտ ձիւ-
նաթաւալ, և սառ սառ, քաղցրահամ աղբիւրակունք բղխեալ ի
ծարպս սորայ, և գոյն գոյն ծախիկունք հանդերձ կանանչայգիս խո-
տախատ, հոտ անուշ բուրելով զայն Ալվանդ սարէն։ Նաև պատուական
22ա արծաթի մադանքն// նոյն տեղս է որ կայ ծածկաբար մինչի այսօր։

---

56 مرگ میخواهی برو گیلان — պարսկերեն նշանակում է «մահ ես ցանկանում, գնա Գիլան»։

57 Սուննի մահմեդականները շիաներին (պարսիկներին ու ադրբեջանցիներին) 19-րդ դարում ևս շարունակում էին սեֆևիների օրոք ընդունված «կըզըլբաշ» անունով կոչել։

58 Մանր գծագիր հատակագիծ։

59 Մանր գծագիր հատակագիծ։

60 Այստեղ նույնպես սխալմունք կա. Բանդար՝ նշանակում է նավահանգիստ, իսկ Ռաշտի մոտակա նավահանգիստը էնզելին էր, Ղազվինը ծովափնյա քաղաք չէ։

61 Սա ժողովրդական ստուգաբանություն է. Համադանը Միդիայի մայրաքաղաք էկբատանն է.

Եւ Համադան քաղաքիս ձևն է այսպէս որ տեսանես դիմաց[62]: Եւ գնա իջանէ ի նոյն սարէն մերձ ի քաղաքին և ունի Համադան բազում գեղարէնք, և նոցին բնակեալքն երկրագործ և մըշակք, և միշտ առատ և լիութիւն, և բնակեալք քաղաքին սակաւ Հայք և մնացեալք մահմատականք: Եւ Համատանս ունի շատ բաղէրս մեծ մասն խաղողաբաղ: Բայց ձրմեռն մեծ, հօդն բարի, և ինքեանք շատ գեղեցիկ, բայց փոքր ինչ անսէր: Եւ տէրութիւնն Պարսիացոց:

Այս Համադանից ելից վեր գալով մինչի Ղում, այսինքն աւազոտ քաղաք: Այս Ղումս խին քաղաք է Պարսիացոց քաղաքումն[63], այժմս աւերակ է, փոքր մասն շէն է: Մերձ Ղումայ լեռն մի կայ, որ կոչին Գէդան Գնայլմազ այսինքն ով գնա յետ չգայ[64]: Եւ Ղում քաղաքին առաջեւն գնա մի ընթանայ յերկար գնայ մինչի Թուրքմանայ մօտ: Եւ Ղումս է այս ձևով[65]: Քաղաքս է խիստ ջրայարակաս և տաք և հօդն դառն: Եւ բնակեալք ողջ մահմատականք, խիստ կռոչ և խրտրօղք քրիստոնէից և տեսլեամբն տրգիղ և բառիւ պարսից խօսեն ամենայն վարքովն Պարսոցաց և երկիրն խիստ աւազոտ, որ է դում[66]:

22բ //Ղաչառ Ջաթալի շահին թախտն է հաստատեալ Թէրան քաղաքումն: Այս Թէրան քաղաքս է Պարսիացոց քաղաքումն[67] և ի ներքոյ Մազանդրանայ սարին: Եւ այս սարս է միշտ ձիւնաթաւալ նման Աւլանդ դաղին: Շատ գետեր, շատ զանազան աղբիւրք, որոգեալ իջանեն ի սարէս, բայց քաղաքն ոչ հասանեն: Քաղաքս է գեղեցկաշէն և երկու տակ պարսպօք պատեալ, և բերդն է քաղաքին այս ձևովն, որպէս տեսանես[68]: Եւ առքն[69] ի մէջ քաղաքին: Եւ քաղաքս բազում մարդոք մեծամեծ յիշխանօք, զօրօք և զօրագլխօք: Եւ Թէրանս ունի շատ բազար, մեծամեծ բարվաստէք, մեծամեծ վաճառականք կան ի ամենայն աշխարաց և բերեն ակունս պատվականս և այլ մեծագին դումաշս վաճառեն աստ: Եւ Ջաթալի շահս ունի բազում ուստերս և դստերս, և յինքն հարուստ: Եւ քաղաքիս բնակեալքն մահմատականք, բառով և բազմատով և ամենայն վարօք նման Պարսիացոց:

23ա Կան ևս փոքր քրիստոնեայք Հայք և Վրացիք և առաջի շային սիրելի գործակալք՝ այսինքն Բօխչի-բաշիք[70] և սիրով ազգասէր: Այս Թէրանս մերձ քաղաքին բաղ և բաղաթ շատ չունի, բայց փոքր ինչ հետի բազատան շատ: Եւ հօդն Թէրանայ դառն է, և հաւան տաք: Եւ Թէրանայ մարդն արի, ինքեանքն պճնասէրք: Եւ է հեռագոյն յիշեալ Ղումից յինգ աւուր ճանապարհ:

---

62 Մանր գծագիր հատակագիծ.

63 Պետք է լինի «աշխարհումն».

64 Այստեղ աստղանիշ է դրված և այլ ձեռագրով լուսանցքում ավելացրած է: «Պարսկերեն կոչի Ջանդամի Դարայ, մտողն ի սա այլևս ոչ յետս դառնայ, մոլորեալ կորեանքս»:

65 Մանր գծագիր հատակագիծ: Ղումից հոսում է Աբ-ե Անարբար գետը, որը միանալով Կարա-սուին, թափվում է Դարյաչե-յե նամակ լիճը:

66 قم — պարսկ. ավազ:

67 Կարդա «աշխարհումն»:

68 Մանր գծագիր հատակագիծ:

69 كرا — միջնաբերդ:

70 Ինդանոթաձիգ դինվորականներ:

Դարձեալ լայնատարած դաշտովն ի Քաշան, ևօթն աւուր ճանապար է։ Բայց այս դաշտն անմարդաբնակ, ահ և երկուղ շատ ի կողմանէ Թուրքմանին։ Քաշան քաղաքն է ի ներքոյ Ղօռու սարին և է այս ձևովն որ տեսանես ի դիմաց[71]։ Այս Քաշանս գետ և աղբիւր ոչ ունի, բայց ջրհօր և քարիզ՝ շատ։ Ունի Քաշանս դեղեցիք բաղարս, ճարտար արվեստաւորս, դեղեցիք դումաշիղէն ելանէ տեղէս։ Եւ բնակիալք քաղաքին մահմատականք և սակաւ երբայեցիք։ Քաղաքին հօդն շատ դառն է, բայց ինքեանքն յոյժ դեղեցիք։ Բաւիւ եւ բա-
23բ դեստօք և ամենայն վարօք նման Պարսիացոց։ //Աստից ելից դաշտով մինչ ի Թազաւորանիստ մայրաքաղաքն Ըսպահան չորս աւուր ճանապար է։ Եւ Ըսպահան քաղաքն է ի աշխարհս Պարսիացոց և լայնութիւն և ձիրան կը լինի շրջակայիւով իրև սահաթ կամ ժամս ասանուերկու, և ձև քաղաքիս տեսանես որպէս դիմաց[72], նախ գիւղմանաւանն Հայոց, երկրորդ Ջուղայ, երրորդ գետն ի մէջ Ջուղայ և Ըսպահանու, չորրորդ Ըսպահան քաղաքն։ Բայց թէպէտ շատ դովասանութեան արժանի է, բայց ևս մանրամասնաբար չիշատակելն աշխատանք համարեցի ընթերցողաց։ Ե՛ւ քաղաքիս և՛ Ջուղայու ունի բազում բաղեր և մեծամեծ հնոց ծառ։ Նա ունի Թագաւորական պալատն և Թախտն Շահաղասի և դեղեցիկ Զարբաղն և մարմարաշէն գահոյն և չայնատարած բաղարանին, կամ քարվասրէքն, կամ հարտար արհեստաւորքն, պատվական դումաշքն, մե-
24ա ծամեծ վաճառականք// և Ըսպահանայ բնակիալքն են մահմատականք, սակաւ երբայեցիք և կրակապա[շ]տ գաւրս[73], բովանդակն բառով եւ սգեստով և ամենայն վարիւք Պարսիացոց, գեղեցկութեամբ միջակօրէն, նոյնպէս և հօդն միջակօրէն և Թշնամի քրիստոնէից, բնութեամբ նենգաւորք։

Դարձեալ պատմեմք նոր Ջուղայու որպիսութիւնն։ Եւ այս Ջուղայ բովանդակ գետին ի ժամանակս առաջի Շահ Աբասին, յորժամ չվեցան ազգս Հայոց հզօր զօրութեամբ ի Շահ Աբաս և ի Հայաստան աշխարհ եկան Ըսպահան և ապայ գնեցին զդաշտս ի Շահ Աբասէն և ծախս առին ի նմանէ Հին Ջուղայեցիք, և անուն տեղոյս կոչեցին Նոր Ջուղայ, և բնակեցան ի սմա, որով շինեցին եկեղեցիք, վանք, որ կոչեցին (սուրբ Յովսէփ Յարեմաթացու այն կայ չիշեալ վանքումս) Ամենափրկչի վանք։ Եւ ունի սուրբ վանքս առաջնորդ ընդ վարդապետաց, կայ և մնայ հաստատուն։ Ունէ և Ջուղայ բազում բաղերս և բնակիալք տեղոյս յառաջնումն բովանդակն ի ազգս Հայոց էին, և շատ բազմութիւն, բայց գնալով նվազեցան, որ ի քան
24բ մասին մին մասն հազիւ մնացին, առ այս// պատճառի այժմուս մահմատականն ևս կան բնակաց։ Ինչ և իցէ, եթէ հառաջէն Ջուղայեցիք մերազնէիքն, և եթէ նոր ներկայէնս հաւատով արի, սիրութեամբ սիրով, զգածք, ողորմած, բարեսիրտ և մշտապէս օգնական և օգնիչ անանկաց, բայց վասն Պարսիացոց չարութենիցն բնակիալքն

71 Մանր գծագիր հատակագիծ։

72 Մանր գծագիր հատակագիծ, նկ. 1 (6)։

73 گبر — զրադաշտական։

Ջուղայուս կարողութեան զօլմաթից պակաս, զոր տէր աստուած մխիթարելով պաշտպանիցէ նոցա։

Սպահանայ ելից վայր գալով մինչի Շիրազ տասներկու աւուր ճանապարհ է, և այս ճանապարէս վերայ գալայ[74] մի է, անուն նորա Եզդըխաստ, ահա աստ վերչանայ Արազբասան և մտանէ Զանդի երկիրն[75] և Շիրազ քաղաքն, և քաղաքս էլ կայ ի մէջ դաշտին, և գետ մի ընթանայ առաջովն քաղաքին և երթայ անկանէ դաշտն, բայց երբեմն ցամաքի և անձրևային ժամանակումն բազմանայ և քաղաքացիք ջրհորի ջուր խըմեն։ Եւ ունի Շիրազ բազում բաղէրս և բազում պաւառս և գեղեցիք հօղս և ի չորից կողմից սորին գեղարէնք
25ա էն, բազում//թամպաքու ելանէ, և ունի լեառն մի որ կոչին Խօլլար, զարմանալի ինքնաբուս խաղող ելանէ և լինի անոշ գինի։ Նաև լեառն մի կայ, որ բժժշկական մոմիայ ելանէ, դարձեալ լեառն մի կայ, սարի զօլ[76] լինի տեղն, և զօլ մի կայ ի մէջ նոցայ մեծ և լըղար փանդարն[77] նորայ անդամն է։ Եւ Շիրազ ունի գեղեցիք շինուածք, բազարս, քարվայսարայս, վաճառականս, մանաւանդ Քերիմ խանի շինած վանտակեալ նաշխով արքունական պալատն և գեղեցիք բաղն նորին, բազում մարմարիայ քարինքն Ղաջառն[78] ասրաւ, և քաղաքիս բնակիալքն մահմատականք են, սակաւ քրիստոնեայք եւ Երբանցոց ազգէն, այսինքն ջրհուտ և փորր Գաբրս կան բնակած, Հնդու ընդ նոցայ, որ գոն սոքայ վաճառականք։ Եւ Շիրազցիք, բայ ի մերազնէիցն, ամենայնքն բարու և զգեստու երկայն և ամենայն վարուք նըման Պարսիացոց և ինքեանք շատ գեղեցիք։ Եւ քաղաքն է Շիրազու այս կերպն որպէս տեսանես ի դիմաց[79]։ Եւ Շիրազայ մինչ Բանդար Բուշեհ ինն աւուր ճանապար է, և ճանապարի վերայ
25բ կայ// գեղայքաղաք մի որոյ անունն կոչին Քազուան[80], վաղնջոց քաղաք է եղած, այժմ աւերակ է, փորր ինչ շէն է բնակիալքն մահմատականք են և Երբանցիք։ Եւ յիշեալ ճանապարհս խիստ լեռնաինք, զժվարագնաց և քարակապ և երկուղալից աւազակարնակ ճանապար է։ Եւ յիշեալ Բանդարբուշեհ նոր քաղաք է ի եղր ծովուն Պարսիացոց, ահա այս ձևովն[81], որպէս տեսանես, և ունի ջրհորս, բաղ և այգիք ոչ գոյ, բայց ծառք արմաւենի փորր ի շատէ, այսինքն խուրմայի[82]։ Բանդար Բուշեհս է տեղի վաճառականաց և նաւագնացք որ թէ ի Հնդկաց ծովէն կամ այլ նաւք գոն տեղս և բերեն ապրանք բազում, վաճառեն և տանեն ընդհանուր քաղաքս Պարս-

---

74 ڪوَلْ — բերդ։

75 Ցարս նահանգն է, որ դաշտներից առաջ տիրում էին Զենդ Քյարիմխանն ու նրա հետզորդները։

76 Քարայծ։

77 زَنْبِلِي կամ زَنْبِل — դեղաթափ, հակաթոյն։

78 Նոյնը Աղա-Մուհամմադ խանի մասին է։

79 Մանր գծագիր հատակագիծ։

80 Քազրուն, Շիրազից 90 կմ դեպի արևմուտք։

81 Մանր գծագիր հատակագիծ։

82 Լուսանցքում նկարված է արմավենի։

էացոց։ Բայց Քուրդ[83] ազգէն վաճառականք բազում և մեր ազգէն սակաւ պարոնիք։ Եւ հավէն բարի, բայց շատ շոր և տաք։ Եւ քաղաքն հանդերձ դաշտովն մասամբ աւազոտ և Ինկլիացոց պալիօզ կայ տեղս նստած վասն Կումպանու[84] գործքն կատարելէ։ Եւ փորր երրանցիք և կռապաշտք և այլ ազգից շատօնք քոռ այսինքն կուր և պատկերօք սրգող և կլունջ[85]։ Եւ կերակուրք սոցայ ձուկն, ամրաւ և այլ։ Եւ ի ծովեղերաց ճանապարէն գնալով վերչանայ Պարսիացոց տէրութիւնէն մինչ Բլուջստան մերձ դէմ անդիան Մաշկատայ որ
26ա Բուշնայ մինչ Բլուջստան ծովափն հանդիման Մաշկատայ//ճանապար է իրրև աւուրս քսան և մէկ։ Այսքան առ այս։

Այս Պարսիացոց ծովի մին կողմն ասէն ընդ արաբերէն բառ [Շաթլ] Արաբ, որ հետի գոլով ի Պասրայ քաղաքէս, իրրև աւուրս երեք, և գնայ մինչ Ըռասլ Հադ, որ հետի գոլով ի Մաշկատ ինն աւուր։ Եւ այս Պասրայ քաղաքս ունի բերդաշէն պարիսպս որ պարունակէ շրջագնացողութեամբ իրրև ժամս երկոտասան։ Եւ քաղաքս է ի մէջ բերդիս և ի վաղնջոց հաստատեալ է և շինեցեալ ի Փուրփուրէշ ազգէ և ի բնէ է Արաբացոյ և այժմ ի ներքոյ տէրութեանն Օսմանցոց և կայ հաստատեալ ի վերայ գետին մեծին Եփրատայ, որ և Տիգրան[86] գետն ընդ սորայ միաւորեալ ընդ մերձ Պասրայու, գնայ անկանի ի ծովն Պարսիացոց։ Եւ բնակեալք քաղաքիս մահմետական Արաբացիք, երրանցիք և փորր մերազնէից Հայոց։ Եւ ունի տեղի բնակելոյ Ինկլէացոց, որ նստի անդ բանակատար որ կոչեն պալիօզ ի կողմանէ Կումպանու, և քաղաքս ընդ հովանեաւն իւր։ Եւ ունի անթիւ ծառ արմաւենեաց[87] և ի տեղի վաճառականաց, և նաւահանգիստ որ է ընդհանուր ծովի կամ չորեքին քաղ[աք]աց, վաճառականաց առևտրի տեղի, և կերայ աւր կերայ ապրանք քաղաքս մտնէն ի աստէն տանեն ի քաղաքն Պարսիացոց, Հայոց և Հունաց կամ Եւրոպացոց։ Եւ Պասրայ զնեն արմավենի խուրմայ և տանեն ի ծովէ
26բ ընդ այլ աշխարհս։ //Եւ ունի ահագին դաշտ տարածեալ մինչի Հալապ այսինքն ի Բերբիա[88]։ Եւ բովանդակ չօլումն գոյանայ աղ չինքնագոյ։ Եւ բնակեալք սորին Արաբացիք, երրանցիք յօժարեն և սիրեն ուտել անչափօրէն ձուկն և ամպրաւ որ է խուրմայ։ Եւ է հիշխանութեամբ Օսմանցոյ, և Պասրայ մերձակայ ծովէս մինչ Մաշկատ եղանէ գեղեցիք և պատուական մարգարիտ, ադնիւ և մեծադին։ Եւ Պասրայ քաղաքիս ձևն և կերպն մինչ ծովն Պարսիացոց և Արաբացոց Բ (2) կողմիցն լսելով գրեցի ի աւարտն Ռասլհադայ, որպէս վերն հիշատակեցի տես[89]։ Եւ հօդն Պասրու շատ դառն է։

---

83 Քուրդ ասելով Տեր-Բաղդասարը այստեղ ի նկատի ունի Ջարթի նահանգում բնակվող բախթիարիներին։

84 Նկատի ունի Արևելյան հնդկական ընկերությունը։

85 Քերևս կուլանջ (قولنج). որովայնային հիվանդություն, խիթ, colic։

86 Պետք է լինի Տիգրիս։

87 Աւտղանիշ է գրված և լուսանցքում այլ ձեռագրով մատիտով ավելացրած է. «Ունի նաեւ բնաիր, թուզ, բազում սերկևիլ, բայց ոչ լաւ գինիս»։

88 Միջնադարում Հալեպը կոչվում էր նաև Բերբիա։

89 Մանր գծագիր հատակագիծ։

Բամեալ ազգն Արաբացոց Թողումբ ի Պասրայ: Այժմ դառնամ
վերսին առ աշխարն Պարսիացոց որ Թողեալ էի այսինքն Եզդ: Այս
Եզաս է ի նախկին քաղաք առաջին Պարսիացոց այսինքն կրակա-
պաշտ: Եւ Եզդ քաղաքս է այժմ ի սէրմեհանն հիշեալ Ջաթալի շա-
հին: Քաղաքս է ի մէջ դաշտին, և միոյս կողմն է ամրակ և ջրապա-
կաս և աւազոտ, բայց ջրհօր և քարիզ՝ շատ: Եւ հօդն Եզդու դառն
է, և բնակեալք քաղաքին մահմետականք և սակաւ կրակապաշտ,
որ կոչին Գայբրը, և սակաւ Երրայեցիք: Ի ամէն ազգք ի ամայ
27ա համ//այնն Պարսիացոց խօսին, ըզգեստով և ամենայն վարօք Պար-
սիացուց: Եւ այս Եզամից պատուական գլխաւոր ռանկ-ռանկ դուստ-
շնէքն [90] ելանէ: Եւ Հարուստ արհատօրք և դեղեցիք բազմաս և առ և
տուրս լինի տեղս: Եւ Եզդ քաղաքն է այս ձևովն[91], և գիտ ոչ գոյ ի
ամայ, և բաղօրեայք սակաւ:

Գնաճռակ աշխարհն Խորասանայ, որ գոյ ի ամայ մեծամեծ
քաղաքս որոց մինն է ի Հէրաթ: Յիշեալ Եզդոց մինչի Հէրաթս քա-
ռասուն աւուր Հանապարհ է: Թէպէտ Խորասան մեծ աշխարհ է և ունի
բազում քաղաքս՝ Մաշատ, Թուն, Թաբաս, և այլն, բայց մեք Հէրա-
թայ որպէսութիւնն պատմեցի: Հէրաթս է ի մէջ դաշտի, բազում
բաղերով, և քաղաքիս ձևն է այսպէս[92]: Բնակեալք քաղաքին բո-
վանդակն մահմետականք և սակաւ Երրայեցիք: Եւ ունի Հէրաթս
բազարս, քարվասրաս, վաճառականս: Եւ հօդն քաղաքին միջակօրէն:
Օգբէկ վաճառականքն կան տեղս, և մարդավաճառութուն շատ լինի
տեղս:

Այս Հէրաթից մինչի Ղանդահար տասնհինգ աւուր Հանապար
է կարավանի: Ղանդահարս է ի աշխարհն Խորասանայ: Առաջին
27բ Ղանդահարն ամրակ է: //Այս քաղաքն Ահմատշահ Դուրանին[93]
շինէց, և կոչեց անուն սորայ Նոր Ղանդահար: Եւ քաղաքս է այս
ձևն[94]: Եւ մերձ Ղանդահարայ գիտ մի բնթանայ սաստիկ սրընթաց,
անուն սորայ Արղանդի և փոքր հնոի ի քաղաքէս և սակաւ ինչ բա-
ղերով: Եւ բնակեալք քաղաքին բովանդակն Աղվանք և տեսլեամբ
յոյժ դեղեցիք և բարեւ աղվանի խօսին, և ըզգեստիւ նման Օսմանե-
ցոց և ի վերայ ըզգեստացն իւրեանց, կամ ի մէջ մէջերի պատերին և
ի վերայ սեանն կամ ի վերայ դռներուն և ի վերայ ամենայն իրացն
խաչաձևս + նկարեալ նշխին այս Աղվանքն, ասելով թէ մեր
նախնեաց աւանդութիւնն է մինչև այսօր և մեք գործեմք[95] բայց

---

90 Գուշղդուշն կտորեղեն:

91 Մանր գծագիր հատակագիծ:

92 Մանր գծագիր հատակագիծ:

93 Համանաբար ի նկատի ունի Գուրգանիների հարատութեան Միջին Ասիայի տիրակալներից Աբու-Սաիդի որդի՝ Ահմադ-Միրզային:

94 Մանր գծագիր հատակագիծ:

95 Այստեղ ատաղձիդ է դրված և լուսանցքում տարբեր ձեռագրով մանիշակագույն թա-նաքով ավելացված է. «Նույն խաչանշան արդէն ևս տեսանի ի քիկանց երկայնատար բաճկոնի նոցին՝ որք վասն աւուր և աւի մնան ի կալկաթա: Հնագէտք ոտին խոստովանին զլինելութենէ նախնեաց կրօնիւ և հաւատով Քրիստոնեայ ազգաս Հայ, և այս ատյգ իմն է, ըստ վկայելոյ մերումս հնոց պատմութենանց, որոց երբեմն տեսուչ Գրիգորիս Աղուանից կաթողիկոս, որ ի հետ

կրօնօք մահմատականք, պարսմանք է որ խաչաձև նշան սիրեն, որ մինչ ի վերայ իմորին խաչակերպ քաշեն։ Ոմանք ասեն հառաչ քրիստոնեայք են եղած, բայց այժմ մահմատականք և ներհակ և հակառակ ի քրիստոնէից։ Եւ հօդն Ղանդահարի շատ լաւ է և իւրեանց Թախտն Թագաւորական նախ տեղս այ եղած և այժմ ի Քաբօլ։

Սահմիկ ձմեռնամիջ քաղաքն Քաբօլ, որ է առաջի դուռն Հնդստանայ։ Հիշեալ Ղանդահարից մինչ ի Քաբօլ տասներկու աւուր ճանապարհ է, բայց ի մէջ ճանապարհիս բնակիալքն դող, աւազակ, մարդածախ և մարդայսրպան, և անուն տոհմ կոչին Աղվան։ Եւ
28ա գիօղաքաղաք//մի կայ ի վերայ ճանապարհիս, անուն տոհմ կոչին Ղազնի[96]։ Այս Ղազնիս ունի բազում բաղէրս, գիօղէրս, և միշտ լիութիւն և առատութիւն. բայց բնակիալքն գող աւազակ։ Նոյն ճանապարհիս վերայ ձիւնաթաւալ լեառն մի է, անուն նորին կոչին Քալաթ։ Այս Քալաթ լեառս ձմեռնային ժամանակին ձուն կապէ բղճանապարհս, որ ոչ լինի երթևեկութիւն, նեղ և անցուկ է, և տեղս արձան քար մի անկեալ կայ, և գրեալ ի սմայ այսպէս՝ Թէ ահաւ հորառանայ աշխարհն վերջացաւ և տոհմ մտանէ ի Հնդկաստանայ հողն։ Եւ այս Քաբօլս է Թագաւորանիստ մայրաքաղաք ի մէջ երկու սարի, և քաղաքի յառաջն է լայնատարած դաշտ։ Եւ այս երկու լեառքն կան ի վերայ հովանի քաղաքիս։ Եւ սպիտակ պարիսպ է քաշած վաղնջոց Թագաւորաց ի ժարտիս նոյն լերանց, որ այս է պարիսպն քաղաքին, և շրջապատի իբրև ժամս երկուտասան, և Նադրշահի Թախտն կառուցեալ ի վերայ զագաթս սարին։ Եւ սարի քարն ոսկանըման և արծաթանման փայլին, զինչ լինելն ոչ ճանաչին բնակիալքն յայսմիկ։ Եւ երկրի խոզն շօրաւիփին և գետինն աղի նման սպիտակ լինի,
28բ և տեղի հողն մինչի աղբ չըձքին արտ ոչ բուսանի//։ Եւ Քաբօլայ դէմ հանդիման բարձրաբերձ սար մի է, միշտ ձունոտ, որ մարդ ամենևին կարող չի ելանել այս սարն։ Եւ անուն նորին ասեն Հընդուբօշ։ Այսպէս կը պատմեն, Թէ քառասուն Հնդու մարդ ելան այս սարս վեց ամիս ճանապար գնացին սարովն, կոտորվեցան, և տոհմ մինն կենդանի մնալով դուս եկաւ Շահջահանպատ, առ այս աղագաւ, Հնդուբօշ կոչին ի պարսերէն[97]։ Եւ սարումն գանազան անձինք կան որ նոցայ Քաֆրի ասեն, բայց տոքայ յորժամ այլ ազգ տեսանեն սպանանեն, և արի և նետաձիք ուրեանց չատուածն այն նետ և յաղեղն պաշտեն, դիր և օրէնք չունին, մինչև մարդ չըսպանանեն, ոչ ամուսնանան, և կանայքս իւրեանց փոխին ի յիտ միմեանց, և ինքեանք գեղեցիք տեսլեամբ, սպիտակ, և Քաբօլացիք գողանան ըզմանկունըս տոհմ ծախեն կամ ծառայս առնեն։ Եւ այս յիշեալ Քաբօլս, անչափ բաղէրս, մեծ մասն խաղողի և թզի։ Քաբօլուս մրքիղէնն անւանի է, վաճառականքն տանեն Հնդստան ծախեն։ Եւ քաղաքն Քաբօլայ է այս ձևն[98] նախ Բալասար, երկրորդ Քաբօլ, երրորդ

ձիոյ չարաշար մահուամբ նահատակեալ, նաև նիզ հառաչալի առանդութիւն է բազում ի տոհմէ Հնդուստանայ ի մէնջ վասն պնդապահութեան ընդդէմ արձակութեան բմպելոյ թանի»։

96 Ղազնին կամ Ղազնա, Ղազնավի Թագավորների մայրաքաղաքը 10—11-րդ դդ.։

97 هند و کش — նշանակում է «Հնդիկ սպանող»։

98 Մանր գծագիր Հատակագիծ, նկ. 1 (7)։

Ջվանշիրի զալան, չորրորդ Մուրադխի զալա, հինգերորդ ի վեր գոյ Օվշարի զալային և գնան է ի մէջ Քաբօլայ։ Նաև Քաբօլ ևս ունի միոյ
29ա կողմն գնաուն//երկու հաւուկ տեղս, որ նա ևս Քաբօլ է։ Եւ գնաս երթայ մինչ Փիշաւոր։ Եւ ունի Քաբօլս բազում բաղարս, բարվաստայք և բազմութեամբ ժօղովրդօք և Քիշմիրու կամ Բուխարու վաճառականքն տեղս գան և մեծ առք ծախս լինի։ Եւ Քաբօլայ բնակեալքն մահմատականք, սակաւ երբահեցիք։ Քաբօլու հօդն և ջուրն միջակօրէն։ Եւ Բալասարումն կայ տասն տուն Հայոց, և գինածախութեամբ ապրին, չքաւորք և շատ հաւատով, թէպէտ յառաջ շատ ան եղեալ, բայց վասն անտէրութեան նվազացեալ այս քանի տունս է մնացէլ։ Քաբօլումս կան ի հնդու ազգէն մերծ ի չիտուն հազար տուն։ Եւ Քաբօլայ մինչ Փիշաւօր ճանապար է իրրեւ աւուրս տասնեկու։

Պատմութիւն Փիշաւօր քաղաքին։ Նախ Քաբօլից վայր գալով մերծ ի Գ (3) աւուր դեղ մի է անունն նորայ Գանդրմակ։ Յորժամ հասայ զայս Գանդրմակս, Աբրամ խանի որդի Միր Աւզալ խանն, զամենայն զոր ինչ ունէի, թէ փող, կամ ոսկէ և արծաթէ զարդ բովանդակն աւել քան հազար ռուբին, զամենն կողոպտէց և ինձ արար մերկ ի մօրէ, որ քանիցս անգամ կամեցաւ և ինձ սպանել, բայց միջնորդութեամբ սրբալոյս մեռոնին փրկվեցայ։ Եւ տեղէս վայր գալով ի վերայ խէհրար սարիցն առ Փիշաւօրս։ Եւ Փիշաւօրս ի աշխարումն
29բ Հնդկաց// և ի մէջ լայնատարած դաշտի, և է այս ձևովն[96] և ունի սակաւ ծառաբազս և շատ շաքարեղէգս ունի, այսինքն շաքարդամիշ։ Եւ բնակեալք քաղաքին Հնդու և փոքր մահմատականք, գաղջ և էվադէմբ տեսլեամբք։ Հօդն խիստ դառն և տաք, միշտ հիվանդութիւն և մահ։ Եւ սոքայ բնութեամբ կրօնիւք նման Հնդկաց, առատախօսք և խաբեբայք։

Այս Փիշաւորից մինչ Լահօր քան աւուր ճանապար է, և ի մէջ ճանապարհիս բազում կոպաշտի գաւառս, գեղարէնքս կամ գեղաքաղաքս, և մեծամեծ գետս կան, որ նաւակով անցանին մարդիք և անասունք, որոց գետի առաջինն Աթաք ասին։ Ասա վերչանայ Աղվանի տէրութիւնն և մտանէ Սբրի տէրութիւնն։ Այս Աթաք մեծ գետս իջանէ յիշխալ Հնդուբօղ լեառնէն։ Եւ նա ևս այս Սբի քաղաքանին կոչին Փանջաբ այսինքն խինդ ջուր կամ գետ, և այս մեծ գետն գնալով ի Քռաչին գետն և անդ անկանի ի ծովս Հնդկաց կամ Ովկիանոս։ Եւ այս Լահօռս է Հնդկաց աշխարումն, Փանջաբ կոչեցեալ Սբի տէրութիւնումն, է զատ մեծ քաղաք, որ Պարսիրէն կասեն Լսպահան նէսպը ջահան, էգէր Լահօր նաբաշէդ[100]։ Բայց այժմս քան
30ա մեծի մասին աւերակ այ, և գետ մի ի հարաւոյն//ընթանայ։ Եւ ունի ի ամայ բազում ամպի ծառս որ սորայ պտուղն բաղց[ր] է և բարէհամ

---

99 Մանր գծագիր հատակագիծ։

100 اصفهان نصف جهان اگر لاهور نباشد — Սպահանը աշխարհի կեսն է՝ եթե Լահորը չինի։

որ կոչին այս պողիս ամպ[101]: Եւ Լահօռայ բնակեալքն Հնդու են և մահմետականք: Եւ Հօդն Լահօռայ չէ բարի: Եւ տեսլեամբ գարշ և սեայ-
յերես, մերկ և տկլոր: Եւ ձեւովս է[102]:

Բամիք ազգն կռապաշտից, որ բնակեալք են նոյն Փանջաւի երկրումն, այսինքն Ամբարաար. և է այս ձեւս, նախ բերդն ապայ քաղաքն[103]: Տեղս գետ և բաղատան ոչ գոյ: Եւ չիշնալ բերդս նորա-
կերտ, գեղեցիք և սպիտակ մարմարիամբ քարամբ շինեալ, զարմա-
նալի բերդս է ի մօտս քաղաքին: Ամբարաար է բազմութեամբ մար-
դօք և գեղեցիք բազարօք և ունի երկու բարցր բակիք[104] այսինքն բօթիանէք[105], որ ի մի աւուր հեռաստանէ երևան և քաղաքն է հարուստ և բնակեալքն միանգամայն կռապաշտ, այսինքն Սիբ և ուրեանց թա-
քաւորի անունն Ըռընջիթ Սինկ: Եւ Հօդն քաղաքիս լաւ է քան զԼա-
հօռ, և ամենայն աշխարի վաճառականք կան տեղս վասն բէշմիրու և վասն առուծախուի: Եւ Ամպարաարու քաղաքին ոսկի արծաթ և ջուարնէչն շատ լինի: Եւ այս ամպարաարիցն մինչ ի Լուդիանայ, չորս աւուր ճանապարհ է:

30բ ||Է այս հիշնալ Լուդիանու ճանապարին գետ մի մեծ, որ կոչին Սաարինչ և յետի է Լուդիանուց իբրև ժամս Բ (2): Եւ աստ վերչանայ հիշնալ կռապաշտ Ըրնջիթ Սբի տէրութիւնն և մտանէ Ինկլէացոց տէրութիւն: Եւ այս Լուդիանայս է փոքրիկ քաղաք, և հանդիման ունի չաւնի որ է բանակն Ինկլիզի զօրացն: Եւ երկիրս է խաղաղութիւն: Եւ Լուդիանէս այ ի ձև դիմաց[106]: Եւ չիշնալ Լուդիանէս բացի ամբի ծառս՝ այլ ոչ գոյ: Եւ ունի ջրերհորս, և Ինկլիզի շինած ամուր բերդս: Եւ այս Լուդիանուց մինչի Կոնալ հօթն աւուր ճանապար է:

Սայ, այս Կոնալս կայ ի Հնդկաց աշխարհումն ի ներքոյ յիշ-
խանութեան Ինկլիզի, ի մէջ լայնատարած դաշտի, և ունի փոքր քա-
ղաքս և դէմ հանդիման բանակն զօրացն Ինկլիզի: Եւ ունի փոքր բերդս և է այս ձևն[107]: Եւ բնակեալք սորին Քուրդ[108] և կռապաշտ: Եւ չաւնումն կայ ի վաճառականաց մինն պարոն Փանօթի ի ազգէն Հունաց և մինն պարոն Միքայէլ Բարսեղ Պասրայեցի ի ազգէն Հա-
յոց: Եւ ի շրջագայելն իմ ի Հնդկաց աշխարումն, անդ պատահեցայ
31ա վերոյ հիշեալ Պասրայեցի պարոն|| Միքայէլ Բարսեղի ի Կոնալ քա-
ղաքումն ի տանն նորայ, և շրջագայելով ի այգիս և բաղս նորին տե-

---

101 *Լուսանցքում թանաքով նկարած է ամպի ծառ և ապա այլ ձեռագրով հետևյալ ծանո-
թությունն է տրված. «Ի համօրէն պտուղս Հնդկաստանի ամբն ասի Բագուհի և չիրաւիս գոնան ի տեսակս բազում, պտուղ քաղցրաւիշք, ախորժ և ցանկալի, նաև առատ յոյժ և ընտրելագոյն լինի ի Մալդէ ասացեալ գաւառի պտուղ կորիզաւոր, կորիզն անպիտան, լինի երբեմն մեծու-
թեամբ փոքրագոյր սեխի, մինչ 200 մանաւ կշիռ տայ և դիւրագնից: Ծառն ամբի պտղաբերէ իբրև 2000 հատ, վաճառի հարիւրօք»:*

102 *Լուսանցքում բառանկյունի գծագիր հատակագիծ:*

103 *Մանր գծագիր հատակագիծ:*

104 *Համանարար պետք է լինի «բագինք»:*

105 بت خانه — *կռատուն:*

106 *Մանր գծագիր հատակագիծ:*

107 *Մանր գծագիր հատակագիծ, նկ. 1 (8):*

108 *Քուրդը այստեղ պետք է հասկանալ աոանձին մահմեդական:*

սայ ծառ որ ունէր զտեղև իբրեւ կանդուն մի և շատ լայն[109] որ կոչէին ծառ բիլի, որ ի միջի ծառէս ծաղիք մին մեծ, որ ունէ ի միջի նորայ բառասուն երկու պտուղ[110] որ ասէին բիլայ: Շատ հիացայ և ցանկացայ ըզձև ծառնուն քաշել, ապայ խորհեցայ թէ միայն մի ծառի կերպ քաշելն, ո՞ր հընար է, կամ ինչ օգուտ է, այլ ցանկացայ այս մասին, թէ զոր ինչ աշխարհ, կամ քաղաք, տեսած եմ, կամ շըրջագայեալ եմ, նոցայ կերպն և ձևն կամ զչափ ճանապարածն գրել և հայտնել վասն ճանապարհորդաց, ցանկացողաց, որ ի թուին քրիստոսի 1821: Հազար ութն հարիւր քսան մէկ: Ի թուին Հայոց 1270: Հազար երկուհարիւր հօթանասուն: Եւ ամսեանն Փետրվարի 2: երկու: Ըսկսայ գրել և աւարտեցի Մարտի 12-քին, և ելայ ի Կոնալայ առ Մէրմէթ, զոր և ասէր աստուածն աջողեցէ: Ամէն:

Շնորհիւ աստուծոյ չիլից դէպ առ Սարդհանայ քաղաքն: Եւ այս Սարդհանայ քաղաքըն է ի աշխարհումն Հը[ն]դկաց ի ներքոյ տէրու-
31բ թեան Ինկլիացուց և մերձ ի քաղաքըն// Իմէրէթ մին կէս աւուր ճանապարհ է, և Կոնալուց մինչի Սարդհանայ չորս աւուր ճանապարհ է: Այս Սարդհանայ բաղաքապետըն ազնուհի տիկին կին մէկ խաթուն է և անունն նորա Բէկում Սմրօվն Սհար, մեծ զարմանք է սորա ազնիւութիւնն որ չիտուն հազար մարդի զիհաւոր է, այսինքն տաս հազար չիտևակ թվանկչի[111] միշտապէս պատրաստ կան տէրութիւնումն թագաւորին, բայց ամենայն կերպ ծախն և ամսականն խարջըն չիշնալ Բէկում Սմրօվն կոյ տայ[112]: Այլ և նոյն չիտուն հազար հոգոյ հաց ու շորն չինըն կոյ տայ և մանաւանդ հանցաւ[ո]րաց ճանապարհորդաց ողորմութիւն կոյ տայ և չինըն ինքնակալութեամբ և հրամանաւն իւր զօրօք քանիցս հանգամ պատերազմութիւն է արարեալ և հաղթեալ թըշնամուն: Քանի նշանաւոր քաղաք առեալ
32ա չիրաւի արժան է//չիշնալ Բէկում Սմրօվն, նա և ամեն կերպով իւր պալատին կարգաւորութիւնն, նաև սաստիկ հրամանն իր, և զեղեցիկ շինվածութիւն տանն, իւր իշխանքն, իւր պալատին և կառավարութիւնն զօրք և զօրապետք հնազանդ կան առաջի նորա: Վաղիր և նագիր ոսկի զաւազաններով, խոնհարեալ կարգօվ, շար ու շար կան, նաև իւր փեսայ Դէհս Կոնէլն, որ է կառավարիչ զօրածն

---

109 Տողի տրանքում, այլ ձեռագրով մատիտով ավելացված է «ուրեք ուրեք լինի ևս չորս կանգուն», իսկ լուսանցքում ծառի պատկերն է պատուզով:

110 Այստեղ աստղանիշ է դրված և լուսանցքում մատիտով, այլ ձեռագրով ավելացրած է. «պտանի ևս բազումս պտուղ ի Բիաւեայ քաղաքի, պտուղ սորայ հասանի մինչից հազար, որում առնն Պիտանգ Ստեբուս»:

111 Հրացանակիր զինվոր:

112 Արտաքին լուսանցքում նախորդ ձանոթագրողի ձեռագրով հետևյալ ձանոթությունն է տրված:

«Սմրու Գադիացի չրպետ ամուսնացեալ ընդ հայուհւոյ, ընդ երկար ժամայէ իշխողին Սարդանայ քաղաք, թէ անձնաշնորհութեամբ տեղապետին և թէ զանձիւք տիրանալ սեպհականութեան կալուածոց մեծի ուր ինքն իշխանարար կառավարի իբրև զմին զաւառապետ, պահէ վաշտ յաւուրս, պատերազմէ և երբեմն ընդ մերձաւոր հակառակորդս: Ի մեռանիլն մնալ իշխանութիւն ի Բէգում անուանեալ կին իւրոյ, որ և կառավարէ զհարստութիւն առն: Ի մեռանիլն թողու զաւազ մի ամուսնացեալ ընդ այլ ազգոյ: Ի տիրապետել Անգլիացոց ասի տիրեալ և զհարստութիւն Բէգումի Սմրումայ չրպետի»:

այսքան և ևս քան զայս առաւել սալթանաթս չինքնակամ ունի։ Եւ չինքն Բէկում խանումն է ամաց 60-ից։ Եւ կիրպ քաղաքին է այսպէս[113], և ունին բաղմութիւն ծառապաղ յայսինքն ամպի ծառք։ Եւ այս չիշեալ ամպի ծառս ունի պըտուղս ի չափս խնծորի, և քաղցրահամ։ Եւ բընակեալ Սարդհանայ իւրաքանչիւր ազգէն, այսինքն քրիստոնեայ և մահմէտական և Հընդու ազգէն։ Եւ չերկիրի հօքն քաղցր է և Հընդովի բառով խօսին և Հընդկացուց հանդերձօվն և քաղաքս գետս և աղբուրս ոչ ունի, ջրրհօր բաղում։

32բ //Որժամ ելայ Սարդհանայից առ ի Իմէրէթ կէս աւուր ճանապարհ է, և այս Իմէրէթս է ի աշխարհումն Հընդկաց, նոյն Հրամանի նիրքոյ, այսինքն Ինկլիսացուց։ Սա ևս է տեղն տաշտ։ Գետս աղբուրս ոչ գոյ, բա[յ]ց պաղ, պաղաթս, ծառապաղս բազում, և ունի Իմէրէթս մեծ զօրքս Ինկլիսացուց և մեծ բնակըս գեղեցկաշէնս և զօրքն ամենայն պատրաստութեամբ իւրոյ դիւ և պիշեր կան ի պատրաստի միշտ, հանդերձ մեծամեծ զօրավարօվք և զօրագլխօվք և Իմէրէթս քաղաքս բընակ զօրաց ծևակերպ[114]։ Ի ամայ ևս են բնակեալ ազգք քրիստոնեայ, մահմէտական ու Հը[ն]դու։ Եւ քաղաքիս հօքն է բարի. սա ևս ունի բաղում ծառայպաղս և մեծ մասն ամպի։ Եւ տէրութիւնն է հաստատ։

Իւրաքանչիւր քաղաքանին և գեղն, գեղաքաղաք, գավառն, լեռնայիքն և տաշտայիքն և անդառայինքն, եթէ Բոլուջն, եթէ Սենդն
33ա և թէ// Մօլթանն և թէ Փանջապըն և թէ Դաքանն և Չինափաթանն և թէ Բանկալան և Մաջինայ աշխարհն և թէ Շամիհայն և Հավայն, ծօվայինք և ցամաքայինքն, հեռաւորքն և մերձաւորքն շըրջելօվ շըրջեցայ և տեսայ և լսեցի և չիմացի և առայ ի միտս իւրաքանչիւր չաւուրս շըրջման թէ ի վերայ Ճանապարհին և թէ քաղաքում օր աւուր զոր ինչ իրք մասին իւրու զարմանալի աջայիրան բան կոյ տեսանէի կոյ գրէի թիղի մինչի վերջըն ժողովիցի ի մի ահա այս ծաղկաքաղ գրքոջս չայտ արարի և Ճանապարհած չափն չիւրաքանչիւր տեղում գրեցի առ ի չիշատակի իմոյ, խնդրեմ ընթերծողածդ անմեղասիր լինիք դիս և ունթունելով որպէս նոր իմն համարիք, վասն զի հազիւ ի գլուխ եկն։ Շըրջելօվս բաղում վաստակեցայ ի ծերութիւն ժամանակիս, հազիւ գլուխ բերի, վասն ապակայն մանկանց
33բ մերոց, չիմանալ ի չափ Ճանապարհաց որքանութիւն// քանի է։ Քա[ն]զի սովորութիւն է ամենայն ազգաց քրիստոնէից, եթէ Ինկլիզի և Ֆռանկզաի և Ռուսի և այլ որ զոր ինչ տեսանեն, եթէ ծօվում և թէ ցամաքի, ամենայն աշխարհած որպէսութիւնն գրեն և տպին և պահեն վասն մանկանցն իւրեանց, վասն զի բանասցեն աշխ մանկունքն նոցա և ի բնու զարդնասցին և չիմասցեն որ տեսանիմք զիմաստութիւն նոցայ, ...ինչ և իցէ ոչ կամիմ երկարել իմաստութիւն նոցայ, վասն զի մեծ ամօթ և նախատիք է վասն մեր, որ այնքան իմաստնացան ջերմեռանդութեամբ միշտ չհանգիչօվ իմաստութեանն աշխարհիս, բաստացան ի ձեռս կարդալու և գրելու, և մեք

113 Մանր գծագիր հատակագիծ։

114 Մանր գծագիր հատակագիծ, նկ. 1 (9)։

ամենևին նոցին շավղածն ոչ նախանձեմք, և ոչ ի միմիայն այսչափ աղաչեմ սիրելի [դ]գօնամէտ ընթերցողացդ, որ այս տետրակս զոր Մաղկաքաղ կոչեցի, ասուածով դուք լաւագոյն լուս ածէք քան զայս։ Եւ ինձ անմեղադիր լինէք, զօման այրի կնոջն համարէք, որ և խնդրեմ արևողէն և տացէ ծնզ իմաստութիւն Աստուծոյ Ամենայն։

34ա //Շահանշահ անուանեալ Շահնշին[115] և Բագաւորանիստ մայրաքաղաքն Դիլլի Շահջահանապատ յիշեալ Իմէրէթիէ երկոյ աւուր ճանապարհ է, և ի մէջ ճանապարհին Դիլլու եւ Իմէրէթայ կայ երկոյ անուանելի քաղաք, այսինքն Մուրադնիկար և Փարոխնիկար։ Եւ այս Դիլլի Շահանապատս է Հնդստանայ աշխարհումն հին քաղաք։ Այս է Հընդստանայ մեծ քաղաքն Բագաւորանիստ մայրաքաղաքքն։ Բա[յ]ց ի Թիվին Թարիղին... 1800-ին Ինկլիսացուց, ապրն սիրել է բոլոր Հընդստանայ աշխարհն մինչի յիշեալ Սինկ Բագաւորին աշխարհրն այսինքն Փանջար կոչեցեալ երկիրն։ Մինչի Ինկլիզն սիրելին Հընդստանայ աշխարհն մինչի այժմս, որ այս Թիվն 20 տարի հանցաւ։ Եւ այս Դիլլի Շահիջահանապատս մեծ և լայնատարած քաղաք է զարմանալին, նախշանկար, բարձրաբերձ, զօմաթաշէն[116] և զանազան

34բ ազգի ազգի պատկերքօվ յօրինեալ և քանդակեալ շինեալ//բազմատակ մարմարիոյ բարամբ, եթէ վերնատ[ն]էրն կամ նիրքնատունէր, գեղեցիկ, շարուշար թօշանէրն և նոյնպէս և պազարն։ Մանաւանդ բոլոր աշխարհիս վաճառականն գան Շահջհանապատ ծախին և գնին միշտապէս, և կայ Շահջհանապատ ճարտար արհեստաւորք և շատ աջայիբայն[117] զանազան արհեստաւորք ելանեն տեղէն՝ այլ աշխարհ։ Ունի և Շահջհանապատ արբայնայնիստ ամուր բերթս, որ միայն ինքն և որդիքն իւր և որդոյց որդիքն և կանայքն, ազախնիայնքն, իւրայիքն բերթումն նստին, այսինքն արք կոչին պալատ Բագաւորին և տեղոջն Թախտ Բագաւորած առաջնոց զարմանաշէն, գեղեցիկ նկարեալ, նախշեալ նաև։ Բայց այժմ նոյն Թախտն և տէրութիւնն է բրիստոնէից, այսինքն Ինկլիզի ազգին։ Ունի և Շահջհանապատ մեծ

35ա գետս որ ընթանայ առաջևն քաղաքին և անուն// Ջմնայ, որ երթալով երթայ անկանի օվկիանոս ծովն։ Եւ անհամար ազգ հեթանոսած և թէ մահմէտական և թէ կուռքապաշտ բազմութիւն խաժամուժ, խառնաճաղանճ ազգք էն Շահջհանապատ, որ ամենն հընդուվի խօսին նաև պատմուճանն հընդկածոցուց օրինաց կան և ազգ առապէսած սև սև և մերկ և կարշատես իրրև կապիկ, այսինքն մէմուն և կարշ հոտ ելանէ ի նոցանէ և պրոտ և անբըժշկելի ցաւոց, որ ասուած հեռի արասցէ ամենայն հաւատացելոց բրիստոնէիցն, որ շատոց բրիստոնէից է պատահեալ ի Հընդկած աշխարհումն, որ չարն սատանայն խափել ալ, ձգել ի չարութիւն անմեղ գառանց մերոց այսպէս դարձն կախծանաց միջ, և միշտ յեռանելով շաղախեալ և խառնակեալ ընդ այնպիսեաց պղծոտեալ կանացն, մինչ որ և իւրեանք նոյն ցաւին սիրացեալ և մնացեալ ի մէջ մորմոքման և հեռման կախծման բարա-

115 شاه نشين — Բագավորանիստ։

116 Կարգա զմբեթաշէն։

117 عجايب — զարմանալի

խալի ցաւի և խոցի, որ պարսէրէն ասեն աթաշակ[118], այսչինքն ան-
35բ բժշկելի ցաւ. ||մնան այնպէս հնոման մինչի նոյն ցաւօվն վերջանան կորնչին ի հատակս դժոխոց ի փառս սատանային և հրեշտակաց նորա: Եւ իւրեանց դառն աշխատանքն զոր դառնութեամբ աշխատեալ են այսպէս հնաւուր դար և օտար և տարտարոս գայծ և կրակ աշխարհումն ժողովեալ բատածուած ժանկն մնայ այլակրօն ազանց: Թողին այլազգաց և չինբեանքն մնոանեն կորուստ և աննշան տեղոջ առանց բահանայ, առանց արբութիւն և առանց բրիստոնեա վազհանեն մնան զարիպ և կարօտ իւր բնդաննացն: Եւ այս որոյ ազատ լինեն, չազատ այն, որ խառնակեն և շաղախեն ընդ այլ ու այլ խոցոտեալ սև սև և կարշելի կանաց Հընդկացուց: Եւ այս ոչ թէ միայն բրիստոնեայ ազգէն է պատահեալ այլ ամենայն ազգաց:

36ա ||Դարձեալ բոլոր Հընդստանայ աշխարհն միշտ տակ և կայծ, շոգ և ջրապակաս, չերկիրն շոր, անխոտ և հողն աւազ և բոլորն դաշտ և չօլ, շատ ծառն ամպի ծառ: Եւ չերկրի մարդն է պայիֆ[119] եւ լղար: Թէ կանայք և թէ արանք, մեծ և փոքրն, բաց և անամօթ, անամանչ և անրղդամ: Եւ Հընդու ազգն իւրեանց մեռնալն որն կրակի այրին, ոմն գաղանի ուտացուցանեն, ոմն ջոյրն ձգեն, նաև սաղսաղ[120] մարդիքն ընդ մեռելին այրին: Նաև հավատքն նոցա է այսպես, ոմն բար պաշտեն, ոմն հող պաշտեն, ոմն ջոյր պաշտեն, ոմն խոտ պաշտեն, ոմն ծառ պաշտեն, ոմն ծօվն պաշտեն, ոմն քաղցր գետըն պաշտեն, ասելօվ որ ախտի գետն է, ոմն կով պաշտեն, ոմն եզն պաշտեն, և բարէն եզն շինեն և պաշտեն, ոմն ծեր մարդոյ պաշտեն, նաև ոմն չերկինք պաշտէն, ոմն արէգակն, ոմն լոյսինն, ոմն աստխասպաշտ, ոմն արևն, ոմն անծրևն, ոմն ամպն, ոմն արծաթ, ոմն ոսկի, ոմն ջավահիրն: Եւ այսպէս կերպ կերպ ձեռագործս և
36բ արարածս պաշտեն Հընդստան: ||Նաև Հընդստանայ աշխարհումն գայ գետք մեծամեծ: Եւ Հընդստան աշխարհումն շորս ամիս անդատար դիւ և գիշեր անծրև կայ, պարասաթ ասեն անծրեւին: Ահա Շահջհանապատայ բաղաքի և բերթի ձևն տես[121]: Տեղէս մինչի Ապկարապատ[122] հօթն աւուր ճանապարհ է:

Է Ապակարապատ Ապկար Թագաւորին շինած բաղաք, որ ի նախնեաց հին ժամանակին այս Ապկար[123] Թագաւորս յառաջ էր Թագաւոր շահանշահ բաղաքին Շահջհանապատայ: Սայ փախստական լինելօվ ի ձեռս վազիրին իւրոյ, բանզի կամէր վազիրն Թագաւորին սպանանել, վասն որոյ փախստական եկն Ակրայ և բընակեաց Ակրայ: Այնչափ եկին Ակրայ բնակեցին, եղև մայրաքաղաք,

---

118 آتشك — վեներական ախտ (սուսանակ):

119 ضعيف — նվազ:

120 Ողջ-ողջ:

121 Մանր գծագիր հատակագիծ, նկ. 1 (10):

122 Կարդա՝ Աբբարաբաղ:

123 Աբբար-շահ, մեծ մողոլի Թագավորներից, որ 1556 թ. հաջորդեց իր հորը Հումայունին, նրա օրոք Մեծ մողոլի Թագավորության սահմանները ընդարձակվեցին, բնդգրկելով ամբողջ Հյուսիսային Հնդկաստանն ու Աֆղանստանի մեծ մասը. Աբբարը վախճանվել է 1605 թ.:

և կոչեցին Ապկարապատ, իբրև Ապկար Բագաւորն ավադ արար[124]։
Եւ Ապկարապատս է ի Հընդստան աշխարհումն, ի ներքոյ տէրու-
37ա թեանն// ինկլիացուց է։ Ապկարապատ մեծ և լայնատարած քա-
ղաք է, բովանդակ շինվածս քաղաքս քարաշէն, սպիտակ քարամբ
նաշխնալ կանկնաչափ, արարեալ մարդի և անասնի և գազանին,
թռչնոց, սողնոց, զեռնոց ևս ամենայն կենդանեաց պատկերքն քան-
դակեալ, նկարեալ և օրինեալ ի վերա տան շինվացի, մանաւանդ
զարմանաշէն բերթին։ Լայնութիւնն քաղաքին 8 ժամոյ ճանապարհ։
Երկայնութիւնն 14 ժամոյ։ Եւ է Ապկարապատ ի յեղր նոյն յիշեալ
Ջմնայ գետին, որ գետն այնչափ մեծ է, որ նաւով հանցանեն մարդ
և անասունք։ Եւ ունի Ապկարապատս մէկ հիաշէն բերթ, որ ի շրջման
իմ աշխարհս, այնպէս ամուր պերկ բերթ չէի տեսեալ։ Ինչ և իցէ
պատմութիւնն նորա բազմագրութիւն կոյ լինէր, Թողի ի բաց։ Նաև
յիշեալ Ջմնա գետս ընդ առաջն քաղաքին երթելով երթայ անկանի
օվկիանոս ծովն։ Ունի Ապկարապատ բազումութիւն ամպի ծառս։ Եւ
37բ ունի Ապկարապատս//չաւնի, այսինքն բանակըն զօրաց Ինկլիեա-
ցուց։ Եւ ունի Ապկարապատ լեղեակի խոտ, լինի տեղն։ Եւ ունի
Ապակարապատս բազում պազարս, վաճառականս և վաճառատեղս։
Բանակըն զորացն Ինկլիեացուց։ Եւ քաղաքի բրնակեալն ազգք քրիս-
տոնէից և հեթանոսած և մահմետականած։ Շէն վարդրար[125] քա-
ղաք է։ Նաև Ապկարապատ մէր քրիստոնէից Հայոց ազգէն կան, այլ
և տեղն մի պատրի է եղեալ ի ֆռանկաց կարբատոր, որ առաջ էր
մահմետական և մահմետականած օրէնքն դատող, այսինքն զազի,
քարոզող օրէնքն նոցայ։ Ահա այժմս շնորհիւն Քրիստոսի եղև քրիս-
տոնեայ և պատրի այսյինք տէրտէր։ Եւ շրջման ժամանակիս իմոյ
ես տեսայ Ապկարապատ, որ եղեալ էր վարժապետ մանկանց քրիս-
տոնէից, նաև քարոզող հեթանոսաց։ Յայնժամ, որ կոյ քարոյղէր մահ-
38ա մէտական օրէնքն//, այժմս կոյ քարոզէ քրիստոնէից օրէնքն և
հաւատն, այնչափ բազումն և վարժապետ է եղեալ, որ մէր օրէնքն
և զմեզ կոյ քարոզէ։ Որ յինքս տեսայ ի քաղաքն Ապկարապատ էր
վարժապետ և քարոզիչ յինքնապարտ և բարձր։ Անունն նորա Ավդըլ-
մասհ։ Ունի Բագաւորական ամսական խարջն իւր։ Շատ սիրեն
քրիստոնէքն, որ մեք տեսանելով ըզնայ փառաւորեմք զաստուածն
կենդանին տէրն մեր Յիսուս Քրիստոս և պահեցէ միշտ հաստատ և
ուղիղ հաւատով մինչև ի կատարումն ժամանակին իւրոյ, ամէն։

Եւ Ապկարապատս ունի զարմանալի և զարմանաշէն Բա-
ճիկանճա անուն շինվածս գեղեցիկ։ Շատ բարձր գօմբաթաշէն։ Եւ
Բաճկանճա է յիշեալ Ապկար Բագաւորին գերեզմանն և կնոջն գե-
38բ րեզմանն// այսինքն տեղ և գերեզման Բագաւորին և Բագուհուն[126],

---

124 Շենացրեց, կառուցեց։

125 برقرار — կանգուն։

126 Խոսքը հայանի Թաջմահալի մզկիթ-դամբարանի մասին է, իսլամական հարտարապետության հրաշալիքներից մեկը։ Տեր-Բաղդասարը սխալվում է այն վերագրելով Աքբար-շահին։ Այդ դամբարանը կառուցել է Շահ-Ջհանը (1628—1659) իր վաղամեռիկ կնոջ Նուր-Ջհանի կամ Նուր-Մահալի համար։ Հետագայում այնտեղ թաղվել է նաև ինքը՝ Շահ-Ջհանը։

և այս այն Ասկար թագաւորըն է որ յառաջ Դիլի Շահջհանապատ էր թագաւոր, որ փախստական եղև ի ձեռս վազիրին իւր Ակբայ, շինէց մայրաքաղաք և եղև մեծ թագաւոր անուանի և որ որդին սորայ էր Ըսկանդար թագաւորըն, ոչ թէ Մակիտոնացին, այլ միուս Ըսկանդարըն, որ յետ մահվան սորայ եղին գերեզմանին և ձեռն գերեզմանէն տուրըն թողին և միայն հինգ կազ կտաւ կապեցին ի վերայ ձօղոյն կանկնացրին ի գլուխս գերեզմանին ասելով Ըսկանդար Ֆայթիշահըն այսչափ ինչ տարաւ աշխարհէս: Եւ յետ սորայ մայրն թագաւորեաց միջոց ժամանակ: Նա և վերջացաւ և որդի չունէր Ըսկանդարն՝ թագաւորացուցանեն: Այնպէս ամայի մնաց մինչի ցայժամ: Վասնորոյ Ասկարապատ երկոյ զրմանալի տեղ կայ մէկն
39ա Թաճիկանճ և մէկն Ըսկանդարայ[127] և զոր յիշաս//ակնցի: Նոյն ծեռօվն գրած է ի վերայ գերեզմանացն նոցայ, և արդ շինվածն նոցա է այսպէս: Նախ Թաճիկանճս բովանդակն մարմարեա քարամբ է շիննցեալ, բսպիտակ իբրև թողխա: Բարձր է որ երկոյ աւուրց ճանապարհէն կոյ երևի: Եւ ունի չորս մինարայ. մէկն երկոյ հարիւր աստիճանօվ բարձր, այսինքն լամբ կամ մարդիվանօվն[128]: Նաև Թաճիկանճի ներ գետինն ներ պատըն և ամենայն մարմարեայ դաշած քարէրն մեծ զարմանք է: Քարէրն բանդակեալ է և այլ գոյն ակունք հաքցրել և ակունք պատուականք գույն և գոյն եռանկ-եռանկ կարմիր, կանաչ, կապուտ, դիդին, զումրութի, չամանի, նարինջի, ծերանի, զուլկապի, վարդի, սև, սպիտակ, ժանկաուի, ոսկայքար, լաքի, աղիղի, սիլէմանի, լաճվարդի, եալմի, փիրուզաի, համանի, լալի,
39բ եաղութի և այլ//գոյն առ գոյն ակունս պատուականս, ի մէջ բսպիտակ մարմարեայ քարին հաքույցարել որպէս զիր գրացի խաղաղցրանել, ևս առաւել ծաղկնէրն որ քարի մէջ կանկնացրել է: Վերջապէս հարիւրից մէկ գովաստանականութիւնն ոչ կարեմ գրել, վասն զի մէկ մասի չափ տեղն մէկ հաղար որեակ փող է խարջվել, քանզի ջավահիր է բովանդակ շինվածն Թաճիկանճայ: Եւ յինքն է ի եղբը նոյն Ջմնա գետին և քաղաքէն տուսն: Նաև նոյնպէս գովելի և Ըսկանդարեա է, բայց այժմս շնորհիւն Քրիստուսի քրիստո[ն]եայ է բնակեալ նոյն տեղօջն, վասն որոյ գրեցի: Ահա Ասկարապատ քաղաքին և բերթին և Թաճիկանճայ ձևքըն և կերպն[129],
40ա

127 Տեր-Բազդասարի տեղեկութիւնները Աքբար-շահի և նրա հաջորդների մասին խիստ աղավաղված են և սխալ: Ագրայի կամ Աքբարաբադի Խաքանդարիյե կոչվող արվարձանում է գտնվում Աքբար-շահի դամբարանը, որը նրա մահվանից հետո (1605) կառուցել է որդին՝ Նուրէդ-դին Ջհանգիրը:

128 Կարդա՛ նարդիվան (نردبان) — սանդուխ:

129 Մանր գծագիր հատակագիծ: Ներքևի լուսանցքում նույն գրիչը ավելացրել է. «...ինն լաք ինն հազար ինն հարիւր իննսուն ինն ըռեալ է ծախեալ, այսինքն խարջել ի վերայ Թաճիկանճայ»: Իսկ արտաքին լուսանցքում նախորդ էջերի ծանոթագրողը հետևյալ ծանոթությունն է տալիս. «Արդարև չէ անտեղի ասել ներ ի կիսագնդի աշխարհիս, սա միայն հրաշակերտ և հիասքանչ, ոչ ըստ դիցազնական գործոց որպիսի ճառին չէօթհանց հրաշալեաց և ի բրգանց Եգիպտոսի, այլ ըստ Ֆիզիքական արուեստից յայտնելոց ի սմին, որոց ազգի ազգի նկարս ներքագնին ոչ բնական որակով պատշ[ա]ճեալ, այլ քանդակագործութեամբ և գետեղմամբ գոյն գոյն քարամբք և ակամբք պատուականօք, որպէս թէ պատկերահանի և ճարտար նկարիչ գնդօք և վրձինեօք բերեալ ի տիպ էշդութեան, ոչ միայն խաղէն աչք տեսողաց, այլ և ապշին միտք, թէ այսչափ սքանչելիք վերելեալք լընծեռմանէ բնութեան Թաջգանջ, ի մերումս մեկնի թագ դանձուց»:

//Շահջանապատից մինչ Ապկարապատ վից աւուր ճանապարհ է[130]։

Յանկացայ երանել և տեսանել Փարուխապատ քաղաքն, այսինքն որ է Փարուխ Բագաւորին շինեալ քաղաքն։ Սա և պայծառ քաղաք է ի աշխարհումն Հընդկաց։ Ըստ բընակութեան մահմէտականաց և կռապաշտից։ Սա և մեծ քաղաք է և դէմ անդիման չունին, այսինքն բընակութիւն զօրացըն Ինկլիզի և բանակըն օրդոյն[131] իջեալ կայն ամենայն պատրաստութեամբ զօրըն, նաև մեծամեծ զօրապետքն և զօրաւարաք և իրենց բընակութիւնն, զեղեցիք շինուածս ամենայն իր քաղաքավարութեամբ։ Նաև Փարուխապատ քաղաքն ըստ բանականին մեծ է։ Հարուստ ճոխ երանէ տեղէն։ Եւ ունի Փարուխապատ զեղեցիկ պաղարըս, արհեստաւորըս և վաճառականս, մանաւանդ Քարուլու վաճառականս տեղն շատ գան, և ունի Փառուխապատ
40բ //անչափ և անհամար ամպի ծառոք որ կասին Փարուխապատ պաղէր կայ, որ մէկ պաղում մէկ լաք ծառ կայ, և զետ ընթանայ քամակօվն քաղաքին, և զարիպ մարդին սիրեն Փարուխապատցէք։ Օտարական շատ լինի տեղն։ Եւ Փարուխապատ մարդն աղէկ է։ Ահա Փարուխապատ քաղաքի և Ինկլիզի չունի այս Յարիզարայ գնան ձևք[132]։

Ի Գոյալիրէն մինչի Իշմիուր 10 յաւուր ճանապարհ է և Գոյալիր է ի աշխարհումն Հընդկաց և Դարան կոչեցեալ գավառումն ի տէրութիւնումն Մարաթի և գտաւոր է Թօվլաթռամ Ռրաջային՝ նրման յիշեալ Ինճիդ Սինկին, որ ի լահօր է բնակաց։ Սայ ևս հաւատօվ կռա-
41ա պաշտ և Թօվլաթռամ մեծ Ռրա//ճաս ունի մեծ զօրքս պատերազմօղս, որ այլ ազգք ասեն լաշկար կամ զօշուն կամ փօվճ[133] այս կերպ կերպ անուանեն, և ունի Թօվլաթռամն ընդիւ իւր պաւական աշխարհս քաղաքանիս գաւառանիս։ Եւ յինքն յինքնագլուխ կառաւարի և միշտ շրջի ընդ աշխարհս իւր զօրօքն իւրօք։ Նաև միրապնէյեցն պարնիր կայն Թօվլաթռամ Ռրաջայի մօտըն մինչի յուսուն հոգիք գինորք։ Եւ գրիսաւորըն սոցա է Աղայ Յակոր Պետրոսն Եւ այս յուսուն հոգին որ կան Թօվլաթռամ Ռաջայի մօտն, սորայ ումն հազարապետ, ումն հինգ հազարապետ, ումն տաս հազարապետ, ումն քան հազարապետ։ Բայց յինքն պարոն Յակորն ամենեցուն գլխաւորն է և հրամանատուն։ Եւ յինքն պարոն Յակոր շատ հաւատօվք բրիստոնեայ է և ողորմած[134]։

---

130 Այս նախադասութիւնը գրված է բնագրից դուրս, վերի լուսանցքում։

131 Զորակայան։

132 Մանր գծագիր հատակագիծ։

133 Այս երեք տերմինները թեև որոշ իմաստային տարբերութիւններ ունեն, որ կարելի է թարգմանել զորամաս, բանակ, գունդ, սակայն այստեղ օգտագործված են ընդհանրապես խոշոր զորամիավորման իմաստով։

134 Նույն ծանոթագրողը էջի արտաքին և վերին լուսանցքում հետևյալ տեղեկութիւնն է հաղորդում Աղա Հակոբ Պետրոսի մասին. «Կօռնէր (հատանարար՝ colonel) Յակոբ Պետրոս, թէպէտ այր անհրահանգ, սակայն քաջ և արի ի պատերազմունս, զամս բազում ծառայեալ Թօվլաթռամմա բաջի, տիրանալ մեծի համբաւոց և իշխանութեան, զոյլ սորա ջերմեռանդ յոյժ, զաղթականօք ամամբք ազգայնով կառուցանէ անդ ի Գուալիէր եկե-

41բ //Եւ այս Գոյվալիրս ունի բարձրաբերձ զարմանաշէն գոյացեալ բերթս մեծս թէպէտ նման Շուշվայ բերթի՝ քարէն գոյացեալ է բայց փոքրիկ է բան զնայ: Երիգ ժամ շրջապատի և բարբրութիւնն մէկ ժամու ճանապարհ: Եւ ի մէջ բերթին կայ ջրոյր աղբուր և ամենայն պէտս մարդկան: Նման է Շուշվայ ղալին. միայն ձևն ունի բերթս: Բնակութիւն, պարս, ծառս, ամենայն ինչս և քաղաքն շուրջ զուրկն ի ներքոյ իւր: Եւ բերթըն բարձր է, քաղաքն ցացր, և ի քաղաքին քարին որ բերթիս փոքր ինչ ցացր լինի մի քարի չայր կայ, այսինքն քարատակ, զայն տեղիցն մարդ մի ամենևին մերկ դուրս կոյ գայ բարձր ձայնէ դիւ և գիշեր, օր ու ցերեկ, միշտ հանապազ ձայնէ
42բ միայն մի բան ասէ: Դէվուդա՜ս, Դէվուդա՜ս, Դէվուդա՜ս//: Եւ յինքն է ի ճակատ քէրծին անմարդագնաց տեղօջ: Եւ յինքն է հաւատօվ կուրբապաշտ, և այսպէս ամարըն և ձմեռըն աղաղակէ, անկեր և անխում և մերկ: Եւ լսելօվս լանցի նորա ձայնն ի Գոյալիր քաղաքումն: Բա[յ]ց ասեն թէ սա մեռեալ էր՝ կենդանացեալ է, որ շատոց վկայութեամբ է եղեալ: Դարձեալ Գուալիր քաղաքի և բերթի արնէրն միայնգամայն քարէ է, գեղեցիկ դաշած քարէր կառուցեալ լայն լայն, երկայն երկայն, ծաղկօք և պատկերօք զանազան թուչնոց, անասնոց, քանդակեալ, նկարեալ, օրինեալ, նախշեալ, զարմանալի վերնատներս կամ ներքնատներս: Եւ Գոյալիրիս քաղաքին բընակիչքն Հընդու և մահմետական: Գոյալիր շատ պաղ և այգիս և գետ և աղ-
42բ բուր ոչ գոյ, այլ ջրառատ շատ: Եւ Գոյալիր քաղաքի և բերթի// ձևակերպն է[135]: Մինչի Կամփուր չանիկին Ինկլիացաց, տաս յաւուր ճանապարհ է: Կամփուր է մեծ բանակն և զօրքըն Ինկլիացուց զօրացըն, գեղեցկաշէն, բազում շինվաց ի չերկրումն Բանկալու, չեղբըն Գանկայ գետին, այսինքն չորս գետէն մէկն, որ ի արահատէն ոտոդանէ և պատէ աշխարհս: Եւ Հընդու ազգն պաշտին Բընկայ գետն և ի մէջ նորա լուացվին և ասեն արահատին գետըն է սա, օվ ի սմայ լուացվի կերթայ արահատըն: Եւ սա է Գնհօն, որ պատէ բոլոր աշխարհս և գայ դարձեալ անկանի օվկիանոս ծովն և ծովու նաւըն երթայ մինչ ի
43ա Կալկաթա: Այսպէս անուանի գետ է Գընկայս//: Դարձեալ Կամփուր քաղաքըն շէն և պայծառ և ազալաթօվ[136], և տէրութիւնն հաստատ և ուղիղ: Եւ բնակիչք քաղաքին շատըն քրիստոնեայ, փոքրն այլազգ: Եւ Ինկլիզի մեծամեծ իշխանքն, զօրապետքն, զօրաւորքըն, ջնրալըն, նանարարն, միանգամայն ի միասին միշտապէս կայն պատրաստի:

ղեցի, ի Ջուղայ վանաց տալ բերել քահանայ, հայրանալ այրեաց և որբոց բազմաց, զրօք առատանալ չէջմիածին, յերուսաղէմ և ի վանս և յանապատս կուսանաց Ջուղայ: Յետ սիրապետութեան Անգլիացոց նահանգս շուք նորա, ցրուին համազգիք, մնոանի առանց իոլոյ զատացուածս մեծ: Հեղինէ այրի նորա զգոյս իւր մի հարիւր հազար ռուխի որոշէ տալ էջմիածնի, երուսաղէմայ վանաց և կուսանոցի Ջուղայ: Զկատարածն սորին կարդա «Հայելի փոքրիկ» մակագրեալ տետրակ տեառն Յովհաննու Խաչկեան, արարեալ և տպագրեալ ի Կալկաթա յամի տեառն 1869 երես 21»:

135 Մանր գծագիր հատակագիծ: Նկ. 1 (11):

136 عدالت — արդարութիւն:

Եւ Գամփուռ քաղաքս առատ և լի ամենայն ինչև և ավատ[137]: Եւ ահա Կամփուր քաղաքին ևս զօրաց տեղն և Դրնկայ գետն ձևակերպն է տես[138]: Կամփուր քաղաքէս մինչի Թագաւորանիստ մայրաքաղաքն Լաքնահօր երիզ աւուր ճանապարհ է:

Լաքնահօր քաղաք է մեծ ևս անուանի, ի նախնեաց ժամանակին
43բ յորժամ Հընդկաց Թագաւորն կոյ նստէր Շահնըշին քաղաքն//Դիլի՝ Շահիջհանապատ, և Լաքնահօր կոյ նստէր նորայ վազիրն: Բայց հարստութեամբ և զօվլաթօվ, եկամտութեամբ և բազումութեամբ ժողովրդոյցն և շատութիւն աշխարհածն և գավառածքն, և առատութիւնն յերկիրին և լիութիւնն աշխարհին և ամենայն կերպօվ բարութիւնն յառաւել էր քան զքէ Շահջհանապատայ, յայսինքն Լաքնահօրըն հարուստ էր: Նմանապէս այժմ ժամանակիս Լաքնահօրն հարուստ և շէն այ քան զՇահջահանապատըն: Բայց Թարիղումա[139] քրիստոնեայ տիրեալ է Շահիջհանապատն էլ և Լաքնահօրն էլ, ոչ միայն սոքայ է տիրէլ Ինկլիացուց ազգն այլ բոլոր Հընդստանն է ի ձեռս քրիստոնէից որ և խնդրիմ մարդասէրն Աստուած հաստատ պահեցէ ամէն[140]:

44ա //Դարձեալ Լաքնահօր քաղաքն լայնատարած. սա ևս ունի նա-
ւագնաց գետս որ կոյ գնայ Կալկաթայ և ընթանայ քաղաքին քամակօվն: Բայց յայնկուս գետոյն կայն ևս շինութիւն և գետի մէջ տեղն բարձր դեղեցիկ ամարաթ[141] է շինած Նապապին, երանկ երանկ զանազան դոյնով նախշած, որ գրչօվ գրել չի լինել: Նաև Նապապին իւր նստում տեղն ոչ մի տեղ է կամ երկոյ, այլ տաս տեղ ամէն տունն տաս տաս ամարաթ է և կամենաս Նապապին քօշկի սարահիրն[142] լեզօվ պատմես անկարելի է, միայն աչօք տեսանես: Եւ այլ
44բ Լաքնահօր քաղաքին գովասանութիւն շատ է, ևս հազարիցն//մէկն գրեցի, քանզի ձանձրութիւն չի լինի ընթերձողածն: Եւ կասեն Լաքնահօր քաղաքին լայնութիւնն չորեքտասան ժամ և երկայնութիւնն երկոյ յաւուր ճանապարհ է: Ես տեսանելով շատ է քան զասացն յօրվկնաև շինութիւն յերկրի առաւելանայ, օր յաւուր մեծանա և քաղաքն: Դարձեալ Լաքնահօր քաղաքն ունի անյեղրն և անթիվ և անհամար պաղարս, դուքանս և ճարտար և հմուտ ուստայ արհեստաւորքս և զանազան ծաղկարարքս և նախշարարքս և պատկերահանքս և գեղեցիկ ոսկաթէլի և արծաթաթէլի արհեստաւորքս, զարմանա-

---

137 آباد — շէն:

138 Մանր գծագիր հատակագիծ:

139 Սուն թվականին:

140 Լուսանցքում նույն ձանրագրողի կողմից. «Սկսալ է վէպ տիրապետութեան Անգլիացուց Շահջանապատայ եւ Լանքնահօրայ (որպէս և հեղինակն ի վերջոյն վկայէ կերպիւ իմիւ)—տիրումն Օւտայ կամ Լանքնահօրայ ամօք ինչ յառաջ յաւուրս մեր, որպէս արդէն սորայ Թագաւորն (մահմետական) տէրունի Թոշակաւ նստեալ ի Կալկաթա (ի Դէլռնահիչ՝ կամ Մուչի-Քօլամ անուանեալ տեղի, արտաքոյ քաղաքէս յարուարձանի իբրեւ 6 մղոն հեռաւորութեամբ), ունելով զշուրջն բազմութեամբ արանց, մանաւանդ և կանաց, այր մոլի և անպիտան բոլ ամենայնի...»:

141 عمارت — ապարանք:

142 كوشك و سراى — դղյակ, ապարանք, պալատ:

զան, հիանալի իրք տեսանեմ ես ի քաղաքն Լաքնահօր, որ շատ աշ-
45ա խարհում չեմ տեսաց, այլ մասամբ Աստուծոյ է գիտելի: Եւ// Լաք-
նահօր քաղաքն ունի շատ գեղեցիկ պաղպաղաթս, զանազան պըտ-
ղատու ծառս և այլ բաղցրիկ պաղիչայքս[143], գոյն առ գոյն անուշա-
հոտ ծաղկօք և մարմարեա ջրբահավուզօվ, փուղարօվ[144]: Վերջա-
պէս ղոր ինչ Ըսպահան քաղաքն կայ, նոյն տեսօք և Լաքնահօր քա-
ղաքն: Բայց այս բնական սովորութիւն է աշխարհիս, որ ամէն մարդ
իւր չերկիրն գովի: Իմ շրջման ժամանակիս ես տեսայ Լաքնահօր
պայծառ և առատ, լի և շէն: Բայց ի տէրութիւնն և դատաստանն
խառն էր և հարց ու փորձ չկէր: Անուղիղ էր առալաքն: Նաև Ինկլի-
զեաց զօրք կան Լաքնահօր շատից փոքրից, և քանին մի պարունք
կան և այլ բրիստոնեայք Փրթկալ ազգէն: Կան մի քանի տուն նաև
45բ Հայոց ազգէն//շատ փոքր: Եւ ես Լաքնահօր քաղաքումն կացայ չորս
ամիս: Անծրևային ժամանակ էր, այսինքն պարապաթի, և բազում
նեղութիւն կրեցի Լաքնահօր: Եւ Լաքնահօր քաղաքէն մինչի Պրնարրս
10 յաւուր ճանապարհ է և յառաջաւրեցի Աստուծով յելանել զօր
Տէր Աստուած աջողեցէ ամենայն ճանապարհորդաց ամէն: Այս է
Լաքնահօր քաղաքին ձև և գետի ձևն[145]:

Այս Լաքնահօրիցս մինչ ի Բրնարիս տասն յաւուր ճանապարհ է
և ի մէջ ճանապարին բազում երևելի գիւղաքաղաքս գան և հինգ յա-
ւուր ճանապարհ անդադար են, և երթ և եկեցողքն երկիւղալի հանցանեն
46ա անդէն//: Եւ արդ Բրնարիս քաղաք մեծ և լայնատարած և շատ եր-
կայն ի յեղր Գայնկայ գետոյն, նոյնպէս գեղեցկաշէն բրնակու-
թեամբն և այգստանքն նոյնպէս: Ինկլեացուց զօրքի բնակութիւնքն,
բազիտակ բարձր բարձր տնէրն և ամարաթքն, որ շինեալ են ի մէջ
պաղատանի, և բանակն զօրաց նոյնպէս ամենայն պատրաստու-
թեամբ միշտ անխափան կայն: Եւ Ինկլեացուց մեծամեծ պարնէք
կայն: Եւ Բնարիս քաղաքն ունի մեծ գետ որ կոչին Գնկայ, նաւով
հանցանեն մարդ և անասունք և Կալկաթից զանազան արրանք բերեն
և նաւով Հընդստանայ եւ Եօվրբիուչ, այսինքն Ֆռանկաստանայ:
Եւ այս Գնկայ գետս պաշտեն Հընդու ազգն և ասեն տրախտին չորս
գետ մինն սայ է: Եւ իւրեանց հանդեսի աւուրքն Հընդուք լուղանան
մեծաւ ուրախութեամբ և ժողովեալ ամենայն տեղեաց գումարեալ
ամենեքեան, իւրեանց թագաւորքն, ռաճայքն, եթէ աղքատ և թէ
հարուստ, եթէ վաճառական, եթէ զամինտար[146] յայսյինքն չերկրա-
46բ գործք// և կանայք և արանք և թէ ծերք և տղայք բովանդակ զարդա-
րեալ ոսկով, արծաթով և ականք պատուականօվ, գայն սոդեցու-
թեամբ թմբկօվ, քրնարիւ, դաւղիւ, յայսյինքն գայն սազօվ, սաղան-
դարօվ և երգովք մեծ ուրախութեամբ, մտանեն Գրնկայ գետն լու-
ղանան և երկրապագանեն գետին և դարձեալ ըստ կանոնացն իւ-

143 باغچه — պարտեզ:

144 فواره — շատրվան:

145 Գծագիր հատակագիծ, նկ. 1 (12):

146 زمین دار — հողատեր:

բանց անդան պատրաստին, ուրախութիւն առին, յաւուր ինչ տեղն մնան, դարձնալ դառնան ըստ իւրաքանչիւր տեղս: Նաև զարդարին ֆիլս[147] կարմիր կանանչով, նըստին ի վերա նորա, նաև զարդարին կառք և փալթիք[148], նստին ի մէջն նորա և ասեն ով այս ջրումն լուղանայ նա կերթայ արքայութիւն: Նըմանապէս ունեն և ուխտատեղս մի որ կոչին անուն նորա Ջընկռնատ, թէպէտ Հընդուց ազգն անհամար ուխտատեղ ունեն բայց գլխաւորն այս Ջընկռնատս է: Համօրէն Հընդու ազգն պարտ են գնան տեղին՝ ուխտ անեն. շատ հեռաւոր տեղից գան ուխտաւորք՝ ուխտ անեն, և նորա հողից առնուն յերկրայ

47ա յերկիր տանեն[149] //իւրեանց մէջն բաժանեն և դրօշմին ճակատն կարմիր և դեղին և սպիտակ հողէ, զայն է նշան կուռքապաշտին և ասեն այս է չաստուած[150] իւրեանց: Նմանապէս յերկրայ յերկիրս տանեն ջոյրն Գնկայ դետոյն: Եւ ունի Բնարիս քաղաքն մեծ պարսպ և ամրացս վաճառանոցս, վաճառատեղս: Շատ դումաշիղէն ելանէ տեղէն, այսյինքն զաորաբ[151], քիմխաբ[152] և այլ արըշմէղէն ճոթանք[153] որ Տուրանի[154] ազգն տեղէն խրիտ[155] առին տանին Ազվանս, Բոխարաս: Եւ Քիշմիրոյ շատ շատ գայ տեղն: Եւ բազմութեամբ ժողովուրդ լինեն Բնարիս: Եւ է Բնարիս հարուստ քաղաք: Հընդու ազգն կաշի ասեն և պաշտեն Բնարիսոյ: Եւ Բնարիս քաղաքումն մեր ազգն չէ բնակած, այլ ամենայն ազգէն կան: Եւ Հընդուց ազգն իւրեանց մեռելսըն ձգեն ի գետն: Եւ ումանք ընդ մեռելոյն իւրն սպանանեն կամ կրակին անկանեն այրեն վասն մեռելոյն: Ահա Բնարիս քաղաքի ձևն[156]:

47բ // Բնարիսից մինչ ի Փաթանայ ինն օրէն ճանապարհ է, և ճանապարհին անհամար գիւղաքաղաքս որոց մինն է Սասրան, որ հին թագաւորաց քաղաք է եղած և այլք բազումք: Եւ արդ յիշեալ Փաթանայս է ի աշխարհումն և ի Հընդստանայ մեծ և լայնատարած քաղաք ի

---

147 فيل — փիղ:

148 լաստ:

149 Արտաքին լուսանցքում, նույն ծանոթագրողի կողմից. «Ջնկռնատ մին է և յաւուկ ուխտատեղի ի համօրէն կռապաշտ ազգս Հնդկաց, ամենայն մեհեանք և բագինք երկրպագու շատուծոյն, որ ի սմայ ունի որիշ աւուր պաշտամանն, յորում համախմբի ազգն ի հեռաւոր վայրից, ցտասնիկի աւուրց բացակայից՝ զան յերկրպագութիւն տուրա և որ ոչն արժանացից պաշտամանն՝ շատի մաքրեալ Հնդիկ, կերպիւս նմանի ուխտագնացութեանն մահմետականաց ի Մաքքայ, Մատինայ»:

150 «Չաստուած» բառը հապավված է և գրված՝ զխիվայր:

151 زربافی — ոսկեթել-դիպակ:


152 کمخا — ծաղկավոր դիպակ:

153 Մետաքսյա գործվածքներ:

154 Տուրան, կամ որ նույնն է՝ Թուրան, ասելով հնդիկները ի նկատի ունեն Միջին Ասիան:

155 խրիտ առնել-գնել:

156 Մանր գծագիր հատակագիծ: Այս էջի արտաքին լուսանցքում ևս նույն ծանոթագրողի ձեռքով ավելացված է. «Նախքան զտիրապետութիւն Անգլիացոց ի Հնդիկս տեղի ունեցեալ զայս խժդժութիւն, ի մեռնիլ առն՝ և յայրիչն հրով՝ կինն ևս կենդանւոյն մատնէր զանձն յայրումն և ի խառնուրդ կամախացն յաճիւն առն, զոր վերացեալ այժմ օրինօք իշխանութեան Անգլիացոց, թէև ասի անդրէն յոյնք ուրեք ի խորին տեղիս նորա գործադրի գազտնութեամբ»:



1



2




3




4




5




6



7




8



9



10



11



12

յիղր նոյն Գնկայ գետին և շատ ծառապարտ ունի, այսինքն ամպի ծառ և քիլի ծառ։ Եւ ունի այս Փաթանայս շատ առատ յիրկիրս և դալար և յորդառատ։ Անասունք շատ լինի, մանաւանդ զոչխարս։ Եւ ունի Փաթանաս մեծ պազարս լիապէս ինչիւ։ Փաթանայ քաղաքն և ունի չաւնի, այսինքն բանակն Ինկլեացուց զօրաց։ Ունի և Փաթանայ քաղաքս լիղակի քարխանիս[157] բազումս։ Լիղակս այս խոտ է կանաչ որպէս գեօնջայ[158] որոյ սերմն սուլուկի[159] նման փոքրիկ և գեղնագոյն և ցանեն Հուլիսի ամսին կամ յունիսի ամսին. նախ հնձեն սեպ-
48ա տեմբերին, ապա սորին արմատն Թողին սակս սերմ//մացոյի, որ սերմն հնձեն յօգոստոսի ամսին, նաև մնացաց արմատն Թողին. երկոյ և երիք հանգամ խոտն հնձեն՝ արմատն Թողին. նաև յետ հնձման տանեն աւուզ[160] ջրերին. Բ (2) և Գ (3) աւուզ շինեն պիրկ և զարիմ[161] կրօվ կամ կաջօվ սրեն, ապա և լիղակի խոտն տերևն ձգեն առաջին աւուզն և փայդ կամ քար դիր վերայ, որ չբարձրանայ խոտն, ապա ջոյր կապէ լցվի աւուզն, տասնուերկոյ սհաթ մնայ։ Յետոյ ջրերի ճամպան բաց երթայ էն միուս աւուզն, որ առաջին երկրորդն շինեալս։ Յետոյ էն նկաց ջոյրն մտեր ԹՀեօվ խառներ Գ (3) կամ Դ (4) մարդով մինչի Բ (2) սհաթ։ Յայնժամ առ ասացեալ խառնեալ ջրիցն մէկ սեպտակ ամանում վեր դիր, որ լիղակն նմանն աւազուն բաժանեալ է ջրէն։ Յայնժամ խառնիչքն ելանեն ջրէն, Թողին լիղակն տակ նստի։ Ասացեալ ներքի աւուզ բաց, որ երեսին խտտակ ջոյրն զգուշութիամբ, որ լեղակ չգնայ՝ խտտակ ջոյր գնայ՝ մնայ լիղակ։ Վեր առ
48բ լցրոյ մեծ մեծ պղնձէ զազան։// Մէկ նի տան և քաշուց ձգեն, որպէս պանէր քիսակում, որ ջոյրն լաւ քամվի, որ իրրև մանկանայ խաղողի կընջիրին նման. այնոյնեւև սաբունի[162] պէս կտրատին, տախտակի վերայ կտաւ բռնին, շուաք տեղ չորացանեն՝ դառնայ լիղակ։ Ունի Փաթանայ քաղաքս ափիօն, այսինքն Թրեաքի քարխան[ա]ս. Թարեաքոյ, որ է խաշխաշի խիժն, Ինկլիզն ափիոն ասէ։ Մեծ անուն ունի և տանեն Չին ու Մաչին և Մալաղայ, Մանիլայ, Պտահաւայ[163] և մեծ գնօվ ծախեն, քանզի Չնէզն[164] շատ սիրէ Թրեաք[165]։ Այլ և Փաթանայ քաղաքս է ի յիղր նոյն Գրնկայ գետին և այս է ձև[166]։

Այս Փաթանից մինչ ի Բաղալփուր երիք աւուր ճանապարհ։ Բաղալփուր է ի աշխարհն Հընդկաց և է ի երն Գնգայ գետին և կոս-

157 جاخاكى — զարծարան։

158 Առվույտ։

159 Տգրուկ։

160 Ամպան։

161 Ամուր։

162 Օճառի։

163 Ի նկատի ունի Հնդկաչինն ու մերձակա վայրերը։

164 Չինացիս։

165 Արտաքին լուսանցքում նույն ծանոթագրողը ավելացրել է. «Մին յարդի նիւթական մտից իշխանութիան քաղաքիս է գոյութիւն աֆիօնի (մեկոնիոն), առամզոյատ (?) մինչ 5000 արկեղս տանի կամ 60,000 տարես, ի Չին, ի Բթաւիայ և այլուր։ Ինական արժէք տորին ասի 400 ռուփի։ Այլ ամառական յաճուրդիս վաճառի մինչև 1500 ռուփի։ Իւրաքանչիւր արկղն, որ կշռի 2 լիդր կաչկաթս։ Գարշելի և մեղատոր տուրնասութիւնս։

166 Մանր դծագիր հատակագիծ։

պաշտի քաղաք: Եւ ունի պարս, ծառս և պաղարս և այլ արհեստաւորս: Եւ սէրութիւն է Ինկրիզի, այսինքն Ինկլեզի: Նոյնպէս և զօրք նոցա պատրաստի տեղն, և է Բաղալփուր հարուստ քաղաք, և պատուական ճոխանք եւանի տեղեն: Եւ Բաղալփուրս է փոքրիկ քաղաք.

49ա այս// տեսօքս որ ներքոյ տես[167]:

Բաղալփուրից մինչ ի Մունկէր երկոյ աւուր ճանապարհ: Մունկէր է ի աշխարհն Հնդկաց և եղեն նոյն Գնգայ գետին: Եւ սա ևս կապաշտի քաղաք: Ունի պարս, ծառս և պաղարս, արհեստաւորս շատ պատուական բիհանք[168] և Բիհանչայ[169] այսինքն ֆշտօլ[170] և Թուր և ամենայն ղէն զինորաց և ամենայն արկաթի, պօղվատի արհեստաւորք[171]: Մունկէր քաղաքս է նոյնպէս սէրութիւնն Ինկլիզի: Նոյնպէս և զօրքն նոցայ ամենայն պատրաստութեամբ տեղն են ամենայն ժամ: Եւ Մունկէրս Պանկալայ կոչին և Պանկալէվար խօսին: Սորա նըմա[նա]պէս մարդն ընդ կանայցն այրին կենդանոյն, և այրեալն ձգին Գնգայ գետն ասելօվ՝ այս է դրախտ չորս գետ մինն: Ինչևիցէ գետն առնի այրեցաց մեռեալն ձգի եղեն, շունք, գազանք, թռչունք ուտին նորա և իւր ընտանիքն աչօք իւրեանց տեսանին

49բ և ուրախանայն, ասելօվ// ահա այս մեռեալն արժանաւոր էր որ շունք կերան: Նաև նոյն գետն որ իւրեանց սատակեալն ձգել են, ընտանիքն նորա գնան ի մէջ գետին կանկնին և սգան և լայն, ասելօվ՝ գետն է սուրբ գերեզմանն: Եւ Մունկէրս այս քաղաք է փոքրիկ. այս տեսակօվ, որ ի ներքոյ տեսանես[172]:

Այս Մունկէրից մինչև Սէյտապատ վեց օրէն ճանապարհ է:

Սէյտապատս է ի աշխարհն Հընդկաց, որ և Պանկալայ կոչին: Սէյտապատ կամ Մուրշտապատ լայնատարած քաղաք է, բայց երկոյս բաժանի և երկոյս անուանի և է յիշեալ Պանկալայ աշխարհն. Եւ Սէյտապատ հնոց մահմէդական ազգի շինեցեալ, որ Սէյտապատ անուանի: Յառաջ շէն է եղեալ, բայց Թարեզօվս մին մասն աւերակ քաղաքին: Եւ Սէյտապատ բազում մէտտակ եւանէ որպէս Իշաշտ կամ

50ա Գիլան, այսինքն ապրշում և //պատուական դումաշիղէն եւանի ի տեղէն և ապրի ընդ ամենայն կաւառն Պանկալույ, այլ և ամենայն աշխարհից վաճառականք դան և վաճառին և դնին երթայն իւրաքանչիւր աշխարհն: Այլ և բազում լիղակի խոտ լինի Սէյտապատ, և լիղակն զայն խոտէն լինի: Եւ է Սէյտապատ մեր աղնեաց քանի պարունակք բնակեալք են բարուք կենցաղաւարութեամբ, որոց առաջին է Պարոն Մնացականն և այլք: Եւ ունին եկեղեցիս, քահանայս և

---

167 Էջի մեկ երրորդի չափով վերևում քաղաքի ջրաններկ դունավոր համայնապատկերը:


168 تفنك — Բոֆանգ—հրացան:

169 دجانچی — աղրճանակ:

170 Նաև փշտով—պիտոյ, աղրճանակ:

171 Լուսանցքում նույն ձանոթագրողը ավելացրել է. «Հնդինակ հրազէն շինելոյ, այսինքն թֆանք, աղրճանակաև ի Մունկէր, եղեալ է հայոցդի իշխանն Գօրգին խան, ցայսմանէ կարգս պատուիրեին Իսմասու Խօջամալեան, տպեալ ի Կալկաթա ի տպարանի Արարատեան ընկերութեան, վերատեսչութեան Մ. Դ. Բաղիշեանցո»:

172 Էջի մեկ երրորդում քաղաքի ջրաններկ դունավոր համայնապատկերը:



№ 94

Նկ. 2

այլ ըստ կարգի։ Եւ Սէյտապատս է ի ներքոյ սէրութեան նոյն Ինկլիզի։ Նոյնպէս բանակն և զօրքն Ինկլիզի տեղն ամենայն պատրաստութեամբ բնակեալք և նոյնպէս և պատասխանատուն իշխանաց Ինկլեացոյց։ Եւ գեղեցիք շինվածօք յամենայն բնակութիւն նոցա։ Նմանապէս վարժատունն նոցա։ Եւ Սէյտապատս պարս, ծառս և առատութիւնս և լիութիւնս և յամենայնիւ լի։ Եւ է Սէյտապատ, ի ներն նոյն Գնգայ գետին. այս տեսակով, որ ի ներքոյ տես[173]։

50բ //Այս Սէյտապատից մինչի Չիշրայ հինգ օր ճանապարհ։ Չիշրաս է ի աշխարհն Հընդկաց Պանկալայ կոչեցեալ։ Եւ սա Հասոկ Ինկլիացոյց շինեալ քաղաք է նոր, որ է յորմէ յետ Ինկլիացիքն սիրապետեալ են Հընդկաց աշխարհն զայն ժամանակին շինեալ են և Չիշրայ։ Նոյն Գնգայ գետին նգր, տեղ ապաստամբաց և փախստականաց, որով մեղաւոր կամ պարտական կամ այլ ինչ մարդ որ փախաւ, գնայ տեղն, այլ կարող չեն տեղէն հանել ի սէրութեան Ինկլիզի։ Եւ տեղն Ինկլիացոյց դպրատունն և տպարանն և մանկաց վարժատունն և պատրիքն կարգեալ կայր։ Նաև մեր ազգից և զայն տեղն, որ նոր Աստուածաշունչն տեղն տպեցին, և ես ներկայ էի յաւուրն զայն։ Վասն որոյ Չիշրայ ապաստամբաց տեղ կոչին։ Բազում պարտական եղեալ և փախստական տեղն բնակեալ են։ Բայց

173 Էջի մեկ երրորդում քաղաքի չրաններկ դունավոր համաչնապատակերը (նկ. 2)։ Լուսանցքում նույն ձանոթագրողի կողմից. «Ի Սէյտարատ չիք ով հայ և ոչ մին. ևկեղեցին մերձ յեղծումն նստեալ ցողը և ի ծախիծ։ Զայսմանէ կարդա «Հայելի փորրիկ» տեառն Յովհաննու Խաչկեան Նախայիշելոյ, յերես 25»։ Հ. Խաչիկյանի այս գիրքը տպագրված է Կալկաթայում 1869 թ.։

այս աստանատան ներհակ տեսանեմ, քանզի բազում մեծատունք արնա[ն]կ եղեալ կորեան։ Ինչ յիրաւունք է, որ մինչի լաք բուրի այլոց փոշացանին, փախստական եղեալ տեղն բնակեալ մնան հոգով և մարմնով պատրաստական[174]։ Եւ Չիշրայ ի եղրն Գնգայ գետին այս տեսօրս որ տեսանես։ Եւ է փորրիկ քաղաք այս [175]։

51ա //Այս Չիշրայից մինչ ի Կալկաթայ մինուկէս օրէն հանապար է։ Կալկաթայ քաղաք մեծ լայնատարած և է ի աշխարհն Հընդկած Պանկալայ։ Այս է Պանկալու մեծ քաղաքն Կալկաթայ։ Բայց յառաջ քան զինկլիացոյց տերապետին Հընդիկս, ոչ էր այսչափ մեծութեամբ և բազմութեամբ և հարստութեամբ և հրչակեալ քաղաք Կալկաթայ, քանզի Կօլիկատ կոչի անուն սորա։ Կօլի[176] կոչին գրաբառ պահակ, այսչինքն համալ կամ աշխարօրէն մըշակ, կամ մըշտուր[177] կամ փահլայ[178]։ Կօլի Հընդկացուց բառօվ կոչին մըշակին նաև զաղ կոչին, որ Թարբմանի հուն (՞), այսչինքն ջրրի հանցկ կամ ջրրի բարայ կամ նաւահանգիստ, կամ ծովեղրն ժողովեալ մըշակքն, որ ակն ունին նաւէն պիոն հաննն և շալակեն տանեն ցամաքն։

51բ //Վասն նորայ տեղին անու[ա]նի Կէլի Գաթ։ Բայց չետոյ Ինկլիղն անուանեց Կալկաթայ կամ Պրնկալ։ Ինչ և իցէ, Կալկաթայ բազմութեամբ ժողովրդայց և լի յամենայնիւ քաղաք հարուստ։ Եւ ի ներքոյ տէրութեան Ինկլիացուց։ Բայց այժմս լի են յամենայն ազգաց և ազանց։ Նախ ազգ Հընդու կռապաշտ և ազգէն մահմէդական և ազգէն Չինացուց, որ կոչի Չընէզ։ Եւ այս Չինէացուց աշխարհն թէպէտ ես չեմ տեսեալ, որ կոչին Չինումաչին, բայց Չինէացուց մարդն և կինն տեսեալ եմ աչօքս։ Չինու մարդն բսպետակ և ճարմակ, ունքերն անմազ և աչկերն փոքր փոքր և բիբն տապակ, ամենևին անմրուս, նըման կանայց։ Եւ հեր գլխոյն նոցա մի միյն ծամ հաստ և կանկնաշափ երկայն որ և փաթաթին և կապին մէջկն իւրեանց, և ոմանք կապին գլխին։ Եւ յօրժամ կռիւին ընդ միմեանց զայն մազօվն ծեծին միմեանց։ Եւ պատուճանն է միայն շապիկն և վարտիկն և ամենևին սուր ու զէն ոչ առնուն ի ձեռս իւրեանց։ Եւ յօրժամ հարկանին միմեանս զայն ծամն, որ կապեալ են ի մէջկն, այնու հարկանին։ Ոչ քարօվ և փայտօվ և ոչ սրօվ և ոչ ապտակօվ ոչ հարկանին, այն է սօվորութիւն իւրեանց։ Եւ կերակուրն Չինէացուց է զսկսբան շան միս և խօզի միս և յորթն և իժ և քարպից և օձ ամենայն սողունք,

52ա որ սուղին ի վերայ յերկրի, զայն է կերակուր նոցայ։ //Եւ ընպելիքն նոցա յամենայն ժամ չահ[179], որ զայն չահօվն մարսին կերակուրն։

---

174 Լուսանցքում նույն ձանոթագրողի կողմից «Ապաստանարան և յակաստանի (կարդա «յապաստանի») լինէր ասա առ իշխանութեամբ Հօլանդացուց, ոչ քրէական յանցապարտից առհասարակ, այլ պարտատերց և դատապարտից, զոր բարձրեալ զկնի իշխանութեան Անգլիացուց։ Սղալ է տպագրութիւն Աստուածաշնչի ասա, զի տպեցաւ Աստուածաշունչ ի Սիրափուր ընդ իշխանութեամբ Դինամարգի, որ զարևելս է Անգլեական իշխանութեան իբրև 6 մղոնաւ հեռու ի Չիշրայէ առ երդն Կալկաթայ»։

175 Հաջորդ էջի սկզբում, էջի մեկ երրորդի չափով բաղաքի գունավոր համայնապատկերը։

176 Կուլի—ծառա, մշակ։

177 مزدور — վարձու բանվոր։

178 فعلة — բանվոր, մշակ։

179 Թեյ։

Եւ զարմանալի հարհնաուսուր լինին Զինէացիքն, և ոչ թողէն օտար մարդ ի տես արհնատին և ունեն հատուկ թագաւորութիւն և զօրք· Իւրեանք ամենևին ոչ հընազանդին այլոց, բայց Ֆռանկ պատրիգն միշտ անպակաս լինին և քարոզին։ Բայց ես լսելօվ լսեցի Թիւն փրկչին 1819-ին և Հայոց ՌՄԿԹ.ին Զինէացուց թագաւորն Քրիստոսի աստուածութիւնն հաւատաց, բայց չհաու մեծ առնահեղութիւն կռիւ եղև ընդ Ինկլիացուց. այնպէս մնաց։

Եւ եկեսցուք պատմութիւնն Կալկաթայ։ Կալկաթաս է մայրաքաղաք մեծ և լայնատարած, երկայնութիւնն հինգ աւուր ճանապարհ է և լայնութիւնն աւուր միուչ։ Եւ է ի ներն չիշնալ Գնգայ գետին։ Եւ այս Գընգայ գետն ելանէ ի կողմանցն Չէնացուչց և տարածէ ի կողմն Ղալմուխ եւ Ղաշղար և պատէ Թուրք և իջանի Սամարղանդ և ելանի Հընդիկս, բայց ակն ոչ ոք չէ տեսեալ։ Այս այն Գնգայն է, որ գայ ի մէջ Կալկաթոյ ընթանայ և երթայ անկանի օվկիանոս ծովն։ Եւ Կալ-
52բ կաթուց մինչև //ծովն ցամաքօվն հինգ աւուր ճանապարհ է։ Միայնդամայն քաղաք է երկոց կողմանց գետի յայսկուս և յայնկուս։ Եւ ի մէջ գետին անհամար նաւք թէ Եօրօրայցոց թէ Զինէացուց, թէ Արապացուց և կռատացոից և ամենայն հեթանոսաց։ Զորս կողմանց աշխարհիս նաւքն, մարդն և ապրանքն Կալկաթայ պատրաստ են ամենայն ժամ։ Ինկլիացոյց աշխարհն Լօնդան է. տեղի նաև գայն։ Եւ Ֆռանկսիզի աշխարհն Փարէզն է. տեղէն նաւք գայն։ Այլ Զինամաչինու և Մանիլուց, Բադհաւուց[180], Պլալանկուց[181], Փէկուց[182], Հաւուց[183], Պրթթալուց, Հապաշուց եւ Մարուց, Կոստանտնուց պօլսուց, և Ուռուսաց աշխարհէն, այլ և Պապէլացու աշխարհէն, այսոքինքն Բադդատուց, Բասրաուց և ամենայն Արապացուց աշխարհէն և Պարսիցացուց աշխարհէն, այլ և ամենայն բանդարու[184] նաւքն և ապրանքն և մաթահն[185] գան և բերեն Կալկաթայ, և ամենայն աշխարհաց վաճառականն գան վաճառին և գնեն և Կալկաթու ամեն ազգաց պատարն հատուկ հատուկ և զարմանալի մարմնաւոր գանձս աշխարհիս անդ է։ Ես որն ասեմ և որն թողում, ով աչօքն տեսանի՝
53ա ապա որչափ կարող է գրի։ //Եւ գան մեր Հայոց ազգէն Կալկաթայ բազումք իշխանք բարեօք վայէլչութեամբ մարմնաւոր կենցաղաւորութեամբ և ամն վաճառականք և ամն արհնատուորք և ամն ամանց օգնական և ամն եկեղեցական, ամն վարժապետ և ամն տպրապետ ամն գրագիր և ամն ինկրիզէվար, ամն հայէվար և ամն լէյամարան[186] և այլ ըստ կարգի ամէն մարդ ըստ իւրաքանչիւր պաշտօնի հաստատ։ Բայց Ինկլիզ ազգն ոչ սիրէ Հայոց ազգին և ոչ թողու մի քաղաքում յաւել քան զերկոյ հարիւր տուն Հայոց ազգին և ոչ կամի հարուստա-

180 Կարդա՛ Բաթավա։
181 Գուցե Ֆիլիպիններ։
182 Անհասկանալի։
183 Թերևս Ճավա կամ Ցավա։
184 Նավահանգիստ։
185 متاع — ապրանք։
186 Անհասկանալի։

նալ Հայոց ազգին և ոչ թողուլ ի պալատն թագաւորին իւրեանց և ոչ տալ իշխանութիւն Հայոց ազգին, այլ առաւել նախանձի ընդ մեզ և ծաղր առնէ զմեզ, ասելով, ինչ արհնաւ ունիք և ինչ գիտութիւն, որպէս ասեր Տէրն՝ այս ազգս շնացող նշան խնդրէ։ Ապա ուրեմն և մեզ հարկ է և ոչ սիրել զնոսայ։ Թէպէտ ասեց Տէրն մեր Յիսուս Քրիստոս՝ սիրեցէք զթշնամիս ձեր։ Ապա Ինկլիզ ազգն ոչ գաւառին առնուլ զմեզ, այլ ուր ուրեք տեսանեն կամ ծաղր առնեն կամ վնասին զմեզ։ Ինչևիցէ աստուած ողորմած է։ Եւ Կալկաթայ Հայոց ազգս ունեն հաստուկ սուրբ եկեղեցիս ուղղափառաց, միաբանս, վարժատունս, վարժապետս և տպրապետս և տպրատունս և այլ ամենայն բան կարգի։ Ահա այս է Կալկաթուց պատմութիւնն։

53բ //Ահա այս է Պանկալայ որ կոչի Կալկաթայ։ Ի ներքոյ քաղաքն և նաւերն տես։ Եւ Գնգայ գետն տեղս վերջացաւ[187]։


54ա //Այս Կալկաթից մինչև Մադրաս երիք ամսական ճանապարհ է չորօվ, այսինքն ցամաքօվ գնան և ի նոր ծովին օվկիանոսի։ Միշտ պատահի եղերքըն ծովին ի գիւղս և քաղաքս բազումս և որոց առաջին է Մէյդինփուռ քաղաքն։ Մինչի Կալկաթայ հինգ աւուր ճանապարհ է։ Եւ այս Մէյդինփուռս ի աշխարհս Հընդկաց Պանկալայ կոչնցելոյն կավառ և է քաղաք Հընդուի և բնակեալքն պանկալու խօսին։ Եւ քաղաքն է ոչ մեծ, բայց է տէրութիւնն Ինկլիացոյց ընդ նմին բանակն և զօրքն ամենայն բան կարգի պատրաստ և բղդատուրս բան կանոնացն։ Նաև Մէյդինփուռս պաղարս և առուտուրս և ամենայն բան կարգի սովորութիւն կրթապաշտի իւրեանց։ Եւ Մէյդինփուռս է միջի անդառի ծառախիթ և ի նոր գետի մերձ։ Նա ևս քաղաք փոքրիք

54բ զոր տեսանես ի ներքոյ[188]։ //Այս Մէյդինփուռից մինչև Քաթակ հօթն աւուր ճանապարհ է։ Քաթակ քաղաք է մեծ և անուանի ի եղրն Մայի գետին։ Այս այն Մայի գետն է, որ Հընդուց ազգն պաշտին որպէս Գրնգայ գետն, որ ասին Գէհօն, և յորժամ երդնուին բոլոր ազգ կռապաշտին այս ասին, թէ վկայ է Գրնգայ Մային։ Հասարակաց երդնուն այս է։ Այս երկուց գետն պաշտին և սիրեն Հընդկուք։ Եւ Գրնգայն յիշեալ Կալկաթայ վերջանայ և անկանի օվկիանոս ծովն։ Եւ այս Մայիս այս Քաթակ քաղաքս անկանի նոյն ծովն։ Եւ Քաթակս է ի աշխարհս Հընդկացոյց։ Բայց առաջ էր տէրութիւնն Մարաթայի, յետոյ Ինկլիացոյց ազգն տիրեալ են և կան այժմ ժամանակիս և ունեն ի ներքոյ տէրութեան իւրեանց և զօրք իւրեանց յամենայն պատրաստութեամբ իւրօք և իշխանութեան իւրեանց։ Եւ Քաթակս է ի մէջ երկոյ գետի, որ ի կողմանց Մարաթայի իջեալ գայ անցանի երթալով անկանի օվկիանոս ծովն։ Եւ Քաթակ պաղարս առևտուրս բազումս, նաև պաղս, ծառս։ Այսպէս յամենայն բան կարգի և բնակեալքն Պանկալու խօսին։ Եւ Քաթակս ի մէջի երկոյս գետիս և յայս[կ]ուս և այնկուս ծառ ու տունկս և քաղաք երկայնաձեւ։ Զոր տե-

55ա սանես ի քաղաքն Քաթակ ի ներքոյ նախ գետն և ապա քաղաք և ի

187 Ամբողջ էջի վրա քաղաքի և նավահանգստի գունավոր նկարը։ Նկ. 3։

188 Էջի մեկ երրորդի վրա քաղաքի գունավոր համայնապատկերը։ Արտաքին լուսանցքում նույն ձանոթագրողը ավելացրել է. «Այժմ շոգենաւու միջոց գնալոց ի Կալկաթայ է առ Մադրաս 4 աւուրս և շոգենաւօք ի Բոմբայեայ 6 աւուրս»։



Ил. 3

միուս գետն ի ծախակողմն քաղաքի, որ է Մայի[189]: Այս Քաթակիցս մինչև Ճկռնատ երիք օրէն ճանապարհ է: Ճկռնատ է ընդհանուր կուռապաշտի ուխտատեղն, որ ընդհանուր աշխարհից գոմարեալ ազգ և ազնիս Հընդուքն գան առ ի զիարաթ[190] Ճկռնատին: Այս է գլխաւոր ուխտատեղն բոլոր Հընդու ազգին, որ պաշտին զնաց առաւել քան զԳրնգայ և զՄայի: Յորժամ ես եկի Ճկռնատ քաղաքն պատահեցայ և հօքն օր տեղն մնացի և ամեն որպէսութեանն կանոնաց նոցայ տեղեակացայ: Եւ աշխարհից Չինումաչինու եւ Հաւոյ և Փէկույ և Մանիլույ և Պանկալույ և բոլոր Հընդստանուց բան կրօնաց իւրեանց մարդիկ և կանայինք եկեալ պաշտէին Ճկռնատին և ջոյր բերէին Գրնգայ գետէն և ցանէին ի վերայ նորա և ասէին՝ Տրախտի
55բ ջոյրն այս է, և Ճկռնատս է// յինքն տէպ գեոյ և կերպ մարդոյ նմանութեան սատանայի և կայ կանկնեալ հօքն կանկուն մարդոյ, և պատկերն նորա այլակերպ և տեսէլն նորա զազրալի, և աչկերն նորա զըմրուխ կամ նաղուքի և ամենայն ակամբ զարդարեալ իրրեւ զգեստ վառեալ և առամունք նորա բաց, ճրնկունաց այլապէս, վասնորոյ Ճկռնատ կոչին անուն նորա: Եւ երկոյ հարիւր չիսուն միարան ունին և հարիւր քառասուն զանկակ և իննհարիւր զօմբէթ, բակիկ մեչնաց: Եւ տեղի կերակուրն տաննն ընդ ամենայն աշխարհն իւրեանց: Եւ Ճկռնատ է հայր ամենայն գեաց: Եւ առաջի անունն նորա էր Պուրի. իրր Թարբմանի յարեալ: Եւ Ճկռնատ իրրև մեծ, ապա շուրջ ըղնօվաւ անկեալ լայնատարած քաղաք է և բոլորն Հընդույ ազգէն: Եւ քաղաքն ի ներն ծովին, այլ՝ է մի բարձր բակին և ի վերա նորա ճրակարան, որ գիշերայն ժամու վառին և նաւավարք ի մէջ ծովուն տեսանին և այնոյ վարին գնաւս իւրեանց: Եւ Ճկռնատս է քաղաք մեծ: Եւ ունին պազարս, առևտուրս, և ամեն բան կարգի կանոնաց իւրեանց: Եւ տէրութիւնն է Ինկլիացոյց իշխանութեան: Ինկլիզի բանակն և զօրքն ամենայն պատրաստութեամբ հանա[ա]պազօր տեղն կան: Եւ ահա Ճկռնատ և իննհարիւր զօմբէթօվն և քաղաքն և ծովն և ամենայն բան կարգին տեսանես ի դիմաց ի վերն, բայց մեք կարճառօտ պատմեցաք և դուք բաղում չիմացէք[191]:

56բ //Այս Ճկռնատից մինչ ի Պալասար չորս օրէն ճանապարհ է: Պալասար է ի ներն նոյն օվկիանոս ծովին գիւղայքաղաք մի, և Ինկլիացոյց բանակըն գնտեղեալ կան այնդ: Եւ Պալասար փոքրիկ նրստացուած բնակութիւն է, բայց քաղցրիկ տեսլեամբ: Գետինն կանաչախառ ծաղկալի և առատապուս չամենայնիւ: Եւ գեղեցիկ արհեստաւոր պղնիձի և այլ: Եւ տէրութիւնն է Ինկլիզի: Բանակն և զօրքն ամենայն պատրաստութեամբ կան միշտ տեղն: Պալասար տես ի ներքոյ և Ծօվն[192]:

57ա //Այս Պալասարից մինչի ի Կանջամ երիք օրէն ճանապարհ է: Կանջամս է ի աշխարհն Հնդկաց, ի երկիրն Դաքանայ, ի ներն նոյն օվ-

189 Էջի մեկ երրորդի վրա քաղաքի գունավոր համայնապատկերն է:

190 Ուխտագնացութիւն:

191 56ա էջն ամբողջ քաղաքի և կռատան գունավոր նկարը:

192 Էջի կեսը քաղաքի գունավոր նկարն է, որի ներքևում, ձախ կողմում գրված է «Ծօվ օվկիանոս», իսկ աջում՝ «պալատ դատաւորաց»:

կիանոս ծովին: Եւ Կանջամա է շատ հին քաղաք յառաջնոց շինեալ նախնեացքն Հընդկացոյց, թէպէտ լայնատարած քաղաք է, բայց մասն երկոյ է. աւերակ քաղաքին և փոքր մասն շէն և գեղեցիկ: Շաբաթ և նապատա Կանջամայ գլանէ: Եւ տէրութիւն է Ինկլիացոյց: Եւ է նաւահանգիստ: Եւ ամեն պատրաստութեամբ զօրօք իւրեանց կան Կանջամ և լիութեան յամենայն իրօվ: Այլ ազգ մի կայ, Ուրեայ ասին նորա, զարմանք է, բարերարն աստուած անչափ գեղեցկութիւն նոցա պարգեւեալ է թէ կինն և թէ տղայն և թէ մեծ և թէ փոքր: Բայց հաւատն նոցա է շնայպաշտութիւն, որ մեղաւորս պատահեցայ և տեսայ ճանապարհին շնապաշտութեամբն նոցա, զարմացեալ մնացի, հիացեալ: Այսպէս էր շնապաշտութիւնն այնոցիկ, որք էին ազգ Ուրեայք: Շաբաթի մի օրն, երիզշաբթի, բոլոր ազգն Ուրեայքն մեծամեծք և փոքրք, արանք և կայնայք և ամեն արհեստաւորք, անուշահոտ կերակուր եփին և պատրաստին, աղարկին գեղէն դուս, անապատ տեղն, ի ձեռն կոյս աղջկանց և տղայի և ձայնին շանց, և ժողովին շունք, և տան շանց և ըստ օրինաց իւրեանց օրհնին և աղօթին կերակուրն և ապա թողին երթայն ամենք ըստ իւրաքանչիւր տեղն: Ես խօսեցայ հարցանելով, ընդ նոսա ասելով. Ընդէր այդպէս առնիք: Եւ ասէցին. Իբրև դէւ մի է այս լեառն, որ մենքն պաշտեմք,

57բ //մեծ դէւ է և միշտ երևայ մինչև քարոզի մեզ ահացուցիչ բարբառով, թէ շունքն պաշտէք և պատուէք և կերակրէք ըզնոսա, թէ ոչ մահ առաքեմ ի վերայ ձեր: Եւ մեք ի երկիւղէ նորա պաշտեմք շունքն, որ և աստուած հեռի արասցէ ամենայն հաւատացելոց. ամէն: Եւ Կանջամ քաղաքն է այսպէս, որպէս տեսանես ի ներքոյ և ծովն[193]:

Այս Կանջամից մինչև Բրամփուր մէկ օր ճանապարհ է: Բրամփուր է ի աշխարհն Դաքանայ՝ ի հողն Մարաթայի, որ յառաջ էր տէրութիւն յիշեալ Մարաթացոյց: Եւ յայժմս Ինկլիացիք տիրեալ են Բրամփուրս, ի ներքոյ իշխանութեան կացուցեալ, և ամեն զօրօք


58ա իւրեանց պատրաստ տեղն// և բանակն Ինկլիացոյց, այսչինքն կոշին չաւնի: Եւ Բրամփուր է ի եղր ծովին օվկեանոսի: Եւ բնակիչքն են ի ազգէն Ուրեացոյց և հաւատն նոցայ շնապաշտութիւն, զոր վերն յիշեալ եմք, բայցի քրիստոնէից: Եւ Բրամփուր քաղաքս պաղարս և առուտուրս և ամեն ըստ կարգին մանաւանդ Ուրեացոյց գեղեցկութիւն անուանի է: Եւ Բրամփուր ոչ մեծ քաղաք է այլ և գեօղաքաղաք, զոր տեսանես ի ներքոյ[194]:

Այս Բրամփուրից մինչի Իջանկար երիք օր ճանապարհ է: Իջանկար քաղաք է Նապապին, այսչինքն ի ազգէն մահմադական և հեռի է ի ծովէն երիք ժամու ճանապարհէն: Իջանկար մեծ անուանի քաղաք է եղեալ յառաջագոյն և էրն Մարաթայի հող՝ Դաքան կոչեցեալ աշխարհումն: Այժմս ազգն Ինկլիացոյց տիրեալ են ի ներքոյ իշխանութեան իւրեանց: Նըմնապէս տէրութեան բանակն և զօրք և ամենայն պատրաստութեամբ միշտ կայն տեղն, բայց Նապապն, որ

58բ է մահմադական ազգէն, անդ է // բնակեալ և ամեն հարստութեամբ

193 Էջի մեկ երրորդի վրա քաղաքի դունավոր նկարը:

194 Էջի մեկ երրորդի վրա քաղաքի դունավոր նկարը:



Նկ. 4

և օվկիաթով իւրով և հրնագանդ տէրութեան Ինկլիացուց։ Իջանկարս քաղաք է հարուստ և լի ամենայն բարութեամբ։ Պազարս, առուտուրս և ամենայն բան կարգի իւրեանց։ Եւ առ ազգէն մամադական բազմութիւն բնակեալ են, այլ և խաժամուժ ազգ հեթանոսաց բազմութիւն։ Եւ Իջանկար քաղաքս տեսանես ի ներքոյ[195] Այսյինքն Իջանկարից մինչև Րրաջապանդար երիզ աւուր ճանապար է։ Րրաջապանդար է ի աշխարհ Հրնդկաց և ի Դաբան կոչեցեալ աշխարհն ի յերկիրն յիշեալ Մարաթայից։ Եւ Րրաջապանդար է ի եղր գետի միոյ և հետի ծովէն մի աւուր ճանապարհ և գայն իջանի ի կողմանց Հէտապատատ յերկրէն և ի լերանցն Դաբանայ, որ ակնալ հասանի Րրաջապանդար և երթայ անկանի օվկիանոս ծովն։ Եւ Րաջապանդար է տէ-
59ա րութիւնն Ինկլիացոյց, բայց ասա ոչ է բանակն Ինկլիայցոյց //քանզի Րրաջապանդար ռաջայի յերկիր էր։ Յառաջ էր մեծ ռաջայ, այսյինքն մալիք և տէր աշխարհին յայնմիկ և այժմ տիրեալ է Ինկլիզ ազգն։ Եւ Րրաջապանդար հին քաղաք է եղեալ առաջնոց և այժմ մին մասամբ աւերակ է։ Եւ Րաջապանդար պազարս և առուտուրս և ամենայն բան կարգի իւրեանց։ Րաջապանդար փոքրիկ քաղաք է որ տեսանես ի ներքոյ[196]։ Այս Րաջապանդարից մինչև ի քաղաքն Ելօր և երիք աւուր ճանապարհ է։ Ելօր է ի աշխարհն Հրնդկաց, Դաբան յերկիրն կոչեցեալ, ոչ Մարաթայի, այլ Թուլնիկիայի։ Թուլնկի ազգ է Հրնդու, բայց այլ է հաւատն նոցա որպէս Հրնդուստանին։ Այլ է նրմանատես և լեզուն, ևս հաւատն։ Եւ նրմանատէս Պանկալին այլ է հաւատն և լեզուն։ Նրմանատէս Մալվարին այլ է հաւատն և լեզուն։

195 Էջի մեկ երրորդի վրա քաղաքի դունավոր նկարը։ Նկ. 4։


196 Էջի մեկերորդի վրա քաղաքի դունավոր նկարը։

Նըմանապէս Բարմային այլ է հաւատն և լեզուն: Նըմանապէս Չինէզն այլ է հաւատն և լեզուն: Նըմանապէս Շամին այլ է հաւատն և լեզուն: Նըմանապէս Մալային այլ է հաւատն և լեզուն: Նըմանա-
59բ պէս// Ճուլիային այլ է հաւատն և լեզուն: Եւ Ճուլիայ ազգն ականս պատուականս ճանաչեն և դինս ականց: Գործս իւրեանց այն է, առնոյն և վաճառէն: Նըմանապէս և Թուլնկին այլ է հաւատն և լեզուն, բայց ամենեքեան Հընդու են և կուռքապաշտ և միմիանց հաւատին ոչ հաւանին այլ անարգին ըզմիմիանց: Եւ Թուլնկին ահրէ լինի և արհնատուր: Եւ Թուլինկիէվար խօսին ամենեքեան: Եւ Նլօր քաղաքս է ներքոյ իշխանութեան չիշնալ Ինկլիացոյց, բայց գոյ տեղս զօրք ոչ թէ մըշտնջաւօր, այլ երբեմն լինի՝ երբեմն ոչ: Եւ նլօր պաղարս և առուտուրս և խաղաղութիւնս ամենայն ըստ կարգի իւրեանց: Եւ նլօր տեսանես ի ներքոյ[197]:

Սկս նլօրից մինչև Մաչլիբանդար երիք օրէն ճանապարհ է: Մաչլիբանդար է ի աշխարհն Հընդկաց, ի երկիրն ոչ Մարաթայի, այլ մերձ Չինափանայ, այսինքն Չինաւիաթանայ, ի աշխարհն Թուլնկի, որ չիշնալ նմք վերն: Եւ Մաչլիբանդար թարգմանէ ձկան բանդար: Մաչի ասէն՝ ձկան ասի Հընդուն: Խնդրօվս լուեալ եմ, որ այս Մաչլիբանդար յառաջագոյն ձուկ մի նլալ է ի ծովէն նորն ծովին: Պատմին թէ այն ձուկն, որ նլաւ ի ծովէն պատճառն զայն, որ ծովն բարձրա-
60ա ցեալ էր և էր// ալէգոծեալ և մրրկեալ և փրփրեալ ծովն անհնարին և էր ժամանակն յուլիսի ամսին, և ծովն հանեալ էր ձուկն ի տուս, բայց տուսն ձկան դեռ ևս էր ծովումն և Հընդու ազգն ըստ օրինաց իւրեանց գրեալ են, թէ զայն, որ երևելի տեսաք, քառասուն կապ երկայնութիւն էր և աներևութիւնն աստուած գիտէ: Եւ բազմութիւն ժողովրդականաց նկեալ էին անդ և զարմացեալ ժողովրդոյց սպասակէին սո աստուած և բարող կարդային և ասէին ամեն ազգ և ազինդ տեսէք բսկանչելիս աստուծոյ: Եւ հրամայեցին ամենեցուն, թէ կարասեցէք ձուկն և տարէք և կերէք: Գրեալ է, թէ վեց ամիս տանում էին ձկան միսն և ճարպն սարուն նիէին՝ դեռ ևս կայր: Եւ գլուխ նորա բերին առաջի դատաւորաց և գազաթն բազմացուցին ի վերայ դրանն քաղաքին, վասնորոյ կոչեցին անուն տեղոյն այնորիկ Մաչլիբանդար: Եւ գազաթն մինչև ցայժմ կայ տեղն. և Մաչլիբանդար, որ թարգմանի ի մեզ՝ ձկան բանդար: Եւ Մաչլիբանդար անուանի քաղաք է, որ զալմաքար ճոթն[198] տեղէն նլանէ և սպռէ բոլոր աշխարհս, և ամենայն աշխարհից վաճառական դան տեղն և միշտ լինին: Ճամն շատ սիրի զալմաքար ճոթն: Եւ Մաչլիբանդար լայնատարած քաղաք է եղեալ, բայց այժմ աւերեալ, մին մասն մնացեալ է և ի ազգէս մերմէ բազումք են եղեալ տեղն յառաջ և այժմ սակաւ: Եւ Մաչլիբանդար է ի եղր ծովին օվկիանոսի և տէրութիւն Ինկլիացոյց: Եւ ամուր բերթ է շինեալ Ինկլիացիք ի եղր ծովին, քանզի նաւահանդիստ է: Եւ տէրութեան զօրքն և բանակն է անդ և ամեն պատրաս-

197 Քաղաքի փոքրիկ գունավոր նկարը:

198 Դաջած կաղր:



Նկ. 5

60բ տուիճամբ ամենայն ժամ տեղն կայն[199]։ //Եւ Մաչլիբանդար գեղեցիկ քամբարոյ[200] եւանէ, որ անուանի է տեղի քամբարոյն և թութունն, այսյինքն թուրքերէն բորնօթի[201] կոչեն և այս բորնօթին շատ օգտակար է մարդոյս և տանին ամեն աշխարհս։ Եւ Մաչլիբանդարիս երկոյ իր գովելի է, մինն բորնօթին, մինն զալամքար ճոթն, յամենդոյնից զալամքարն։ Նաև Մաչլիբանդար պաղ և պաղաթ և մեծամեծ ծառս այլ և պազարս, առևտուրս ըստ յամենայնի կարգի իւրեանց։ Եւ այս է Մաչլիբանդար քաղաքն, որ տեսանես ի ներքոյ[202]։

Այս Մաչլիբանդարից մինչի Մադրաս երկոյտասան յաւուր ճանապարհ է։ Այս Մադրաս անունն սորա Չինափաթան է, յետոյ Մադրաս կոչեցին։ Մադրաս է ի աշխարհն Հընդկաց ի եզր նոյն օվկիանոս ծովին։ Եւ սա մերձ ի յերկրին Դաբանայ։ Բայց նախ ոչ էր տէրութիւնն սորայ Մարաթայի, այլ էր Թիփոյ սուլթան թագաւորին և յետոյ եղև տէրութեան Ինկլեացոյց, որ վարին այժմս Ինկլեացիք։

61ա Եւ պատմութիւն Թիփոյ սուլթան թագաւորին // որ էր գրօնից մահմադական և էր թագաւոր և սուլթան և դատաւոր Չինափաթան, որ կոչեցին Մադրաս։ Եւ էր սա ինքնակալ և ոչ ոք չէր, որ իշխանութիւն ունենէր ի վերայ սորայ և բարեկամ էր ընդ աղգի Ֆռանկսիզի, և Ֆռանկսիզի վաճառականքն տեղս բազումք եկեալ էին Չինափաթան և էին միմիանց սիրելի։ Յորժամ Ինկլեացիք զօրաւիկ եղան եկեալ ընդ Ֆռանկսիզի կռվեցին և յաղթեցին Ֆռանկսիզին և

199 Հատանցքում համառոտ ծանոթագրություն. «Ի Մաչլիբանդար չիք այժմ հայ և ոչ մինս»։

200 تنبا كو — Հատուկ ծխախոտ նարգիլեի համար։

201 برون اوتی — բիախոտ։

202 Էջի մեկներորդ քաղաքի գունավոր նկարը։ Նկ. 5։

վանեցին և տուս արարին Յոանկսիզին և մնաց Թիփոյ Սուլթան
Բագաւորն չհանապանդէց Ինկլիզին և սկսեց կռվել ընդ Ինկլացոյց։
Եւ այս Մադրաս կոչեցեալ Չինաւիթանս է ի եզր օվկիանոս ծովին
և Ինկլեացիք այնչափ պատիրազմեցան և նաւք բազումք բերեալ
էին։ Ինկլիացիք Թօք հարան մինչի հընազանդեաւ Թիփոյ Սուլթան
Բագաւորն։ Ինկլիացոյց գրէթէ 12 նաւ ակն պատուական այսյինքն
ջաւահիր բարձան Ինկլիացիք, բայցի ոսկի, արծաթն, և Թիփոյ Սուլ-
թանն սպանեցին և մանկունքն գերեցին նրմնապէս և յամենայն ըս-
տացվացն և տունն աւարին և ընտանիքն ցիր և ցան արարին, և ամեն
ինչ նորայ կողոպտեցին և արարին որպէս և ոչ է և ոչ երևի տեղի
նորայ։ Բայց յետոյ գերիքն դարձուցին և այժմս կան Թոռունք
Թիփոյ Սուլթան Բագաւորին և հընազանդեն Ինկլիզին և Ինկլիացիք
անբնակ են ոչ միայն Չինաւիթան, բոլոր Հընդկաց աշխարհն և
բազմութիան զօրք ընդ բանակն և մեծամեծ իշխանք որ բարբառօվն
իւրեանց կոչին լարդ, ընդ ամուր պերթօվ միշտ կայն պատրաստ
ընդ կանոնաց իւրեանց և իշխանութեան իւրեանց, ըղտէրութիւն իւ-
61բ րեանց անուն։ //Եւ արդ ծովընթեր քաղաքս Չինաւիթան որ և Մադ-
րաս կոչեցեալ, յայնասարած և մեծ քաղաք է։ Երիս յաւուր ճանա-
պարհ երկայնութիւն և երիս աւուր ճանապարհ լայնութիւնն։ Եւ մերձ
Սէյլան լիառն որ է ի մէջ ծովին։ Եւ այս Սէյլան լիառն գոյացեալ է
ի պորան բոլոր օվկիանոս ծովին և ի ամայ է ակունք պատուականք,
նաև սէյլան, որ է գոյն եաղութի, և նիլում, որ գոյնն կապուտ է, և
փադրազ, որ գոյնն դեղինն է, և սպիտակ եաղութ, որ գոյնն ալմասի
է։ Նաև մարգարիտ կլանէ ի ծովէն մերձ ի լիառն Սէյլանայ, բայց ոչ
անչափ գովելի որպէս արաւպացւոց ծովէն այսյինքն Բահրէնի որ
մերձ է Աբուշահրայ և Պասրայ։ Դարձեալ Սէյլան քաղաք է և վա-
ճառականք երթայն անդէն գնին ջաւահիր և բերեալ և Չինաւիթան
վաճառին։ Մանաւանդ Մադրասուց կլանէ դեղացիկ բարակ խասայ,
ճոթանկ, մալմալ և այլ և սատրասին և առաւել քան զայս, որ
ոչ է ժամանակ մասնամասարար գրելոյ։ Այլ և Չինաւիթանաս
լինի անչափ շոր և տաք հօտ և դառն հողմս։ Եւ քաղաքն լի են յա-
մենայն ազգ և աղանց և մանաւանդ Բըրթկալ ազգէն որ կոչի Բըրթ-
քէշ։ Եւ այս Բըրթքէշ ազգս քրիստոնեայ են, բայց սևագոյն։ Սոքայ
ևս Յոանկ են։ Բազումք են ազգէս յայսմանէ տեղս։ Ունեն հաւատ
եկեղեցիս, ծհանայս և սոքայ են, որ Աւագ Ուրբաթի աւուր երիկոյի
ժամին քրիստոս երկին պատկին միշօք և խաչն բառնան ի վերայ նո-
րայ և շրջեցուցանեն քաղաքն, ապա դարձեալ խաչին և Յաղեն ասե-
լով Թէ այսպէս է եղեալ Քրիստոս յաւուր խաչելութեան իւրոյ։ Բայց
62ա մեզ խոտելի է այս բանս։ //Եւ այս այն Չինաւիթան քաղաքն է զոր
սրբազան Թօմայի առաքեալն եկեալ ասա քարոզեաց և շաւուղ դար-
ձուցեալ ի հաւատս քրիստոնէութիւն որ մինչի յայժմս կայն ի նո-
ցանէ, որ ասեն Թօմայի, բայց սևագոյն են և են ի կրօնից Յոանկաց
և սրբազան Թօմայի առաքեալն պաշտին։ Եւ սուրբ վանքն տեղս է,
որ ասին Մեծ Մունէ և Փոքր Մունէ։ Եւ մեր Հայոց ազգիս տեղս բա-
զումք են Թէպէտ յառաջ բազումք են եղեալ այժմս վասն մեղաց մե-
րոց նւազացեալ են սակաւ։ Եւ առաջ որ էին պայծառ և հարուստ

քան զամենայն աղգս և մարմնաւոր կենցաղաւարութիւնամբ փայլման ի մէջ ամեն ազանց և շատ աղգասէր և հիւրասէր, որ յամենայն աշխարհից աղքատք և անճառք և գերիք և ամեն աշխարհաց ժողովարար քրիստոնէքն գային տեղս առնուին և լիանային և ամեն խնդրվածս կատարէին, բայց նւազ են ի Մադրաս այժմս ի աղգէս մերմէ, և ունեն հատոկ սուրբ եկեղեցիս ուղղափառաց նաև քահանայք և ամեն քան կարգի կանոնի Լուսաւորչածին զաւակաց մանաւանդ մանկաց վարժատուն կարգեալ որ և աստուած հաստատուն պահեցէ: Ամէն: եւ Չինաւիաթանս բազում պաղ պաղաթս, ծառս և ամեն շինուիթիւնս, բայց պտուղ սակաւ և եղեալն շատ գնօվ հազիւ գտանի: Հաց, գրինձ, ոչխար և ամենայն կերակուր սակաւ և թանկութիւն: Մանաւանդ ջոյրն սակաւ և յերկիրն միայնդամայն հող և աւազ և շոր: եւ է Չինաւիաթանս նաւահանգիստ և նաւագնաց և ծովբնթիր և ամեն աշխարհաց նաւք գան տեղս նրման չիշխալ Կալկաթոյ: եւ անհամար պազար և առուտուր լինի Մադրաս և Հընդու ազգն
62բ մալվարի և Թուլնկի խօսին: //եւ քէ կամենաս գտանկերն Մադրասոյ տեսանել ահա տես ի ներքոյ քաղաքն և ծովն օվկիանոս եւ Չինաւիաթան[203]:

63ա //Այս Մադրասոյ մինչեւ Փէկոյ՝ ծովօվ, քանզի նաւայլքն գնան, քան օր յաւել պակաս աստուծոյ է դիտելի: Փէկոյ է Մաչին որ ես իմ աչօքս տեսայ եմ Փէկոյ: Առաջի անունն սորայ էր Ռանկուն, յետոյ Փէկոյ կոչեցաւ: Փէկոյ ի աշխարհն Մաչինայ ի յերկիրն Պարմայի և ի հողն Մաչինայ, որ աստից մինչև Չին երիք ամսայ ճանապարհ է և սորայ թագաւորն է հաւաք և ի հնազանդ Չինու թագաւորին: եւ Ինկլիացիք չեն տերեալ տեղս, քանզի շատ հեռի է Հընդստանէն: եւ Փէկոյ է ի նգր քաղցր գետի որ իջանէ ի կողմանէ Մաչինոյ և ի Հաւոյ: եւ քաղաքն շինեալ է ի մէջ անդառի և տղմի և հեռի ծովէն վեց յաւուր ճանապարհ: եւ բնակեալքն ի ազգէն Մարվայի կամ Բարմայի և Մաչինի խօսին և Ինկլիացիք չէ բնակեալ անդ: եւ կերակուրն շան միս և ձուկն հոտաց և գօրքն և հորթն և օձ և ամեն սողնոց և գեղնոց և ամեն գազան որ ի վերայ աշխարհիս: եւ հաւտան նոցա կուրապաշտ: եւ չարսուի[204] և պազարի և քաղաքի դուքանդարն[205] և սօվդաքարն[206] և սառափն[207] և առևտուրն միանգամայն կանայք են, և մարդ հրաման չունի որ առուծախս առնէ պազարումն և արծաթ և ոսկի առանց սիկի[208] և առանց գրի և առանց պատվիրի դրամօվ խօսին և թքալ ասեն փողին: Նաև փողն արճիճ

---

203 Համարյա ամբողջ էջի վրա քաղաքի ջրանկարի գունավոր համայնապատկերը, որի վրա առանձին նշված են բնդրը, գետարանը և հայոց եկեղեցին: Նկ. 6:


204 چارسو — շուկա:

205 دکاندار — խանութպան:

206 سوداگر — առևտրական:

207 صراف — դրամափոխ, անդանավոր:

208 سکه — դրոշմ:



Ил. 6

է։ Եւ շատ մատան և քան[209] լինի Փէկոյ, արծիի, ոսկի, դուզուրիի[210], նօիի[211] և մանաւանդ պատուական նաղուին[212] տեղէն լինի։ Եւ մեծամեծ ծառ լինի տեղն։ Եւ տախտակ նաւին տեղէն գնանէ։ Եւ բապատակ մում տեղէն գնանէ։ Եւ Բարմայ ազգն ճերմակ և գեղեցիկ լինին
63բ և բաց և անամօթ արանք և կայնայք//։ Եւ Փէկոյ Բանկուն կոչեցեալ քաղաքն փայտաշէն և ի հոր քաղցր գետին. տես ի ներքոյ քաղաքն և գետն[213]։

Դարձեալ պատմեմք զԷյտարապատ քաղաքին պատմութիւնն։ Էյտարապատ քաղաք է ի Դաքան և ի Մարաթայի միջի ի Պօնայ և ի Բունբայի։ Էյտարապատ քաղաք է մեծ և հարուստ։ Աստ է բանըն գալմասին, որ կոչի անդամանդ։ Էյտարապատ նախ տէրութիւն էր Մարաթացոյց, երկրորդ Նըզամ-ի Դօվլաթ, այսյինքն մամդական ազգին և երրորդումն տերեալ են Ինկլեացիք։ Այժմ է տէրութիւն Ինկլեացուց։ Եւ բանակն և զօրքն իւրեանց և ամեն պատրաստութեամբ անդ է յամենայն ժամ։ Եւ Էյտարապատ բազմութիւն ժողովրդոյց և ամեն ազգաց և ազանց խաժամուժ, մանաւանդ զօրք դիւանաւոր Ինկլեացուց։ Եւ է Էյտարապատ մեծ քաղաք և հարուստ լի ոսկով և արծաթով և ականբ պատուական գալմասով։ Եւ մատանն գալմասի անդ է։ Եւ գալմասի մատանն լեռան մի է, և վաճառականք երթան տեղն մատանն և չափին գետինն և գնին գետինն, մէկ հազարից մինչև տասն հազար բուրի տան և առնին, ապա բերին քանդին գետինն զոր ինչ գնանէ առնէ վաճառականն։ Բայց եթէ մեծ և պատուական ակն գնանէ՝ գայն թագաւորական լինի և նորայ գինն տան վաճառականին։ Այս է կանոն մատանին։ Եւ Էյտարապատ գետ
64ա և ծով ոչ գոյ, բայց պաղ բաղաթ այգիկ// բաղում, նաև պաղար և առատ շատ և բնակիալքն Հընդստանի խօսին։ Եւ Էյտարապատ քաղաքն տես ի ներքոյ[214]։

Այս Էյտարապատից մինչ ի Բունբայի տասնհինգ աւուր ճանապարհ է։ Բունբայի ի հոր նոյն օվկիանոս ծովին։ Եւ Բունբայիս է կղզի և իրիգ կողմն ծով է, մի կողմն ցամաք և նաւահանգիստ և նաւադնաց բանդար մի է և տէրութիւնն է յիշեալ Ինկլիացոց։ Նոյնպէս Ինկլեացոյց բանակն և զօրքն և ամենայն պատրաստութեամբ տեղն կան և վարին դիշխանութեամբ իւրեանց։ Եւ ամեն աշխարհաց նաւք գան Բունբայի, և վաճառականք բաղում տեղն լինին։ Եւ Բունբայի է փոքրիկ քաղաք և պաղս, ծառս և գետս ոչ գոյ. միայն նաւահանգիստ մի է, և Բունբայի պերթ է Ինկլիացոց, տես ի ներքոյ[215]։

---

209 Հանք։

210 Ծծումբ։

211 Քարյուղ (նավթ)։

212 Հակինթ։

213 Էջի երրորդ մասի վրա քաղաքի գունավոր նկարը։

214 Էջի քառորդ մասի վրա քաղաքի գունավոր նկարը։

215 Էջի քառորդ մասի վրա քաղաքի գունավոր նկարը։

64բ //Օրհնութիւն, գոհութիւն, պատիւ, փառք և երկրպագութիւն
երրորդական անձնաւորութեան և եզական աստուածութեանն և մի
բնութեանն զուկահաւասար սէրութեանն և զուկակշիռ համապա-
տութեանն, միաշափ զօրութիւն, և միահանգոյն կարողութիւնն, հա-
մակամ արարչութիւնն և համազօր ներգործութեանն: Հօր և որդւոյ
և սրբոյ Հոգւոյն, երրորդութիւն անբաժանելի և միութիւն անշփո-
թելի, անհաս իմաստից և անքննելի զեղանակաց, անլըռելի փա-
ռաբանութիւն և անվճառ գոհաբանութիւն: Ամենասուրբ երրորդու-
թիւն, անբռնաւս յաւիտեանս և անպատման կիտահարութեամբն,
ամէն: Որ ես կարօղութիւն անարժան և մեղսամած ծառայիս ի-
րոյ, որ կարօղացայ անօգուտ կարօղութեամբն իմոյ ստարս հասու-
ցանել[216] այս վայելուչ և գեղեցկազարդ ծաղկաքաղ աշխարհացոյց...
որ ի շրջման ի վերայ աշխարհիս, ի Ռուսաց աշխարհէն սկսեալ և ի
Հնդիկս ստարեալ, որ յառաջաբանութեանն գրբոյս կպատմէ ամեն
բարակայիւք և ի շրջմանանց պատճառն կամիմ յայտ առնել և զան
որոյ խոնարհեալ ի ծունկս զձեզ հարց առնել եղբարցդ իմ սղաչիմ
անմեղադիր արասցիք ամեն (՚), քանզի թիւն ՌՄԽԲ (1793) սեպտեմ-
բեր Ժ (10) ելայ բնակարանէ իմ և ի հայրենական աշխարհէն իմոյ և
գնալն իմ կողմն հիւսոյսային յազգս երկիւղէն անօրէն ներբինոյն
Ախտախան կոչեցելոյն բռնաւորին և հասանելն իմ ի Քիփխա այ-
սինքն Թիփլիզ և ի բոլոր աշխարհն Վրաց շրջելով, եկեալ և հասեալ
65ա զսուրբ էջմիածին, նաև Արարատեան աշխարհն //բոլոր շրջեալ և սբր-
բակոխ տեղքն ուխտեալ և սկսեալ Կասպիական ծովէն ընդ Հատրպա-
տական աշխարհօվն ելեալ ընդ Պարսէացոց աշխարհն և անդէն ի
կողմն Բաբէլացոց և ի Կասպիական ծովէն մինչև Պարսկական ծովն
ստարեալ և անցեալ օվկիանոս ծովն ելեալ Հընդկաց աշխարհն և
վեց տարի շրջեալ, մին մասն հազիւ տեսեալ և կրկին դարձեալ Պար-
սէացոյց աշխարհն և սրբոյ Ամենափրկչի վանաց վիճակի եղեալ և
սրբազան Յօհաննէս առաջնորդէն օրհնութեան կոնդակով ստարեալ
Քաթօլ և յետ լրանալէն վիճակիս և կրկին Հընդկաց աշխարհն մնա-
ցեալ մասն շրջեալ և անդրէն դարձեալ վերստին Քաթօլ: Եւ ի շրջ-
մանն իմոյ զոր ինչ բաղաք և գիւղաքաղաք և ծով և ցղոիք և հանա-
պարհաց որքանութիւնն ծաղկաքաղ գրբուջս մէջ գրեցի որ և յայտ
է ի մի... քոյս յամի Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի 1821 և թիւին
Հայոց ՌՄՀ (1821)-ին սկսեալ... աշխարհէն մինչ ի Ղզլար որ ստ-
ատանիս: Եւ թիւ Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի 1824-ին ստարեցայ
ի քաղաք Քաթօլ: Վասն որոյ կրկին աղաչեմ ի աստուածապաշտ
ընթերցողացդ, որք հանդիպիք այս ծաղկաքաղ Աշխարհացոյց նոր
իմն գրեալ է թէ ի մէջ ժողովեալ ուրախութեան ձերոց և թէ որում
ժամոյ ընթերնոյք յիշեցէք աղօթս ձեր զամենայն ընտանիս իմ ի
Քրիստոս հանդուցեալ հայրս Գասպար և մայր իմ Եղիսաբէթն և
65բ քոյրս Հէրիքնազն, Աղիպն և // զամենայն արիանաստ մերձաւորան
իմ և բարեկամս իմ ընդ նոսին և ինձ ամենաբշտաս և ամենից յետ-
նեալ աշխատօղ քահանայս, ոչ գործով՝ այլ անուամբ միայն Տէր

216 Այստեղից էջերի ներքեի մասերը խիստ ցնցակեր են և բնագիրը վնասված:

Բաղդասար Շուշուցի Գասպարի որդի, որ ի աշխարհըն Ադուանից Ղարաբաղ կոչեցեալ գաւառէն հին Շուշու, որ միթէ է ի դալէն Շուշվայ: Վասնորոյ խնդրեմ բարեմիտ ընթերցողացդ եթէ գտանեցիք ի սմայ սղալանս՝ մի մեղադրէք անարժանիս և մեղադրանաց արժանիս, որ կարի յոյժ նեղութեամբ և շարչարանօք կարացայ աւարտս հասուցանել վասն որոյ առնեմ էր փափակն իմ, բազում աշխատութեամբ կատարեցի զրարի կամս իմ և աշխարհացոյց յիշատակս իմ, որ և կատարիչն խնդրվածոց և լսող աղօթից կատարեսցէ զկամս ձեր բարեաց: Ամէն: Ամէն:

Եւ կատարեցաւ յամի Տեառն 1824 փետրվար 8 և Հայոց ԹիւնՌՄՀԴ (1824) աշխատօղս զրբիս Տէր Բաղդասար Գասպարեան, ի կողմանց արևելեան և աշխարհն Թուրանի, ի քաղաքն Քարուլ:

ТЕР-БАГДАСАР ГАСПАРЯН

ПУТЕВЫЕ ЗАПИСИ

Подготовка к печати А. КЮРДЯНА

Резюме

В коллекции армянских рукописей филолога А. Кюрдяна (США, Уичита) хранится рукопись, написанная в XIX в. Она содержит путевые записи Тер-Багдасара Гаспаряна Шушеци, написанные в 1824 г. в индийском городе Крнале.

Автор записей родился в 1771 году в Шуше. В 1793 году он бежал оттуда в Тбилиси, а затем—в город Кизляр на Северном Кавказе. Спустя некоторое время он выехал оттуда и, странствуя, прибыл в Эчмиадзин. Вскоре он предпринял длительное путешествие в Индию через Иран, а затем был назначен духовным пастырем армянской общины в Кабуле и скончался там в 1826 г.

На основании заметок, сделанных в ходе путешествия, Тер-Багдасар написал свои путевые записи. Начав их с города Кизляра и описывая все города Армении, Азербайджана, Ирана, Афганистана и Индии, оказавшиеся на его пути, Тер-Багдасар завершает свои путевые записи описанием города Бомбея

Сведения о географическом положении городов, занятиях населения, религии, обычаях и т. д. содержат интересные подробности и могут явиться дополнительным источником для исследования внутренней жизни городов Индии и их экономических связей.

Планы, начерченные около описаний малых и больших населенных пунктов, а также цветные панорамы гаваней дают некоторое представление о размерах и географическом полежении известных городов и не лишены познавательного интереса.

Путевые записи ценны также тем, что содержат сведения о различных сторонах жизни армянских колоний в Иране и Индии.

TER-BAGHDASSAR GASPARIAN

RELATION DE VOYAGE

Publié par H. KURDIAN

Le philologue arménien H. Kurdian (Wichita, U. S. A.) possède dans sa collection privée un manuscrit du XIX[e] siècle renfermant la relation de voyage de Ter-Baghdassar Gasparian, écrite en 1824 à Krnaie (Indes).

Ter-Baghdassar Gasparian naquit en 1771 à Chouchi d'où il s'enfuit en 1793 pour se rendre à Tiflis et de là à Kizliar dans le Caucase du Nord et, enfin, à Etchmiadzine. Bientôt il entreprend le voyage des Indes et traverse l'Iran. A Kaboul il est promu père spirituel de la communauté arménienne et c'est là qu'il meurt en 1826.

Cette relation de voyage fut écrite à partir des notes prises en cours de route, tout au long de l'itinéraire qui mena le voyageur de Kizliar à Bombay en passant par l'Arménie, l'Azerbaïdjan, l'Iran, l'Afghanistan et les Indes, contrées dont il donne une description de toutes les villes traversées. La relation s'arrête sur la description de Bombay.

Les renseignements concernant la situation géographique des villes, la vie des différentes populations, les religions, les moeurs, etc. offrent des détails fort intéressants et peuvent servir de sources complémentaires pour l'étude de la vie interne des villes des Indes et des liens économiques de ces dernières.

Les plans dessinés en marge des descriptions des agglomérations, grandes ou petites, les panoramas en couleurs des ports fixent le lecteur sur l'importance et le site des villes et ne sont pas dépourvus d'un certain intérêt documentaire.

Cette relation de voyage est encore précieuse par les données qu'elle rapporte sur les colonies arméniennes d'Iran et des Indes.

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ԱՌՉՆԹԵՐ
ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ—«ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ»

ԲԱՆԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

ԵՐԵՎԱՆ 1969

ԱՎԵՏԻՔ ԿԱՐԲԵՑԻ ՇԱՂԻԿՅԱՆ

ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԵԱՆՑ

Տպագրության պատրաստեցին Ռ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԸ և Փ. ԱՆԹԱՔՅԱՆԸ

Հնդկաստանի և հնդիկ ժողովրդի հետ հայերի կապերն ու փոխհարաբերություններն ունեն բազմադարյան պատմություն: Պատմական սկզբնաղբյուրները խոսում են այն մասին, որ Հայաստանի բնակիչներին, դեռևս մ. թ. ա. 6—5-րդ դարերում, լավ հայտնի էին Պարսկաստանի վրայով դեպի Հնդկաստան տանող ուղիները:

Հայ-հնդկական փոխհարաբերություններն ավելի են ամրապնդվել, իսկ Հնդկաստան տանող ուղիները հայերի համար ավելի բանուկ են դարձել սկսած այն ժամանակից, երբ հնդկական հյուրընկալ հողի վրա սկսել են հանդես գալ հատատուն հայ գաղթօջախներ:

Հնդկաստան այցելած հայերից ոմանք բանիմաց, աշխարհատես, մի քանի լեզուներ սիրապետող մարդիկ են եղել ու կազմել են իրենց ուղեգրություններն օրագիրը:

Մեզ են հասել անանուն հայ ճանապարհորդի (12-րդ դ.)[1], ոմն Տրապիզոնցու (18-րդ դ.)[2], Իսահակ վարդապետի[3], Թադեոս Տեր-Հովհաննեսյանի[4], Պ. Պ. Լազարևիչի[5], Ավետիք Կարբեցու (19-րդ դ.) և այլ հնդինակների ուղեգրություններն ու օրագրերը: Այդ կարգի բնագրերից իր ծավալով ու բովանդակությամբ ուշագրավ է Ավետիք Կարբեցի Շաղիկյանի ուղեգրությունը, որ պահվում է Մաշտոցյան Մատենադարանում: Այն վերնագրված է «Ստորագրութիւն ճանապարհորդութեանց սրբակրօն Աւետիք վարդապետի Յարութիւնեան Կարբեցւոյ, արեզայի սրբոյ էջմիածնի՝ պաշտօնէի բարձրապատիւ ի տէր հանդուցեալ Եսայեայ արքեպիսկոպոսի»[6]:

Ձեռագիրը գրանցված է 865 (891) համարի տակ, բաղկացած է 86 թերթից, ունի 17,6×11,8 մեծություն, նյութը թուղթ է, դրված է միասյուն (14×9) շրջագրով, յուրաքանչյուր էջի վրա 19 տող: Գրված չեն 1, 2, 57,58

---

1 *Р. А. Абрамян*, Армянский путеводитель по Индии XII века (*տե՛ս «Բանբեր Մատենադարանի», հ. 4, 1958, էջ 318—328*):

2 *Տե՛ս Մաշտոցյան Մատենադարանի ձեռ. № 618, 82ա—86բ:*

3 «*Ազգասէր*», *1846, հհ. Բ, Գ:*

4 *Ձեռագիրը պահվում է Նոր Ջուղայի Հայկական Ս. Ամենափրկիչ վանքի մատենադարանում: Նրա համառոտած բնագիրը հրատարակել է Զ. Հանանյանը (Տե՛ս «Նոր Ազդարար», Կալկաթա, 1951, № 2):*

5 *Պ. Պ. Լազարևիչ. Ստորագրութիւն Կալկաթա քաղաքին, Կալկաթա, 1848:*

6 *Անդ. ձեռ. 865, էջ 3ա—56բ:*

էջերը: Վիճակը բավարար է: Հետագայում հեղինակը ձեռագրի վրա մատիտով կատարել է ուղղումներ, փոքրիկ կրճատումներ և ոչ մեծ փոփոխություններ:

Ձեռագրից պարզ երևում է, որ այն ոչ թե ճանապարհորդության ժամանակ անմիջապես արված գրառումների մասյան է, այլ հետագայում, էջմիածին վերադառնալուց հետո հեղինակի գրանցումների հիման վրա կատարված մի շարադրանք, որ ավարտված պետք է լինի 1835 կամ 1836 թվականներին:

«Ուղեգրության» հեղինակի մասին քիչ բան գիտենք: Իր աշխատանքում առկա մի ակնարկից տեղեկանում ենք, որ նրա ազգանունը Ծաղիկյան է, հայրանունը Հարություն, ծնունդով Կարբեցի է եղել, ունեցել է վարդապետական աստիճան: 1832 թվականի հունիսի 15-ից մինչև 1834 թվականի դեկտեմբերը ուղեկցել է էջմիածնի նվիրակ եպիսկոպոսին՝ դեպի Հնդկաստան նրա կատարած ուղևորության ժամանակ: Առայժմ հայտնի չէ, թե ե՛րբ է Կարբեցին այդ ուղևորությունից վերադարձել էջմիածին և ինչո՛վ է հետագայում զբաղվել: Մեզ հաջողվեց պարզել, որ էջմիածին այցելած ռուս նկարիչ Գագարինը նկարել է նրան:

* * *

Ուղեգրության առաջին մասում Կարբեցին նկարագրում է էջմիածնից մինչև Պարսից ծոցի Բանդար-բուշեր քաղաքը ձգվող ճանապարհը, հետաքրքիր տեղեկություններ հաղորդելով այդ ճանապարհի վրա գտնվող հետևյալ քաղաքների և գյուղերի մասին. էջմիածին, Աղբաշ, Դավալու, Յուվա, Թավրիզ, Սեյդարաղ, Թիքմադաշ, Թուրքմենչայ, Միանե, Աղ-Քյանդ, Ամանխանե, Զանջան, Սուլթանիյե, Սիդրան Խորրամդարե-Սիաղհուն, Ղազվին, Ղզլաղ, Սոնղուրաբաղ, Սուլեյմանիյե, Թեհրան, Քենարդերդ, Հովզ-ե-սուլթան, Փոլ-ե-դալլաթ, Քաշան, Սպահան, Նոր Ջուղա, Շիրազ, Մահյար, Ղումիշահ, Ամինաբաղ, Շուղեստան, Աբադե, Քիլիլ, Ղզլաղ, Մաշատ-Մորղաբ, Սեյդուն-Զարղուն, Շիրազ, Խանե-Զանիան, Դաշտե-արժան, Քազերուն, Քոթալ-Փիրղան, Քենար-Թախթե, Դալաքի, Զաքութա, Բուշագյան, Բանդար-Բուշեր:

Մեր ուղեգիրը հատուկ ուշադրություն է դարձրել ճանապարհին հանդիպող պատմական հուշարձանների ու շինությունների վրա: Հետաքրքրական են հատկապես Սեյտունի և Թախտ-ե-Սուլեյմանի ավերակների նկարագրությունները:

Ուղեգրության հեղինակն իր ընթերցողներին տալիս տեղեկություններ է հաղորդում այն մասին, թե ո՛ր կայանում ինչպիսի՛ օթևան կա, խմելու ջուրն ինչպիսի՛ն է, ինչպե՛ս են ընդունում հյուրերին, կարելի՞ է, արդյոք, ուտեստեղեն և անասուններին կեր ձեռք բերել, ինչքա՛ն դրամ են գանձում անցնող-դարձողի ապրանքներից և այլն, և այլն:

Ութ ամիս անընդհատ ճանապարհորդելով Պարսկաստանով, Կարբեցին մտիկից շփվել և ծանոթացել է պարսիկ աշխատավոր ժողովրդի անտեսական ծանր վիճակի, երկրում տիրող ծայրաստիճան աղքատության ու թշվառության բազմաթիվ փաստերի հետ և այդ ամենը բծախնդիր նկարագրել «Ուղեգրության» մեջ:

Ավետիս Կարբեցին առանձին սիրով է խոսում Պարսկաստանի զանազան քաղաքներում բնակություն հաստատած իր հայրենակիցների մասին, տեղեկություններ է հաղորդում նրանց զբաղմունքի ու վիճակի վերաբերյալ: Նա ցավով

արձանագրում է Պարսկաստանով ճանապարհորդող հայերի խիստ անմխիթարական վիճակը. հարկահաններն ու ֆեոդալները նրանցից հաճախ գանձում էին կրկնակի, անգամ եռակի չափով ավելի հարկեր ու մաքսեր, քան նրանց մահմեդական ուղեկիցներից:

«Ուղեգրության» զանազան մասերում բերելով հայերի նկատմամբ հալածանքների շատ փաստեր՝ Սաղիկյանը գրում է. «Ու յոյժ ցաւելով գրեմ, թէ այսքան բռնանան պարսիկք յազգ մեր և նեղեն անօրինութեամբ զբրիստոնեայս՝ եղեալս ընդ իշխանութեամբ իւրեանց»:

Նա հատկապես մանրամասն է նկարագրել Նոր Ջուղայի հայկական դաղութը, նրա բոլոր յոթ թաղերն՝ իրենց եկեղեցիներով, հռչակավոր Ս. Ամենափրկիչ վանքը, հայկական գերեզմանոցը, կանգուն և ավերակ շինությունները և այլն:

Ուղեգրողի վկայություններից երևում է, որ երբեմնի ծաղկուն, հարուստ, ազգային կյանքով առլեցուն Նոր Ջուղայի հայ գաղութը ապրելիս է եղել իր մայրամուտը: Նախկինում 20 հազարանոց տուն հայ գաղութից Կարբեցու այցելած ժամանակ ընդամենը մնացել էին 350-ի մոտ հայ ընտանիքներ:

Էջմիածնի նվիրակ եպաւտուր արքեպիսկոպոսն ու մեր ուղեգիրը հաղթահարելով դժվարին և վտանգներով լի երկար ճանապարհը, վերջապես հասել են Բուշեր քաղաքը:

Մեկ ամիս Բուշերում մնալուց հետո, մի խումբ ջուղահայերի հետ միասին, ռազմական «Դիսկովերի» նավով ուղևորվում է Հնդկաստանի Բոմբեյ քաղաքը:

Կղզու և քաղաքի նկարագրությունից անմիջապես հետո, Կարբեցին հետաքրքրիր տեղեկություններ է հաղորդում հնդիկ ժողովրդի, նրա կենցաղի, սովորությունների ու հավատալիքների մասին: Նա խոսում է նաև Բոմբեյի հայկական համայնքի և նրա կյանքի մասին: Երբեմնի փարթամ ու ծաղկուն հայ համայնքից 19-րդ դարի 30-ական թվականներին մնացել էին ընդամենը մի քանի հայ ընտանիքներ, որոնք հազիվ պահպանում էին իրենց գոյությունը պետական ծառայություններից ստացած չնչին միջոցներով:

Կարճ ժամանակում, գործերը Բոմբեյում ավարտելուց հետո, Ավետիս Կարբեցին նավով ուղևորվում է Կալկաթա: 29 օր լողալուց հետո նրանց նավը խարիսխ է նետում քաղաքի խոշոր նավահանգիստներից մեկում, որը մեր ուղեդրի վկայությամբ կոչվում էր «Հայոց նավահանգիստ»:

Կարբեցին իր սովորությանը հավատարիմ հետաքրքրական տեղեկություններ է հաղորդում Կալկաթա քաղաքի, նրա գեղեցիկ շինությունների մասին, չնայած համեստորեն նշում է, թե «գոլով մեր կրօնաւոր չեղև մեզ հնար շրջել յամենայն տեղիս և առնուլ զծանօթութիւն լիապէս յամենայնէ»:

Առանձնապես ուշագրավ են ուղեգրության այն հատվածները, որոնք նվիրված են հնդիկ ժողովրդին: «Ու են խաղաղասերք և համեստ և մանաւանդ յոյժ ողորմած առ ոնանկս»,—գրում է մեր ուղեգիրը հնդիկների մասին:

Կարբեցին մանրամասն նկարագրել է Կալկաթայի հայկական հուշարձանները, չմոռանալով ընդօրինակել նրանց արձանագրությունները:

Մեծ գովեստով է խոսում մեր ուղեգիրը Կալկաթայի նշանավոր Մարդասիրական կոչվող ճեմարանի մասին, որի ամավերջի քննություններին ներկա է եղել նա: Հայ աշակերտներից բացի ճեմարանում սովորում էին նաև հնդիկ աշակերտներ:

Կարբեցին տեղեկություններ է հաղորդում Ճեմարանի դրադարանի մասին, ուր պահվում էին նաև արժեքավոր ձեռագիր մատյաններ, խոսում է նաև տպարանի և աղքատանոցի մասին։

Գործերը Կալկաթայում ավարտելուց հետո, Խաչատուր եպիսկոպոսը Ավետիք Կարբեցուն, մի քանի հնդկահայերի ուղեկցությամբ, 1834 թվականի հունվարի 17-ին ուղարկում է Բենգալիա։ Գրեթե մեկ ամիս նավարկելուց և ճանապարհորդելուց հետո Կարբեցին հասնում է Դաքա։ Բենգալիայի արքայանիստ ճոխ քաղաքի նկարագրությունը տալուց հետո Կարբեցին արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Դաքայի հայկական գաղութի մասին, որն այդ ժամանակ բաղկացած էր ընդամենը 15 ընտանիքից, որոնք «այժմ կան թափուր, ղլխովին աղքատացեալ և բազումք հաղիւ զտանեն զմատնաւոր պիտոյս հանդերձի և կերակրոց»։

Կարբեցին վեց ամիս այստեղ մնալուց հետո անցնում է Զիլրա, որը նույնպես հնդկահայ մեծ գաղութներից մեկն է եղել 18-րդ դարում։ Այստեղ, դիտելով հայկական հուշարձանները և կատարելով իր վրա դրված հանձնարարությունները, նա վերադարձել է Կալկաթա։ Կալկաթայից Բոմբեյ դարձի ճանապարհի մասին միայն մի քանի տող է նվիրված ուղեգրության մեջ, իսկ Կալկաթայից էջմիածին ճանապարհի մասին՝ և ոչ մի տող։ Ըստ երևույթին նա ավելորդ է համարել կրկնելու ինքն իրեն։

Վերջացնելուց առաջ երկու խոսք Խաչատուր եպիսկոպոսի գլխավորած նվիրակության նպատակի մասին։ Այդ մասին արժեքավոր տվյալներ են պահպանվել Մաշտոցյան Մատենադարանի կաթողիկոսական դիվանում։ Հատկապես կարևոր է Հովհաննես կաթողիկոս Կարբեցու մի նամակն ուղղված ինդոնեզաբնակ Հովսեփ Ամիրխանյանին, ըստ այդմ Խաչատուր եպիսկոպոսը Հնդկաստան և Հարևան երկրներն է ուղարկվել՝ հետավոր այդ վայրերում բնակություն հաստատած հայերի հոգևոր պետքերը հոգալու, հայրենի երկրում տեղի ունեցած բախտորոշ իրադարձությունների մասին նրանց տեղեկություններ հաղորդելու, ինչպես և հետավոր այդ գաղթօջախներում հաստատված մեր հայրենակիցների վիճակի մասին տեղեկություններ քաղելու համար[7]։ Ավելի մեծ նշանակություն է տրվել նվիրակության կողմից հավաքվելիք դրամական հատույցներին։ Խաչատուր եպիսկոպոսը լիազորված էր առանալու Իրանի, Իրաքի, Հնդկաստանի, Ինդոնեզիայի ու Բիրմայի հայաբնակ վայրերում էջմիածնին նվիրաբերված ու կտակված խոշոր գումարները[8]։ Վերոհիշյալ բոլոր վայրերից ակնկալվող նվիրական հատույցները գերազանցում էին մի քանի հարյուր հազարից։ Այդ իսկ պատճառով նվիրակությանը հենց սկզբից տրվել է կարևոր նշանակություն։ Պահպանվել են Խաչատուր եպիսկոպոսի համար անձնագիր առանալու կապակցությամբ և նրա ճանապարհորդությունը դյուրացնելու նպատակով տրված դիմումների ու խնդրագրերի մի շարք պատճեններ[9]։

Պատվիրակության մասին նախօրոք իմաց է տրվել Պարսկաստանի հայ աշքի ընկնող մի շարք դեմքերի՝ Աղալար խան Ենիկոլոպովին, Ծատուր, խան Գրիգորյանին և ուրիշներին։ Թեհրանում նրանց հանձնվել է Ամին-ուդ-Դովլեի

---

7 Մաշտոցյան Մատենադարանի Կաթողիկոսական դիվան, թղթ. 73-ի վավ. 99ա։

8 Կաթողիկոսական դիվան, թղթ. 77, վավ. 534ա։

9 Տե՛ս Կաթողիկ. դիվան, թղթ. 73, վավ. 30, 67, 74, 94, 95, 96, 98, 99, 186։

ֆերմանը, որով նվիրակն ազատ է համարվել ուղևորներից գանձվող բոլոր տեսակի հարկերից:

Հանձնարարական գրություններ են առաքվել նաև Արարական ծոցի Բրիտանական տերության գործակալ՝ պարոն Տիլերային, Բենգալիայի կուսակալ վիլյամ Բանտինգին, Հնդկաստանի անգլիական եկեղեցու պետ՝ Հակորոս եպիսկոպոսին: Ի միջի այլոց, այս նամակները գրված են հայերեն և անգլերեն լեզուներով. թարգմանությունը կատարել ու գրել է Հարություն Բաղիրդյանը:

Պահպանված գրություններից երևում է, որ Խաչատուր եպիսկոպոսն ու մեր ուղեգիր Ավետիք Կարբեցին լինելու էին նաև Բաղդադ, Պինանգ, Սամարանգ, Սինգապուր, Բաթավիա, Սեյդաբադ, Գլավեսր, Պեգու քաղաքները: Սակայն նրանք բավարարվել են միայն հնդկական քաղաքներով և ինչ-ինչ պատճառներով առանց այցելելու վերոհիշյալ վայրերը, վերադարձել են հայրենիք:

* * *

Ավետիս Կարբեցու ուղեգրության բնագիրը հրատարակության պատրաստելիս բացել ենք բոլոր հապավումները, ուղղել կետադրական սխալները, գլխատառերով նշել բոլոր անձնանունները ու աշխարհագրական անունները:

Այն բառերն ու հատվածները, որոնք հեղինակը խմբագրական նպատակներով ջնջել է բնագրում, սակայն նպատակահարմար ենք գտել վերականգնել, բերվում են սուր <> փակագծերում, իսկ չվերականգնելու դեպքում դրանք բերվում են ողղատակում:

Տողատակում նախ. հապավումով տրվում են այն բառերն ու հատվածները, որոնք հեղինակը հետագայում փոփոխել է, բայց մենք նպատակահարմար ենք գտել բնագրում պահել այս փոփոխված ձևը, իսկ հետ. հապավումով տրվում են հեղինակի հետագա ուղղումները:

Առանձին դեպքերում չենք միջամտել լեզվական և քերականական ոչ ճիշտ շեղումներին՝ նկատի ունենալով, որ սույն աշխատությունը մեր դասական շրջանի գրականությանը չի պատկանում, և ջանացել ենք պահպանել հեղինակի լեզուն ու ոճը:

«Ծանոթագրություններ» բաժնում լրացուցիչ բացատրություններ ու տեղեկություններ տվել ենք միայն անհրաժեշտ դեպքերում: Այդպես ենք վարվել նկատի ունենալով, որ մի շարք դեռ վաղուց լույս տեսած աշխատությունների մեջ հանգամանալից բացատրություններ կան հրատարակվող սույն բնագրում հիշատակված գրեթե բոլոր տեղանունների, բնակավայրերի, եկեղեցիների և այլ կառույցների, ինչպես նաև աչքի ընկնող անձնավորությունների վերաբերյալ: Ստորև թվարկում ենք հիշյալ աշխատություններից մի քանիսը.

1. Հ. Տեր-Հովհաննյան, Պատմութիւն Նոր Ջուղայու որ յԱսպահան, Նոր Ջուղա, 1880:

2. Կ. Լազարևիչ, Ստորագրութիւն Կալկաթա քաղաքին, Կալկաթա, 1848:

3. Հովհ. Հակոբյան, Ուղեգրություններ, հ. Ա (ԺԹ—ԺԶ դդ.), Երևան, 1932:

4. Թ. Գուշակյան, Հնդկահայք, Երուսաղեմ, 1941:

5. Иран, Сборник, Москва, 1957.

6. Новая история Индии, Москва, 1960.

Ստորագրութիւն ճանապարհորդութեանց արքակոծ Աւետիք վարդապետի Յարութիւնեան <Կարբեցւոյ>՝ աբեղայի սրբոյ էջմիածնի՝ պաշտօնէի բարձրապատիւ ի տէր հանգուցեալ Խաչատուր արհեպիսկոպոսի՝ ծայրագոյն նուիրակի առաքելոյ յաշխարհն Հնդկաց. Գրեալ ի ճոյն իսկ աբեղայէ ի հայրապետութեան Տեառն Տեառն Յովհաննու արքազնակատար և աստուածընտիր կաթուղիկոսին Ամենայն Հայոց, ի գահս սրբոյ էջմիածնի.

Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Յառաջին վեհապետին Տեառն Յովհաննու արքազնակատար կաթուղիկոսին[1] Ամենայն Հայոց գրաբեր պատրաստեալ խաչատուր արքեպիսկոպոսն[2] ի Սրբոյ էջմիածնէն ի նուիրակութիւն աշխարհին Հընդկաց, կարգեալ եղև և իմս նուաստութիւն երթալ ընդ նմա ի սպասաւորութիւն հոգևորականացն պաշտամանց, և իմ զկենցաղավարս ծանօթութեանց աշխարհաց, զառաքինութեանց տեղեաց և շինուածոց, և զբարուց և զսովորութեանց և [զ]շինուածոց, և զբարուց և զսովորութեանց զանազան ազգաց և ազանց յորս կայր իմ առաջի անցանել, գիտելով զշահ և զօգուտ, կամ եղև ինձ ըստ իմումս ծանօթութեանց և տեսութեանց, տալ մերազնէից զտեղեկութիւնս։ Քանզի ընդարձակ իմն է հետազօտ բնաւորութեան և բարուց մարդկան և մասանց հետաձիգ զննողացն կողմանցն աշխարհիս գիտել զտեղեկութիւն զայլ և այլ բարուց և սովորութեանց, իմանալ

4բ *//զիւրաքանչիւրն զկենցաղավարութիւնս և զվիճակս, զի սքանչելակերտ աշխարհիս և բազմազան յոգնաստեղծ արարածոցն, որ ի նմա եւ բազմատեսակ ձեռակերտացն մարդկանս ազին եղեալ հասու մասանց, ճոխանալ ի բանս և ի գործս, որով և բերկրիալ զուարճանալ և ամբարէ յինքեան զպտուղս նորանորս բանից և արհեստից և զԱստուծոյ գործոցն տեսանել զմեծ վայելչութիւն և զգեղեցկութիւն՝ զարարողն փառաւորէ զնոցունց, զփառաւորեալն յամենայն արարածոց, որում և վայել է փառք ի յաւիտեանս յաւիտենից։*

Ք. Ս. Աւետիս վարդապետ Յարութիւնեան Մադիկեանց Կարբեցի։

5ա *Ելեալ մեր ի սրբոյ Աթոռոյն էջմիածնի ի 15 յունսի, յամի տեառն 1832 անկաք ի ճանապարհ առ ի երթալ յերկիրն Հնդկաց ի պաշտօն նուիրակութեանն։ Եւ կայր մեզ անցանել ընդ աշխարհն Պարսից։ Ընդ մեզ եկին յերևելի ոմանք յուխտէ աթոռոյն աշխարհականք առ ի յուղարկաւորել զմեզ ի ճանապարհ մինչև ցեկեղեցին Հանդուցեալ կոչեցեալ յանցս ճանապարհին, որ երթայ յերևան քաղաք, ուր զկայ առեալ սուղ մինչ ժամանակս և առեալ զողջոյն սիրոյ և հրաժարական, որոմագին սրտիւ բաժանեցաք յընդ մեզ եկելոցն և գնացաք յերևան, ուր և յամեալ մեր զաւուրս հինգ[ս] առ ի զբևռնակիրս վարձելոյ և զայլ պատրաստութիւնս ճանապարհի, վասն դիմելոյ ի Դավրէժ քաղաք, որ ըստ ռամկաց ասի Թավրիզ։*

5բ Ասէին՝ սկիզբն զաշխարհագրական ստորագրութեանց, զորպիսութիւնս երկրին ընդ որս անցաքն ստորագրելով դիջևանս, զհնաւորութիւնս իջևանաց ի միմեանց և այլն։

Իջևանն առաջին յԵրևանայ ցԴաւրէժ կոչի Աղբաշ[3] գիւղ, յերից ժամուց Ճանապարհ յԵրևանայ։ Օթագայնալ զդիշեր մի մերձ գիւղիս յեղր Ազատ գետոյն՝ այն է գետ Գառնւոյ, ի լուանալ առաւօտուն դիմեցաք ի գիւղն Դավալու[4]։ Եւ կամեցեալ մեր երթալ ի վանս Խորվիրապ կոչեցեալ յուխտ, հարցաք զառաջնորդէ վանացն և տեղեկացեալ թէ՝ եկեալ է ի գիւղն Իւվայ[5], որ է վիճակ Խորվիրապայ, նստեալ ի գիւղ անդր գտաք զարբակրօն Սիմէօն վարդապետն Երևանցի։ Ընդ նմայ ելաք ի վանս, որ է յերկուց ժամուց Ճանապարհ և յեր-
6ա կըրպագեալ սրբազան տեղեացն դարձաք ի գիւղն Դավալու//, որոյ բնակիչք էին մերազինք և յոյժ Հիւրասէրք։ Կացեալ զդիշերն՝ ի հետագայ աւուրն ելաք անտի ի Դավրէժ։

Ելեալ մեր ի գեղջէ անտի յերկոտասան աւուրս հասաք ի Դավրէժ ի 27 յունսի, անցանելով զճանապարհն ողջոյն խաղաղութեամբ և անվնաս, քանզի ճանապարհս այս խաղաղ է և աներկիւղ։ Կալեալ մեր զբնակութիւն ի քաղաքիս՝ շնորհիւ և խնամածութեամբ Աղալար խանին Թիֆլիզեցւոյ[6], զտաք աստ զարբազան արքեպիսկոպոսն Յովհաննէս Բայազետցի[7], որ ի կաթողիկոսէն Հայոց առաքիւր յառաջնորդ սրբոյ վանացն Ամենափրկչի Նորոյն Ջուղայոյ, որ յամեալ էր աստ վասն ստանալոյ զհրովարտակ յարքայէն Պարսից միջնորդութեամբ դեսպանին ռուսաց, որ նստի աստ՝ ի Դավրէժ։ Ստացեալ նորա զայն հրովարտակ, ել ընդ մեզ ի ճանապարհ դէպ ի Թեհրան՝ յարքայանիստ քաղաքն պարսից, յետ կալոյ մեր անդէն զաւուրս
6բ հնգետասան։ Ուղեկիցք էին ընդ մեզ պարոն Աբրահամ Միրզայ[8] կոչեցեալն, որ էր ասպետ, որ իբրև դեսպան ի կայսերէն Ռուսաց ծրթայր առ արքայն Պարսից, ընդ որս էին և այլք մերազանց և ի ստաճկաց իբրև արք երեսունք։

Ելեալ մեր ի Դավրիժոյ գժամս հինգ ճանապարհորդեալ հասաք ի Սեյդաբատ[9] գիւղն, որ է առաջին իջևան, այսինքն՝ մանզիլ[10], ի Դավրիժոյ։ Ի սմին ճանապարհի կայ իջևան մի, որ է քարվանսարայ գեղեցկաշէն, կամարակապ և հոյակապ, յորում և վաճառին զկերակուրս մարդկան և դարման անասնոց, ուր և ի ժամանակս ձմերան օթեն կարավանք, եթէ յորդութիւնք ձեանց արգելցեն զանցաւորս ճանապարհաց։

Սուղ ինչ հեռի ի շինուածոյս կայ պարտէզ մի մեծ, որ է Աբբաս Միրզայ արքայորդւոյն պարսից, յորում կան շինուածք մեծամեծք
7ա և գեղե//ցիկք և ունի պահապանս։ Մերձ պարտիզիս անցանէ գետակ մի, որոյ ջուրն սակաւ ինչ է աղէհամ, զոր և կոչեն գետ Ղարասուի[11]։ Յեղր գետոյս ժամ մի հանգիստ առեալ ելաք անտի և ի տարաժամիլ աւուրն հասաք ի գիւղն Թիրմատաշ[12] ի վեց ժամս։ Գիւղս այս է երկրորդ իջևան ի Դավրիժոյ։ Ի ճանապարհիս չգտանիւր ջուր քաղցրահամ, թէպէտ կային ջրհորք բազումք, բայց շատք ի նոցունց աւերեալք, յորոց ի միումն միայն գտաք ջուր սակաւ և այն՝ աղէհամ։ Աստ բազում նեղութիւնս կրեցաք վասն աստուկազոյն ոսթոյն

և յահէ բաղում աւազակացն, որք ասէին լինել անդ, ընդ որում դոգցնս զգիշերն ողջոյն հակեալք և անքուն եղեալք վասն զգուշութեան կահուց և անասնոց մերոց: Բնակիչք գիւղիս այնքան աղքատ էին, մինչ չունէին և հաց ցորենոյ, հաց գարւոյ և սակաւ գոռանիւր.
7բ նեղեալք են յոյժ յիշխանաց իւրեանց: Բաղում նեղութեամբ// անցուցաք առ վասն չգոռանելոյ զկերակուր Թէ՛ վասն մեր և Թէ՛ վասն անասնոց մերոց:

Ելեալ մեր ի գեղջէ անտի և ճանապարհորդեալ զժամս հօթն հասաք ի գիւղն Թուրքմանչայ[13], որ է երրորդ իջեան ի Դավրիժոյ: Ի ճանապարհին կային իջեանք, այսինքն քարվանս[ա]րայք: Երկուքն ի նոցունց՝ աղիւսակերտք: Զո[ւ]աք ամենեւին ջուր, Թէպէտ կային ջրհորք բաղումք, այլ բաղումք ի նոցանէ աւերակ[ք]: Յետ բաղում որոնմանց գտաք ջուր ինչ սակաւ և ջերմին: Շատ նեղսակրութեամբ անցուցաք, նեղեալ ի ծօթոյ, ի ծարաւոյ և ի Թիւնալիր մոծակաց բազմամբոխ կուտակելոց անդէն:

Ելեալ անտի գնացեալ զժամս վեց հասաք ի գիւղաշահարն[14] Միանայ: Ճանապարհն յոյժ ծօթագին էր և վիմուտ. կայր և գետ մի բարեհամ ջրոյ, յորոյ յեզրն իջեալ ժամ մի՝ ապա գնացաք յիջեան
8ա գեղջն, որ է չոր[ր]որդ իջեան ի Դավրիժոյ: Ի սմին// իջեանի կային որդունք վնասակարք և Թիւնաւորք, որք երբեմն պատճառեն մարդկանց մահ, մանաւանդ օտար անցաւորաց: Առաւօտին էր աստ ուտելեաց և այլոց պիտոյից ճանապարհորդաց: Բնակիչք գիւղաքաղաքիս էին ընչաւէտք: Ունէին և զիտոքրիկ շուկայ, յորում վաճառէին զպիտոյս անցաւորաց բերեալ ի շրջակայ վայրացն:

Ելեալ ի գիւղէ առտի և զժամս վեց գնացեալ՝ ժամանեցաք ի գիւղն Աղբեանդ կոչեցեալ: Կային ի ճանապարհին կամուրջք երկուք սակաւ ինչ հեռաւորութեամբ ի միմեանց: Կամուրջն առաջին էր գեղեցիկ, աղիւսակերտ, շինեալ ի վերայ վեշտասան կամարաց*, որոց երկարութիւնն լինէր հարիւր ծօթանասուն քայլ: Իսկ կամուրջն երկրորդ՝ քարաշէն, գեղեցկաձև և բարձրաշէն՝ երկայնութիւնն իբրև հարիւր և քսան կանգնաչափ: Միջոցք երկուց կամրջացն տևէ չերիս
8բ ժամս և ճանապարհն բովանդակ՝ // սալայատակ յօրինեալ**:

Կամուրջս այս երկրորդ ասի լինել ավանդութեամբ և յաւկութեամբ նշանաց սահմանագլուխ գաւառին Հայաստանեայց, որ Ղափլանթու[15] կոչի: Մերձ չերկրորդ կամրջին, ի վերայ բարձր բլրոյ միոյ, երևէր շինուած ինչ խորանաձև, շինեալ ի կրոյ և ի գաճոյ, որ և կարծի շինեալ ի Թագաւորացն Հայոց, որպէս պատմեցին ընդ մեզ եղեալ ուղեկիցքն ի մերաղանց: Մօտ գեղջս կայր աղբիւր մի պատուական սառնորակ ջրոյ, որ ոչ սակաւ զուարճութիւնս տայ անցաւոր կարաւանից:

Ելեալ մեր աստի զկնի հօթն ժամուց հասաք ի գիւղն Արմանխանայ[16]: <Ճանապարհն ողջոյն ամենևին անջուր, զի> Թէպէտ ի տեղիս-տեղիս գտանիւր ջուր, բայց սակայն յոյժ աղէհամ, ծծըմ-

* Նախ. ի վեշտասան ականց:
** Նախ. բոլոր քարամբ ֆարշեալ:

բային և գեղնագոյն, զոր ոչ մարդկան և ոչ անասնոց հնար էր ըմպել, վասնորոյ հանապարհորդք բառնան ընդ յինքեանս // ջուր։ <Մեր գլխովին անտեղեակ գոլով չունէաք ընդ մեզ ջուր, որոյ վասն կարի նեղութիւն կրեցաք ի ծարաւոյ>։ Բայց բարեբախտապէս պատահեցաք մրգավաճառ անձանց, որք բարձեալ տանէին զմիրգս դրաստուք, այսինքն է սեխ (զարբիզակ)[17], դուինայ և մեղրապոպ (ձմերուկ), յորոց գնեալ զովացաք յոյժ ի ծարաւոյ։

Ելեալ մեր յԱրմանեանայ գիւղէն և գժամս վեց հանապարհորդեալ հասաք ի գիւղաքաղաքն Զանգեան[18]։ Ի հանապարհին կային իջևանք երկուք[19], բայց զրկեալ կիսով չափ աւերակք յանխնամածութենէ։

Գիւղաքաղաքս Զանգեան է պարսպապատ, ունի շուկայս համեմատ բնակչացն։ Բնակիչք նորա՝ կարի իմն մարդասէր և հիւրասէրք իսկ։ Ունի արտաքոյ պարսպին բազում այգիս և պարտէզս պտղաւոր ծառոց, որք բազում զուարճութիւնս մատու//ցանեն անցորդաց։ Յայսմիկ գեղջ պատահեցաւ այր ոմն ազգաւ հայ Գալբիժեցի, անուն նորա՝ Գրիգոր*, զոր իշխան տեղւոյս բռնութեամբ ածեալ էր առ վասն շինութեան հրացանից, որ արհեստիւք** էր ճարտարագործ։ Ա՛ս ևկն յիջևան մեր յայցելութիւն ընծայիւք նորահաս մրգոց առ արբազան տէր Եսայեաւր արքեպիսկոպոսն <և բազում մարդասիրութիւն նոցայ մեղ>, բայց արտում էր սա սաստիկ վասն հնոանալոյն յիւրայնոցն և բնակելոյ ժամանակս բազում ի մէջ այլազգի պարսից։ Թէպէտ ունէր պատիւս յիշխանէ անտի, այլ ի սէր իւրայնոցն յակամայս բնակէր անդ**։

Ելեալ ի Զանգեանայ յետ վեց ժամուց հանապարհորդութեան հասաք ի Սուլթանիայ[20]։ Ի հանապարհին [ո]չ գոյր ջուր լաւ, թէպէտ կային ջրհորք բազումք, բայց բոլորն աւերակ, վասն որոյ նեղութիւնս կրեցաք ի ծարաւոյ, միայն մրգօք շատացաք։

10ա //Սուլթանիա շինեալ է ի վերայ բլրոյ միոյ յարևելից կուսէ յանցս ճանապարհին, և է աստ ամարայնոց արքային պարսից։ Շինուածք տեղւոյս, զոր կոչեն Պալատ արքայական[21], է ամենագեղեցիկ և վայելչադիր, զարդարեալ ի ներքուստ բազում ոսկենկար նըրբագործ պատկերօք՝ նկարեալ յորմն ի վերայ գաճոյ, ապակեհեռ որմովք, մանաւանդ դարպասն, ուր բնակի նոյն ինքն Արքայն, գեղեցիկ և զարդարուն յոյժ։ Որմունք նորա ի վերուստ մինչև ցխոնարհ ոսկեզօծ ծաղկենկար պատկերօք զեղազարդեալք։ Զեղուն նորա նոյնպէս ոսկեզօծ, խառն ընդ բազմագոյն երանգօք պատկերօք արքայնոց***։ Շուրջ պալատովս գոյ դաշտ մի մեծ յոյժ և կանաչազուարճ, լցեալ զալարագեղ խոտովք, ունելով ի ստորոտ բլրոյն և զաղբիւր մի բարեհամ, զուարճարար և յոյժ սառն։ Արքայն պարսից //ի ժամանակս ամարան**** հանդերձ մեծիւրամ տամբ իւ-

* Նախ. անուն նորա Գրիգոր Թարվիզեցի։

** Հետ. յորում արհեստիւ։

*** Հետագայում խաչանիշով նանված են «Բայց ստում էր... բնակէր անդ» նախադասութիւններ։

**** Նախ. և ապակեղինօք բազմօք։

***** Ջեռ.. ամառան։

րով* գայ բնակի ի պալատիս իրրև զամիսս երիս, ապա դառնայ յարքունիս իւր, որ ի Թեյրան: Ասպարիզով միով հնուի ի պալատէս կայ գիւղ մի Սիդրան[22] կոչեցեալ, յորում կան իրրև տունք պարսից տասն՝ ազատք յարքունական հարկաց և պահապան նոյն արքունական շինուածոցն:

Ելեալ մեր ի Սուլթանիոյ յետ <վեց> ժամուց հասաք ի Խոռոմդարայ[23] գիւղն <բազում և առատիկ նեղութեամբք առ ի չգոյէ ջրոյ>: Բնակիչք սոյն գիւղիս համեմատութեամբ այլոց, յորս անցաք, էին սուղ ինչ բարեվիճակ կենցաղավարութեամբք:

Ելեալ մեր ի Խոռոմդարայ և կրեալ բազում տառապանս ի ոտիոյ <առ ի չգոյէ ջրոյ ի ճանապարհին>, հասաք ի գիւղն Սիադրօն[24] զկնի եօթն ժամուց և կացաք անդ զդիշեր մի ի բացօթեայ տեղւոջ մերձ գիւղին:

11ա //Ելեալ մեր ի Սիադրօնայ գիւղէն յետ եօթն ժամուց հասաք ի քաղաքն Ղազբէն[25]: Քաղաքս այս է գեղեցիկ և բարեձև, <ի դաշտավայր տեղւոջ, մերձ լերանց>: Գոն ի նմայ բազում շինուածք երևելիք հին և նոր և քանի [մի] մզկիթք, յորոց ոմանք գեղեցիկք և բարձրաշէնք, բայց մինն յոյժ գերահռչակ՝ գմբեթայարկ և բարձրագոյն: Այս գմբեթ արտաքուստ պատեալ է ոսկով <և կոչի Մզկիթ արքայական>[26]: Ունի քաղաքս աւելի քան զերեսուն ամբարս ջուրց**, այսինքն օվամբարս[27] ըստ պարսից, աղիւսակերտս, յորոց մին կամ երկուքն են շինեալ ի Հիւէյին խան[28] Սարդարէ Երեանայ: Բնակիչք քաղաքիս են ընչաւէտք, գոն ի նմայ բազում երևելի վաճառականք գրեթէ յամենայն տեղեաց և ազգաց***, որպէս և պատահեցաւ մեզ ի մերազանց սերիլոց ի Նորն Ջուղայ Մարզար խան անուամբ: Կացաք մեք**** ի տան միոյ այլազգւոյ զաւուրս երկուս՝ բազում մխիթարութեամբ:

11բ Ելաք անտի և յետ ութն ժա//մուց ժամանեցաք ի գիւղն Ղշլայ[30], բազմաղիւղի նեղութեամբք յերեսաց ծարաւոյ և յանտանելի***** ոտիոյն և կացաք առ զդիշեր մի:

Ելեալ ի Ղշլայու և յետ վեց ժամուց հասեալ իջևանեցաք ի Սօնկրապատ[31] գիւղն: Գիւղս այս ջրաշատ է: Վասն մերձ գոլոյն լերանց գտանին առ բազում <ժողովք ջրոց> և մեծամեծ առուք զուարճարար և սառն ջրոց: <Նոյնպէս և կալին> առատութիւնք ուտելեաց և զանազան պտղոց և խաղողոց: Ունի շուրջ զիւրեւ այդիս բազումս և երկիրն է իրրև դաշտն Արարատայ՝ հարթ և տափարակ և հողն՝ բնդմնաւոր: Բնակիչք գեղջս կարի իմն աշխատասէրք էին յերկրագործութիւնս, քանզի գոյր առատութիւն յոյժ ցորենոյ, գարւոյ, ազնիւ բամբակի և այլոց ընդեղինաց: Կացաք անդ զդիշեր մի ի մէջ պարտիզի միոյ:

---

* Ձեռ. մեծերամբք տամբք իւրովք:

** Հետ. ջրշեղջս:

*** Հետ. վաճառատեղիք ընդարձակագոյնք: Գտանին արտաքոյ քաղաքիս յոլով այգիս խաղողոյ ու բազում ծառս Ֆստղի[29]:

**** Ձեռ. կացեալ մեր:

***** Նախ. առ ի պակասութենէ ջուրց և յանտանելի:

12ա Եկեալ մեր անտի և ժամս վեց // գնացեալ* հասաք ի գիւղն Սուլէյմանի[32]։ Ի գիւղի աստ գտանէր ամենայն բարութիւն։ Մերձ գիւղիս անցանէր գետ մի յորոյ վերայ կայր կամուրջ մի մեծ շինեալ ի քարանց։ Տէր գիւղիս էր Մանուչար խանն[33], Տփխիսեցի, ուր կացեալ մեր գերիս աւուրս՝ ելաք անտի գիմել ի Թէյրան քաղաք։

Իսկ արդ՝ ճանապարհորդեալ ժամս հոթն ի Սուլէյմանիոյ հասաք ի Թէյրան քաղաք ի 15 օգոստոսի**։ Ի ճանապարհին կայր գետ մի մեծ, յորոյ վերայ կայր կառուցեալ կամուրջ մի գեղեցիկ և բարձրաշէն ի նրբատաշ քարանց։ Գետս այս անցանէ երկու աւուր ճանապարհաւ հեռի ի Թէհրանու։

Ճանապարհս այս, <այսինքն ի Սուլէյմանիոյ> մինչև ցԹէյրան, էր երկիւղալի յոյժ յահէ աւազակաց, վասն որոյ ահիւ մեծաւ և <զգուշութեամբ> անցաք զայն ի ցրտաձաւոյց հողմոց, որք սաստկապէս || շնչէին***։

Եւ արդ Յողնալ զանօրէնութիւնս նոցա ի զատաստանի տեառն աստուծոյ՝ ասացուք ըստ տեսութեան մերում ըղքաղաքէս։ Են ի քա-
13ա ղաքիս իբրև 15 տուն յազգէս հայոց[34], //եկեալք ի **** Նոր Ջուղայէ, արհեստիւ ապակեայ վանդակագործ[35] (այսինքն՝ ջամբօռ)[36] և կէսք նա գինէվաճառք և վաճառականք մասնաւոր, ունին երկու փոքրիկ եկեղեցիս և մին վիճակաւոր քահանայ։

Կացեալ մեր ի քաղաքիս զաւուրս ինչ հազիւ կարացաք տեսանել զարքունի բնակութիւնսն, որոց գեղեցկութիւնն ըստ իւրեանց համեմատեալ***** գովանի էր, բայց քաղաքն չունէր յատկապէս գեղեցկութիւն և կարգաւորութիւն։ Թէ՛ ի ներքուստ և թէ՛ յարտաքուստ պարիսպ քաղաքիս հողէ շինեալ է յոյժ անհաստատ։ Ունի բազականին շուկայս և մեծամեծ իջևանս կարավանից։ Գտանին մասնաւոր երևելի վաճառականք, որպէս տեսաք Աղայ Մինասն Տրփխիսեցի[37] և այլ անձինս ի բարեյաջող[38]։ Առատութիւն էր ի քաղաքիս և գտանէր ամենայն ինչ։

13բ //Եկեալ մեր ի Թէհրանու ի Նորն Ջուղայ, ուր առաջին իջևանն էր Քնարակերտ[39], գժամս հինգ հասաք մերձ ի գիւղն և յիջևանն կացաք զայն գիշեր։ Մերձ գիւղիս գտանէր բազում ծառաստունկ և անցանէր գետ մի, որոյ ջուրն՝ աղէհամ։ Առատութիւն էր աստ յամենայն կողմանէ, որովհետև մերձ է քաղաքին։ Ուղևկիցք բազումք էին ընդ մեզ ի ջուղայեցւոց։

---

* Ձեռ. գնացաք։

** Նախ. 1832 և ի 15 օգոստոսի յարբայանիստ քաղաքն պարսից։

*** Այստեղից սկսած հետևյալ հատվածը հետագայում խաչանիշով ճանված է. «Ի նեղութիւնս մեր խառնիւր նաև զարմանք և հիացումն մեծագոյնս ընդ անկարդ և անզօր իշխանութիւնս պարսից տէրութեան, տեսանել զի նոյն իսկ ի գրունս աթոռոյն յաճախէին յափշտակութիւնք, գողութիւնք, անկարգութիւնք և անզգուշ անօրէնութիւնք։

Աւաղ կուրութեան ազգիս այսորիկ անօրինի և անիրաւի, որք իբրև զդազանս վայրիս գիշատեն զմարդիկ և պարծին յանօրէնութեան իւրեանց, ոչ դիտելով զի բազմահամբերն աստուած, յաւուր միում կործանելոց է դանօրէն տէրութիւնս իւրեանց և տալոց ի ձեռս թագաւորի ողորմածի, բարերարի և ազգի բարեգործի և առնողի զկամս իւր սուրբ»։

**** Նախ. բոլորովիմբ եկեալք։

***** Նախ. համեմատութեան։

Ելեալ աստի զկնի վեց ժամուց հասաք ի Հովուղ Սուլթան[40] տեղին, որ միայն իջևան էր կարավանից և վաճառէին զամենայն ինչ ի պէտս ուտելեաց: Մերձ իջևանիս կայր ամբարանոց մի ջրոյ, որոյ ջուրն էր անձրևի և գրիթէ միանգամայն հոտեալ և լի որդամբք:

Յետ ժամու միոյ պանդոկապետ տեղւոյս, զոր ռաուար[41] կոչեն, եկն առ մեզ և պահանջէր զդիւահարիս ի մէնջ, զոր առնեն պարսիկք
14ա յաղագէ մերմէ յամենեցունց առանց կարգի // ճանապարհորդաց ընդ այս տեղի: Սակայն սա ինքն չունէր իրաւունս պահանջելոյ, քանզի չէր հարկապահանջ, այլ պանդոկապետ (այսինքն՝ քարվան[ս]արադար)[42]: Այլ դիտացեալ նորա զհայազգի լինելն մեր, կեղծեալ զինքն յանուն հարկապահանջի, պահանջէր բռնութեամբ ի մէնջ քան թուման դրամս: Եւ մեք տեսեալ, թէ ոչ գոյ հնար իջանելոյ նորա ի չարութիւնէն, զոր սպառնայր ի վերայ մեր և յոյժ նեղէր և չէր ոք, որ առնէր իրաւունս, ոչ ոք ի մէնջ իշխէր հակառակիլ անօրէնիս: Ո՜հ, յոյժ ցաւելով զրեմ, թէ այսքան բռնանան պարսիկք յազգ մեր և նեղեն անօրէնութեամբ զբրիստոնեայս՝ եղեալս ընդ իշխանութեամբ իւրեանց: Զիարդ և իցէ, զկնի բազում ծուլանման արտասուաց և աղաչանաց, բռնութեամբ էառ ի մէնջ զինն հատ դրանիս[43], որ է պարսից դրամ և ապա արձակեաց յո՜յժ, յո՜յժ նեղութեամբ:

14բ Ելեալ մեր աստի մեծ յուսահա//տութեամբ <չերեկոեան պահուն>, չետ եօթն ժամուց հասաք ի Փօլիղալլաք[44] անուանեալ իջեւանն, որոյ մերձ կայր պատուական առու մի ջրոյ, որով մխիթարեցաք ոչ սակաւ, նոյնպէս ի բարեհամ պտղոց, որովք շատացաք, քանզի վասն անցաւորաց վաճառեն (այսինքն՝ մեղրապոպ, ղարբիզակ, սեխ): Կացեալ աստ վասն կերակրոյ և սուղ ինչ հանգստութեան, զկնի մեր ժամուց կրկին անկաք ճանապարհ առ Քեաշան քաղաքն պարսից:

Ուստի զկնի իմն ժամուց հասաք ի գիւղաքաղաքն Քեաշան գիշերային ժամու, տեսաք ի ճանապարհին զքանի մի գիւղս զարդարեալս ծառօք բազմօք: Լուաք աստ ի շուկայն թէ՝ ճանապարհն աստի մինչև ցԱսպահան է երկիւղալից յոյժ յաւազակաց, որոց բազմացեալ յոյժ կողոպտէին զանցաւորս և վիրաւորէին, որպէս և մեք իսկ տեսաք վիրաւորեալսն յաւազակացն: Ուստի մեծապէս որոտ-
15ա մեալ էաք և վարանեալք, թէ դիա՞րդ ունիմք անցանել ընդ այն ճանապարհ: Այլ սակայն յանձնեալ զմեզ ի խնամս և ի պահպանութիւնս տեառն, հաստատեցաք զմիտս երթալ Աբտասանայ անուանեալ ճանապարհաւն[45]:

Քեաշան քաղաքն է գեղեցիկ և բարեձև, այլ ունի բազում աւերակս եղեալս ի ժանդախտ ցաւէն յամի տեառն 1828, յորում գրիթէ կէս մասն բնակչացն մեռեալ են: Տունք նոցա և մեծամեծ բնակութիւնք են աւերակ, նոյնպէս և նոնաշատ այդիք նոցայ անխնամ: Իշխան տեղւոյս է արքայորդի, որ միայն վասն իւր ունի հոգս և ոչ վասն հպատակելոց, որով քաղաքն ողջոյն է յանկարգութեան: Ունի քաղաքս գեղեցկաձև իջևանք նոյնպէս և կրպակս բազումս շինեալս ի հին ժամանակաց: Վաճառականութիւն չէր այնքան, որքան երբէք, այլ մասնաւոր: Ի քաղաքին գտանին բազում տունք չերբայեցւոց:

15բ //Ելեալ մեր զղիշերային ժամու ի Քհաշանայ բաղաքէն ահիւ և դողութեամբ մնծաւ յերկիւղէ աւազակաց և զաւուրս հինգ Ճանապարհորդեալ ի վերայ լերանց ընդ սահմանս Արտաստանայ և առեալ յերկիւղէ աւազակաց և անիրաւաց՝ չկարացաք ասել մինչև ցնորն Զուղայ զրել զորպիսութիւնս ստորագրութեանց և վասն տեղեաց ևն։ Զկնի բազմադիմի նեղութեանց զոր կրեցաք ի ձեռն պէս պէս փորձութեանց, հազիւ հազ, ողորմութեամբ ամենակարողին Ա[illegible]ծոյ, ժամանեցաք ի Նորն Զուղայ մերայնովք հանդերձ ի 1832 ամի, ի սեպտեմբերի, յաւուր կիւրակէի, ի ծոնի վերացման սրբոյ խաչին, և օթևանեցաք ի հռչակաւոր վանս սրբոյ Ամենափրկչի[46]։

Կայ իմ ասասանօր ստորագրութիւն բաղում և ընդարձակ զբազմահռչակ զդեղեցկադիր քաղաքէն Ասպահանայ, որոյ գեղեցկութիւն
16ա և բարե//խառնութիւն օդոցն հիացուցեալ է զճանապարհորդս ամենայն, որպէս և մեք իսկ տեսաք և առաք զփորձն ականատեսութեամբ։

Քաղաքն Ասպահան (ըստ հնոց Շուշան)[47] շինեալ է ի մէջ ընդարձակատոյն և լայնատարած մնծադոյն տափարակ դաշտի, որոյ շրջապատն է իբր վաթսուն մղոնաչափ, շրջապատեալ ի տեղիս—տեղիս բարձրադոյն և է ղի փոքրագոյն՝ լերամբք և բլրօք։ Գոն ի քաղաքիս բաղում շինուածք մնծամնծ հնադոյն[ք] և նորք, գեղեցիկ[ք] և հոյակապք յոյժ, որք են վաճառատեղիք մնծակառոյցք (այսինքն՝ բարվանսարայք)։ Բաղումք ի նոցանէ կրկնայարկք, ուր կան բաղում մնծամնծ երեսիլ և հարստագոյն վաճառականք յազդէն պարսից։ Տեղիքն տուր և առուբեան (այսինքն՝ բաղարքն, որք են անթիւ) են մնծամնծ և կրպակք բազում՝ շինեալ յերկուս կողմանս վաճա-
16բ ռանո//ցին (այսինքն՝ բազարին), ունելով յարկս և ձեղունս կամարակապս և զմրխիայարկս և բարձրաշէնս, ուր մարթ է շրջել առանց նեղութեան յանձրևոյ և յարևոյ և գրնթէ ընդ համօրէն վաճառատեղիս։ Ի մէջ երեսիլ շինուածոց քաղաքիս գլխաւոր է պալատն արքային, ուր բնակի արքայն պարսից ի գալն իւր յԱսպահան։ Գեղեցիկ է պալատս յոյժ և մնծ, զարդարեալ բազմանկար ոսկեզօծ պատկերօք արքայազանց պարսից, յետնալք կան հայելիք մնծամնծք յորմունս և ի ձեղունս սրահից և սենեկաց ունելով զնեղեցկակերտ մարմարիոնեայ ջրբուղիս (շատրուանս) ի միջի։ Զի՞նչ ասացից և վասն ընդարձակատոյն տեղւոյն, որում Շահն Մէյդան[48] կոչեն զանուն։ Յերկուց կողմանց հրապարակիս են շինուածք երկայարկ բնակութիւնք զօրաց,
17ա յորոց առաջին արեմտեան կողմն է՝ մնծ մզ//կիթն պարսից, յոր ոչ որ ի քրիստոնէից կարէ մտանել, իսկ նթէ պատահիցի անկարծիք կամ՝ ի հաւատոյն պարտի ուրանալ և կամ՝ մեռանիլ չարաչար։

Նաև գեղեցիկն ի շինուածս և ի գրօսարանս քաղաքիս է տեղին Չարբաղ[49] կոչեցեալ, որ է Ճանապարհ մնծ և լայն, որ հանէ մինչ Զուղայ՝ ի բնակութիւն Հայոց։ Երկայնութիւն նորա՝ իբրև մղոնս երկուս՝ բաժանեալ յերիս անցս Ճանապարհաց, ունելով ի միջոցս շաւղացն բուրաստանս ծաղկանց, վարդենիս բազում աղնուադոյն[ս] և զայլ ծաղիկս և մնծամնծ ջրբուղիս։ Զորք են շարք բարձրաբերձ սօսեաց, [որք] բաժանեն զտեղին յերիս անցս Ճանապար-

հաց։ Յերկուց կուսէ պողոտային են ապարանք հոյակապք և բարձրաշէնք* և մզկիթ մի մեծակառոյց և գեղեցիկ։ Յարևելեան և
17բ յարև//մտից կողմն ճանապարհին, այսինքն Զարբաղին, կան և այլ փոքր մեծամեծ և արբունականք հէշտ-բրհէշտ[50] կոչեցեալք, այսինքն է դրախտ ուխն ըստ պարսից, շորք ի մի կողմն և շորք՝ ի միւսն, յորս գոն մեծամեծ և գեղեցիկ ապարանք[51] վասն արքայազանց և բազմատեսակ ծառք աղնիւ պտղոց, և բաղում ծառք թթոց, որք, յիրաւի, ի ժամանակս ամարան, մանաւանդ ի գարնան, բերկրեցուցանեն զսիրտ մարդոց դուարճատես գալարութեամբք իւրեանց։

Անցեալ ընդ ճանապարհն վերոյգրեալ (այսինքն է՝ Զարբաղն) ընդ առաջ գայ կամուրջ մեծ և հռչակաւոր շինուածով, որ կառուցեալ է ի վերայ Զանգարուտ[52] գետոյն, որ և բաժանէ զդաշտն Ասպահանայ յերկուս մասունս, բաւականին լայն, յաւելի քան զտասն
18ա հնծիլոց ասպարեզս։ Ունի //երեսուն և երկու մեծամեծ ակունս ջրոց։ Եարխարն են բարակերտք, իսկ գլուխն՝ աղիւսակերտք։ Անցեալ ընդ կամուրջս՝ կայ դաշտ մի մեծ, ուր սերմանեն զբանջարեղէնս և զպտուղս։

Յետ սոցա ամենեցուն ընդ առաջ գալանէ Նորն Ջուղայ՝ բնակութիւն աղգին հայոց, զորմէ առաքելագրեցիք ասացաք։

<Սրդ՝> Նորն Ջուղայ է ի հարաւային կողմն Ասպահանայ որ է արուարձան նորա բաժանեալ Զանգարուտ գետովն, շրջապատ նորա յաւելի քան զմղոնս տասն՝ առեալ նաև զաւերակունք՝ շինեալ ի վերայ տափարակ և բարեբեր գետնոյ։

Իսկ արդ՝ որպէս յայտ է ի պատմութենէն Հայոց, Շահաբաս Ա[53] Սրբայն պարսից գրնակիչս Հնոյն Ջուղայու որ ի հայս բռնութեամբ
18բ վարեաց, անտի տարեալ զնոսա յԱսպահան քաղաք և տուեալ//զտեղի, բնակեցոյց ի նմա, զոր կոչեցին Նոր Ջուղայ։ Եւ ըստ նոյն պատմութեան, էին վարեալքն աւելի քան զերկուտասան հազար տունս հայոց, որք գոլով ընչաւէտք յոյժ, շինեցին տունս մեծամեծս և ընդարձակս յոյժ, բարձրակառոյցս, զեղազուռ արտիւք, գեղեցկաձև և ոսկեզօծ սեներկօք, զուարճարար և բազմապատուղ այգեստանօք, զորս արդարև ապարանս** իշխանաց և իշխանապետաց արժան է կոչել։ Կառուցեալ են նաև վանս երկուս և ղեկեղեցիս քսան և չորս գեղեցկակառոյցս, հոյակապս, զմբեթաձարկս և ընդարձակագոյնս, ուր ճոխացեալ էին բազմակոյտ հարստութեամբ, ծաղկեալ և բազմացեալ էին գեղափայլ գերդաստանօք, մեծահոդի աւագանւովք և աշխարհաշէն մեծագործութեամբք։ Այլ սակայն, աւաղ, պարսկականն՝ անօ-
19ա րէն բռնակալութեան, աշ//խարհաւէր իշխանութեան, անողորմ և անյագ հարկապահանջութեան***, մանաւանդ ի ժամանակս անիշխան և անտէրունջ քաղաքական պատերազմաց[54], իսպառ աւերեալ, կործանեալ և ամայացուցեալ են զայս տեղիս բաղձալի։ Թողեալ իշխա-

---

* Հետ. Բարձրանգուն։

** Զետ. ապարանք, Հետ. իրրև զապարանս։

*** Զետ. որք աշխարհաւէր իշխանութեամբ, անողորմութեամբ և անյագաբար հարկապահանջ լինէին։

նաց և աւագանւոյն գաւնս և զապարանս, փախուցեալ են յերկիրս այլևայլս, սոյնպէս հասարակութիւն ազգիս մի զկնի միոյ փախուցեալ՝ ոմանք ի Հնդիկս և ոմանք յաշխարհ Ռուսաց։ Միանգամայն դատարկացեալ են այժմ տեղիք նոցա։ Մեծամեծք տունք նոցա եղեալ են աւերակք և որջք գազանաց և բաղումք ի նոցանէ՝ անդաստանք ցորենոյ և բանջարեղինաց, որոց կիսաւերք և տրամազգեաց տեսութիւնք խարշաւեն և ճմլեցուցանեն զսիրտ տեսողաց՝ ազգասիրաց և կարեկից համասեռից։

19բ <Իսկ> արդ՝ թողեալ զտրամալի վիճակ// զայժմեան որպիսութիւնս Նորոյն Ջուղայու, ստորագրեցից զնշխարս մնացուածոց նախնի վայելչութեանց և դեղեցկութեանց նորա։

Արդ այժմեան Նոր Ջուղայ բաժանի չոքին թաղս[55] (որ ըստ իւրեանց բարբառոցն ասեն մալաթս)[56] ի մեծի և ի փոքու։ Բնակիչք հօթանց թաղիցս հաշուին իրրև տունք երեք հարիւր և չիւան[57], որք չատաչն էին աւելի քան զերկուտասան հազար մեծամեծ տունս։ Այժմեան բնակիչք ի գործ ածեն բազում արհեստս, այսինքն՝ վաճառականութիւն, ոստայնանկութիւն (այսինքն է ջուլհակութիւն), ոսկերչութիւն, դարբնութիւն, ճարտարապետութիւն և այլ կենցաղական արհեստս։ Սակայն ըստ աշխատանաց իւրեանց չեն այնքան ընչաւէտք, քանզի բոնի հարստահարութիւնք և անկարգ կառաւարութիւնք

20ա պարսից ոչ թողուն զնոսա չանդորրութիւնն, չորմէ նեղեալք և// չուսահատեալք, ոչ միայն չեն կատարելագործեալ զայնս, այլև օր չաւուր անշքացեալ ոչ գտանեն զանդորրութիւն մտաց, հանգստութիւն կենաց և զանդուդական զաղաութիւն, որով մարդ կարէ բարւոք կերպիւ կենցաղավարիլ։

Սոյնպէս չունելով ցժամանակս մեր բարեկարգ դպրոցս և վարժապետս, զրկեալ են ի հարկաւոր դիտութեանց, բայց նորոգ շքեղափայլ և հայրենասէր հանդուցեալն ի տէր պարոն Գրիգոր Սամեան Ջուղայեցի՝[58] բնակեալն ի Մադրաս, ի կատակի իւրում քան հազար ռուպի է թողեալ, զի ևկամտաւ նոյն դումարին կառուցի ուսումնարան մի բարեկարգ հայկեան լեզուի ի Նորն Ջուղայ՝ կարգելով զվարժապետ մի ուսեալ քաջապէս։

Խօսեցեալ փոքր ի շատէ զվիճակէ և զհանգամանաց զազգէ

20բ մերմէ՝ ստորագրեցից զթաղս և զեկեղեցիս Ջուղայու։ // Թաղն (այսինքն մալաթն) առաջին կոչի Ջուղայ։ Ի թաղիս աստ կան եկեղեցիք երկուք և վանք մի հռչակաւոր միանձանց՝ կոչեցեալ վանք Ամենափրկչի։ Անուանք եկեղեցեացն՝ սուրբ Ստեփաննոս (այն է՝ Մէյտանի ժամն)[59] և սուրբ Աստուածածին[60]։

Վանք սրբոյ Ամենափրկչին է շինուած բարձրաշէն և զեղեցկաձև, ունի կաթողիկէ մի մեծ յոյժ՝ ազիւսակերտ, զարդարեալ է յոյժ ի ներքուստ զեղեցկանկար տէրունական պատկերօք սկսեալ՝ յարարչագործութենէն Աղամայ ի վերուստ մինչև ի խոնարհ։ Կաթողիկէն ոսկեզօծեալ* ի ներքուստ ընդ խառն բազմագոյն երիներին

* Հետ. ոսկեզօծ։

նկարօք և ծաղկենկար դրուագօք*։ Ունի խորան մի բարձր և գեղեցիկ, ոսկենկար և յոյժ զարդարուն[61]։ Ունի նաև զանգակատուն մի փոքրիկ ի տանիս եկեղեցւոյն, ի վերայ Արեմտեան դրանն, ունի-
21ա լով // զոյգ մի զանգակս[62]։ Ունի նաև զանգակատուն մի մեծ յոյժ յանդիման արեմտեան դրանն, հետի իրրև երեսուն ոտնաչափ չեկեղեցւոյն՝ շինեալ ի վերայ չորից քարից սեանց՝ կրկնայարկք, և ի գլխոյ սեանցն մինչև ցծայրն՝ աղիւսակերտս և կաթողիկէ մի փոքրիկ՝ ի գլուխն ունի երկու զոյգս զանգակաց։ Եւ ունի վանս բազում եւ մեծամեծ և փոքրիկ սրահս, սննեակս, եւ առաջնորդարանս երկուս և գեղեցիկս, և սեղանատուն մի փոքրիկ և բազում այլևայլ շինուածս շուրջ զվանօքն՝ կրկնայարկս։ Բաժանեալ է վանս յերկուս մեծամեծ բակս և յայլ փոքունս։ Յերկրորդ բակին, որ է յարևելեան կողմն եկեղեցւոյն, զոյ փոքրիկ բուրաստան ծաղկանց և ծառս ինչ բարիբեր պտղոց և նոճիք բարձրաբերձ։ Աստանօր նստի առաջնորդ
21բ հայոց առաքեալ ի սրբոյ էջմիածնէն, և ունի // զքէմս բազումս[63] ընդ որ և ողջոյն Հինդ, յորս գտանին յազգէս հայոց և զամենայն հայս, որք են ընդ իշխանութեամբ պարսից։ Քէպէտ ունի վանս զեկամուտս բազումս ի Թճմից իւրոց, այլ սակայն, որպէս ի վերն ասացի, բռնակալութիւն պարսից պէսպէս ծախիւք սպառէ զայնս, յոյր սակս և միանձունք կարի իմն անշքութեամբ անցուցանեն զաւուրս իւրեանց։

Երկրորդ եկեղեցին Թաղիս՝** է սուրբ Սահփաննոս ի հրապարակին՝ կոչեցեալ Մէյտանի ժամ, մեծ և բարձր յոյժ, ունի կաթողիկէ մի կարի իմն հոյակապ, որ զարմացուցանէ, ի ներքուստ համակ ոսկեզօծ, հանդերձ սէրունական պատկերօք, որմունքն ի ներքուստ բոլորն պատկերազարդք։ Ունի սեղան մի մեծ և յոյժ բարձր և զարդարուն վայելչապէս։ Արդարև, ոչ է ինձ հնար բանիւ բերանոյ կամ
22ա ի գիր //արձանագրուցանել։ Իսկապէս զգեղեցկութիւն սքանչելակերտ եկեղեցւոյս, թէ՛ ի ներքուստ և թէ՛ յարտաքուստ, մանաւանդ կաթողիկէն նորա՝ մեծագոյն յոյժ և գեղեցիկ։ Հանդէպ եկեղեցւոյս կայ հրապարակ մի փոքրիկ զոր մէյտան կոչեն, ուր զամենայն աւուրս կիւրակէից լինին վաճառք ուտելեաց և այլ մասնաւոր իրաց։ Սակայն ծանր երևեցաւ ինձ այս արարողութիւն, որ յաւուրս կիւրակէից։

Երրորդ եկեղեցին <Թաղիս> է սուրբ Աստուածածին, <որ է> գեղեցիկ և ունի կաթողիկէ աղիւսակերտ։ Ի շրջապատս սորա գոն այգիք խաղողոյ և այլոց պտղաւոր ծառոց, այսինքն խնձորոց, ծիրանեաց, նշոց և վարդենիս։ Ի Թաղիս[64] կան բազում մեծամեծ և հոյակապ տունք հայոց, շէնք և աւերակք՝ բնակեալք ի հայոց և ի
22բ պարսից։ Փոքր ինչ հետի ի Թաղէս կան այլև երկու եկե//ղեցիք՝ սուրբ Գէորգ[65] և Լուսաւորիչ[66]։

Ի Թաղն երկրորդ՝ Ջարսու[67]. եկեղեցին Թաղիս կոչի սուրբ Յովհաննէս։ Կայ աստ և բաղանիք մի հայոց փոքրիկ։

---

* Հետ. նկարուց և ծաղկենկար դրուագաց։

** Հետ. տեղւոյս։

Թաղն երրորդ կոչի Պռավէնց[68]։ Եկեղեցի թաղիս կոչի սուրբ Ստեփաննոս, որ է մեծագոյն յոյժ, կամարակապ և հոյակապ, շինեալ ի վերայ չորից սեանց։ Ունի երկու մեծ բակս, ուր կան թթենիք և այլ ծառս պտղոց։ Կան ի թաղի աստ բազում աւերակս մեծամեծ տանց, որք են այժմ եղեալ այգիք խաղողոց և պտղոց։

Թաղն չորրորդ, որ կոչի Քօչէր[69], եկեղեցի թաղիս անուանի սուրբ Ներսէս Հայրապետ[70], որ է փոքրիկ, բայց դեղեցիկ ի ներքուստ։

Թաղն հինգերորդ կոչի Ղարագէլ[71], որոյ եկեղեցւոյ անունն է սուրբ Նիկողայոս[72] և է յոյժ փոքրիկ։ Բնակիչք թաղիս են կաթաւղիկ։

23ա //Թաղն վեցերորդ կոչի Մահլաթ (կամ՝ Թարվիզեցւոց մահլաթ)[73]։ Եկեղեցի թաղիս շինեալ է յանուն սրբոյ Լուսաւորչին, բայց այժմ սուրբ Մինաս կոչի[74], վասն լինելոյն ի նմա նշխարաց սրբոյս։ Եկեղեցիս այս է գեղեցիկ և շինուածք ընտիր մանաւանդ ի ներքուստ որմունքն զարդարեալ ոսկենկար տէրունական պատկերօք։ Ունի և կաթուղիկէ վանդակաւոր և զանգակատուն մի փոքրիկ՝ ի տանիս եկեղեցւոյն ունելով զոյգ մի զանգակս։ Ունի նաև խորան մի առանձին և դաս արտաքոյ եկեղեցւոյն վասն ամարան ժամերգութեան։ Թաղս այս է բազմամարդ և շէն քան զայլսն, որք են յաւելի քան զտունս Հարիւր։ Բնակիչք թաղիս ըստ մեծի մասին են կաթաւղիկ։ Կան աստ բազում տունք մեծամեծ[ք] և դեղեցիկ[ք] և այգիք։

Թաղն եօթներորդ անուանի Յարևան[75]։ Եկեղեցի, որ կոչի Ամե-
23բ նափրկիչ[76]//, որ է կարի իմն մեծագոյն և դեղեցիկ կառուցեալ ի վերայ չորից սեանց և կամարակապ՝ կամարքն լայնաձիգ յոյժ, որք զարմացուցանեն զտեսողս, ունի կաթողիկէ մի մեծ և վանդակաւոր։ Կայ և արտաքոյ եկեղեցւոյս խորան մի և դաս մի վասն ամարան։

Գոն ի թաղի աստ բազում տունք մեծամեծք։ Յոլովք նոցունց աւերակք և անբնակ[ք], զորս արարեալ են այգիս։ Են աստ նաև եկեղեցիք չորս[77], այլ՝ աւերակ միանգամայն, անտէր և լքեալ, բայց ի միոյն, որ Յոհաննայ վանք կոչի, դի թէպէտ եկեղեցի սորին ամբողջ է, բայց չունի բնաւ ժողովուրդս, դի դառնարկացեալ է թաղս այս ի բնակչաց և բնակութիւնքն՝ աւերեալք և եղեալ[ք] այգիս մեծամեծս։

Մերձ Քօչերի եկեղեցւոյն կայ և եկեղեցի մի Հոօմէական, զոր ի մերում ժամանակի կային Բ վարդապետք, որոց միոյն անունն էր
24ա //Յօհաննէս։ Անուն եկեղեցւոյ սոցա է Թօմինիկեան։ Ունին սոքա քանի մին տուն ժողովուրդ, զորս ի մէնջ վասն առաւել աղքատութեանց օգնականութեամբ ընչից դարձուցեալ են հաւատոյ մերմէ և վասն այսր մտաց նսեմին անդ առ ի որսալ անտէրունչ մերազինս։

Հանդստարանն հայոց է ի հարաւային կողմն Ջուղայու, որ է ստորոտ լերինն Սոֆիոյ և դաշտ ընդարձակ յոյժ՝ ունելով զհաղարաւոր գերեզմանս ի մեծամեծ քարանց (Թող և անյիշատակս)։ Կայ ի միջի հանդստարանիս խորանաձև շինուած մի, զոր Ջաղայարոյց կոչին և իբրև զսուրբս պատուեն վասն սքանչելագործութեանց իւրոց,

որ պատմի (գործեալ) աւանդութեամբ։ Վերոյ յիշեալ լեառն Սօֆիայ
ի յոյժ մեծ և գեղեցիկ ի տեսանել, յորում և կայ շինուած մի վասն
ղբօսանաց։

24բ Կուսանաց անապատ մի ևս գոյ մերձ Ջարուս մալաթիին, որոց
եկեղեցւոյ անունն է սուրբ Կատարինէ (որոյ մասն ևս է անդ) շի-
նեալ յամի տեառն 1235, յորում կան այժմ միանձունք քան, ուր
կենցաղաւարին որօք ժողովրդոց։

Եկեղեցի սոցա է յոյժ փոքրիկ, այլ՝ գեղեցիկ և զմբեթայարկ,
ի ներքուստ նկարեալ տէրունական պատկերօք և ունի խորան մի
մեծ և բաւականին անօթս սրբութեանց։ Կառաւարութիւն միանձնե-
ցելոցս է յոյժ ի բարեկարգութեան, որք են ընդ իշխանութեամբ
մայր[ա]պետին։ Ունին և սեղանատուն մի փոքրիկ, յորում կերակ-
րին համայնքն։ Եկեղեցի սոցա ունի շրջապատ պարիսպս, յորում
գոյ երկու սրահ։ Գտանի[ն] անդ և ծառս քանի մի պտղոց։

Կառաւարութիւն ազգին հայոց տան երբեմն ի ձեռս հայոց, ի մի
ոմն յաւագացն հայոց, զոր Ջարուբ[78] կոչեն, որ ունի իշխանութիւն
25ա առնելոյ զմանուար դա//տաստանս հայոց։ Իսկ զմեծամեծսն առ
պարսիկ դատաւորսն քաղաքին ածեն։

Կառաւարութիւնն հայոց ի ժամանակս մեր տուեալ էին ի ձեռս
Ամենափրկչի առաջնորդին[79]։ Տուեալ էին և զդիւրս կարողութեան,
որ զբոլոր հարկս գլխադրամոյ և այլոց ժողովեալ տայցէ յարքու-
նիս, զորոյ յանձն առնուլն ծանր թուէր պատուիրանացն Աստուծոյ,
որպէս զրէ և Շնորհալին յընդհանրական թղթոյն* վասն այսպիսի
մարմնաւոր իշխանութեանց, զոր չէ վայել դասուցն հոգևորականաց։

Յայսմ ժամանակի էր սով մեծ ի քաղաքիս և ի շրջակայ սահ-
մանս Ասպահանայ ի մարախոյ, որք անթիւ բազմութեամբ ափոնալք
յարտորայսն ցորենւոյ և ամենայն ընդեղինաց՝ ապականեալ ան-
հնար արարին ոչ միայն ի միում ամի, այլ յերիս ամս յաջորդաբար,
որով զօրացեալ սովոյն յոյժ, յոյժ նեղէր և ի չետին ախտաւորութիւն
25բ և թշուառ//ութիւն հասուցանէր զրնակիչսն։

Արդ կացեալ մեր զամիսս ինչ ի Նորն Ջուղայ, ի վանս սրբոյ
Ամենափրկչի, վայելեալք զսէր միանձանց վանացս, ելաք ի Ջու-
ղայոյ 1832 յամի և ի 4 ամսոյն նոյեմբերի գնալ՝ ի Շիրազ։ Եւ ժամս
ինն հանապարհորդեալ բազում նեղութեամբ ի ոտից և ցրտային
հողմոց՝ հասաք ի Մայխար[80]։ Մինչ իջևանելն էաք առ, հարկապա-
հանջք տեղոյս եկեալ պահանջէին ի մէնջ զդլխահարկ՝ թումանս
ութն։ Յետ բազում հակաճառութեանց տուաք զհինգ թուման միայն։

Բնակիչք զեղջս էին վատթարագոյն յոյժ, զող, մարդասպան և
արիւնահեղ**, լի ամենայն չարիօք։ Էին ընդ մեզ հանապարհորդք
բազումք ի ջուղայեցւոց։ Կացաք մեք*** առ զդիշեր մի բազում
նեղութեամբ։

Ելաք անտի և ժամս հինգ գնացեալ բազում նեղութիւնս կրե-
26ա լով ի ճանապա//րհին վասն անհարթութեանց և խորխորատ վայ-

* Հետ. յընդհանրականին։
** Նախ. արիւնախանձք։
*** Ձեռ. Կացեալ մեր։

բնացն հասաք ի գիւղն Ղումիշայ[81] և իջևանեցաք յաւերակ իջևանի միում։

1830 Թուին ի ժանտախտ ցաւէն բազումք մեռեալ էին, ուստի գրեթէ գիւղս այս կիսով չափին էր աւերակ և բնակիչքն ախքաւոք։ Յոյժ մատաղջութեամբ յերկիւղէ զողոց՝ կացաք անդ զգիշեր մի։

Ելաք անտի և գժամս եօթն ճանապարհորդեալ ի վայրս խորին և ի տղմուտս՝ հասաք ի գիւղն Էմինադար[82]։ Ի գեղջս կայր մերձ իջևան մի քարակերտ և կէսն աղիւսակերտ, որոյ մերձ կայր և պատուական առու ջուրց, որով մխիթարեցաք ոչ սակաւ։

Յայսմ ճանապարհի կրնացաք երկիւղս յոյժ յահէ աւազակաց, քանզի բազմացեալ էին յոյժ յայնժամ և յանխնայ կողոպտէին զամենայն ճանապարհորդս։ Ուստի խորհուրդ առեալ մեր յառաջնորդեցաք // առնուլ ի վարձու չորս զինակիրս զի ուղեկցեալ ընդ մեզ ազատ պահեցեն [զմեզ] յաւազակաց։ Հաւանելի ցուցաւ այս առաջադրութիւն ամենեցուն, որք ընդ մեզ ճանապարհորդք էին, որոց մինն էր անգղիացի, այր պատուական, զոր շրջէր վասն աշխարհատեսութեան։ Կալաք զարս տասն ի վարձու ի գիւղականաց անտի զինակիրս (այսինքն՝ Թուանջչիք), որք ընդ մեզ ի մէջ գիշերի եկեալ՝ գնացաք ահիւ և դողութեամբ մեծաւ յուսացեալ ի պահպանութիւնս Տեառն։ 26բ

Ելեալ աստի յետ իննն ժամուց՝ հասաք անվնաս ի գիւղն Շօլկըստան[83], կայր աստ իջևան մի աւերակ, որ և եղեալ է տեղի աւազակաց, զի մերձ տեղւոյն աւազակաց, որք բախտիար կոչին[84]։ Գիւղս այս է փոքր և պարսպապատ, բնակիչքն զողք և զողակից[ք]։ Մինչ իջևանեալ էաք աստ, բնակիչքն ասացին մեզ թէ գունդք աւազակացն յայսմ գիշերի ունին// գալ և իջևանիլ մերձ գիւղիս, ուստի զի մի կրնաջիք վնաս ինչ ի նոցանէ, տամք ձեզ ի գեղջս զտեղի իջևանելոյ։ Հաւանեալ բանիւ նոցա գնացաք անդր, ուր նոքուն մեզ տեղ ինչ ախտեղի և անարդ յոյժ, մանաւանդ փոքրիկ, յորում մնացեալ զգիշեր մի անհնարին տառապանօք յախտեղութենէ տեղւոյն և յանգրիվի քնահարութենէ, որ զգիշերն ողջոյն արթնութեամբ անցուցաք մինչև ի ծագիլ առաւօտուն։ 27ա

Ելաք անտի և գժամս հինդ գնացեալ հասաք ի գիւղն Աբադալ[85]։ Կային ի գեղջս քանի իջևանք, բայց՝ աւերակք։ Ունի գիւղս այգիս բազումս շուրջ զիւրև, յորում գոն միրգք բազումք խաղողոց և այլ պտղոց։ Ունի և ջուր լաւ, հաց, միս և այլն։ Կացաք աստ զգիշեր մի մխիթարութեամբ և այն՝ իբր։

Ելեալ աստի և գժամս հինդ գնացեալ մեծաւ նեղութեամբ հասաք ի գիւղն Քիլիլ[86]։ Աստ լինելով իջևան, // առ անճարու իջևանեցաք ի միում աւերեալ և քայքայեալ տան, որ ասէին լինել յառաջն հնձան խաղողոյ։ Բնակիչք գեղջս կարի քիմն տնանկ էին, քանզի ասէին երկք ամք են, յորմէհետէ եկեալ մարախաց ուտեն զամենայն ցորեանս և զայլ ունդս, եւ իշխանն բռնադատութեամբ առնու զհարկս տարեկան։ Ուստի յայնքան ախքաւութեան էին մինչ զի հաց կորեակի ևս ոչ ունէին։ Մնացաք անդ զգիշեր մի յոյժ նեղութեամբ։ 27բ

Ելեալ աստի և յետ միոստան ժամուց հասաք ի գիւղն

Ղշլայ[87], զի թէպէտ կայր ասա իջևան մի, բայց միանգամայն՝ աւերակ: Վասն որոյ անճարացեալ մնք ևս իջաք ի յաւերակ և խարխալեալ և միանգամայն յաղտեղի տան միում, կարի նեղութիւնս կրելով, մինչ չտալ քուն աչաց մերոց զայն դիշերն: Թողեալ այս ամե-
28ա նայն, ուտելիք ոչ ինչ գտանիւր, բայց միայն՝ // հաց գարեղէն:

Ելաք աստի և գժամս ուրն գնացեալ հասաք ի գիւղն Մաշատ-Մօղղար[88]: Ճանապարհն էր լեռնային, յոյժ անհարթ և անտառային: Կարի իմն նեղութիւնս կրեցաք յահէ աւազակացն, որք զբազում երեւեակս կողոպտէին, բայց, ողորմութեամբ Տեառն, մեք անվնաս անցաք: Զգտաք ասա իջևանս, բայց զտեղի մի կարի իմն աղտեղի, զոր սակաւ ինչ մաքրեալ, բազում ձանձրութեամբ կացաք անդ զաւուրս երկուս վասն յորդահոս անձրևի: Բազում գժուարութեամբ գտաք զհաց ցորենոյ և այն աննպ յոյժ, զոր կրկին հրով խարուկի չորացուցեալ՝ հազիւ մարթացաք ուտել: Բնակիչք գեղջս էին յոյժ ախքաւոք:

Ելեալ անտի և գժամս ուրն գնացեալ հասաք ի գիւղն Սէյտուն[89] ասացեալ: Իբրև ի կէսն ճանապարհին տեսաք զշինուածս մեծամեծս ի հեռուստ (զոր Քաղդ Սէյմանի կոչեն)[90]. Թողեալ իմ ընդ նուիրա-
28բ կին // և ընդ պարոն Շահնազար Սարգսին և առն միոյ երևելոյ անգղիացւոյ զկարավանն, ելաք ի տեսութիւն շինուածոցն: Շինուածքս այս էին մեծաշէն և հոյակապ յոյժ, որք զարմացուցանէին զտեսողս, համակ քարաշէն և ի նրբագոյն վիմաց: Երկայնութիւն քարանցն ցուրն կանգունս և լայնութիւն ցշորս կանգունս: Երկայնութիւն շինուածոյս լինէր յաւելի քան զկանգունս երկերիւր և լայնութիւն՝ քառասուն և երկու: Ընդ մեզ եկեալ պարսիկքն, որք էին զինակիրք, պատմեցին մեզ, թէ շինուածս այս է զերեզմանատուն, կամ է հանգըստարան Սէյման արքային, որպէս գրեալ է ի պատմութիւնս մեր: Իբրև ասպարիզաւ միով հեռի ի ամանէ կայր և շինուած մի կարի իմն բարձրագոյն, որ ասէին լինել տեղի փողհարութեան վերոյ գրեալ արքային: Շինուածքս այս է գնղեցիկ յոյժ և քարաշէն և այն-
29ա քան նրբատաշ և պնատաշէն, մինչև հազիւ երևիլ // գծից շարանցն վիմաց: Ի ճակատ արևելեան դրանն կայր փորագրեալ նշանագիր ինչ*... զոր կարծեմ պարսից հին կռապաշտութեան ժամանակին նշանագիրքն են, որպէս բազմաց տեսեալ վկայեցին: Մերձ շինուածոյս կային քանի մի կանգուն քարինք սիւնաձև և յոյժ մեծագոյն, որոց բարձրութիւն աւելի, քան զկանգունս քսան:

Իբրև ասպարիզաւ հեռի ի շինուածոյս կայր և շինուած մի երևելի և մեծագործ պատեալ փոքրիկ պարսպաւ, զոր այժմ կիսով չափն քայքայեալ է: Ի ճակատ դրանն կային նշանագիրք փորագրեալք ինչ նման այնմ, որ վերագոյն նշանակեցի:

Յետ տեսանելոյ զշինուածս զայսոսիկ ելաք անտի ի դնալ միաւորիլ ընդ բողեալ կարաւանին մերոյ: Ճանապարհն, ընդ որ գարձաք,
29բ էր վիմուտ և գժուարին յոյժ, զոր // բազում նեղութեամբք և չարչարանօք անցեալ հասաք կարավանին ի ճանապարհին և գնացեալ

* Այստեղ մի քանի անորոշ նշաններ. խմբ:

իջեւանեցաք ի գեղջն Սէտիուն։ Ասա թէպէտ կայր իջեան մի փոքրիկ, բայց ոչ կարացաք իջեանիլ անդ վասն լինելոյն բնակեցեալ յայլոց կարաւանաց*։ Ուստի ի փոքրիկ տան միում, որոյ կիսոյ չափն էր աւերակ, անճարացեալ իջեանեցաք զդիշեր մի յոյժ նեղսակրութեամբ։

Գիւղս այս էր գեղեցիկ և լեռնային՝ ունելով շուրջ զիւրև զայգիս, բայց բնակիչքն յոյժ աղքատք ի կեղեքելոյ բռնաւոր իշխանաց իւրեանց։

Այն ինչ սուղ ինչ ոգի առեալ զիշեր մի յերեսաց բազմապատիկ նեղութեանց ճանապարհին, ի լուսանալ առաւօտուն, կամէաք ելանել աստի, եկեալ զինակիր պահապանացն պահանջէին բռնութեամբ զմի հարիւր Թուման իբրև զվարձ ուղեկցութեան իւրեանց ընդ մեզ։ Յետ բազում վիճաբանութեանց հաւանեցուցաք զնոսա հաւուցա-
30ա նել միայն ղ-50 // Թուման վասն մեր և վասն ընդ մեզ եղեալ հայկազանց, զոր և հաւուցաք։ Առին նաև յանգրիաւցուն զերեսուն Թուման վասն իւր և վասն ծառայից իւրոց։ Յետ ամենայնի առին ի մէնջ զհինգ Թուման ևս բռնութեամբ բազում և անհնարինս։ Վշտացուցին և նեղեցին զմեզ արքն այնոքիկ արիւնարբուք վասն դրամոցս։ Եւ ոչ կարէաք ընդդիմանալ նոցա, քանզի ի ձեռս նոցա էաք միանգամայն և զոր ինչ կամէին կարէին առնել մեզ յանապատի անդ։ Յուսկ յետոյ զկնի բազում վշտաց և նեղութեանց, յանձրևաց և ի յորդագոյն սղմոց հասաք մինչև ցժամս ութն ի գիւղն Զարզուն[91]։ Ի Ճանապարհին կայր շինուած մի մեծ և հոյակապ, զոր Թադդ Ջմշիտ[92] կոչէին։ Բաժանեալ մեր ի կարաւանէն՝ ելաք ի տեսութիւն շինուածոյս ընդ անդղիացի առն։

30բ Շինուածքս այս էր գեղեցիկ յոյժ // և մեծագործ, որ հիացուցանէ զտեսողս։ Ի մէջ շինուածոյս կային քանի մի բարձրագոյն սիւնք[93] ի նրբատաշ, պատուական քարանց, որոց բարձրութիւն լինէր յաւելի քան զկանգունս վաթսուն (60) և լայնութիւն ցչորս։ Խարխոխք նոցա՝ ութն կանգուն, ի միաձոյլ քարանց կերտեալ, փորագրեալ ի նոսա պէսպէս քանդուածս Հարուստագործս <և զեղեցիկ> զլուխ նոցա զարդարեալ և քանդակագործեալ ի նմանութիւն ահաւոր դազանաց ի պէսպէս տեսակս։ Շինուածս այս ասեն լինիլ արբունիք Ջմշիտ կռապաշտ արքային պարսից[94], որոց հնութիւն յինքեանց Ճանաչի։ Մերձ շինուածոյս կային և քանի մի շինուածս կիսաւերս**, որք լեալ են բնակարանք արքայազնից, եւ բազանիք մի մեծագործ և հիանալի՝ մի բարէ կերտեալ։ Առընթեր նոցա կայր և շինուած մի մեծակառոյց և բարաշէն <քանդակեալք ի վիմաց> եւ յորմունս նորա
31ա փորագրեալք զառիւծս և զերիվարս՝ հիացակերպս։ Շինուածս ասեն լեալ տեղի փողհարութեան։ Երկայնութիւն նորա իբրև վաթսուն*** կանգուն։ Այսորիկ շինուածք էին ի վերայ փոքրիկ բլրոյ միոյ, որոյ գագաթն է տափարակ և լայնանիստ։ Շուրջ ստորոտին շինեալ են

* Հետ. վասն բնակելոյ ի նմա այլոց կարաւանաց։
** Զետ. կիսաւերք։
*** Նախ. հարիւր։

յոյժ արհեստաւորեալ մեծամեծ քարամբք աստիճանս, <յորոց ելանեն ի վեր>:

Երևելի անուն շինուածոցս հռչակեալ գոլով ընդ ամենայն աշխարհս* բրիտանացւոց և այլոց, բազումք լինին ի խնդիր տեսութեան նորա: <Այսքանս բաւ համարեցիք>:

Զկնի տեսանելոյ մեր զայս ամենայն շինուածս դարձաք առ կարավանն մեր և ի տարաժամիլ աւուրն հասաք ի գիւղն Զարղուն՝ աստիկ նեղութիւնս կրելով յերեսաց ցրտոյ և ցրտաշունչ հողմոց եւ զաւուրս երկուս կացեալ մեր ի տան այլազգի միում վասն հանգըստութեան անասնոցն:

Ելեալ մեր անտի և յետ վեց ժամուց հասաք ի Շիրազ քաղաք
31բ յաւուր ուր//բաթի 1832 յամի տեառն և ի 16 նովէմբերի և բնակեցաք ի տան բարեբարոյ պարոն Շահնազար Սարգսին[95] Կամենոյ** Հայկազնեայ:

Ստորագրեցից արդ փոքր ի շատէ դորպիտութիւն Շիրազ քաղաքին: Քաղաքս այս կառուցեալ է ի վերայ տափարակ դաշտի, ունի հողակերտ պարիսպս, որ անհաստատ է յոյժ, քանզի շուրջ զիւրև ունի խրամս ջրոյ, այն ևս անհաստատագոյն է: Երևելի շինուածք քաղաքիս են ապարանք արքայորդւոյն, որ էր քաղաքապետ ի միում ժամանակի (որոյ անունն էր Ֆարուն Ֆարմայ)[96], որք են գեղեցիկ և լայնարձակ: Ունի երկուս մեծ հրապարակս առաջի ապարանին քաղաքապետի: Ունի քաղաքս բազում վաճառանոցս և շուկայ մի մեծ ձեղունաւոր և բարձրաշէն, ունելով երկուստեք կրպակս վաճառականաց: Տունք քաղաքիս են փոքրիկ և միմեանց վերայ: Նոյն-
32ա պէս փողոցքն՝ // նեղ և ադտեղի:

Գտանին աստ յաղթէս հայոց իբրև տունս <հինգ կամ> վեց, արհեստիւք՝ գինէվաճառք և ոմանք քնարակերտ և սամրդուզ[97]: Ունին փոքրիկ եկեղեցի մի յանուն սրբոյ Աստուածածնին: Ի քաղաքի աստ, որպէս և յամենայն տէրութիւնս պարսից, կան բազում անկարգութիւնս և անիրաւութիւնս, նախ՝ ի բռնակալութիւնէ իշխանաց և երկրորդ՝ յանհոգ և յանկարգ կառաւարչութիւնէ նոցուն իսկ իշխանաց:

Արտաքոյ քաղաքիս գոն քանի մի մեծամեծ և գեղեցիկ շրջապատս այգիս և բուրաստանս, <որք են արքայորդւոյն և մասն երևելի մեծամեծաց նորա>: Ի մէջ պարտիզացն կան գեղեցկաշէն ապարանս զարդարեալ նկարիւք, հայելիօք և բազում աւազանս ջրոց, յորոց ի միջի՝ և շատրուանս***:

Ի քաղաքիս գտանիւր բազում տեսակք նարնջոց և լիմոնի, զորս բերեն ի շրջակայ գիւղօրէից: Ջուր քաղաքին չէր այնքան լաւ:

32բ Ի նոյն թիւ՝ 1832 և ի 27 նովէմբերի ելաք Շիրազու ի Բուշհռ****, Ճանապարհին կայր իջևան մի (զոր Զնար[98] կոչեն), որ է տեղի հարկապահանջից, որք բռնութեամբ առնուն գլխահարկս յանցաւորաց, մանաւանդ յաղթէն հայոց՝ բազում, որք և ի մէնջ առին բռնութեամբ

---

* Ձեռ. յաշխարհս:

** Ձեռ. կմ Նոյ (՞) դժվար վերծանելի:

*** Հետ ատրուշանս:

**** Նախ. առ Բուշհր:

զհինգ դռանի դրամս պարսից, յաւելի քան զսովորական տուրս հայոց։ Եւ մեք ոչ կարացաք ընդդիմանալ, քանզի սպառնային մեզ սրօք և բրօք։ Վերջ յամենայնի գնացեալ ժամանեցաք Խունխղինխուն[99] անուանեալ իջեանն յետ ութն ժամուց։ Իջեանն լի էր այլ կարավանօք, վասն որոյ ի փոքրիկ տան միում իջեալ բազում նեղութեամբ անցուցաք զայն գիշեր՝ միանգամայն և անքուն։

Ելեալ աստի իբրև զժամս հինգ, գնացեալ կարի իմն նեղութեամբ ի սաստիկ ցրտոյ՝ հասաք ի գիւղն Դաստարջին[100]։ Ճանա-
33ա պարհին կայր գետ մի մեծ արընթաց[101]//, ընդ որ բազում չարչարանօք անցաք վասն չունելոյն կամուրջս։ Գտանէր ի գիւղի աստ ջուր սառն և պատուական, զոր հոսէր ի բարձրաւանդակ տեղոջէ յետկոյս գիւղին, որով մխիթարեցաք ոչ սակաւ։ Ունի նաև գիւղս այս բազում ինքնաբոյս այգիս ի գլուխ և ի ստորոտ լերինն, զոր մերձ է յինքեան. նոյնպէս և բազում անտառս մեծամեծ ծառոց, յորս գտանին առիւծք և վագր[ք], որք ի ժամանակս ամարան երբեմն գան մերձ յեզր ճանապարհաց, որպէս պատմեն բնակիչք գիւղիս։

Առընթեր գիւղիս կայր ուխտատեղի մի պարսից (զոր Իմամզատայ[102] կոչեն), պատեալ փոքրիկ քարբայեալ պարսպաւ։ Ունի առ իւր ծառատունկս և ջուր բազում, որք հոսէին ի բարձրաւանդակէ լերանց։

Ելաք ի Դաստարջինոյ անցանելով ընդ բազում դժուարինս և
33բ ընդ առապարս լե//րանց, քանզի չիք այլ ճանապարհս, եւ ժամս ութն գնացեալ՝ հասաք ի մեծ գիւղն Քեազռան[103] և օթևանեցաք յիջեանի միում՝ մերձ ընդ տան կարավանապետին մերոյ զաւուրս երկուս։ Եւ որովհետև դժուարութիւնք լեռնային ճանապարհիս են առնուանի, վասն որոյ ի ծանօթութիւն ճանապարհորդաց կամիմ ստորագրել փոքր ի շատէ։

Արդ ճանապարհն այս (զոր Քոթալ[104] կոչեն) է լեառն մեծ, ունելով զանձուկ անցս ի վերուստ մինչև ցվայր շրջապտուտս և լի մեծամեծ վիմէօք՝ պլխիվայր և գահավէժ յոյժ, ընդ որս բազում զգուշութեամբք պարտ է անցանել։ Եւ ի սակս սաստիկ դահավիժութեանցն հնծեալքն իջանեն յետիվարաց և գնան հետիոտս, քանզի նոյնիսկ բեռնակիրք, որք են ջորիք, կան միշտ ի վտանգի, որք և կարի զգուշութեամբ անցանեն մինչև զարմացուցանել դտեսողս զի ի ժա-
34ա մանելն կարավանապետին մերձ ճանապարհ[ին]հիս միանգամայն բոզու անտէրունջ գնոսա* և նոքա** ինքնին գիտելով զճանապարհն՝ գնան, զոտս իւրեանց դնելով ի հաստատ տեղիս, զի մի սողացին և այսպէս անցանեն։ Արդարև բնական զգուշութիւն անասնոց զարմացուցանեն զտեսողս (և զխօսին յամօթ առնեն զբանական աղգս)։ Դժուարութիւնք ճանապարհիս բազում նեղութիւն տան անցաւորաց, քանզի պարտ է ճանապարհորդաց բազում տեղիս հետիոտն գնալ ընդ հարթ և ընդ վիմուտ ճանապարհս։

---

* Ձեռ. զբեռնակիրս։

** Ձեռ. նոքին։

Գիւղս այս Քաղուան, էր մեծագոյն, քան զբոլոր գիւղս, զոր գիւղաքաղաք պարտ է կոչել, որոյ գրութիւն թէպէտ մեծ է, բայց կիսով չափն աւերակ՝ ի ժանդախտէ, որ 1830 թուին պատահեալ է և քան սակաւիկն բնակչացն իրեն ութն հարիւր անձինս պակասեալ են, յորս և գտանին հրէից աղգք բազում: Ունի գիւղս այս քանի մի
34բ կիսաւեր//շուկայս մանաւանդ վաճառականաց և այլոց իրաց, <յորս գտանին ուտելիս>: Գտանին մերձ գիւղիս քանի մի այգիք և պարտէզք, յորս գտանին բազմատեսակս լիմոնի և նարնջոյ և այլ ծառս: Ջուր գիւղիս բազմաառատ էր և լաւ, յորմէ սերմանին բազում անդաստանս ցորենոյ և այլոց սերմանեաց:

Ելեալ մեր անտի և գնաց ութն ժամուց հասաք ի գիւղն Քօնարթախտայ[105]: Այս ճանապարհն ևս նման վերնոյն լեռնային էր և վիմուտ յոյժ, ընդ որ և բազում նեղութեամբք անցաք: Կայր ի ճանապարհին և գետ մի մեծ, զոր Դալաքու գետ կոչեն, յորոյ վնասս չինելոյ ամուրջս՝ ի ժամանակս գարնան բազում նեղութիւնս տայ անցաւորաց յառաւել սրընթացութենէ, ուրեմն հարկաւոր է մեծ զգուշութիւն: Զկնի երից ժամուց հասաք: Յոյժ անձրևային եղև, որով կարի նեղութիւնս կրեցաք վասն ճանապարհորդութեան: Կայր աստ
35ա իջևան // մի մեծ և գեղեցիկ: Բնակիչք գիւղիս յոյժ աղքատք էին, որոց բնակութիւն ևս էր յոտոց* յարմաւենեաց, և ոչ ինչ գտանէր բայց միայն փոքր արմաւ և այն ևս՝ յոյժ թանկագին: Մնացաք աստ գիշեր մի:

Ելաք անտի և գ[ժ]ամս հինգ գնացեալ հասաք ի գիւղն Դալաքի[106]: Ճանապարհն էր նոյնպէս լեռնային և վիմուտ և առապար: Կայր աստ իջևան մի մեծ և գեղեցիկ, յորում կացաք երեք օր վասն առաւել անձրևային եղանակաց: Լաւ ջուր ոչ գ[ա]նէր աստ, նոյնպէս և՝ լաւ ցորենոյ հաց, այլ միայն՝ արմաւ: Մերձ գիւղիս գտանէին** անհամար արմաւենիք գրեթէ իբր զմայր[ի]ս լերանց:

Ելաք աստի և չետ ութն ժամուց հասաք ի գիւղն Զաքութայ[107]: Ճանապարհն էր հարթ և հաւասար, բայց անջուր: Կան ի*** ճանապարհին հանդս ծմբոյ և նալբի, որոց հոտն խառնեալ ընդ միմեանս՝
35բ անհնա//րին իմն գարշահոտութիւնս տան անցաւորաց, մանաւանդ ի ժամանակս ամարայնոյ: Ի ճանապարհին կայր գիւղ մի Բօրազդուն[108] անուամբ: Աստ նստի հարկապահանջ (այսինքն՝ ռատար), որ առնու գլխահարկս չանցաւորաց, ութքան մարթասցի, այլ հասատան մին մարդոյն՝ մին ղռանի, զոր և ի մէնջ էառ նեղութեամբ: Ի Զաքութայ գնջս բազում նեղութիւնս կրեցաք առ ի չդոյէ ջրոյ և հացի, վասն որոյ ելեալ ի հետաւոր տեղիս չետ երկար որոնմանց գտաք ջուր անձրևոյ և այն ևս աղի և վատ:

Ելաք աստի, չետ վեց ժամուց հասաք ի Բուշեհ և կայաք զբնակութիւնս չեկեղեցւոջ մերազանց սրբոյն Գէորգեայ:

Գիւղաքաղաքս Բուշեհ կառուցեալ է չեղր ծովուն ի ծոցն Պարսից, ի վերայ հողալիզուի ինչ ձգելոյ ի ծով անդր, որով և շրջապա-

---

* Չեռ. *ոտոց*:
** Չեռ. *գտանէր*:
*** Չեռ. *կայր և*:

տեալ յերից կողմանց ի ջուրց ծովու։ Հասարակ տունք բնակչաց են
36ա անշուք // և մեծի մասն ի նոցանէ ունին տունս կազմեալ յոստոց արմաւենեաց խրճթանման, բայց սակայն տունք երևելի բնակչաց են յաղիւսոյ և ի տեսակ միոյ թեթև քարէ, որպէս և քանի մի վաճառանոցք (այսինքն՝ է քարվանսարայք)։

Երևելի, գեղեցիկ և բարձրագոյն շինուածք քաղաքիս է եկեղեցին հայոց յանուն սրբոյն Գէորգեայ (որ շինեալ է Թուին 1819)*, որ իբրև ի մէջն քաղաքին կայ շինեալ և երևի յամենայն** կուսէ։ եկեղեցին է մեծ և բաւականին գեղեցիկ, ունի և գմբէթ ի վերայ սեղանոյն, բայց ատենիք եկեղեցւոյն՝ փայտաշէն և տափարակ քան սովորութեան տեղւոյն։ Ունի եկեղեցիս բաւականին անօթս և զգեստս, և արտաքոյ քանի մի փոքրիկ խուցս վասն քահանայից։

Կայ և փոքրիկ ժամատուն մի, որոյ անունն է սուրբ Յօհաննէս, մերձ բազարին (յորոյ կից կամ մերձ բնակի պարոն Աստուածատուր
36բ Աւետն)[109], // յորում նախքան զլինելութիւն նոր եկեղեցւոյս կատարէին զաստուածային պաշտամունս։

Են ասա յազգէս հայոց <ի մերում ժամանակի իբր> տունս տասն <զտանէր>[110]։ Գործ նոցա է մասնաւոր վաճառականութիւն։ Յառաջ քան զժամանելն մեր ասա բազումք մեռեալ էին ժանդախտ ցաւովն և գրեթէ երևելիք 1832 Թուոջ։ Բազումք ի մերազանց և պարսկացւոց գտանին ասա վասն վաճառականութեան։

Ի հնդկաց եւ յայլ յաշխարհաց երբեմնապէս պատահին մեծամեծ նաւք, մանաւանդ Սուվսումին[111], զոր բերեն ամենայն ինչ, այսինքն լեղակ, շաքար, զալամքար[112], կլեկ, կերպասեղէն, կտաւեղէն և այլ հասարք բազումք։

Օդ քաղաքիս ի ժամանակիս ամարան ասատիկ և անտանելի ջերմ է, որ և անուանի է ամենայն տեղիս, մանաւանդ յերից և ի չորս ամիսս տարւոյն՝ սկսեալ յապրիլի ամսոյ մինչ յօգոստոսի
37ա ամիսն և երբեմն//մինչև սեպտեմբեր։ Տօթն այնքան ասատիկ է և նեղէ, մինչ բարակ կտավով պատեալ զներքին մասն մարմնոյ իւրեանց բնակիչքն հազիւ անցուցանեն զաւուրս իւրեանց։ Զդիշերն ննջեն ի վերայ տանիսց, ի բաց օդի և ոչ ինչ վնասէ, բայց ցօղ գիշերային Թոռացուցեալ զանկողինս՝ նեղէ։

Եղանակ ձմերան չէ այնքան ասատիկ և խիստ մինչև չտայ Թօթափիլ զտերև*** ծառոց, այլ բազումք մնան մշտականաչ։ Ի քաղաքիս ոչ գոյ ջուր քաղցր, զի Թեպէտ իւրաքանչիւր տուն ունի ջրհորս, բայց ջուրն միանգամայն աղի, որպէս ջուր ծովու, որ առ ոչինչ լինի պիտանացու։ Վասն որոյ բնակիչքն ունին ի տունս իւրեանց կարասս ջրոց և ի ժամանակի անձրևաց կալնեալ ջուր լնուն և պահեն յարբումն։ Իսկ հասարակ քաղաքացիքն ըմպեն զջուրս որ յարտաքոյ****
37բ քաղաքին, զոր ջրակիրք // բերեալ վաճառեն, որ և է պղտոր և անախորժ, յոյր ասես ոչ ինչ ծառս բուսուցանէ, բայց միայն զարմա-

---

* Նախ. *1815*։

** Չեռ. *ամենայն*։

*** Չեռ. *տերև*։

**** Չեռ. *արտաքոյ*։

ենիս, այլ սակաւ ինչ հնոի ի քաղաքէն փոքր ինչ լաւ է, որ միայն զմանաւոր կանաչիղէնս բուսուցանէ: Ունի քաղաքս բազում փոքրիկ կրպակս և վաճառանոցս, որք են անշուք և ախտեղիք և ձանձրացուցանեն ըզշրջողս յայնոսիկ:

Ի միրում ժամանակի իշխանութիւն քաղաքիս էր ի ձեռն պարսից և նստէր անդ Թոռն արքային Պարսից՝ Թէմուր Միրզայ[113] անուամբ, զոր ի յոյժ անկարդութեան պահէր զքաղաքն ողջոյն:*

Բրիտանացիք ունին աստ փոքրիկ ժողով մի, զոր նստի անդ դեսպանն իւրեանց և իւրաքանչիւր կիւրակէի առաւօտին խաչանման դրօշակս բառնան հանդէպ բնակութեան իւրեանց: Պատահել
38ա *մեր // առն պարոնին, որ է դեսպան շատ պատուական, էր բնութեամբ և վարուքն՝ հանդարտ և յոյժ պատիւ ետ նուիրակին սրբոյ Էջմիածնայ և երկիցս այցելու եղև մեզ յեկեղեցւոջն մերում**, որոյ անունն է Բլէն[114]: Սոյն պարոնս խոստացաւ, որ մեզ իւր շնորհիւն տէրութեան պատերազմական նաւակ առաքէ առ Բումբայի, բայց փոքր յերկարութեան ժամանակին, ներողութիւն և շնորհակալութիւն մատուցեալ, յայլ նաւակ վաճառականի գնացաք ի Բումբայի 1833 յամի տեառն ի մարտի 18:*

* * *

*Ըստ առաքելական բանին պիտոյն մոռացեալ, յառաջադէմն*** [ն]կրտիմք:*

* * *

38բ *//Կացեալ մեր զամիս մի ի Բուշիռ վասն յաջողակի նաւուց, ելաք անտի յամի Տեառն 1833 ի 18 մարտի ամսոյ Դիսկովրի նաւովն գնալ ի Բումբայի քաղաքն Հնդկաց: Ուղեկիցք էին մեզ ի նաւին Տէր Կարապետ Գրիգորեանն Զուղայեցի և այլք բազումք: Ի նաւի անդ բազում նեղութիւնս կրեցաք ի ծովային հիւանդութենէ, մինչև բազմիցս դնէաք անյոյս, որոյ պատճառն էր սրընթաց գնացութիւնն նաւին, մանաւանդ առաւել յերեսմանէն, մինչև բազում աւուրս չուտել կատարելապէս զկերակուր և ոչ զհաց: Ուր յետ հնգետասան աւուրց դիպեալ յաջողակի հողմոց քաղցր նաւարկութեամբ ժամանեցաք ի տեղի ինչ մերձ Բումբայոյ, զոր ի միրում ժամանակի հաստատեալ էին իբր կարանտին վասն մահատարաժամին, զոր պատահել էր ի Բուշիռ, որոյ անունն էր Բուշիրս այլէնդ: Հրամանաւ իշխանապետին*
39ա *անդրիացւոց արգել||եալ կացաք անդ զաւուրս հնգետասանս****: Բազում նեղութիւնս և սէս-սէս զղուանս կրեցաք մեք աստ յայսմ յարգելանոցի, քանզի յոյժ խստութեամբ պահէին զմեզ առ երկիւղի տարափոխութեան: Ամենայն աւուր***** ի մտանել արեգական կար-*

---

* Ձեռ. *չիք է:*

** Ձեռ. *մեր:*

*** Ձեռ. *զառաջադէմն:*

**** Ձեռ. *հնգետասան:*

***** Ձեռ. *ամենայն յաւուր:*

դնալ պահապանքն յարքունոյ, փակէին զդրունս բնակութեան ի վերայ մեր և ի ծագելն արեգական՝ բանային։

Շինուածքն յորում բնակեալ էաք, էր ի կղզուջս միում, զոր լի էր մեծամեծ մկամ[բ]ք և պէսպէս թունաւոր սողնօք, որք անհնարինս նեղէին զմեզ, մինչև չառալ զդիշերն ողջոյն հանգստութիւն քնոյ։ Մանաւանդ և մանաւանդ ի ձեռն սաստիկ կէսօրեան եղանակի** սօթոյն վշտացաք ոչ սակաւ։ Այսպէս անցուցեալ զաւուրս հնգետասանս***, յետ որոյ հայկազունք Բումբայոյ առաքեցին վասն մեր նաւակ մի**** հանդերձ երկու մերազնեաց անձամբք առ ի յա-*

39բ *ծել զմեզ ի քաղաքն։ Մտեալ մեր // ի նաւակ զկնի ժամուց ինչ ժամանեցաք ի Բումբայի 1833, ապրիլի 21, եւ եկեալ եկեղեցի հայոց տեսաք ժողովեալ անդանօր հայկազանց՝ [յ]ընդունելութիւն սրբազործ միւռոնին, զոր երգօք հոգևորականօք տարաք ի մէջ եկեղեցւոյն և եդեալ ի վերայ սրբոյ սեղանոյն և եպիսկոպոսին տուեալ զողջոյնն սովորականն՝ ելին ամենեքեան յիւրաքանչիւր տեղիս իւրեանց։*

Ըստ փոքու ծանօթութեանս պարտ է ինձ տալ զստորագրութիւնս Բումբայոյ, որ է կղզի փոքրիկ, յորոյ վերայ է շինեալ քաղաք, որ պատեալ է կրկին քարաշէն պարսպօք և կրկին խրամօք ընդ ձևոյ եւրոպացւոց բերդից, յոյժ ամուր և գեղեցիկ և զինու վառեալ թնդանօթօք շուրջանակի ընդ պարիսպն ողջոյն։ Գոն ի նմա բազում երևելի

40ա *և գեղեցիկ շինուածք և յոլով հարուստ կրպակս և խանութս // վաճառականաց։ Բնակիչքն են կրակապաշտք, պարսիկք և յայլոց***** ազգաց ասիացւոց և բրիտանացւոց, մանաւանդ ի մահմետականաց։ Գտանին և յազգէս հայոց իբրև տունս հինգ կամ վեց (որք յառաջ քան զառաննհինդ ամն բազումք էին), որոց մասն՝ առևնագլխիք և կամ գրագիրք տէրութեան։ Ունին և փոքրիկ և գեղեցիկ եկեղեցի մի յանուն սրբոց Առաքելոցն Պետրոսի և Պօղոսի, և զքահանայ մի վիճակաւոր, որում տէրութիւնն անդղիացւոց հատուցանէ ամսական վաթսուն ռուբիս[115]։ Սոյնպէս և հատուցանէ Սուրաթու[116] վիճակի քահանային, ուր բնաւին պակասեալ են մերազինք, բացի քանի մի տուն յերկրականաց։ Կից եկեղեցւոյն հայոց է եկեղեցին լատինացւոց։ Արտաքոյ քաղաքին կայ դաշտ մի կանաչ, որ է ճեմելիք քաղա-*

40բ *քացւոց, ուր յերեկոյեան պահու, կառօք հե//ծելովք ճիմ առեալ շրջին։ Ճեմելիքն հետիոտաց բաժանեալ է վանդակաւ ի շաւղէ կառաց և հեծելոց։ Ունի քաղաքս և տեղի նաւաշինութեան զոր Գօտի կոչեն, որ շինեալ է յեղր ծովուն՝ փորեալ ի գետնոց, որմունք և հաստակքն՝ քարաշէնք, ի տեղիս տեղիս շարք քարանցն ամրացուցեալ են կապարաւ, յորում շինեն բազում մեծամեծ և գեղեցիկ նաւս, որք անուանի են յամենայն տեղիս։ Ի տեղւոջ նաւաշինութեան****** ունի ջրահան գործի մի, որ զջուրն հանէ ի ձեռն հրազործ և ծխաշարժ*

* Ձեռ. *ի կղզուջս միոյ։*
** Ձեռ. *եղանակէ։*
*** Ձեռ. *հնգետասան։*
**** Ձեռ. *զնաւակ մի։*
***** Ձեռ. *այլոց։*
****** Ձեռ. *նաւաշինութեանց տեղւոյս։*

գործնաց, որք են ճարտարագործ և զեղեցկաշէնք յոյժ, եւ ըմբռնացս* քանի ժամուց դառարիկ զմեծակոյտ ջուրն, որով** և նաւք մեծամեծք մտանեն առ վաճառանորոգութեան:

Ջունի բեղմնաւորութիւն կղզիս, սակս չունելոյն հող բարի, որ
41ա միայն քանի մի տնասակս պաղոց (կամ բուսոց բուսու//ցանէ և այն իրր թէ), որք են սովորական աշխարհին հնդկաց, զորս չգտանին յաշխարհի մերում, այսինքն է ամբ, անանաս, փսիլմաս, քիլայ, զմրուտ և այլն, զորս համեմատեալ ընդ պաղոց մերոց՝ առաքագոյն են յոյժ յամենայն մասին, բացի՝ յամբէն: Նղանակ տեղւոյս միայն բաժանի անձրևային և չորային: Նղանակն անձրևային սկսանի իբրև ի մէջն յունիսի ամսոյ և տևէ մինչև ցհոկտեմբեր, յորում առատագոյն յորդութեամբք անձրևէ գրեթէ գիւր և գիշեր, միայն ժամս ինչ ընդհատեալ, որ խոնաւութիւնս բազում առ երկրին և օդոյն:

Այսքանս շատ լիցի վասն Բումբայի քաղաքիս, զի թէպէտ կային բազում ինչ գրելոյ զպէս-պէս բարեկարգ քաղաքական կառաւարութեանց, կարգադրութեանց և վաճառականութեանց հաստատեալք յիմաստնագոյն կառաւարութենէ անգղիացւոց, բայց սակայն վիճակ
41բ կրօ//նից մերոց չտայր մեզ առիթս յամենայն*** տեղիս անխափան շրջելոյ և ընկերակցելոյ ընդ երևելեաց առ ի քաղել ի նոցանէ զառուկագոյնս և**** զընտիրս:

Կառաբեալ զարբաղան Տնառն մերոյ զգործ նուիրակութեան ի 5 օգոստոսի ամսոյ «Արշաֆիլիկս» նաւավն ելաք ի Բումբայոյ գնալ ի Կալկաթայ: Բազմագիմի նեղութիւնս կրեցաք ծովային ակարութենէ, մանաւանդ ծերունի հոգևոր ծնօղն իմ, այնքան, մինչև ցութն աւուրս ոչ ինչ ճաշակեցաք բացի չայէն և այն ևս՝ երբեմնապէս: Իսկ բարեխառնութիւն նաւապետին առաւել մխիթարէր զմեզ յայսմ նեղութեան, զի էր այր բարեբարոյ և բարեխառն յոյժ, որոյ անունն էր քարտան Ռատ, ըստ անգղիացւոց: Յետ քան և ութն աւուրց***** բաղդ նաւարկութեամբ ժամանեցաք ի բերան Գանգէս գետոյն:

42ա Ի մերձենալն նաւուս առ գետս, զան//ի նաւն առաջնորդք նաւուս (զոր պիլոտք կոչին անգղիացիք) առ ի յածել զնաւն ի քաղաքն, անցուցանելով ընդ պատյաս գետոյն և ընդ աւազակոյտ խաղաղան նորա, որք յոյժ բազում կան ի նմա, զորմէ չեն գիտակ նաւապետք նաւուցն, քանզի պարտ է գիտել զժամանակ մակ[ը]նթացութեան և տեղափոխութեան ջուրց գետոյն առ ի լիութեան ջրոյն տանել զնաւն[117]:

Ի մտանելն ի գետս ընդ յառաջ ելանեն բազում բնակեան գեղեցկութիւնք բնակութեանն:

Երկուստեք գետոյն զոն ծառք բազումք և անդաստանք մեծամեծս և կանաչազուարճս և զալարագեղս որի[ղ]ոց և****** այլոց ընդե-

---

* Ձեռ. *ընթացս:*

** Ձեռ. *որովք:*

*** Ձեռ. *ամենայն:*

**** Ձեռ. *առուկագոյնս:*

***** Ձեռ. *ութն աւուր:*

****** Ձեռ. *այսինքն՝ բրնձի:*

ղինաց, արածեն յեղերս գետոյն բազմահոյլ տեսակս արջառոց և շրջին արք երկրագործք, որք յիրաւի ցնծութիւնս բազում ընծայեն
42բ տեսողաց, մանաւանդ նոցա, որք* յանդնդային ովկիա||նոս ծովէ ազատեալք այսր ժամանեն:

Գետս այս լայն է, ընդ որ բազում մեծամեծ նաւք անցանեն և մտանեն ի քաղաք: Ի ժամանակս հարաւային հողմոց, նաւք դիւրաւ անցանեն յընթացս երկուց կամ երից** աւուրց: Բայց ի ժամանակս հիւսիսային հողմոց յապաղին յոյժ մինչև ցաւուրս հօթն կամ ութն հասանեն ի քաղաք, զոլով հողմոց ներհակ՝ զդիշերն չկարեն նաւել երբէք: Ջուր գետոյս պղտոր է միշտ, նման հեղեղային եղանակաց ջրոց գետոց մերոց աշխարհաց և աղտեղի յոյժ, քանզի կռապաշտ հնդիկք զմեռեալս իւրեանց ոչ թաղեն, այլ արկանեն ի գետս, որ կարի իմն աղտեղացուցանեն զջուրն, վասն որոյ չէ ըմպելի յօտարականաց, հնդիկք նոյնիսկ պարծանօք ըմպեն, զոր և պաշտեն և յարդանս մեծ նուիրեն գետոյս՝ համարելով երկրորդ արարիչ:

43ա //Իբրև տասն մղոնաւ հեռի ի քաղաքէն յեղր գետոյս կայ (շինուածք) մի մեծ, որ է գործարան կտաւեղինաց, շինեալ ի ճարտարապետ անգղիացւոց, որք ի ձեռն հրոյ գործեն կտաւս: Զայս գործատուն ոչ կարացաք տեսանել, քանզի գործավարն չէր ի նմա, զնացեալ էր ի քաղաք և առանց հրամանի նորա չտան թոյլ ումեք մտանել ի նա:

Մինչ նաւ մեր կայր խարսխեալ հանդէպ գործարան[ի]ս, եկին ի քաղաքէն նաւակաւ ի մերոցն[էից] Կալկաթու հրաւիրելով զսրբազան արքեպիսկոպոսն ի քաղաք: Եւ էին այսորիկ Տէր Յարութիւն Եղիայն՝[118] աւագերէց, տէր Յօհաննէս Տէր-Աւետեանն[119] և տէր Կարապետ Գրիգորեան[120]: Գալուստ սոցա արդարև ուրախութիւնս մեծ եղև մեզ, որք մտեալ ի նաւ մեր, չետ չարդական ողջունին, հրաւիրե-
43բ ցին զսրբազան արքեպիսկոպոսն իջանել ի քաղաք: Եւ մտեալ մեր // ամենեցուն ի նաւակ զդիշերն ողջոյն զնացեալ ընդ գետն ի ծագել առաւօտոյն ժամանեցաք ի նաւահանգիստ հռչակաւոր քաղաքին Կալկաթու (որ էր 1833 յամի և 2 սեպտեմբերի ամսոյ): Եւ խարսխեցաք*** զնաւակն մեր հանդէպ տեղւոյն, որ կոչի Հայոց նաւահանգիստ:

Ի հասանել լրոյ գալստեան նաւուն մերոյ ի քաղաք անդր՝ սրբակրօն տէր Յարութիւն Եղիայն՝ աւագերէց եկեղեցւոյն, ի ձեռն շրջաբերական թղթոյ ծանուցեալ էր զգալուստ մեր Հայկազնեայ ժողովրդոյ քան հնաւգայ օրինակիւ:

«Առ ասուածով զօրացեալ Հայկազուն ժողովուրդս բնակեալս ասա՝ ի Կալկաթայ:

Ծանուցումն լինի հոգեկից պատուելի սիրելեացդ մերոց, զի գերապատիւ սրբազան Տէր Խաչատուր արքեպիսկոպոսն՝ նորատաք
44ա նուիրակն ի սրբոյ էջմիած//նի Աթոռոյն, ողջամբ ժամանեալ է ասա

* Ձեռ. որոց:
** Ձեռ. երեք:
*** Ձեռ. խարսխեալ:

ի նաւահանգիստ այսր մայրաքաղաքի Հանդերձ իւր սպասահարկու ուղեկցօք։ Սրբազանութիւն <նորին> իջցէ ի ցամաք այսօր յերեկոեան հինգերորդ ժամուն եւ մեք հանդերձեալ եմք ըստ ազգային սովորութեան պարտ ու պատշաճ պատուով հիւրընկալել զնա յօթևանս շինուածոյ սրբոյ եկեղեցւոյն ի վերոհիշեալ ժամուն առ ի յընդունիլ յարգանօք զնորուն բարձրապատիւ սրբազանութիւն։

Եւ մնամ հանդերձ յարգանօք յարդութեան Ձերում աղօթարար Ն. Ծ. տէր Յարութիւն Եղիայ աւագերէց։

Ի Կալկաթայ, ի 4-ն սեպտեմբերի 1833 յամի, յօթևանս քահանայից»։

Ըստ վերոյ գրեալ շրջաբերական թղթոյս ժողովեալ համօրէն մերազնէից և բազմութիւնք յոյժ յայլոց ազգաց յեղր գետոյն, ուր
44բ նաւակ մեր կայր հանդերձ// եկեղեցական դասուք, հրաւիրեցին զարքեպիսկոպոսն իջանել ի ցամաք, ուր շուրջառս զգեստեալ սրբազանին, ըստ հօթն քահանայից արհիական զգեստու և սուրբ միւռոնն ի ձեռս աւագերիցուն, քօղարկեալ ի մէջ արծաթեայ տփոյ, երգօք հոգևորականօք ի գետեղերէ անտի դիմեցաք յեկեղեցի հայոց, ուր և կային համախմբեալ հայկազանց յարանց և ի կանանց։ Եւ եկեղեցին ճրագուցեալ միանգամայն և եղեալ զսրբալոյս մեռոնն ի վերայ սեղանոյն՝ ցրուեցաւ ժողովուրդն իւրաքանչիւր ի տեղին իւր։

Աստանօր կամ է ինձ տալ զատորագրութիւն զհռչակաւոր քաղաքէն Կալկաթու, բայց սակայն նախքան զձեռնարկելն իմ յայն պարտ է ինձ յուշ առնել, զի զոլով մեր կրօնաւոր շեղև մեզ հնար շրջել
45ա յամենայն տեղիս և առնուլ զծանօթութիւն լիապէս յամեն//այնէ։ Կալկաթայ քաղաք կառուցեալ է յարևելեան կողմն Գանդէս գետոյ իբրև երիք հարիւր մղոնաւ հեռի ի բերանոյ գետոյն և է մեծ և բազմամարդ յոյժ։ Շինուածք քաղաքիս, որք են ի թաղին անգղիացւոց, գեղեցիկ և բարձրաշէն յոյժ։ Բաղումք ի նոցանէ հոյարկ և ամանք բառայարկ և շինեալք ըստ ձևոց հերոպացւոց։ Կան բաղում երևելի շինուածք, յորոց մեծն և գլխաւորն է ապարանք քաղաքապետին, որ է մեծակառոյց և լայնանիստ և է շինուածոց գերդն խաչանման։ Ունի գմբեթ մի ի վերայ մեծի սրահին և ի գլուխ նորա մարդակերպ արձան՝ նման հսկայ առն, զոր Բրիտանիայ կոչեն՝ յանուն կղզոյն Մեծին Բրիտանիոյ, որ յԱնգղիայ։ Ունի չորս մեծամեծ դրունս, յորոց վերայ արձանք առիւծանման։

Ունին անգղիացիք բաղում եկեղեցիս*, և այլ** ժողովարանս։ Ունին բաղում մեծամեծ դպրոցս և ճեմարանս գիտութեանց և պէսպէս ազատական արհեստից։

Ի բաղաքի աստ գտանի[ն] հազարաւոր կրպակք, քաջահնար գործարանք, յորոց գլխաւորք են երկոքին այսոքիկ, առաջինն է գործարան աղօրեայ և երկրորդն՝ գործարան զրամահատութեանց (զառաբխանէ)[121] և ըստ իւրեանց բարբառոյն ասեն Բանք-

* Ձեռ. *այսուհետեւ՝ որոց երեսիքն են»։*

** Ձեռ. *և զայլ։*

սալ[122]։ Առաջինն է շինուած հնգյարկեան, որ ի ձեռն ծխաշարժ գործեաց առնու զցորեանն ի վեր խարբալէ, ի բաց ձգելով զաղտեղութիւնս որ ի նմա՝ աղայ զցորեանն, անջատէ զթեփն և զխոշորն ի բարակից բաժանեալ, առնէ զալիւր նրբաղաց յոյժ և ի մէջ քան և չորից ժամուց ի ձեռն քան և չորս երկանից աղայ ասեն զմի հա-
46ա զար և երկու հարիւր Կալկաթու լտերս[123] ցորենոյ։ // Երկրորդն է գործարան զրամահատութեանց, որ նոյնպէս ի ձեռն ծխաշարժ գործեաց հալէ զարծաթ, տափարակէ ըստ քանձրութեան հատանել զրամոցն, հատանէ ըստ չափու մեծութեան բոլորակս և միւս յայլում սեռեկի ապէ զերկոսին երեսն զրամոց (զպատկեր թագաւորին բրիտանացւոց և զկշիռ նորին) եւ նոյն գործին զդրամն ի բաց արկանէ և բաւանայ զայլս։

Յեղր գետոյն արեմտին կողմն ունին զերդիր շինուածք, որ ասի մաքսատուն։

Բերթ զօրացն անդղիացւոց է հարաւային կողմն Կալկաթու քաղաքին, յեղր Գանգէս գետոյն, որ է ամբակատոյց յոյժ, ունելով զերիս պարիսպս և զերիս խրամս շուրջ զիւրև և բազում մեծամեծ թնդանօթս ի վերայ պարսպաց իւրոց։ Ի սմա միայն զօրք և զօրավարք բնակին, յորում գտանին մեծամեծք շինուածք գեղեցիկ և երկ-
46բ յարկ // և եկեղեցի մի վասն զօրաց նորակատոյց՝ ի մերում ժամանակի, 1833 յամի, որ է գեղեցկաշէն և մեծ, որոյ անունն է սուրբ Պետրոս։ Գրունք ամրոցիս յոյժ հաստատ են և գեղեցկաձև զինու վառնալ, յորոյ երկու խրամն խաղալ ջուր գետոյն Գանգէսի մշտապէս։ Հանդէպ մեծ դրանն սոյն ամրոցի հաստատեալ կայ ցից մի մեծ և բարձր յոյժ, յորոյ վերայ բացեալ լինի միշտ նշանն արքայական վասն նաւուց։

Նաւահանգիստ քաղաքիս է նոյն իսկ գետն Գանգէս, որ անցանէ զառաջեաւ քաղաքին, ուր գտանին միշտ հարիւրաւոր նաւք մեծամեծք և փոքունք, որք ի բազմութենէ կայմից ի հեռուստ անտառաց նմանին։

Բնիկ բնակիչք տեղւոյս են կռապաշտ հնդիկք, որք են յոյժ և յոյժ, և մահմետականք բազումք։ Կռապաշտքն ունին բազում սնոտի
47ա արարողութիւնս // օրինաց իւրեանց, և ոչնս չաստուածոց իւրեանց, զոր մեծաւ հրապարակաւ հանդիսիւ կատարեն, յորում աւուր փակին գործարանք տէրութեան վասն բացակայութեան գործավարաց, որք բան մեծի մասին են հնդիկք։ Բաժանին սոքա ի բազում ցեղս, չուտեն զմիս բացի գոհելոց քանիցս ի տարւոջ և ոչ ըմպեն զգինի։ Ոմանք ի ցեղից սոցա զմեռանել իւրեանց այրեն և ոմանք արկանեն ի գետն Գանգէս, փոքր ինչ այրեցեալ կամ ոչ։ Յամենայն աւուր օծանեն զինքեանս ձեթով, և ամենայն աւուր առաւօտինն լողան ի գետի անդ համարելով մաքրութեան ամենայն աղտեղութեանց ըստ հոգւոյ և ըստ մարմնոյ։ Հանդերձ սոցա բացի սփածանելիւց այլ ծածկոյթ ոչ գոյ։ Կան ևս, որք գայլ տեսակ հանդերձս զգենուն։ Եւ են խաղաղասէրք և համեստ և, մանաւանդ, յոյժ ողորմած առ
47բ տնտնկս։ // Ունին սոքա մեծամեծ մեհեանս կռոց, որք են բազմաթիւ և տարածեալ թէ ի գիւղս և թէ յանդս Ճանապարհաց։ Քրմապետք

սոցա զգենուն մոխրագոյն հանդերձս և ոմանք միայն սփածանեն։ Կերակրին որովք ժողովրդեանն։ Եւ կերպ սոցա է յոյժ զազրալի և <անախորժ ի տեսանել>։ Բազումք ի նոցանէ թաւալին ի մոխիրս, յորից մինչև ցգլուխ <չունին բնաւին հանդերձս կտաւոց>, այլ ոմանք միայն՝ մորթ ոչխարաց կամ վայրենի անասնոց։ Եւ սոքա կոչին խստակրօն քրմապետք, որ ըստ իւրեանց լեզուին ասի բրաման[124]։ Կանայք հնդկաց ոչ ելանեն ի տանց, մանաւանդ կանայք մեծամեծաց, եթէ վասն հարկի պատահին ի հրապարակս կամ յանցս ճանապարհին, յոյժ պարկեշտ և համեստ ցուցանեն զինքեանս։

48ա //Կան և այժմ ի քաղաքիս յազգէս հայոց իբրև տունս վաթսուն[125]։ Ամենեքեան՝ սերունդք Նոր Ջուղայեցւոց, որք երկերիր ամօք յառաջ բազումք ի նոցանէ [ի] հարստահարութիւնէ անիրաւ և անօրէն պարսից և ոմանք սակս տուր և առութեանց՝ թողեալ զտուն և զերկիր ծննդեան իւրեանց՝ պանդխտեալք էին աստ և յոլովք ի նոցանէ հարստացեալք <և յղփացեալք> յոյժ, յոյժ, հաստատեցին զբնակութիւն իւրեանց։ Այլ սակայն այժմ չեն ի նոյն փարթամ վիճակի, քանզի տուր և առութիւն հնդկաց յաւիշտակեալ յերտպացւոց, մանաւանդ յանդղիացւոց, յերկրէ իւրեանց ածեն զամենայն զպէտս և զվաճառս հնդկաց, բացի սակաւուց իրաց։ Վասն որոյ բազումք ի հայոց են վարձառու գրասիրք բրիտանացւոց, որովք հայթայթեն զպէտս կենաց իւրեանց։ Կան և քանի մի անձինք յազգէս, որք են իբր վաճառականք։

48բ //Սզգ մեր այժմ ըստ մեծի մասին թէ արք և թէ կանայք զգենուն զհանդերձ եւրոպացւոց և բոլոր վարքն գրեթէ քաջապէս գիտեն զբերդու անդղիացւոց և զուսումն գրոց։ Բազումք ի մերազանց են յոյժ հիւրասէր։ Ծերունի անձինք, մանաւանդ ի մեծատանց, յոյժ պակաս են այժմ։

Մերազինք ջանան միշտ ուսանիլ զդիրս բրիտանացւոց <և առաւել քան զհայոց, որոյ վասն ցաւեցայ ոչ սակաւ>*։

Ունին եկեղեցի[126] մի յոյժ արժանավայելուչ յանուն Նազարէթայ, շինեալ յումեմնէ Աղայ Նազարէ՝[127] հանդուցելոյ ի Քրիստոս 1724, զոր այժմ շքեղագոյնս զարդարեալ ի ներքուստ բազում ար-

49ա ծաթեայ կանթեղօք և մեծամեծ ջահիւք, ոսկի և արծաթ // անօթիւք և այլ բազմատեսակ դիպակեայ հանդերձիւք։ Կից արևմտեան դրան տաճարիս շինեալ կայ և զանգակատուն մի պատուական և բարձր կաթուղիկանման, շինեալ յումեմնէ բարեպաշտէ Մանուէլ Հազարմալեան[128] անուանելոյ։

Յօրէ յայնմանէ, ոչ ինչ փոխարկութիւն չէ եղեալ, բայց զկնի բազում ժամանակաց ի Քրիստոս հանդուցեալ Աղայ Խաչիկ Առաքելեանն[129] զարդարեալ է վերստին զեկեղեցին ի ներքուստ և յարտաքուստ, կատարելագործութեամբ՝ հանդերձ երկյարկ շինուածովք վասն քահանայից բնակութեան։ Նոյնպէս և շրջապատ եկեղեցւոյս պարիսպս հանդերձ երեք մեծամեծ դրամբք, որոց առաջին մեծ դուռն

* Հետ. այնու կարեացին ծառայել բայց և ոչ զուրկ ի հայկական ոճմանց։

է արեմտեան կողմն, զոր կոչի Յարութեան դուռ, որոյ յարտաքուստ կողմանէ դրեալ է ոսկէնիշ գրով ի վերայ պղնձեայ տախտակի[130].

«Սուրբ Նազարէթ մայր մեր գթած
Բացեալ ունի բազկատարած
Զսուրբ ծոց իւր՝ վասն մանկանց
Զամբել զկաթին սուրբ շնորհաց»:

49բ ||Ի մէջ զանգակատանն գոյ հաստատեալ մեծագոյն ժամացոյց մի չիշատակ աղայ Խաչիկ Առաքելեանի որդի՝ աղայ Մօսէսին[131], պարզևեալ արքայէն, զոր և սա զկնի մահուան հօրն ոչ սակաւ վերանորոգութիւն է տուեալ սուրբ Նազարէթայ եկեղեցւոյն յամենայն մասին, որպէս վկային բազումք:

Ի մերում ժամանակի հաճեցան ժողովք հասարակութեան ի մէջ եկեղեցւոյն ի վերայ յորմոյն հաստատել արձանագրութիւն մի վասն երախտագիտութեան Աղայ Խաչիկ Առաքելեանին, գրեալ ոսկէնիշ գրով ի վերայ սևագոյն մարմարոնի:

Նազարէթայ եկեղեցին ունի զերիս մեծամեծ սեղանս՝ յառաջինն յանուն Յարութեան Քրիստոսի, երկրորդն՝ յանուն Առաքելոցն քրիստոսի և երրորդն՝ հայրապետաց <անուամբ>: Գոանին միշտ վիճակի քահանայք նոր Ջուղայեցւոց երեք կամ երկու, զոր տրօք
50ա ժողո||վրդոց բաւականանս:

Ունի եկեղեցիս և բաղում սեփհական ստացուածս, այսինքն՝ բնակութիւնս, կրպակս, յորոց քաղեն ամսական եկամուտս՝ տուեալ ի վարձու: Ունի եկեղեցիս և գումարս դրամոց բաւականին, որոյ եկամտիցն եկեղեցւոյ սրբոյ անտուկն տայ կարօտելոց ամսական ռաճիկս, որք են միաբանից և յայլասեռ քրիստոնէից ևս երբեմնապէս: Հայք ունին յատուկ հանգստարան մի պարսպապատ յեղր քաղաքին, որ ունի և յատուկ պահապանս:

Յաղագս բարւոք անտեսութեանց ընդհանուր ժողովուրդն ի ձեռն հաստատ ժողովոյ՝ ընտրեալ է յերևելեաց և ի հարբուստաց աղդիս զհինգ արս որք կոչին կառավարիչք եկեղեցւոյն և փոփոխին ամի ըստ ամի յաջորդութեամբ, այսինքն առաջինն, երկրորդն, երրորդն, և այսպէս մինչև ցհինգերորդն: Առաջինն կոչի եկեղեցա-
50բ պան <այսինքն՝ մութավէլի>: Ի լրանալ || ամաց պաշտամանն առաջնոյն, երկրորդն յաջորդէ սմա և առաջինն հրաժարեալ զայլ որ նոր ընտրեն ի տեղի նորա և զայս օրինակ մին միւսոյն յաջորդելով: Եւ այս ընտրութիւն լինի ի Հանրական Աղգային ժողովի, ի դաւիթս եկեղեցւոյն[132]:

Ունին հայք և ուսումնարան մի, զոր Մարդասիրական Ճեմարան[133] կոչեն, քանզի հաստատեալ է այն ի մարդասիրական որոց, աղգասէր և հայրենասէր հայոց յամի տեառն 1821: Եւ բաղումք ի հարուստ մերազնէից, թէ՛ կտակաւ և թէ՛ առ կենդանութեանմբ իւրեանց պարգևեալ են դրամս վասն հաստատութեան ուսումնարանիս, որոց եկամտօքն առնեն զծախս և պահեն զերկու զլխաւոր վարժապետս հայկական և անգղիական լեզուաց, որք ուսուցանեն

զայս երկուս լեզուս միայն։ Առնուն նաև ձրիապէս զմանկունս չքա-
51ա ւորաց սահմանեալ իմն // Թուաւ ի միրում ժամանակի տեսաք քննու-
թիւն մանկանցն ճեմարանիս, որք լինէին վաթսուն, ասելի կամ պա-
կաս հայազին մանկունք և քանի մի հատ [ի] հնդկաց։ Անուն ու-
սուցչին հայոց էր Յովհաննէս Աւտալեան[134], որ էր այր բարեմիտ
և զգօն։ Ունի ուսումնարանս կառավարիչք նման կանոնաց կառա-
վարչաց եկեղեցւոյն, զոր վերագոյն նշանակեցաք եւ գրաւուն մի
պայծառ[135], յորում գտանին երեսիւ յոլով մատեանք հին և գրչեայ,
նոյնպէս՝ և այլ լեզուաց։

Ի սոյն ուսումնարանիս գոյ և մասնաւոր տպարան մի հայերէն,
զոր արդեամբք վարժարանին գործ դնեն զամենայն պիտոյս և կամ
ծախս վասն տպելոյ գիրս։

Ունին հայք և աղբատանոց մի Թողեալ կտակաւ յումեմնէ հայ-
կազնոյ, ուր ախքատք ի մերազանց և երբեմն յայլ քրիստոնէից
բնակին ձրիապէս, որոյ գոյն ճակատագիրն է ոսկեգիր գրով.

«Սոյն անկելանոց Հայկազեան սեռի
Բազմայարկ բնակս ի յարդեանց շինի,
Անուն զուգակցին ում ազիզ ձայնի,
51բ //Որոց յիշատակն այս բնական գնի
Նախանձաւոր լեալ գործոց պանծալի,
Երջանիկ նախնեացն հիւրասէր կարգի
Ի Թիւն փրկչին 1826-ի»։

Հայազինք մեր ունին գեղեցիկ բաղանի մի մերձ եկեղեցւոյն և
կարգաւորաբար սահմանադրեալ են յիւրաքանչիւր ուրբաթի աւուր
մաքրիլ անդ <հոգևորականաց>։

Վաճառականութիւն քաղաքիս համեմատեալ անցեալ ամաց և
ժամանակաց նուազեալ է ընդ շահու բնդմնաւորութեան ի սփռել
եւրոպացւոց զրազմատեսակ և զազգի ազգի վաճառս իւրեանց, այլ՝
տակաւին ունի յոլով տուր և առութիւնս, զոգևս ընդ ամենայն կողմն
աշխարհիս, յորոց նաւք մեծամեծք տանին զանհամար տեսակս
ամենատեսակ իրաց ի վաճառ ամն ողջոյն, մանաւանդ յամսեանն
նոյեմբերի, դեկտեմբերի և յունվարի յորս նաւք իրրև զերամս ջա-
նասէր մեղուաց երթևեկին <անդադար, տան զրեռինս իւրեանց և
52ա առնուն զփոխարէն, զոր առատութիւն զերկրին // տայ>։

Ունի քաղաքս և զամենատեսակ վայելչութիւնս կենցաղոյս ա-
մենայն գործ և հնարք իմաստնագոյն ազգացն Եւրոպիոյ, զորոց
չէ ինձ հնար մարմնաբար ճառել, փոքր ի շատէ զրեալս բաւ լիցի
ընթերցողացդ*։

Յետ աւարտելոյ սրբազան տեառն իմոյ <զամենայն> գործս
նուիրակութեան, հաճեցաւ ձեռնադրել զանարժանաւորութիւն մեր
ի կարգ քահանայութեան, զոր եղև ի Կալկաթայ 1834 յամի տեառն
և ի 17 յունվարի։

* Այս ամբողջ պարբերությունը հետագայում խաչանիշով ճանված է։

Զկնի քառասնից ի 12 փետրուարի ուղևորեցաք գնալ ի Դարբաչ[136]։ Եւ <Սնդրբանդ[137] գետովն> վարեալ գնաւակ ելաք ի ճանապարհ ընդ գետն Գանգէս <ընդ հիւսիս>, մղոն ինչ հնարացեալ ի քաղաքէն Կալկաթու խարխեալ գնաւակն՝ ապատեցաք մակնթացութեան ջուրցն։ Կայր մերձ ամրոցին Կալկաթու գեղեցկաձև և բազմահնար երկաթագործ կամուրջ մի ի վերայ գետոյն, ընդ որ էր ճա-
52բ նա//պարհ մեր։ Մինչ գնացաք աստի իրրև երկօրեայ ճանապարհս, երկու* կողմն չեզր գետոյն կային բազմաթիւ բնակութիւնս երկրականաց շինեալ ոստովք ծառոց։ Գոգցես այսպէս մինչև ի Դարբայ, բայց չեա չորից աւուրց ժամանեցաք ի գետն Սնդրբանդ կոչեցեալ։ Ճանապարհին կային երեք կամուրջք մեծ և փոքր, նման առաջնոյն՝ երկաթագործ և շղթայակապ, ընդ որ անցեալ հասաք մինչև ցառաւն և չորս աւուրս ի դիւղաքաղաքն Բրհաալ, որ էր չոյժ պատուական և դրութեամբն՝ բարեձև, զոր անզդիացիք ի նորումս օր աւուր գեղեցկացուցանեն պէսպէս շինուածովք, որ է չեզր գետոյս։ Կացեալ մեր անդ ժամս երկուս վասն պէսէս հարկաւորութեանց ուղևորեցաք առ Դարբայ քաղաքն։

Գոանէէին** չանցս ճանապարհին բազմաւեսակ ազգս գեղեց-
53ա կազոյն թռչնոց//, նոյնպէս և չոլով տեսակս ծաղկանց, որք իրրև զծառս անտառաց բարձրացեալ էին։ Գոանէէին*** և պէս-պէս շինուածս գեղեցկաձև մեհենաց, գոգցես և չոլով անդաստանս բրնձի, որիզոյ և այլ պէս-պէս ընդեղինաց։ Յայսմիկ ճանապարհի գոանի ամենայն պիտոյք մարդկանց, բացի հացէ և այն եւս գոանի թէպէտ ուրեք-ուրեք, բայց չոյժ սակաւ։

Յայսմ ճանապարհորդութեան չոյժ զգուշանալի է վասն ջրոյ, զի ջուր գետոյս է աղէհամ ունելով հաղորդակցութիւն ընդ ծովուն։ Եւ չեա տասն և ութն աւուրց ժամանեցաք ի Դարբայ քաղաքն ի 20 մարտի։ Լուեալ մերազնէից տեղոյն՝ եկին առ մեզ հանդերձ քահանայիւն, նոյնպէս և Պօղոս եպիսկոպոսն[138] սրբոյ էջմիածնայ չեա ողջունի ընդ մեզ ուղևկցեալ՝ հասաք չեկեղեցին հայոց, ուր երգօք շարականաց և հնչմամբ զանգակաց եղեալ սուրբ մեռոնն ի վերայ սեղանոյն՝ կացաք անդ։

53բ // Ասացից փոքր ի շատէ զքաղաքէն։ Դարբայ քաղաք շինեալ է չարևելեան կողմն Գանգէս գետոյն, որոյ ջուրն մաքուր է ասա փոքր ինչ, քան զմիւս տեղեացն, զոր ի կիր առնուն բնակիչքն համայն։ Զունի պարիսպս, թէև չառաջ եղեալ է, բայց ի տիրելի[ն] բրիտանացւոց զայս քաղաք՝ միանգամայն անհետ են արարեալ զպարիսպս, որպէս և ի տեղիս տեղիս չերեսին մեծամեծ դրունս մերձ շինուածոցն և անդ, զոր հասարակօրէն Գօք կոչեն, որ է հրապարակ մեծ, վասն տուր և առուբեան, որոյ մէջտեղին կայր մեծագոյն քնդանօք մի ի վաղուց ժամանակաց մնացեալ։

---

* Չեռ. երկուտակ։

** Չեռ. գոանէր։

*** Չեռ. գոանէր։

Գտանի ի քաղաքին բազում երևելի շինուածք թէ՛ (յ)անգղիացւոց և թէ՛ ի հայոց, թէ՛ ի մահմետականաց, նոյնպէս և յայլոց ազգաց։

Կան և բազում մզկիթս մահմետականաց՝ շէնք և աւերակք։
54ա Քաղաքս լեալ է ի նախնումն առ թագաւորօքն մղոլաց՝ // արքայանիստ և մայրաքաղաք գաւառին Բանգալու։ Մարդաշատ է յոյժ և ունի բնակիչս բազմութիւն յոյժ մահմետականաց և կռապաշտից, և յոլովք ի նոցունց՝ յոյժ հարուստք և տէր ընդարձակազոյն կալուածոց, յորոց քաղեն յոլովազոյն եկամուտս և հասս ամի-ամի։

Անգղիացիք ունին առ փոքրիկ եկեղեցի մի հանդերձ զանգակատամբ միով, յորոյ վերայ կայր հաստատեալ մեծազոյն ժամացոյց մի։ Գտանին առ և զօրք անգղիացւոց, բայց ոչ յոլով, նոյնպէս և քաղաքական օրինաց դատարան մի ևս։

Գտանի ի քաղաքի առ վիշտասան տունս նաև յազգէ յունաց։ Ունին և եկեղեցի մի, որ է ընտիր շինուածք, յորում կայր պատկեր մի Մարիամայ Մագդաղենացւոյ՝ նկարեալ ի վերայ կարծր ապակւոյ քաջահնար արհեստիւք։

Կան և յազգէս մերմէ այժմ իբրև (ղ)տունս հնգետասան, ուր (իմա՝ ի Դաքայ) յառաջն լեալ են բազում և բազմահարուստք յոյժ, ունելով կալուածս մեծամեծս։ Այլ այժմիկ անյաջողութիւնք
54բ սնանդոց նոցին զոդցես բոլորովին անդիտակցեալ և // այժմ կան թափուր գլխովին և անշքացեալ և բազումք հազիւ գտանեն զմասնաւոր պիտոյս հանդերձի և կիրակրոց։ Տեսեալ իմ զհոյակապ տունս յառաջնոց բազումք աւերակ և բազումք ի ձեռս այլազանց՝ ցաւեցայ ոչ սակաւ։

Ունին հայք եկեղեցի մի յանուն սրբոյ Յարութեան, որոյ շինութեան թիւն է 1781, որ ունի և զանգակատուն մի և բազում անօթս ոսկոյ և արծաթոյ և սէսպէս զարդս և զգեստս բազումս, ընծայեալք ի բարեպաշտ նախնեաց։ Շուրջ զեկեղեցիսաւս կա ծառաստունկ, յորում գոն զանազան տեսակս ծառոց և ծաղկանց, զորս խնամարկէ վիճակի քահանայն։

Արտաքոյ քաղաքիս կայ և դաշտս մեծ վասն ճեմելոյ բնակչաց, ուր յերեկոյեան պահու, եւանեն եւրոփացիք և այլք ի ճէմ։
55ա Զկնի վեց ամաց, իբր թէ աւարտեալ // զգործ նուիրակութեան, փոքր նաւաւ ուղևորեցաք ի Կալկաթայ, և ընդ անցանելն մեր՝ իջևաննեցաք յինս քան աւուրց ի Չիչրայ[139] անուանեալ տեղին, որ է գիւղաքաղաք փոքրագոյն, իբրև հինգ կամ վեց ժամուց ճանապարհ հեռի ի Կալկաթայ**, որ շինեալ է ի կողմն հիւսիսոյ առ գետովն Գանգէսի։ Կացաք մեք առ գտասն և հինգ աւուրս։

Գիւղաքաղաքս Չիչրայ յառաջագոյնն էր ընդ իշխանութեամբն հոլանդացւոց և այժմ է ընդ անգղիացիս, ուր միայն բնակին զօրք վասն պատուական օդոյն, վասն որոյ կան և քանի մի մեծամեծ շինուածս, որք են բնակարանք զօրաց և զօրապետաց և եկեղեցին

* Ձեռ. աւերեալ։
** Ձեռ. Կալկաթոյ։

անգղիացւոց, որ է յեզր գետոյն հանդերձ զանգակատամբ (յորոյ վերայ և հաստատեալ գոյ ժամացոյց մի)։ Ջունի ամրոցս կամ բերդս,
55բ տունք // հասարակ բնակչացն են ցածունք և փոքրիկ[ք] և անդին յոյժ սակաւամարդ, քանզի ոչ գոյ տուր և առութիւնս ինչ այժմ, որպէս յառաջն լեալ է։

Յառաջնումն բաղում տունք եղեալ են յայդէս, որ և շինեալ են պատուական եկեղեցի մի յանուն Սրբոյն* Յովհաննէսեայ, որոյ շինութեան թիւն գրեալ կայ [յ]արևմտեան դրան վերին կողմն ոսկեգրով, որ է 1695։ Նոյնպէս և պատուականագոյն և բարձրաշէն զանգակատուն մի, զոր ի նորումս է շինեալ, որոյ շինութեան արձանագիրն գրեալ կայ ոսկեգրով ի վերայ սև մարմարոնի այսպէս. «Զայս նորաձև զանգակատուն, որոյ առաջին քարն հիմնադրութեան եղաւ ձեռամբ պատուելի պարոն Դանիէլ Անդօնի Ովրէմբէդ կառավարչին տեղոյս ի հինգերորդումն մարտի, յամի // տեառն 1822.
56ա կանգնեաց բարեպաշտուհի տիկին Սոփիայ Սիմէօն Փանոս Բաղրամեանն[140], առ ի բարեյիշատակ յանգուցեալ առն իւրոյ Պարօն Սիմէօն Փանոս Բաղրամեանին»։ Ի սմին եկեղեցւոյ տեսաք ի վերայ որմոյն կախեալ կայր գրութիւն կանոնական կարգադրութեան։

Մերոցինք տեղոյս են երկու տուն։ Ունին և վիճակի քահանայ մի, որոյ բաւականութիւն տարեկան հաստուցանէ Կալկաթու եկեղեցականն։ Եւ է եկեղեցիս ընդ իշխանութեամբ Կալկաթու հայոց եկեղեցւոյն։ Ի 18 հոկտեմբերի ուղևորեցաք առտի առ Կալկաթայ։

Աւարտելով մեր դամենայն գործս նուիրակութեան ի Կալկաթայ յամի տեառն 1834 և ի 12 դեկտեմբերի Կոռնուէլ նաւաւն ուղևորեցաք առ Մադրաս քաղաքն, զոր յօժանդակութեամբ խնամոցն վերին մինչև ցտասն և վեց աւուրս հաղիւ ժամանեցաք ի յիշեն դեկտեմբերի, բայց կարի նեղութեամբ ի պէսպէս յալէկոծութեանց և ի ծո-
56բ վային տկարութեանց։ // Մինչ խարխեալ կայր նաւն ի նաւահանգստի, լուեալ մերոցինք զգալուստ մեր օրական գրութենէ բրիտանացւոց, առաքեցան ի մերոցանց հրաւիրակք, որք են պարոնայք Գրիգոր Մանուկ Աստուածատրեան և Յօհաննէս Յարութիւն Քադէոսեան հանդերձ երկու նաւակաւ։ Ջկնի չերմեռանդական ողջունի, յետ կէս ժամուց իջեալ մեր ընդ հրաւիրակացն ի նաւակէն հանդերձ կարասիք և ըստասահարիօք մերովք** հասեալ մեր յեզր ծովուն՝ դումարեալ տեսաք զբանի մի անձինս պատուաւորս ի մերոցանց առ ի յընդունելութիւն սրբազան նուիրակին ի կառս իւրեանց հանդերձ վիճակաւոր տէր Ստեփաննոս տէր Յարութիւն քահանայիւն։ Մտեալ մեր ի կառս ուղևորեցաք յեկեղեցին հայոց, ուր ժողովեալ էին ի սրահ եկեղեցւոյն համայն մերոցինք, զոր երգօք շարականաց և հնչմամբ զանգակաց մտեալ յեկեղեցին և եղեալ զսբբալոյս սուրբ միւռոնն ի վերայ սեղանոյն հանդերձ առենախօսութեամբ ի վերայ սուրբ ողջունի, ապա բաժանեցաք իւրաքանչիւրս ի բնակութիւնս մեր...

---

* Ձեռ. *սուրբ*։

** Ձեռ. *մեր*։

ՄԱՆՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հովհաննես կաթողիկոս Կարբեցին գահակալել է 1831—1842 թթ.։
2. Խաչատուր արքեպիսկոպոս—էջմիածնի միաբան, Հովհաննես Կարբեցու կողմից ուղարկվել է Հնդկաստան որպես նվիրակ (1832—1834 թթ.)։ Մեզ են հասել ինչպես նրա անձի, այնպես էլ նվիրակության վերաբերյալ մի շարք հետաքրքիր փաստաթղթեր, որոնք պահվում են Մաշտոցյան մատենադարանի արխիվում։
3. Աղբաշ գյուղ—այժմ Քաղցրաշեն,, գյուղ ՀՍՍՀ Արտաշատի շրջանում։
4. Դավալու—այժմ Արարատ, ՀՍՍՀ Վեդու շրջանում։
5. Իւլա—Յուվա, գյուղ ՀՍՍՀ Արտաշատի շրջանում։
6. Աղալար խան Փիֆլիզեցի—Աղալար խան Ննիկոլոպով. Թավրիզի հայկական համայնքի աչքի ընկնող գեմքերից, խոշոր կալվածատեր։
7. Յովհաննես արքեպ. Բայազետցի—1832 թ. նոյեմբերի 12-ից 1836 թ. նոյեմբերի 7-ը՝ մինչև իր մահը, եղել է Նոր-Ջուղայի հոգևոր առաջնորդ։
8. Աբրահամ Միրզա—Ցարական կառավարության արտաքին գործերի նախարարության աշխատակից, 1832 թ. Թևրան գնացող ռուսական դեսպանության մասնակից։
9. Սեյդաբատ — փոքրիկ գյուղ Թավրիզ—Միանն ճանապարհի վրա։
10. Մանզիլ—պարսկ. منزل —կայան, օթևան, այն վայրերը, ուր կարավաններն դադար էին առնում։
11. Ղարասու—Թալիերուդի (Աջիչայի) հարավ իջնող վտակներից մեկը։
12. Թիքմատաշ — Թիքմե-Թաշ կամ Թիքմե-դաշ, գյուղ Թավրիզ—Միանն ճանապարհի վրա։
13. Բուրքմանչայ—կրճատ նաև՝ Բուրքմեն, որտեղ ստորագրվեց ռուսական 1828 թ. հաշտության պայմանագիրը։
14. Գիւղաշահար — Գյուղաքաղաք (կազմված է հայկական գյուղ և պարսկական շահր شهر — քաղաք բառերից)։
15. Ղափլանքու — Ղաֆլանքուհ, այդպես է կոչվում Միանին Զենջանից բաժանող լեռնային շրջանը։
16. Արմանխանա — Արմախանա, Զենջանից հյուսիս փոքրիկ գյուղ։
17. Ղարբիզակ — պարսկերեն خربزه խարբուզե — սեխ։
18. Զանդեան, Զանկեան — Զենջան, Պարսկաստանի հին քաղաքներից մեկը, առևտրական և արհեստագործական խոշոր կենտրոն։
19. Ուզնփրը նկատի ունի Բաղ և Դաշբուլաղ իջևանները։
20. Սուլթանիայ—Իլխանական պետության մայրաքաղաքը, որը կառուցել էր Իլխան Արղունը 14-րդ դարի սկզբներին։ Այստեղով էին անցնում Արևելքի առևտրական գլխավոր ուղիները. ներկայումս՝ ավերակ։
21. Պատասր կառուցել է Յաթհալի շահը, նպատակ ունենալով այստեղ վերաստեղծել նոր քաղաք։
22. Սիղրան—իմա՝ Խորամաբադ, գավառային քաղաք, Համանուն շահրստանի վարչական կենտրոնը, Թահմասպ շահրստանում։
23. Խոռամդարա—Խորրամդարա, Սուլթանիայից հարավ։
24. Սիաղրօն—Սիաղդեհան (այժմ Սիաղհան) Խորրամ-դարայից դեպի Ղազվին գնում էին երկու ճանապարհ, մեկը՝ Քնարաղրլնի, մյուսը՝ Սիաղդեհանի վրայով։ Կարբեցին և նրա ուղեկիցները ընտրել են երկրորդ ուղին, որն ավելի կարճ էր։
25. Ղազբէն — Սեֆյան Իրանի երկրորդ մայրաքաղաքը (Թավրիզից հետո), այժմ՝ Համանուն Շահրստանի վարչա-տնտեսական կենտրոնը։
26. Այստեղ խոսքը Հարուն Ալ-Ռաշիդի կողմից 786 թ. կառուցված մզկիթի մասին է։
27. Օվամբար — պարսկերեն— آب انبار աբ-անբար —ջրամբար։

28. Հիւսէին խան—Հյուսեյն-զուլի խան Սարդար, Երևանի վերջին խանը։ Եղբոր՝ Հասան խանի հետ կառավարել է Երևանը։ Ավելի հայտնի է Հյուսեին խան Սարդար անունով (1807—1827)։

29. Ֆաթխ — պարսկերեն فتح փեսթհ—պիտակ։

30. Կարավանային հաջորդ կայանը Ղազվինից հետո Սենֆեր Հաջին էր, սակայն այդ կայանը այնքան անհարմար էր, որ ուղևորները գերադասում էին մնալ Ղշլաղ փոքրիկ ավանում, չհասած Սենֆեր Հաջիւ

31. Սօնկրաբատ — Սունգարաբադ, իջևանային խոշոր կայան Ղազվինից հարավ։

32. Սուլէյմանի կամ Սուլեյմանիե—կարավանային կայան Թեհրանից հյուսիս-արևմուտք։

33. Մանուչար խան Տփխիսեցի—Թեհրանի 19-րդ դ. հայ համայնքի աչքի ընկնող դեմքերից մեկը։

34. Համանաբար Կարբեցին հաղորդում է թվական սխալ տվյալ։ Մի շարք այլ աղբյուրների վկայությամբ 1830-ական թվականներին Թեհրանի հայ համայնքը ուներ ոչ պակաս քան 75 ընտանիք։

35. Ապակեա վանդակագործ — Հեղինակը նկատի ունի այն արհեստավոր ապակեգործներին, որոնք բազմագույն, կտրատված փոքրիկ ապակիներով զարդարում են շինության լուսամուտները, պատշգամբները և այլ վայրեր։

36. Ջամբօն — պարսկերեն جامبر — ապակեգործ։

37. Մինաս Տփխիսեցի — Մանուչար խանի կրտսեր եղբայրը, խոշոր վաճառական։

38. Խոսքը ասորիների մասին է։

39. Քնարակերտ—Քենարդերդ, գյուղ Թեհրանից հարավ Քերեջ գետի վրա։

40. Հովուզ Սոլթան — Հովզ-ե Սոլթան, կարավանային խոշոր կայան, Ղումից հյուսիս-արևմուտք, Կայքրա և Քայ գյուղերի միջև։

41. Ռահդար—պարսկերեն راهدار — ռահդար—ճանապարհների ապահովության համար պատասխանատու, որ անցնող քարավաններից հատուկ տուրք՝ «ռահդարիա» էր գանձում։

42. Քարվանսարադար—պետք է լինի քարվանսարադար کاروان سرادار — քարվանատան տեր։

43. Ղրան— قران. Կարբեցու ժամանակ արծաթ դրամի հիմնական միավորը, որը հավասար էր իր ժամանակի ռուսական 30 կոպեկին։

44. Փօլիդալլաք — Կարավանային կայան Քայ և Քամրադ գյուղերի միջև, Ղարաչայ և Ռուդի-Անուրբար գետերի խառնման վայրում։

45. Այստեղ խոսքը հայտնի Արքայական կոչվող ճանապարհի մասին է։

46. Կառուցվել է Նոր Ջուղայի Մեծ Մեյդան կոչվող թաղում, ինը տարում, ավարտվել է 1654 թվականին։

47. Շուշան — Սպահանը հայկական սկզբնաղբյուրներում երբեմն կոչվում է նաև Շուշ։ Այստեղից էլ Շուշան կամ Շուշանի։

48. Շահի մեյդան—պարսկերեն میدان شاه — Մեյդան-ե շահ—շահի հրապարակ։

49. Չարբաղ—պարսկերեն چهارباغ — Չեհար-Բաղ—չորս այգի։ Խոսքը Շահի մեյդանից դուրս եկող հռչակավոր երկշար պողոտայի մասին է։

50. Հեշտ-բրհեշտ—պարսկերեն هشت بهشت — հաշտ-բեհեշտ—ութ դրախտ։

51. Կարբեցին այստեղ խոսում է Շահ Աբաս Ա-ի խրախճանքների պալատի մասին։

52. Ջանդարուտ—Ջայանդերուդ—Սպահանի միջով հոսող գետը, իր ոռոգման ցանցով կարևոր դեր է խաղում քաղաքի և շրջակայքի ընդարձակ տարածությունների ոռոգման գործում։

53. Շահ Աբաս (1557—1628)—Սեֆյան դինաստիայի շահերից, խոշոր ռազմական և քաղաքական գործիչ, գահակալել է 1587—1628 թթ.։

54. Խոսքը պարսկա-աֆղանական երկարամյա պատերազմների մասին է։

55. Դրանք էին՝ Երևան, Թավրիզեցվոց, Չարսու, Քոշեր, Հակոբջաննց, Մեծ մեյդան և Փոքր մեյդան թաղերը։

56. Մալաթ — պարսկ. محلات — մահալաթ—թաղեր։

57. Կարբեցու նոր Ջուղա այցելելուց առաջ Նոր Ջուղայի հայկական թաղերն ունեին հետևյալ

պատկերը. Երևան թաղը 35 տուն, Թավրիզեցոց թաղը կամ Մահլաթ 90 տուն, Զարսու թաղը 59 տուն, Քոչեր թաղը 36 տուն, Հակոբջաննոց թաղը 44 տուն, Մեծ Մեյդան թաղը 58 տուն, Փոքր Մեյդան թաղը 26 տուն։

58. Հնդկահայ քաղաքական խոշոր գործիչ և վաճառական։

59. Ս. Ստեփաննոս—կառուցվել է 1662 կամ 1665 թ.։

60. Ս. Աստուածածին — կառուցվել է Մեծ մեյդան թաղում 1613 թ., նկարազարդվել՝ 1655 թ., հախճապակով զարդարվել՝ 1651—1665 թթ.։

61. Մեծարժեք այս նկարները պատկանում են հայ տաղանդավոր նկարիչ Մինասի վրձինին։

62. Կառուցվել է 1702 թ. Հովնաթան Ջամալյանի կողմից։

63. Նոր Ջուղայի թեմի մեջ էին մտնում նաև Հնդկաստանի և Ինդոնեզիայի հայաբնակ քաղաքները։

64. Խոսքը Նոր Ջուղայի «Մեծ մեյդան» թաղի մասին է։ Թաղը շրջապատված է եղել պարիսպով, ելումուտի համար ունեցել է հինգ դուռ։ Այստեղ հիմնականում ապրում էին վաճառականներն ու կալվածատերերը։

65. Կառուցված է եղել Ղարիբենց կոչվող փողոցի վրա, կոչվել է նաև Ղարիբենց ժամ։

66. Ձեռագիր հիշատակարանների համաձայն կառուցվել է 1729 թվականին։

67. Այս թաղում ապրում էին միայն հայեր և «բնակիչք սորին արհեստաւորք էին»։ Զարսուն հայտնի էր ամրոցիյուններով, որոնց օգնությամբ բնակիչները պաշտպանվում էին արհավիրքների ժամանակ։

68. Կոչվել է նաև Հակոբջաննոց։ Այստեղ մեծ մասամբ ապրում էին հայ բրուտներ, որից և առաջացել է թաղի անունը։ Այս թաղում էր գտնվում Նոր Ջուղայի նշանավոր դպրոցը։

69. Կոչվել է նաև Սանգիրաշ (քարտաշ) թաղ. ունեցել է այնպիսի լայն փողոցներ, որոնք կոչվել են պողոտաներ։ Այս թաղում մեծ մասամբ ապրում էին քարաշեն և շինարար արհեստավորներ։

70. Կոչվել է նաև Ավետանոց ժամ։

71. Նոր Ջուղայի ամենից փոքր թաղամասն էր։ Այս թաղի անշուք և փոքրիկ տներում ապրում էին հայ կաուչագործ արհեստավորները։

72. Կառուցվել է 1666 թվականին։

73. Նոր Ջուղայի խոշոր թաղամասերից էր։ Շրջապատված էր ամուր պարիսպով, ելումուտի համար ուներ երկու դուռ։ Տեր Հովնանյանի վկայությամբ՝ «մեծի մասն են բնակչաց սոյն թաղին կտաւագործք ոստայնանկ, իսկ այլ ոմանք հիւսն, տուր և առողք ցորենոյն, կրպակաւորք և այլ արհեստաւորք»։

74. Կոչվել է նաև ս. Մինաս։

75. Երևան — հիմնվել է բռնագաղթից հետո «տէրունականաց» հայերի համար Շահ Աբբաս 2-ի հրամանով։ Այս թաղի բնակիչների մեծ մասը «...դեգերելով ի գիւղօրայս մնջանայ՝ քրտամբք երեսաց վաստակեն զհաց իւրեանց»։

76. Կառուցվել է 1659 թվականին, նույն թաղի ժողովրդի, հատկապես արհեստավորության հավաքած դրամով։ Ունեցել է դպրոց և ձեռագրատուն։

77. ա) ս. Նազարեթ — կոչվել է նաև Փոնջենի կամ Նորաշենի եկեղեցի,

բ) ս. Յակոբ — կամ Մուրադենց, կոչվել է նաև խիտարազմբեթ,

գ) ս. Թումա — կամ Զանգակավոր,

դ) ս. Յովհաննես — կոչվել է նաև Շահվերդենց. կառուցված է եղել Սաֆրազենց նշանավոր կամուրջի մոտ։

78. Զաբութ, արաբ.—պարսկերեն ضابط — զաբեթ—կառավարիչ։

79. 17 և 18-րդ դարերում Նոր Ջուղայի աշխարհիկ կյանքի բոլոր հարցերը տնօրինում էր ընտրված քալանթարը։ 19-րդ դարում, երբ Նոր Ջուղայում վերացավ քալանթարությունը, համայնքի թե՛ հոգևոր և թե՛ աշխարհիկ կյանքը սկսեցին ղեկավարել էջմիածնից նշանակված առաջնորդները։ Ընդ որում, նրանց վրա էր ընկած նաև գլխավոր դատավորի պարտականությունները։ Նոր Ջուղայի առաջնորդի, հայ համայնքի և ժողովրդի նկատմամբ ունեցած աշխարհիկ և հոգևոր իշխանության իրավունքները հաստատվում էին Պարսկաստանի շահերի հատուկ հրովարտակներով։ Պարսկական արքունիքը նրանց միջոցով էր իրականացնում նաև հարկերի գանձումը հայ համայնքից։

80. Մայեար — Մահյար — Կարավանային փոքր կենտրոն Սպահանից հարավ-արևելք, Քուհ-է-Զարդ լեռան ստորոտին՝ շուրջ 2500 մ բարձրության վրա։

81. Ղումիշա—Ղամիշլահ, Կարբեցու այցելած ժամանակ կարավանային և առևտրական խոշոր կայան։ Այժմ Շահրիզա քաղաք, համանուն շահրեստանի վարչատնտեսական կենտրոնը։
82. Էմինադաբ — Էմինաբադ, կարավանային խոշոր կայան Մաքսոպ-բեգի դյուղից անմիջապես հարավ՝ չհասած Սեմիրում։
83. Շօլկատան—Շուլգեստան, կարավանային փոքր կայան Էլիդ Քաստի և Աբադեի միջև։
84. Բախտիար — Կարբեցին այստեղ նկատի ունի իրանական կիսանոմադական բախտիարի ցեղի ներկայացուցիչներին։
85. Աբադայ — Աբադե, համանուն շահրեստանի վարչա-տնտեսական կենտրոնը։ 19-րդ դ. կարավանային և առևտրական խոշոր կայան Բնհրան—Շիրազ ուղու վրա։
86. Քիլիլ—հավանաբար Իրլիդ գյուղն է, Ղշլաղից հյուսիս։
87. Ղշլայ—Ղշլաղ գյուղ Դեհ-բեղեից հարավ, Բուդե Փալվար գետի վտակներից մեկի վրա։
88. Մաշատ-Մօրղար—ավերված ամրոց, նախկինում կարավանային կայան։
89. Սեյտուն—Սեյդուն, գյուղ Սիրվննդից հարավ-արևելք, Փալվար գետի աջ ափին։
90. Թաղդ Սլէյմանի—Իրանում մի շարք վայրերում պատմական հուշարձանների ավերակները ժողովուրդը անվանում էր «Թախթ-ե-Սուլեյմանի», վերագրելով դրանք Սողոմոն Իմաստունին, որին մուսուլմանները «Սուլեյման» են անվանում։ Այստեղ խոսքը Թախտ-Մադար-ե-Սուլեյմանի պալատի և դամբարանի ավերակների մասին է. գտնվում է Սաադաբադից հյուսիս։
91. Զարդուն—Զերդուն, գյուղ Շիրազ շահրեստանում։
92. Թաղդ Ջմշիտ— تخت جمشید — բառացի նշանակում է Ջիմշիդի գահ։ Պարսիկները «Թախթ-ե Ջիմշիդ» կամ «Ջեհել Մենար» («Քառասուն սյուն») էին կոչում Պարսկաստանի հնագույն մայրաքաղաքի՝ հռչակավոր Պերսեպոլսի ավերակները։
93. Ավետիս Կարբեցին նկատի ունի այսպես կոչված «Հարյուր սյուն» արքայական պալատի ավերակները։
94. Ջմշիտ—Հին Պարսկաստանի լեգենդար թագավոր։ Իրականում Պերսեպոլիսը կառուցողները եղել են Աքեմենյան դինաստիայի ներկայացուցիչներ Դարեհ Ա-ն և Քսերքսեսը (6—5-րդ դարերում մ. թ. ա.)։
95. Պարսկահայ վաճառական, Շիրազի հայկական համայնքի աչքի ընկնող դեմքերից մեկը։
96. Ավ. Կարբեցին սխալվում է, Ֆարման Ֆարմայ فرمان فرما անձնանուն չէ, այն բառացի նշանակում է հրամանի արձակող, կառավարող։ Շիրազն այն ժամանակ կառավարում էր Ֆաթհ Ալի շահի անդրանիկ որդին՝ Հյուսեյն Ալի Միրզան։
97. Սամրդուզ—պարսկերեն سمور دوز — սամուրագործ։
98. Ջնար—Ջինար, Ջինարե Ֆարիար։ Այս շրջանում իրարից ոչ այնքան հեռու համանուն երկու դյուղեր կան։ Այստեղ, հավանաբար, խոսքը Կարա Աղաջ (Մենդ) գետից արևելք ընկած դյուղի մասին է, որը Ճանապարհին ավելի մոտիկ է։
99. Խունխռինխուն—աղավաղված Խանե Ջանիանն է։
100. Դաստարջին—Դաշտի-Արժան, կարավանային կայան, դյուղ Քալե Մաշիդից հյուսիս-արևելք։
101. Խոսքը վերաբերվում է Կարա Աղաջ (Մենդ) գետին, կամ նրա վտակներից մեկին։
102. Իմամզատայ—պարսկ. امام زاده — Իմամզադե—սրբատեղի։
103. Քեազրուն—Քազերուն—քաղաք Պարսկաստանի հարավում։
104. Քոթալ—Կարբեցին խոսում է նշանավոր Քոթալ-Փիր-Զան դժվարանցանելի լեռնանցքի մասին (2378 մ ծովի մակերևույթից)։
105. Քօնարթախտայ—Քենար թախտե, կարավանային կայան, դյուղ Քեման Քեշից անմիջապես հարավ։
106. Դալաքի—կարավանային կայան Բուշերի Ճանապարհին։
107. Ջաքուիա—չի պահպանվել։
108. Բօրազդուն—Բորազջան, կարավանային կայան Բուշեր—Քազերուն ուղու վրա։
109. Պարսկահայ վաճառական, Բուշերի անգլիական Արևելա-Հնդկական-ընկերության առևտրական գործակալ։
110. Կարբեցին սխալվում է։ Հավաստի աղբյուրների վկայությամբ հայերի թիվը շատ ավելի էր։
111. Սուխսաին—խոսքը շոգենավերի մասին է։
112. Ղալամքար—գրչով բանված ընտիր ծաղկազարդ կտոր։

113. Թեմուր Միրզա—Շահրխ Ալի շահի երրորդ որդին։
114. Բլեն—Ջոն Բեյլ, Կարբեցու Բուշեր այցելած ժամանակ անգլիական Արևելա-հընդկական ընկերության ներկայացուցիչը Հարավային Պարսկաստանում։
115. 1668 թվականին, անգլիական Արևելա-հնդկական ընկերությունը, որը նոր էր թափանցում Հնդկաստան, հնդկահայ վաճառականների մի խմբի հետ, որին գլխավորում էր Խոջա Փանոս Քալանթարը, կնքեց պայմանագիր։ Ընկերությունը, համաձայն այդ դաշնագրության, ի թիվս բազմաթիվ այլ պարտավորությունների, պարտավորվում էր նաև հայերի համար կառուցել եկեղեցիներ և վճարել հայ հոգևորականների աշխատավարձը, եթե նրանք առևտուր անեին անգլիացիների հետ։
116. Սուրաթ—խոշոր նավահանգիստ հյուսիս-արևմտյան Հնդկաստանում։
117. Գանգեսի գետաբերանից այնտեղ ժամանած նավերը մինչև Կալկաթա տանում էին լոցմանները, որոնք քաջ գիտեին այդ ուղին։ Մյուսների կողքին մեծ հռչակ ունեին նաև հայ լոցմանները։
118. Յարութիւն Եղիա—Հարություն Եղիայան Շիրազեցի, Կալկաթայի ս. Նազարեթի եկեղեցու հոգևոր հովիվը 1829—1839 թթ.։
119—120. Ավետիս Կարբեցու հիշատակությունից բացի այս երկու անձնավորությունների մասին ուրիշ ոչինչ չգիտենք։
121. Ջառաբխանե—պարսկերեն՝ փողերանոց։
122. Թանքսալ—ոչ բենգալերենում և ոչ էլ անգլերենում նման բառ չկարողացանք գտնել։
123. Կալկաթու լտեր—Կալկաթայի երկրամասում ժամանակին գործող չափի և քաշի միավոր։
124. Բրաման—Բրահման էին կոչվում կրոնական այն ուսմունքի հետևորդները, որոնք դեռ ստրկատիրական էպոխայում Հնդկաստանում մշակել և զարգացրել են հնդկական Բրահմա աստծու (հինդուիզմի պանթեոնի ամենից բարձր աստվածներից մեկը, որին վերագրում էին երկրի և կյանքի ստեղծումը) պաշտամունքը։
125. Նույնն է վկայում նաև Մաղիկյանից 1—2 տարի առաջ Կալկաթա այցելած Պողոս Լազարովիչը։ Սակայն այլ բան է ասում գրքին նույն ժամանակ Կալկաթա ժամանած էջմիածնի նվիրակներից մեկի կազմած Հնդկաստանի և նրա հարևան երկրների հայկական համայնքների ցուցակը, որտեղ կալկաթայի հայկական համայնքը ցույց է տրված 150 տուն։
126. Կառուցվել է 1724 թ. հայ վաճառական աղա Նազարեթի տված դրամով, կոչվում է ս. Յովհաննէս Կարապետ։ Չիշրայի նույնանուն եկեղեցուց տարբերելու համար հնդկահայերը այն կոչել են «Նազարեթի բարերարությամբ կառուցած ս. Հովհաննես եկեղեցի»։ Այժմ նա ավելի հայտնի է Նազարեթի անունով։
127. Աղա Նազար—Խոջա Նազարեթ, կալկաթայի հայկական համայնքի աչքի ընկնող դեմքերից մեկը, մեծահարուստ վաճառական, բարերար։
128. Մանուել Հազարմալեան—հնդկահայ վաճառական և բարերար։ Մաղիկյանի և Գուշակյանի հիշատակություններից բացի նրա մասին ոչինչ հայտնի չէ։
129. Խաչիկ Առաքելյան—Խոջա Խաչիկ Առաքել Ջուղայեցի՝ 18-րդ դ., հնդկահայ խոշոր վաճառական։ Հայտնի է իր մի շարք բարեբարական-շինարարական աշխատանքներով։
130. Մաղիկյանի հիշած այս բարեփոխությունները Խաչիկ Առաքելի ծախսով կատարվել են 1796 թ.։
131. Աղա Մօսես—Խոջա Խաչիկ Առաքելի կրտսեր որդին էր, հնդկահայ վաճառական։ Հոր օրինակով կատարել է զանազան նվիրատվություններ։
132. Կալկաթայի հայոց եկեղեցու վարչությունը բաղկացած էր ժողովրդի կողմից ընտրված յոթ աշխարհիկ անդամներից և չորս վիճակավոր քահանաներից։ Աշխարհական յոթ անդամներից երեքը կոչվում էին «ավանդապահներ», երեքը՝ «կոմիսարներ», մեկը՝ եկեղեցապան։ Հայ համայնքի ներքին կյանքին վերաբերվող բոլոր հարցերը Կալկաթայում և Չիշրայում քննվում էին այս վարչության կողմից, որի նախագահն էր «եկեղեցապանը»։
133. Դեռևս 1757 թ. Կալկաթայում կար հայկական դպրոց, որը հիմնադրել էր Բենգալիայի Նավաբ Ալավերդու զորավար Մարզար Հովհաննես Քալանթարյան Նոր Ջուղայեցին։ Հիշվում են նաև մի քանի փոքրիկ ուրիշ դպրոցներ, որոնք երկար կյանք չեն ունեցել։ Երկար ժամանակ Կալկաթայում մի քանի անհաջող փորձեր են արվել հայկական դպրոց ստեղծելու համար։ Վերջապես մի քանի հարուստ հայերի նվիրատվություններով և ժողովրդի մեջ կատարված հանգանակության շնորհիվ կառուցվել է հայկական դպրոցի շենք, որը կոչել են «Մարդասիրական ճեմարան»։ Ճեմարանը բացվել է 1821 թ. ապրիլի 2-ին,

որը գործում է մինչև այսօր։ Ճեմարանը պիշերօթիկ է. աղքատ ծնողների երեխաները պահվում են այդի, հարուստներինը՝ վարձով։

Դպրոցն ուներ երկու բաժին՝ տղաների և աղջիկների։ Վերջինս 1842 թ. փակվեց։ 1846 թ. միայն Մ. Թաղիադյանը բացեց Սանդխտյան օրիորդաց դպրոցը, որը «Մարդասիրական ճեմարանին» միացավ 1952 թ.։

Դպրոցը ղեկավարվում է հատուկ կառավարչությամբ, որի գլուխ կանգնած են չորս հոգաբարձուներ, ռեկտորի կամ «գլխավոր վարժապետի» հետ միասին։

134. Յովհաննէս Ամատեան—Հովհաննես Ամդալ կամ Ամդալյան, ծնվել է 1790 թ. Շիրազում, շուրջ 20—25 տարեկան հասակում տեղափոխվել է Հնդկաստան և բնակվել Կալկաթայում։ Զբաղվել է մանկավարժությամբ, երկար տարիներ եղել Կալկաթայի «Մարդասիրական ճեմարանի» ուսուցիչը, ապա՝ նրա տեսուչը։ Կատարել է նաև թարգմանություններ։ 1822 թ. ճեմարանին կից՝ Ստեփանոս Ջնթուման Ամէտյանի աջակցությամբ տպագրել է մի շարք գրքեր։ Մահվան թվականն անհայտ է։ 1860-ական թվականներին դեռ կենդանի էր։

135. Խոսքը ճեմարանի «Արարատյան» կոչվող դրադարանի մասին է։ Երբեմնի հարուստ այդ դրադարանից այժմ գրեթե ոչինչ չի պահպանվել։

136. Թաքայ—Հնդկաստանի խոշոր քաղաքներից մեկը։ Հայերն այստեղ հաստատվել են սկսել 1700 թվականներին, թեև մինչ այդ հաճախ էին եղել այդտեղ։ 1917 թ. Թաքա այցելած Թորգոմ արքեպ. Գուշակյանի վկայությամբ, այդ հարուստներից ոչինչ չէր մնացել։ Հայերի թիվը կազմում էր ընդամենը 39 տուն։ Այժմ հայեր չկան Թաքայում։

137. Սնդրբանդ—Գանգեսի ճյուղավորման վտակներից մեկը։

138. Պօղոս եպիսկոպոս—Խաչատուր արքեպիսկոպոսից առաջ որպես էջմիածնի նվիրակ ուղարկվել էր Հնդկաստան։ Մոտ երեք տարի եղել է Հնդկաստանում և նրա հարևան երկրների հայկական համայնքներում։

139. Չիլրա—Նախկին Չինսուրահն է, առևտրական խոշոր կայան Հուգլի գետի վրա։ Հայերը Չիլրային ծանոթ էին անգլիացիներից շատ առաջ։ Կոստանդ վարժապետն իր տետրում Չիլրան հիշում է 17-րդ դարի սկզբներում որպես հայկական գաղթավայր։ Եկեղեցին հնագույն քրիստոնյա եկեղեցիներից է հնդկական հողի վրա։ Կառուցված է 1695 թ.։ Կառուցման մասին կա արձանագրություն դռան վերին մասում։ Ունի հարուստ պետական արժեք։

140. Սոֆիա Սիմեոն Փանոս Քալանթարեան, հնդկահայ նշանավոր վաճառական և հասարակական գործիչ Բաղրամյանի այրին։

АВЕТИК КАРБЕЦИ ЦАГИКЯН

ПУТЕВЫЕ ЗАПИСКИ

Подготовка к печати Р. АБРАМЯНА и П. АНТАПЯНА

Резюме

«Путевые записки» Аветика Цагикяна Карбеци содержатся в рукописи № 865 Матенадарана имени Маштоца.

В 1832 году автор записок сопровождал нвирака (нунция) католикоса епископа Хачатура в поездке из Эчмиадзина в Индию.

Аветик Карбеци сообщает в своем произведении интересные сведения о лежащих на пути из Эчмиадзина в Индию многочисленных городах, селах, поселках, караван-сараях, иногда дает подробное их описание и говорит о быте населения, его правовом положении и обычаях, говорит о примечательных исторических памятниках, некоторые из которых в настоящее время превратились в развалины.

AVETIK KARBETSI DZAGHIKIAN

RELATION DE VOYAGE

Publié par R. ABRAHAMIAN et P. ANTABIAN

La Relation de voyage d'Avétik Karbétsi Dzaghikian figure dans le manuscrit 865 du Maténadaran d'Erévan.

Son auteur fit le voyage des Indes en 1832, à la suite de l'évêque Khatchatour, nonce du catholicos d'Etchmiadzine.

Cette Relation décrit les villes, bourgs, villages, caravansérails jalonnant l'itinéraire d'Etchmiadzine aux Indes. Les descriptions parfois détaillées concernent aussi des monuments historiques, dont certains sont aujourd'hui en ruine. La Relation se consacre encore aux moeurs, coutumes, situation sociale des populations rencontrées.

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌՉՆԹԵՐ
ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ—«ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ»

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

ԵՐԵՎԱՆ № 9 1969

ԱՐԱԲԵՐԵՆ-ՊԱՐՍԿԵՐԵՆ-ՀԱՅԵՐԵՆ ԲԱՌԱՐԱՆ

Տպագրության պատրաստեց՝ Հայկ Ամալյան

Այս բառարանը քննված է հայ միջնադարյան բառարանագրությանը նվիրված մեր աշխատության մեջ[1]*։ Ժամանակին՝ հիմնվելով Մատենադարանի № 7151 ձեռագրի վրա, պատրաստել էինք նաև այդ ուշագրավ հուշարձանի բնագիրը, որը բարեբախտաբար չհրապարակվեց։ Այլ գրչագրեր, որ ունենային այս բառարանը, մեզ հայտնի չէին մինչև Մատենադարանի համառոտ ձեռագրացուցակի լույս ընծայումը։ Այդ ցուցակից հայտնի դարձավ, որ № 1770 ժողովածուի մեջ կա հիշյալ բառարանի մի այլ ընդօրինակություն։ Ձեռքի տակ ունենալով երկու գրչագիր՝ գտնում ենք, որ արդեն ժամանակն է հայ միջնադարյան մշակույթով զբաղվողներին ներկայացնել բառարանի փոքր, բայց արժեքավոր բնագիրը։*

Առաջին՝ № 7151, ձեռագրի մասին ծանոթություն տվել ենք մեր աշխատության մեջ[2] *և գրչության ժամանակը համարել եթե ոչ XIV, ապա ամենայն հավանականությամբ XV դարը։ Երկրորդը՝ № 1770 ժողովածուն*[3]*, որ 1589 թվականին Հայրապետ Ջուղայեցու պատվերով գրել է Աստվածատուր գպիրը, գրչագրական առանձին տարբերություններով հանդերձ, ներկայացնում է նույն բնագիրը։ Այս գրչագիրը հավանաբար ընդօրինակված է առաջին գրչագրից, բայց ընդօրինակողի որոշ միջամտությամբ տառադարձության մեջ, ընդ որում մեծ մասամբ սխալ։ Սակայն երկրորդ գրչագիրը առաջինի նկատմամբ ունի այն առավելությունը, որ ավելի լավ վիճակում է. № 7151 ձեռագրի սկզբի էջերը բավականին մաշված են, որի հետևանքով մի շարք բառեր անընթեռնելի են դարձել։*

Համեմատական բնագրի հիմքում ընկած է № 7151 ձեռագիրը, որը բոլոր կողմերով առավել ճիշտ է ներկայացնում հուշարձանը, իսկ մյուս ձեռագիրը ներկայանում է իր տարբերություններով։ Համառոտության համար համեմատվող ձեռագրերը պայմանականորեն նշանակում ենք լատիներեն տառերով. № 7151=a, իսկ № 1770=b։ Բառերի համարակալումը մերն է։ Բնագիրը ներկայացված է անփոփոխ։

Բառարանի բնագիրը տպագրության պատրաստելու գործում սիրով մեզ օգնել է արևելագետ ընկ. Բ. Լ. Ջուգասզյանը, որը առանձին ուսումնասիրություն է պատրաստել այս բառարանին նվիրված։ Այդ իսկ աշխատանքում կտրվեն բնագրի դրչական սրբագրությունները։

---

1 *Տե՛ս Հ. Ամալյան, Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձանները (5—15-րդ դդ.), Երևան, 1966, էջ 106—109։*

2 *Տե՛ս անդ, էջ 106—107։*

3 *Նկարագրությունը տե՛ս «Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի» Երևան, 1965, այուն. 634—635։*

* * *

Այս բառք են որ շարամանեալ են հոակի ոճիւք և եղանակաւք զընթացս լեզուաց երրակի ազանց՝ զարարացոց, զպարսից և զհայկազանց, զոր բացերևապէս ննջադրեալ եղև անուանք և բայք ըստ կարգի և աստիճանի և պարունակեալ համանունապէս ի տարրականն տառի յալիֆէ սկսեալ մինչև ցիէ, իբր թէ յայբէ մինչև ցքէ: Եւ այս յարաբացոց իմաստնոցն, զոր թարգմանեալ եղև ի բանասիրացն պարսից և սակս կարճառաւտ և բազմահայեաց երազասահ հոլովմանցն պատուեալ եղև ի նոցունց ի մատեանս տառից և ի մարզարանս խաւսից, որով և յեղափոխեալ ի նոցունց ի հայկականս բարբառ յաղագս ուսումնասէր հասակաց, քանզի կարաւտ զրով անաւարաքնիցն մեղուացն յոքնապանից հիւթից ներհակաց առ ի լրումն արուեստաստեղծն հնարից որ զճաշակս ճաշակողաց քաղցրացուցանէ:

Քիթաբ ալֆաս: Բաբ ուլ ալիֆ: Գիրք ալֆասին և համաշարումն ալիֆին: Զի իբր հայկազեան լեզուոյ յորջորջումն զառ ի հմտասիրացն զգտեալն բառք գիրք մակագրէ: Սոյն գունակ արարացոց կորովիքն զշաղաշարեալ ալիֆաբետս ալֆաս առձայնեն:

1. *Իբֆիդա վը իֆֆիֆա վը ինիշայ: Աղագի քարէ քրդըն: Սկիզբն գործոյ առնել:*
2. *Ինֆիհա: Բըփայան չիղէ բըսիդըն: Զկնի իրի հասանել:*
3. *Իլֆիջա վը մլչա: Փընահ գրիֆֆըն: Նպաստս կալեալ:*
4. *Իլֆիղա: Դիզար: Տեսումն:*
5. *Ընհա: Ագահ քրդըն: Յուշ առնել:*
6. *Ըմսա: Գուդըշֆըն: Անցանել:*
7. *Ահսա: Շմուրդըն: Հայհոյել:*
8. *Ըվլիա: Դաւաթան: Սիրելիք:*
9. *Ադա: Դուշմանան: Թշնամիք:*
10. *Իղֆիդա: Դը փը՛ի քսէ բըվֆըն: Ընդ հետս ունիք ընթանալ:*
11. *Ըանա: Միանը՛ի սխուն: Միջակ խօսից:*
12. *Իսֆիը՛դա: Տըլը քրդըն: Որոնել:*
13. *Իսֆիղսա: Ջահդ քրդըն: Ջանս դնել:*
14. *Իսֆիաֆա: Թմամ սֆըրդնի մալ: Բովանդակ առումն ընչից:*
15. *Իսֆիադա: Ըզ սֆըմ նալիդըն: Ի տուժանաց հնձալ:*
16. *Ըրբաբ: Խուդալընդան: Տհարք:*
17. *Իստիրաբ: Ջումբիդըն: Շարժել:*

Մուտք

a ձեռագրի առաջին և երկրորդ թերթերը մաշված են, որի հետևանքով և անընթեռնելի բառեր շատ կան. դրանք վերականգնվում են b ձեռագրի օգնությամբ:

1 b շառամանեալ a եղանակաւ

6 b թարգմանեալ

Բառարան

1 b չիֆ վը իֆֆիֆա, a ինիշ, a սկիսբն

3 a փնահ

12 b չիֆ որոնել

13 b չիֆ իսֆիղսա

15 b հնձեալ

16 b խուդայվրդան

17 b ջումբիբն

18. Ըսհաբ։ Իարան։ Աւգնականք։
19. Ինղիլաբ։ Բըր գլխըն։ Վեր շրջել։
20. Ինթիղալ։ Ըղ ջայէ բըջայէ բըվխըն։ Ի տեղոջէ ի տեղի երթալ։
21. Իսթիղամբթ։ Բասթ իսթադըն։ Ուղորդ կանգնել։
22. Իսթիանբթ։ Իարի խուասթըն։ Աւգնութիւն խնդրել։
23. Իջաբբթ։ Փասուխ դադրն։ Պատասխանել։
24. Ամանաթ։ Բաստի։ Ուղղութիւն։
25. Իֆադբթ։ Ջայիդը դադրն։ Աւգտութիւն շնորհել։
26. Իսթիֆադբդ։ Ջայիդը խուասթըն։ Աւգտութիւն հայցել։
27. Իղալբթ։ Բը՛յի բազ ըֆքնդրն։
28. Աւլբթ։ Ա՛յր։ Արատ։
29. Աւլբթ։ Սա՛դի քար։ Նիւթ գործոյ։
30. Իշարբթ։ Ջրմուռըն։ Հրամայել։
31. Իջադբթ։ Բըվա դաշթըն։ Իրաւ պահել։
32. Ըբրամ։ Քրանի նմուռըն։
33. Իսթիբահբթ։ Ի՛ր ասուռըն։ Ի վեր հանդչել։
34. Իայդբթ։ Բազ պրդանիդրն։ Դարձեալ շրջնցուցանել։
35. Ըվղաթ։ Վխթահա։ Ժամանակը։
36. Ահլիբթ։ Սիղավարի։ Փոխարէն։
37. Ահդաս։ Ն՛վ ավբրդրն։ Նոր բնրել։
38. Ըսաբբթ։ Բըսբվաբ բրսիդրն։ Ի վարձս հասանել։
39. Իֆթիբա։ Դրասլ բաֆթըն։ Ունայն գործել։
40. Ումբլխբաս։ Մադըրի հըմը փլիդհայ։ Մայր ամենայն դարշութեանց։
41. Իսթիխբաջ։ Բէրուն ավբրդրն։ Արտաքս բնրել։
42. Իրթիհաջ։ Շադի։ Ուրախութիւն։
43. Իհթիաջ։ Հաջըթմընդի։
44. Ըմսաղ։ Մանընդան։ Նմանիք։
45. Ըմսաբ։ Բազ գրիֆթըն։ Դարձեալ ըմբռնել։
46. Իթիրաֆ։ Մունղիր ամըդրն։
47. Իղթիրահ։ Ըղ քսէ չիղէ խասթըն։ Յումեքէ ինչ հայցել։
48. Իյթիմադ։ Նէքի քրդրն։ Բարի առնել։
49. Իղթիսաս։ Թաղասա։ քրդրն։

---

20 b ըղ ջաէ բըջա՛է
21 b իսդադրն
25 b իֆաթըդ
30 b ֆըրմուռն
31 b իջադըդ։ Բըվա դաշտն
32 a ըմբրամ, b նմուռն
33 b իսթրահըդ
34 b իյայիդրթ... շիջուցանել
35 b վախթահայ
37 b նըվ
40 a ումլըլխբմաս, b ումլըլխբմաս, a հըմ
42 b իրդիհաջ
43 b հաջդմնդի
44 b ըմսալ
46 b ամնդն
47 b բս, a խաստըն

50. Իթիհատ՝ Լգանըդի՝ Միութիւն։
51. Իջթիհատ՝ Ջահդ քրդըն՝ Ջանս առնել։
52. Իթիղատ՝ Փաքի դիլ՝ Սրբութիւն սրտի։
53. Լըշադ՝ Բահի բասա նմուդըն՝ Ճանապարհ ուղիղ ցուցանել։
54. Իաախրար՝ Բէչարըգի՝ Անճարակութիւն։
55. Իխթիար՝ Գուդիդըն՝ Ընդրել։
56. Իֆթիխար՝ Նադիրըդըն՝ Մաղթել։
57. Ինքար՝ Նաշնախթնայ՝ Անծան։
58. Լխբար՝ Խբըրհա՝ Հանբաւք։
59. Իհթիրար՝ Խաւշին բա նիգահ դաշքըն՝ Ինքնան պահ ածել։
60. Ադրադ՝ Ադիդի քրդըն։
61. Ասաս՝ Բունիաթ՝ Հիմն։
62. Իլթիմաս՝ Ընդըր խուասքըն՝ Ի նեբս հայցնել։
63. Լջնաս վը ընվահ՝ Գանահա՝ Գոյնք։
64. Լնֆաս՝ Նֆըսհայ՝ Շունչք։
65. Լնդրաս՝ Խուշքըն բըհըմ դրիֆքըն՝ Զինքն ընդ մի ընբըռնել։
66. Ադրադ՝ Բու դրդանիդըն՝ Երես դարձուցանել։
67. Լմբասաթ՝ Գուսթախի քրդըն՝ Համարձակել։
68. Իթաս՝ Խադիման՝ Ներքինիք։
69. Լդահ՝ Վըլայըթ՝ Գաւառ։
70. Լվհդ՝ Իրգանըյ՝ Միաւոր։
71. Իջթիմահ՝ Գիրդ ամըդըն՝ Ի շուրջ գալ։
72. Իմթինահ՝ Բաղ դաշքըն՝ Դարձեալ պահել։
73. Լդարիր՝ Խուէշան՝ Ազինք։
74. Իբայըթ վը իջանըբ՝ Բէգանըդան՝ Օտարք։
75. Լսֆաֆ՝ Դուի չնդան՝ Կրկին այն չափ։
76. Էմինի՝ Սթուար՝ Պինդ։
77. Լալաֆ՝ Փիդըրանի գուդըշքըյ՝ Հայրք անցեալք։
78. Լտրաֆ՝ Քնարհայ՝ Եզերք։
79. Ինսէֆ՝ Հըդ դադրն՝ Իրաւունս տալ։
80. Արաջիֆ՝ Խբըրհաի նադրուսթ՝ Համբաւք անհաստատ։

---

51 b ջարհ
52 b իթիղաթ
53 a ուղեղ
54 ab անճարկութիւն
59 b իհթիրարք
63 b գօնահաս
64 b Նըֆսհայ
65 b խուրշքըն
66 b դրդանիքն
67 a նախ գրված է ընբասատ, ապա նոյն գրչով ուղղված է ըմբասատ, ab քրքըն
68 b իթրայ. խաթիման
70 b ըվհթ
71 b դիրթ
74 b իրաբթ վը իջանըդ
76 b պինտ
77 b փթրանի
80 b խբրհայի

81. Իսթիհզաղ: Սիզավարի: Փոխարէն:
82. Իսթիխֆաֆ: Սրուք դաշթըն: Թեթև պահել:
83. Իլթիախ: Արդումընդի: Կարաւտութիւն:
84. Ահմըզ: Աբլահ: Յիմար:
85. Ամլաք: Մուլքըհա: Հայրենիք:
86. Իսթիդրալ: Փէշ ամըդըն: Յառաջ գալ:
87. Ղդրան: Հնարան: Համանմանք:
88. Աջըլ: Բզուրգթըր: Մեծագոյն:
89. Իհթիմալ: Բուրդուրարի քըրդըն: Առ ու աւար առնել:
90. Ըթաալ: Փըյուըսթըն: Պատուաստել:
91. Իսթիամալ: Բըքար դաշթըն:
92. Ըդըլ: Քմթըր: Պակասագոյն:
93. Ըքսըր: Բէշթըր: Առաւելագոյն:
94. Ըսխըր: Քաւչըքթր: Կրտսերագոյն:
95. Ահսըն: Նէքաւհթր: Լաւագոյն:
96. Ալահի ալըմ: Խուդահի դանաթըր: Աստուած գիտնագոյն:
97. Իթիղամ: Նէքաւի քրդըն: Լաւութիւն առնել:
98. Իհթիմամ: Թիմար դաշթըն: Խնամ ածել:
99. Իալամ: Ադահ քրդըն: Յուշ առնել:
100. Իսթիալամ: Ադահի խուսաթըն: Ուշմութիւն խնդրել:
101. Ինթիղամ: Քինի քշիդըն: Քէն քարշել:
102. Ըքրամ: քուրամի քրդըն:
103. Ըզդհամ: Ընթաւհի:
104. Իհթիրամ: Հուրմըթ դաշթըն: Հարկիս առնել:
105. Ըլզամ: Բըզդըրըն գրիֆթըն: Յանձն առնուլ:
106. Ալամ: Բաւզահայ: Աւուրք:
107. Ահսան: Նէքաւի քրդըն: Բարութիւն առնել:
108. Իմթինա: Ազմուդըն: Փորձել:
109. Ալան: Քթխուդայան: Տանուտեարք:
110. Ըվտան: Խանումանհայ: Տունք:
111. Ըրքան Բուրնըհայ: Անդիւնք:

---

82 b դաշան
88 b բզուրգթըր
91 b դաշան
93 b չիմ բէշթըր. առաւելագոյն.
94 b չիք ըսխըր
95 b նէմքաւթր
96 a գիտնագուն
97 b քրթըն
98 b դաշան
99 b իյալամ, ab քրթըն
101 b քիշինն
104 a հուրմթ, b դաշան
105 b գրիֆդն
108 b ազմութըն
110 b խանումանայ
111 a բունքնըհայ

112. Ըբրահ։ Բրսիրըմ ֆրմուդրն։ Տուժանաւք հրամայել։
113. Ըլբրիէ։ Հր ա՛յինը՛յ։ Արդարև։
114. Այադի։ Քիրդարհաի նէքաւ։ Գործք բարի։
115. Ումլըվլբ։ Մադը՛րի ֆրղընդան։ Մայր որդոց։
116. Ի՞ն։ Բղդրուաթի։ Առողջութեամբ։
117. Ադըմ ալա՛հ իրդու։ Փըյուրսթըյ դարըդ խուդաի ը՛յդ վը ըջըլ։ Հօր աստուծոյ

Բար ալ բայ։ Շարայնառումն բէին, որ է բան։
118. Բդա։ Փայինդըգի։ Պաշտպանութիւն։
119. Բհա։ Չէքայի։ Ազնուութիւն։
120. Բը՛բ։ Նէքաւի։ Բարութիւն։
121. Բուր։ Գնդում։ Ցորեան։
122. Բար։ Սահրա։ Դաշտ։
123. Բթայըթ։ Ադազի քար։ Սկիզբն գործոյ։
124. Բրըքըթ։ Ըվդունի։ Յաւելումն։
125. Բրքաթ։ Ըվդունհայ։ Յաւելուածք։
126. Բսայըթ։ Փարէի չիզ քի բըչայէ Ֆրհստընդ։ Սակաւիկ ինչ որ ի տեղի մի յուղարկեն։
127. Բթիէհ։ Նագահ գուֆթըն։ Յանկարծակի ասել։
128. Բշարըթ։ Մուժդհ դադրն։ Ավետիս տալ։
129. Բալըդրթ։ Նամբի դպիրի։ Նամակ դպրի։
130. Բալիխ։ Բրհըդի մրդի բսիդրն։ Ի տիս մարդկութեան հասանել։
131. Բղայըթ։ Բաղիմանդրհ։ Այլևս մնացել։
132. Բսարըթ։ Բէնահ։ Տեսութիւն։
133. Բահդ։ Բ՛ր ընբէխդն։ Ի վեր ընդեցումն, որ է պայքար։
134. Բխա։ Քմի։ Պակասութիւն։
135. Բահր։ Դրիահ։ Ծով։
136. Բսատ։ Շատըրուան։ Նոհ։
137. Բրյի։ Ֆրաւխթրն։ Վաճառել։
138. Բայի։ Ֆրաւշընդրհ։ Վաճառող։
139. Բախիլ։ Զուֆթ։ Կարագ։
140. Բատիլ։ Նահրդ։ Անիրաւ։
141. Բուխթան։ Դրաւդ։ Զուր։
142. Բաին։ Բյդիդ քրդրն։

---

112 a հրամնալ
113 b հր աինյ
114 b քիրդարհայի, a նեքաւ
117 b խուիայի ըյդ վը ըջըլի
118 b բայինդըգի
126 b բսաըթ
129 b նամբի դըպիրի
131 b բըղաըդ
136 b բսադ, a շատուրան
137 b ֆրուխթն
139 b զուֆդ
140 b բասիլ
142 b բային

143. Բնին։ Սըր ընգուշթան։ Ծայրը մատանց։
144. Բուդ Դուրի։ Հետաւորութիւն։
145. Բիքը։ Դաւշիղըհ։ Կոյս։
146. Բաաս։ Ֆրիբընդը։ Խաբող։
147. Բդայըթ։ Քա՛րի նըվ։ Գործ նորոգ։
148. Բշիր։ Մուժդըհ դահընդը։ Աւետաց տուող։
149. Բդի։ Փարսայ։ Հովանոց։
150. Բուղի։ Զայիդայ։ Տեղի։
151. Բաղի։ Բազմանդրհ։ Այլ մնացեալ։
152. Բրիբլ սահաթ։ Բէղարի ըզ գունահ։ Հրաժարումն ի մեղաց։
153. Բլաթ։ Շահր։ Քաղաք։
154. Բլաթի։ Շահրի։ Քաղաքացի։
155. Բայ ըլ բաս վը ըլիան։ Սըր վը չըմ։ Գլուխ և աչք։
Բաբ ուլ թայ։ Յետահիւանումն թևին, որ է թաւ։
156. Թղասաս։ Տլըր քրդըն։ Հետախոյզ լինել։
157. Թրրաս։ Բէրանի։ Աւերակ։
158. Թհընդիր։ Գուղիդըն։ Ընդրել։
159. Թրթիր։ Դմադըմ նիհադըն։ Յարմարել, հուպ ընդ հուպ դնել։
160. Թղալուր։ Ղլըրը քրդըն։ Աղաղակ առնել։
161. Թայսուր։ Դուբրուի քրդըն։ Երկդիմութիւն առնել։
162. Թայչուր։ Շբուֆդ դաշթըն։
163. Թաղրուր։ Նիզդիքի չուսթըն։ Մատակայութիւն յուզել։
164. Թմշիրթ։ Բրանդըն։ Վարել։
165. Թրրիրթ։ Փրուրդըն։ Մարզել։
166. Թղթիրթ։ Ադալըթ քրդըն։ Իրաւունս առնել։
167. Թհնիրթ։ Բըշադի փուրսիդըն։ Յուրախութենէ հարցանել, որ է գոհութիւն։
168. Թայղիրթ։ Բղըմ փուրսիդըն։ Ի տրտմութեան հարցանել, որ է մխիթարութիւն։
169. Թրվրղու։ Զըշմ դաշթըն։ Ակն ունել։
170. Թչրիրթ։ Ադմաիշ։ Փորձանք։
171. Թրֆուչ։ Նիգահ քրդըն։ Հայել։
172. Թրրհիչ։ Շադի։ Ուրախութիւն։
173. Թրչհ վը թբսիլ։ Ցաւալ նիհադըն։

146 a [բս]աաս։ l բաաղ
147 b բդայբդ
156 b քրթն
159 b յարմարել լաւ
161 b դաշտն
165 b չիմ տողը
166 b Թղթիրդ... իրաւունս առնել
167 b Թհնիրդ
168 b Թայղիրդ
169 b դաշտըն
170 b Թրչիրդ
172 b չիմ շադի։ Ուրախութիւն
173 b չիմ Թրչհ

174. Բարիհ: Քուսիլ քրդըն: Խորհուրդ առնել:
175. Բմրադ: Գրդըն քշիդըն: Ապատամբել:
176. Բյամլութ: Բիմար դաշտըն: Խնամ ածել:
177. Բըվլութ: Նաւբըթի քրդըն:
178. Բշդիդ: Սխթ քրդըն: Խիստ առնել:
179. Բահմիրթ: Սթուդըն: Առնուլ:
180. Բահդիդ: Բըհըմ քրդըն: Ի մի առնել:
181. Բղլիդ: Դր դրդըն քրդըն:
182. Բաքիդ: Ըսթուար քրդըն: Պնդել:
183. Բայյիդ: Նրումընդ: Շնորհաց:
184. Բլմիրթ: Շագիրդ: Աշակերտ:
185. Բաւֆիր: Զիադրթ: Աւելիք:
186. Բզուիր: Բըդրաւդ սախթըն: Ստայաւդ բանս ստեղծանել:
187. Բղդիր: Անդազըյ քրդըն: Քանոն առնել:
188. Բղդիմ: Փէշ դաշթըն: Յառաջ պահել:
189. Բախիր: Փըս դաշթըն: Յետս պահել:
190. Բվղիհ: Նշանի փաթշահ: Նշան արքայի:
191. Բրրթու: Փայրըվի քրդըն: Հետագնացութիւն առնել:
192. Բա՛յրուդ: Բընջ բըսանիդըն: Յաւ հասուցանել:
193. Բաբրուֆ: Փուրսիդըն: Հարցանել:
194. Բըմիդ: Ջուդա քրդըն: Ընդրել:
195. Բղղուդ: Նախաւշ դաշթըն: Անհանդիստ պահել:
196. Բջավուդ: Դր գուդրշթըն: Զանց անել:
197. Բջասուս: Ջուստ վր ջաւ քրդըն: Խոյզ և յոյզ առնել:
198. Բլբիս: Փյվրսաթ քրդըն: Պատուաստ առնել:
199. Բշուիշ: Աշաւբ քրդըն: Կռիւ առնել:
200. Բխասիս: Խաս քրդըն: Իւրացուցանել:
201. Բֆհուդ: Քաւիդենն:

---

174 a բրթըն
175 b բրդըն
178 b Բշդիր
179 b Բահմիրդ
182 a բրթըն
184 b Բըմիրդ
185 b զիադրդ
187 b անդզը
188 b դաշտըն
189 b դաշտըն
196 b Բըվդիդ
191 b Բրրդուս
192 b բընֆ բըդսանիդրն
195 b Բղդուդ, նախաւշ դաշտըն
196 b դանց առնել
197 b Բջասուդ. ջուդվշաս բուրդըն
198 b Բլփիս, բըյրսաթը
199 b Բըշդուիշ
201 b Բֆուդ

202. Թրդ: Բըջայէ մանդըն: Ի տեղի մի մնացեալ:
203. Թդարուբ: Ընդըր իաֆթըն: Խոր իմանալ:
204. Թրըլուֆ: Զիադաթի: Առաւելութիւն:

202 a մնացել
203 b իայֆըդըն
204 b զիադըթ. առաւելութիւն. կատարումն բաւին:

АРАБСКО-ПЕРСИДСКО-АРМЯНСКИЙ СЛОВАРЬ

Подготовка к печати Г. АМАЛЯНА

Резюме

Публикуемый текст представляет собой первую часть одного из важных памятников армянской средневековой лексикографии. Он сохранился в двух списках, из коих один относится к XIV—XV вв., другой — 1589 г. Словарь был переведен с персидского на армянский, по всей вероятности, в XIV веке. Дошедшая до нас часть некогда пространного трехъязычного словаря имеет определенное значение для изучения армянской транскрипции арабских и персидских слов, преподавания восточных языков в армянских школах и т. п.

UN DICTIONNAIRE ARABE-PERSAN-ARMENIEN

Publié par H. AMALIAN

Ce dictionnaire médiéval constitue un des ouvrages les plus remarquables de la lexicographie arménienne. Il nous est parvenu dans deux manuscrits conservés au Matenadaran d'Erévan, manuscrits recopiés respectivement aux XIV^{e}—XV^{e} siècles et en 1589. Il a probablement été traduit du persan en arménien au XIV^{e} siècle. Ce dictionnaire trilingue dont on ne possède plus qu'un fragment est d'une grande importance en ce qui concerne la transcription en arménien des mots arabes et persans, l'enseignement des langues orientales dans les écoles arméniennes et l'étude d'autres questions lexicologiques.

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌԸՆԹԻՐ
ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ—«ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ»

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

ԵՐԵՎԱՆ 1969

Հ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ

ՆԱՍԻԲԻ ՁԵՌԱԳԻՐԸ*

Ւռումին երկիրները մեկն են եղած այն դաղթօջախներեն, ուր հայը հոգեկան կյանք ևս ապրած է դարերով։ Հոգեկան այդ կյանքին արտահայտություններեն մեկն են բազմաթիվ այն ձեռագիրները, որոնք գրված են ռումին հողի վրա, և նաև մատենադարանը զոր ունեցած են Մոլդովայի հայ համայնքները իրենց ծոցը համախմբելու ձեռագիր մատյաններ ուրիշ վայրերեն ևս, ինչպես Լվովեն ու Կամենիցեն, Սուրղաթեն և Կաֆայեն, և նաև շատ հեռուներեն։


Ժամանակը գութ չունեցավ սակայն։ Դարերը մաշեցուցին այս ափերուն վրա ցրված հայ օջախները, խամրեցուցին տեղ տեղ ստեղծված հոգեկան բջիջները, ու չորս հովերուն ցրվեցին ինչ որ մարդոց մտքի ճիգը և աչքերուն լույսը համախմբեր էր հոն։ Մեր օրերուն դույզն ման մը միայն հասավ դարերու այդ վաստակեն։ Եթե պարագաները թույլ էին տվեր, որ Գեղյա գուրգուրանքով պահե իր ծոցը հավաքված այդ նշխարներեն, և անոնցմե ուրիշ ման մը փրկվի Քլուժի համալսարանին և Բուքրեշի ռումանական ակադեմիո գրադարաններուն մեջ ապաստանելով, կամ պահվտելով Բուքրեշի և Մոլդովայի զանազան հայ համայնքներուն՝ ինչպես Սուչավայի, Բոթոշանի, Յաշի, Ռոմանի հայ եկեղեցիներուն մեջ, միշտ ման մը կմնար սակայն նեռված հոս ու հոն։

Երբ 1927-ին առաջին անգամ միտքը կհղանայինք կեդրոնական մատենադարանով մը օժտել ռումանահայ գաղութը, գլխավոր մեր մտածումն եղավ այնտեղ համախմբել բացի գրքերե և պարբերականներե, նաև այն բոլորը ինչ որ կապ ուներ հայ ժողովուրդի հոգեկան դանձին հետ։ Ի դեն բազմաթիվ դժվարություններու, զորս կրնան ըմբռնել միայն անոնք, որոնք նման խնդիրներու հանձնառու են եղած, հաջողեցանք ի մի ժողվել բավական բան, որ ժամանակի ճիրաններեն կրցած էր ճողոպրիլ։ Հավաքեցինք այս կերպով ոչ միայն Բուքրեշի եկեղեցվո վերնատունը նեռված բազմաթիվ ձեռագիրներ, այլ նաև ուրիշ շատեր Մոլդովայի զանազան հայ եկեղեցիներեն, ինչպես և անհատներու մոտեն։

Տարիներ հետո, 1944-ին, երբ կհիմնվեր «Հայ մշակույթի տունը», զոր կմտածեինք ես ու ընկերներս վերածել հայկական ինստիտուտի մը այն փառավոր շենքին մեջ, որ կկանգնի մինչև այսօր ալ Բուքրեշի հայ եկեղեցվո բակը, թեև այլևս մերկացած իր հայկական բնույթեն, մեր մատենադարաններեն մեկը եղավ փրկել դեռ ինչ որ ցիրուցան և կորսվելու դատապարտված կմնար հայ ժողովուրդի հոգեկան դանձեն։ Չգիտեմ որքան հաջողեցանք նվի-

---

* Զեկուցում կարդացված Մաշտոցյան Մատենադարանում 1965 թ. հոկտեմբերին։



Նկ. 1

րական մեր այդ պատրաստությանը մեջ։ Գիտեմ միայն որ ամոթով չմտա հայ մտքի զմայլելի սույն դանձարանին սեմին ներս։ Տարիներու ընթացքին մեր փրկած ձեռագիրներուն ավելի քան քառասունը համեստ անկյուն մը կգրավե այսօր հոյակապ հիմնարկության մեջ, որ Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարանն է։

* * *

Ռումեն հողի վրա գրված կամ Ռումանիո մեջ պահպանված հայերեն ձեռագիրներուն ցուցակը ժամանակին պատրաստած էր այս տողերը գրողը։ Նրախատապարտ ըլլանք Սուրեն Քոլանջյանին, որ անոնց ցուցակը կազմեց ավելի լրիվ, քան ինչ որ թույլ կուտար ընել մեր ժամանակը։

Այնպես որ ներկա մեր հարևանցի ակնարկին մեջ այդ ձեռագիրներուն մասին չէ, որ պիտի խոսինք մանրամասնորեն։ Պիտի ուզենք մատնանշել միայն, որ բացի հայերեն ձեռագիրներեն, որոնք պահպանված կմնան ինչպես Գեղայի թանգարանին, Քլուժի համալսարանին, ռումանական ակադեմիայի հավաքածուներուն, նույնպես ռումանահայ թեմին գրադարանին մեջ, կան ձեռագիրներ ալ, որոնք սպրդած կմնան դեռ տեղ տեղ, կամ մաս կկազմեն անձնական հավաքածուներու։

Ասկե առաջ ևս բացի ձեռագիրներեն, որոնք պահպանված էին եկեղեցիներու խուցերուն և նկուղներուն մեջ, գրչագրերու կարևոր թիվ մը կգտնվեր անհատներու մոտ։ Տարակույս չկա, որ այս ձեռագիրներուն մեծ մասը զանազան հայ եկեղեցիներե վերցված էին։

Հանդիպած ենք կամ տեղյակ ենք, օրինակ, ձեռագիրներու, որոնք կկրեին Երզնկայի, Կարսի, Ադրիանուպոլսո կամ Ռուսճուքի եկեղեցիներու և Կարնո Սանասարյան վարժարանի կնիքը։ Առաջին երեքը, որ թանկագին ձեռագիրներ էին, ելրոպա ղրկեցին անոնց տերերը և վաճառեցին սուղ գիներով. Ռուսճուքի եկեղեցիեն հափշտակվածները հ. Սահակ Կոզյան գնեց և վիեննա ղրկեց։ Սանասարյանեն փախցվածը 1596-ին ընդօրինակված Սաղմոս մըն էր, զոր փրկեցինք մենք և որ կգտնվի ռումանահայ թեմին գրադարանին մեջ։

Ներկայիս ևս զանազան անհատներու մոտ կան ինչ ինչ հայերեն ձեռագիրներ։ Առնցմե կարևորներեն են՝

Ա. Վեցհազարեայ մը, գրված 1336-ին Սուճավայի կողմե։ Կբաղկանա 250 թուղթե և կպարունակե նկարազարդ բաղմաթիվ էջեր (86—92, 114—125 և 131—226)։ Կպատկանի Ժիրայր Գրիգորյանի, որուն մնացած է իր հոր՝ Համբարձում Գրիգորյանն, որ, ինչպես կերևա իրմե պահված թուղթերե, հմուտ էր արևելյան երաժշտության և կզբաղեր կախարդությամբ ալ։

Բ. Առակէլ Վարդանայ, 1651-ին գրված։ Կպատկանի Գոչումյան ընտանիքին։

Գ. Հեքիմարան, 1850-ին ընդօրինակված Զմյուռնիո մեջ, Մատենցի տեր Հակոբի որդի բժիշկ մահտեսի Հակոբի կողմե։ Կգտնվի Քոսթանցա, պիթլիսցի ննոջ կաղարյանի մոտ։

Դ. Գանձատուր, 1433-ին Թումանի կողմե գնված «ի ձեռաց այլազգաց որ գնացին և դերեցին զՀայոց վանօրայքն»։ Կպատկաներ Մամբրե քահ. Պիպերյանին։



Նկ. 2

b. Կանոնագիրք, *գրված 1688-ին ի Կեղի, ձեռամբ Մեծատուր դպրի: Տեսած ենք Գալաց, սիկ. Աճեմօղլուի մոտ:*

Զ. Մշանջենական օրացոյց, *գրված 1688-ին: Կգտնվի Քոստանցա, հանդուցյալ Համազասպ քահ. Պետիկյանի մոտ:*

* * *

Հայերեն ձեռագիր մը ասկե քանի մը տարի առաջ ձեռքն ինկեր էր ռումեն մեկ բարեկամիս՝ պրոֆ. դոկտ. Գեորգե Փոթրայի, որ զայն Պլոյեշտի թանգարանին վաճառելե առաջ, ինձ բերեր էր, որ քանի մը նոթ տամ իրեն անոր բովանդակության մասին: Դիշեր մը թողուց մոտս, և օգտվեցա առիթեն ոչ միայն անոր պարունակությունը ինձ համար ևս նոթագրելու, այլ և լուսանկարել տալու համար քանի մը էջեր՝ անոնց բացառիկ շահեկանությանը համար որուն մասին պիտի խոսիմ հիմա:

Բայց նախքան առնր անցնիլը՝ քանի մը տեղեկություն ավելորդ չէ ձեռագրին բովանդակությանը մասին: Ան 109 նոտրագիր էջերե կբազկանա, և գրված ու նկարազարդված է Նասիբ անուն աշուղի մը կողմե: Կպարունակե զանազան տաղեր Նաղաշ Հովնաթանե և Ղազարե, բայց տաղերու մեծամասնությունը Նասիբի իր հորինածներն են, հայ և թուրք լեզուներով: Առաջինը Նասիբի տաղերեն, որոնք թվական կկրեն՝ գրված է 1737 Հուլիս 12-ին, հավանաբար Ադուլիսի մեջ, իսկ վերջինը հորինված է 1746 Հունվար 8-ին Պոլսո մեջ, ուր Նասիբ գացած էր աղայի քով «խզմաթքար» մտնելու:

Ավելորդ է ըսել, որ Նասիբի ընդօրինակած տաղերը լեցուն են տառասխալներով, իսկ իր տաղերը զուրկ են գրական բացառիկ արժեքե:

Ահա վերնագիրները սույն տաղարանի բովանդակության, Նասիբի իսկ ուղղագրությամբ.—

էջ 1. Տաղ սիրօ ի Նաղաշ Հովնաթանէ ասացել օր կայ
Գարուն եղէվ քաղցր խօսի բուլբուլըն
Ձեր պաղչի մէջն բացվելայ սուրուլըն

էջ 2. Տաղ գարուֆին էր ասացել Նաղաշէն
Յորժամ եղև գարօւն արէվ ծագեցաւ
Հարաւ յոդմն հնչաց սառէն հալեցաւ

էջ 4. Նոր ծաքեցաւ ապին եկալ է գարուն
Էլ իմ սիրտէն կանէս յարալու արուն

էջ 5. Տաղ Նաղաշին է
Նոր տեսայ մէկ սիրելի
Աչքերէն որպէս հայելի

էջ 8. Տաղ զաուկին է
Յորժամ գայ պայծառ զաուիկէն Հայօց
Մեծ ավետիս տամ ծերօց և տղայօց

էջ 10. Նման էս դու կարմիր վարդի
Աստամներէդ շար մարգարտի

էջ 12. Էջմիածին ի հօրէ և յուս փառաց ընդ նմայ
Զայնք հնչեցին սանդարամետք անդնտոց

էջ 13. Նա բաղչայտայ պլօլուր
(սկզբնատառերը կկազմեն Նասիբ)



Նկ. 3

էջ 14. Տաղ Նաղաշէ ասացել
Ասօր նվէ պածառ արև
Իմ նազելի նոր սիրելի
Օղարկեցիր ինձ շատ բարև
Իմ նազելի նոր սիրելի
էջ 17. Տաղ Նասիբէ կապել
Նախ հառաչ սիրտ մի ցանգանել
յժգրակի մէչ անգանել
էջ 17. Տաղ Նասիբէ ասել
Սանայ դիարլար դավայ Թուման
էջ 19. *Ման իչմիշամ ֆալագինայն շարբաթին*
էջ 20. Տաղ արաբ էվազէ ասել
Խաստրիտէմ ոօստայ վարիմ
էջ 21. (Դերեզմանատուն խորհրդանշող նկարի մը տակ)
Այս է տապան Հանդիստան... Հակօբի անուն է
Խօջաբայզ ած ողորմի ասէք
էջ 23. Մեղայոր Նասիբէ լացով ասեալ
Ի թվին Հայոց ՌՃՀՀ (1737) ԺԲ յուլիսի զուլումն
էհաս Աքուլիս
էջ 24. Այս Նասիբ Խոջայբագին վերան կապել
Խավարեցաւ կաքըս վասն քեղ էխպար
(սկզբնատառերը կհորինեն Խոջայբագ)
էջ 26. Տաղ Նասիբին է
Այսօր արև պածառ ապուք
Էրևայ բաղչին մէչէն
էջ 27. Այս Նասիբէ ասեալ
Գինայ բիր սովսայ սովսայ
էջ 27. *Գալ սանինան բիր միէ իչալէմ*
էջ 28. *(Նասիբ կպատմէ ՌՃՂԴ=1745 յուլիս Ի=20-ի գիշերը տեսած երազը)*
էջ 29. *(նկար ավետման. տակը՝)*
Քի ծո Նասիբ
էջ 30. *Աւետիս քեղ Մարիայմ ղոր Գաբռել*
ի սկիղբըն աւօրաց աւետիս
էջ 31. *(նկար խաչելության. տակը՝)*
Յի Քի ծո Նասիբ ես գի
էջ 34. *(Նասիբի կողմէ գրուած աղօթքներ բոլորակաձև)*
էջ 35—40. *(պարապ)*
էջ 41. *(նկար հարության. տակը)*
Յի Քի ծո մեղայոր Նասիբ ես քաշեյիմ
էջ 42. Տաղ Ղազար վարդայպետ ասացել
Գառըն Աստուծոյ ի սպատ վառեալ
Եւ ի խաչին պատարաքեալ
Այսօր ի գերեզման մայու եղայ
Եւ զինվորօց ըզգուշածեալ



Նկ. 1

էջ 43 Տաղ Նաղաշ Հովճայբաճին ուղին աճուճէճ Հակոբէ ասացեալ
Նաւիբիս գրել ամէճ
Շնորօք միածին կազմալ կարճնաց
էջ 46. Տաղ Նաւիբէ կապել յուր Օվաճիս էխպարին վերայ
Լիզուս դալամ առամք սուր էխպարըս
էջ 47. ...սիրելի վերաճ Նաւիբէ կապեալ
Լիզուդ նման բլբլի
էջ 48. Նաւիբէ ասացեալ
Օվ մար սիրելի
էջ 49. Տաղ էջմիածուճ Նաւիբէ ասացեալ
էջ 52. Տաղ Նաղաշ Հօճայբաճի է
Այսօր ցնցամբ պարելով
Համէբ գինի խնդալով
Առուծոյ փառըս տալով
էջ 53. Տաղ Նաղաշ Հօճայբաճի է
Եկաբ այսօր որդիբ մարդկան
Ցնծացուբ ձանի միաբան
էջ 55. Տաղ Նաւիբին է էջմիածուճ
Ամէն պատիճ պատուհասաց
էջ 56. Էս Նաւիբիս մեղաւորիս վիրաճ կապել իմ
Այսօր ես մեղաց մէջ
էջ 56. Տաղ սիրական և ցնցալի Նաւիբ կապեց
Այսօր ես մեկ մուշակ տեսայ
Էրեսըն պատկերի պէս այ
էջ 58. Ջաս տաղըճ Ըստաբուս սուրբ Աճածճայ վերայճ էմ կապել
Մայրաքաղաքըն Ըստաբօլ ես էմ
էջ 59. *ես Նաւիբիս գնացիմ Ըստաբօլ*
Աղայիբան խղճաբբար մոնց եմ.
էջ 60. Տաղ Նաղաշ Հուճայբաճին է
Պատկեր մի տեսայ լուսնի նման
Աչքիրըն պածառ առէբայկան
էջ 63. *Ջալայդ չի հախտան գայլան*
Ֆալադին վերան Նաւիբէս
էջ 65. *(Նկար Հիսուսի և Պետրոս առաքյալի, տակը՝)*
Յի Քի ծո մեղայոր Նաւիբ
էջ 69. *(Նկար պարսկական ձևի հագված անձի մը)*
էջ 72. Տաղ Ղազարոսէ
Այսօր օրախացեալ ցնծամբ
էջ 76. ես մեղայօր Նաւիպը կապեցիմ Աֆօլաց վերաճ
Գայլէ զարդաշ սէզայ
էջ 77. Տաղ Նաւիպին առացեալ
Ծառայ եմ քեզ Աստուածածին
էջ 81. Ըստաբօլօւ ջագինէ ասացեալ սիրելու վերայճ
Նառ աղաչի հառսիդ օլմազ
Գուլ աղաչի գուլազ օլմազ



Նկ. 5



Նկ. 6

էջ 82. Ջայս մեղայor Նասիպըս ինէնէլօվ ասացի իմ եարին վերայ
Իմ եայրըն նստել գայմով
Լեզուն քան շաքար համով
էջ 83. Տաղ Նաղաշին է
Յավուրըս գարնան ժամանակ է
էջ 85. Տաղ սիրելու վերայ Նասիպըս կապեցիմ
Ղարշուտայ աչիլմիշ դուլ տուր սաչլարի
էջ 87. Տաղ Նաղաշին է
Այսօր ծաքեցաւ նոր արև
Իմ սիրելին ետ ինձ բարև
էջ 89. Տաղ Նաղաշի է
Այսօր գարուն է նօր տարի
Քեզ գրել եմ հազար բարի
Դու զարդարված ինձ մօտ արի
էջ 90. Տաղ Նասիպըն է կապել մor վրյ
Մայր իմ մեռեալ էր այլ կենդանացաւ
էջ 91. Բուլանէխ չայշարայ տուշտէմ է բախարայմ
էջ 92. Ծաղկած վարդի նմայն է
Ափսոզ որ շատ նազ կայնէ
էջ 93. Քի ծո Նասիպ կապեց
Նաֆիլ եէրդայ բայնի այթմայ
էջ 95. Ակուլեցի Շուխուրից մեռոի նօվայգինին վերայն կապեցիմ
էջ 97. Թասլիֆըս մեղայor Նասիպըս ասիցիմ Եայ Աբամայ վերայ
էջ 98. Տաղ Նասիբն է կապել ուստայ Նազարաց Սարիխանին վերան
էջ 107. *Աւ էխպար իմ սիրելի*
էջ 109. *(Նկար Պողոս առաքյալի)*
1195 (1746) յունվար Ը
Արուլ Նասիբ դի Հակօբ

* * *

Գալով նկարներուն շատ նախնական արվեստի մը նմուշներն են, բայց որոշ ինքնատպություն ունին (տե՛ս նկ. 1—6):

Իսկ ինչ որ Նասիբի սույն տաղարանի հատկանշական բնույթ մը կուտա՝ այն պարագան է, որ անոր մեջ կան էջեր, որոնք սև ֆոնի վրա սպիտակ տառերով գրված են: Այս եզական պարագան, որ հավանաբար միակն է ավելի քան գույզ տասնյակ հազար ձեռագիրներուն մեջ, որոնք մեզի հասած են, մեզ դրդեց մասնագետներու կարծիքը լսել: Անոնց եզրակացությունն այն եղավ, որ Նասիբ նախ գրած է մոմով և հետո սև ներկած է էջը. մոմը թափվելեն հետո մնացած են սպիտակ տառերը:

А. Ч. СИРУНИ

РУКОПИСЬ НАСИБА

Резюме

Автор статьи описывает одну своеобразную армянскую рукопись, хранящуюся в музее румынского города Плоэшти. Рукопись состоит из 109 страниц, написана и иллюстрирована армянским гусаном по имени Насиб. Она содержит разные песни Нагаша Овнатана и Казара, а также произведения самого Насиба на армянском и турецком языках, написанные в 1737—1746 годах в Константинополе.

В статье приводятся заголовки и начальные строки всех песен упомянутого песенника.

Особенно примечательной делают эту рукопись некоторые страницы, на которых текст написан белыми буквами на черном фоне.

H. Dj. SIROUNI

LE MANUSCRIT DE NASSIB

L'article est principalement consacré à un important manuscrit arménien conservé au Musée de la ville de Ploeshti en Roumanie.

Ce manuscrit qui compte 109 pages a été écrit et illustré par un ménestrel arménien du nom de Nassib. Il renferme divers chants de Naghache Hovnathan et de Ghazare et des poésies, en arménien et en turc, composées par Nassib lui-même à Constantinople, en 1737—1746, et dont l'article reproduit les titres et les premières paroles.

Fait rare et sans doute unique dans les 25000 manuscrits arméniens parvenus, et par lequel le manuscrit de Nassib se distingue particulièrement : certaines pages y sont écrites en blanc sur fond noir.

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻՆ ԱՌՉՆԹԵՐ
ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ—«ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ»

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

ԵՐԵՎԱՆ № 9 1969

ՕՆՆԻԿ ԵԳԱՆՅԱՆ

ՏԱԹԵՎԻ ԳՐԱՏԱՆ ՁԵՌԱԳՐԵՐԸ

Տաթևի վանական հաստատությունը ո՛չ միայն պատմական Սյունյաց աշխարհի հոգևոր վարչության կենտրոնն է եղել, այլև այնտեղ ծավալված կրթական ու մշակութային գործունեության սիրտը, որը մերթ ուժգին և մերթ թույլ, բայց միշտ բաբախել է, սկսած իր հիմնադրման օրից (X դար) ընդհուպ մինչև XIX դարի կեսերը։

Մշակութային այդ կենտրոնը, որը վանական պարզ դպրոցից աճելով XIV և XV դարերում բարձրանում է համալսարանի աստիճանի, ավել է այնպիսի ականավոր ներկայացուցիչներ, ինչպիսիք էին Հովհ. Որոտնեցին, Գր. Տաթևացին, Մատթեոս Ջուղայեցին և Առ. Սյունեցին, որոնց իմաստասիրական, աստվածաբանական և գեղարվեստական գործերը միջնադարյան հայ մատենագրության մեջ ամենապատվավոր տեղերից մեկն են գրավում։

Տաթևի վանական դպրոցն ունեցել է նաև իր գրատունը, ուր դեռևս XII դարի երրորդ քառորդում կենտրոնացված էին հազարավոր մատյաններ։ Պատմիչ Ստ. Օրբելյանը, խոսելով սելջուկների կողմից Բաղարիրդ ամրոցում 1171 թվականին ավարի ենթարկված վանքապատկան արժեքների մասին, հիշատակում է նաև Տաթևի գրատան ձեռագրերը՝ «թուով աւելի քան զտասն հազար»[1]։

Այնուհետև այդ գրատան ձեռագրերի քանակի մասին մինչև անցյալ դարի 60-ական թվականները հավաստի տեղեկություններ չեն պահպանվել։ XIV—XV դարերում, երբ Տաթևի դպրոցն իր ծաղկումն էր ապրում, ոչ միայն որպես կրթական կենտրոն, այլև որպես գրչության արվեստի բազմաբեղուն օջախ, անշուշտ, պետք է ունեցած լինի նաև իր հարուստ մատենադարանը։

Եթե այսօր, փաստական տվյալների բացակայության պատճառով, չենք կարող այդ գրատան մատյանների թվական քանակի մասին դատողություններ անել, ապա այդտեղ եղած և հետագա ընդօրինակողների համար նախագաղափար հանդիսացած ձեռագրերի բովանդակության մասին մեզ որոշակի գաղափար կարող են տալ XIV—XVIII դարերում Տաթևի վանքում ընդօրինակված և մեզ հասած այն 109 ձեռագրերը[2], որոնք հատկապես աչքի են ընկնում իրենց բովանդակած իմաստասիրական, կրոնա-դավանաբանական և կանոնական նյութերի բազմազանությամբ։

---

1 Ստեփաննոս Օրբելյան, *Պատմութիւն նահանգին Սիսական*, Թիֆլիս, 1910, էջ 336։

2 Առաքել Մաթևոսյան, *Գրչության վայրերի քարտարան (անտիպ)։ Տե՛ս Մաշտոցյան Մատենադարան, Քարտարան № 3։*

Դժբախտաբար, համարյա մեր բոլոր վանական գրատները, քաղաքական ու տնտեսական աննպաստ պայմանների բերումով, երբեմն էլ վանահայրերի ու վանական միաբանների անհոգության պատճառով, անուշադրության են մատնվել, իսկ ձեռագրերը, որոնց մեջ քիչ չեն եղել հազվադյուտ օրինակներ, կամ օտարացել են՝ առ ու ծախի առարկա դառնալով, և կամ, անխնամ մնալով՝ փտել ու ոչնչացել են: Այդ տեսակետից Տաթևի գրատունն ու նրա ձեռագրերը բացառություն չեն կազմում:

Ձեռագրերի կորստյանը նպաստել է նաև համապատասխան դույքամատյաններ պահելու սովորության բացակայությունը: Միայն անցյալ դարի 60-ական թվականներից սկսած, երբ առանձին հետաքրքրության առարկա դարձան էջմիածնի գրատան ձեռագրերը և Թիֆլիսում Կարինյանցի հրատարակությամբ 1863 թվականին լույս տեսավ նույն գրատան Դանիել Շահնազարյանի կազմած «Մայր ցուցակ»-ը[3], առանձին բանասերներ սկսեցին ուշադրություն դարձնել նաև մյուս վանքերի ձեռագրական հավաքածուներին:

Վերջին հարյուրամյակում, սկսած 1863 թվականից, տարբեր անձանց կողմից 8 անգամ (1863, 1864—1865, 1866, 1868, 1893, 1899, 1904, 1910) ցուցակագրվել են Տաթևի գրատան ձեռագրերը, սակայն դրանցից և ոչ մեկը, դժբախտաբար, չի հրատարակվել: Այդ ցուցակներն են.

Ա. Գալուստ Շերմազանյանց, Ցուցակ գրչեայ մատենից մեծանուն վանից Ստաթէի առաքելոյ, [Տպև, 1863]: Սույն ցուցակն այժմ գտնվում է Փարիզի Ազգային գրադարանում՝ 296 թվահամարի տակ[4]: Դրանից Մ. Մաղիստրոսի ձեռքով կատարված մի ընդօրինակություն կա նաև Մաշտոցյան Մատենադարանում[5]: Այդ ցուցակում, 1—234 թվահամարների տակ, արձանագրված են 1863 թվականին Տաթևի գրատանը առկա բոլոր 187 ձեռագրերը, նրանց խիստ համառոտ բովանդակությամբ, առանց օժանդակ որևէ տվյալի: Թվահամարների (1—234) և նկարագրված ձեռագրերի փաստական քանակի (187) միջև եղած տարբերությունն արդյունք է այն բանի, որ նախ՝ № 140-ի տակ նշված է 30 ավետարան (+29), ապա՝ մի շարք թվահամարների վրայով (№№ 142—195, 203, 204, 209, 213—231) թռիչք է կատարված (—76):

Բ. [Ցուցակ ձեռագրաց Տաթևու, Տպև, 1864—1865]: Սույն ցուցակը չի պահպանված: Նրա գոյության մասին ենթադրում ենք 1868 և 1893 թվականներին կազմված ցուցակներից[6], որտեղ հերթական թվահամարներին զուգահեռ, բերված են նաև 61 ձեռագրերի հին թվահամարները: Եղե՞լ է այդ հին թվահամարներին համապատասխանող ցուցակ. հավանաբար եղել է, որովհետև առանց նման ցուցակի այդպիսի թվահամարներ չէին լինի: Արձանագրված թվահամարներից ամենափոքրը 17-ն է, իսկ ամենամեծը՝ 123-ը: Թեև ենթադրելու լիներ, որ 123-ը վերջին սահմանն է (մի բան, որ սակավ հավանական է) և դրան ավելացնենք 16 կրկնված թվահամարներ (48-ը 3 անգամ, 53-ը՝ 2, 54-ը՝ 2, 58-ը՝ 2, 83-ը՝ 2, 91-ը՝ 2, 96-ը՝ 2, 98-ը՝ 3, 104-ը՝ 2, 109-ը՝ 3 և 118-ը՝4), ապա ձեռագրերի ընդհանուր քանակը հավասար կլինի 139-ի:

---

3 Մայր ցուցակ ձեռագիր մատենից գրադարանի... էջմիածնի..., Թիֆլիս, 1863:

4 **Frédéric Macler,** Cataloque des manuscrits Arméniens et Géorgiens de la Bibliothèque National, Paris. 1908, page 153.

5 Մատենադարան, Անտիպ ձեռագրացուցակների հավաքածու, գործ Մ. Մաղիստրոսի, № 7:

6 Անդ, № 24:

Գ. Մեսրոպ Սմբատյանց, Յուցակ [ձեռագրաց] գրատան Տաթևու վանից. [Տաթև], 1866: *Այս ցուցակի ուր գտնվելը մեզ հայտնի չէ: Այդ մասին տեղեկանում ենք Մ. Սմբատյանցի «Նկարագիր Սուրբ Կարապետի վանից Երնջակայ» աշխատությունից, ուր տալով Նախիջևան գավառի վանքերում ու եկեղեցիներում ընդօրինակված և Տաթևի գրատանը պահվող 13 ձեռագրերի նկարագրությունները, շեշտում է՝ «Ըստ ցուցակի գրատան Տաթևու վանից, կազմելոյ յինէն ի 1866 ամի»[7]: Թե քանի՞ ձեռագրի նկարագրություն է ամփոփում այդ ցուցակը, հայտնի չէ: Սակայն, եթե նկատի ունենանք, որ Մ. Սմբատյանցի ձեռքով 2 տարի հետո կազմված ցուցակը բովանդակում է 91 ձեռագրի նկարագրություն, ապա հազիվ թե տարբերությունը մեծ լինի: Վերապահությամբ կարելի է ընդունել, որ 1866 թ. ցուցակը նույնպես ընդգրկել է 91 ձեռագիր:*

Դ. Մեսրոպ Սմբատյանց, Յուցակ [ձեռագրաց գրատան Տաթևու վանից, Տաթև], 1868[8]: *Մ. Սմբատյանցի սույն ցուցակն անխորագիր է: Յուցակի 2-րդ էջի աջ անկյունում նշված է՝ «Մեսրովբ, 1868 թիւ, ցուցակ»: Սույն ցուցակն անվանական մի ցանկ է, ուր առանց մատենագիտական տվյալների և առանց հերթական համարների նշման՝ թվարկվում են 91 ձեռագրեր: Յուցակի 3-րդ էջում Հովսեփ վրդ. Փինաչյանը 1875 թվականին հետևյալ նշումն է կատարել. «Տպագրած և գրչագիր՝ 128, ձեռագիր՝ 75, 12 օրինակ պակաս, Յովսէփ վրդ. Փինաչեան: Ստեփան Մխիթարեանի ժամանակ՝ 1875, 75 համար, մի քանիսը կրկնակի օրինակով»: Այս նշումից կարելի է հետևեցնել, որ 1875-ին Մ. Սմբատյանի ցուցակի 91 ձեռագրերից մնացել էր 79-ը (75+4 կրկնակի օրինակ ներ):*

Ե. Յուցակ Տաթևի վանքի ձեռագիրների, [Տաթև], 1893[9]: *Սույն ցուցակի հեղինակն անհայտ է: Յուցակում ձեռագրերը թեև համարակալված են 1—88, սակայն նկարագրված ձեռագրերի իրական քանակը հավասար է 73-ի, որովհետև 65—79 թվահամարների վրայով թռիչք է կատարված (—15): Այս ցուցակում ևս, առանց մատենագիտական տվյալների, բերված են միայն ձեռագրերի խորագրերը՝ առավել կամ պակաս ընդարձակությամբ:*

Զ. Նիկողայոս Տեր-Ավետիքյան, Յուցակ Տաթևի վանքի ձեռագիրների, [Տաթև], 1899[10]: *Սույն ցուցակում, 1—107 թվահամարների տակ, առանց մատենագիտական անհրաժեշտ տվյալների, համառոտակի նկարագրված են 107 ձեռագրեր: Յուցակի վերջում Ն. Տեր-Ավետիքյանը կատարել է հետևյալ հավելումը. «Այլ ևս կայ 9 հատ թղթեայ ձեռագիր Յայսմաւուրք, երեքը կաշեկազմ, վեցն անկազմ և քիչ թերատ, և այլ խոնաւութիւնից, ցեցից, մկներից վնասված ձեռագիրներ, ոմանք սակաւ, բայց ընդհանրապէս գրեթէ անպէտքացած՝ թուով 64 հատ, որով գումարն լինի թանապու շկաֆի մէջ Տաթևի վանքի ձեռագիրների 180 հատ, բացի տաճարում եղած ձեռագիր աւետարաններից»: Եթե ենթադրելու լիներնք, որ տաճարում եղած ավետարանները 7-ից ավելի չէին, ապա կստացվի, որ 1863 (187) և 1899 (նկարագրված՝ 107+ Յայսմաւուրք՝ 9+ փշացած՝ 64+ տաճարում՝ 7=187) թվականների ընթացքում ձեռագրերի քանակը մնացել է անփոփոխ: Սա կարող է ճիշտ լինել միայն թվային տեսա-*

7 Մեսրովբ Սմբատյանց, Նկարագիր Սուրբ Կարապետի վանից Երնջակայ և շրջակայից նորա, Տփխիս, 1904, էջ 126—128:

8 Մատենադարան, Անտիպ ձեռագրացուցակների հավաքածու, գործ Մ. Մաղիստրոսի, № 24:

9 Անդ, № 23:

10 Անդ, № 22:

կետից, որովհետև բացառված չէ, որ այդ տարիների ընթացքում դուրս եկած և նոր ավելացած ձեռագրերի քանակը զուգադիպեր։

է. [Մեսրոպ Տեր-Մովսիսյան (Մագիստրոս), Յուցակ Տաթևի վանքի ձեռագիրների, Տպեր, 1904]։ Այս ցուցակի ուր գտնվելն առայժմ պարզ չէ։ Յուցակի գոյության և նկարագրված ձեռագրերի քանակի մասին իմանում ենք Մաշտոցյան Մատենադարանում պահվող Մ. Մագիստրոսի ձեռքով կատարված մի նշումից, ուր ասված է. «Տաթևի 99-ի մանրամասն ցուցակը կազմեցի 1904 թ. յուլիսի 22-օգոստոսի 11-ը»[11]։ Թե ինչ է ներկայացնում այս ցուցակն իրենից, չգիտենք։ Բայց ամենայն հավանականությամբ, ինչպես հենց հեղինակն է շեշտում, կազմված բոլոր ցուցակների մեջ այն ամենամանրամասն է եղել, քանի որ Մ. Մագիստրոսը տվյալներ էր հավաքում իր հայերեն ձեռագրերի լիակատար ցուցակի համար։

Ը. Խորեն Մուրադբեկյան, Յուցակ Տաթևի վանքի ձեռագիրների, Տպեր, 1910[12]։ Սույն ցուցակը կազմված է 1910 թվականի օգոստոսի 5—6-ը՝ Երևանի թեմի փոխ-թեմակալ Խորեն վրդ. Մուրադբեկյանի և Երևանի կոնսիստորիայի անդամ Անդրանիկ քահանայի ձեռքով։ Յուցակում ձեռագրերը թվեն համարակալված են 1—92, իրականում, սակայն, նկարագրված միավորների թիվը հավասար է 143-ի, որովհետև մի շարք թվահամարների ներքո «ա, բ, գ»-ով նշված են նույն բովանդակությամբ մեկից ավելի ձեռագրեր, այսպես. № 28-ի տակ նշված է 4 Հարցմանց դիրք (+3), № 43-ի տակ՝ 2 Ճառընտիր (+1), № 44-ի տակ՝ 11 Յայտմատուրք (+10), № 47-ի տակ՝ 22 Աւետարան (+21) և № 48-ի տակ՝ 2 Նարեկ (+1)։ Յուցակում արձանագրված 143 միավորներից մեկը (№ 82) եղել է ինչ-որ տպագիր քերականական ձեռնարկ, իսկ մնացած 142-ը՝ ձեռագիր մատյաններ։ Այս ցուցակն էլ, նախորդների նման, մատենադիտական որևէ ավելի չի հաղորդում և սահմանափակվում է միայն ձեռագրերի խորագրերը նշելով։

Այսպիսով, տարբեր ժամանակներում և տարբեր անձանց կողմից կազմված վերոհիշյալ ցուցակներում Տաթևի ձեռագրերի քանակը ցույց է տրված.

1863 թ.	187
1864—1865 թթ.	(61+78) 139
1866 թ.	(13+78) 91
1868 թ.	91
1893 թ.	73
1899 թ.	(107+9+64+7) 187
1904 թ.	99
1910 թ.	142

Արդ, ի՞նչ եղան այդ ձեռագրերը։

Տաթևի գրատան ձեռագրերը դեռևս 1910 թվականին Երևանի թեմի փոխ-թեմակալ Խորեն վրդ. Մուրադբեկյանի և Երևանի կոնսիստորիայի անդամ Անդրանիկ քահանայի ձեռքով ցուցակագրվելուց անմիջապես հետո տեղափոխվել են էջմիածին և մուծվել էջմիածնի նախկին գրատան հավաքածուի մեջ, իսկ

11 Մատենադարան, Անտիպ ձեռագրացուցակների հավաքածու, գործ Մ. Մագիստրոսի, № 7։
12 Անդ, № 21։

այսօր այդ ձեռագրերը գտնվում են Մաշտոցյան Մատենադարանում: Հակառակ այս իրողության, մինչև այսօր էլ կան բանասերներ, որոնք հաճախ վկայակոչումներ են կատարում ընթերցողին հղելով ոչ թե այդ ձեռագրերի ներկա թվահամարներին, այլ՝ Տաթևի գրատան, որը վաղուց ի վեր գոյություն չունի:

Տաթևի նախկին գրատան ձեռագրերից այսօր Մաշտոցյան Մատենադարանում են գտնվում 147-ը, որոնք պահվում են հետևյալ թվահամարների տակ. №№ 2490, 2821, 3319, 3462—3467, 3645—3648, 3650—3658, 3718, 3719, 3770—3776, 3815—3820, 3913—3942, 4004—4009, 4066—4086, 4119, 4134—4150, 4152—4170, 4181, 4261, 4275, 4423, 4509, 6271, 7243, 7363, 7364, 7386, 7418, 7724, 7759, 8302, 8593, 9244, 10199:

Այս ձեռագրերից 2-ը (№№ 2821, 3319) Մատենադարան են մուտք գործել դեռևս 1885—1890 թվականների ընթացքում Մ. Սմբատյանցի ձեռքով, 1-ը (№ 6271)՝ 1930-ական թվականներին Տիրայր եպս. Մելիք-Մուշկամբարյանի ձեռագրերի հետ միասին, 8-ը (№№ 7363, 7364, 7386, 7418, 7724, 7759, 8302, 8593)՝ 1936 թվականին՝ Ստ. Լիսիցյանի գլխավորած արշավախմբի միջոցով, իսկ վերջին 2-ը (№№ 9244, 10199), որոնք դեռևս 1930 թվականին հանված են եղել ավերված վանքի փլատակների միջից, Մատենադարանին է հանձնել Սամվել Սաղաթելյանը, առաջինը՝ 1945, երկրորդը՝ 1963 թվականներին: Մնացած 134 ձեռագրերը, ինչպես գիտենք, էջմիածին է տեղափոխել Խ. Մուրադբեկյանը 1910 թվականին:

Նշված 147 ձեռագրերից 142-ը իրենց արտացոլումն են գտել հիշատակված 8 ձեռագրացուցակներից մի քանիսում, իսկ մնացած 5 ձեռագրերը (№№ 7759, 8302, 8593, 9244, 10199)՝ ոչ: Հավանաբար եղել են նաև նկարագրությունից դուրս մնացած այլ ձեռագրեր, որոնք մեզ չեն հասել:

Արդ, ի՞նչ եղան Տաթևի գրատան մյուս ձեռագրերը, նկարագրված կամ չնկարագրված, որոնք մեզ չեն հասել:

Այս հարցին սպառիչ պատասխան է տալիս Մեսրոպ Մագիստրոս Տեր-Մովսիսյանը: Իր «Հայկական երեք մեծ վանքերը» աշխատության մեջ, անդրադառնալով Տաթևի գրատան ձեռագրերին, Մ. Մագիստրոսը գրում է. «Երբ 1904-ին ցուցակագրում էինք Տաթևի չափազանց փոքրացած ժողովածուն, առանձնակի ուշադրությամբ, ժողովածուի այն օրինակները, որ անխնամ պահելու հետևանքով շատ էին քայքայված և կամ խոնավությունից թերթերն ամուր միմյանց սեղմված և մի տեսակ միաձույլ էին դարձած, այդպիսի օրինակները վառել է իրեև արդեն անպետք դարձած»[13]:

Ինչ-ինչ նկատառումներով Մ. Մագիստրոսն այստեղ չի հիշատակել ոչ այրված ձեռագրերի քանակը և ոչ էլ այրող վանահոր անունը: Վերջերս, երբ Գ. Շերմազանյանի կազմած ցուցակի հիման վրա առուգում էինք Տաթևի գրատան ձեռագրերը, մեր ուշադրությունը գրավեց ցուցակի վերջին էջի վրա Մ. Մագիստրոսի ձեռքով 1904 թվականին կատարված հետևյալ նշումը. «Վանքում ինձ տեղեկություն տվին, որ վանահայր և փոխանորդ Ներսես վ. Մելիք-Թանդյանը այն օրինակները, որ խոնավությունից իրար միացել և նորա մակաջողությամբ այլևս անպետք էին դարձել, թվով 64 հատ, վառել է»[14]:

---

13 Մեսրոպ Մագիստրոս Տեր-Մովսիսյան, Հայկական երեք մեծ վանքերի՝ Տաթևի, Հաղարծնի և Գադի եկեղեցիները, Երևան, 1938, էջ 20:

14 Մատենադարան, Անտիպ ձեռագրացուցակների հավաքածու, գործ Մագիստրոսի, № 7:

Ստորև, հիշատակված 8 ձեռագրացուցակներից յուրաքանչյուրի համար առանձին-առանձին, բացառությամբ Մ. Մաղիստրոսի կողմից 1904 թվականին կազմված ցուցակի, որը դժբախտաբար չի պահպանվել, տալիս ենք Տաթևի գրատան ձեռագրերի և Մաշտոցյան Մատենադարանում այդ ձեռագրերի գրաղեցրած թվահամարների համեմատական տախտակները։

Որպես ամփոփում, ներկայացվում է նաև հին ու նոր թվահամարների հակադարձ համեմատական մի տախտակ, ուր առաջին սյունակում նշվում են Մաշտոցյան Մատենադարանում գտնվող Տաթևի գրատան բոլոր 147 ձեռագրերի արդի թվահամարները, իսկ հաջորդական սյուներում՝ այդ նույն ձեռագրերի հին թվահամարները՝ ըստ տարբեր ձեռագրացուցակների։

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՏԱԽՏԱԿ

ՏԱԹԵՎԻ ԳՐԱՏԱՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԻՆ ԵՎ ՆՈՐ ԹՎԱՀԱՄԱՐՆԵՐԻ

(Ըստ Գ. Շերմազանյանի 1863 թ. ցուցակի)

Ըստ 1863 թ. ցուցակի	Ըստ Մշոցոն Մանրերի	Ըստ 1863 թ. ցուցակի	Ըստ Մշոցոն Մանրերի	Ըստ 1863 թ. ցուցակի	Ըստ Մշոցոն Մանրերի	Ըստ 1863 թ. ցուցակի	Ըստ Մշոցոն Մանրերի	Ըստ 1863 թ. ցուցակի	Ըստ Մշոցոն Մանրերի	Ըստ 1863 թ. ցուցակի	Ըստ Մշոցոն Մանրերի
1	2821	33	—	65	3932	97	3923	129	3818	140բբ	3646
2	3918	34	3656	66	—	98	—	130	7364	140բգ	—
3	—	35	—	67	3931	99	3935	131	3820	140բդ	—
4	4140	36	—	68	—	100	—	132	3819	140բե	—
5	4081	37	4119	69	3928	101	4085	133	—	140բզ	—
6	4149	38	3934	70	4135	102	—	134	3657	140բէ	—
7	4083	39	4163	71	3936	103	3770	135	4005	140բը	—
8	3917	40	—	72	3776	104	4143	136	3463	140բթ	—
9	4072	41	4004	73	3920	105	4168	137	3648	140ի	—
10	4144	42	—	74	3915	106	4167	138	—	141	6271
11	—	43	4141	75	—	107	3941	139	4068	196	7724
12	—	44	3933	76	—	108	4148	140ա	4152	197	—
13	—	45	3997	77	3913	109	—	140բ	4154	198	—
14	3938	46	3719	78	4067	110	4139	140գ	4075	199	4073
15	4423	47	—	79	4261	111	4134	140դ	4153	200	—
16	4136	48	3926	80	3939	112	—	140ե	3774	201	3940
17	4137	49	4170	81	—	113	—	140զ	3921	202	4164
18	—	50	4070	82	—	114	—	140է	4155	205	4008
19	4169	51	3651	83	4007	115	—	140ը	4156	206	—
20	—	52	—	84	3942	116	4166	140թ	4157	207	4138
21	—	53	4162	85	3775	117	—	140ժ	4076	208	3816
22	—	54	4161	86	3652	118	3466	140ժա	4158	210	4082
23	3464	55	4150	87	—	119	7243	140ժբ	4159	211	4142
24	—	56	3653	88	3654	120	3924	140ժգ	3773	212	4145
25	—	57	4147	89	3937	121	3650	140ժդ	3647	232	4069
26	4074	58	4066	90	2490	122	4165	140ժե	4077	233	—
27	—	59	—	91	—	123	3925	140ժզ	4078	234	—
28	3465	60	—	92	—	124	—	140ժէ	4079		
29	4275	61	3718	93	3462	125	3817	140ժը	4080		
30	—	62	3467	94	3929	126	3658	140ժթ	4160		
31	3930	63	—	95	4084	127	7386	140ի	3922		
32	3919	64	—	96	3916	128	7363	140իա	4509		

Սույն ցուցակում 1—234 թվահամարների ներքո նկարագրված 187 ձեռագրերից (234+29—76) այսօր առկա են միայն 129-ը։ Բացակայող 58 ձեռագրերը հավանաբար գտնվել են այրված 64 ձեռագրերի շարքում։ Քանի որ այդ

ձեռագրերը մեկընդմիշտ ոչնչացված են, ուստի և բերում ենք դրանց նկարագրությունները աննշան հապավումներով ու շտկումներով: Ահա այդ ձեռագրերը.

3. [Ժողովածու]— Յոհաննու Իմաստասիրի Սակս ժամու գիշերային: Ստ. Սիւնեցւոյ Վասն աղօթից: Խոսրովայ Անձևացւոյ Մեկնութիւն ժամագրոց: Յոհաննու Իմաստասիրի Վասն առաւօտեան երգոյ: Յովհ. Արճիշեցւոյ Մեկնութիւն պատարագի:

11. Եփրեմի Ասորւոյ Ներբողք ի տնօրինութիւնս Քրիստոսի:

12. Բժշկարան հարուստ:

13. Վարդապետութիւնք և քարոզք յանկյայտ հեղինակէ:

18. [Ժողովածու]— Դաւթի փիլիսոփայի Վասն սահմանաց: Քանի՞ են հերձուածք: Յովհ. Որոտնեցւոյ «Հայեցարուք ընդ առաքեալն...», «Մարդով եղև մահ...»: Ոսկեփորիկ: Վահրամայ Բարունւոյ Յաղագս սրբոյ երրորդութեան: Գր. Տաթևացւոյ Դասանութիւն ԺԴ աստիճանաւ:

20. Ա.ո. Սիւնեցւոյ Աղամդիրք:

21. Գր. Տաթևացւոյ Քաղուածք Աւետարանի Մատթէոսի և Քարոզք:

22. Յիսուն և ինն խնդիրք ի մարդկութիւն Քրիստոսի:

24. Ներսիսի Մեկնութիւն Առակացն Սողոմոնի:

25. [Ժողովածու]—Ա.ո. Սիւնեցւոյ դասախարակութիւն վասն նորընծայից: Մաշտոց:

27. Յոհաննիսի Մեկնութիւն Սողոմոնի:

30. [Ժողովածու]—Վարդապետական գրուածք ի վերայ ինչ-ինչ տեղեաց Աստուածաշունչ գրոց: Թուղթք և Կանոնք սրբոցն Կիւրղի, Աթանասի և այլոց:

33. [Ժողովածու]—Աղօթք: Գր. Վանեցւոյ, մականուանեալ Ջարաղութիւն, Մաղթանք: Բարսղի Կեսարացւոյ Քարոզ՝ «Լուարուք որդեակք իմ...», Կանոն ոտնալուային: Ժամամուտք: Յովհ. Մանդակունւոյ Աղօթք ի մի պահան:

35. Հայելի վարուց, յորում 71 պատմութիւնք:

36. Գանձարան հարուստ:

40. Վարք և քարոզութիւն Եւագրեայ:

42. Մեկնութիւն Աւետարանին Յոհաննու հրամանաւ Ջաքարիայ արքեպս-ի Թադէոսի Առաքելոյն, թարգմանեալ աշխատութեամբ [Պետրոսի] Արաղոնացւոյ:

47. Գլխակարգութիւն և քաղուածք Թղթոցն Պօղոսի:

52. Քաղուածք Աւետարանի:

59. [Ժողովածու]—Պատմութիւնք Կիւրղի: Յակոբայ վրդ-ի Տոմարագրութիւն: Հակաճառութիւն ուղղափառաց առ ժողովն երկաբնակաց:

60. Ներս. Լամբրոնացւոյ Մեկնութիւն Սաղմոսաց:

63. [Ժողովածու]—Համառօտ հաւաքում հոդւոյ և գործութեանց նորա: Յաղագս բնութեան հրեշտակաց: Ի Սահմանաց Դաւթի և այլոց իմաստասիրութիւնք: Բարդ. Մարաղացւոյ Տրամաբանութիւն: Յովհ. Որոտնեցւոյ Քարոզք: Իշաւխ քահանայի ի վերայ բնութեան:

64. Քարոզք ի վերայ խոստովանութեան, պոռնկութեան, չիշդացաւութեան և կանոնք անծանօթ հեղինակաց:

66. Ընդդիմաբանութիւն ընդդէմ Արիանոսի:

68. [ժողովածու]—Արիստոտէլի Իմաստասիրութիւն, Տրամաբանութիւն, Վերլուծական։

75. Խրատ վարուց 13 գլխով։

76. Քարոզգիրք յանլայտ հեղինակէ։

81. Տօնացոյց, հին։

83. [ժողովածու]—Առակք Սողոմոնի։ Յետուայ որդւոյ Սիրաքայ։ Հարցումն Պղատոնի և Արիստոտէլի։ Ի գրոցն Յոբայ։

87. [ժողովածու]—Վահրամայ Բաբունւոյ Լուծմունք Մտորոգութեանց։ Դաւթի Իմաստասիրի Պատճառ Սահմանաց։ Պատճառք գրոցն Դիոնէսիոսի։ Պատճառք Քրիստոսի ծննդեան ճառին։ Մեկնութիւն ճառից Գր. Աստուածաբանի։ Լուծմունք Բնութեան գրոցն։ Լուծմունք Կազմութեան գրոցն։ Գր. Նիւսացւոյ Մեկնութիւն Հայր մեր-ին։ Նորին Յորդորականաց ի կուսութիւն։ Նորին Մեկնութիւն և Բանք ժողովողին։ Նորին Մեկնութիւն երգոց երգոյն։ Եւագրեայ Նշանակ յեղեկիէլէ։ Նկրս. Լամբրոնացւոյ Պատմութիւն սրբոյն Գր. Նարեկացւոյ։ Պատճառ Այլաբանութեան գրոցն Փիլոնի։ Պատճառ Ննդոցն Փիլոնի։ Այլ բանք պիտանիք։

91. [ժողովածու]—Իմաստութիւն Սողոմոնի։ Յաղագս հայեցողական կանոնաց։ Յաղագս արուէստից մարդկան և խրատու։ Նախադրութիւն Յոբայ և Գիրք նորին։

92. Գրիգորի վրդ.-ի Մեկնութիւն գրոցն Եւագրեայ։

98. Քարոզ վարդապետաց հայոց։

100. Վարք սրբոց։

102. Կանոնգիրք։

109. [ժողովածու]—Հարց ու պատասխանիք ճղնաւորաց։ Յոհաննիսի Կարնեցւոյ խրատ ոգեշահ։ Հարցումն Արձանայ և պատասխանիք եղնկայ։ Յոհաննու Ոսկրունւոյ Բան կրօնաւորաց։ Եփրեմի Ասորւոյ Բան կրօնաւորաց և ճառք։

112. Շարականն։

113. Նեղոսի Յաղագս աղօթից՝ գլուխ 150։ Նորին խրատք։

114. Նկրս. Շնորհալւոյ Յիսուս որդի։

115. Քարոզք և Աղօթք։

117. [ժողովածու]—Գր. Աստուածաբանի Թուղթ առ ի նոմիանոսացն և ճառք նորին։ Բառարան Աստուածաշունչ անուանց և բառից։ Մեկնութիւն երբայեցւոց տառից։ Նշանագիրք այբուբենից։ Բառք բժշկականք։ Առածք իմաստասիրաց։ Մեկնութիւն քերականութեան ի վասըլէ։ Խոսրովու Վերծանութիւն գլխոց։

124. [ժողովածու]— Յովհ. Ոսկիբերանի վասն հանդերձի։ Պատմութիւն հանդերձից և գաստառակին Քրիստոսի Ուրհայ քաղաքի։ Յովհ. Ոսկեբերանի վասն խոստովանութեան և այլ գրուածք։

133. Վարդանայ Մեկնութիւն հինգ գրոցն Մովսիսի։

138. [ժողովածու]—Գր. Տաթևացւոյ Մեկնութիւն խրթին բանից, Նորին Քարոզք։ Քաղուածք Սաղմոսի։

140իգ—140լ. Աւետարանք (8 հատ)։

197. Աւետարան։

198. Քարոզգիրք ժողովեալ ի վարդապետաց։

200. Քարոզգիրք ժողովեալ։

206. Թուղթ Յակոբայ առաքելոյ, մեկնութիւն։

233. Կանոնք և խրատք հայրապետաց։ Թարգմանութիւն պատմութեան Փոնցիանոսի յիտալականէ։

234. Տոմար։ Օրհնութիւն և վերջաւորութիւն քարոզից։

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՏԱԽՏԱԿ

ՏԱՔՆվԻ ԳՐԱՏԱՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԻՆ ԵՎ ՆՈՐ ԹՎԱՀԱՄԱՐՆԵՐԻ

(Ըստ 1864—1865 թթ. կազմված անհայտ ցուցակի)

Ըստ 1864—1865 թթ. ցուցակի	Ըստ Մշոցն Մատենքին	Ըստ 1864—1865 թթ. ցուցակի	Ըստ Մշոցն Մատենքին	Ըստ 1864—1865 թթ. ցուցակի	Ըստ Մշոցն Մատենքին	Ըստ 1864—1865 թթ. ցուցակի	Ըստ Մշոցն Մատենքին	Ըստ 1864—1865 թթ. ցուցակի	Ըստ Մշոցն Մատենքին	Ըստ 1864—1865 թթ. ցուցակի	Ըստ Մշոցն Մատենքին
1*	—	25*	—	48բ	4153	68*	—	91ա	4140	109բ	—
2*	—	26*	—	48գ	4076	69*	—	91բ	3465	109գ	4161
3*	—	27*	—	49	4136	70	3940	92	4074	110	3931
4*	—	28*	—	50*	—	71*	—	93	3815	111	3655
5*	—	29*	—	51*	—	72*	—	94	4071	112	4170
6*	—	30*	—	52	4146	73*	—	95	3942	113	4006
7*	—	31*	—	53ա	3463	74*	—	96ա	3926	114*	—
8*	—	32*	—	53բ	—	75*	—	96բ	4141	115*	—
9*	—	33	3462	54ա	4142	76*	—	97*	—	116	3933
10*	—	34*	—	54բ	4148	77	3654	98ա	4163	117*	—
11*	—	35*	—	55*	—	78*	—	98բ	4083	118ա	4143
12*	—	36*	—	56	4068	79*	—	98գ	3775	118բ	4081
13*	—	37*	—	57*	—	80*	—	99*	—	118գ	3719
14*	—	38*	—	58ա	4144	81*	—	100	4082	118գ	3925
15*	—	39*	—	58բ	4150	82	4139	101*	—	119	3924
16*	—	40*	—	59*	—	83ա	3816	102*	—	120*	—
17	4155	41*	—	60	3651	83բ	4134	103*	—	121	3934
18*	—	42*	—	61*	—	84*	—	104ա	4084	122	4166
19*	—	43*	—	62*	—	85	4085	104բ	3929	123	3718
20*	—	44*	—	63	3920	86	4135	105	4008		
21*	—	45*	—	64	3776	87	—	106*	—		
22*	—	46*	—	65*	—	88	—	107	—		
23*	—	47*	—	66*	—	89	4138	108*	—		
24*	—	48ա	4152	67	—	90	3919	109ա	3941		

Սույն ցուցակը չի պահպանված։ Տվյալները վերցրված են 1866 և 1893 թթ. ցուցակներից, ուր դուգահեռ բերվում են նաև 61 ձեռագրերի հին թվահամարները (աստղանիշով ցույց տրված թվահամարները բացակայում են այդ ցուցակներում)։ Հիշատակված 61 ձեռագրերից 55-ը այսօր առկա են։ Բացակայում են հետևյալ 6 ձեռագրերը.

53բ. Ճշմարտութիւն աւետարանական բանի։

67. Թուղթ Արիստոտէլի։

87. Ճշմարտութիւն աւետարանական բանի։

88. Մեկնութիւն չորից աւետարանչաց։

107. Ադամդիրք։

109բ. Տօնացոյց։

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՏԱԽՏԱԿ

ՏԱՔՆԵՎԻ ԳՐԱՏԱՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԻՆ ԵՎ ՆՈՐ ԹՎԱՀԱՄԱՐՆԵՐԻ

(Ըստ Մ. Սմբատյանցի 1866 թ. ցուցակի)

Ըստ 1866 թ. ցուցակի	Ըստ Մշոցոն Մանրերի	Ըստ 1866 թ. ցուցակի	Ըստ Մշոցոն Մանրերի	Ըստ 1866 թ. ցուցակի	Ըստ Մշոցոն Մանրերի	Ըստ 1866 թ. ցուցակի	Ըստ Մշոցոն Մանրերի	Ըստ 1866 թ. ցուցակի	Ըստ Մշոցոն Մանրերի
13	3913	37	4138	45	4146	62	6271	67	3319
18	4009	40	4168	51	3466	65	3655		
24	3940	44	3915	57	3817	66	4170		

Այս ցուցակը չի պահպանված։ Տվյալները քաղված են «Երնջակ»-ից (էջ 126—128), ուր բերված են վերոհիշյալ 13 ձեռագրերի նկարագրությունները։ Չպահպանված բուն ցուցակում ամենայն հավանականությամբ նկարագրված է եղել 91 ձեռագիր։

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՏԱԽՏԱԿ

ՏԱՔՆԵՎԻ ԳՐԱՏԱՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԻՆ ԵՎ ՆՈՐ ԹՎԱՀԱՄԱՐՆԵՐԻ

(Ըստ Մ. Սմբատյանցի 1868 թ. ցուցակի)

Ըստ 1868 թ. ցուցակի	Ըստ Մշոցոն Մանրերի	Ըստ 1868 թ. ցուցակի	Ըստ Մշոցոն Մանրերի	Ըստ 1868 թ. ցուցակի	Ըստ Մշոցոն Մանրերի	Ըստ 1868 թ. ցուցակի	Ըստ Մշոցոն Մանրերի	Ըստ 1868 թ. ցուցակի	Ըստ Մշոցոն Մանրերի	Ըստ 1868 թ. ցուցակի	Ըստ Մշոցոն Մանրերի
1	3654	17	4006	33	—	49	—	65	3919	81	7363
2	4068	18	—	34	3937	50	4067	66	4144	82	7386
3	4166	19	4152	35	4143	51	—	67	3772	83	3917
4	3915	20	—	36	4170	52	—	68	3818	84	4156
5	4082	21	—	37	3931	53	3925	69	—	85	4086
6	3653	22	3657	38	—	54	3820	70	4083	86	7364
7	4071	23	3466	39	4169	55	4004	71	3462	87	4119
8	3940	24	3935	40	3920	56	4005	72	3921	88	—
9	3464	25	3816	41	—	57	3929	73	7243	89	4073
10	3932	26	—	42	4139	58	—	74	4155	90	3658
11	—	27	4134	43	4080	59	—	75	3916	91	4157
12	—	28	3651	44	4142	60	3941	76	—		
13	3918	29	4135	45	4154	61	4138	77	—		
14	4072	30	3924	46	4075	62	3771	78	3819		
15	4500	31	4136	47	4423	63	3774	79	4069		
16	—	32	—	48	4153	64	3817	80	4137		

Սույն ցուցակում առանց համարակալման (համարակալումը կատարված է մեր կողմից) արձանագրված 91 ձեռագրերից առկա են միայն 72-ը։ Բացա-

կայող 19 ձեռագրերը, բացառությամբ № 52 Ճաշոցի, հավանաբար մտնում են այլված 64 ձեռագրերի թվարանակի մեջ։ Այդ ձեռագրերն են.

11. Տոմար, բոլորգիր։
12. [Բովանդակութիւնն] անյայտ, խիստ վնասուած, բոլորգիր։
16. Մեկնութիւն, քարանալու աստիճանում։
18. [Բովանդակութիւնն] անյայտ, բոլորգիր, ընտիր։
20. [Բովանդակութիւնն] անյայտ, բոլորգիր։
21. Քարոզ կամ Մեկնութիւն, բոլորգիր, փշացած։
32. [Բովանդակութիւնն] անյայտ, փշացած, միացած ի մի, բոլորգիր։
33. [Բովանդակութիւնն անյայտ], ի մի ձուլուած։
38. [Բովանդակութիւնն] անյայտ, փշացած, բոլորգիր։
41. [Բովանդակութիւնն անյայտ] ի մի ձուլուած։
49. [Բովանդակութիւնն անյայտ], ի մի ձուլուած, բոլորգիր։
51. [Բովանդակութիւնն] անյայտ, բոլորգիր։
52. Ճաշոց։
58. Նեղոսի Ճառք։
59. Մեկնութիւն չորից աւետարանչաց։
69. [Բովանդակութիւնն] անյայտ։
76. [Բովանդակութիւնն] անյայտ, հին գրութիւն։
77. [Բովանդակութիւնն] անյայտ։
88. Շարական։

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՏԱԽՏԱԿ

ՏԱԹԵՎԻ ԳՐԱՏԱՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԻՆ ԵՎ ՆՈՐ ԹՎԱՀԱՄԱՐՆԵՐԻ

(Ըստ 1893 թ. ցուցակի)

Ըստ 1893 թ. ցուցակի	Ըստ Մշոյն Մատենի	Ըստ 1893 թ. ցուցակի	Ըստ Մշոյն Մատենի	Ըստ 1893 թ. ցուցակի	Ըստ Մշոյն Մատենի	Ըստ 1893 թ. ցուցակի	Ըստ Մշոյն Մատենի	Ըստ 1893 թ. ցուցակի	Ըստ Մշոյն Մատենի	Ըստ 1893 թ. ցուցակի	Ըստ Մշոյն Մատենի
1	3815	14	—	27	4008	40	3921	53	3925	81	3462
2	4140	15	4154	28	4136	41	3653	54	4068	82	4157
3	3655	16	—	29	4075	42	3928	55	3929	83	3913
4	3942	17	4082	30	3718	43	4155	56	3651	84	4071
5	3776	18	3650	31	3463	44	—	57	4074	85	3775
6	4081	19	4146	32	4153	45	3923	58	4149	86	4141
7	3816	20	4135	33	3774	46	—	59	4156	87	4076
8	3924	21	4134	34	4144	47	4006	60	—	88	4150
9	4084	22	3465	35	3467	48	4161	61	4143		
10	3941	23	—	36	3940	49	4148	62	4164		
11	4152	24	4163	37	4142	50	3934	63	3656		
12	—	25	3926	38	3719	51	3920	64	3927		
13	4085	26	4083	39	4139	52	3933	80	—		

Սույն ցուցակում 1—88 թվահամարների տակ նշված 73 ձեռագրերից (65—79 թվահամարների վրայով թռիչք է կատարված), այսօր առկա են 65-ը։ Բացակայում են հետևյալ 8 ձեռագրերը, որոնք հավանաբար մաս են կազմում 64 այրված ձեռագրերի։

12. Ճշմարտութիւն աւետարանական բանի։
14. Ադամդիրք։
16. Քարոզդիրք, նոտր, բնաիր։
23. Վարք Անդրանիկոսի։
44. Տօնացոյց։
46. Թուղթ Արիստոտէլի։
60. Ճշմարտութիւն աւետարանական բանի։
80. Յօհան Հոնտար։

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՏԱԽՏԱԿ

ՏԱԹԵՎԻ ԳՐԱՏԱՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԻՆ ԵՎ ՆՈՐ ԹՎԱՀԱՄԱՐՆԵՐԻ
(Ըստ Ն. Տեր-Ավետիքյանի 1899 թ. ցուցակի)

Ըստ 1899 թ. ցուցակի	Ըստ Մշոցեան Մատենդրի	Ըստ 1899 թ. ցուցակի	Ըստ Մշոցեան Մատենդրի	Ըստ 1899 թ. ցուցակի	Ըստ Մշոցեան Մատենդրի	Ըստ 1899 թ. ցուցակի	Ըստ Մշոցեան Մատենդրի	Ըստ 1899 թ. ցուցակի	Ըստ Մշոցեան Մատենդրի	Ըստ 1899 թ. ցուցակի	Ըստ Մշոցեան Մատենդրի
1	4136	21	4149	41	3651	61	4074	81	4163	101	3922
2	4143	22	4150	42	3654	62	3917	82	3775	102	3919
3	3770	23	4068	43	3915	63	3657	83	4509	103	4165
4	4135	24	4069	44	3464	64	3918	84	4157	104	3647
5	4145	25	4146	45	2490	65	4004	85	4153	105	3818
6	4170	26	4070	46	3463	66	4082	86	4156	106	7243
7	4137	27	4066	47	3920	67	4005	87	4158	107	6271
8	4138	28	4423	48	3937	68	4072	88	4152	ա	3817
9	4139	29	3914	49	3924	69	3930	89	4154	բ	3819
10	4140	30	4071	50	4167	70	3923	90	4155	գ	3820
11	4141	31	4134	51	3934	71	4081	91	4079	դ	7363
12	4142	32	4067	52	3931	72	3719	92	4159	ե	7364
13	4143	33	4144	53	3465	73	3925	93	4078	զ	7386
14	3913	34	4147	54	3936	74	3462	94	4077	է	7418
15	4008	35	3815	55	3655	75	4166	95	3921	ը	—
16	4009	36	3816	56	3645	76	4086	96	4080	թ	—
17	3929	37	4007	57	3940	77	3771	97	3774		
18	4073	38	3933	58	3652	78	4164	98	4075		
19	4006	39	3932	59	3939	79	4083	99	3773		
20	4148	40	3653	60	3916	80	3926	100	3646		

Սույն ցուցակում 1—107 թվահամարների տակ արձանագրված բոլոր 107 ձեռագրերն էլ առկա են։ Ցուցակից դուրս հիշատակված 9 ձայնամուրքներից (պայմանականորեն համարակալված՝ ա-թ) առկա են միայն 7-ը։ Մյուս 2-ը (№№ ը, թ) ժամանակին (1910 թ.) էջմիածին չեն տեղափոխված։ Ինչ վիճակներում է 64 փշացած ձեռագրերին, ապա դրանք նույն այրված ձեռագրերն են։

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՑԱՆՑԱԿ

ՏԱԹԵՎԻ ԳՐԱՏԱՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԻՆ ԵՎ ՆՈՐ ԹՎԱՀԱՄԱՐՆԵՐԻ

(Ըստ Խ. Մուրադբեկյանի 1910 թ. ցուցակի)

Ըստ 1910 թ. ցուցակի	Ըստ Մշոյեանի	Ըստ 1910 թ. ցուցակի	Ըստ Մշոյեանի	Ըստ 1910 թ. ցուցակի	Ըստ Մշոյեանի	Ըստ 1910 թ. ցուցակի	Ըստ Մշոյեանի	Ըստ 1910 թ. ցուցակի	Ըստ Մշոյեանի	Ըստ 1910 թ. ցուցակի	Ըստ Մշոյեանի
1	3815	25	4069	44բ	3818	47ժդ	3773	49դ	3928	70	3655
2	3816	26	4070	44գ	3819	47ժգ	3647	49է	3927	71	3938
3	3770	27	4071	44դ	7363	47ժե	4077	49ը	3775	72	3939
4	4134	28ա	4072	44ե	7386	47ժգ	4078	50ա	3929	73	3940
5	4135	28բ	4004	44գ	7364	47ժէ	4079	50բ	4084	74	3656
6	4136	28գ	4005	44է	3820	47ժը	4080	51	4164	75	3465
7	4137	28դ	4073	44ը	7418	47ժթ	4160	52	4165	76	3657
8	4138	29	4006	44թ	—	47ի	3922	53	—	77	3463
9	4139	30	4007	44ժ	—	47իա	4509	54	3930	78	2490
10	4140	31	4008	44ժա	—	47իբ	3646	55	4166	79	3464
11	4141	32	4009	45	—	48ա	4161	56	4167	80	7243
12	4142	33	3913	46	6271	48բ	4081	57	3776	81	3941
13	4143	34	3914	47ա	4152	48գ	3718	58	3931	82	—
14	4144	35	3915	47բ	4154	48դ	3923	59	3932	83	3466
15	4145	36	3916	47գ	4075	48ե	4082	60	3933	84	4085
16	4146	37	4074	47դ	4153	48զ	3925	61	3934	85	3658
17	4066	38	3917	47ե	3774	48է	3719	62	3650	86	4275
18	4067	39	3918	47զ	3921	48ը	3924	63	3651	87	3942
19	4147	40	3919	47է	4155	48թ	3462	64	3935	88	3467
20	4148	41	3920	47ը	4156	49ա	4162	65	3936	89	4168
21	4149	42	3645	17թ	4157	49բ	3648	66	3937	90	4169
22	4150	43ա	3771	47ժ	4076	49գ	4163	67	3652	91	4086
23	4068	43բ	3772	47ժա	4158	49դ	3926	68	3653	92	4170
24	4423	44ա	3817	47ժբ	4159	49ե	4083	69	3654		

Սույն ցուցակում 1—92 թվահամարների տակ արձանագրված 142 ձեռագրերից (№ 82-ը եղել է ոսկագիր ինչ-որ քերականության) այսօր առկա են 137-ը: Մնացած 5 ձեռագրերից 2-ի (№ 45 Ճաշոց, № 53 Մեկնութիւն ժամակարգութեան) որդի թվահամարները մնում են անորոշ, իսկ մյուս 3-ը (№№ 44թ, 44ժ, 44ժա Յայտաւուրք) ժամանակին (1910 թ.), ինչպես նշված է ցուցակում, էջմիածին չի տեղափոխված:

ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՑԱՆՑԱԿ

ՏԱԹԵՎԻ ԳՐԱՏԱՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԻՆ ԵՎ ՆՈՐ ԹՎԱՀԱՄԱՐՆԵՐԻ

(Ըստ Մաշտոցյան Մատենադարանի թվահամարների)

Ըստ Մշոյեանի	Ըստ 1863 թ. ցուցակի	Ըստ 1864—1865 թթ. ցուցակի	Ըստ 1866 թ. ցուցակի	Ըստ 1868 թ. ցուցակի	Ըստ 1893 թ. ցուցակի	Ըստ 1899 թ. ցուցակի	Ըստ 1910 թ. ցուցակի
1	2	3	4	5	6	7	8
2490	90	—	—	—	—	45	78
2821	1	—	—	—	—	—	—
3319	—	—	67	—	—	—	—
3462	93	33	—	71	81	74	48թ
3463	136	53ա	—	—	31	46	77

1	2	3	4	5	6	7	8
3464	23	—	—	9	—	44	79
3465	28	91*բ*	51	—	22	53	75
3466	118	—	—	23	—	—	83
3467	62	—	—	—	35	—	88
3645	—	—	—	—	—	56	42
3646	140*իբ*	—	—	—	—	100	47*իբ*
3647	140*ժդ*	—	—	—	—	104	47*ժդ*
3648	137	—	—	—	—	—	49*բ*
3650	121	—	—	—	18	—	62
3651	51	60	—	28	56	41	63
3652	86	—	—	—	—	58	67
3653	56	—	—	6	41	40	68
3654	88	77	—	1	—	42	69
3655	—	111	65	—	3	55	70
3656	34	—	—	—	63	—	74
3657	134	—	—	22	—	63	76
3658	126	—	—	90	—	—	85
3718	61	123	—	—	30	—	48*գ*
3719	46	118*գ*	—	—	38	72	48*է*
3770	103	—	—	—	—	3	3
3771	—	—	—	62	—	77	43*ա*
3772	—	—	—	67	—	—	43*բ*
3773	140*ժդ*	—	—	—	—	99	47*ժդ*
3774	140*ի*	—	—	63	33	97	47*ժի*
3775	85	98*գ*	—	—	85	82	49*ը*
3776	72	64	—	—	5	—	57
3815	—	93	—	—	1	35	1
3816	208	83*ա*	—	25	7	36	2
3817	125	—	57	64	—	*ա*	44*ա*
3818	129	—	—	68	—	105	44*բ*
3819	132	—	—	78	—	*բ*	44*գ*
3820	131	—	—	54	—	*գ*	44*է*
3913	77	—	13	—	83	14	33
3914	—	—	—	—	—	29	34
3915	74	—	44	4	—	43	35
3916	96	—	—	75	—	60	36
3917	8	—	—	83	—	62	38
3918	2	—	—	13	—	64	39
3919	32	90	—	65	—	102	40
3920	73	63	—	40	51	47	41
3921	140*գ*	—	—	72	40	95	47*գ*
3922	140*է*	—	—	—	—	10i	47*է*
3923	97	—	—	—	45	70	48*գ*
3924	120	119	—	30	8	49	48*ը*
3925	123	118*գ*	—	53	53	73	48*գ*
3926	48	96*ա*	—	—	25	80	49*գ*
3927	45	—	—	—	64	—	49*է*
3928	69	—	—	—	42	—	49*գ*
3929	94	104*բ*	—	57	55	17	50*ա*
3930	31	—	—	—	—	69	54
3931	67	110	—	37	—	52	58
3932	65	—	—	10	—	39	59
3933	44	116	—	—	52	38	60
3934	38	121	—	—	50	51	61
3935	99	—	—	24	—	—	64
3936	71	—	—	—	—	54	65
3937	89	—	—	34	—	48	66
3938	14	—	—	—	—	—	71
3939	80	—	—	—	—	59	72
3940	201	70	24	8	36	57	73
3941	107	109*ա*	—	60	10	—	81
3942	84	95	—	—	4	—	87
4004	41	—	—	55	—	65	28*բ*
4005	235	—	—	56	—	67	28*գ*
4006	—	113	—	17	47	19	29
4007	83	—	—	—	—	37	30

1	2	3	4	5	6	7	8
4008	205	105	—	—	27	15	31
4009	—	—	18	—	—	16	32
4066	58	—	—	—	—	27	17
4067	78	—	—	50	—	32	18
4068	139	56	—	2	54	23	23
4069	232	—	—	79	—	24	25
4070	50	—	—	—	—	26	26
4071	—	94	—	7	84	30	27
4072	9	—	—	14	—	68	28ա
4073	199	—	—	89	—	18	28գ
4074	26	92	—	—	57	61	37
4075	140գ	—	—	46	29	98	47գ
4076	140ժ	48գ	—	—	87	—	47ժ
4077	140ժե	—	—	—	—	94	47ժե
4078	140ժգ	—	—	—	—	93	47ժգ
4079	140ժէ	—	—	—	—	91	47ժէ
4080	140ժը	—	—	43	—	96	47ժը
4081	5	118բ	—	—	6	71	48բ
4082	210	100	—	5	17	66	48ե
4083	7	98բ	—	70	26	79	49ե
4084	95	104ա	—	—	9	—	50բ
4085	101	85	—	—	13	—	84
4086	—	—	—	85	—	76	91
4119	37	—	—	87	—	—	—
4134	111	83բ	—	27	21	31	4
4135	70	86	—	29	20	4	5
4136	16	49	—	31	28	1	6
4137	17	—	—	80	—	7	7
4138	207	89	37	61	—	8	8
4139	110	82	—	42	39	9	9
4140	4	91ա	—	—	2	10	10
4141	43	96բ	—	—	86	11	11
4142	211	54ա	—	44	37	12	12
4143	104	118ա	—	35	61	2	13
4144	10	58ա	—	66	34	33	14
4145	212	—	—	—	—	5	15
4146	—	52	45	—	19	25	16
4147	57	—	—	—	—	34	19
4148	108	54բ	—	—	49	20	20
4149	6	—	—	—	58	21	21
4150	55	58բ	—	—	88	22	22
4152	140ա	48ա	—	19	11	88	47ա
4153	140գ	48բ	—	48	32	85	47գ
4154	140բ	—	—	45	15	89	47բ
4155	140է	17	—	74	43	90	47է
4156	140ը	—	—	84	59	86	47ը
4157	140ի	—	—	91	82	84	47ի
4158	140ժա	—	—	—	—	87	47ժա
4159	140ժբ	—	—	—	—	92	47ժը
4160	140ժի	—	—	—	—	—	47ժի
4161	54	109գ	—	—	48	—	48ա
4162	53	—	—	—	—	—	49ա
4163	39	98ա	—	—	24	81	49գ
4164	202	—	—	—	62	78	51
4165	122	—	—	—	—	103	52
4166	116	122	—	3	—	75	55
4167	106	—	—	—	—	50	56
4168	105	—	40	—	—	—	89
4169	19	—	—	39	—	—	90
4170	49	112	66	36	—	6	92
4261	79	—	—	—	—	—	—
4275	29	—	—	—	—	—	86
4423	15	—	—	47	—	28	24
4509	140իա	—	—	15	—	83	47իա
6271	141	—	62	—	—	107	46

1	2	3	4	5	6	7	8
7243	119	—	—	73	—	106	80
7363	128	—	—	81	—	ը	44ը
7364	130	—	—	86	—	ի	44ը
7386	127	—	—	82	—	ը	4 4ի
7418	—	—	—	—	—	—	—
7724	196	—	—	—	—	—	—
7759	—	—	—	—	—	—	—
8302	—	—	—	—	—	—	—
8594	—	—	—	—	—	—	—
9243	—	—	—	—	—	—	—
10199	—	—	—	—	—		—

Վերոհիշյալ 147 ձեռագրերից 135-ը նկարագրված են Մաշտոցյան Մատենադարանի վերջերս լույս տեսած Ձեռագրացուցակի առաջին հատորում, իսկ վերջին 12 ձեռագրերը տեղ կգտնեն նույն ցուցակի երկրորդ հատորում։

О. С. ЕГАНЯН

РУКОПИСИ ТАТЕВСКОГО КНИГОХРАНИЛИЩА

Книгохранилище Татевского монастыря являлось одним из старейших и богатейших в средневековой Армении. Из многих тысяч рукописей в Татевском книгохранилище к 1863 году оставалось всего 187 рукописей, а к 1910-му всего 147.

В 1863—1910 годах разными лицами было составлено восемь списков этих рукописей и они были известны филологам по какому-либо одному из этих неопубликованных списков.

В 1910 году рукописи были перенесены из Татева в Эчмиадзин, а в настоящее время хранятся в Матенадаране имени Маштоца.

В статье дается краткая характеристика упомянутых выше восьми неопубликованных списков и приводятся сравнительные таблицы старых и новых номеров татевских рукописей.

O. S. EGANIAN

LES MANUSCRITS DE LA BIBLIOTHEQUE DE TATHEVE

La Bibliothèque du monastère de Tathève, qui fut l'une des plus riches et des plus anciennes de l'Arménie médiévale, comptait plusieurs milliers de manuscrits, collection qui n'en rassemblait plus que 187 en 1863 et 147 en 1910.

Huit catalogues inédits dressés de 1863 à 1910 par des personnes différentes permirent aux philologues de prendre connaissance des derniers vestiges de la bibliothèque qui furent d'ailleurs transférés à Etchmiadzine en 1910 et plus tard au Maténadaran d'Erévan où ils sont toujours conservés.

L'auteur de l'article donne un aperçu des catalogues que complète un tableau comparatif des numéros anciens et nouveaux des manuscrits de la Bibliothèque de Tathève.

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ՄԻՆԻՍՏՐՆԵՐԻ ՍՈՎԵՏԻ ԱՌԸՆԹԵՐ
ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ—«ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ»

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

ԵՐԵՎԱՆ №9 1969

ՍՈՒՐԵՆ ՔՈԼԱՆՋՅԱՆ

ՀԱՄԱՌՈՏ ՑՈՒՑԱԿ ՀԱՅԵՐԵՆ ՁԵՌԱԳՐԱՑ ԳԵՌԵԼԱ ՀԱՅԱՔԱՂԱՔԻ[1]

Սույս Համառոտ ձեռագրացուցակը հիմնականում կազմվել է Ռումինիայի Սոցիալիստական Հանրապետության Տրանսիլվանիայի նահանգի Գեռլա հայաքաղաքը կատարած մեր երկրորդ այցելության ժամանակ՝ 1960 թ. դեկտեմբերի 18—21-ին։

Ձեռագրացուցակում ներկայացված են յուրաքանչյուր ձեռագրի արտաքին համառոտ նկարագրությունը և այդ ձեռագրերում եղած բոլոր հիշատակարաններն ու հիշատակագրությունները։

Ձեռագրերի մեր համարակալումը պայմանական է. առաջնորդվել ենք ձեռագրերի ընդօրինակման ժամանակագրական հաջորդականությամբ. փակագծերում գտնվող համարներն արձանագրված են ձեռագրերին փակցված պիտակների վրա, և, հավանաբար, Գեռլայի Ս. Երրորդություն մայր տաճարի մատենադարանի հին համարներն են։ Մենք չկարողացանք այդ հին համարները դասավորման համար հիմք ընդունել, որովհետև նրանց միջից շատ պակասներ կային։

Ժամանակի սղության պատճառով չենք կարողացել բոլոր ձեռագրերի թերթերը հաշվել և կամ նրանց բովանդակությունը նկարագրել, ուստի և բերված հիշատակարաններին առընթեր միշտ չենք կարողացել նշել նրանց թերթա-համարները և կամ հնարավորություն չենք ունեցել հաճախ նրանց բովանդակության վրա ծանրանալու։ Անցյալում մի շարք ձեռագրեր էջակալվել են, որոնք և ցույց ենք տվել։

Ինչպես խորագրերի, այնպես էլ հիշատակարանների հրատարակության ժամանակ բաց ենք արել բոլոր համառոտագրությունները։

Ձեռագրացուցակի 1—97 համարների տակ նկարագրված ձեռագրերը այժմ պահվում են Գեռլայի պատմական շրջանային թանգարանում (Muzeul Istoric Regional Gherla)։ Իսկ 98—115 համարների տակ գրանցված ձեռագրերը տեսել ենք 1948 թ. Գեռլա կատարած մեր առաջին ուղևորության ընթացքում՝ հայաքաղաքի Ս. Երրորդություն մայր տաճարի վերնահարկում, հայ աղջիկների որբանոցում, ժողովրդապետարանում և հայ թեմի առաջնորդ, այժմ հանգուցյալ, Հ. Զոլման Լևոնդյանի մոտ։

Ներկայումս Գեռլայի պատմական շրջանային թանգարանում պահվող ձեռագրերը երկրորդ համաշխարհային պատերազմի նախօրյակին տեղափոխվել

---

1 *Գեռլա հայաքաղաքի պատմության, այնտեղ պահվող ձեռագրերի հավաքման և նրանց ներկայացրած արժեքի մասին տեսնել հեղինակի «Գեռլա հայաքաղաքը և նրա հայերեն ձեռագրերի ժողովածուն» ուսումնասիրությունը, «Բանբեր Մատենադարանի», № 6, 1962, էջ 499—531։*

էին Բուդապեշտ, այդ պատճառով էլ 1948 թ. մեր առաջին ուղևորության ընթացքում հնարավոր չէր եղել տեսնել դրանք։

Անցյալում Ա. Բ.-ն (իմա՝ Գր. Գովրիկյան), նպատակ ունենալով հրատարակել Գեղայի ձեռագրերի ցուցակը, լույս է ընծայել միայն 7 ձեռագրերի նկարագրություն։ Այդ ձեռագրերից երկուսն այժմ կորած են, դրանք են. 1) Շարակնոց, արտագրված ԺՉ-ԺԷ դարերում և 2) Սպասաւորութիւն պատարագի, գրված Հռոմում 1713 թ., «Ի վանքն Հայոց ընդ հովանեաւ Ս. Մարիամայ Եգիպտացւոյն», գլխավոր գրիչ՝ Տէր Յարութիւն Զօփլի[2]։

Այսպիսով, սույն ձեռագրացուցակում նկարագրված 115 գրչագրերից միայն 5 են նկարագրվել հիշյալ ցուցակի տպագրված մասում[3]։

Ներկա ցուցակում բացառության կարգով նկարագրված են նաև երկու այլալեզու (լատիներեն և հունգարերեն) ձեռագրեր, այն պարզ պատճառով, որ նրանք պատկանում են գեղացի բազմարդյուն գրագետ ու գործիչ Զաքարիա Կապրուշյանի գրչին և հեղինակությանը։

Ռումինական և հունգարական գիտական շրջանակներում վերջին ժամանակներս մեծ հետաքրքրություն է առաջացել Գեղայի հայերեն ձեռագրերի ժողովածուի նկատմամբ։ Այդ ձեռագրերում կան նաև ուշագրավ նյութեր, որոնք նոր լույս են սփռում հայ-ռումինական և հայ-հունգարական դարավոր բարեկամության պատմության վրա։

Գեղայում բնակվող ռումինացի բանասեր Յոն Ապոստոլ Պոպեսկուն ռումինական հանդեսներում հրատարակած իր մի շարք հոդվածներում կանգ է առել նաև Գեղայում պահվող մի քանի ձեռագրերի արժեքի վրա։ Ռումինացի գիտնականը՝ շարունակելով հայագիտության բնագավառում իր կատարած օգտաշատ աշխատանքները, ռումինական ակադեմիայի Կլուժի մասնաճյուղի նիստում (4 ապրիլի 1963 թ.) հանդես է եկել «Գեղայի հայերեն հնագույն ձեռագրերի մեծ նշանակությունը» խորագիրը կրող հաղորդումով։ Այդ զեկուցման առթած մեծ ուշադրության տակ Կլուժի ակադեմիայի մասնաճյուղի գիտական աշխատողները գիտական ուղևորություն են կատարել դեպի Գեղա և անձամբ ծանոթացել են պահված հայերեն ձեռագրերին։ Միաժամանակ նրանք ցանկություն են հայտնել հիշյալ ձեռագրերի պահպանության գործը ամուր հիմքերի վրա դնելու նպատակով տեղափոխել դրանք Գեղայի պատմական

---

2 «Հանդէս ամսօրեայ», 1914, Վիեննա, էջ 667, 670—674։

3 Այժմ Վիեննայի Մխիթարյան Մատենադարանում է պահվում Հ. Գր. Գովրիկյանի և Հ. Գ. Ծերհատյանի կազմած Գեղայի ձեռագրացուցակը, ուր նկարագրված են միայն 52 գրչագրեր և որոնցից, ինչպես նշեցինք, 7 ձեռագրի նկարագրություն հրատարակվել է «Հանդէս ամսօրեայ»-ում։ Սույն վերի անտիպ ցուցակը, ըստ մեր ստացած հավաստի տեղեկության՝ կարող է մի շարք լրացումներ։

Վերոհիշյալ ցուցակի անտիպ մասում նկարագրված 45 գրչագրերից երեքը այժմ գտնվում են Մաշտոցյան Մատենադարանում. դրանց մասին խոսել ենք մեր նախորդ հոդվածում։

Նշված ցուցակի անտիպ մասի հետագա հրատարակումը, անշուշտ, կնպաստի Գեղայում մինչև 1914 թ. (իմա՝ մինչև Գովրիկյանի և Ծերհատյանի ցուցակագրումը) պահպանված ձեռագրերի մասին մեր ունեցած ծանոթությունների ամբողջացմանը։ Վերև ցուցակի հրատարակված մասում նկարագրված միայն 7 գրչագրերից այժմ պակասում է 2-ը, ապա պետք է կարծել, որ անտիպ մասի հրատարակման դեպքում հայտնի կարող են դառնալ հավանաբար ավելի մեծ թվով այժմ կորած ձեռագրեր։

Հիշյալ անտիպ ձեռագրացուցակի վերաբերյալ սույն տեղեկությունները սիրահոժար կերպով տրամադրել է մեզ բազմավաստակ բանասեր, այժմ հանգուցյալ, Հ. Հ. Ոսկյանը։

շրջանային թանգարանից (ուր ներկայումս նրանք պահվում են) կլուժի ռումինական ակադեմիայի մասնաճյուղի մատենադարանը, ուր և մեր դարասկզբից սկսած պահվում են նաև Տրանսիլվանիայի հայոց պատմական մյուս հայաքաղաքից՝ Եղիսաբեթուպոլսից (այժմ Դումբրըվեն) ժառանգություն մնացած շուրջ 60 հայերեն ձեռագրեր։

Եթե առաջին հայացքից այդ տեղափոխումը նվազ ցանկալի թվա (քանի որ մոտ երեք հարյուր տարի շարունակ Գեղայում է պահվել Մոլդովայից տեղափոխված այդ ձեռագրերի մի մասը), ապա շատ ավելի նպատակահարմար է այդ ձեռագրերը կլուժի ռումինական ակադեմիայի մասնաճյուղի մատենադարան տեղափոխելը՝ նրանց ինչպես պահպանման, այնպես էլ ուսումնասիրման տեսակետից։ Դա հնարավորություն կընձեռի նաև անհրաժեշտության դեպքում նրանցից նկարահանումներ կատարել։

Հիշյալ գրչագրերը այսօր էլ գտնվում են Գեղա հայաքաղաքի թանգարանում։

* * *

Այժմ, երբ ապագրության ենք հանձնում սույն ձեռագրացուցակը, սրբազան պարտք ենք համարում մեր խորին հարգանքը մատուցելու Գեղա հայաքաղաքի հին սերնդի ամենավերջին հայախոս ներկայացուցչի՝ Հ. Զոլթան Լենգելյանի (1908—1964 թթ.) հիշատակին։ Նա ոչ միայն Տրանսիլվանիայի հայոց վերջին առաջնորդն էր, այլև մեսրոպյան լեզվի ջերմեռանդ տարածողը, բազմակողմանի զարգացած ու զգայուն սրտի տեր և բացառիկ հմայք ունեցող մի անձնավորություն։ Նա էր, որ այնքան մեծ դուրգուրանքով կարողացել էր պահպանել հինավուրց գաղութի դարավոր ժառանգությունը հանդիսացող հայերեն գրչագրերը և մայր տաճարի վերջին մեծ հրդեհի ժամանակ ամենայն անձնազոհությամբ ոչնչացումից փրկել այդ գանձերը։

Ինչպես 1948 թ., այնպես էլ 1960 թ. Գեղայում մեր կատարած այցելությունների ժամանակ Հ. Զոլթան Լենգելյանը մեծ հոգատարությամբ մեզ համար հնարավոր բոլոր միջոցները ստեղծեց, որպեսզի մոռացության մատնված այդ ձեռագրական հավաքածուն ցուցակագրման միջոցով մատչելի դառնա հայագիտությանը։ Սակայն վրա հասնող նրա վաղաժամ մահը (1964 թ. հոկտեմբերի 5) թույլ չտվեց նրան տեսնելու իր կողմից երկյուղածությամբ պահպանված գրչագրերի ներկա ցուցակի հրատարակումը, որին այնքան տենչացել էր իր կենդանության օրոք։

1

ԱԻԵՏԱՐԱՆ

Տարօնի ս. Ղազար վանք [Զ]ՇԵ—1306 թ.

Գրիչ՝ *Յոհաննէս։ Ստացող՝ Կարապետ, ապա՝ Յուսիկ քահանայ։ էջ 614։ Թուղթ։ 16,5×13։ Բոլորագիր։ Վիճակ՝ ձեռագրի թերթերի մի մասի ներքևի կեսը ոչնչացած է ու վերանորոգված սպիտակ թղթով. այդ պատճառով Ավետարանից բազմաթիվ էջեր, ինչպես նաև զրչի հիշատակարանի մի մասը չի պահպանվել։ Երկայուն։ Մանրանկարչություն՝ կիսախորան, լուսանցազարդ և զարդագրեր (բուսական մոտիվներ և մարդագիր)։*

Հիշատակարան

Գրչի

Ա

Քրիստոս աստուած, քո անճառելի խոնարհութեամբդ և քո սուրբ մնաւբէնութեամբդ և քո սուրբ Աւետարանիս բարեխաւսութեամբն ողորմեա ստացողի գրոց Կարապետին ///

Բ

Փա՛ռք... Ըստ նմին աւրինակի և սրբասէր քահանային և աստուածահաճոյ կրաւնա[ւորն Յովհ]էփ ցա[նկացաւ] /// հասուցանել զնա ի փափաք բաղձանաց իւրոց, իսկ մեր անբնդունակ զոլով իմաստից և ախմար յարուեսա գրչութեան և բազում մեղաց ցնորիւք պաշարեալ, այլ ի սիրոյ նորա և ըստ կարի մերում զոր /// աւք իմովք ի Թուականիս Հայոց [Զ]ՇԵ, ի գաւառիս [Տ]արաւնոյ, ի հռչակաւոր ուխտիս և ի հրեշտակացոյց մենաստանիս Ղազարու վանք կոչեցեալ, ընդ հովանեաւ սուրբ Ա[ստ]ուածոյ ///

///վանից սուրբ Աբրահամու։ Եւ յայսմ ամի եկ հրամանն պիղծ յինքնակալէն ազգին նեմռոդաց, որոյ անուն ճանաչիւր խարպանդայ ժանդի /// և սև կարկատան մի յաջոյ ուսին վերա կարել և առնալ զհրովարտակս անաւրէնն դեսպանք նորա յարձակեցան ի վերա աշխարհիս, որ ընդ ձեռամբ նո[ր]/// էր և ի դրուն///։ Արդ, որք աւգտիք ի սմանէ կամ զաղափարէք կամ հանդիպիք սմա, յիշեսջիք աղաւթիւք ի յաուաջ ասացեալ քահանայ զՅուսկին, որ ստացաւ զսա ի հալալ ///

Ընդ նոսին և զբազմամեղ զրիչս Յոհաննէս բարի յիշման արժանի արարէք և խոշորութեան և աղալանաց սորա անմեղադիր լերուք, զի կար մեր այս է ///

2 (13)

ՆՈՐ ԿՏԱԿԱՐԱՆ, ՃԱՇՈՑ

Կիպրոս, ի Մաղուսայ ՉՇԹ—ՉԿԱ 1310—1312 թթ.

Գրիչ՝ *Ստեփաննոս Գոյներերիցանց։* Ոսկով զարդարող՝ *Սարգիս քահանայ (Պիծակ՞)։* Ստացող՝ *Պարոն Ալիժ տիկին, դուստր պարոն Հեթումի։* Վերատին

կազմողներ՝ Սերապիոն և Սարգիս (1626 թ., Սուշավա)։ Վերստին կազմել ավող՝ Ղուկաս քահանա։ 406 թերթ։ Մագաղաթ։ 19,3×12,9։ Երկսյուն։ Տողեր՝ 16։ Մանրանկարչություն՝ երկու կիսախորաններ, լուսանցազարդեր և գլխազարդեր (բուսական մոտիվներ և թռչնագիր)։

Հիշատակարան

Ա

Գրչի

Փա՛ռք... Գրեցաւ սրբակք սուրբ Աւաքելոցն, Կաթողիկէիւքն հանդերձ, հրամանաւ աստուածասէր և բարեպաշտ պարոնին տիկին Ալիծին, մասրքաւր թագաւորացն Հայոց, ի մխիթարութիւն կենաց իւրոց և ի յիշատակութիւն հոգւոյ իւրոյ, ի ձեռն իմոյ նուաստիս Ստ[եփանոսի] Գոյներերիցանց։ Արդ, յերեսս անկեալ աղաչեմ զՀանդիպաւղդ՝ յիշել զարժանին յիշատակի՝ զաստուածասէրն և զբարեպաշտուհին, հանդերձ ամենայն նախնիւքն իւրովք եւ ծննդովք, այլ և բղտառապեալ և զրազմամեղ գրչիս, և աստուած առհասարակ ձեզ և մեզ ողորմեսցի, որ է աւրհնեալ յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Ի թու. ՉՄԹ (1310) գրեցաւ, ի բազմաթշուառ ժամանակի, որոց տարակուսելոցս այց արասցէ մարդասէրն աստուած, բարեխաւսութեամբ սուրբ Աստուածածնին, ամէն։

Բ

Փա՛ռք... Գրեցաւ աստուածաբան Աւետարանս Յոհաննու ի հրամայական խնդրոյ աստուածասէր և բարեպաշտուհի պարոնին տիկին Ալիծի սինէջալէսի Կիպրոսի, որ էր դուստր պարոն Հեթմոյ, որ տէր էր Լամպրունին. յիշատակ նորա աւրհնութեամբ, և ողորմեսցի նմա Քրիստոս աստուած, ամէն։

Արդ, վերոյգրեալ բարեպաշտուհի պ[ա]ր[ոնն] բազում ամս խնամարկեաց դիս բազում և մեծ գթով, գրեթէ որպէս որդեսէր ծնաւղ զանդրանիկ իւր, այնպէս գթաց ի նուաստս և յանարժանս։ Եւ ես՝ յետնեալս բարեաց, աստանունս Ստեփ[անոս], որ ամաչեմ ի գերազունէ քահանայ անուամբ կոչիլ, այլ մականուամբ՝ Գոյներերիցանց։ Վասն որոյ, որպէս յոյժ պարտական նորա անճառ բարեացն՝ յերեսս անկեալ աղաչեմ զառհասարակ Հանդիպաւղդ, յիշել ի բարին զվերոյգրեալ բարեպաշտուհի պ[ա]ր[ոնն], ծնողիւք իւրովք և ամենայն զարմիւք։ Այլ և զմեղաւոր հողս՝ զաստուածասէր գրիչս ծնողիւք իմովք եւ ամենայն զարմիւք։ Եւ Քրիստոս աստուած, որ առատն է ի տուրս, առհասարակ ողորմեսցի ձեզ յիշողացդ եւ մեզ յիշեցելոցս, ամէն։

Գ

Գրեցաւ ի թու. ՉԿԱ (1312), ի դեկտեմբ[եր] ԻԹ (29), ի Կիպրոս կղզի, ի Մաղուսայ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնիս։ Արդ աղաչեմ, որ ոք հանդիպեսցի սմա՝ մի եպերեսցէ զիս վասն ճապաղ ցանկիս, թէ երբ զայլ Աւետարանն չէ գրեալ, նա ոչ էր պիտոյ սմա ցանկ ճապաղ, այլ ևս ոչ կամեցայ յիմ ձեռահիւս պակաս իրք թողուլ, զի ի զեղեցկութիւնն պակասն է նախատելի եւ ոչ առաւելութիւնն, ահա յայտնի է, որ ուղիղ մտաւք որոնէ՝ բաւական է իմաստնոց։ Այլ յինէն, ծերացեալոյս մարմնով և մեղաւք, հաղիւ այսչափս ծրա-

գրեցաւ, զգեղեցիկն վեհքն ծրագրեն, զանսանաւղդ աղաչեմ, մեր յանցանացն Քողութիւն շնորհել, և աստուած ձեզ, ամէն։

(Գրիգոր Գովրիկյան, Դրանսիլվանիո հայոց մետրապոլիսը կամ նկարագիր կերլա Հայաքաղաքի ի գիր և ի պատկերս, Վիեննա, 1896, էջ 342—346։

Լ. Ս. Խաչիկյան, ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երեվան, 1950, էջ 68—69)։

Թելադրութիւն։ Այսինքն խրատ, որպէս թէ գիրքս խրատէ զատացուղն...

Դ

Կամաւք բարեպաշտուհոյ և աստուածասէր պ[ա]ր[ոն]ին հետս ի հետ գծագրեցաւ պատշաճաւոր գրկունքս։ Արդ աղաչեմ մեղաւոր հողս գրիչ Ստեփ[անոս] Դոյնեներից, յիշել զբարեպաշտուհի պ[ա]ր[ոն] զվերոյ // գրեալն տիկին Ալիծ՝ բարեպաշտ ծնողիւքն [իւրովք][1] և ամենայն զարմիւք զի աստուծոյ շնորհաւքն արժանի է յիշատակի ինքն և ծնաւղքն իւր և զաւակք իւր. և որ յիշէ բարեաւ աստուած ողորմի ասելով, Քրիստոս աստուած իւր ողորմի, ամէն։ Այլ եւ մեղաւոր հողս գրիչ՝ երես ի կործ երկրահուպ դիմաւք և արտասուաւք աղաչեմ յիշել զտառապեալս ծնաւղիւք իմովք եւ ամենայն զարմիւք [իմովք ուսուցչաւք եւ նախախնամողաւք, և որք յիշէք ի բարին՝ յիշեալ լիջիք առաջի Քրիստոսի աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն։

Ե

Ոսկով զարդարողի

ՁՍարդիս անարժան ծառայս Աստուծոյ եւ սուտանուն քահանայ եւ ղծն[աւղն] իմ [ա]ղգայնօք իմով յիշեցէք ի տէր Աստուած Յիսուս Քրիստոս, զի յոյժ բազում աշխատեցա ի կատած գիրքս. և ոսկով զարդարեցի զսա մինչեւ ի վերջն եւ դուք յիշիք ի տեառնէ, ամէն։

(Գր. Գովրիկյան, նշված աշխատությունը, էջ 346—347)։

Զ

Վերջին կազմողի

Վերատին կազմեցաւ Գործք առաքելոցն թվին ՌՀԵ—(1626), ձեռամբ սուտանուն Սէբաստիոնին (ջնջված է) և Սարգսին։ Արդ, աղաչեմ զձեզ, ով հայրք և եղբայրք, յիշել ի տէր միով ողորմեայիւ զտէր Ղուկաս քահանայն և որ եղև պատճառ և ետ կապել զսուրբ գիրքս, մեզ մեղաւորացս յիշեցէք ի տէր հայր մեղաւ, յիշեալ լիջիք ի Քրիստոսէ ամէն։

(Այս հիշատակագրությունը գրված է վերջին էջում, Նոտրախաոն շեղագրով, Սուշավայում։ Տե՛ս սույն ցուցակի №№ 10, 11 ձեռագրերի հիշատակագրությունները, որոնք գրված են դարձյալ Սեբաստիոնի և Սարգսի կողմից)։

Է

Ընծայեցաւ Մայրամբ թվ. ՌՃՆԴ (1695)։

(Այս հիշատակագրությունը հավանաբար գրված է Գեղայում)։

---

[1] Այս մասը՝ ցեցակեր։

3

ԱԽՏԱՄԱՆ

Սուրխաթ ՉՂԵ—1346 թ.

Գրիչ՝ Կիրակոս աւագ սարկաւագ։ 586 էջ։ 24×17։ Թուղթ։ Երկայուն, բոլորագիր, տողեր՝ 23։ Կազմ՝ կանաչ թավշյա, արծաթապատ։ Մանրանկարչություն՝ Չորս ավետարանիչների նկարներ, սկզբնաթերթեր՝ կիսախորաններով, լուսանցազարդեր և գարդագրեր (բուսական մոտիվներով և կենդանագրերով)։

Հիշատակարան

Գրչի

575—577 Փա՛ռք... Յամի եւթնհարիւրերորդի [ին]նսուներորդի հինգերորդի թուականութեանն Հայոց նոր տումարիս (1346), ի գաւառիս Խրիմի, ի մայրաքաղաքիս Սուրխաթ կոչեցեալ, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնի և սուրբ Գրիգորի Լուսաւորչի // ի հայրապետութեան տեառն Մխիթարայ և յեպիսկոպոսութեան ամենայն հիւսուսային կողմանցս տէր Ստեփաննոսի արհիեպիսկոպոսի, ի յայսմ ժամանակի գրեցաւ ամենագովելի և գերահռչակելի գերակատար և գերապանծ, պաշտելի եւ երկրպագելի սուրբ Աւետարանս, ձեռամբ մեղօք լցեալ և անպիտան հոգւոյ՝ Կիրակոս սարկաւագի, յամսեանն աւգոստոսի ի ԺԵ (15), ի փառս Քրիստոսի՝ աւրհնելոյն յամենայն բերանոյ յաւիտեանս, ամէն։ Արդ, աղաչեմ զամենեսին զդասս լուսերամիցդ, որք հանդիպիք այսմ սաստուածախաւսութեան սուրբ Աւետարանիս, յիշեսջիք ի մաքրափայլ աղաւթս ձեր զԿիրակոս աւաք սարկաւաք և զծնողս իմ՝ զԿարապետ քահանայ և զմայր իմ զԱննայ՝ զիտխեցեալն առ Քրիստոս, եւ զկուսակրօն քահանայ զՄինաս՝ զեղբայրն իմ, եւ զսոցին հարան զԽայաթ՝ զիտխեցեալն առ Քրիստոս՝ զուգակիցն իմ։ Արդ, կրկին աղաչեմ ձեզ, սրտի մտաւք յիշել զվերոյգրեալսդ, և դուք յիշեալ լիջիք առաջի Քրիստոսի աստուծոյ մերոյ, որ է աւր[հ]նեալ յաւիտեանս, ամէն։ Նայև զԳրիգոր քահանայ յիշեսջիք ի տէր մեր, որ զօրինակն շնորհեաց, եւ անմեղադիր լերուք, ով սուրբ հայրք, վասն անարժանութեան գրոյս եւ սղալանացս, որ ի սմա, զի կայր իմ այսչափ էր, եւ չէի տեղեակ այսմ արհեստի, այլ հարկէ և փափաքանաց սրտիս համարձակեցայ ի սմա եւ նոյն ինքս պարգեւեաց ինձ ի կատար ելանել սմա, ի փառս սուրբ երրորդութեան, որ է աւրհնեալ յամենայն բերանոյ, ամէն։

(«Հանդէս ամսօրեայ», 1895, էջ 304։ Գր. Գովրիկյան, Դրանս. Հայոց մետրապոլիսք, 1896, էջ 329—331։ Լ. Խաչիկյան, ԺԴ դարի հայ. ձեռ. հիշատակարաններ, Երևան, 1950, էջ 350—351։ Տե՛ս նաև. Ion Apostol Popescu, In jurul unui „Evangheliar" din 1346 *(1346 թ. դրված մի Ավետարանի շուրջ).* „Steaua", Cluj, 1959, febr. p. 106—108)։

4 (19)

ՄԱՇՏՈՑ

ՊԼԱ—1382 թ.

364 էջ։ 15,5×10, 6։ Թուղթ։ Բոլորագիր։
Միապայան։ Տողեր՝ 17 և այլն։

Հիշատակարան

Գրչի

184 թ Փա՛ռք... Գրեցաւ Մաշթոցս ի թվ. Հայոց ՊԼԱ (1382) ձեռամբ Կարապետ քահանայի անարժանի և կատ[արեցաւ] ի փառս աստուծոյ:

5 (18)

Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն

Կիլիկիա: Սուչավա *ԺԴ դար, ՌՃՀ—1659 թ.*

Ա. մասի գրիչ՝ *Յովհաննէս:* Սպացող՝ *վարդան վարդապետ:* Ծաղկող՝ *Սարգիս Պիծա՞կ:* Բ մասի գրիչ՝ *Աւետիք սարկաւագ (1659 թ.):* Կազմող՝ *Միքայէլ (1664 թ.):* 704 էջ: Չեռագրի հնագույն կնիք՝ մագաղաթ, իսկ երկրորդ կնիք՝ թուղթ: 17×12,5: Երկսյուն: Տողեր՝ 17—18: Մաճառանկարչություն՝ երկու խորաններ և Մարկոս ավետարանիչի մանրանկարը (ԺԴ դ.): Մնացյալ խորանները 1659 թ.:

Հ ի շ ա տ ա կ ա ր ա ն

Հնագույն մասի գրչի և սպացողի

Ա.

Չսպացաւ սուրբ Աւետարանիս զվարդան եպիսկոպոս եւ զհայրն իւր զվասիլ քահանայ, եւ զեղբայր իւր զՍտեփանոս քահանայ յիշեցէք ի աէր, ծնողաւ եւ զարմիւք եւ բոզութիւն յաստուծոյ խնդրեցէք: Եւ որք յիսոյ ժառանգէք՝ զառաջնոյն անուն մի՛ ջնջէք եւ զձևրն գրէք: Չի անթողի մեղք է: Եւ որք յիշէքդ եւ աէր զձևդ յիշէ եւ որ ասեն ամէն:

Բ

Տէր Վարդան չգիտեմ թէ այնելն է՝ թարկիք, թէ չայնելն, չունիմ լոյս յաչքս:

Գ

Տառապեալս Յովհաննէս, եւ յաշխարհիս ծով անթիւ մեղաւորս, հրամանաւ Վարդան եպիսկոպոսի գրեցի զաստուածաւանդ Աւետարանս: Թէպէտ եւ անարժան էի այսմ ձեռնարկութեան, այլ կանխագոյն գրաւեաց զիս պատուական աէր Վարդան եպիսկոպոսի եւ առացաւ զսա ի ներկեալ մեղօք ձեռաց, որում աէր վայելել տայ եւ հանդիպողացդ մաղթեմ չդնել աւելի մեղ, այլ ներել իբր կուրի, զի հարկ է զերազունիս յաղթեալ սկսայ եւ ոչ կարեմ լծընկեց լինել, յաստուած յուսով աւարտել փութամ:

Դ

Նոր մասի գրչի և կազմողի

Փա՛ռք... ի թուաբերութեան հռոմայեցոց ՌՃՀ (1659) և օգոստոս ամսոյն Բ (2)-ըն գրեցաւ ընդ հովանեաւ սո դուռս սուրբ խաչին ի հայրապետութեան աէր Յակոբին և առաջնորդութեան Սահակին և թագաւորութեան կիզայինն[1]:

[1] Խոսքը վերաբերում է Մոլդովայի իշխան Գեորգե Դիկայինն (իշխել է 1658 թ. մարտի 3—1659 թ. նոյ-ի 2):

Ի յայսմ ժամանակի գրեցաւ, զկէս Աւետարանն երկու զրլուխն ամենապովելի և հռչակելի զերակատար և զերապանծ պաշտելի և երկրպագելի սուրբ Աւետարանս ձեռամբ մեղաւք լըցեալ և անպիտան ոգւոյ Աւետիք սարկաւագի և եմ որդի Մինաս եպիսկոպոսի Սեչովցի, որ զինքն զազախնին սպանեցին։ Եւ զերկու գլուխ Աւետարանն զազախի ձեռաց ի զերութենէ ազատեցին այս տասն եղբարբս, որ են անուամբք այսորիկ. տէր Սիմոն աւագերիցոյ որդի, Մանուկ վաթահ, Կիւրեղ վաթահ, Ասվատուր վաթահ, Մանուկ Գրիգոր վօթին, Խութլուշ Գրիգորին, Միքաէլ Դաւթին, Յովանէ[ս]ն էնպէկին, Խաչատուրն Յովաննէսին, Պուկատան Նիկօլին։

Ե

Ես անարժան մեղօք զառածեալ Միքայէլ երէցս Երզնկացի եկա ի Պուղատանաց երկիրն ի Սեչով քաղաքն թվ. ՌՃԺԳ (1664)-ին, զսուրբ Աւետարանս կազմել տվին // այս տասն եղբարբս և եղին յիշատակ ի դուռն սուրբ Աւգէնդի վանացն՝ իւրեանց ծնողացն հոգւոյն, ամէն։

Զկազմող Միքայէլ երէցս յիշեցէք միով հայր մեղային. յորժամ ընթեռնուք զսուրբ Աւետարանս, և Աստուած ըզ[ձեզ] յիշէ իւր միւս անգամ գալստեանն, ամէն։ Հայր մեր, որ։

(Գր. Գովրիկյանը վերոհիշյալ իր ուսումնասիրության մեջ, էջ 336, բերել է Դ. հիշատակագրությունը հետևյալ սխալ ընթերցումով «...ձեռամբ... Աւետիք սարկաւագի եւ իմ որդի Մինաս եպիսկոպոսի Սեչովցի...» փոխանակ կարդալու. «...եւ եմ որդի Մինաս եպիսկոպոսի...)։ Այստեղից էլ նա սխալ եզրակացության է հասել, թե՝ որ նշնշացված մասը իբր լրացրել են «Աւետիք սարկաւագն ու իր որդին՝ Մինաս եպիսկոպոս սուշավացին»։

6 (23)

ՇԱՐԱԿՆՈՑ ԵՒ ՊԱՐՋԱՏՈՄԱՐ

Կամենի՞ց *ՌԺԴ—1565, 1634—1638 թթ.*

14,2×10։ Գրիչ պարզաատմարի՝ Ագանդ, տէր Գրիգորի ավաքիրէց օղլու։ Նոտրագիր։ Թուղթ։ Միասյուն։ Տողեր՝ 17։ Մանրանկարչություն՝ խորան, գլխապարդ, լուսանցազարդ և զարդագիր։

Հիշատակարան-հիշատակագրություն պարզաատմարի (*Հայատառ գիշատիչներին*)։

Ա

ՌԺԴ (1565)։

Բ

ՌՀԴ (1634)։

Գ

Պու պարզաատմար սրմախթովլու քէրաքլի տիր տա քօրքլու տա հար եըլտա պոլկանը նէքի պարքէնտինտա զարըլըքըր, տա պարչա նէմանը աչըխ քօրկուզուզուր։ Եւքն երրեակտան պաշլանըր ֆրանգ այլարը պիլա իշլանըր

Ննունդ բարկենդաքինա տիրա, նըլը դուկանլանիր։ Նանա պաշտան պաշլանըր։ Իմաստունքլար հասաբ դուզուրդուրլար, ինճի քիպիք պուզուվ սուզ, չախ պիչ քէնկրինինկ գէլկանինա սիրա մննկի մննկիլիք։

Քիմ քի խուզլանկայ տա իշլադրայ պուն ու նաղկաննը տա նաղտըրկաննը անկմակա արղանի էդքայ պիր հայր մեր չերկինա պիլա։

Ա պիչ քէնկրիդա անը քէնոի նարլղամախը պիլա անկայ ամէն[1]։

Դ

Նաղըխլը նաղկան պու պիթիքնի Ագսէնդ տէր Գրիգոր ավաքներէց օղու նաղըլաը թվ. ՌՁէ (1638)-սինա[2]։

(Տեր Գրիգոր ավագներեցն ու նրա որդի Ագսենդը եղել են Հայոնի Կամենեցյան առիեգրության հեղինակներից. տե՛ս Ղ. Ալիշան, Կամենից առիեգիրք հայոց Լեհաստանի և Ռումենիոյ. Հաւաստիայ յաւելուածովք, Վենետիկ, 1896, էջ 3 և 108)։

7 (14)

ՄԱՇՏՈՑ

Ընտաղէմ ՌԼԲ—1590 թ.

Գրիչ՝ Մշեցի Աստուածատուր։ Փրկող՝ Նիկող որդի Նիկոլին (1655 թ., Սուչավա)։ Թերթ՝ 252։ Թուղթ։ 19,3×14,8։ Բոլորագիր։ Միասյուն։ Տողեր՝ 16։

Հիշատակարան-հիշատակագրություններ

Ա

Գրչի

236բ Աբդ ես տրուպ և մեղաւոր անարժան և անպիտան մոխրաթաւալ և մեղաւը մեռեալ Մշեցի Աստուածատուր սպասաւոր ամենայն յիտնոցս յիշեցէք առ Քրիստոս։ Այլ և ուսուցչին՝ հոգևոր հաւրն իմոյ տէր Ղազար Հայրապետին և տէր վ[ա]ր[դա]պետ Մակար կրօնաւորին, որ առ աստուած փոխեցան և պիս զանարժանս յայնշափ արժանաւորութիւնս հասուցին։ Միածին որդին աստուած հատուցէ տէր աստուած զվարձս ըստ վաստակոց նոցա յահեղ ատենին Քրիստոսի թվին հայոց ՌԼԲ (1590) յունիս ամսոյ ԻԸ (28) աւարտեցօ ի աս-

1 Հայերեն թարգմանությունը. «Սույն պարզաստմարը ցանկալի, կարևոր և պեղնցիկ, բովանդակում է յուրաքանչյուր տարվա պատահարները և պարզ ցույց է տալիս ամեն ինչ։ Սկսվում է յոթ երրյակից և գնում է հռոմեական ամիսներով։ Մինչև Ննունդի Բարեկենդանը՝ տարին ավարտվում է և սկսվում է նորից։ Իմաստունները այն կազմեցին և նա մարգարիտի նման անթների է մինչև տեր Աստուծո գալուստը, հավիտյանս ամեն։ Ով որ օգտագործի այս, գրողին և գրել տվողին հիշման արժանի անի մի «Հայր մեր (որ) չերկինա»-ով։

Իսկ Տեր Աստվածն էլ իր ողորմությամբ նրան հիշի, ամեն»։

Դ

2 Բրգմ. «Այս գրքի մեղավոր գրողն տեր Գրիգոր ավագներեցի որդի Ագսենտն է. գրվից 1087 (1638) թվականին»։

Ծանոթ. Վիշապներենից սույն թարգմանությունը, ինչպես նաև ցուցակի այլ մասերում եղող հունգարերենից թարգմանությունները կատարել է Հունգարիայի Հայոնի դիշապագետ և հայագետ դոկտ. էդմոնդ Շյուցը, որին և հայտնում ենք մեր խորին շնորհակալությունը։

առաջակոխ սուրբ քա[զա]քն Երուսաղէմ ի տաճարն սրբոյն Յակոբայ յիշատակ լիցի տէր Յովանէսին, զոր տէր աստուած բարով խաղաղութեամբ վայելել տացէ իւր և իւր ծնաւղացն։

Բ

Փրկողի

236բ *Դարձեալ ես Նիգողս Նիկօլին որդին գնեցին զաղաքին Թաթն շուն էաև իմ հալալ հախօվս ու դրի Սուրբ խաչն թվ. ՌՃԴ (1655)։*

Գ

252 *Ես Նիգողս որդի Նիկօլին գնեցի իմ հալալ-հախովս ես գերութեան զաղաքնուն ու տվի յիշատակ այլվի Սուրբ խաչն հկեղեցին թվ. ՌՃԴ (1655)։*

8 (15)

ՄԱՇՏՈՑ

Սուչա՞վա *ԺԶ—ԺԷ դդ.*

Թերք՝ *308։18,8×13,8։* Թուղթ։ Բոլորագիր։ Միասյուն։ Տողեր՝ *16։*

Հիշատակագրություններ (հետագայի)

Ա

Աստուած ողորմի Մարտիրոսին հոգոյն հանկեաւ առ Աստուած թվվին ՌՃԻԵ (1676) հոկտեմբերի ԺՔ (18) օրն դշբի (չորեքշաբթի), մէկ տարի մն ի հիւանդութեան կեցաւ, տարէն վերա մեռաւ, ինչ օր հիւանդացաւ այն օրն մեռաւ։ Ջանպաղան, զանապաղան կուս Մարիա ///

Բ

Աստուած ողորմի վարդիկին կըտրճներուն հախնին սևան...

Գ

Հայատառ ռումիներեն գրվածք՝ «Միլուտիվէ տօմն է...» (Տէր ողորմեա)։

9 (8)

ՄԱՇՏՈՑ

Սուչավա *ՌՈՓ—1603 թ.*

Գրիչ և ծաղկող՝ *Աբրահամ Սէջովցի։* Թերք՝ *301։ 21×16,5։* Թուղթ։ Բոլորագիր և մասամբ շեղագիր։ Միասյուն։ Տողեր՝ *19։*

Հիշատակարան, հիշատակագրություն

Ա

Գրչի

497 *Ո՛, ո՛, ո՛, անարժան և մեղօք ի լի և ամենայն գործքըս չար զտէր Աբրահամ մեղաւոր կրօնաւորս Սէջովցի յիշեսջիք ի մաքրա-*

փայլ աղօթս, ձեր, որ զսա գրեցի և ծաղկեց[ի] և ըստ կարեաց իմոց ի թվին ՌՃՔ (1603), և յիշողն յիշեալ լիցի ի միւսանգամ գալըստեանն Քրիստոսի, փառք յաւիտեանս, ամէն։

Բ

Այլ աճձի

Թվ. ՌՃ ու կէ (1718) ես կոկ. [Լուսիկ] որ եմ որդի Վասիլի Վրծներէազուլ գրեցաւ ի Կուր ///

10 (10)

Շ Ա Ր Ա Կ Ա Ն

Սուչավա *ՌՀէ—1628 թ.*

Գրիչ՝ *Սարգիս Մելտենցի։* Ծաղկող և խազող՝ *Սրապիոն Բարբրթացի։* Ստացող՝ *եկեղեցական խոճայ Նիկօլ։* էջ *488։ 21,5×15,5։ Բուլորագիր։ Թուղթ։ Միասյուն։* Տողեր՝ *21։* Մաճառաձկարչություն՝ *զվարդարդ, լուսանցազարդ և զարդագիր (բուսական)։*

Հիշատակարան

Ա.

Գրչի

130 Ո՛հ զՍարգիսըս անպիտան,
Մեղաց գերիս և չարաբան,
Բընաւ յիշման չեմ ես արժան
Վասն մեղացս, որ առ իս կան։
Եկեղեցոյ մանկունդ, որ կան,
Յորժամ հընչէք դուք քաղցրաձայն,
Զձայնըս բոլոր զամէնն ի լման,
Յիշման արէք դուք զիս արժան։
Ո՛վ որ զմեզ սըրտով յիշէ՝
Քրիստոս աստուած զինքն աւրհնէ,
Անճառ խոստմանց արժան առնէ,
Որ իւր սրբոցըն խոստացեալ է.
Փառք աստուծոյ, ամէն։

Բ

236 Ո՛հ զմեղաց գերիս,
Զյունայնացեալս առ ի բարիս,
Եւ զարաքս ի չարիս,
Ըզնուաստս ամենայնի՝
ԶՍարգիս զրպիրըս Մելտենցի
Յիշեցէք միով ողորմեաիւ,
Յիշողդ յիշեալ լիցիք ի Քրիստոսէ, ամէն։

Ի թվականութեան հայոց ՌՀէ (1628)։

Գ

435 Փա՛ռք... Արդ գրեցաւ եղանակաւոր տառս, որ կոչի ձայնքաղ, ի լաւ և ընդիր աւրինակէ, ձեռամբ յոգնամեղ և մեղսամած փցուն Սարգիս գրչի Մելտենցւոյ, ի յերկիրն Օլախաց, ի քաղաքն որ կոչի Սէչով, ընդ հովանեաւ Սուրբ Օգսէնդի վանիցն և առ ոտն Սուրբ Լուսաւորչին, ի Կաթողիկոսութեան տէր [ ][1] և յառաջնորդութեան տէր Ղազար վարդապետին և երեսփոխանութեան խոճայ Մերիկին և թագաւորութեան Միրօն վոյվոտային[2] և աւատէրէցութեան տէր Անդրիասին։

Որք աստուածային սիրոյն հրովն վառեալ են՝ միշտ փութան բարի և աստուծոյ հաճելի յիշատակ յաշխարհի թողուլ։ Որպէս և սի-
436 րելիս Աստուծոյ եկեղեցական խոճայ // Նիկօլն, որ և առացաւ զայս ձայնքաղս իւր հալալ ընչիցն և ապրանացն իւրն յիշատակ և ծնողացն՝ հօրն Նուրատինին և մօրն Ոսկիհատին /// և իւր որդոյն Նիգօշին /// րկին և ամենայն արեան մերձաւորացն, ո[րք] /// են հանդուցեալ, ամէն, որ և եւս զսա յիշատակ ի Սուրբ Խաչ եկեղեցին. ով որ չունի իշխանութիւն հանել զսա ի դրանէ սուրբ եկեղեցոյս։ Դարձեալ յիշեցէք ի սուրբ աղօթս ձեր, ով զասք քահանայից և ուսումնասէր սարկաւագացդ, ով որ հանդիպիք սմա կամ օրինակելով կամ ընթեռնելով, յիշեցէք զծաղկող և զխազող սորա զնըւաստս ի բարեաց և զեռնեալս ի գրչագրաց զՍրապիոնս Բաբերթացի միով ողորմեայիւ։ Եւ զառաւաղեալս և զեռնեալս ամենայն բարեաց զծոյլս ի բարին և զարագս ի չարին, զհողս և զփոշիս, զՍարգիս գրիչս յիշեցէք ի աէր։

Արդ, երես անկեալ աղաչեմք զձեզ, անմեղադիր լերուք խոշորութեան և սրղալանաց գրոյս, զի կար մեր այս էր։

437 Մանաւանդ յիշեցէք ի սրբափայլ աղօթս ձեր երեսփոխան խոճայ Մերիկն, որ զօրինակն շնորհեց, և որ առատն է ի տուրս բարեաց՝ ձեզ յիշ[ո]ղացդ և մեզ /// առատ ողորմութեամբ։

Դ

Այլ աճեի

Ուսէփ Պօղոսին է առ Թղթբ. 1840։

11 (1)

ՅԱՅՍՄԱՒՈՒՐՔ

Սուչավա ՌՀԸ—1629 թ.

Գրիչներ՝ Սարգիս Մելիտենցի և Սրապիոն Բաբերդացի։ Ստացող՝ Տէր Նիկողայոս։ Փրկող՝ Ակնցի Սայճի Փիրուխան, վասիլ (ժէ դ.)։ Թուղթ։ էջ՝ 1152։ 40,5×26։ Բոլորագիր։ կազմ՝ կաշեկազմ։ Վի-

1 Ազատ տեղ է բաց թողնված կաթողիկոսի անունը լրացնելու համար։

2 Միրոն Բարնովսկի—Մովիլը, իշխան Մոլդովայի (1626 թ. հունվ—1629 թ. օգոստ-ի 30)։

ճակ՝ տեղ-տեղ, հատկապես գլխավոր հիշատակարանի մի մասը վարակված է անկային հիվանդությամբ: Մաճառանկարչություն՝ խոտան՝ բուսական զարդերով, լուսանցազարդեր և զարդագրեր: Երկայուն: Տողեր՝ 37:

Հիշատակարան

Սարգիս գրչի

Ա

303 *Յայսմ աւուր ըմպանաղ է. եւ զինչ այսօրս լինի՝ ձմեռն այնպէս անցանէ, թէ ջեր եւ թէ ցուրտ, թէ պաղ եւ թէ ամպ: Յիշեցէք ի Քրիստոս զուսուցիչ վարպետն իմ, զԿամենիցցի Յոհան, որ բազում աշխատութեամբ ուսոյց մեզ արհեստ:*

Բ

631 *...Ողորմի Քրիստոս աստուած ստացողի գրոցս տէր Նիկողայոսի եւ ծնողացն Պարոն Վարդին...: Եւ անպիտան գրչի Սարգիս զպրին... Եւ վարժապետին Յոհան զպրին... Կարողութեամբն աստուծոյ եւ միջնորդութեամբ սրբոցս սկսաք սուրբ գիրքս եւ վերջացաւ ի յայսմ վայրի իմում բաժին: Եւ ի յայսմ տեղւոջէս յաւարտ եհան հոգիւոր ծնողքն մեր և իրատատուն Սրապիոն զպիրն, զոր եւ շուտով յաւարտեցաք ի թվականութեանս Հայոց ՌՀՀ (1629) ամին:*

Գ

Սրապիոն գրչի

749 *...Ողորմի Քրիստոս աստուած ստացողի գրոցս տէր Նիկողայոսին եւ ծնողացն պարոն Վարդին, խաթունշային եւ կողակցոյն Կուլպահարին, եւ զաւերացն Ճաշխաթունին, Օղիտային եւ եղբարցն մահտեսի Գասպարին, Ալեքսիանոսին, Սիրունին, Միրիճանին, եւ կողակցուն Սիրմային, եւ զամերն Հռիփսիմէին, եւ ամենայն արեան մերձաւորացն, եւ միջնորդի սորա Վարդազատին, որ եղեւ պատճառ Յայսմաւուրքիս, եւ անարժան գրչի Սրապիոնի եւ կողակցուն Մարթային, կարդացողացս եւ լսողացդ եւ որ ողորմիան ասէ, ամէն...*

Դ

...Որոց աղօթիւքն ողորմի Քրիստոս աստուած ստացողի գրոցս տէր Նիկողայոսին և ծնօղացն պարոն Վարդին, խաթունշային, և կողակցուն Կուլպահարին, զաւերացն Ճաշխաթունին, Օղիտային, և եղբարցն Ալեքսիանոսին, Մովսէսին, Գասպարին, Սիրունին, Միրիճանին, և կողակցուն Սիրմային, զամերն Հռիփսիմէին, և եղբօր որդոյն Վարդազարին, որ եղև պատճառ Յայսմաւուրքիս, և ամե-

նայն մերձաւորացն, և անպիտան գրչի Սրապիոնի և ուսուցչին իմոյ Հիզանցի մահտեսի տէր Խաչատուր քահանային, արի և քաջ քարտուղարանի, նաև ծնողաց իմոց, և հոգևոր եղբօր մերոյ Սարգիս դպրի Մելտենեցոյ, որ բազմաջան քրտամբ կոկեց զԲուղքն Յայսմաւուրքիս, կարդացողաց և լսողացդ և որ զողորմիան, ամէն։

ե

Գլխավոր նիշատակարան

1148 ...Վասն որոյ ցանկացող եղեալ սուրբ գրոցս տէր Նիկողայոս քահանայն եւ եկեալ ի միտս իւր եւ լուեալ զբան տէրունական ձայնին, զոր եւ հրամայէ, թէ Նմանեցաւ արքայութիւնն երկնից առն վաճառականի, որ խնդրիցէ մարգարիտս գեղեցիկս և գտեալ մի պատուական մարգարիտ, երթեալ վաճառեաց զամենայն ինչ, զոր ունէր եւ գնեաց զայն մարգարիտն։ Նոյնպէս եւ այս տէր Նիկողայոս քահանայ զայն հրաման առեալ եւ եդ յոյս յանձին եւ հետեւեցաւ սուրբ գրոցս, որ կոչի Յայսմաւուրք եւ զամենայն մարմնական ինչ առ ոչինչ համարեալ, վաճառեաց զինչս ամենայն ի հալալ յարդուննաց իւրոց եւ առացաւ զայս անառիկ եւ անդին մարգարիտ յիշատակ հոգւոյ իւր եւ նախնեացն իւրոց՝ պապոյն էխտիարին եւ իւր պապին Շահրիարին եւ մամոյն Փաշային, հօրն պարոն Վարդին եւ մօրն Խաթունշային, կողակցուն Կուլպահարին եւ քրւերն Փաշային, Օղիտային, փեսին Խաչիջին եւ քրւերն Փաշային եւ եղբարցն մահտեսի Գասպարին եւ կողակցուն Խանզատային եւ իւր որդոյն Վարդապատին եւ կողակցուն Վարդիկին, որդոյն Մարտիրոսին եւ Գասպարին, միւս որդոյն Յոհաննէսին, որ յայսմ ամի փոխեցաւ առ աստուած եւ կողակցուն Շահմելիքին, երկրորդ հղբօրն Ալէքսիանոսին, կողակցուն Ջիհանին, Նազիկին, Թուրմանտային եւ որդոյն Խաչատուրին, երրորդ եղբօրն Մխիճանին եւ կողակցուն Սիրմային, որդոցն Մելքոնին, Կիրակոսին, Պօղոսին, Խաչերսին, Աբիսաագէսին միւս Աբիսաագէսին, Մեսրոպին, Պապաճանին եւ դստերն Հռիփսիմէին։ Չորրորդ եղբօրն Սիրունին եւ ամենայն արեան մերձաւորացն, կենդանեացն եւ հանգուցելոցն, որ առ Քրիստոս են փոխեցեալ, վասն որոյ աղաչեմք զամենեսեան, որք հանդիպիք սմա կարդալով կամ օրինակելով եւ կամ հարեւանցի տեսանելով՝ յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր զտէր Նիկողայոսն հանդերձ ամենայն զարմիւք, եւ դուք յիշողքդ յիշեալ լիջիք ի Քրիստոսէ Աստուծոյ մերոյ, այժմ եւ անդրաւ յաւիտեանս յաւիտենից, ամէն։

Արդ, գրեցաւ սուրբ գիրքս Հարանց, որ կոչի Յայսմաւուրք ի թուականութեանս հայկական տոմի ՌՀԸ-ին (1629), կաթողիկոսութեան էջմիածնայ տեառն տէր [ ][1], առաջնորդութեան Օլախաց երկրի տէր Ղազար վարդապետին, աւագերէցութեան տէր Անդրէասին եւ երէցփոխանութեան պարոն Ծերիկին եւ այլ քահանայիցն տէր Յովաննէսին, տէր Ղուկասին, տէր Ղազարին, տէր վար-

1 Ազատ տեղ է բաց թողնված կաթողիկոսի անունը լրացնելու համար։

դանին, տէր Աւետիքին, տէր տէր Սիմէոնին, նորընծայիցն՝ տէր Աստուածատուրին, եւ միւս տէր յԱստուածատուրին, տէր Մովսէսին։ Եւ թագաւորութեան [ ][1] պարոնին Գրիգոր երկիրս Օլախաց, ի քաղաքս Սէչօվ, ընդ հովանաւ վանուրէից Սուրբ Հաճկատարի եւ Սուրբ Ըստեփանոսեանցն եւ Սուրբ Լուսաւորչին, քանզի սկիզբն ի Հաճկատարն արաք եւ յատարան ի Սուրբ Օգսէնտ։ Զեռամբ անարժանիցս մեղապարտ Սրապիոնի եւ յոտքամ Սարգիս դպրի, ի խնդրոյ տէր Նկողայոս քահանային, որ է աստ երկրէն Բարերթու ի գեղջէն Հընտէու։ Արդ, աղաչեմք զձեզ մանկունք նալելի մօրն մերոյ Սիոնի, սուրբ քահանայդ պատուելի, որ էք տեսուչ ժողովրդի, որ պատահիք սուրբ գրոցս՝ յիշեսջիք ի մաքրափայլ յաղօթս ձեր զՍրապիոն եւ զյուսացուցիչն իմ զմէյտէսի տէր Խաչատուր արի և քաջ քարոզարանն Հիղանեցի, որ բազում աշխատութեամբ և գործադոյթ սիրով հասոյց բիրտ եւ հաստատամիտս ի յարուեստ գրչութեան, զփոխարէն ի Քրիստոսէ տացէ ամին։

Դարձեալ յիշեսջիք ի սուրբ աննկեալ եւ զուխս ի գետին դնելով, ո՛վ դասքն քահանայից եւ ուսումնասէր սարկաւագունք, յորժամ ընթեռնուցուք զպատմութիւնն սուրբ հայրապետաց և նահատակութիւնս սուրբ մարտիրոսաց, յիշեսջիք ի յաղօթս ձեր անպիտան հողս եւ փոշի զՍրապիոն գծողս Բարերթացի և զհայրն իմ Ջանումն, և զմայրն իմ Շահփայշայն, զքոյրն իմ Լուսխաթունն, փոքր եղբայրն իմ Գրիգորն, որք են հանգուցեալ առ Քրիստոս, և կենդանի եղբայրն իմ պարոն Յակոբն, զկողակիցս իմ զՄարթայն, և որդիքս Յակոբն և Աքսէնտն՝ հանդերձ ամենայն զարմիւք իմովք, ամէն։

Դարձեալ յիշեսջիք ի սրաթռիչ յաղօթս ձեր, ով դասք լոյսերամից քահանայդ աստուածային սուրբ եւ մաքուր ընտրեալ դասին, ո՛վ մանկունք Սիոնի եւ ուսումնակիցք մեր, որք հանդիպիք այս սուրբ գրոցս կարդալով կամ օրինակելով։ Արդ ես նըւաստս ամենայնի եւ զառածեալս մեղօք ի լի, գծոյլս ի բարին եւ զյարագս ի չարին, աստանուն Սարգիս դպիրս՝ գծողս աղերսեմ ի ձեզանէ յիշել ի տէր՝ զյուսացուցիչն իմ զՅովանըն դպիրն, որ բազում ջանիւ եւ աշխատանօք զվրիպեալն եւ զանհմաստս, բանձրամիտս եւ յեռնեալս ուսոյց արհեստ՝ գրչութեան. միայն փոխարէն հատուսցէ տէր աստուած երախտիցն իւրոյ հարիւրապատիկ ի հանդերձեալ կեանսն, ամէն։ Դարձեալ յիշեսջիք ի մաքուր յաղօթս ձեր զհայրն իմ զմահտեսի տէր Յոհաննէս քահանայն, եւ զմայրն իմ Զարդարն, եւ զքոյրս Գուլվարդն, եւ զեղբայրսն իմ Գասպարն, Կիրակոսն, Մելքոնն, Թորոսն եւ ամենայն արեան մերձաւորքն իմ զկենդանիս եւ զհանգուցեալսն առ Քրիստոս, ամէն։

Աւարտեցաւ սուրբ գիրքս ի դառն եւ ի դիժար ժամանակիս եւ ի ձմերացեալ յաւուրս վերջին ևկն ի վերայ մեր բարկութիւնն աստուծոյ, վասն ծուլացեալ մեղաց մերոց յարեանն յաղտն անհաւատից, զոր եւ անօրէնն, անագորոն եւ գազանաբարոյ քարապահանջ

1 Ազատ տեղ է թողնված, քանի որ հիշատակարանի գրման ժամանակ գահակալական պայքար էր գնում, և դեռ Մոլդովան իշխան չուներ։

բռնաւոր, կոչին նեռողք, որ է Թաթարն՝ եկեալ մտին երկիրն Իլախաց յաւար առնել: Որ եւ բազում քաղաքս եւ գեղս տապալեցին եւ զրաղումս գերեցուցին, յետոյ եկեալ ազգն Իլախաց բազում զօրօք ի վերայ նոցա, զգերիքն Թափեցին եւ զբազումս սրախողխող արարին. եւ կէսքն իրրեւ զխոզ վարեալ տարան ի Թախթն գռալին. եւ մնացեալքն եկին փախստական երկիրս Օլախաց եւ վրդովեցուցին երկիրս զայս. եւ զրազումս գերի առեալ տարան: Եւ յետ երից եւ չորից աւուրց անցանելոյ նոցա՝ եկն եհաս եւ այլ չարագոյն բօթ, թէ ահա Միրօն պարոնն[1] ժողովեալ է բազում Ղազախ եւ կուգայ ի վերայ միւս պարոնին: Եւ ահա կատարեցաւ բանն սէրունական, որ ասէ թէ Տուն Բ(2) բաժանեալ աւերեսցի, վասն որոյ մեծամեծքն Միրոն պարոնին զալպեցին զնա, որ եկեալ փախստեամբ գնաց նստաւ ի բերդն Խօթինու եւ երկիրս անտիրացաւ ի Թագաւորաց Դ(4) ամիս, յետոյ եկն որդին յՀռաստօլ պարոնին[2], տղա գոլով նստաւ ի նաշ քաղաքին աթոռ Թագաւորութեանն, քան յայնմ, որ ասէ, թէ Աստուած որ բարկանայ ի վերայ երկրի մանուկ Թագաւոր առաքէ նոցա եւ տղայ առաջնորդ: Ահա կատարեցաւ բանքս այս ի վերայ Օլախաց երկրիս, զի նախարարքն սորա ինչպես որ կամեցան այնպէս կու կողոպտեն երկիրս այս: Վասն այսորիկ հրամայէ կայծակնամաքուր մարգարէն յնսայի՝ Ամենայն անձինք ի ցաւ եւ ամենայն սիրտ ի տրտմութիւն եւ չիք առողջութիւն ոտից մինչեւ ցգլուխ: Եւ քնարերգուն մարգարէն Դաւիթ ասէ ի յերգս, թէ Այս ամենայն եկն ի վերայ մեր վասն մեղաց մերոց: Բաւեխօսութեամբ սրբոցս որ կան ի տփին յայսմիկ աստուած խաղաղութիւն տացէ երկրի եւ Թագաւորաց հաշտելութիւն: Արդ, աղաչեմք զձեզ, հայրք եւ եղբայրք, յիշել ի տէր միով ողորմեալին եւ աստուած, որ առատն է ի տուրս բարեաց, ձեզ յիշողացդ եւ մեզ յիշելոցս ողորմեսցի ի միւս անգամ գալստեանն, ամէն:

(Շարունակութեան մէջ մեծարանքի տողեր կան նվիրված Յայսմաւուրքի կազմողներից Գրիգոր Մխրենց վարդապետին, որին հաջորդում է ստորև բերվող չափածո հիշատակագրությունը):

Զ

Դարձեալ հայցեմք սուրբքըդ բաբի,
Ոչ մոռանայք ծառայքս գերի՝
Սրապիոն Բաբերթացի
Եւ զՍարգիսըն Մելտենցի:
Ո՛վ քահանայքդ նազելի
Եւ սպասաւորք սուրբ տաճարի,

1 Միրոն Բարնովսկի-Մովիլն եղել է Մոլդովայի իշխան 1626 թ. հունվ.— 1629 թ. օգոս. 30:

2 Հռաստօլ պարոնը Ռադու Միհնեան է, որը եղել է չորս անգամ Վալաքիայի և երկու անգամ էլ իշխան Մոլդովայի (1601—1626): Վերևում հիշված դեռատի իշխանը Ալեքսանդրու Կոկոնուն է, որը եղել է իշխան Մոլդովայի (1629—1630 տպր. 29):

Յիշման առէք զմեզ արժանի,
Որ եմք անձամբքս մեղօք ի լի։
Զձեզ աղաչեմք մանկունք բարի,
Սարկաւագունք նոր Սիոնի,
Դուք հայցեցէք տեառնէն ձրի,
Որ թողութիւն մեզ պարգեւի։
Սուրբ քահանայքդ հոգելի,
Դուք նմանողք էք հրեշտակի,
Միջնորդ լերուք տեառն Յիսուսի,
Մեղանքն մեր ոչ յիշեսցի։
Եւ տրուպ Սրապս Բարերթացի
Զձեզ աղաչեմ արտասուելի,
Ո՛վ սուրբ հայրդ նազելի,
Յիշել զծնօղքս իմ ի բարի։
Եւ հօրն իմոյ Զանում ասի,
Եւ մօրն իմոյ Շահփաշայի,
Եղբօրս իմոյ, Յակոբ կոչի
Եւ միւսոյն՝ Գրիգոր ասի։
Եւ կողակցոյս իմ Մարթայի,
Որդւոյս իմոյ Յակոբ ասի
Եւ միւսոյն Աբսենդ կոչի,
Եւ իմ արեան մերձաւորի։
Զմեղօք լցեալ ամենայնի
Եւ դիպերեալս մէջ աշխարհի,
Զտրուպ հոգս եւ փոշի՝
Սարգիս գպիրս Մալաթեացի։
Զձեզ աղերսեմ, սուրբքդ արի,
Որք հանդիպիք յայսմ տառի,
Եւ ընթեռնուք սիրով սըրտի,
Դուք ասացէք տէրն ողորմի։
Եւ իմ նախնեաց ամենայնի
Եւ ծնողացն իմ հոգելի,
Որ դիս ծնան մեղօք գերի
Եւ անուցին մէջ աշխարհի։
Եւ հօրն իմոյ քահանայի
Տէր Յովաննէս անուն կոչի,
Նահատակեալ ի մէջ երկրի,
Յաւազակաց ձեռք խողխողի։
Եւ մօրն իմոյ Զարդար ասի,
Որ եղեալ կայ գերեզմանի,
Քրւեր իմոյ Կուլվարդ կոչի,
Ինքըն մարմնով կայ կենդանի։
Եւ իմ եղբարցս չորրորդի,
Որք են առողջ մարմնով յերկրի,
Պաղատեցէք տեառն Յիսուսի,

Զի թողութիւն նոցա լիցի։
Նախ եւ յառաջն Գասպարի
Եւ երկրորդին Կիրակոսի,
Եւ միւսոյն Մելքոն կոչի
Եւ չորրորդին Թորոս յորջի։
Եւ իմ արեան մերձաւորի,
Որ կան եղեալ հող տապանի,
Զի թողութիւն նոցա լիցի
Ի յարութեան յաւուր վերջի։
Եւ կենդանեաց յայսմ աշխարհի
Կացցեն ամբողջ՝ անդրդուելի,
Խաղաղութիւն պարգեւեսցի
Մինչ ի խորին ժամանակի։
Զնքւասարս ամենայնի
Եւ դեգերեալս ի մէջ երկրի,
Սարգիս զբպիրս Մելտենցի։
Զոտանաւորս շարադրեցի։
Որք հանդիպիք յայսմ կտակի
Եւ ընթեռնուք սիրով սրտի,
Դուք ասացէք տէրն ողորմի
Զնզ եւ մեզ ամենայնի։
Յիշողդ զմեզ՝ յիշեալ լիջիք
Արքայութեանն Քրիստոսի,
Յորժամ նստցի ի յաւետնի
Արժանասցուք կենաց ձայնի։
Եւ նմա փառք ամենայնի
Ընդ հօր հոգւովն ճշմարտի,
Յաւէտ յայժմոյս եւ միշտ էի
Եւ յաւիտեան յաւիտենի,
Ամէն, ամէն եւ եղիցի։
Զհոս երթայ դառնայ ի հող,
Գիրս մնայ յիշատակող
Ո՜ՀՀ, ո՜ՀՀ, դարձեալ ո՜ՀՀ,
Վա՛յ ինձ, մեղաւորիս Ո (Հազար) բերան։

է

Փրկողների

5 Որոց աղօթիւք ողորմի Քրիստոս աստուած Յայսմաւուրքս ի գերութենէ ազատողին յԱկնցի հայճի Փիրուխանին եւ իւր ծնողացն, հօրն Խորին, մօրն Յուզկուլին եւ իւր եղբարցն Թամուրին, Աստուածատուրին, Աբրահամին, Յակոբին, Յոհանին, Մուխէսին եւ յամենայն յարեան մերձաւորաց եւ որ ղողորմին ասէ, ամէն։

Ը

549 *Որոց աղօթիւք ողորմի Քրիստոս աստուած զսուրբ Յայմաւուրքս ի գերութենէ ազատող խօճայի ե[կե]ղեցրան վասիլին եւ Հօրն Մանուկին եւ մօրն Մարուցային եւ կողակցին խաթունմելիքին, եւ եղբօրն խօճայ Թումանին եւ որդոյն Օվանէսին եւ Օհանին զաւերացն Աննիձային եւ Մարուցային եւ Ալխաթունին եւ Հռիփսիմէին եւ ամենայն արեան մերձաւորացն եւ անպիտան գրչի սորին /// ամէր /// Յովանէս խութինու քահանայ ///*

Թ

Յանկագրողի

Գրեցաւ ցանկս այս ձեռամբ մեղապարտ Տէր Սիմէոնիս Թորոսեան, յամի տեառն 1725 սեպտեմբերի ամսոյ 19։

(Այս հիշատակագրությունը ամենայն հավանականությամբ գրված է Տրանսիլվանիայի Ջուրջով քաղաքում, քանի որ ցանկագրողը հիշյալ տեղի հայոց ժողովրդապետան է եղել)։

Ժ

Այլ անձի

Ձեռագրի վերջում.

Ի թվ. ՌՄԺՀ (1769) մարտի է (7) եղեւ գիրս այս, ինչպես եւ կաշբար, որպի Աբրահամի այս գիրս գրեցի, վասն գրչագրցութեան հարմար, օվ օր կարդայ չի մեղադրէ, զիրէ ծուր դնայցիլ է, ամէն։

Ծնք. վկայաբանությունների վերջում բազմաթիվ տեղերում հիշատակվում են ստացողի և նրա հարազատների անուննները։

(«Հանդէս ամսօրեայ», 1913 թ., էջ 691—697։ Ձեռագրի մասին տե՛ս նաև Ion Apostol Popescu, „Un valoros document cronicăresc" *(ժամանակագրական արժեքավոր մի փաստաթուղթ).* „Steaua" Cluj, 1961, martie.

12(24)

ԲԱՐԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Երևան *ՌՃԷ—1658 թ*

Գրիչ՝ վարդան։ Թեր՝ 244։ 13,8×9,5։ Թուղթ։ Նոտրագիր։ Երկսյուն։ Տողեր՝ 12—14։

Բովանդակություն

Սկիզբ. Այբ տառ ձայնաւոր և երկամանակ են, սկիզբն գրոցն։

Աբարովգ — անշէն.

Աբանայ — հօր օրհնութիւն...

Վերջ. Օգտօղ — քաճէլ

Օգտել — ի բայց քեղցել, ճոզոպրել, պատառել, քայքայել։

Խորագիր-ինքնատակագրություն

1ա Բառարան Հայոց գրեցեալ ի թվ. Հայոց ՌՃէ (1658) յԱնապատին երևանայ ի վարդանայ համբակէ։

13(11)

Ա Խ Տ Ա Ր Ա Ն

Եաղ ՌՃ և Ը—1659 թ.

Գրիչ՝ Սիմէօն քահանայ։ էջ 576։ 19,5×15։ Թուղթ։ Երկայուն։ Բոլորագիր։ Տողեր՝ 23։ Մաճրանկարչություն — Համաբարբառային խորաններ, Ավետարանիչների նկարներ և սկզբնաթերթեր՝ կիսախորաններով։ Կազմ՝ կաշեպատ տախտակի։

Հիշատակարան գրչի

575 Փա՜ռք... Արդ գրեցաւ Սուրբ Աւետարանս ի թվականութիւնս Հայոց ապդի ՃՈ և Ը (1659) ամի, ի յերկիրն Պուղտանաց ի մայրաքաղաքն Եաշն, ընդ հովանեաւ Սուրբ Աստուածածնիս և Սուրբ Լուսաւորչոյն, ձեռամբ յոդնամեղ և մեղաթաւալ աստանուն Սիմէօն քահանայ[ի]։ Որք հանդիպիք սմա կարդալով կամ հարևանցի տեսանելով, յիշեսջիք ի սուրբ յաղօթս ձեր ըղծրող սորին և դուք յիշեալ լիջիք ի Քրիստոսէ աստուծոյ մերոյ, որ է աւրհնեալ յաւիտեանս, ամէն։

14(9)

Ք Ա Հ Ա Ն Ա Յ Ա Թ Ա Ղ

Սուչավա ՌՃԺՔ — 1663 թ.

Գրիչ՝ Ազարիա կղերիկոս։ էջ՝ 346։ 21,2×16,8։ Թուղթ։ Բոլորագիր։ Միասյուն։ Տողեր՝ 19։ Մաճրանկարչություն՝ կիսախորան, լուսանցազարդ և գարդագիր (բուսական մոտիվներով)։

Սկ. [Կ]անոն յորժամ եպիսկոպոս կամ քահանայ կամ հայրապետ կամ ուխտի առաջնորդ կատարի մահուամբ....

Տէր, ապաւէն մեր ազգէ մինչև յազգ...

Հիշատակարան գրչի

էջ 337 Եւ յիշատակարան սուրբ գրոցս։

Փա՜ռք... Արդ գրեցաւ սուրբ տառս, որ մականուամբ Քահանայաթաղ կոչի, ձեռամբ յոդնամեղ և անարհնաս աստանուն Ազարիայի կղերիկոսի, որ զանունս ունիմ և զգործս ոչ։ Բայց գրեցաւ սա ի յաշխարհս Պուղտանաց, ի քաղաքս Սէչով, ընդ հովանեաւ և բարձրահայեաց հռչակաւոր տաճարիս Սուրբ Սիմէոնի։ Եւ ի կաթողիկոսութիւնս Հայոց Սուրբ էջմիածնա տեառն տէր Յակոբին, և առաջնորդութեան յայսմ գաւառի տէր Սահակ արհիեպիսկոպոսին, և ի

Թվականութենանս Հայոց, ՌՃԺՔ (1663) ամին, մարտի ամսոյ Ժէ (17)-ին։

(Ձեռագրի սկզբում և վերջում կան զանազան նշումներ, որոնցից մի քանի տող բերում ենք ստորև իրրև նմուշ)։

էղաւ աղբար աւվաատուրինը
ՃՁ օխայ պաշխայ զատնը է (7) պաշդայ Ը (8),
...էղաւ Մանուկինը Ճ ու ԺԵ,
պշխ(այ) ճուլ-պշխ ԺՋ։

15(49)

ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ՎԻՃԱԲԱՆՈՒԹԻՒՆՔ ՈՄԱՆՔ, ՈՐՔ ՊԱՏԿԱՆԻՆ ԱՒ ԳԻՏՈՒԹԻՒՆ ՄԵՏԱՖԻՍԻԿԱՅԻՆ, ՈՐ ԹԱՐՔՄԱՆԻ ՀԱՄԱԲՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ [Շ]ԱՐԱԿԱՐԳԵԱԼՔ Ի ԿԱՐԳԷ ԹԷԱՏԻՆՈՒՈՅ ԿՂԵՄԷՍ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԷ

Լվո՛վ *ՌՈՋ՛Բ—168՛2*

Թերթ՝ *228։ 20,2×16։* Թուղթ։ *Միասյուն։* Տողեր՝ *29* և այլն։

Հիշատակագրություն

34բ *Լատին Թ.ՌՈՋՔ (1682) Հունվարին յաւուր Բ(2)։*

16(73)

ՏՕՆԱՅՈՅՑ ԵՒ ՊԱՐՋԱՏՈՒՄԱՐ

Լվով *ՌՃԼԳ—1684 թ.*

Գրիչներ՝ *Արապկիրցի Սարգիս փոքրաւոր և Թոխաթցի Սարգիս եպիսկոպոս։* Թերթ *223։9,8×7,8։* Թուղթ։ *Բոլորագիր։ Միասյուն։* Տողեր՝ *15։*

Հիշատակարան և հիշատակագրություններ

Գրիչների

Ա.

160բ *Գրեցաւ Տօնացոյցս և պարզաւումարս և փոքրիկ աղօթից գըրկիկս ձեռամբ յԱրապկերցի մեղաւոր Սարգիսոսս։ Ո՛վ որ հանդիպի Ա.(1) հայր մեղայիւ յիշէ աստուած դինքն վերին արքայութենան յիշեալ լիցի։ Ամէն։*

Բ

220ա *Գրեցաւ Պարզաւումարս ձեռամբ Թոխաթցի Սարգիս եպիսկոպոսիս, թվին Հայոց ՌՃԼԳ (1684) ի մայրաքաղաքն Լվով։*

Գ

Շնորհեցի յԱրապկերցի Սարգիս փոքրաւորիս բարով վայելէ, ամէն։

Գ

Այլ անձանց

1176(1727)-ին հայոց շինէցի գմբրղրս, մէրաւ տէր Յակոբը մայսի ԺԱ(11)։

Ե

Գրբեցաւ գիրըս ան տարի, որն որ էլան հայերըն ի թագաւորութեան Միհայլը պա(րոնին)[1] ժամանակին, ի քաղաքըն Շոջովըն (իմա՛ Սուչավա), թվին ՌՃՄԳ (1704) ամսոյն ունիվարի ԻԲ (22) օրն էրկուշաբթի։

(Կա եաև ալավոնատառ ռումիներեն մի գրվածք)

17(51)

ԺՈՂՈՎԱԾՈ

Ջուրջո՞վ *ՌՈՁԵ—1685 թ.*

19×15,5։ Թուղթ։ Նոտրագիր։ Միասյուն։ Տողեր՝ 16։

Հիշատակագրություն

Գրչի՞

Ի թվոյն Քրիստոսի ՌՈՁԵ, 1685 մարտի ԻԵ, 25։

Հետագայի

1776-ին ունիսի 1-ին հանգաւ ի տէր /// ողորմած հոգի աղ[աչայ] Գօտրաշ Մնտրուլի Նիկոլի, վոս[ո]ր կարդայ, նայ մէկ հար մեր գՔրիստոս իշէ պինքը. և էր 76 տարեկան հանգըստեան ժամանակը։

Մէրավ մաման 1777 սէպտէնպէրի 7-ին /// աղ[աչայ] Գօտրաշի Մնտրուլի։

18(29)

ԳԱԲԷԽԻԶՄՆ ՀՌՈՄԵԱԿԱՆ ԵՒ ՅՈՒՅԱԿ ԱՒԵՏԱՐԱՆԱՅ ԿԻՐԱԿԷԻՑ

Լէօպօլիս *ՌՈՂԷ՞—1697՞ թ.*

էջ 440+24։ 32×20։ Թուղթ։ Նոտրագիր։ Միասյուն։ Կաշեկազմ։

Հիշատակարան-հիշատակագրություն

Ա

Գրչի՞

Գաբէխիզմն Հռոմեական, այս է վարդապետումն իրաց սրբազանաց ըստ վճռոյ, Սրբազնասրբոյ Ժողովոյն Քրիստոնեիենոյ, հրա-

1 *Խոսքը վերաբերում է Միհայլ Ռակովիցային, որը երեք անգամ իշխան է դարձել Մոլդովայի և երկու անգամ էլ՝ Վալաքիայի (1703—1727 թթ.)։*

մանաւ Փիւռի Ե-երորդի քահանայապետին ծայրագունի, տպագրեցեալ յամի տեառն ՌՇԿԶ (1566). յետ այնորիկ ի գլուխս և ի խնդիրս բաժանեցեալ իսկ և դանազանաց Սրբոց Հարց զգացմամբք և երկաքանչիւրոյ թէ նորոյ և թէ հնոյ կտակի հեղինակութեամբք ի լուսանցան փաղանշանեցեալ։ Որում ևս ցուցանք երկու վերայաւելեցեալք, մին այնց իրաց, որք ի բոլորում գրի տան պարունակին։ Միւսն այնց, որք առ Աւետարանս կիրակէից և առ տօնս ոմանս պատկանիլ կարին, վասն դիտաւորութեան Հոգաբարձուց քահանայից։ Թարգմանեցեալ ի Հայկական բարբառ, յամի տեառն ՌՈՂԶ (1697) ի Լէօպօլիս՝ ի փառս մեծապոյնս Աստուծոյ։

Բ

էջ 1 Ի գրեանց Տ. Յօհաննու Մխիթարայ Յովհաննան 1730, 40 պտ.

Գ

Բ. մաս. էջ 19 Ի գրեանց բազմապայծառ տեառն Յօհաննու Մխիթարեան էրզրումեցւոյ վարդապետի և առաքելական միսիոնարի։

Դ

էջ 24 Յամի տեառն 1732 եկի ի յԱխլցղխայ և սկսայ քարոզել Յունվարի 1 մաի ի նոյն քաղաքն։
(Բովանդակութիւնը տե՛ս «Հանդէս Ամսօրեայ», 1914 թ., էջ 667—670)։

19(20)

ՏԱՒՆԱՅՈՅՆ ԵՒ ԱՒԵՏԱՐԱՆԱՅՈՅՆ ԵՒ ԿԱՐԳԱՒՈՐՈՒԹԻՒՆՔ ԵՒ ՀՐԱՀԱՆԳՔ ՏԷՐՈՒՆԱԿԱՆ ՏՕՆԻՑ

ԺԷ դար

15,1×9,3։ Թուղթ։ Նոտրագիր։

20(25)

Մ Ա Ղ Մ Ո Ս Դ Ա Վ Թ Ի

ԺԷ դար

Գրիչ՝ Մարկոս։ Ստացող—Յակոբ պատրիարգ Ջուղացի։ էջ 440։ 13×10։ Թուղթ։ Բոլորագիր։ Միասյուն։ Տողեր՝ 16 և այլն։ Մաճառանկարչություն՝ Գլխագարդ, լուսանցագարդ և զարդագիր։

Հիշատակարան

էջ 240 Հանդիպողացդ և վայելողացդ յայսմ աստուածարեալ սեղանոյս, աղաչեմ յիշել զստացող սորին զՅակոբ պատրիարգ Ջուղացի սպասաւոր տեառն Փիլիպոսի և Յակոբայ սրբազան կաթողիկոսաց։ Ընդ նմին և զիս զգծող սորին բազմամեղ Մարկոս բանի սպասաւոր ևս յիշեցէք։

21

ՏՕՆԱՅՈՅՑ

ԺԷ դար

Թերք՝ 251։ 10,5×8,5։ Թուղթ։ Նոտրագիր։

Հիշատակագրություն հետագայի

251բ Այս տօնացուցս Սիլիատրցի Ովանեսի որդի տիրացու Նայիին է, զարով վայլէցրնէ, թվի. ՌՃՕԷ (1708) հզաւ։

22

ԿԱՆՈՆԱԳԻՐՔ ՀԱՅՈՑ

Սուչավա՞ ԺԷ դար

Գրիչ՝ Համանաբար Ծառուկ գպիր։ Թերք՝ 210։ 22,4×16,5։ Թուղթ։ Նոտրագիր։ Վիճակ—անկազմ, պրակներն անջատված։ Երկայուն։ Տողեր՝ 25։

Հիշատակագրություն

24բ Ջմեղաւոր Ծառուկ գպիրս՝ որդի Նիկօլին՝ յիշեցէք, ով եղբայրք, և ասուած զձեզ յիշէ իւր միւս անգամ գալստեան, ամէն։

23(17)

ՊԱՏԱՐԱԳԱՄԱՏՈՑՑ ԱՔԱՆԱՍԻ

ԺԷ դար

Թերք՝ 130։ 18,6×14,7։ Թուղթ։ Նոտրախառն շեղագիր։

Հիշատակագրություն հետագայի

130ա Թվին ՌՃՁԴ (1735) սեպտ. ի ԺԴ (14) օրն կիրակի, որ է տուրբ հայրին տէր Մարտիրոսն էկաւ իմ աղքատ խոնախն, նա ևս խաչատուրս մօլօն Պիրով պաշխէցի զայս գիրգս վերոյգրեալ տէր հօրը, մանաւանդ, օր յիշատակ է զվարպետս զնաշխուն տէր Օհանը, և այլն, տէր հայրը գիտէ։

24(6)

ՄԱՇՏՈՑ

ԺԷ դար

Թերք՝ 180։ 21,3×15։ Թուղթ։ Բոլորագիր, մասամբ նաև նոտրագիր։ Երկայուն։ Տողեր՝ 19։

25(12)

ՍԱՂՄՈՍ Ի ԴԱԻԻԹ

ԺԷ դար

Թերք՝ 176։ 19,5×17։ Թուղթ։ Նոտրագիր։
Մաճրաճկարչություն՝ խորանաղարդ սկզբնաթերթ, լուսանցազարդ և գարդագիր (բուսական)։

26(38)

ԹՈՒՂԹ ՔԱՋԱԼԵՐԱԿԱՆ

Լէօպօլիս *ՌՃՄՔ—1703 թ.*

Հեղինակ՝ վարդան Յունաննան: Էջ՝ 154: 22,6×15,5: Թուղթ: Միասյուն: Շեղագիր: Տողեր՝ 26:

Ա

Խորագիր

Թուղթ քաջալերական առ ուղղափառս մերազնեայս, որք ի քաղաքին Եվդոկիայ: Ի ժամանակին յորում զարթուցեալ էր հալածումն սաստիկ ընդ ամենայն տէրութիւնն Տաճկաց, ընդդէմ Արամազնեայց զկաթողիկէ հաւատն Հռոմէական դաւանողաց: Յամի տեառն ՌՋԱ-ին (1701) և ի թվ. Հայոց ՌՃՇ-նին (1701): Յորում և զնախագահութիւնն աթոռոյ սրբոյն Պետրոսի և զյաջորդէ նորին քահանայապետէն Հռոմայ և զուղղափառութիւնն սրբոյ ժողովոյն Քաղկեդոնի, յարարերին վէպք յինքենէ եկեղեցւոյն Հայոց:

Գրեցեալ յամի տեառն ՌՋԹ-ին (1703) եւ ի համաթուիսանն Արամեանց ՌՃՇՔ-ին, (1703) ի Լէօպօլիս:

Բ

Այլ ճշումներ

1ա *Ի դրոց տէր Սիմէոնի Թորոսեան:*

(Տե՛ս նաև Հ. Տաշյան, Յուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, Վիեննա, 1895, № 12, էջ 107—116 և № 37, էջ 194):

27(58)

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՍՏԵՓԱՆՆՈՍԻ ՍՏԵՓԱՆՆԵԱՆ ՌՕՇՔԱՅԻ

Սղանիսլաւ՝ *ՌՃԿէ—1718 թ.*

Գրիչ՝ Յովհաննես: 17×10,5: Թուղթ: Նոտրախառն շեղագիր: Թերթ՝ 147: Միասյուն: Տողեր՝ 24:

Խորագիր

Քերականութիւն Ստեփաննոսի Ստեփաննեան աստուածաբանութեան վարդապետի կամէնցացւոյ ըստ իսկական ոճոյ լեզուին Հայոց, շարադրեցեալ ի Սղանիսլաւօվ յամի տեառն 1718 և հայոց ՌՃԿէ:

Բովանդակություն

Սկիզբ. (2ա) Յառաջաբանութիւն. *Բազում զբերթողական...*

Քերականութիւն Ստեփաննեան: Գիրք առաջին. յաղագս հոլովման անուանց և լծորդութեան բայից: Գլուխ առաջին. առաջին հոլո-

վումն, որոյ սեռականն եղիցի այս. եղակի անուանական՝ Ադամ, Ադամ...

28

ԳԵՆՈՒԱ ՀԱՅԱՔԱՂԱՔԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ (ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ) ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՅԱՆ, Ա ՀԱՏՈՐ

Գենուա *1714—1730 թթ.*

էջ՝ 606։ 34×21,5։ Թուղթ։ Շեղագիր։ Միասյուն։ Տողեր՝ 24, և այլն։

29

ԳԵՆՈՒԱ ՀԱՅԱՔԱՂԱՔԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ (ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ) ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՅԱՆ, Բ. ՀԱՏՈՐ

Գենուա *1730—1761 թթ.*

էջ՝ 600։ 34×21,5։ Թուղթ։ Շեղագիր։ Միասյուն։ Տողեր՝ 24 և այլն։

30

ԳԵՆՈՒԱ ՀԱՅԱՔԱՂԱՔԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ (ՔԱՂԱՔԱՑԻՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ) ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՅԱՆ, Գ. ՀԱՏՈՐ

Գենուա *1762—1796 թթ.*

էջ՝ 532։ 34×21,5։ Թուղթ։ Շեղագիր։ Միասյուն։ Տողեր՝ 24 և այլն։

(Վերոհիշյալ ձեռագիր մատյաններում կան նաև զատական գործերի վերաբերյալ բազմաթիվ արձանագրություններ)։

31

CONFRATERNITAS S. GREGORII NATIONIS ARMENAE ILLUMINATORIS.

ԵՂԲԱՅՐՈՒԹԻՒՆ ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ԼՈՒՍԱՒՈՐՉԻՆ։ ՅԱՄԻ ՏԵԱՌՆ 1729 ԵՎ ՀԱՅՈՑ ՌՃՀԸ ՈՒԼԻՍԻ ԱՄՍՈՑ 26։

Գենուա *ՌՃՀԸ—1729 թ.*

Հեղինակ՝ Ստեփանոս Ստափաննեան Ռօշքայ Կամենացի այցապար Հայոց Տրանսիլվանիոյ։ Գրիչ՝ Տէր Յօհաննէս Մխիթար Յօհաննեան, գեր. վարդապետին այցելարարութեան նօտար։ էջ՝ 34։ 29,4×22,9։ Նազմ՝ կարմիր թավշյա։ Թուղթ։ Բոլորագիր և նոտրագիր։ Միասյուն։ Տողեր՝ 24—25։ (Հայաքաղաքի Տանուտիրաց եղբայրության կանոնադրությունն է, տե՛ս հրտ. Գր. Գովրիկյանի «Դրանսիլուանիոյ Հայոց մետրապոլիտը կամ նկարագիր Կերլա Հայաքաղաքի ի դիր եւ ի պատկերս», Վիեննա, 1896, էջ 61—73)։

32(47)

ԵՐԳԱՐԱՆ ԵՒ ՄԱՇՏՈՑ

Գենուա *ՌՃՁԱ—1732 թ.*

Գրիչ՝ Տիրացու Մարտիրոսի որդի Մկրտիչ։ Քերթ՝ 75։ 21,2×16,5։ Թուղթ։ Նոտրագիր։ Միասյուն։ Տողեր՝ 27։

Հիշատակարան

Գրչի

էջ 74 Գրեցաւ ձեռամբ անարժան տիրացու Մարտիրոսի որդի Մկրտչի, միջնորդութեամբ տէր Յակոբին, թվ. ՌՃՀԱ (1732) յունվարի ԻԵ(25)։

33

ՏՕՆԱՅՈՅՑ

Գեղա ՌՃՀԹ—1734 թ.

Գրիչ՝ Տիրացու Աստուածատուր։ 19×15,5։ էջ 178։ Թուղթ։ Նոտրագիր։ Միասյուն։ Տողեր՝ 25—27։

Հիշատակարան

Գրչի

էջ 177 Գրեցաւ Տօնացոյցս ձեռամբ անարժան տիրացու Աստուածատուրին՝ Նուրիճանի որդւոյ, ՌՃՀԹ (1734) հոկտեմբերի Զ (6)։

34(52)

ՄԱՇՏՈՑ

Գեղա ՌՃՀԹ—1735 թ.

Գրիչ՝ Տիրացու Աստուածատուր։ 19×15,5։ էջ 302։ Թուղթ։ Նոտրագիր։ Երկսյուն։ Տողեր՝ 27։

Հիշատակարան

էջ 293 Շնորհիւ և ողորմութեամբ ամենակարողին աստուծոյ գրեցաւ Մաշտոցս ձեռամբ Տիրացու Աստուածատրին՝ Նուրիճանի որդւոյ, հայաքաղաքն Կեղայ, թվին ՌՃՀԹ (1735) օգոստոսի ԻԲ (29)։

35(66)

ՏՕՆԱՅՈՅՑ
ԸՍՏ ՈՒՂՂԱՓԱՌԱՅ ՀԱՅՈՑ, ՇԱՐԱԴՐԵՑԵԱԼ Ի ՍՏԵՓԱՆՆՈՍ ՍՏԵՓԱՆԵԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԷ ԿԱՄԵՆՑԱՑԻՈՑ, Ի ՓԱՌՍ ՄԵՍԱՊՈՅՆՍ ԱՍՏՈՒԾՈՅ Ի ՍԴԱՆԻՍԼԱՒՈՎ ՔԱՂԱՔՆ

Լէօպօլիս 1753 թ.

Գրիչ՝ Տիրացու Եսայիեան Կիրակոսեան։ Թերթ՝ 228։ 20×17։ Թուղթ։ Շեղագիր։ Միասյուն։ Տողեր՝ 17։

Բովանդակություն

1ա (Առաջաբանից) Տօնացոյցս այս շարադրեցաւ ըստ կարգի տարեգրոց, վասն բառնալոյ զամենայն դժուարութիւն, զոր տօնասէր քահանայքն յիւրաքանչիւր ամի կրէին ըստ հին տօնացուցին ի կա-

տարիլ զտօնս սրբոց, նաև զտօնս տէրունիս ոմանս: Վասն որոյ վարիլ պարտին տարեգրաւն, զոր յիւրաքանչիւր ամի ցուցանէ հնագոյ աղիւսակն, յորում տեսանէլի է նախ Թուականն Հայոց և ապա ի դէմ նորին եղեալ տարեգիրն, և այնու տարեգրաւ վարիլ ընդ բոլոր տարին: Բայց ուր հանդիպին երկու տարեգիրք ի միում տփի, նշան է, թէ ամն այն նահանջ է, ուստի ի նահանջ ամին պիտոյ է զառաջին տարեգիրն ի սկզբ նաէ յունվարի մինչև ի վերջն փետրուարի ի կիր առնուլ, իսկ զերկրորդ տարեգիրն ի սկզբանէ մարտին մինչև ի վերջն դեկտեմբերի: Ծռազատիկն ևս, որ ի մէջ Հայոց և Յունաց պատահիլ սովոր է, ուղղեցաւ, զի փոխանակ զային եղաւ տարեգիրն Հայոց, որպէսզի ի միասին ընդ Լատինացւոց և Յունաց և ևս ուղղապէս Զատիկն տօնեսցին: Բայ...

Հիշատակարան

Գրչի

144 Գրեցաւ ի Լէօպօխս յամի տեառն 1753 մարտի Ա (1) ձեռամբ Տիրացու Եսայիասս Կիրակոսեան, և որ եմ յերկրէն յարևելեան և ի գիւղաքաղաքէն Շուուբեան:

Այլ նշում (տիտղոսաթերթի վրա). Ex libris Stephani Barany Capellani, + 1846.

Կնիք (տիտղոսաթերթի վրա). Barany Lukacs, Örm. kath. plebanos, Szamosujvar, 1900.

36 (53)

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԱՍՏՈՒԱԾԱԲԱՆՈՒԹԻՒՆ

1754 թ.

Իլօվ

Գրիչ՝ Յակոբ քահանայ Սրապիոնեան Քէֆէցի: Թերթ 273: 18,8×16: Թուղթ: Նոտրագիր: Միասյուն: Նկար՝ Հայոց Տրդատ Թագաւորի մկրտվելը Գրիգոր Լուսավորչի կողմից:

Բովանդակություն

Սկիզբ. Բարոյական Աստուածաբանութիւն համառօտաբար մեկնեցեալ:

Գիրք առաջին. Յաղագս խորհրդոց եկեղեցւոյ...
Գլուխ առաջին. Յաղագս խորհրդոցն առ հասարակ...

Հիշատակարան

2բ Այս բարոյական Աստուածաբանութիւն է թարգմանեցեալ ի Սահիանոսէ ընծշկա աստուածաբան վարդապետէ ի լադինացոց լեզուէ ի հայկական բառբառ. և այժմ է օրինակեցեալ ի տէր Իգնատիոսէ Քէֆէցոյ ձանսզի որդոյ, հրամանօք զերապայծ[առ] հօրն մերոյ տեառն. տեառն. տեառն Յակոբա արհիեպիսկոպոսին Իլօվու Աւկուստինօվիչոյն՝ ի վայելումն մերոյս աղնիվ եղբարց, որք ոչ գիտողաց

զկնգուն Գաղմատոցոց և Հայոցս. ևս ոգիտաց զհարկավորութիւնս ի պատահմանց ժամանակի. ուսանելով զայս քահանայն՝ կարէ լուծանել զտարակուսանս խղճմտանաց իւրոց ի պատահմանէ հարկավորութեան ժամուն ամենայն կերպիվ հոգևվոր իրաց, այսինքն, ըստ խորհրդոյ եկեղեցոյ հօթան։ Գրեցեալ յամի տեառն 1754 ամսեանն փետրվարի 18 և աստի ուսանողաց կամ օրինակողաց աղերսեմ ես զանպիտանս Յակոբ քահանայս Սրապիոնեան Քէֆէցիս, աղօթել վասն իմ միով Հայր մերիվ. կամ այլապէս ըստ կամաց ձերոյ։ Սակայն այսու գրքոյն պատճառ ես եղէ, որ այսմ քաղաք գտանի, յառաջ ոչ էր, մեծ դժուարութիւն ես ունէի ի ժամանակիս իմո, երբ եկի աստ. զարձ զաստուածաբանութեան չեռոյ միտ ածելով զայս՝ հնարիւք գրեալ եռու, թէ լիցի հարկավոր այլոց՝ ոչ մնասցին դժուարութեամբ, որպես վասն այսմ մի մոռանայք ինձ զաղօթս ձեր և զգրօղս սորին։

37

ՔԱՐՈԶԳԻՐՔ

Գեղյա *1761—1770 թթ.*

Էջ 614։ 34×21,5։ Թուղթ։ Նոտրախաոն շեղագիր։ Միասյուն։ Տողեր՝ *44—46։* Կազմ՝ *կաշեկազմ։*

Հիշատակագրություն *(լատիներեն)*

Hic Liber Domino Simoni Korbul. Dono datus a R. D. Antonio Porumbi Anno 1770, die 8va Julii Claudiopoli in Conventu Nobilium. Dominica 2 a Adventus 1761.

(Ըստ Գր. Գովրիկյանի[1] վերոհիշյալ ձեռագիրը Տեր Սիմոն Գորպուլյանի քարոզների ժողովածուն է։ Աստվածաշնչից կատարված մեջբերումները տեղ-տեղ բերված են լատիներեն կամ գրաբար, իսկ երբեմն էլ, ինչպես ամբողջ աշխատությունը, գրված է Տրանսիլվանիայի հայոց բարբառով)։

38(40)

ՇԱՐԱԿԱՆ

Գեղյա *1764 թ.*

Գրիչ՝ *Տիրացու Պօկատան Նուրիճանեան։* Ստացող—*գրչի որդի Անդօն։ Էջ 784։ 22,5×17,5։ Թուղթ։ Նոտրագիր։ Միասյուն։ Տողեր՝ 26։* Մանրանկարչություն՝ *խորան և լուսանցազարդեր։*

Բովանդակություն

Սկիզբ. Կանօն մեծ և հրաշափառ ծննդեան տիրուհւոյ կուսին ի Յովակիմայ և յԱննայէ գկ. երգեցէք որդիք Սիօնի...

[1] *Ավելի մանրամասն տես Ա. Բ. (իմա Գովրիկյան), Կերլայ հայաբաղաքին մայր եկեղեցւոյն հայերէն ձեռագրաց ցուցակը, «Հանդէս ամսօրեայ», 1914, էջ 227։*

Հիշատակարան գրչի

784 Փա՛ռք ամենասուրբ երրորդութեանն Հօր, և Որդւոյ և Ոգւոյն սրբոյ, որ եւս կարողութիւն անարժան մեղաւորիս հասանել աւարտ Շարականիս այսմիկ: Թոհուբիւն ասուածոյ և երա[նութիւն] կովսին Մարիամու: Գրեցաւ ձեռամբ Տիրացու Պօկտանին Նուրիճանեան՝ ի վայելումն որդւոյ իմում Անդօնին, 1764-ին:

(Գրված է Գենուայում. տե՛ս №№ 34 և 35 ձեռագրերը):

39(27)

ՃԱՇՈՑ ԳԻՐՔ ՎԱՍՆ ԹԻ-ՊԱՏԱՐԱԳԻ

1772 թ.

Հռոմ

Գրիչ և ստացող՝ Անկսէնդ Վրծար: էջ Ը+134: 36,5×24: Թուղթ: Նոտրագիր: Երկսյուն: Տողեր՝ 34: Կազմ՝ խավաքարտ:

Խորագիր

Ճաշոց գիրք վասն թիւ պատարագի բոլոր տարւոյն ըստ կարգի Տօնացուցին և Ճաշոցին յօրինեալ, յորում բացի յընթերցուածոցն և ի յաւետարանացն եղեալ կան և ժամամուտքն և մեսեղիքն և ալէլուքն ըստ պատշաճին: Ապա խորհրդատետրն ամբողջ թիւ պատարագի արարողութեամբ: Գրեալ աշխատասիրութեամբ, ըստ հրամանի մեծաւորաց, ի հայր Գէորգ վարդապետէ Պաղտասեան Անդապէցւոյ, ի Հռոմ քաղաքի մեծի, յամի տեառն 1770 ի յունվ. 20:

Հիշատակագրություն

Եւ այս Ճաշոց գիրքն գըրվեցաւ ձեռամբ Հայր Անկսէնդի Վրծր (իմա՛ Վրծար) ի Հռոմ քաղաքն յամի տեառն 1772-ին:

(Բովանդակությունը տե՛ս «Հանդէս ամսօրեայ», 1914 թ., էջ 219—227):

40(41)

ՀՈԳԵՒՈՐ ԵՐԳԱՐԱՆ

ԺԸ դար

Գենուա՞

Թերթ՝ 75: 21×16,3: Թուղթ: Շեղագիր:

Հիշատակագրություն

1. p Anno 1784 mabi MDX

41 (35)

ՏՕՆԱՑՈՑՑ ԸՍՏ ՈՒՂՂԱՓԱՌԱՅ ՀԱՅՈՑ

Շարադրեցեալ ի Ստեփաննու Ստեփաննա վարդապետէ Կամէնցացւոյ ի փառս մեծադոյն Աստուծոյ, ի Ստանիսլաւով քաղաքն:

Գեղա 1796 թ.

Գրիչ՝ Մանուկ Մհակի Բաշգուլեան։ էջ 303։ 23,4×18,5։ Թուղթ։ Նոտրագիր։ Միասյուն։ Տողեր՝ 25։

Հիշատակարան

Գրեցաւ Տօնացոյցս և Շարականս այս ձեռամբ անարժան Մանուկ Մհակի Բաշգուլեան 1796-ին դեկտեմբերի 2-ին, ի Հալոց քաղաքն Կիլեան։ Եւ վասն զբրչիս և անարժանիս համար զաստուած խնդրելու չի մոռնաս, ամէն։

42(31)

ԳԻՐՔ ՆՆՋԵՑԵԼՈՑ

Գեղա ԺԸ դար

էջ 54։ 28,5×20,3։ Նոտրագիր։ Տողեր՝ 18 և այլն։ Կաշեկազմ։

Խորագիր

Գիրք ննջեցելոց։ Անբնները մեռած աղբրաց ու բրվբրաց եղբայրութեան Ամենասուրբ Երրորդութեան Կարճվորաց, որոնց համար այս սուրբ զվարդալի պատարագս կի կատարվի։ Ասոնք են ամէնքդ պի ասիք իմ էտեանց Աստուած ողորմի հոգուն։

